ՀԻՍՈՒՍՆ

ԸՆԴԴԵՄ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Երեսդ ուղղիր ընդդեմ Երուսաղեմի
(Ղուկաս 9.51-11.26)

ՋՈԵԼ ՄԱՔ ԴՈՒՐՄՈՆ

ՀԻՍՈՒՍՆ

ԸՆԴԴԵՄ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Մեկնություն Ղուկաս 9.51-11.26-ի վերաբերյալ

Ջոել Մաք Դուրմոն

Գարի Դե Մարին,
ում «Վերջին օրերի խենթությունը»
ավերավածություն բերեց
դիսպենսացիոնալիզմին

ՑԱՆԿ

Նախաբան Հեղինակ՝ Գարի Դե Մար 5
Հեղինակի առաջաբան.....9
Ներածություն 11

1. «Երեսդ ուղղիր ընդդեմ Երուսաղեմի» 17
(Ղուկաս 9.51-11.26)
Բարի սամարացին (10.25-37)
Հզոր մարդու առակը (11.15-26)

2. Չօգտագործված կոչում 27
Վառված ճրագի առակը
Անմիտ հարուստի առակը (Ղուկ. 12.13-21)

3. Նոր Ելից (Ղուկաս 12.33-49) 37
Արթուն տնտեսի առակը (Ղուկ. 12.35-40)

4. Ժամանակը կարճ է Ղուկաս 12.54-13.9.....53
Անպտուղ թզենու առակը

5. Ցորեն, որոմ և Արքայություն 65
(Մատթեոս 13:24-43)
Ցորենի և որոմի առակը
Ժամանակաշրջանի դատաստանը
Մանանեխի սերմն ու թթխմորը

6. «Դուք սակավաթիվ կմնաք» Ղուկաս 13.10-13.35....77
Մանանեխի սերմի և թթխմորի առակները
Նեղ դուռը

7. Կանչված, բայց ոչ ընտրված (Ղուկաս 14.1-24).....99
Ճշմարիտ ընտրյալը

8. Մեղավորների ընկերները (Ղուկաս 14.25-16.31)...107
Ուրախություն մնացորդի համար
Կորած դրամի առակը
Անառակ որդու առակը
Անիրավ տնտեսի առակը

9. Հավատ և հավատարմություն (Ղուկաս 17.1-10)..139

10. Հավատարիմ մնացորդը (Ղուկ. 17.11-18.43).....149
Փառաբանություն և դիմակայություն
Փարիսեցու և մաքսավորի առակը (Ղուկ. 18.9-14)

11. Պարտավորություններ և վարձատրություններ (Ղուկաս 19.1-44).....167
Մաքսավորը վճարում է իր պատավորությունները

12. Այցելության ժամանակը (Ղուկ. 19.45-46).....183

13. Չար վարձակալները և չար հյուրերը (Ղուկ. 20.9-18 և Մատթ. 21.33-22.14).....201
Քահանաներին և Երեցներին
Մեծ խնջույքի առակի վերանայում

14. Ճշմարիտ ինքնիշխանություն (Ղուկաս 20.19-26).....215

Հավելված
Ա. Ժայռի Գմբեթը, Ժայռը և Տաճարը.....231
Բ. Հակաքրիստոսի վերաբերյալ կեղծիքը.....243
Գ. Աշխարհը խորտակվող նա՞վ է.....261
Դ. Ստությունների ժառանգությունը.....273
Մարտին Լյութերը՝ թալմուդյան հուդաիզմի մասին .....
Ե. «Ամբողջ Իսրայելը կփրկվի». Մնացորդի սկզբունքը .287
Ամբողջ Իսրայելը 295
Զ. Աստծո աստվածաշնչյան սիրելի համարը. 299
Սաղմոս 110.1-ը Նոր Կտակարանում

Նախաբան

Հեղինակ՝ Գարի Դե Մար

Աստվածաշնչի մարգարեական յուրաքանչյուր համար վերլուծելուց, դրանք խմբավորելուց ու մեկնաբանելուց հետո Ջ. Բարթոն Փեյնը իր *Աստվածաշնչյան մարգարեությունների հանրագիտարանում* եզրակացնում է, որ ընդհանուր 31,124 համարներից 8,352 համարը վերաբերում են այս կամ այն մարգարեությանը: Այսպիսով, Աստվածաշնչի 27 տոկոսը կանխասացություն է: Թիմ Լա Հայեն նմանատիպ մի հետազոտություն է արել և եզրակացրել է, որ «Աստվածաշնչի մեկ երրորդը մարգարեություն է»: Երբ հավատացյալները մտածում են մարգարեության մասին, նրանք սովորաբար նկատի ունեն մարգարեական մեծ հատվածները: Միանգամից մեր մտքին են գալիս Սինոպտիկ Ավետարանների 4 գլուխները (Մատթ. 24 և 25, Մարկ. 13, Ղուկ. 21) և ողջ Հայտնության գիրքը: Պողոսի թղթերին (օրինակ՝ 1 Թես. 4.13–18 և 2 Թես. 2-րդ գլուխ), ինչպես նաև 2 Պետ. 3-րդ գլխի «նոր երկինք ու նոր երկիր » հատվածին ամենից շատ են հղում կատարում:

Սակայն, հաշվի առնելով այն ուշադրությունը, որ հատկացվում է Սուրբ Գրքի այս մարգարեական հատվածներին, հետաքրքիր է, թե Աստվածաշնչի մարգարեությունների քանի ուսանող են Հիսուսի առակներին նայել որպես մարգարեական հարուստ նյութ: Ենթադրում եմ՝ քչերը, բացառությամբ, երբ նրանք հնարավոր է հղում են արել վերջին ժամանակներին վերաբերվող մի շարք դեպքերի, որոնք կարծես միշտ էլ գտնվում են մարգարեական տեսադաշտում: Անշուշտ, դուք կհանդիպեք մարգարեությունների մեկնությունների այս կամ այն հեղինակի, ով այստեղ կամ այնտեղ թանկարժեք քարեր է գտնում, սակայն քչերը, կամ ոչ ոք չի նկատում, որ Հիսուսի առակների մեծ մասը մարգարեական հարուստ նյութեր են, որոնք վերաբերում են մի հստակ թեմայի՝ Իսրայելի [անմիջական] ապագային, ինչպես Հիսուսն էր այն տեսնում տվյալ սերնդի համար:

Փայնեն(Բարթոն Փեյնը) իրոք նշում է Հիսուսի մի քանի այլաբանական արտահայտություններ, որ կատարվեցին այդ սերնդի ժամանակաշրջանում «մի շարք ճշգրիտ իրականացումներով, որոնք արձանագրված են Գործք Առաքելոցում, օրինակ՝ Գործք. 5.40, 22.19, 26.11, ինչպես նաև Պողոսի վկայությունը կուսակալների և թագավորների առաջ 24 և 26 գլուխներում»: Սակայն ամեն անգամ Փայնեն(Փեյնը) առակների իրականացումը նշում է հեռավոր ապագայում՝ «Քրիստոսի գալուստի ժամանակ», այսինքն՝ Երկրորդ Գալուստի, որտեղ «ժամանակամիջոցը հիմա հասել է գրեթե երկու հազարամյակի»: Նա Ձիթենյաց Լեռան Պատգամի Ղուկասի տարբերակում (21-րդ գլուխ) նշված որոշ բաներ իրոք տեսնում է իրականացած, որպես «աղետներ, որոնք տեղի ունեցան մինչ ՔՀ 70թ.-ը (այսինքն՝ Երուսաղեմի կործանումը)»:

Աստվածաշնչյան մարգարեությունների հանրամատչելի մեկնաբանություն գիրքը, որ խմբագրվել է մարգարեական գրողներ Թիմ Լա Հայեի և Էդ Հինդսոնի կողմից, առակների մեջ մարգարեական շատ քիչ նյութ է տեսնում: Սա տարօրինակ է՝ հաշվի առնելով գրքի ենթավերնագիրը. Հասկանալ մարգարեական բոլոր հատվածների իմաստը: (Իսկ այն դեպքում) Երբ հեղինակներն իրոք էլ որևէ առակի մեջ մարգարեական նշանակություն են գտնում, այն գրեթե միշտ բացառապես վերաբերում է մարգարեական հեռավոր դեպքերին: Կա միայն մեկ հղում մարգարեական մոտակա դրվագի՝ ՔՀ 70թ.-ին Երուսաղեմի կործանմանը, հետևյալ մեկնաբանության մեջ, որ վերաբերում է Ղուկաս 13.35-ին. «Ավերակ թողնված տունը վերաբերում է հրեաների այն սերնդին, որ մերժեց Հիսուսին, սակայն հետո, որպես հավատացյալ մնացորդ, ընդունելու էր Նրան որպես Տեր և Փրկիչ. «Եվ ես ձեզ ասում եմ, որ դուք չեք տեսնի ինձ, մինչև դուք կասեք. «ՕՐՀՆՅԱԼ Է ՆԱ, ՈՎ ԳԱԼԻՍ Է ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆՈՎ»: Նկատեք, որ Հիսուսը դիմում է ձեզ հոգնակի ձևով:

Ինչքան հրեաներ էին նախքան խաչելությունը աղաղակում. «Օրհնյալ է նա, ով գալիս է Տիրոջ անունով»: Գործք Առաքելոցի սկզբնական գլուխները և դրանից հետո մեզ ասում են, որ հազարավոր հրեաներ կային, ովքեր «սրտում զղջացին» և հարցրեցին, թե ինչ պետք է անեին, որպեսզի փրկվեին (օրինակ՝ Գործք. 2.37-41, 4.4): Պողոսն ինքն իրեն օրինակ է բերում, որպես փաստարկ, որ Աստված Իր խոստումն իրականացնում էր այդ սերնդի համար. «Ներկա ժամանակում մի մնացորդ կա Աստծո շնորհի ընտրության

համաձայն» (Հռոմ. 11.5, տես հհ. 1-4): Ավետարանը քարոզվեց «ուրիշ երկրներում սփռված» հրեաներին այդ ժամանակվա հռոմեական ողջ կայսրությունով մեկ (Հակոբոս 1.1): Հիսուսն է պատմության կիզակետը, ոչ թե Իսրայելի երկիրը կամ տաճարը (Մենք ամենա-հայտնի ավետարանչականներից հաճախ լսում ենք որ մարգարեության կիզակետը Իսրայելը և հրեաներն են. Սա հիմարություն է: Ըստ աստվածաշնչի, մարգարեության կիզակետը Հիսուսն է, ոչ թէ Իսրայելը կամ հրեաները. Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.):

Ջոն Ֆ. Վալվուրդի Մարգարեական գիտելիքների ձեռնարկը Թիմ Լա Հայեի և Էդ Հինդսոնի Աստվածաշնչյան մարգարեությունների հանրամատչելի մեկնաբանության նման նույնպես պնդում է, որ «Սուրբ Գրքի բոլոր մարգարեությունները բացատրված են մեկ հատորում»: Վալվուրդը մեծ ուշադրություն է դարձնում առակներին և նույնիսկ նշում է անհավատության և դատաստանի թեմաները: Սակայն փոխարենը դրանք կիրառելու առաջին դարի սերնդի համար, նա պնդում է, որ դրանք ուղղված են այն սերնդին, որ ականատես է լինելու այդ մարգարեական դեպքերի իրականացմանը, այսինքն դեռևս ապագա սերնդին: Մի քանի նախադասություն հետո նա ընդունում է, որ Ձիթենյաց Լեռան Քարոզի որոշ մարգարեություններ պատասխանումեն այն «հարցերին, որ աշակերտները բարձրացրեցին. առաջինը, Երուսաղեմի կործանման վերաբերյալ, որ տեղի ունեցավ ՔՀ 70թ.-ին, և երկրորդ ու երրորդ հարցերին, որոնք վերաբերում էին ժամանակաշրջանի ավարտին ու Քրիստոսի գալուստին (Մատթ. 24.3)»: Վալվուրդը, սակայն, չի տեսնում դատաստանի թեմաների կապն ու կառույցը, որ գտնվում են առակների մեջ և Ձիթենյաց Լեռան Քարոզի մարգարեությունների գագաթնակետում, որոնք, ինչպես ասվում է, տեղի էին ունենալու նախքան այդ սերնդի անցնելը, որոնց հետ Հիսուսը խոսում էր (Ղուկ. 21.32, Մատթ. 24.34, Մարկ. 13.30):

Կարծում եմ՝ առակների վերաբերյալ մյուս աշխատությունները նույնպես հետևում են մեկնաբանական նմանատիպ մեթոդոլոգիայի: Ջոել Մաք Դուրմոնի աշխատությունը, սակայն, յուրահատուկ է: Նա գնում է մի տեղ, որտեղ քիչ մեկնաբաններ են նախկինում գնացել: Ինչպես նա է խիստ վիճաբանական կետերում էջ առ էջ ցույց տալիս՝ միաբանություն կա ավետարանների և ողջ Նոր Կտակարանի մարգարեական պատգամների մեջ: Դա նման է նոր տիկերի մեջ լցված նոր գինու: Հին ուխտի հետ կապված ամեն բան վաղանցիկ էր: Հին Կտակարանից գրածների մեջ Հիսուսն է որ միշտ աչքի

առաջ է եղել՝ սկսած փրկչի մասին առաջին խոստումից Ծննդոց 3.15-ում, մինչև «Հիսուսի վկայությունը մարգարեության հոգին է» հայտնությունը Հայտնություն 19.10-ում: Մեր ժամանակների Մարգարեության մեկնաբանությունը փորձ է՝ վ երակառուցելու մի բան, որ երբևէ նպատակ չի ունեցել վերակառուցվելու: Հրեաները, որոնք Հիսուսին դեռ առ դեմ հանդիպեցին, պետք է իմացած լինեին սա այն ամենից, ինչ նրանց Սուրբ Գիրքն էր ասել եկող Ազատարարի մասին (Ղուկ. 24.27,44): Դրա փոխարեն, ինչպես այսօր, ասվում է, որ նշանակություն ունի նոր քարե տաճարը, այդ հողակտորի վերակենդանացումը և Աստծո ժողովրդի բաժանումը, որոնցից մեկն ընտրված է արյան կապի պատճառով (Հովհ. 1.13, 8.33), իսկ մյուսը՝ որդեգրությամբ (Հռոմ. 8.14-16): Առակները, ինչպես Զոելն է խորապես պարզաբանում, ծառայում են ցույց տալու, որ հրեաների և աշխարհի համար բաժանման պատի քանդվելը միշտ եղել էր տեսադաշտում, որի արդյունքում լինելու էր «Նոր մարդ» Քրիստոսում (Եփ. 2.11-22): Երուսաղեմի կործանումը և տաճարի ավերվելը կանխորոշված էին, որովհետև Հիսուսը միշտ եղել է իրականությունը՝ համեմատած հին կտակարանի ստվերների հետ (Հովհ. 2.19)

Հեղինակի առաջաբան

Վախճանաբանությունն իմ առաջին սերը չէ, ոչ էլ ես ինձ այդ ասպարեզի մասնագետ եմ համարում: Ողջ վարդապետական ճշմարտությունն օգտակար է Աստվածաշնչի մեկնաբանության մեջ հավատարիմ մարդուն, և այդ ասպարեզում ես առանձնահատուկ հետաքրքրություն ունեմ: Դա նաև մի բաղկացուցիչ է, որ հաճախ բացակայում է վերջին ժամանակների և մարգարեության վերաբերյալ քննարկումների մեջ: Աստվածաբանական ուսումնասիրության ճյուղերի մեջ հատկապես վախճանաբանությունն ամենաշատը կարիք ունի Սուրբ Գրքի մանրամասն, համատեքստային մեկնաբանության:

Այս գրքի հիմնական մասը պարունակում է գրեթե ամբողջական համար առ համար մեկնաբանություն, վճռականությամբ՝ ոչինչ չանելու, այլ թույլ տալու, որ Սուրբ Գիրքը մեկնաբանի ինքն իրեն:

Համար առ համար մեկնաբանելու այս սկզբունքից հիմնական շեղումը Ներածության մեջ է, որտեղ ես ներկայացնում եմ Երուսաղեմի թեման՝ որպես Հայտնության 17-18 գլուխների Մեծ Պոռնիկ, սակայն նույնիսկ այստեղ ես անշեղորեն հետևում եմ Սուրբ Գրքի մեկնաբանությանը, որպեսզի փոխանցեմ ասելիքս: Այլ տեղերում, որտեղ ես ենթադրություններ եմ անում, ես փորձում եմ շատ հստակ ասել այդ մասին և իհարկե չեմ պնդում կամ կառչում այդ կարծիքներից: Ես չեմ օգտվել այլ մեկնաբանություններից կամ այլ մարդկանց մեկնություններից այլ մեկնաբանությունների կամ այլ մարդկանց մեկնությունների հետ՝ բացառությամբ մի քանի հազվագյուտ դեպքերի: Ես գիտակցում եմ, որ սրանով առիթ եմ տալիս, որ ինձ քննադատեն, որ ես պարտավոր էի հաշվի նստել մյուս գիտակների ունեցած իմաստության հետ, սակայն իհարկե եթե ես իմ գիրքը լցնեի ծանոթագրություններով ու հղումներով, արդեն ենթակա կլինեի մեղադրանքի, որ պետք է հետևեի Սուրբ Գրքի անարատ խոսքերին: Կարծում եմ, որ անկեղծ ու բարի ընթերցողը կտեսնի, որ ես արել եմ հենց վերջինը: Իմ նպատակն է եղել՝ նայել

Սուրբ Գրքի անարատ խոսքը բնագիր տեքստում՝ համար առ համար ուսումնասիրելով համատեքստում, հասկանալու համար, թե ինչ նկատի ուներ Հիսուսը Սուրբ Գրքի այդ ամբողջական հատվածներում: Կարծում եմ, ավելի, քան որևէ այլ ասպարեզ, Աստվածաշնչի մարգարեությունների ուսումնասիրությունը տուժում է ենթադրությունների վրա հիմնված վարկածներից, որոնք ծածկվում են համատեքստից դուրս հանված ապացույց հանդիսացող տեսքստերով, որոնք համակցված են ընթացիկ դեպքերով ու հնարամտորեն ստեղծված անհեթեթություններով: Կան մի քանի բացառություններ, որոնք մանրամասն մեկնություն են ապահովում, և ես աղոթում եմ, որ ընթերցողը դրանց շարքում օգտակար համարի նաև այս գիրքը:

Ջոել Մաք Դուրմոն

Powder Springs, GA

Մարտի 10, 2011թ.:

Ներածություն

«Մեծ Բաբելոն՝ անառակների մայրը»

Հիսուսը ժողովրդի ավագ քահանաներին ու ծերերին ասաց. «Դրա համար ասում եմ ձեզ, Աստծո Արքայությունը կվերցվի ձեզանից և կտրվի մի ժողովրդի, որ պտուղ կբերի» (Մատթ. 21.43): Շատերի համար այս համարը հանդիսանում է «փոխարինման վարդապետության» սիրտը. մի գաղափար, ըստ որի Քրիստոնեական Եկեղեցին փոխարինել է Իսրայելի հին ֆիզիկական ազգին որպես Աստծո ընտրյալ ժողովուրդ և քահանայական ազգ (1 Պետ. 2.9-10 և այլն):

Առանց նույնիսկ «փոխարինում» բառն օգտագործելու, սա է ըստ էության սովորեցնում այս համարը: Դա չի նշանակում, որ հրեա ժողովուրդն այլևս չի կարող ճաշակել Աստծո շնորհը, այն պարզապես նշանակում է, որ Աստծո վկան լինելու և երկրի վրա գործելու Հին Կտակարանի ձևը՝ Հին Կտակարանի Տաճարի ծիսական համակարգը, շարքից դուրս է եկել այդ սերնդի ցանկացած ներկայացուցչի հետ միասին, ովքեր մերժեցին ու սպանեցին Աստծո մարգարեներին ու Մեսիային: Տաճարն ավերվեց, որովհետև այն երբեք ծրագրված չէր հավիտենական լինելու, այլ ընդամենը խորհրդապատկերում էր Հիսուս Քրիստոսի իրականությունը, ով իրական Տաճարն էր, իրական Էմանուելը՝ «Աստված մեզ հետ» ճշմարիտ ներկայությունը: Այն հրեաները, ովքեր մերժեցին ճշմարիտ Տաճարը և համառորեն կառչեցին Հին Կտակարանի ավանդույթներից, ճիշտ այնպիսի սարսափելի կռապաշտություն էին անում, ինչպես ցանկացած այլ հեթանոսական ազգ: Արքայությունն առաջ շարժվեց՝ ավելի հիանալի ձևով իրականանալու: Նրանք, ովքեր մերժեցին ընդունել այդ իրականացումը, ճշմարիտ Արքայությունից զրկվեցին. այն վերցվելու էր նրանցից և տրվելու էր Աստծո ժողովրդի հավատարիմ և ճշմարիտ աշակերտներին:

Հիսուսը պախարակում է հին ավանդույթների ուսուցիչներին, ովքեր հակառակվում էին Իրեն: Դրանք հիմնականում փարիսեցիներն էին, և նրանց ուղղված Քրիստոսի հանդիմանությունը կարելի է տեսնել Մատթեոսի 23-րդ գլխում, ինչպես նաև ուրիշ տեղերում: Դա ամբողջական իմաստով տարածվում է Երուսաղեմ ֆիզիկական քաղաքի վրա, որի անհավատության ներկայացուցիչներն էին նրանք: Հիսուսը կանխասացությամբ եզրահանգում է, որ Երուսաղեմն անկում էր ապրելու, որովհետև պատասխանատու էր «երկրի վրա թափված ամբողջ անմեղ արյան համար», և որ դա «մարգարեներին սպանող քաղաք» էր (Մատթ. 23.35, 37):

Խորհրդապատկեր Բաբելոն

Այս խորը մեղադրանքներից մենք կարող ենք հասկանալ, որ Հայտնության 17-18 գլուխների «Բաբելոն» կոչվող քաղաքը Նաբուգոդոնոսորի Բաբելոնը չէ, այլ Երուսաղեմն է կոչվում Բաբելոն, քանի որ ապականել էր ինքն իրեն և նմանվել էր այդ հին հեթանոսական կայսրությանը.

«Այդ կինը ծիրանի ու կարմիր էր հագած (ավագ քահանաների հագուստները Տաճարում. Ել. 25-28, 38-39) և զարդարված էր ոսկով, զարդերով ու մարգարիտներով և իր ձեռքում մի ոսկե բաժակ էր բռնել՝ լցված իր սեռական անբարոյության պզծություններով ու անմաքրություններով: Եվ նրա ճակատի վրա խորհրդավոր մի անուն էր գրված. «Մեծ Բաբելոն՝ անառակների ու երկրի պղծությունների մայրը» (Հայտ. 17.4-5):

Ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ, որ աստվածհայհոյիչ «խորհրդապատկեր» Բաբելոն պոռնիկն իրոք Երուսաղեմն է: Որովհետև նա մեղավոր է ճանաչվում բացառապես այն հանցանքների համար, որոնք Հիսուսն ավելի վաղ վերագրել էր Երուսաղեմին.

«Մի կին տեսա, որ մարգարեների արյունով էր հարբած, Հիսուսի նահատակների արյունով… Եվ մի զորավոր հրեշտակ մի քար վերցրեց, աղորիքի մեծ քարի պես, և շպրտեց ծովի մեջ՝ ասելով. «Այսպես Բաբելոն մեծ քաղաքը ցած կգցվի բռնությամբ և այլևս չի գտնվի… Եվ նրա մեջ գտնվեցին մարգարեների ու սրբերի արյունը և բոլոր նրանց, ովքեր սպանվել էին երկրի վրա» (Հայտ. 17.6, 18.21, 24):

Հնարավոր չէ, որ երկու քաղաքները միաժամանակ մեղավոր լինեն

նույն հանցանքի համար, սակայն նրանցից միայն մեկը հանցավոր լինի բոլոր մարգարեների և երկրի վրա բոլոր սպանվածների սպանության համար: Հիսուսը Մատթեոսի 23-ում հստակ նշում է Երուսաղեմի հանցանքը, այնպես որ մենք պետք է եզրահանգենք, որ Հայտնության մեջ «Բաբելոնը», որ «խորհրդավոր անուն» է, խորհրդապատկերում է, թե ինչ էր դարձել Երուսաղեմը:

Այսպիսով, շատ հավանական է, որ երբ Պետրոսն իր առաջին թուղթը գրում է «Բաբելոնից» (1 Պետ. 5.13), նա բառացիորեն գրում է Երուսաղեմից, որին նա «այս վերջին օրերին» (1 Պետ. 1.20) արդեն մեղադրում է որպես Բաբելոն: Պետրոսը, ըստ էության, թլպատվածների առաքյալն էր, ինչպես Պողոսն է ասում (Գաղ. 2.7): Անսովոր մի բան էր, որ Քրիստոսի համբարձման ու Երուսաղեմի կործանման միջև ընկած ժամանակահատվածում Նոր Կտակարանի գրողները Երուսաղեմին դիմեին դարեր շարունակ Աստծո ժողովրդի մեծագույն թշնամիների անուններով: Այսպիսով, Հայտնությունը խոսում է «մեծ քաղաքի» մասին, որտեղ «մեր Տերն էլ խաչվեց», որ ակնհայտորեն Երուսաղեմն է, «որ այլաբանորեն Սոդոմ ու Եգիպտոս է կոչվում» (Հայտ. 11.8):

Ոմանք հնարավոր է բողոքեն, որ Հայտնություն 17-րդ գլխի Բաբելոնի Մեծ Պոռնիկին որպես Երուսաղեմ մեկնաբանելը հակասեմիստական (հակահրեական) է, բայց դա անհիմն մեղադրանք է: Որքանով էր հակասեմիստական (հակահրեական) Հովհաննեսի կողմից, ով հրեա էր, Երուսաղեմը կոչել «Սոդոմ և Եգիպտոս», փոխարենն աղոթելու դրա խաղաղության համար, ինչպես դիսպենսացիոնալիստներն են պահանջում, որ անենք: Ինչքան համարձակություն էր պետք նրան դրա համար:

Այսպիսով, հասկանալի է դառնում է, թե ինչու է Պողոսը եկեղեցի սողոսկող սուտ վարդապետներին համեմատում փարավոնի մոգերի հետ (2 Տիմ. 3.8-9): Նմանապես, Մատթեոս 2-րդ գլուխը Հիսուսին ներկայացնում է որպես Նոր Իսրայել, որ փախչում է նոր փարավոնից, ով սպանում է բոլոր արու մանուկներին: Բացառությամբ, որ դերերը մի փոքր փոխված են. Հիսուսի ընտանիքը ստիպված է փախչել Եգիպտոս, որպեսզի խուսափի այս նոր փարավոնից, որ Հերովդեսն է: Դասը հետևյալն է. Հին Իսրայելը նմանվել էր Եգիպտոսին՝ Աստծո ժողովրդի հալածողին, և, հետևաբար, պետք է կրեր Եգիպտոսի պատուհասները, մինչդեռ Հիսուսը ճշմարիտ Իսրայելն էր:

Հիշեք, որ հենց Հերովդեսն էր այդ ժամանակ թագավորում

Երուսաղեմում և հենց նա էր, որ վերակառուցեց Տաճարը, որտեղ հրեաներն այդ ժամանակ զոհեր էին մատուցում: Երբ Հիսուսը հայտնվեց տեսադաշտում որպես Վերջնական Զոհ, Տաճարում կատարվող զոհաբերությունները դարձան կռապաշտական: Այդ ժամանակ դա նշանակում էր մերժել Աստծուն, որպեսզի շարունակեին այդ համակարգը: Դա, փաստորեն, ավերվածության, պղծության իրականացումն էր, քանի որ Տաճարում տեղի էին ունենում կռապաշտական զոհաբերություններ, ինչը պատճառ հանդիսացավ, որ Աստծո ներկայությունը հեռանար՝ Տունն ավերակ թողնելով: Իրականում, Աստծո ներկայությունը հավիտյան հեռացավ այդ Տաճարից, որպեսզի այլևս հավիտյան բնակվեր Նոր Տաճարի՝ Հիսուս Քրիստոսի ու Նրա Ժողովրդի մեջ (Հիսուսի խաչվելուց հետո տաճարում զոհաբերություն մատուցելը պղծություն էր, հավատալով որ ապագայում հավատացյալները այս վերականգնված տաճարի մեջ նորից պիտի զոհ մատուցեն երբ Հիսուսը ֆիզիկապես երկրի վրա իշխում է, դա կատարյալ ցնդաբանություն, հոգեկան խանգարվածություն է): Սա տեղի ունեցավ Հիսուսի մկրտության օրը, ինչպես մենք կտեսնենք, և առաջ գնաց Պենտեկոստեի օրը: Մի սերնդի կյանքի ընթացքում կռապաշտ ու շնացող ազգը՝ Երուսաղեմի մեծ պոռնիկ տաճարը, կրեց Աստծո վերջնական հարվածը: Այն կործանվեց ու վերածվեց ավերակների:

Այսպիսով, հասկանալի է դառնում, թե ինչու էին ներշնչված գրողներն իրենց հալածողներին ու եկեղեցի մտած սուտ եղբայրներին դիմում որպես «նրանք, որ ասում են, որ հրեա են, սակայն չեն, այլ սատանայի ժողովարան» (Հայտ. 2.9):

Եզրակացություն

Ժամանակակից քրիստոնյաները պարզապես չեն հասկանում, որ երբ նրանք Իսրայելի երկիրը պահանջում են հին հրեա ժողովրդի համար, որպեսզի նրանք վերակառուցեն Տաճարն ու վերականգնեն զոհաբերությունները, նրանք աղոթում են, որ ամենաքստմնելի ու ամենաահավոր կռապաշտությունը տեղի ունենա: Աստված հենց այդ պատճառով կործանեց Տաճարը ՔՀ 70թ.-ին: Ինչու՞ հիմա Նա պետք է մտափոխվի և ցանկանա, որ այն վերակառուցվի:

Դու կարող ես մտածել, որ քանի որ Աստված Երեմիայի ժամանակներում սա մի անգամ արել է, երբ Իր ժողովրդին աքսորեց,

իսկ նրանց Տաճարը նրանց հետևից քանդեց, իսկ հետո նորից վերադարձրեց իրենց երկիրը, որպեսզի մեկ այլ Տաճար վերակառուցեին, ուրեմն Նա նորից նույնը կանի: Սակայն, հաշվի առնելով Տաճարի ավերման մասին Հիսուսի հայտարարությունները, այս պարագայում իրավիճակն այլ է: Այս անգամ Ճշմարիտ Տաճարն Ինքն էր եկել՝ որպես վերակառուցված (հարություն առած) Տաճար: Այս անգամ աղյուս ու շաղախ այլևս պետք չէր լինելու, այլ դրա փոխարեն հարկավոր էր լինելու անձեռագործ կտրված մի քար (Դան. 2.34, 44-45): Հին հրեա ժողովուրդը պարզապես չաքսորվեց իր թագավորությունից, որպեսզի մի օր վերադառնար: Ոչ: Այս անգամ Արքայությունը վերցվել էր նրանցից և տրվել էր ճշմարիտ ազգին, որպեսզի պտուղ բերեր:

Քրիստոսը մի նոր հարսնացու է ստեղծել: Ինչու՞ պետք է Քրիստոսը ցանկանա վերադառնալ պոռնիկի մոտ, որին Նա մի կողմ գցեց և ամուսնալուծվեց, այն դեպքում, երբ Նա ունի երկնքից իջնող կուսական հարսնացու, որ արդարություն է հագած և ապականված չէ կռապաշտությամբ: Իհարկե, Նա չի ցանկանա: Նա թողեց, որ այդ պոռնիկը հեծնի իր հովանավորին՝ գազան Հռոմին: Եվ անառակների մեծ մայրը կրեց իր անառակության դատաստանը: Նա ամուսնալուծվեց ու զրկվեց ժառանգությունից: Ժառանգությունը հիմա պատկանում է հարսնացուին:

Հիսուսն այս ամենի մասին նախապես գիտեր, առնվազն՝ սկըսած Իր մկրտությունից, ինչպես մենք կտեսնենք: Նա հրեա առաջնորդների հետ ունեցած Իր բազմաթիվ բախումներից, ինչպես նաև Աստվածաշնչի մարգարեություններից գիտեր, որ Տաճարը լքվելու էր, իսկ քաղաքը՝ ավերվելու: Դեպի Երուսաղեմ Հիսուսի վերջին ճանապարհորդությունը հրապարակայնորեն բացահայտում է այն բոլոր փաստարկները, որոնց համաձայն նրանք դարձել էին կռապաշտ ու Մեսիային մերժող մի ազգ: Հիսուսը դատական գործ է ներկայացնում ընդդեմ Երուսաղեմի ուխտադրժության, որպեսզի ամուսնալուծվի այդ կռապաշտ պոռնիկից:

Ղուկասի Ավետարանը միակ Ավետարանն է, որ այս ճանապարհորդությունն արձանագրում է որպես շարունակական մեկ դեպք: Այս գրքի հետագա գլուխներն այդ կարևոր իրավական բացահայտման համար առ համար, առակ առ առակ, գլուխ առ գլուխ ուսումնասիրությունն են: Այդ ճանապարհորդությունը սկսվում է Ղուկաս 9.51-ում տեղի ունեցած կարևոր շրջադարձից հետո:

1. «Երեսդ ուղղիր ընդդեմ Երուսաղեմի» (Ղուկաս 9.51-11.26)

Մարդկանց մեծ մասը չի գիտակցում, որ Հիսուսի առակներից շատերը, եթե ոչ մեծ մասը, նպատակ ունեին՝ լինելու ոչ թե բարոյախրատական պատմություններ, այլ, հատկապես, վկայելու գալիք դատաստանի և փոփոխությունների մասին: Հիսուսը Երուսաղեմին զգուշացնում էր, որ ապաշխարի և ընդունի իր նոր Թագավորին (Հիսուսին), այլապես կընկներ Աստծո վերջնական դատաստանի տակ: Իրականում, ավետարաններում Հիսուսի ուսուցումների մեծ մասը հիմնականում վերաբերում է մինչև ՔՀ 70թ.-ն ապրող մարդկանց, և առանց այս լույսի ներքո դրանք ընթերցելու, մենք սխալ ենք հասկանում դրանք: Իսկ երբ սխալ ենք հասկանում, մենք նաև սխալ ենք կիրառում դրանք:

Ղուկասի Ավետարանի այդ հատվածն այդպիսի մոտեցում է պահանջում: Այս առակները, Հիսուսը պատմում է դեպի Երուսաղեմ ճամփորդելիս (Ղուկաս 9.51-19.28), որոնք գրեթե բոլորն էլ վերաբերում են ըմբոստությանը, անհավատարմությանը, դատաստանին և Երուսաղեմի գալիք կործանմանը:

Դեմ առ դեմ Երուսաղեմին

Ղուկասի Ավետարանի 9-րդ գլխում հետաքրքիր շրջադարձային կետ կա: Ղուկաս 9.51-ում Հիսուսը որոշում է վերջին անգամ Գալիլեայից բարձրանալ Երուսաղեմ և հստակ որոշում է գնալ այդ ուղղությամբ. «Երբ օրերը մոտեցան, որ Նա վեր առնվեր, Նա Իր երեսն ուղղեց՝ գնալու Երուսաղեմ»:

«Իր երեսն ուղղեց» արտահայտությունը, իմ կարծիքով, մի փոքր թույլ է: Հունարեն բառն այս «ուղղեց» բառի համար նշանակում

է վճռական որոշում. Նա ֆիքսեց/տրամադրեց իր երեսը, կամ հաստատակամորեն ուղղեց Իր երեսը: Հունարեն ստերիզո (sterizo) բառը, հնարավոր է, հեռակա կապ ունի հունարեն մի բառի հետ, որ հաճախ թարգմանվում է «խաչ» (ստաուրոս-stauros): Ստաուրոսը վերաբերում էր հռոմեական տանջանքի գործիքի ուղղահայաց փայտին. մի գերան, որն ամրացնում էին գետնի մեջ, որի վրա հետագայում ամրացնում էին նաև հորիզոնական գերանը՝ զոհի հետ միասին: Այս բառը հաստատուն ամրացում է ենթադրում:

Հետաքրքիր է, որ Հիսուսը խաչի մասին առաջին անգամ խոսում է դրանից մի քանի համար առաջ. «Եվ ասաց բոլորին. «Եթե մեկն ուզում է Իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա, իր խաչը վերցնի և հետևի Ինձ»: (Ղուկաս 9.23-24): Մենք, այս համարը կարդալիս, հաճախ կանգ չենք առնում և չենք մտածում, որ Հիսուսին լսողներն այն ժամանակ դեռևս չգիտեին խաչի մասին քրիստոնեական պատմությունը: Նա դեռևս չէր բացատրել, որ Ինքը խաչվելու էր: Նրանք այդ պահին ընդամենը կարող էին դա փոխաբերական իմաստով ընդունել. մեղմ Հիսուսը հեզ ու հանդարտ ձայնով Իր հետևորդներին ասում էր, որ Իրեն հետևելն այնքան դժվար էր լինելու, որքան հռոմեական տանջանքն ու մահապատիժը: «Նա ուզում է, որ ե՞ս խաչ վերցնեմ»:

Իսկ Ղուկաս 9.51-ում, Նա Իր երեսն ուղղում է դեպի հենց Իր նպատակակետը (ճակատագիրը):

Գալիլեայից դեպի Երուսաղեմ ձգվող 105 կիլոմետրանոց ճանապարհը ոտքով կարելի էր անցնել երեք օրում՝ այն էլ Սամարիայի միջով ուղիղ անցնելով: Շատ հրեաներ նախընտրում էին ավելի երկար ճանապարհով գնալ՝ ցանկանալով խուսափել «խառնածին» կռապաշտ սամարացիների (ինչպես իրենք էին համարում նրանց) հետ շփումից: Հիսուսը չմերժեց նրանց, և Իր պատգամն ուղղեց նաև սամարացիներին. «Եվ Նա պատգամավորներ ուղարկեց Իրենից առաջ, ովքեր գնացին և Սամարիայի գյուղերից մեկը մտան, որպեսզի Նրա համար պատրաստություն տեսնեն»:

Սակայն բոլորը Նրա երեսի վրա դա տեսնում էին. Նա մտադիր էր Երուսաղեմ գնալ և, այդ պատճառով, «ժողովուրդը չընդունեց Նրան, քանի որ Նրա երեսն ուղղված էր դեպի Երուսաղեմ»: (Ղուկաս 9.53):

Հրեաներից արհամարհված լինելով՝ սամարացիները նույն կերպ վարվեցին: Նրանք էլ իրենց հերթին իրենց յուրահատուկ պուրի-տանյան ինչ որ դիրք էին գրավել. նրանք որպես հեղինակություն ընդունում էին միայն Մովսեսի գրքերը և պնդում էին, որ պաշ-

տամունքի աստվածաշնչյան ճշմարիտ վայրը ամենաառաջին անգամվա օրհնության լեռն էր՝ Գերիզիմ լեռը (Բ Օրինաց 11.29, 27.12, հմմտ. Հեսու 8.3, 9.7), ոչ թե Երուսաղեմը: Հիսուսն այս մասին արդեն խոսել էր սամարացի կնոջ հետ (Հովհաննես 4.19-26) և հերքել էր սամարացիների տեսակետը: Դրա համար, զարմանալի չէր, որ երբ սամարացիները տեսան, որ Հիսուսը տրամադրված էր Երուսաղեմ գնալու, չընդունեցին Նրան, քանի որ Երուսաղեմի հանդեպ Նրա կենտրոնացումն ընդունեցին որպես իրենց կենտրոնական հավատալիքների մերժում: Պարզ էր, որ Նա իրենցից մեկը չէր («մերոնքական չի»):

Սակայն, սամարացիների տեսակետը հերքելիս, Հիսուսը հերքեց նաև հրեաների ավանդական տեսակետը: Ճշմարտությունը լիովին տարբերվում էր թե՛ առաջին տեսակետից, թե՛ երկրորդից:

Հիսուսն ասաց սամարացի կնոջը. «Հավատա Ինձ, ո՛վ կին, կգա մի ժամանակ, երբ ոչ այս սարի վրա, ոչ էլ Երուսաղեմում պիտի պաշտեք Հորը: Դուք չգիտեք, թե ինչ եք պաշտում, մենք գիտենք, թե ինչ ենք պաշտում, որովհետև փրկությունը հրեաներից է: Բայց ժամանակը գալիս է, և արդեն եկել է, երբ ճշմարիտ երկրպագողները կերկրպագեն Հորը հոգով ու ճշմարտությունով, քանի որ Հայրն այսպիսի մարդիկ է փնտրում, որ Իրեն երկրպագեն»: (Հովհաննես 4.21-23, շեշտադրումն իմն է):

Հիսուսի այս մեկնաբանությունը մեզ օգնում է կողմնորոշվել դեպի Երուսաղեմ Նրա ճանապարհորդության վերաբերյալ, որ սկսվեց Ղուկաս 9.51-ում: Այդ պահից ի վեր, Հիսուսն ընդամենը պարզաբանում, կրկնում և հաստատում էր հետևյալ պատգամը. Աստված կանչում է ճշմարիտ երկրպագողների, և Երուսաղեմն այլևս ապագա ծրագրի մեջ մաս չի կազմելու: Ըստ Հիսուսի, այս հսկայական փոփոխության ժամը գալիս էր և, նույնիսկ, «արդեն եկել էր», նկատի ունենալով, որ այն արդեն սկսվել էր այդ ժամանակ՝ առաջին դարում:

Նրա աշակերտներին իրոք բարկացրել էր սամարացիների սառը վերաբերմունքը: Նրանք ուզում էին Աստծո դատաստանը բերել նրանց վրա.

Եվ երբ Նրա աշակերտները՝ Հակոբոսն ու Հովհաննեսը, սա տեսան, ասացին. «Տե՛ր, կուզե՞ս ասենք, որ երկնքից կրակ իջնի և նրանց բնաջնջի»: Բայց Նա շրջվեց ու հանդիմանեց նրանց: Եվ նրանք ուրիշ գյուղ գնացին:

Ավելի Քիչ հուսալի ձեռագրերը նաև ավելացնում են, թե ինչպես

է Նա նրանց հանդիմանել: Հակոբոս թագավորի (King James) Աստվածաշնչի թարգմանության տարբերակում կարդում ենք. «Իսկ Նա շրջվեց, հանդիմանեց նրանց ու ասաց. «Չգիտեք, թե ինչ տեսակ հոգուց եք դուք: Քանի որ մարդու Որդին եկավ ոչ թե կործանելու մարդկանց կյանքերը, այլ՝ փրկելու դրանք» (հհ. 55-6): Բայց սա, գրեթե հաստատ կարելի է ասել, որ հետո է ավելացվել սկզբնական տեքստին (իրականում, հետագայում ավելացված այս տեքստը ներառող ձեռագրերը միմյանցից տարբեր վարկածներ են առաջադրում Հիսուսի ենթադրյալ ասածի վերաբերյալ): Այս պատմության մեջ պետք է գրված լինի, որ Նա ընդամենը հանդիմանեց նրանց:

Այս հանդիմանությունը չի նշանակում, որ Հիսուսն Իր մտքում չէր դատապարտում նրանց: Իրականում, շատ հավանական է, որ Նա առաջինն Իր մտքում դատապարտեց նրանց: Բայց հարցը նրանում է, որ ժամանակը դեռ չէր հասել. Նա չէր ցանկանում անմիջապես դատապարտել նրանց, քանի որ Իր պատգամի վերջնական վկայությունը դեռ տեղի չէր ունեցել: Այն ժամանակ, երբ փարիսեցիները հակառակվում էին և Հիսուսից նշան էին պահանջում, Նա պատասխանում էր. «Այս սերունդը չար սերունդ է, նշաններ է փնտրում, սակայն նրան ուրիշ նշան չի տրվի, բացի Հովնանի նշանից: Որովհետև ինչպես Հովնանը Նինվեի ժողովրդի համար նշան եղավ, այնպես էլ Մարդու Որդին կլինի այս սերդնի համար (Ղուկաս 11.29-30, հմմտ. Մատթեոս 12.39-42):

Սկզբում պետք է Հիսուսի հարությունը տեղի ունենար: Այնուհետև Ավետարանը պետք է քարոզվեր բոլոր ազգերին՝ այս նշանը որպես վկայություն ունենալով (Մատթ. 24.14): Սա պետք է տեղի ունենար (և տեղի ունեցավ. Գործք 17.6, Գործք 24.5, Հռոմ. 1.8, Կող. 1.5-6) և «այդ ժամանակ վերջը կգա» (Մատթ. 24.14): Բայց մինչև այդ պահը, վրեժխնդրության ժամանակ չէր, այլ միայն մարգարեական զգուշացման:

Չեմ կարծում, որ բավականաչափ ուշադրություն դարձվել է, թե որքան խորն էր Հիսուսի ծառայությունն այս ճանապարհորդության ընթացքում (Ղուկ. 9.51բ) կենտրոնացած Երուսաղեմի գլխին կախված դատաստանի վերաբերյալ զգուշացման վրա: Մենք հաճախ ենք ուշադրություն դարձրել Ձիթենյաց լեռան վրայի քարոզի (Մատթ. 24) Ղուկասի տարբերակի վրա Ղուկաս 21-ում, և դա շատ հստակ է: Սակայն այն պահից ի վեր, երբ Նա Իր երեսն ուղղեց՝ գնալու Երուսաղեմ, անհավատարիմ հուդաիզմի հանդեպ Նրա մեղադրականն իշխող

է դառնում ճանապարհորդության ընթացքում Նրա պատգամների մեջ: Ղուկասի ավետարանի հաջորդ գլուխները, մինչև 21-րդ գլխի Ձիթենյաց լեռան դատապարտությունները, պարունակում են 27-ից ոչ պակաս դատապարտություններ ու զգուշացումներ: Դրանք ընդհանրական զգուշացումներ չէին՝ ուղղված ընդդեմ չարությանը (չարության դեմ): Դրանք հասցեագրված մեղադրանքներ էին՝ մասնավորապես ուղղված Երուսաղեմին և չհավատացող հրեաներին:

Հիսուսն իրականացրեց մարգարեի դեր՝ ուխտադրժության մեղադրանք ներկայացնելով ուխտը խախտողների, ուխտի անհավատարիմ կողմի հանդեպ, այս դեպքում՝ Երուսաղեմի հանդեպ: Նա անհավատարիմ էր եղել: Նրա կռապաշտությունները վերաճել էին հոգևոր անառակության: Ահա թե ինչու է Հայտնության 17-18 գլուխներում Երուսաղեմը կոչվում «Մեծ պոռնիկ»: Մարգարեներն ավելի վաղ հենց այս թեման էին օգտագործում (Եր. 3, Եզեկ. 16.26):

Այդ 27 դեպքերից մոտ կեսն առակներ են: Մենք բավականաչափ հաճախ չենք ներկայացրել, թե որքան ուղղակիորեն են այս առակները վերաբերում Երուսաղեմի գալիք կործանմանը: Հիսուսն ընդամենը բարոյախրատական պատմություններ չի պատմում փոքրիկ երեխաների համար: Նա դրանք ներկայացնում է որպես սթափեցնող զգուշացումներ՝ ընդդեմ չհավատացող այն քաղաքի, որի դեմ Նա հենց նոր ուղղել էր Իր հայացքը:

Անհավատարմության 14 պատմություններ

Իր ճամփորդության ընթացքում, որ հետևեց Ղուկ. 9.51-ի շրջադարձային կետին, Հիսուսը դատաստանի այս քաղաքականացված սպառնալիքները ներկայացրեց առնվազն 14 առակի տեսքով: Առջևում ընկած մեծ ամուսնալուծությունից առաջ (Եհովան Իսրայելից շուտով ամուսնալուծվելու էր), Հիսուսը [դատարանի առջև] ներկայացնելու էր ողջ գործը/իրականությունը: Ահա թե ինչպես մենք պետք է հասկանանք Սուրբ Գրքի այս հատվածի համապատասխան առակները:

Բարի սամարացին (10.25-37)

Հիսուսը հենց նոր էր անցել Սամարիայով և, միգուցե, դեռ ամբողջովին դուրս չէր եկել այդ տարածքից: Պատմության մեջ

նշված Երիքով տանող ճանապարհին անցնում էր հենց այդ նույն տարածքով (Հիսուսն Ինքն էլ պետք է անցներ Երիքովի միջով այս ճանապարհորդության ընթացքում (Ղուկ.19.1)): Այդ պահին Հիսուսի համար հարմար առիթ էր այս առակի համար օգտվել հրեաների և սամարացիների միջև եղած թշնամությունից: Օրինականներից (Փաստաբաններից) մեկը մոտեցել էր Հիսուսին և հարցրել, թե ինչպես կարող էր երկինք գնալ: Նա բծախնդիր մարդ էր, ով նաև ուներ համընդհանուր մարդկային հնարամտություն՝ արդարացնելու իր մեղավոր վարքը օրենքի և փաստի մանրակրկիտությունների համադրություններով: Իսրայելի հանդեպ մեղադրանքն այստեղ արտահայտվում է երկու ձևով. առաջինը, Հիսուսը բացահայտում է, թե ինչ է իրականում օրենքը: Դա վազքուղու արգելքներ չեն, որոնք հաղթահարելով դու դափնի ես վաստակում, այլ այն ուղեցույց է՝ դեպի սիրո մեծագույն պատվիրանը: Իսրայելն իր բոլոր ծեսերով, արարողություններով և մաքրություններով անտեսել էր սա: Հիսուսը, ավելի ուշ, հանդիմանում է օրինականներին/փաստաբաններին՝ մարդկանց վրա ծանր բեռներ դնելու համար (Ղուկ. 11.45-6): Երկրորդ, և սա իրոք ցնցող է, որ պատահական մի սամարացի կարող էր ավելի լավ դրսևորել իրական կրոնը, քան փարիսեցին կամ ղևտացին: Սա ուղղակի դատապարտություն էր՝ ուղղված փարիսեցու պարծանքին, իր մաքրության վերաբերյալ, և տաճարի ծեսերի հանդեպ ղևտացիների ներդրած ուշադրությանը, որոնք երկուսն էլ զուրկ էին Աստծո ողորմությունից ու սիրուց: Սա արմատական մոտեցում էր: Մի՞թե իրոք ավելի լավ էր լինել խառնածին սամարացի, քան փարիսեցի, կամ նույնիսկ՝ քահանա: Հիսուսը ստիպեց օրինականին իր բերանով խոստովանել սա: Հիսուսն ասաց. «Գնա, և դու էլ այդպես արա»: Այս առակում Հիսուսը ցույց է տալիս, թե որքան էր Իսրայելն ապականվել և, հետևաբար, անտեսել Աստծո օրենքը՝ ուխտի բուն օրենքը:

Հզոր մարդու առակը (11.15-26)

Երբ Հիսուսին մեղադրեցին, որ Նա Բեհեղզեբուղով է դուրս քշում դևերին, Նա պատասխանեց փաստարկով, որ պառակտված թագավորությունը չի կարող կանգուն մնալ: Նա անմիջականորեն նկատի ուներ նաև Իր թագավորությունը, որը պառակտված չէր. «Սակայն, եթե Ես Աստծո մատով եմ դուրս քշում դևերին, ուրեմն Աստծո թագավորությունը եկել է ձեզ վրա… Ամեն մարդ որ Ինձ հետ չի,

Ինձ հակառակ է, և նա ով որ Ինձ հետ չի հավաքում, ցրում է»: (11.20, 23): Հզոր մարդու օրինակը, ով կապում է իրենից թույլին, Հիսուսն է, ով(որ ??) կապում է սատանային: Ժամանակը եկել էր, որ Նրան լսողներն ընտրեին, թե ում կողմից են ուզում լինել՝ Հզոր մարդու՞, թե՞ կապվածի: Հիսուսն իրոք դուրս էր քշել սատանային: Սակայն եթե այդ չհավատացող հրեա լսողները շարունակեին Հիսուսին չընդունել իրենց տուն, նրանց տունը կմնար դատարկ ու խոցելի՝ սատանայի հարձակումների համար:

Հիսուսն այստեղ սկսում է պատասխանել՝ խոսելով ավերածության մասին. «Ցանկացած թագավորություն, որ իր մեջ բաժանված է, կավերվի» (Ղուկ. 11.17): «Ավերվել» բառի հունարեն տարբերակը (էռեմու-eremoo բառից) տեխնիկական ծագում ունի, որը հատկապես վերաբերում է Աստծո դատաստանին Իսրայելի հանդեպ՝ նրա ուխտադրժության համար: Ղևտացիների 26.21-43-ը ավերածության վերաբերյալ նմանատիպ լուրջ խոստում ունի անհավատարմության համար. ուխտի անեծքների միայն այս քսան համարներում «ավերել» կամ «ավերածություն» բառերը յոթ անգամ կրկնվում են: Այս բառը, այնուհետև, տասնյակ անգամներ հայտնվում է մարգարեությունների մեջ՝ ներառյալ Դանիելի հայտնի «ավերածության պղծությունը» արտահայտությունը (Դան. 9.27, 11.31, 12.11), որոնք բոլորն էլ վերաբերում են դատաստանին: Հիսուսը, ավելի ուշ, ուղղակիորեն խոսում է Իսրայելի ապագա ավերածության մասին (Ղուկ. 13.34-35, 21.20, Մաթ. 24.15):

Ավերածությունը կենդանության հակառակն է: Ավերածությունն իր սկզբնական իմաստով չէր նշանակում մարդկանց բացակայությունն այդ երկրում, (թեև, մեկը մյուսի հետևանքն է), այլ, հիմնականում, վերաբեվում էր Աստծո բացակայությանը ժողովրդի մեջ ու այդ երկրում: Հնազանդության համար Աստված խոստանում էր բնակվել և «քայլել» Իր ժողովրդի մեջ (Ղևտ. 26.11-12), մինչդեռ անհնազանդության համար անեծքը նշանակում էր ավերածություն: Մենք տեսնում ենք, օրինակ, որ Աստված բառացիորեն լքում է Տաճարը մարդկանց ըմբոստության պատճառով (Եզեկ. 10-12): Տերը հեռանում է Տաճարից և գնում է Ձիթենյաց սարը:

Սա համապատասխանում է Ղուկաս 11-րդ գլխի այն տան օրինակին, որ «ավլած» (դատարկ) էր և «չբնակեցված»: Աստված մարմնով հայտնվեց (Մարմնով հայտնված Աստված)՝ Հիսուսը, բնակվեց ու քայլեց Ուխտի ժողովրդի մեջ (Էմմանուել, Աստված մեզ

հետ): Սակայն նրանք, ըմբոստ լինելով, մերժեցին Նրան: Այսպիսով, Նա հայտարարեց տան/օջախի գալիք ավերածության մասին, երբ գնաց, քննեց և տեսավ տաճարի ապականությունները(Երբ նա գալիս է, քննում է, և տաճարի մեջ ապականություններ է տեսնում) (Ղուկ. 19.45-46, Մատթ. 21.12-15), բառացիորեն վերջնավճռի տեսքով ներկայացրեց մեղադրական եզրակացությունը (դատական գործը), ինչպես արեց Եզեկ. 12.22-25-ում հեռանալով տաճարից և գնալով Ձիթենյաց լեռը (Մատթ. 24.3, Մարկ. 13.3): Հենց այնտեղից էլ Նա հայտարարեց այդ տաճարի գալիք ավերածության մասին (Մատթ. 24, Մարկ. 13, Ղուկ. 21):

Ոչ միայն Հիսուսն է սպառնում «անհավատ սերնդին» (Ղուկ. 9.41, 11.29-32, 50-51) «ավերվածությամբ» (11.17, 13.34-35, 21.20), այլ կա նաև հետագա տեքստային կապ Ղևտացիների 26-րդ գլխի հետ: Ղևտացիների 26-րդ գլխում, Աստված չորս անգամ խոստանում է, որ եթե ապստամբ հրեաները չենթարկվեն Իր հանդիմանություններին, Նա նրանց կպատժի յոթ անգամ ավելի իրենց մեղքերի համար (Ղևտ. 26.18, 21, 24, 28): Ղուկ. 11.26-ի Հիսուսի առակում դուրս քշված դևը գնում է և գտնում ուրիշ յոթ դևեր, որպեսզի գալով՝ տիրեն չբնակեցված տանը:

Այս յոթնապատիկ ավելի վատ պատժի մասին հայտարարելիս, Աստված այսպես է ասում. «Ես Իմ երեսը քո դեմ կուղղեմ» (Ղուկ. 26.17): Հին Կտակարանի Սեպտուագինտայում (Յոթանասունից թարգմանություն) հունարեն արտահայտությունը նույնն է, ինչ մեր շրջադարձային կետի հատվածում (Ղուկ. 9.51). Հիսուսն Իր «երեսն ուղղեց»՝ գնալու Երուսաղեմ: Ղևտացիների 26.17-ում, Աստված ասում է, որ Իր երեսն ուղղելու է ընդդեմ Իր ժողովրդի: Հունարեն այս արտահայտությունն՝ էֆ հումաս (eph' humas)՝ «ընդդեմ քեզ» այս համատեքստում ակնհայտորեն դատաստան է նշանակում: Ճիշտ նույն արտահայտությունը հայտնվում է Հզոր մարդու առակում. «Աստծո թագավորությունը եկել է ձեզ վրա (eph' humas)» (Ղուկ. 11.20): Հիսուսի անձում Հզոր մարդու թագավորությունն իրոք եկել էր անհավատարիմ ժողովրդի դեմ:

Հիսուսի այս ճանապարհորդությանը հետևելով՝ մենք հասկանում ենք, որ Նա արձակուրդի չէր գնացել: Նա գալիք ավերածության օրինական (իրավական) հայտարարությունն էր անում: Նա իրոք Իր երեսն ուղղել էր ընդդեմ Երուսաղեմի:

Եզրակացություն (Ամփոփում)

Մենք դեռ նոր ենք սկսել Ղուկաս 9.51-19.28 հատվածի ճանապարհորդության ընթացքում Իսրայելի դեմ ուղղված Հիսուսի մեղադրականի մեջ հնչած վախճանաբանական (պրետերիստական, մարգարեական) առակների և դրանց տեղի վերաբերյալ մեր հետազոտությունը (ուսումնասիրությունը)): Մենք միայն նայեցինք ներածությունը և երկու առակ (տասնչորս առակներից): Հետագայում մենք ավելի շատ կուսումնասիրենք՝ Հիսուսի մարգարեական առաքելության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար:

2. Չօգտագործված կոչում (Ղուկաս 11.33-12.32)

Դեռևս երեսն ուղղած ընդդեմ Երուսաղեմի (Ղուկ. 9.51)՝ Հիսուսը շարունակեց Իր ճանապարհորդությունը՝ Իր մեղադրական հայցը ներկայացնելով ընդդեմ շնացող քաղաքի: Հաջորդելով հզոր մարդու առակին (11.1-26)՝ այս գլուխն առաջ կգնա այդ դատական հայցի մեջ:

Ինչպես նախկինում էլ տեսանք, Հիսուսը կատարում էր մարգարեի դեր՝ ուխտի հայցը ներկայացնելու այդ ուխտի անհավատարիմ կողմին, այս դեպքում՝ Երուսաղեմին: Երուսաղեմն անհավատարիմ էր եղել: Նրա կռապաշտությունը վերաճել էր հոգևոր անառակության: Ահա թե ինչու է Երուսաղեմը Հայտնության 17-18 գլուխներում կոչվում «Մեծ պոռնիկ»: Ավելի վաղ, մարգարեներն այդ նույն անունն էին օգտագործում (Եր. 3, Եզեկ. 16.26, Եզեկ. 23): Եզեկիել 23-րդ գլուխն ասում է, որ Երուսաղեմն ավելի շատ անառակություն արեց, քան նրա արհամարհված քույր Սամարիան: 16-17 համարներն ասում են.

> «Երբ նա տեսավ նրանց (բաբելոնացիներին), կրքոտվեց նրանց հանդեպ և դեսպաններ ուղարկեց Քաղդեա: Եվ բաբելոնացիները, գալով, նրա հետ սիրո անկողին մտան և պղծեցին նրան իրենց տռպանքով: Բայց երբ պղծվեց նրանց կողմից, զզվանքով հեռացավ նրանցից: Երբ նա այսքան բացահայտ պոռնկացավ և իր մերկությունը ցուցադրեց, Ես զզվանքով հեռացա նրանից, ինչպես զզվանքով հեռացել էի նրա քրոջից (Սամարիա)»:

Ք.ա. 6-րդ դարի մարգարեությունն ուղղակի նախատիպն է Երուսաղեմի ավելի մեծ հավատուրացության, որ Հիսուսը հանդիմանեց առաջին դարում: Այսպիսով, մենք ուղղակի զուգահեռներ ենք տեսնում Հայտնության գրքում նկարագրված Մեծ պոռնիկի հետ, «որի հետ պոռնկացան երկրի բոլոր թագավոր-

ները» (Հայտ. 17.2, 18.3, 9):

Դեպի Երուսաղեմ Իր ճամփորդության ընթացքում, դատաստանի ուղերձը փոխանցելու Հիսուսի հիմնական մեթոդն առակներն էին: Նա ցանկանում էր այդ քաղաքին փոխանցել այն ճշմարտությունը, որ նրա ինքնավստահությունը փուչ էր և մահացու:

Վառված ճրագի առակը

Վառված ճրագի առակը ողջ աշխարհի համար ճշմարիտ հոգևոր վկայություն լինելու մասին է: Հիսուսն ասում է. «Ոչ ոք ճրագը վառելուց հետո այն չի դնում նկուղում, կամ զամբյուղի տակ, այլ ճրագակալի վրա, որպեսզի մտնողները տեսնեն լույսը» (11.33):

Հիսուսը ճիշտ նույն դասը սովորեցնում է մի փոքր ավելի վաղ՝ Ղուկ. 8.16-18-ում. «Ոչ ոք ճրագը վառելով չի ծածկում այն ամանով կամ դնում մահճակալի տակ, այլ դնում է ճրագակալի վրա, որպեսզի ներս մտնողները լույսը տեսնեն»: Տարբերությունը լսարանն էր: Առաջին դեպքում՝ Ղուկաս 8.16-ում, Հիսուսը մի կողմ քաշվեց ամբոխից՝ առանձին խոսելու Իր աշակերտների հետ: Նա հենց նոր էր նրանց ասել, որ Ինքը ժողովրդի հետ խոսում է առակներով, և միայն մի քանի ընտրյալների կտրվեր դրանք հասկանալու շնորհը (Ղուկ. 8.10): Այս հատվածում, Հիսուսն ավարտում է հանելուկային կամ առեղծվածային (և, կարծես, սառը) մի արտահայտությամբ. «Ուրեմն, ուշադի՛ր եղեք, թե ինչպես եք լսում, որովհետև նա ով ունի, նրան ավելին պիտի տրվի, իսկ ով չունի, նրանից կվերցվի նույնիսկ այն, ինչ նա կարծում է, թե ունի» (Ղուկ. 8.18):

Ո՞րն է սրա իմաստը: Եթե մենք սա կիրառենք ողջ մարդկության համար ընդհանրապես, այն մշուշոտ ու էզոթերիկ կդառնա: Սակայն եթե մենք այն հասկանանք Իսրայելի ժողովրդի և այդ երկրում ունեցած իր կարծեցյալ ժառանգության համատեքստում, միանգամայն հասկանալի է դառնում: Նա, «ով ունի», այնպիսի մեկն է, ով հավատ և հասկացողություն ունի: Նրան «ավելին» կտրվի, այսինքն՝ Արքայությունը: Նա, «ով չունի» հասկացողություն, որ չհավատացող հրեան է, ով թվում է թե ունի, կամ մտածում է, որ լուսավորվածություն ունի՝ մտնելու Արքայություն, սակայն չունի: Նրանից կվերցվի նույնիսկ այն, ինչ նա կարծում է, թե ունի: Հիսուսը հատկապես ուզում էր, որ Իր աշակերտներն իմանային, որ մարդկանց մեջ շուտով բաժանում էր տեղի ունենալու՝ անհավատների

վրա Իր դատաստանի և Իր ընտրյալների վրա Իր շնորհի հիման վրա:

Ղուկաս 11.33-ում, սակայն, լսարանն այլ էր: Այստեղ Հիսուսն Աստծո ողջ ժողովրդին էր դիմում պահանջով, որպեսզի չթաքցնեին իրենց լույսը, որ նրանց հավատարիմ վկայությունը պետք է լիներ՝ Իր մասին: Լեռան քարոզում Հիսուսը բացահայտում է այս թեման. «Դուք եք աշխարհի լույսը: Սարի վրա հիմնված քաղաքը չի կարող թաքնվել» (Մաթ. 5.14): Սա մեզ տանում է դեպի Իր ժողովրդի հետ ունեցած Աստծո ուխտի սիրտը: Նրանց այս երկիր կանչելու Աստծո սկզբնական նպատակն այն էր, որ նրանք վկա լինեին բոլոր ազգերի համար.

> «Տեսեք, ես ձեզ դատաստաններ ու կանոններ սովորեցրեցի, ինչպես իմ Տեր Աստվածն ինձ հրամայեց, որ դուք կատարեք դրանք այն երկրում, ուր հիմա գնում եք տիրելու: Պահեք դրանք ու կատարեք դրանք, որովհետև դա կլինի ձեր իմաստությունն ու հասկացողությունը բոլոր ազգերի առաջ, ովքեր, երբ լսեն այս բոլոր դատաստանները, կասեն. «Իրոք այս մեծ ազգն իմաստուն և հասկացող ժողովուրդ է»: Որովհետև ո՞ր ժողովուրդն է, որ այսքան մոտիկ աստված ունենա, ինչպես մեր Տեր Աստվածն է մեզ այսքան մոտ, երբ աղաղակում ենք Նրան: Եվ ո՞ր մեծ ժողովուրդն է, որ ունի այնքան արդար դատաստաններ ու կանոններ, ինչպես այս օրենքը, որ ես ձեր առջև այսօր դնում եմ» (Բ Օր. 4.5-8):

Դա Աստծո խոստումն էր, որ ուխտի հանդեպ հավատարմության միջոցով այս վկայությունը դարձի կբերեր ողջ աշխարհը (Թվ. 14.21, Սաղմ. 2, Սաղմ. 72.5–8, Ես. 2.1–4, Ես.11.9, Եր. 3.16–17, Եր. 31.31–4, Դան. 7.13–14): Եսային պատկերում է լուսավորված աշխարհի տեսիլքը՝ որպես այդ Լեռան վրայի Քաղաքի հավատարմության հետևանք.

> «Վերջին օրերում կլինի, որ Տիրոջ տան լեռը կհաստատվի որպես ամենաբարձր լեռ և բոլոր բլուրներից վեր կբարձրանա, և բոլոր ազգերը հեղեղի պես նրա մոտ պիտի գան: Եվ շատ ժողովուրդներ պիտի գան և ասեն. «Արի գնանք Տիրոջ լեռը, Հակո-

> բի Աստծո տունը, որպեսզի նա մեզ սովորեցնի իր ճանապարհները, և մենք քայլենք նրա շավիղներով»: Որովհետև Սիոնից է օրենքը դուրս գալու, և Աստծո խոսքը՝ Երուսաղեմից: Նա շատ ազգերի միջև դատաստան կանի և շատ ժողովուրդների վեճերը կլուծի: Եվ նրանք իրենց սրերից խոփեր պիտի կռեն և իրենց նիզակներից՝ մանգաղներ: Ազգ ազգի վրա այլևս սուր չեն բարձրացնի, ոչ էլ պատերազմել կսովորեն» (Ես. 2.2-4):

Երուսաղեմը բառացիորեն գտնվում էր բլրի վրա, բայց այդ պահին Աստծո ժողովուրդը ցավալիորեն կորցրել էր Աստծուց տրված իր առաքելությունը, ինչպես շատ անգամներ իրենց ողջ պատմության ընթացքում: Եսային մի անգամ նրանց ձախողումը նմանեցնում է հղի կնոջ երկունքի. երբ նա ծներ, ընդամենը քամի էր ծնվելու.

> «Հղի կնոջ նման, որ ցավ է քաշում և աղաղակում է երկունքի մեջ, երբ մոտ է ծննդաբերելու, այնպես էլ մենք ենք քո պատճառով, ով Տեր: Մենք հղի էինք, ցավ քաշեցինք, սակայն քամի ծնեցինք: Մենք երկրին ազատություն չբերեցինք, և աշխարհի բնակիչները չընկան» (Ես. 26.17-18):

Իրոք, նրանք «երկրին ազատություն չբերեցին»: Բայց Աստված երբեք չի ձախողվում Իր խոստումների հարցում: Այսպիսով, սրա համար միայն մեկ պատճառ կար. *մարդիկ ուխտը չպահեցին, այլ իրենց լույսն իրենց մեջ պահեցին և թաքցրեցին այն աշխարհից: Հիսուսը հիմա նրանց հանդիմանում է նույն պատգամով:*

Այս կարճ առակի այսպիսի ընկալումը համապատասխանում է Հիսուսի ուսուցման համատեքստին: Վառված մոմի այս առակին նախորդում է մի դրվագ, որտեղ Հիսուսը հրաժարվում է ստիպողաբար հրաշք ցույց տալուց՝ Իր ով լինելու վերաբերյալ: Ավելին, Նա նրանց անվանում է «չար սերունդ» և ասում, որ նրանց դատաստանն ավելի վատ կլինի, քան որոշ հեթանոս ազգերի, որոնք, Աստծուց ավելի քիչ հայտնություններ ունենալով հանդերձ, պատրաստակամությամբ ընդունեցին լույսը: Նա ասաց.

> «Այս սերունդը չար է… հարավի թագուհին դատաստանի օրը վեր կկենա այս սերնդի հետ և

> կդատապարտի նրանց, որովհետև նա աշխարհի ծայրից եկավ լսելու Սողոմոնի իմաստությունը, և ահա, Սողոմոնից մեծ մեկը կա այստեղ: Նինվեի մարդիկ դատաստանի օրը վեր կկենան այս սերնդի հետ և կդատապարտեն նրան, քանի որ իրենք Հովնանի քարոզչությունով ապաշխարեցին, և ահա, Հովնանից մեծ մեկը կա այստեղ» (Ղուկ. 11.29-32):

Հիսուսի օրերի «չար սերունդ» հրեաները շարունակում էին տարված լինել իրենց լուսավորված լինելու մտածելակերպով և միջազգային ճոխության իրենց ցուցադրական արտաքինով: Այսպիսով, Հիսուսն Իր աշակերտներին գաղտնաբար ասում է, որ վառված ճրագի առակը նշանակում էր, որ ժառանգության մեծ բաժանում էր գալիս՝ ուխտին հավատարիմ մնացողների հիման վրա (8.16-18): Բայց երկրորդ անգամ, երբ Նա պատմում է այդ առակը, այն կարծես բաց հանդիմանություն լինի այդ չար սերնդի ձախողման վերաբերյալ:

Սա երևում է ոչ միայն հարավի թագուհու և նինվեցիների հետ համեմատության մեջ, այլ նաև հրեա առաջնորդներին հանդիմանելու մեջ, առակից անմիջապես հետո: Հիսուսը բացահայտ հանդիմանում է փարիսեցիների կեղծավորությունը, հպարտությունը և հիմարությունը (11.37-44), ինչպես նաև օրինականների մարդասպան օրինականությունները (11.45-52): Նրանք ոչ միայն մերժեցին լույսն իրենց կյանքում, այլ նաև այն թաքցրեցին մյուսներից. նրանք «վերցրել էին գիտության բանալին» (11.52):

Այս անհավատարիմ առաջնորդները կանգնած էին որպես այդ ողջ չար սերնդի ներկայացուցիչներ: Այսպիսով, Աստծո վրեժխնդրությունը, որպես այդպիսին, գալու էր ողջ սերնդի վրա. «աշխարհի սկզբից ի վեր թափված բոլոր մարգարեների արյունը: … Այո, ասում եմ ձեզ, այս սերնդից կպահանջվի» (11.50-51):

Հիսուսը դրանից հետո շարունակում է խոսքը՝ «փարիսեցիների խմորից» զգուշանալու (12.1) և Իր վկան լինելու քաջության մասին (12.8-12): Մեծ դատաստանը գալիս էր. մի դատաստան, որի ժամանակ նրանք, ովքեր ընդամենը կարծում էին, որ ունեին ժառանգությունը, ամեն բան կկորցնեին, և միայն նրանք, ովքեր պահում էին ճշմարիտ լույսը, կստանային Արքայությունը:

Անմիտ հարուստի առակը (Ղուկ. 12.13-21)

Մեծ պոռնիկի (Հայտ. 17-18) դատաստանի մեջ մեծ հարց է հարստության հանդեպ նրա սխալ վերաբերմունքը: Աստված օրհնել էր այդ ազգին, սակայն նա ավելի շուտ վստահեց հարստությանը, քան Աստծուն: Փոխարենը վկա լինելու բոլոր ազգերի համար, կառչած մնալով Աստծո օրենքից (նորից, սկզբնական նպատակը. Բ Օր. 4.5-8), նա իրեն շնորհված դիրքն ընդունեց որպես իր արժանիք և տրվեց ճոխության և անբարոյության: Նա այդ հարստությունն ավելի շուտ համարեց իր վարձատրությունը, քան որպես գործիք՝ իրականացնելու իր առաքելությունը: Արդյունքում, նա կկորցներ երկուսն էլ:

Հիսուսը Երուսաղեմին ուղղված այս հանդիմանությունը հատկապես արտահայտում է անմիտ հարուստի առակում: Օրհնությունները թափվել էին, սակայն, փոխարենը դրանք Աստծո փառքի համար օգտագործելու, անմիտ հարուստը դրանք կուտակում էր իր համար: Սակայն, հետո գալիս է հաշվետվության օրը.

> «Մի հարուստ մարդու արտեր առատ բերք տվեցին, և նա ինքն իրենց մտածեց. «Ի՞նչ պետք է անեմ, քանի որ հունձքս լցնելու տեղ չունեմ»: Եվ ասաց. «Այսպես կանեմ. կքանդեմ ամբարներս և ավելի մեծերը կսարքեմ և այնտեղ կկուտակեմ իմ բերքն ու բարիքը: Եվ անձիս կասեմ. «Ա՛նձ, երկար տարիների համար բարիքներ ունես կուտակված. հանգստացի՛ր, կե՛ր, խմի՛ր, ուրա՛խ եղիր»: Բայց Աստված նրան ասաց. «Անմի՛տ, այս գիշեր հոգիդ քեզանից կպահանջվի, և ու՞մ են մնալու քո պատրաստած բաները»: Այսպես է նա, ով իր անձի համար հարստություն հավաքում է, սակայն Աստծով չի հարստանում» (Ղուկ.12.15-21):

Սա, դարձյալ, զուգահեռ է Մեծ պոռնիկի դատաստանի հետ.

> «Ինչպես նա ինքն իրեն փառավորեց ու ճոխության մեջ ապրեց, այնպես էլ նրան տվեք նույն չափով չարչարանք և սուգ, որովհետև իր սրտում ասում է. «Ես թագուհի եմ նստած, որբևայրի չեմ և երբեք սուգ չեմ տեսնելու»: Այդ պատճառով նրա պատուհասները մեկ օրում կգան՝ մահ, սուգ և սով, և

> կրակով պիտի այրվի, քանի որ հզոր է Տեր Աստված, ով դատեց նրան…
>
> Քո հոգու փափագած պտուղը քեզանից գնաց, և քո բոլոր նրբաճաշակ բաներն ու շքեղությունները քեզանից կորան ու ալևս չեն գտնվի» (Հայտ. 18.7-8,14):

Ճոխության հանդեպ նրա հոգու փափագի և դրանց հանկարծակի ու ողբերգական կորստի նկարագրությունը շարունակվում է մինչև Հայտնության գրքի 18-րդ գլխի վերջը:

Այս առակն էլ, մյուս շատերի նման, տրվեց որպես ուղղակի պատասխան անհատական մի հարցումի: Մի մարդ Հիսուսին ասաց. «Ուսուցի՛չ, ասա՛ եղբորս, որ ժառանգությունը բաժանի ինձ հետ» (12.13): «Ասա» բառն այստեղ հրամայական եղանակով է: Այս մարդն ուզում էր, որ Հիսուսն Իր հեղինակությունն օգտագործեր և հրամայեր նրա եղբորը՝ կիսելու ժառանգությունը: Հիսուսը պատասխանեց առակով:

Իմիջիայլոց, Աստծուն մղել, որպեսզի մեր եղբորն ասի, թե ինչպես նա պետք է վարվի, շատ մարդկանց տեսակետն է կրոնի վերաբերյալ: Մենք ուզում ենք, որ Աստված ինչ որ մեկին ինչ որ բան անել տա մեր օգտի համար: Մենք երբեք չենք ընդունում զոհաբերությունը և իշխանությունը որպես բարգավաճման ճանապարհ: (Սա լավ արտահայտված է պետական իշխանության օգտագործմամբ հարստության և «օգուտների» բաշխման մեջ. դու, զենքի սպառնալիքի տակ, վճարում ես, ես օգտվում եմ, և մենք սա անվանում ենք ժողովրդավարություն և հանդուրժողականություն, իսկ վերջում, ես կասեմ, որ դա Աստծո պատասխանն էր իմ աղոթքին: Այսպես է զինված կողոպուտը կոչվում գթասրտություն, այսպես են բարոյական սխալները կոչվում մարդու իրավունքներ: Բայց ես խոստանում եմ, ես կշարունակեմ քեզ «իմ եղբայր» անվանել: Միայն թե վճարիր):

Այս առակի հոգևոր ողջ իմաստը կապված է անկյալ մարդու ագահության, ավելին ունենալու նրա անհագ փափագի հետ: Փոխարենն Աստծո դրամագլուխն օգտագործելու Աստծո փառքի համար, մենք այն օգտագործում ենք մեր փառքի համար, դրանով իսկ, ըստ էության ասելով, որ մենք ենք Աստված: Այս հարցն ուղղակի վերաբերում է մարդու անկման կիզակետին:

Անմիջական վախճանաբանական հարցն այստեղ, համենայն դեպս, լոկ անհատական է: Ժառանգության հարցն ուխտի կենտրոնական թեման է: Տվյալ երկիրը խորհրդապատկերում էր Աստծուց տրված Իսրայելի ժառանգությունը, որ սերնդից սերունդ էր անցնում: Սակայն երկիրը ժառանգելու շարունակականությունը հիմնված էր Աստծո ուխտի հանդեպ Իսրայելի հավատարմության վրա, այլապես, երկիրը նրանց դուրս կփսխեր: Գալիք մեծ ամուսնալուծությունը նշանակում էր, որ նա կկորցներ այդ ուխտով հաստատված ժառանգության հանդեպ իր բոլոր իրավունքները: Նրա հաշվետվության ժամը մոտենում էր: Իսրայելն էր այդ անմիտ հարուստը: Ամբարներն ու պահեստները չէին դատարկվելու, այլ մնալու էին ուրիշին՝ որպես ժառանգություն:

Այնուհետև, Հիսուսն առանձնանում է ամբոխից, որպեսզի առանձին ցուցումներ տա Իր աշակերտներին: Սա, ըստ էության, Աստծո պատասխանն է՝ հարուստից մնացած պահեստների հարցին. «ու՞մ են դրանք մնալու»: Սա պատասխան է այն հարցին, թե՝ «Ո՞վ է դրանք ժառանգելու»: Պատասխանն ակնհայտ է. միայն հավատարիմ Իսրայելն է ժառանգելու: Եվ հավատարիմները Հիսուսի աշակերտներն են: Նա Իր ամբողջական ուսուցման մեջ բացահայտում է Աստըծո արքայության մեջ հարստության և նախապատվության մասին (հհ. 22-34):

Մենք Հիսուսի այս քայլը նախկինում արդեն տեսել էինք և դեռ նորից կտեսնենք: Հիսուսը չհավատացող հրեաներին շփոթեցնում էր առակներով, որ նրանք չէին կարողանում հասկանալ կամ ընդունել, իսկ հետո, մեծահոգաբար բացատրում էր դրանք Իր աշակերտներին: Ինչպես արդեն տեսանք Ղուկաս 8.10-ում. «Ձեզ տրված է իմանալ Աստծո արքայության գաղտնիքները, բայց մյուսներին՝ առակներով է լինում, որպեսզի «տեսնելով չտեսնեն և լսելով չհասկանան»: Պատկերը հետևյալն է. անհավատարիմներին՝ շփոթություն, հավատարիմներին՝ հայտնություն: Շփոթությունը դատաստան է, հայտնությունը՝ շնորհ: Անմիջական համատեքստում դա նշանակում է՝ դատաստան՝ չհավատացող Իսրայելին, շնորհ՝ Արքայության որդիներին:

Եվ Հիսուսի ուսուցումն այստեղ, ինչպես արդեն ասացինք, ուղղակի վերաբերում է ժառանգության հարցին: Ուսուցման սիրտը (12.22-34) 29-32 համարներում է:

«Եվ մի փնտրեք, թե ինչ եք ուտելու և ինչ եք խմելու, և մի անհանգստացեք: Քանի որ աշխարհի բոլոր ազգերն այս բաներն են փնտրում, սակայն ձեր Հայրը գիտի, որ դուք դրանց կարիքն ունեք: Դրա փոխարեն, փնտրեք նրա արքայությունը, և այս բաները կավելացվեն ձեզ: Մի վախեցիր, փոքրիկ հոտ, քանի որ Աստված բարեհաճում է ձեզ տալ արքայությունը»:

Մի նմանվեք հեթանոս ազգերին (անմիտ հարուստները), որոնք անտեսում են Աստծուն՝ պայքարելով հարստության համար: Ընդհակառակը, փոքրիկ հոտ (աշակերտները, ոչ թե մնացած հրեաները) առաջինը փնտրեք Աստծո արքայությունը: Սա առաջնահերթությունների մասին է: Արքայության ժառանգությունը հետևում է հավատարիմներին:

Այնտեղ, որտեղ ցոփության ու շքեղության մեջ ապրող Պոռնիկ Երուսաղեմը ձախողվել էր, Հիսուսն Իր աշակերտներին սովորեցնում է, որ հաջողեն: Ինքդ քեզ երկրի թագավորներին վաճառելու փոխարեն, բա՛ռնր պահիր Աստծո արքայությունը՝ որպես վկայություն նրանց համար: Հարստության հետևից ընկնելու փոխարեն, օգտագործիր հարստությունը որպես միջոց՝ պայքարելու Արքայության համար: Եվ Արքայության տարածման այս նպատակին ընդառաջ (որ ի սկզբանե) բուն նպատակն էր, որին ուխտը կոչ էր անում), Աստծուն միանշանակ հաճելի կլինի նրանց տալ թե՛ հարստություն, թե՛ Արքայությունը:

Հարստության, Արքայության, ժառանգության թեմաների շարունակականության հիման վրա աշակերտներին ուղղված Հիսուսի ուսուցումները պետք է դիտարկել որպես մեկ ամբողջություն՝ անմիտա հարուստի առակի հետ միասին: Ղուկաս 12.13-34 սուրբգրային հատվածը պետք է դիտարկել որպես մեկ ամբողջություն: Դրա անմիջական պատգամն Իսրայելին ժառանգությունից զրկելն է, ով չէր օգտագործել ու վատնել էր իր կոչումը, ինչպես նաև Արքայության փոխանցումը Նոր Կտակարանի Եկեղեցուն: Հիսուսն ասում է, որ այս օրհնությունը «Հոր բարեհաճությունն է: (12.32):

3. Նոր Ելից (Ղուկաս 12.33-49)

Հիսուսի խորհուրդը՝ «փնտրեք նրա արքայությունը, և այս բաները կավելացվեն ձեզ» (Ղուկ. 12.31), համընթաց է անմիտ հարուստի առակի հետ: Նա Իր աշակերտներին ուսուցանում էր, որ չընկնեն ճոխության և հարստության հետևից, որպես կյանքի վերջնական նպատակ, որովհետև Աստված մի օր բոլորին անսպասելի ձևով կանչելու է հաշիվ տալու: Այս առակում մենք տեսանք Մեծ Պոռնիկի (Հայտ. 17-18), այսինքն Երուսաղեմի ճոխության հետ զուգահեռը, որը ներառում էր նաև այդ քաղաքի վրա կախված դատաստանի իրականացումը: Այդ սպառնալիքը, դեռևս, մշուշոտ էր, սակայն աշակերտների հետ այդ նույն թեմայի շարունակական քննարկման ընթացքում այն ավելի ու ավելի հստակ էր դառնալու:

Անմիջապես այն բանից հետո, երբ Նա ասաց. «Դա ձեր Հոր բարեհաճությունն է՝ ձեզ տալ Արքայությունը» (Ղուկ. 12.32), Հիսուսն Իր աշակերտներին ցուցում է տալիս բառացիորեն թողնելու իրենց ունեցվածքը. «Վաճառե՛ք ձեր ունեցվածքը և տվե՛ք աղքատներին: Ձեզ համար չհնացող դրամապանակներ ունեցե՛ք և անանցանելի գանձ՝ երկնքում, որտեղ ոչ գողերն են մոտենում, ոչ էլ ցեցն է փչացնում: Քանի որ որտեղ ձեր հարստությունն է, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն» (12.33-34):

Իմաստն այստեղ այնքան էլ պարզ չէ, ինչպես Կիրակնօրյա դպրոցի շատ դասեր են ասում. ագահ մի՛ եղիր, տու՛ր աղքատներին, գանձեր դիզիր երկնքու՛մ, ոչ թե երկրի վրա: Թեև այստեղ իմաստն ամբողջական է, սակայն ավելի ընդարձակ համատեքստում այն վերաբերում է Երուսաղեմի գալիք դատաստանին: Հիսուսն այստեղ չէր ասում, որ բոլոր քրիստոնյաները բոլոր դարերում և վայրերում պետք է բառացիորեն ունեցվածք չունենան (Ֆրանցիսկոսի քննարկումները 1322)՝, ոչ էլ Նա ուսուցանում էր դա որպես մի ինչ-որ

անիրականանալի գաղափար. «Ես գիտեմ, որ դուք պետք է ինչ-որ չափով ունեցվածք ունենաք, և որ անգամ մեծ ֆինանսական ապահովությունը լավ բան է, բայց Ես պարզապես ուզում եմ ասել, որ բոլոր քրիստոնյաները պետք է ցանկանան ազատվել իրենց ունեցվածքից և օգնել աղքատներին, թեև գիտեմ, որ իրականում դա հնարավոր չէ»: Ոչ: Հիսուսը խոսում էր առաջնայնությունների մասին, սրտի վիճակի, և որ ամենակարևորն է, աշակերտների կարգավիճակում, լինեին այնպիսի իրավիճակում, որ կարողանային արագ դուրս փախչել Երուսաղեմից, իր կործանումից առաջ:

Աշակերտների համար այսպիսի մեկնաբանությունը միանգամայն իմաստալից է դառնում՝ հաշվի առնելով հետագա ուսուցումը.

Արթուն տնտեսի առակը (Ղուկ. 12.35-40)

Հիսուսն ասում է, որ անհրաժեշտ է պատրաստ լինել՝ Տիրոջ վերադարձին անմիջապես արձագանքելու: Տան հավատարիմ տնտեսները արթուն և զգաստ կլինեն ողջ գիշեր՝ ցանկացած պահի պատրաստ լինելով.

> «Թող ձեր գոտիները կապված լինեն և ձեր ճրագները՝ վառ: Եվ դուք նման եղեք մարդկանց, ովքեր սպասում են իրենց տիրոջ վերադարձին հարսանեկան խնջույքից, որպեսզի կարողանան միանգամից բացել դուռը նրա համար, երբ նա գա և դուռը թակի: Երանելի են այն ծառաները, երբ նրանց տերը գալով, արթուն կգտնի նրանց: Ճշմարիտ եմ ասում ձեզ, նա ինքը ծառայության հագուստ կհագնի և նրանց սեղանի մոտ թիկնել կտա, և գալով, կծառայի նրանց: Եթե գա երկրորդ ժամին, կամ՝ երրորդ, և նրանց արթուն գտնի, երանելի են այդ ծառաները: Բայց սա իմացեք, որ եթե տանտերն իմանար, թե որ ժամին է գողը գալու, թույլ չէր տա, որ իր տունը մտնեն: Դուք նույնպես պետք է պատրաստ լինեք, քանի որ Մարդու Որդին այնպիսի ժամի է գալու, որ դուք չեք սպասում» (Ղուկ. 12.35-40):

Աշակերտներն այստեղ մի բան հասկացան. Վաճառե՛ք ինչ ունեք և պատրա՛ստ եղեք՝ անմիջապես արձագանքելու, երբ Տերը գա:

Առակում երկու պատկեր կա. առաջինը, իրենց Տիրոջը սպա-

սող ծառաներն են: Այս տեսարանում, երկու կողմերն էլ դրական փոխհարաբերություն ունեն իրար հետ. փոխադարձ սեր և հետաքրքրություն դիմացինի հանդեպ՝ կատարելու իրենց պարտականությունները: Կարող ենք ասել, որ նրանք հավատարիմ են ուխտին: Երկրորդ պատկերում տանտերն է, որին գողն անակնկալի է բերում: Սա թշնամական փոխհարաբերության պատկեր է, որտեղ տանտերը կգերադասեր, որ հակառակ կողմը հեռու մնար իրենից, սակայն վերջում, նրա պատճառով կորուստ է ունենում:

Սա միախառնված փոխաբերություն չէ, ալ տարբեր մոտեցումներ նույն գալիք դեպքին: Հիսուսն Իր աշակերտներին հորդորում է պատրաստ լինել, և եթե նրանք պատրաստ լինեն, ապա Իրեն ծառայելու համար կվարձատրվեն: Նա արդեն նրանց ուսուցանել էր, որ առաջինը փնտրեն Իր Արքայությունը, որ Հայրը բարեհաճել էր տալ նրանց: Սա այդ նույն ուսուցման մանրամասն շարադրանքն է:

Երկրորդ մոտեցումը նրանց համար է, ովքեր հավատարմությամբ չէին սպասի Տիրոջ գալուստին: Իրականում, նրանց թվում էր, թե հենց իրենք են արդեն «տան տերերը»: Եվ կարծես ոչ մի ակնկալիք չունեին, որ ինչ-որ մեկը շուտով պետք է գար: Նրանք արթուն չէին մնում և չէին սպասում Տիրոջը: Նրանք տան սեփականության իրենց իրավունքն ընդունում էին որպես բնական մի բան: Այսպիսով, Տիրոջ գալուստը նրանց համար կլիներ անսպասելի ու անցանկալի՝ ինչպես գողի գալը: Այս անհավատարիմ ու եսասեր տնտեսներին, վերջնական արդյունքում, գողը կթալաներ: Հիսուսը նաև սովորեցրել էր այն դասը, որ եթե դևը վերադառնալով տունը գտներ չբնակեցված ու անպաշտպան, տունն ավերակ կդառնար (Ղուկ. 11.17,24-26):

Արթուն տնտեսների առակի մեկնաբանությունը (Ղուկ. 12.41-48)

Այստեղ երևում է Պետրոսի պրպտող լինելը: Նա կարծես ամեն բան համադրում էր իրար հետ: Չնայած այն հանգամանքին, որ Հիսուսը խոսում էր առանձին աշակերտների, և ոչ թե ընդհանուր ժողովրդի հետ (12.22), Պետրոսն ուզում էր վստահ լինել. «Պետրոսն ասաց. «Տեր, այս առակը մե՞զ համար ես պատմում, թե՞ բոլորի» (12.41):

Իսկ Ղուկաս 12.42-46-ում, Հիսուսն այստեղ էլ պատասխանեց մեկ այլ առակով.

«Ո՞վ է, ուրեմն, այն հավատարիմ ու իմաստուն տնտեսը (կառավարիչը, մենեջերը), որին իր տերը կդնի իր տան վրա, որպեսզի ժամանակին տա նրանց կերակուրի բաժինները: Երանելի է այն ծառան, որի տերը գալով, նրան կգտնի այդպես անելիս: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ նրան իր ողջ ունեցվածքի վրա կդնի: Սակայն, եթե այդ ծառան ինքն իր մեջ ասի. «Տերս իր գալն ուշացնում է», և սկսի ծեծել ծառաներին ու աղախիններին, ուտել, խմել ու հարբել, այդ ծառայի տերը կգա մի օր, որ նա չէր սպասում, և մի ժամի, որ նա չգիտեր, և կմասնատի նրան ու անհավատարիմների շարքին կդասի»:

Թէ ինչպես է սա պատասխանում Պետրոսի հարցին, միգուցե, պարզ չէ: Հիսուսը պարզ կերպով չի ասում «ձեզ», կամ «բոլորին»: Այլ, Նա ցույց է տալիս, որ դա վերաբերում է երկուսին էլ: Այս առակն անշուշտ վերաբերում է բոլորին, սակայն այն նաև տարբեր կերպերով վերաբերում է տարբեր անհատների, կախված այն բանից, թե ինչ է նրանց տրվել. հայտնություն և հավատք միասին, հայտնություն առանց հավատի, կամ ո՛չ հայտնության և ո՛չ էլ հավատ: Պետրոսը պետք է իմանար, որ հենց այս բացատրությունը, որ ինքնին հետագա հայտնություն էր, հասցեագրված էր Հիսուսի աշակերտներին, ոչ թե նրանց, ովքեր, միևնույն է, այն չէին հասկանա (տես Ղուկ. 8.10): Այսպիսով, Պետրո՛ս, որոշի՛ր, թե ինչպես ես այսօր դու պատրաստվելու Տիրոջ գալստյանը:

Իր ուսուցման վերաբերյալ Հիսուսի բացատրության մեջ երկու բան շատ հստակ է. 1) որոշ, այսպես կոչված, ծառաներ կդատվեն անհավատների հետ (հ. 46), և 2) հավատարիմ ծառաներն իշխանություն կստանան ողջ տան տնտեսության վրա, իրականում՝ «նրա ողջ ունեցվածքի» (հ. 44):

Առաջինը խորհենք նրանց մասին, ովքեր դատվելու են: Նրանք կոչվում են «ծառաներ», սակայն հստակ է, որ նրանք չեն պատկանում այն «հավատարիմ ու իմաստուն» ծառաների շարքին, որոնց մասին խոսվում է 42-44 համարներում: Այստեղ հստակ բաժանում կա (ինչպես այծերի ու ոչխարների միջև): Նրանք իրենց չարության համար դրդապատճառ ունեին. նրանք չէին հավատում իրենց տիրոջ շուտափույտ գալստյանը. «Տերս իր գալն ուշացնում է»: Նրանք

հավատում էի, որ նա մի օր գալու էր, բայց ոչ թե շուտով: Դա նրանց թողել էր անհոգության մեջ իրենց ներկա կարգավիճակում:

Իրենց ինքնավստահության պատճառով, նրանք բարոյապես թուլացել էին. նրանք ծեծում էին մյուս ծառաներին ու աղախիններին (հավանաբար իրենցից տարիքով փոքր, հետևաբար, նաև դիրքով ու աստիճանով) և կերուխումի էին տրվել: Մենք արդեն տեսանք նախկինում շեշտադրված երկու դեպքեր. Աստծո որդիների հալածանքները և աշխարհային հաճույքներին տրվելը: Դրանք երկուսն էլ Մեծ Պոռնիկի՝ Երուսաղեմի մեղքերն են (Հայտ. 17-18). «որոնց սեռական անբարոյության գինուց հարբեցին երկրի բոլոր բնակիչները (17.2, հմմտ. 18.3), և «սուրբերի արյունով հարբած, Հիսուսի նահատակների արյունով» (Հայտ. 17.6): Իրականում «նրա մեջ գտնվեցին մարգարեների ու սրբերի արյունը, և նրանց, որոնք երկրի վրա մորթվել են» (18.24): Ինքնավստահ ճոխության այս հանգստի նույն թեման երևում է մի քանի րոպե առաջ Հիսուսի պատմած անմիտ հարուստի առակում. «Եվ անձիս կասեմ. «Ա՛նձ, դու երկար տարիների համար բարիքներ ունես կուտակված. Հանգստացի՛ր, կե՛ր, խմի՛ր, ուրա՛խ եղիր» (12.19): Մոտ ապագայում այն նորից երևան կգա (17.26-30):

Այս չար ծառայի համար Տերը կվերադառնա գիշերվա գողի պես. անսպասելի և նպատակ ունենալով նրանից վերցնել իր ունեցվածքը: Եվ դատաստանը կլինի անհավատների նման դուրս գցվելը: Այստեղ նշված անհավատները հեթանոսներն են, որոնք չունեն հայտնության այն նույն մակարդակը, որին Իսրայելն էր արժանացել: Բայցևայնպես, չար ծառան, մերժելով ընդունել Հիսուսի վկայությունը, կհամարվեր հեթանոսների պես և կդատվեր նրանցից մեկի պես: Մեծ Պոռնիկը մեղք էր գործել բոլոր հեթանոսների հետ (Հայտ. 17.2, 8, 18.3, 23), ուրեմն կդատվեր ինչպես նրանցից մեկը:

Եվ դեռ ավելի վատ. այն ծառան, ով հայտնություն ուներ, ավելի սաստիկ պատժի կարժանանա, քան այն մեկը, ով չուներ: Այդ մասին Հիսուսի ուսուցումն անմիջապես հաջորդում է սրան.

> «Այն ծառան, ով գիտի իր տիրոջ կամքը, բայց չի պատրաստվում, կամ վարվում նրա կամքի համեմատ, խիստ ծեծի կարժանանա: Բայց նա, ով չգիտի(այսինքն հայտնություն չունի), բայց ծեծին արժանի բան է անում, թեթև ծեծ կստանա: Նրանից, ում ավելի

> շատ տրվեց, ավելի շատ էլ կուզվի, և նրանից, ում ավելի շատ վստահվեց, ավելի շատ էլ կպահանջվի» (12.47-48):

Իր տիրոջ կամքն իմացող, սակայն չհնազանդվող ծառան, ակընհայտորեն չհավատացող Իսրայելն է: Պողոսը մեզ ասում է. «Հրեաներին էր վստահված Աստծո խոստումները» (Հռոմ. 3.2, հմմտ. 9.4-5), բայցևայնպես նրանք մերժեցին հենց Նրան, ում մատնանշում էին այդ խոստումները: Հիսուսը եկել էր, իսկ հիմա էլ կանխասում էր դատաստանի համար Իր մոտալուտ գալուստը, բայցևայնպես այդ չար հրեաները, Նրա դեմքին նայելով, իրենց սրտում ասում էին. «Իմ տերն Իր գալն ուշացնում է»: Այդ պատճառով էլ, նրանք կկրեին այդ դատաստանը: Ճիշտ այսպես, Ստեփանոս նահատակը, որ այս չար ծառաների ձեռքով կանգնել էր դատաստանի ու մահվան առաջ, այս նույն դատական գործը ներկայացրեց ընդդեմ նրանց.

> «Դուք խստապարանոց մարդիկ եք, անթլպատ սրտով ու ականջներով, որ միշտ դեմ եք կանգնում Սուրբ Հոգուն: Ինչպես ձեր հայրերն արեցին, այնպես էլ՝ դուք: Մարգարեներից որի՞ն ձեր հայրերը չհալածեցին: Եվ նրանք սպանում էին նրանց, ովքեր նախապես հայտարարում էին այս Արդարի գալու մասին, ում դուք մատնեցիք և սպանեցիք: Դուք, որ ստացաք օրենքը հրեշտակների միջոցով և չպահեցիք այն» (Գործք. 7.51-53):

Այո, այս չար ծառաները, ովքեր պարզորոշ «գիտեին իրենց տիրոջ կամքը», բայցևայնպես «չպահեցին այն», շուտով սաստիկ ծեծի էին արժանանալու:

Հեթանոսները, որոնցից շատերը նույն մեղքերն էին գործել, սակայն առանց Աստծո խոսոտումներն ունենալու առավելության, ավելի թույլ պատիժ կստանային (պարզաբանում. թեև դժոխքում պատիժը հավիտենական է, բայցևայնպես, մարդիկ տարբեր քանակի պատիժ են ստանալու. ոմանք օրական 40 ճիպոտ, ոմանք՝ 20: Նույն մեղքը գործելու համար նրանք, ովքեր հայտնություն են ստացել, ավելի մեծ պատիժ են ստանալու, քան նրանք, ովքեր երբեք հայտնություն չեն ստացել: Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.): Իրականում, ինչպես Հիսուսը նախապես ուսուցանեց, այդ հեթանոսներից ոմանք դարձի եկան, ավելի քիչ

հայտնություն ունենալով հանդերձ, և հենց դրանք վեր կկանգնեին գալիք դատաստանի օրը՝ մեղադրելու Իսրայելին (Ղուկ. 11.29-32):

Իսկ հավատարիմ տնտեսները ոչ միայն կստանային Քրիստոսի օրհնությունները, այլ Նա անձամբ էր նրանց տալու իշխանություն՝ ողջ տան և Իր ունեցվածքի վրա (Ղուկ. 12.42-44): Մենք այստեղ նորից հանդիպում ենք Արքայության ժառանգության թեմային: Նրանք, ովքեր մերժել էին Մեծ Պոռնիկի, անմիտ հարուստի, հարբեցող չար ծառաների ճոխությունները, կարժանանային անձամբ Քրիստոսի սպասավորությանն ու իշխանությանը. «Դուք նրանք էիք, որ ինձ հետ մնացիք իմ փորձությունների մեջ, և ես ձեզ տալիս եմ մի թագավորություն, ինչպես իմ Հայրն ինձ տվեց, որ դուք իմ թագավորության մեջ ուտեք ու խմեք իմ սեղանի մոտ և նստեք գահերի վրա՝ դատելու Իսրայելի տասներկու ցեղերին» (Ղուկ. 22.28-30): Իրականում, այս ծառաները, որոնց չար ծառաները ծեծել ու սպանել էին, ավելի ուշ երևում են Հովհաննեսի գրքում. «Ես տեսա նրանց հոգիները, ովքեր գլխատվել էին Հիսուսի և Աստծո Խոսքի վկայության համար… Նրանք կենդանացան և հազար տարի թագավորեցին Քրիստոսի հետ» (Հայտ. 20.4):

Ղուկաս 22.28-30-ի զուգահեռը կարելի է տեսնել Մատթեոս 19.27-30-ում: Այստեղ ակնհայտ է ամեն բան վաճառած արթուն ծառաների և Արքայությունն ստացած ծառաների միջև եղած կապը.

> «Այդ ժամանակ Պետրոսն ի պատասխան ասաց. «Տես, մենք ամեն բան թողեցինք և քո հետևից եկանք: Ի՞նչ կլինի մեզ հետ»: Հիսուսը նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ նոր աշխարհում, երբ Մարդու Որդին իր փառավոր գահին նստի, դուք, որ եկաք իմ հետևից, նույնպես կնստեք տասներկու գահերի վրա՝ դատելու Իսրայելի տասներկու ցեղերին: Նա, ով հանուն ինձ թողնի տներ, եղբայրներ, կամ քույրեր, կամ հայր, կամ մայր, կամ երեխաներ, կամ դաշտեր, հարյուրապատիկը կստանա և հավիտենական կյանքը կժառանգի: Սակայն շատերը, որ առաջին են, վերջին կլինեն, իսկ վերջինները՝ առաջին»:

Նոր Ելից

Հավատարիմ ծառաներն իրենց «գոտիները կապած» կլինեն

և իրենց «ճրագները՝ վառ»: Կապված գոտու խորհուրդն այստեղ ուղղակի հղում է Ելից գրքին: Ամենաառաջին Զատկի ժամանակ հրեաները ոչ միայն պատվեր ստացան ուտել «գոտիները կապած», կոշիկները ոտքերին և գավազանը ձեռքներին» (Ել. 12.11), այլև Ղուկասն այստեղ օգտագործում է հունարեն ճիշտ նույն բառերը, ինչ հունարեն լեզվով Հին Կտակարանի (Սեպտուագինտայի կամ LXX-ի) մեջ. *«ai osphues humon periedzosmenai»* («ձեր գոտիները կապած»): Այս բառերն այս ձևով Սուրբ Գրքում գտնվում են միայն երկու տեղում՝ Ելից 12.11-ում և Ղուկաս 12.35-ում:

Միանգամայն պարզ է, որ սա դիտավորյալ նմանեցում է Ելից գրքին, իսկ աստվածաբանությունն էլ կատարելապես համընկնում է: Իրականում, Զատիկը, որի ընթացքում Հիսուսը պետք է սպանվեր (Ինքը լինելով Զատկի Գառը), ամենաշատը 2-3 շաբաթ հետո էր լինելու (ինչպես նախապես էլ ասացինք, Հիսուսի ճանապարհորդությունը Ղուկ. 9.51-ից մինչև Զիթենյաց լեռան քարոզը (Ղուկաս 21) մեկ շարունակական հատված է: Շատ քիչ ժամանակային կողմնորոշիչներ կան, օրինակ՝ Շաբաթ օրերի հիշատակումը, և մեծ ժամանակահատված, կարծես թե, չի անցնում): Նրա արյունը շուտով բերելու էր փրկություն՝ Իր հավատարիմ հետևորդների, ինչպես նաև մեծ դատաստան՝ այդ որդիներին հալածող անհավատարիմների համար: Շատ հավանական է, որ Հիսուսի աշակերտներն արդեն մտածում էին Զատկի մասին, և պարզապես համարում էին, որ իրենք Երուսաղեմ են գնում հենց այդ նպատակով:

Եթե Ելից գրքում փարավոնն էր հալածում իսրայելացիներին, ապա այստեղ անհավատարիմ Իսրայելն էր դարձել այդ փարավոնը: Մատթեոսն այս թեման շատ վաղ է օգտագործում, երբ մանուկ Հիսուսը ստիպված էր Երուսաղեմի փարավոնից (Հերովդեսից) փախչել դեպի Եգիպտոս, միևնույն ժամանակ սա կոչվում է Աստծո Որդուն Եգիպտոսից դուրս բերելու մարգարեության իրականացում.

> «Եվ երբ նրանք հեռացան, ահա, Տիրոջ հրեշտակը հայտնվեց Հովսեփին երազի մեջ ու ասաց. «Վե՛ր կաց, վերցրու՛ երեխային ու մորը, և փախի՛ր Եգիպտոս: Մնա՛ այնտեղ, մինչև որ ես կասեմ, քանի որ Հերովդեսը փնտրելու է երեխային, որպեսզի կործանի նրան»: Եվ նա վեր կացավ, գիշերով վերցրեց երեխային ու մորը և գնաց Եգիպտոս: Եվ մնաց այնտեղ մինչև Հերովդեսի

> մահը: Սա եղավ, որ կատարվի այն, ինչ Տերն էր խոսել մարգարեի միջոցով. «Ես իմ որդուն Եգիպտոսից կանչեցի»: (Մատթ. 2.13-15):

Զարմանալի չէ, որ Հովհաննեսն ավելի ուշ Երուսաղեմը պիտի կոչեր «Եգիպտոս», հատկապես Քրիստոսին և Նրա մարգարեներին սպանելու մեղքի համար: Նա Երուսաղեմն անվանում է «մեծ քաղաքը, որ այլաբանորեն կոչվում է Սոդոմ ու Եգիպտոս, որտեղ նրանց Տերն էլ խաչվեց» (Հայտ. 11.8):

Հիսուսը շուտով հղում էր անելու Ելից թեմային, երբ խոսելու լիներ Նոյի ու Ղովտի մասին: Ղուկաս 17.26-32-ում Նա ուսուցանում է.

> «Ինչպես Նոյի օրերում էր, այնպես էլ Մարդու Որդու օրերում կլինի: Նրանք ուտում էին և խմում, ամուսնանում էին ու ամուսնացնում, մինչև այն օրը, երբ Նոյը մտավ տապան, և ջրհեղեղը եկավ ու նրանց բոլորին կործանեց: Նմանապես, ինչպես Ղովտի օրերում էր. ուտում ու խմում էին, առնում ու ծախում էին, տնկում ու կառուցում էին, բայց այն օրը, երբ Ղովտը դուրս եկավ Սոդոմից, կրակ ու ծծումբ թափվեց երկնքից և նրանց բոլորին կործանեց: Այդպես կլինի նաև, երբ Մարդու Որդին հայտնվի: Այդ օրը, եթե մեկը տանիքի վրա լինի, իսկ բարիքները տան մեջ, թող չիջնի դրանք վերցնելու, նմանապես նա, ով դաշտում է, թող հետ չվերադառնա: Հիշե՛ք Ղովտի կնոջը»:

Մենք այստեղ նորից ծանոթ թեմաներ ենք տեսնում. անբարո և անհոգ մարդիկ, որոնք անտեսում են գալիք դատաստանի կոչը: Նրանք ուտում էին, խմում, ամուսնանում, մինչև դատաստանը հասավ նրանց վրա. հետո այլևս ուշ էր: Հաշվի առնելով զգուշացումների քանակը, գալիք դատաստանը, կարծես, այնքան էլ անսպասելին չէր, այլ, ավելի շուտ, անհավատարիմներն էին անպատրաստ: Հիմնական միտքը սա է. բազմաթիվ զգուշացումներ են տրվում, սակայն բոլորն էլ անտեսվում են:

Մինչդեռ հավատարիմները պատրաստվում են և պատրաստ են գալիք ժամանակին: Նրանց գոտիները կապված են, ճրագները՝ վառ: Դեպքերից յուրաքանչյուրում նրանք ապահով խույս են տալիս Աստծո բարկությունից, որ կլանում է մյուսներին: Նոյի դեպքում տապանի

միջոցով եղավ, Ղովտի դեպքում պահանջվեց բառացիորեն դուրս գալ այնտեղից: Նույնն էր լինելու նաև Հիսուսի աշակերտների դեպքում. նրանք պետք է պատրաստ լինեին անմիջապես տանիքից հեռանալու, առանց կանգ առնելու, որպեսզի հավաքեն իրենց ունեցվածքը: Մի եղեք Ղովտի կնոջ պես, ով հետ նայեց: Նա անհամապատասխան գտնվեց Աստծո Արքայությանը (հիշե՛ք Հիսուսի ուսուցումը այս մասին Իր ճանապարհորդության ամենասկզբում. Ղուկ. 9.62):

Այս ամենը նախօրոք իմանալով, Հիսուսն Իր աշակերտներին զգուշացնում է, որ պատրաստ լինեն նոր Ելիցի. Քրիստոսի մարմնի ամբողջական Ելիցի՝ դուրս գալու, փոխաբերական իմաստով Եգիպտոսից՝ Երուսաղեմից: Հիսուսի արյունը կպաշտպաներ նրանց, սակայն նրանք, ովքեր ծածկված չէին դրանով, այսինքն՝ մերժել էին այն, կամ, ավելի ճիշտ, հենց իրենք էին թափել այդ արյունը, կկրեին գալիք դատաստանը: Եվ ճիշտ ինչպես առաջին Ելիցի ժամանակ, Աստված խոստացավ դատաստան անել «Եգիպտոսի բոլոր աստվածների վրա» (Ել.12.12), հիմա էլ Նա դատելու էր խորհրդապատկեր Եգիպտոսին իր շատ կռապաշտությունների համար: Բայց աշակերտները պատրաստ կլինեին: Նրանք վաճառել էին իրենց ունեցվածքը և արթուն հետևում էին նշաններին, որոնք կնշանակեին. «Հիմա, դու՛րս եկեք»:

Գողերի և ճրագների խորհուրդը

12.35-ում օգտագործված ճրագի խորհուրդն այլ նպատակ ունի, քան նախկինում օգտագործված դեպքում (11.33-6), որտեղ այն Ավետարանի վկա լինելու մասին է, իսկ այստեղ այն նկարագրում է ինչ-որ մեկին, ով այնքան հաստատ է սպասում Տիրոջ շուտափույտ գալուստին, որ ամբողջ գիշեր արթուն է մնում: Այստեղ ճրագը վառվում է մթության մեջ, սակայն ոչ այնքան ուժեղ, որպեսզի լուսավորի աշխարհը, այլ այն միջոց է մթության մեջ արթուն մնալու և անձնապես հսկելու: Պողոսն այս նույն միտքն է արծարծում, երբ օգտագործում է «գիշերվա գող» այլաբանությունը.

> «Սակայն դուք ինքներդ քաջատեղյակ եք, որ Տիրոջ օրը գիշերվա գողի պես է գալու: Երբ մարդիկ ասելու լինեն. «Խաղաղություն և ապահովություն է», այդ ժամանակ կործանումը հանկարծ պիտի

գա նրանց վրա, ինչպես երկունքի ցավերն են գալիս հղիի վրա, և չեն ազատվի: Սակայն դուք խավարի մեջ չեք, եղբայրներ, որպեսզի այդ օրը գողի նման ձեզ անակնկալի բերի: Որովհետև դուք բոլորդ լույսի որդիներ եք, ցերեկվա որդիներ: Մենք գիշերվանը չենք, ոչ էլ խավարինը: Ուրեմն, եկեք չքնենք, ինչպես մյուսները, այլ եկեք լինենք արթուն ու սթափ: Որովհետև ովքեր քնում են, գիշերն են քնում, և ովքեր հարբում են, գիշերն են հարբում: Բայց քանի որ մենք պատկանում ենք ցերեկվան, եկեք սթափ լինենք» (Ա Թես. 5.2-8, հմմտ. Բ Պետ. 3.10, Հայտ. 3.3, 16.5):

Նկատեք նույն հատկանիշներն այստեղ. չար ծառաներն ինքնավստահ հանգստության մեջ են, և հանկարծ գալիս է կործանումը: Քնողները՝ գիշերվա որդիները, հարբեցողներ են, իսկ լույսի որդիները պատրաստ են:

Այս նույն թեման հանդիսանում է ավելի ուշ պատմված Տաս Կույսերի առակի սիրտը: Նրանք բոլորն էլ ճրագներ ունեին, որոնք կարող էին վառ լինել, սակայն միայն հինգն էին պատրաստվել՝ յուղ վերցնելով: Այսպիսով, միայն հինգը լույս ունեցան: Արդյունքում, այն հինգը, ովքեր յուղ վերցնելով պատրաստվել էին, պատրաստ էին Փեսայի գալստյան կոչին: Նա եկավ կեսգիշերին (Մատթ. 25.6, ճիշտ ինչպես Եգիպտոսի պատուհասը, Ել. 12.29): Եվ մինչդեռ բոլորը ննջել էին և քնել (25.5), պարզվեց, որ միայն հիմար կույսերն էին անպատրաստ, քանի որ լույս չունեին: Նրանք խավարի որդիներն էին, և երբ վերջապես ժամանեցին հարսանիքի, որին իրենք շատ վաղուց էին հրավիրված, պատասխանը եկավ կողպված դռան հետևից. «Ես ձեզ չեմ ճանաչում» (Մատթ. 25.12): Նրանք բաց էին թողել իրենց հնարավորությունը, քանի որ ճրագները վառ չէին: Նրանք կորցրեցին ապագա ողջ ժառանգությունը, և կիսեցին շնացողների ճակատագիրը, ինչպես Փեսայի պատասխանից է հետևում: Նույնն էր լինելու նաև հրեաների հետ: Նրանք իրենց ունեցած կոչումի վերաբերյալ մտածում էին, որ այդպես էլ պետք է լիներ(այսինքն, որ իրենք «ընտրված» ազգ են), իսկ հիմա իրենք իրենց կգտնեին դուրս թողնված:

Հստակ է, որ «գիշերվա գող» արտահայտությունը վերաբերում է միայն չար ծառաներին: Հավատարիմները կժառանգեին Արքա-

յությունը: Գողը կհարվածեր միայն նրանց, ովքեր պատրաստ չէին: Գողը սովորաբար չի գալիս այնտեղ, որտեղ լույսերը վառ են:

Նոր Կտակարանի իրականացումը

Ինչպես նախապես նշեցի մինչև ՔՀ 70թ.-ն ունեցվածքը վաճառելու մասին, մենք տեսնում ենք սա իրականացած Նոր Կտակարանի Եկեղեցում. մարդիկ բառացիորեն վաճառում էին իրենց արտերն ու տները և գումարն օգտագործում իրար օգնելու համար (Գործք. 4.33-37): Նկատե՛ք, որ այստեղ չի ասվում ամբողջ ունեցվածքը, այլ միայն անշարժ գույքը, որ նրանց կապում էր այդ տեղի հետ. «նրանք, ովքեր արտեր ու տներ ունեին, վաճառում էին դրանք» (հ.34): Այս վաճառքը կրկնակի նպատակի էր ծառայում, որի մասին Հիսուսը նրանց ուսուցանեց այդ հատուկ ժամանակահատվածի համար. ուղղե՛ք ձեր առաջնահերթությունները և պատրա՛ստ եղեք տեղափոխվելու (երբ հռոմեական բանակի լեգիոնները գային և ամեն ինչ կործանեին, ՔՀ 70 թվին, այդ ժամանակ տները և հողերը ամբողջովին կարժեզրկվեին, որովհետև քաղաքը պետք է դատարկվեր, ժողովրդի բացարձակ (ամբողջական) կոտորածի հետևանքով, և այս պատճառով նրանք այդքան արագ վաճառում էին իրենց անշարժ գույքը. Գլխ. խմբ.՝ Ա. Խ):

Գործք Առաքելոցումպատմությունը շարունակվում է. աշակերտների հավատարիմ վկայությունը բերեց մեծ արթնության և Ավետարանի տարածման զորության (Գործք. 5.12-16), իսկ Ավետարանի և հրեական տաճարի առաջնորդների միջև հակամարտությունը բերեց առաքյալների բանտարկությանն (5.18) ու ծեծվելուն (5.40) և, վերջնական արդյունքում, սարկավագ Ստեփանոսի նահատակմանը (Գործք. 6.9-7.60): Այսպիսով, չար և անպատրաստ ծառաները սկսեցին ծեծել մյուս ծառաներին:

Նկատե՛ք, որ ողջ անհավատ Իսրայելը մասնակցում էր այս դեպքերին իրենց բոլոր կրոնական և հասարակական ներկայացուցիչներով. քահանայապետը և Սադուկեցիները (քահանաները) (5.17), ինչպես նաև «խորհուրդը և Իսրայել ժողովրդի (բառ. «որդիների») սենատը» (5.21): Այս սենատը ներառում էր Փարիսեցիների աղանդը (5.34): Նույնիսկ մյուս՝ ավելի քիչ ճանաչված խմբերն ավելի ուշ ներքաշվեցին սրա մեջ. Ազատագրյալները, Կյուրենացիները, Ալեք-

սանդրացիները, Կիլիկիացիները և Ասիացիները (7.9): Կարճ ասած, վաղ Եկեղեցու հալածանքն իրականում հանդիսանում էր բոլոր «Իսրայելի որդիների»՝ այսինքն անհավատարիմ Իսրայելի մեղքը: Մինչդեռ լույսի որդիներն իրենց գոտիները կապված և ճրագները վառ էին պահում, չար ծառաները շարունակում էին առաջ գնալ կռապաշտության, հարբեցողության մեջ և սկսեցին ծեծել ճշմարիտ ծառաներին:

Ստեփանոսի քարկոծումը (7.59-60) դարձավ հալածանքների գագաթնակետը, և գործի դրեց աշակերտների տարհանման ծրագիրը. «այդ օրը մեծ հալածանք սկսվեց Երուսաղեմի եկեղեցու դեմ, և բացի առաքյալներից բոլորը ցրվեցին Հրեաստանի և Սամարիայի շրջաններով մեկ» (Գործք. 8.2): Այս նոր աշակերտները շատ արագ դուրս գնացին և, արդյունքում, Ավետարանը նրանց հետ միասին տարածվեց. «Ցրվածները գնում էին խոսքը քարոզելով» (8.4): Այս քարոզչությունը շարունակվում է ողջ Հրեաստանում և Սամարիայում մինչև այդ գլխի ավարտը, և հասնում է հեթանոսներին մինչև 10-րդ գլուխը: Մեջտեղում՝ 9-րդ գլխում, Սողոսն է ապաշխարում, որն իհարկե նշանակում էր, որ Ավետարանը հասնելու էր աշխարհի բոլոր ազգերին հենց այդ աշակերտների կյանքի ընթացքում:

Գործքի այս հատվածի համառոտ ուսումնասիրությունից մենք հասկանում ենք, որ աշակերտները Հիսուսի խոսքերը բառացի էին ընդունել՝ վաճառե՛ք ձեր ունեցվածքը և պատրա՛ստ եղեք արագ արձագանքելու: Մենք նաև տեսնում ենք, որ Ավետարանի ընդդիմությունը կազմված էր ողջ Իսրայելի անհատավ ժողովրդից: Մենք նաև տեսնում ենք, որ բոլոր կողմերը գիտեին Երուսաղեմի կործանման վերաբերյալ Հիսուսի զգուշացումների մասին, ինչը երևում է Ստեփանոսի հետ վիճաբանության ժամանակ, երբ նրանք սուտ վկաներ էին բերել նրա դեմ, ովքեր ասացին. «մենք լսեցինք, որ նա ասում էր, որ այս Հիսուս Նազովրեցին կործանելու է այս վայրը և փոխելու է Մովսեսից մեզ ավանդված սովորությունները» (6.14): Արդյոք Ստեփանոսը բառացիորեն ասել էր սա, թե ոչ, մենք չգիտենք, սակայն երևում է, որ Տաճարի գալիք կործանման հարցը օրվա վիճահարույց թեմաներից մեկն էր:

Գալիք մեծ բաժանումը

Պատգամը, որ Հիսուսը շարունակաբար ուսուցանում էր, սկսած

այն օրվանից, երբ Իր երեսն ուղղեց դեպի Երուսաղեմ (Ղուկ. 9.51), իր մեջ կրում էր լուրջ զգուշացում գալիք բաժանման վերաբերյալ: Դա մի չար սերունդ էր, սակայն Նա Իր համար հավատարիմ մնացորդ էր ունենալու: Կային մարդիկ, ովքեր թաքցրել էին իրենց աստվածատուր լույսը, կային փարիսեցիներն ու փաստաբանները, ովքեր դատաստան բերեցին իրենց վրա, սակայն կային նաև նրանք, ովքեր կդավանեին Քրիստոսին, երբ մյուսներն ուրանային Նրան (Ղուկ. 12.8-12): Կային անմիտ հարուստներ, մինչդեռ կային նաև նրանք, ովքեր հոգևոր առաջնայնություններ ունեին (12.13-34): Կային չար ծառաներ և արթուն ծառաներ (12.35-48):

Եվ Հիսուսն առաջ է գնում՝ այս բոլորն ավելի ընդարձակ շարադրելու.

> «Ես եկա երկրի վրա կրակ գցելու, և կցանկանայի, որ այն արդեն բորբոքված լիներ: Ես մկրտություն ունեմ մկրտվելու և շատ անհանգիստ եմ, մինչև այն կատարվի: Կարծում եք, ես եկել եմ երկրի վրա խաղաղությո՞ն բերելու: Ոչ, ասում եմ ձեզ, այլ՝ բաժանում: Սրանից հետո մի տան մեջ հինգը բաժանված կլինեն՝ երեքը երկուսի դեմ, և երկուսը՝ երեքի: Բաժանված կլինեն հայրն ընդդեմ որդու և որդին՝ հոր, մայրն ընդդեմ դստեր, դուստրն ընդդեմ մոր, սկեսուրն՝ հարսի և հարսն ընդդեմ սկեսուրի» (Ղուկ. 12.49-53):

Մենք, ավելի ուշ, կարդում ենք մի դրվագ, որտեղ Հիսուսը ներկայացնում է այս բաժանման մեկ այլ նկարագրություն. «նա, ով հանուն ինձ թողնի տներ, եղբայրներ, կամ քույրեր, կամ հայր, կամ մայր, կամ երեխաներ, կամ դաշտեր, հարյուրապատիկը կստանա և հավիտենական կյանքը կժառանգի» (Մատթ. 19.29): Հիսուսն այստեղ ուզում է, որ Իր աշակերտները վստահ իմանան, որ Ինքն իրոք ուզում է, որ բաժանում տեղի ունենա: Նրա ավարտված գործի արդյունքը՝ Նրա «մկրտությունը», անհրաժեշտության դեպքում մարդկանց մեջ բաժանում կբերեր՝ մինչև անգամ ընտանիքների մեջ: Սա տեղի կունենար դարձի գալու միջոցով, և բառացիորեն՝ գալիք դատաստանի ժամանակ. «Ասում եմ ձեզ, գիշերով երկու հոգի անկողնում կլինեն: Մեկը կվերցվի, իսկ մյուսը կթողնվի» (Ղուկ. 17.34): Այս պահին Հիսուսն Իր աշակերտներին մղում էր՝ ընդունելու այս պատգամը. բաժանում էր գալիս: Կրակ էր գալիս, և Հիսուսը փափագում էր, որ այն արդեն վառված լիներ (12.49):

Այստեղից Հիսուսի պատգամը մտնում է ավելի խորը վախ-ճանաբանական հատված: Գալիք դատաստանի պատգամն ավելի բացահայտ է դառնում: Բայց մենք սա կպահենք հաջորդ գլխի համար:

4. Ժամանակը կարճ է Ղուկաս 12.54-13.9

Իր աշակերտների հետ առանձին մասնավոր զրույց ունենալուց հետո, երբ Հիսուսը շեշտադրեց, թե որքան նվիրված ու պատրաստ պետք է լինեին նրանք գալիք բաժանման համար, վերջում, Նա պատգամ է փոխանցում ավելի մեծ լսարանի համար (Ղուկ. 12.54): Հիշե՛ք, որ ըստ Ղուկաս 12.1-ի, սա բավականին մեծ բազմություն էր: Նրանք այնքան շատ էին, որ իրար էին տրորում: Սա այն տեսակի ամբոխն է որին քաղաքական գործիչները իրենց շահերից ելնելով սիրում են ոգևորել գալիք լավ ժամանակների վերաբերյալ մեծամեծ խոստումներով: Սակայն ոչ Հիսուսը: Մինչև այս պահը Նա ոչ մի չափազանց արմատական բան դեռ չէր ասել, սակայն պատրաստվում էր իրոք անհատականացնել իր ուղերձը:

Կանխասացություն կեղծավորների համար

Հավաքված բազմությանը Հիսուս դիմեց մի ցնցող անկեղծ քննադատությամբ. «կեղծավորներ»: Բայց այս դատապարտությունը եկավ երկու փաստարկների հիման վրա, որոնք, ամենաքիչը, հիմնված էին երկու դեպքի վրա:

Առաջինը, նրանք չէի կարողանում զանազանել ժամանակը (հ.56): Պատկերացրե՛ք իրավիճակը: Մի մեծ բազմություն, որտեղ սեղմում էին Հիսուսին, որոնք եկել էին բերանները բաց տեսնելու, թե ինչ կասի Նա հաջորդը: Մենք լսել ենք, որ հրաշքներ են լինում: Ես կցանկանայի մի հրաշք տեսնել: Մի նշա՛ն արա, մի հրա՛շք արա: Նա Մեսիա՞ն է: Հաստատ Գալիլեացի չէ: Մարգարե՞: Միգուցե: Հիմա ի՞նչ կասի Նա:

Այս անկանոն բազմության մեջ հավատի ու զանազանության ահավոր պակաս էր երևում: Հիսուսը սա բացահայտեց մի առակի միջոցով.

> «Երբ դուք տեսնում եք, որ արևմուտքում ամպ է բարձրանում, միանգամից ասում եք. «Անձրև է գալու»: Եվ այդպես էլ լինում է: Իսկ երբ տեսնում եք հարավային քամի է փչում, ասում եք. «Այրող տապ է լինելու»: Եվ այդպես էլ լինում է» (Ղուկ. 12.54-5):

Այս ընդհանրական և ճշգրիտ զանազանության կարողության հիման վրա, որ յուրաքանչյուր մեկն ուներ, Հիսուսն առաջ է գնում՝ նրանց անվանելով կեղծավորներ: Ինչու՞: Որովհետև. «Երկրի ու երկնքի երեսը մեկնաբանել գիտեք, իսկ ինչու՞ չեք կարողանում ներկա ժամանակը մեկնաբանել» (հ. 56):

Դիմելառճն այստեղ հատկապես համապատասխանում է հրեա ժողովրդին հանդիմանելուն: «Երկիր ու երկինք» արտահայտությունը յուրահատուկ նմանություն ունի Սուրբ Գրքի առաջին համարին. «Աստված ստեղծեց երկինքներն ու երկիրը»: Այս կեղծավորները գիտեին Աստծո արարչագործության մասին, սակայն դժվարանում էին ճանաչել Արարչին: Նրանք ոչ միայն դատողություններ էին անում երկնքի ու երկրի վերաբերյալ, այլ իրենք նույնպես գտնվում էին զննության տակ, և ժամանակը եկել էր: Սակայն նրանք մոռացել էին սա.

«Դու, որ այդքան վարժ ես, որ հորիզոնը նայելով ասում ես, թե ինչ կլինի, ինչու՞ չես կարողանում տեսնել այն մեծ փոթորիկը, որ շուտով գալու է: Այն հիմա հորիզոնում է: Դու չգիտե՞ս ժամանակը»:

Ժամանակը

«Ներկա ժամանակ» արտահայտությունն ակնհայտորեն վախճանաբանական/մարգարեական իմաստ ունի: Հատկապես ո՞ր «ժամանակի» մասին է Հիսուսը խոսում: Եվ ի՞նչ առանձնահատուկ բան կա դրա հետ կապված:

Առաջինը նկատե՛ք, որ Հիսուսը հատկապես հղում է անում այս ժամանակին, այսինքն Իր և Իր լսարանի ժամանակին, ոչ թե ապագա դատաստանի: Ինչ էլ որ Նա խոսելու լիներ, վերաբերում էր այն մարդկանց, ում հետ Նա այդ պահին խոսում էր:

Երկրորդը, այս «ժամանակը» համեմատվում է դեպքերի հետ, որոնք կարիք կար զանազանելու: Այն, ինչ նրանք պետք է իմանային, այնքան պարզ էր, որքան փոթորկի ամպերը, որ հավաքվում էին

արևմուտքում: Երբ մարդիկ նման մի բան են տեսնում, նրանք արձագանքում են դրան, համապատասխան քայլեր են ձեռնարկում:

Երրորդը, այս «ժամանակը» մոտալուտ էր: Երբ եղանակային փոփոխությունները հորիզոնում երևում են, դա նշանակում է, որ շուտով ինչ որ բան է տեղի ունենալու: Հիսուսը չէր խոսում մի բանի մասին, որ 1000 տարվա հավանականություն ունեցող փոթորկի էր նման: Այս «ժամանակը» Նրա լսարանից պահանջում էր քայլեր անել հիմա:

Չորրորդը, այս «ժամանակն» անխուսափելի էր: Ավելին, այն արդեն այնտեղ էր, քանի որ այս ժամանակը տարբերվում էր այն կամ մեկ ուրիշ ժամանակներից, որոնց մասին մենք արդեն նշեցինք: Նաև եղանակային նշանները խոսում էին կանխատեսելի փոփոխությունների գալու մասին՝ անձրև կամ տապ: Երբ նշանները ճիշտ էին մեկնաբանվում, Հիսուսն ասում էր. «և այդպես էլ լինում է» (հհ. 54, 55): Կանխատեսումները կատարվում էին: Այսպիսով, այս «ժամանակ» ասելով, Հիսուսը խոսում էր մի բանի մասին, որին այս կեղծավորներն առերեսվելուց բացի ուրիշ տարբերակ չունեին:

Մենք ունենք կողմնորոշում, թե ինչ նկատի ուներ Հիսուսը, երբ ավելի ուշ օգտագործեց այս «ժամանակ» բառը, որպես տեխնիկական կողմնորոշիչ: Դա վերաբերում է հաղթական մուտքին, որը տոնվում է որպես, այսպես կոչված, Ծաղկազարդի տոն: Երբ մարդիկ սկսեցին երկրպագել Հիսուսին որպես Ազատարար և Փրկիչ, փարիսեցիները պահանջեցին, որ Հիսուսը լռեցներ նրանց: Նա մերժեց դա անել: Այդ ժամանակ, Երուսաղեմ մտնելիս Հիսուսն արտասվեց քաղաքի վրա և կանխասաց նրա կործանումը.

> «Գոնե այս օրվա մեջ իմանայիր, թե որն է քո խաղաղության պատճառը: Սակայն դա հիմա ծածկված է քո աչքերից: Քանի որ օրեր կգան քեզ վրա, երբ քո թշնամիները քո շուրջը պատնեշ պիտի սարքեն և շրջապատեն քեզ, ամեն կողմից պաշարեն և հիմնահատակ կործանեն քեզ ու քո որդիներին քո մեջ: Եվ նրանք քարը քարի վրա չեն թողնի քո մեջ, քանի որ դու *չիմացար քո այցելության ժամանակը»* (Ղուկ. 19.42-44, շեշտադրումն իմն է):

Նկատեք, որ Հիսուսը սարսափելի կործանման ու ավերածության մասին է խոսում, որ գալիս էր Երուսաղեմի վրա «այս ժամանակն»

ու «ժամանակն» անհավատարիմ կերպով անտեսելու պատճառով: Այս «ժամանակը» կրում է այն բոլոր տարրերը, որ ունի եղանակի կանխատեսման առակը. այժմեականություն, մոտալուտություն, անխուսափելիություն: Հիսուսն ասում է, որ այս ժամանակը հատկապես «ձեր այցելության ժամանակն» է:

«Այցելություն» բառը ժամանակակից լսողի համար կարող է նշանակել բարեկամություն, սակայն աստվածաշնչյան տեսակետից այն գրեթե միշտ վերաբերում է դատաստանին: Դատաստանը կարող է դառնալ և՛ շահավետ, և՛ ոչ, բայց գաղափարի իմաստն այն է, որ Աստված ստուգում է Իր ժողովրդին և դատաստան է հայտարարում՝ կախված այն բանից, թե ինչ է Ինքը արդյունքում պարզել: Հունարեն բառը ծագում է episkope բառից, որից ծագում է մեր «episcopal» բառը, որ նշանակում է «տեսուչ»: Իմաստն այն է, որ Աստված, Ով հանդիսանում է Իր ուխտի ժողովրդի տեսուչը, գալու է ստուգելու և դատելու Իր ժողովրդին:

Այս հասկացությունը շատ անգամ է հայտնվում Սուրբ Գրքում: Օրինակ, երբ Իսրայելի առաջնորդները ժողովրդին մեղքի էին առաջնորդում (Ես. 9.8-21), Աստված խոստացավ, որ նրանց վրա դատաստան էր գալու: Զգուշացումն այսպես է հնչում. «Ի՞նչ եք անելու դուք այցելության օրը և այն ավերածության, որ հեռվից է գալիս: Ու՞մ եք դուք դիմելու օգնության համար, և որտե՞ղ եք թողնելու ձեր փառքը» (Ես. 10.3): (Որոշ թարգմանություններ եբրայերեն pequddah բառը «այցելություն» բառի փոխարեն սխալ կերպով թարգմանել են «պատիժ» բառով): Երեմիան նույն ձևով ծաղրում է կուռքերին. «Դրանք անարժեք են և երևակայության գործ. իրենց պատժի (այցելության) ժամանակ կկորչեն» (Եր. 10.15): Երեմիան առանձնահատուկ ձևով հաճախ է օգտագործում այս «այցելություն» բառը (8.12, 10.15, 11.23, 23.12, 46.21, 48.44,

50.27, 5.18): (Տե՛ս նաև Ովս. 9.7, Միք. 7.4):

Բառի այսպիսի ընկալումն իր պատմական արտահայտությունն է գտնում նաև Հիսուսի ժամանակներում: Հրեական ապոկրիֆա (պարականոն) գրականությունը, որ գրվել է մոտ ՔԱ երկրորդ դարում, ներառում է այս արտահայտության օգտագործման հըստակ դեպքեր. Սիրաք 18.20-ն ասում է. «Քննի՛ր ինքդ քեզ մինչև դատաստանի գալը, և այցելության օրը դու կարդարանաս»: Իսկ Իմաստության գիրքն արդարներին նայում է որպես հեշտությամբ անցնողների (քննությունը բարձր գնահատականով անցնողներին).

«Իրենց այցելության ժամանակ նրանք պայծառ կփայլեն, նրանք կլինեն կայծերի պես, որ անցնում են ծղոտի միջով: Նրանք կդատեն ազգերին, կտիրեն ժողովուրդների վրա, և Տերը նրանց թագավորը կլինի հավիտյան» (Իմաստ. 3.7-8): Իհարկե, սրանք ներշնչված տեքստեր չեն և մեկնաբանության համար չեն կարող դիտվել որպես հեղինակային ուղեցույցներ: Բայցևայնպես, դրանք օրինակ են այն բանի, թե ինչպես էին Հիսուսի ժամանակակից հրեաներն օգտագործում որոշակի բառեր և մտքեր աստվածաբանական համատեքստում:

Վերադառնալով Սուրբ Գրքին, մի բացահայտող հղում է գտնվում Բ Օրինացում՝ ուխտի նորոգության առումով: Այն ժամանակ, երբ Մովսեսը կրկնում էր Իսրայելի պատմությունն ու Աստծո օրենքը, Իսրայել երկրին դիմում է որպես «մի երկիր, որին քո Տեր Աստվածն է հոգ տանում: Քո Տեր Աստծո աչքերը միշտ դրա վրա են, տարվա սկզբից մինչև տարվա վերջ» (Բ Օր. 11.12): Հունարեն Սեպտուագինտան «հոգ տանում» արտահայտության համար օգտագործում է episkope բառը, որ մոտիկ է այցելել կամ հաճախել եբրայերեն բառին: Միտքն այն է, որ Աստված մշտապես վերահսկում է Իր ժողովրդին:

Մշտապես Աստծո առաջ լինելու գաղափարը ներկայացվում է խորանում և տաճարում «առաջավորության» 12 հացերով (Ել. 25.30, Ղևտ. 24.5-9, Բ Մն. 2.4): Եբրայական արտահայտությունը բառացի նշանակում է «երեսների հաց»: Աստված պատվիրեց, որ դրանք դրվեին խորանում. «մշտապես Իմ (բառացի՝ «Իմ երեսի») առաջ (Ել. 25.30): Եբրայերենով դա բառացիորեն հնչում է այսպես. «Եվ դու սեղանի վրա մշտապես պետք է դնես երեսների հացերն իմ երեսի առաջ»: Այսպիսով, այլաբանական իմաստով, Աստված շարունակաբար պետք է հետևեր 12 ցեղերին:

Բ Օրինաց 11-ում, «շարունակ…վերահսկելու» հատվածը հետևում է տիպիկ խոստումին՝ օրհնելու, եթե այդ վերահսկվող ցեղերը հնազանդվեին, և սպառնալիքին՝ դատելու, եթե նրանք ըմբոստանային: Տպավորությունն այնպիսին է, որ այդ այցելություն/վերահսկողությունն իր հետ բերում է լուրջ հետևանքներ հավատուրացության դեպքում:

Հիշե՛ք, որ Իսրայելի դեմ Հիսուսի դատական գործի երկար ճանապարհորդական պատմությունը սկսվում է Իր երեսը դեպի Երուսաղեմ ուղղելով: Այդ ամբողջ ճամփորդության ընթացքում այդ ներկայացուցչական քաղաքը մշտապես Նրա երեսի առջև էր: Նա

մարմնավորում էր տաճարի ներկայությունը, որ խոստանում էր Բ Օրինաց 11-ի ուխտը: Հաղթական մուտքի հատվածն այդ քաղաքին կատարած մարմնացած Աստծո այցելության գագաթնակետն է: Նրա երեսը, Նրա ներկայությունը բառացիորեն եկել էին քննելու այդ 12 ցեղերին:

Իսկ քաղաքն այնքան անհավատարիմ էր, ըմբոստ և համառ, որ նույնիսկ չէր էլ գիտակցում իր այցելության ժամանակը: Դա նրանց համար այնքան պարզ պետք է լիներ, որքան եղանակի փոփոխությունը՝ կապված արևմտյան քամու հետ: Եվ իրոք, հաշվի առնելով Հիսուսի հրաշքներն ու ուսուցումները, դա հստակ էր: Սակայն ժողովուրդը շարունակում էր տատանվել, իսկ առաջնորդները նշան էին պահանջում և այլն: Այնպես որ, դատաստանը գալիս էր այդ կեղծավորների վրա:

Դատաստանը լինելու էր

«Ժամանակի» հիմնական թեման, այսպիսով, գալիք դատաստանն էր: Սա վերածվում էր ժողովրդի կեղծավորության երկրորդ պատմության. անձնական դատողության պակասություն: Այդ պակասության հետևանքը լինելու էր Աստծո դատաստանը: Սա երևում է Հիսուսի պատմած հաջորդ առակում, որն անմիջապես հետևում է կանխատեսության վերաբերյալ առակին.

> «Իսկ ինչու՞ դուք ինքներդ չեք տարբերում, թե որն է ճիշտ: Երբ դու քո մեղադրողի հետ գնում ես դատավորի մոտ, ջա՛նք արա ճանապարհին նրա հետ հաշտվելու, որ չլինի թե քեզ տանի դատավորի մոտ, և դատավորը քեզ հանձնի պաշտոնյային, իսկ պաշտոնյան էլ քեզ բանտ նետի: Ասում եմ ձեզ, որ դուրս չեք գա այնտեղից, մինչև վերջին լուման չվճարեք» (Ղուկ. 12.57-59):

Այդ մարդկանց համար, գուցե, նորություն էր, որ նրանք մեղադրող ունեին: Նրանք, հավանական է, ոչ մի անգամ առիթ չէին ունեցել դատավորի առաջ ամբաստանյալի դիրքում գտնվելու: Սակայն Հիսուսը հաստատ գրավել էր նրանց ուշադրությունը, նրանց կեղծավոր անվանելով, իսկ հիմա էլ մեղադրում էր որպես անպարտաճանաչ վճարող: Նա տեղեկացնում է, որ նրանք օրենքի հետ կապված լուրջ

խնդիրների մեջ էին: (Հիշու՞մ եք, սա Աստծո ուխտի դատական գործը է): Նրանց պարտականությունն էր, մեղադրանքի հարցերը լուծել, նախքան մեղադրող կողմը (ով պարզվում է նաև դատավորն է, և նաև պաշտոնյան է) իրենց տանի դատավորի և պաշտոնյայի մոտ:

Այս հրեա պարտապանների իմաստը պարզ է: Նրանք մինչև վերջ ջանք չէին արել՝ մնալու Աստծո ուխտի մեջ: Նրանք չարաշահել էին Նրա օրինություններն ու ողորմությունները: Նրանք հսկայական պարտքեր էին կուտակել, իսկ հիմա եկել էր վճարելու ժամանակը: Իհարկե, պարտքն ամբողջությամբ մարելու համար նրանք պետք է ապաշխարեին և հավատային Նրան՝ այսպիսով նրանք հեշտությամբ կարող էին հաշտվել դատարան գնալու ճանապարհին: Եվ իրոք, դեռևս ժամանակ կար: Սակայն շուտով ժամանակը գալու էր, երբ այս մարդկանցից հաշիվ էր պահանջվելու: Եթե նրանք նախօրոք օրինական (դատը սկսվելուց առաջ) հաշտություն ձեռք չբերեին, քանի դեռ հնարավորություն ունեին, նրանք կհանդիպեին դատավարության ողջ սաստկությանը, և իրավունքի պաշտպանության միջոցները նրանց դեմ դուրս կգային: Նրանք կպատժվեին, և կպատժվեին մինչև անսահման պարտքի վերջին լուման վճարելը:

Աստծո գործոնների նախանշումը

Մարդիկ անմիջապես ապացուցեցին, որ աչքեր ունեն, բայց չեն տեսնում, ականջներ ունեն, բայց չեն լսում: Նրանք ձևացնում էին, թե իրոք զանազանում էին ժամանակները. «Այդ ժամանակ կային մարդիկ, որոնք նրան պատմեցին գալիլեացիների մասին, որոնց արյունը Պիղատոսը խառնեց իրենց զոհերի հետ» (Ղուկ. 13.1): Այդ մարդիկ տեղյակ էին ընթացիկ դեպքերին: Նրանք գիտեին ժամանակները: Նրանք գիտեին, որ հռոմեական չար կայսրությունը սպանել էր անմեղ հրեաներին և պղծել էր նրանց կրոնական ծեսը: Այդ դժբախտ գալիլեացիները, ովքեր այդպիսի սարսափելի ճակատագրի էին արժանացել, հաստատ այն պարտականներից էին, որոնց մասին խոսում էր Քրիստոսը: Հիսուսը պատասխանեց նրանց կեղծավորությանը համարժեք.

> «Եվ նա պատասխանեց նրանց. «Կարծում եք այս գալիլեացիներն ավելի՞ մեղավոր էին, քան մյուս գալիլեացիները, քանի որ այսպես տուժեցին: Ոչ, ասում

> եմ ձեզ, բայց եթե չապաշխարեք, բոլորդ նույն ձևով կկորչեք: Կամ այն տասնութ հոգին, ում վրա Սելովամի աշտարակն ընկավ և սպանեց նրանց: Կարծում եք նրանք ավելի՞ մեղավոր էին, քան Երուսաղեմի մյուս բնակիչները: Ոչ, ասում եմ ձեզ, բայց եթե չապաշխարեք, բոլորդ նույն ձևով կկորչեք» (13.2-5):

Հիմա մենք հասանք Ղուկաս 9.51-ից սկսած ողջ ճանապարհորդության պատմության ամենահետաքրքիր հատվածին: Այստեղ առակի միջոցով չէ, որ մեզ դաս է տրվում, այլ, իրական պատմական դեպքով:

Շատ ու շատ մեկնաբաններ ու քարոզիչներ բաց են թողնում Ղուկաս 13.1-5 հատվածի բուն իմաստը: Նրանք հաճախ սա նայում են որպես եզակի պատասխան՝ ուղղված չարիքի գոյության խնդրին («Ինչու՞ են վատ բաներ տեղի ունենում անմեղ մարդկանց հետ»): Սա Հիսուսի թեոդիցիա՞ն է: «Մոռացե՛ք դեպքերի մասին. կարևորն ապաշխարությունն է»: Սա՞ է արդյոք գլխավոր իմաստը:

Ես ընդունում եմ, որ տարիներ շարունակ այս համարը հենց այսպես էլ հասկացել եմ, մինչև մի օր ինչ-որ բան փոխվեց: Իրականում, հենց այս հատվածն է ինձ ներշնչել էկզեգետիկ (մեկնաբանական) նախագիծ սկսել: Երբ ես հասկացա դրա վախճանաբանական իմաստը, կարիք զգացվեց ողջ հատվածը, ինչպես նաև բոլոր առակները, ենթարկել պրետերիստական վերլուծության: Հաշվի առնելով համատեքստը, որում այն հայտնվում է, և դրա ներառումն այստեղ, այն ընդհանրապես կապ չունի թեոդիցիայի (Սահմանում. չարիքի գոյության մեջ Աստծո բարության և նախախնամության [ակադեմիական] պաշտպանությունը: Գլխ. խմբ.՝ Ա. Խ.) կամ չարիքի գոյության խնդրի հետ: Այն ամբողջությամբ կապված է Հիսուսի դատական գործի հետ՝ ընդդեմ Երուսաղեմի:

Արդյո՞ք Պիղատոսի գալիլեացի զոհերն ավելի ահավոր մեղավորներ էին, որ արժանացան այսպիսի ճակատագրի: Աննպատակ, եթե ոչ հռետորական հարց (ինչպես Հիսուսն օգտագործեց): Կեղծավորներ: Դուք չեք զանազանում ժամանակը. ձեր այցելության ժամանակը: Դուք բոլորդ կռապաշտ, ապստամբ ու անհավատարիմ մեղավորներ եք: Հիմա ապաշխարության ժամանակն է: Եթե դուք չապաշխարեք (շուտափույթ), դուք բոլորդ նույն ձևով կկորչեք:

Այս «նույն ձևով» արտահայտությունն այստեղ, իմ կարծիքով,

պետք է շատ լուրջ ընդունել՝ գրեթե բառացի: Նույնիսկ եթե ոչ բառացի, մեկնաբանությունը, միևնույն է, ուժեղ է: Կարծես Հիսուսն ասելիս լիներ «ճիշտ նրանց նման՝ նույն ձևով» դուք կկորչեք: Այս մարդիկ պատկերացում չունեին, թե ինչ իրավիճակի մեջ էին իրենք իրենց դնում՝ Պիղատոսին և նրա ծիսապիղծ մարդասպանությունն օրինակ բերելով: Այս չհավատացող հրեաներն իրոք կորչելու էին այդ գալիլեացիների նման՝ նրանց արյունը թափվելու էր հռոմեացի զինվորների միջոցով և նրանց Տաճարի ծեսերը պղծվելու էին: Մինչդեռ ես չեմ կարծում, որ Հիսուսն ինչ-որ ձևով նկատի ուներ, որ սա հայտնություն է այն մասին, որ Հռոմն էր դառնալու գալիք դատաստանի գործոնը, միանշանակ այն կանխասացություն է պարունակում: Ես գրեթե վստահ եմ, որ Նրա լսարանն այդպես էլ կհամարեր, եթե կործանում ակնկալեր դրսի թշնամու ձեռքով (ինչպես անցյալում էր տեղի ունեցել):

Հիսուսի ուսուցման երկրորդ հատվածն այստեղ վերաբերում է մեկ այլ աղետի, այս անգամ Սելոամի աշտարակի վայր ընկնելուն, որ 18 մարդ էր սպանել: Սրանից բացի ուրիշ ոչ մի պատմական գրառում չկա, սակայն դա այս պարագայում էական չէ: Հիսուսի կողմից այս դեպքի ավելացումը Պիղատոսի արածին երկու լրացուցիչ կանխանշում է պարունակում. 1) դա Աստծո գործն է լինելու և 2) դա կներառի շենքերի փլուզում Երուսաղեմում:

Առաջինը, դա Աստծո գործ է լինելու: Առաջին պատմությունը ներառում է մարդկային մի չար գործոն՝ Պիղատոսը: Սակայն Սելոամի աշտարակի ողբերգության հետ կապված ոչ մի հիշատակում չկա: Այն չէին փլուզել կամ հարձակման ենթարկել, այն ընկել էր: Դա Աստծո ձեռքն էր: Այն դեպքում, երբ Պիղատոսը (Հռոմը) ներառված կլինի գալիք դատաստանի մեջ, ապա վերջնական իմաստով Աստված է, որ կործանելու է չապաշխարողներին:

Երկրորդ, դատաստանի ժամանակ Երուսաղեմում քարերը թափվելու էին քարերի վրայից: Հիսուսն այս մասին ավելի ուշ կխոսի Տաճարի վերաբարյալ Իր հայտնի խոսքի մեջ. «Իսկ այս բաները, որ տեսնում եք, օրերը կգան, երբ քարը քարի վրա չի մնա, որ չքանդվի» (Ղուկ. 21.6): Աստծո կողմից Սելոամի աշտարակի քանդվելն այստեղ ընդամենը նախատիպար է:

Ամբողջական պատգամը, այս դեպքում, պարզ է: Այն հաշվետվության ժամանակ էր Մեծ Պոռնիկ Երուսաղեմի, առեղծվածային Բաբելոնի համար: Այն մոտ էր կործանման: Եվ բազմաթիվ անմեղ թվացող

մարդիկ հանկարծ և բռնի կերպով կկործանվեին այցելության ժամանակ: Հռոմը, Աստծո ձեռքով, կմորթեր հրեաներին և կավերեր քաղաքը: Հիսուսի լսարանը մտածում էր, որ այսպիսի բաներ տեղի են ունենում միայն հազվադեպ և արտասովոր դեպքերում, և, հավանաբար, այն մարդկանց հետ, ովքեր արժանի են դրան իրենց գաղտնի մեղքերի համար: Բայց, իրականում, նրանք բոլորն էլ արժանի էին դրան և շուտով կստանային իրենց պատիժը:

Հիսուսի լսարանն անկարող էր ընկալել այս բոլոր մանրամասն նախանշումները, սակայն ընդհանուր առմամբ պատգամը հստակ էր: Ապաշխարության ժամանակը կարճ էր, հակառակ դեպքում բռնի կործանում էր սպասվում:

Այսպիսով, իրականում այս պատգամն ամեն ձևով կապված էր Իսրայելի հանդեպ Հիսուսի մեղադրականի հետ: Այն շատ ճշգրիտ և հստակ պատկերում էր գալիք բաները, որ տեղի էին ունենալու:

Անպտուղ թզենու առակը

Հաջորդող մյուս հատվածի վախճանաբանական բնույթն ավելի պարզ է դառնում, ինչպես ես ասացի, համատեքստից ելնելով: Ամբողջական համատեքստը, իհարկե, դեպի Երուսաղեմ ընդհանուր ճանապարհորդությունն է: Սակայն անմիջական համատեքստն ավելի ակնհայտ է: Կանխասացության վերաբերյալ առակների իմաստը ակնհայտ է. դրանք վերաբերում են ժամանակը զանազանելուն: Հիմա մենք գալիս ենք այդ համատեքստի մյուս կողմին. թզենու առակին (թզենուն) տրվել են պտուղ բերելու բազմաթիվ հնարավորություններ, նախքան արմատախիլ լինելու սպառնալիք տրվելը: Գրված է.

> «Եվ այս առակը պատմեց. «Մի մարդ թզենի տնկեց իր այգում և երբ եկավ նրա վրա պտուղ փնտրելու, չգտավ: Եվ այգեպանին ասաց. «Ահա երեք տարի է, որ գալիս եմ այս թզենու վրա պտուղ փնտրելու և չեմ գտնում: Կտրի՛ր դա: Ինչու՞ հողն օգտագործվի»: Եվ նա պատասխանեց նրան. «Պարո՛ն, թող դա այս տարի էլ մնա, մինչև դրա շուրջը փորեմ և գոմաղբ դնեմ: Եթե եկող տարի այն պտուղ տա, շատ լավ, իսկ եթե ոչ՝ կարող ես կտրել այն» (Ղուկաս 13.6-9):

Սա հստակ հղում է Երուսաղեմի հանդեպ, որ այդպես էլ պտուղ

չէր բերել Աստծո համար: Աստծո Արքայության համար նա անպտուղ էր եղել: Հոգևոր պտուղներ բերելու փոխարեն, նա ինքն իրեն լցրել էր տարբեր տեսակի նրբաճաշակություններով՝ երկրավոր Թագավորության հետ անառակության միջոցով (Հայտ. 17-18):

Այգու տերը բավականաչափ համբերել էր: Նա ուզում էր, որ անպիտան մոլախոտը կտրվեր: Նրա այս որոշումը հիմնվում էր երկու փաստարկի վրա. արդեն երեք տարի էր, այն պտուղ չէր բերում, իսկ հողն էլ չափազանց արժեքավոր էր, որպեսզի անպտուղ ծառի համար այն զբաղեցվեր:

Սա բավականաչափ համոզիչ էր, որպեսզի անմիջապես քայլ արվեր: Այո, հողը՝ երկիրը, չափազանց արժեքավոր էր, որպեսզի օգտագործվեր ըստ էության մեռած փայտի համար: Սա վատ ներդրում էր: Աստված նրան տվել էր դիրք, հարստություն, գիտություն, հայտնություն: Սակայն նա հրաժարվել էր դա տարածել ազգերի մեջ այնպես, ինչպես պարտավոր էր աներ, դրա փոխարեն նա օգտվել էր աշխարհի պարարտությունից՝ իր կրքերը հագեցնելու համար: Նրան տրվել էր վերջին հնարավորություն, որն իրականում կդառնար վերջնական պատճառը, թե ինչու պետք է Իսրայելը վտարվեր այդ երկրից:

Սակայն առակում թզենին անպտուղ էր եղել ընդամենը երեք տարի: Մինչդեռ այս մշտական անպտղությունը բավարար է թվում դատաստան վաստակելու համար, նորատունկ ծառի համար, համենայն դեպս, նորմալ է, եթե առաջին երեք տարիներն աճի առանց պտուղ տալու: Այնպես որ, նրան ևս մեկ լրացուցիչ տարի պետք է տրվեր:

Եվ այս վերջին տարին նրան պետք է հատուկ ուշադրություն դարձվեր: Այգեպանը ուշադիր էր լինելու, որպեսզի հողը փխրեցներ ու պարարտանյութ տար: Եվ ի՞նչ էր Հիսուսի ներկայությունն Իր ժողովրդի մեջ, եթե ոչ այդ մեծ աշխատանքը: Աստված պատրաստում էր բարի հողը և պարարտացնում էր այն Իր Խոսքով: Սակայն այդ հողի մեծ մասը քարքարոտ էր, մակերեսային և փշերով ծածկված (Ղուկ. 8:4-15): Սակայն սա վերջին հնարավորությունն էր: Եթե այդ ծառը Հիսուսի ջանքից հետո պտուղ բերեր, շատ լավ, իսկ եթե ոչ, կարող ես այն կտրել. քաղաքը հավասարեցնել հողին:

Եզրակացություն

Ղուկաս 12.54-13.9 հատվածը մեկ ամբողջական թեմա ունի.

«ժամանակը կարճ է»: Իսկ Հիսուսի անմիջական իրավիճակում, այդ թեման Նրա լսարանի համար հնչում էր այսպես. «ժամանակը կարճ է ձեզ համար»: Նկատե՛ք, որ այս ամբողջ հատվածում Հիսուսը խոսում էր մեծ բազմության հետ: «Ժամանակի», բանտարկող դատավորի, գալիք բռնի ողբերգության և վերջին հնարավորության վերաբերյալ այս բոլոր զգուշացումներն ուղղված էին Հիսուսի անմիջական լսարանին: Նրանց համար, իրոք, ժամանակը կարճ էր, և նրանցից ոչ ոք չէր խուսափելու մեծ որոշում կայացնելուց:

Ընդամենը մի քանի համար այն կողմ մենք կտեսնենք, որ Հիսուսն ասում է, որ ոչ ոք չի խուսափելու որոշում կայացնելուց, և միայն մի քանիսը կխուսափեն դատաստանից: Իրեն լսող այդ նույն մարդկանց, որոնց Նա ասել էր, եթե չապաշխարեին, կկործանվեին, հիմա էլ տեղեկացնում է, որ նրանք իրականում չէին ապաշխարելու: Ծառը կկտրվեր, և ո՞վ էր զբաղեցնելու այգու դատարկ տարածքը: Երկու գլուխ հետո մենք կտեսնենք դա, սակայն մինչ այդ պետք է խորհենք Մատթեոսի ավետարանից մի հատվածի վրա, որը հիմք է հանդիսանում Ղուկասի ավետարանի հաջորդ հատվածի համար:

5. Ցորեն, որոմ և Արքայություն (Մատթեոս 13:24-43)

Մինչ մենք հիմնականում կենտրոնանում ենք Ղուկաս ավետարանի ճամփորդության պատմության վրա, Մատթեոսի ավետարանի այս հատվածը հատկապես համապատասխան է և կարևոր մեր քննարկման այս կետում: Ժամանակագրական ոչ մի պատճառ չկա դա հենց այս հատվածի մեջ մտցնելու համար, որովհետև ես կարծում եմ Հիսուսն առակների այս շարքը պատմել է դեպի Երուսաղեմ Իր վերջնական ճամփորդությունից շատ ավելի շուտ: Բայցևայնպես, Նա այդ քաղաքի դատաստանն արդեն Իր մտքում ուներ, և քանի որ վերապատմում է մանանեխի հատիկի և թթխմորի օժանդակող առակները Ղուկասի հաջորդ ժամանակագրական հատվածում, այստեղ պետք է համատեքստային հիմք դնել համեմատության համար:

Այս գլխում ես օգտագործում եմ Աստվածաշնչի Հակոբոս թագավորի (King James) թարգմանության տարբերակը ESV-ի փոխարեն, որը ես օգտագործել եմ այս մեկնաբանության մնացած հատվածի համար: Ես սա անում եմ այս պատմության ծանոթ դարձվածաբանության և տերմինաբանության համար, բայց որ ավելի կարևոր է, մատնանշելու, թե ինչպես է սխալ թարգմանությունը մնայուն սխալ կարծիք ստեղծել այս առակի մեկնաբանության հարցում:

Ցորենի և որոմի առակը

Շատ քրիստոնյաների (միգուցե, մեծ մասի) համար ցորենի և որոմի այս առակը (Մատթ. 13:24-30, 36-43) պատմում է վերջին դատաստանի պատմությունը: Այս տեսակետը հատկապես հասկանալի է Աստվածաշնչի Հակոբոս թագավորի (King James) թարգմանության տարբերակի հիման վրա: Այն ասում է.

«Նա մեկ այլ առակ ներկայացրեց, ասելով. «Երկընքի Արքայությունը նման է մի մարդու, ով բարի սերմ ցանեց իր դաշտում: Սակայն, երբ մարդիկ քնած էին, նրա թշնամին եկավ և ցորենի մեջ որոմ ցանեց և հեռացավ: Սակայն երբ ցողունը երևաց, և պտուղ բերեց, երևացին նաև որոմները: Տանտիրոջ ծառաները եկան ու ասացին նրան. «Տեր, չէ՞ որ դու բարի սերմ ցանեցիր քո դաշտում: Ուրեմն որտեղի՞ց եղան այս որոմները»: Նա ասաց նրանց. «Թշնամի մարդ է արել դա»: Ծառաներն ասացին նրան. «Ուզու՞մ ես, ուրեմն, գնանք և հավաքենք դրանք»: Բայց նա ասաց. «Ոչ: Չլինի թե որոմները հավաքելիս, ցորենն էլ արմատախիլ անեք: Թող երկուսը միասին աճեն մինչև հունձքը: Հունձքի ժամանակ ես կասեմ հնձողներին. «Առաջինը հավաքեք որոմները և խուրձերով կապեք այրելու համար, իսկ ցորենն իմ ամբարում հավաքեք»:

Այս թեմայով երկու այլ առակներ պատմելուց հետո Հիսուսը թողնում է բազմությունը և տուն է մտնում: Նրա աշակերտները չեն հասկանում առակը, սակայն, ցանկանալով խուսափել այդ մասին բացահայտ ասելու անհարմարությունից, առանձին մոտենում են Նրան և խնդրում, որ բացատրի այն: Նա ասում է.

«Նա պատասխանեց նրանց ու ասաց. «Բարի սերմ ցանողը մարդու Որդին է: Դաշտը՝ աշխարհն է: Բարի սերմն արքայության որդիներն են, իսկ որոմները՝ չարի որդիները: Թշնամին, որ դրանք ցանեց, սատանան է: Հունձքը՝ աշխարհի վերջն է, իսկ հնձողները՝ հրեշտակներն են: Եվ ինչպես որոմներն են հավաքում ու կրակի մեջ այրում, այնպես էլ կլինի աշխարհի վերջը: Մարդու Որդին կուղարկի իր հրեշտակներին, որ նրանք իր արքայությունից հավաքեն բոլոր չար բաները և նրանց, ովքեր անարդարություն են գործում: Եվ դրանց կգցեն կրակի հնոցը: Այնտեղ կլինի ողբ ու ատամների կրճտոց: Այդ ժամանակ արդարները կփայլեն արևի նման իրենց Հոր արքայության մեջ: Ով ականջ ունի, թող լսի» (շեշտադրումն իմն է):

Կան երկու հիմնական բաներ, որոնք նպաստում են այս առակի սխալ ընկալմանը. 1) այն շատ հաճախ է ուսուցանվում որպես աշխարհի վերջին և վերջնական դատաստանին վերաբերող առակ, և 2) Աստվածաշնչի հայտնի Հակոբոս թագավորի (King James) թարգմանության տարբերակը հստակ ասում է, որ այս հավաքելը, առանձնացնելն ու այրելը տեղի կունենա «աշխարհի վերջում» (հհ. 39,40):

Այս ընթերցանությունը հստակորեն դա կապում է 38-րդ համարի հետ. «Դաշտը՝ աշխարհն է»: Միանգամայն պարզ է դառնում, որ «աշխարհը», որում այս երկու տեսակներն աճում են, պետք է որ նույն «աշխարհը» լինի, որ մոտենում է իր ավարտին: Այսպիսով, հունձքը, առանձնացումը և դատաստանը՝ բոլորը տեղի են ունենում աշխարհի վերջում:

Սակայն թարգմանությունը պարզապես ճիշտ չէ: 38-րդ համարում ճիշտ է «աշխարհ» ասել, քանի որ հունարեն kosmos բառը սովորական բառ է, որ թարգմանվում է որպես «աշխարհ»: Այն վերաբերում է այս մոլորակի ընդհանուր համակարգին և իրերի կարգ ու կանոնին: Սակայն մյուս համարներում լրիվ ուրիշ բառ է: 39 և 40 համարներում հունարեն aion բառն է, որից առաջանում է անգլերեն «eon» բառը, որ նշանակում է երկար մի ժամանակահատված, որը ճիշտ ձևով թարգմանվում է «ժամանակաշրջան»: Ժամանակակից թարգմանությունների մեծ մասը ճշգրտում են սա (ESV, NAS և այլն), և նույնիսկ Աստվածաշնչի Հակոբոս թագավորի (King James) թարգմանության ժամանակակից հրատարակությունը ծանոթագրություն է ավելացնում ճիշտ ընթերցանության համար: Իսկ ինչու է Աստվածաշնչի Հակոբոս թագավորի (King James) թարգմանության հին տարբերակը դա թարգմանել «աշխարհ» բառով, մեկ այլ առեղծված է:

Ճիշտ թարգմանությունն այստեղ անփոխարինելի է այդ առակը ճիշտ հասկանալու և բացատրելու համար: Ավելի ճիշտ այն հնչում է այսպես.

> «Դաշտը աշխարն է, իսկ բարի սերմը արքայության որդիներն են: Մոլախոտերը չարի որդիներն են, իսկ հունձքը ժամանակաշրջանի ավարտն է, իսկ հնձողները հրեշտակներն են: Ինչպես մոլախոտերն

են հավաքում և կրակով այրում, այնպես էլ կլինի ժամանակաշրջանի ավարտին (ESV):

Սա կատարյալ թարգմանություն չէ, սակայն սա հասկանալի է դարձնում այս քննարկման կարևոր մի կետ: Այս ուսուցման մեջ ավարտին է մոտենում ոչ թե հենց աշխարհը, այլ մի մեծ ժամանակահատված: Հիսուսը խոսում է ոչ թե աշխարհի վերջի մասին, այլ ժամանակաշրջանի ավարտի մասին: Այսպիսով, դատաստանը, որ նկարագրված է այստեղ, վերաբերում է տվյալ ժամանակահատվածի ավարտին:

Ուրեմն, հարց է առաջանում, հատկապես ի՞նչ ժամանակահատվածի մասին է խոսքը: Հնարավոր է (և, միգուցե, շատերի ցանկությունն է) այդ ժամանակաշրջանը հոմանիշ դարձնել բոլոր ժամանակների ավարտի, և դրանով իսկ, աշխարհի վերջի հետ: Բայց արդյո՞ք դա էր Հիսուսի մտքում:

«Այս ժամանակաշրջանը»

Ես չեմ կարծում, որ Հիսուսն այստեղ նկատի ունի ժամանակի վերջնական ավարտը: Ընդհակառակը, Նա Իր մտքում ուներ որոշակի ժամանակահատվածի ավարտ, որին կհետևեր մեկ ուրիշը: Սա հստակ է դառնում այն ուսուցումից, որ Նա տվեց մի քիչ ավելի շուտ հենց նույն օրը (տես Մատթ. 13.1): Նա ժողովրդին և փարիսեցիներին զգուշացրեց աններելի մեղքի մասին. «Եվ ով որ մի բան ասի ընդդեմ Մարդի Որդու, կներվի նրան, բայց ով որ խոսի ընդդեմ Սուրբ Հոգու, նրան չի ներվի ոչ այս ժամանակաշրջանում, ոչ էլ՝ գալիք» (Մատթ. 12.32):

Հիսուսն այստեղ խոսում է այս ժամանակաշրջանի և գալիք ժամանակաշրջանի մասին, և որ երկուսն էլ նույն հավատալիքներն ու հավատի դավանանքն ունեն: Սա ցույց է տալիս, որ Նա Իր մտքում ուներ ընթացիկ ժամանակաշրջանը՝ «այս ժամանակաշրջանը», որ Նրա ժամանակաշրջանն էր, որը պետք է փոխարինվեր գալիք նոր ժամանակաշրջանով (ամեն դեպքում, Իր լսողների համար):

Իրականում, Մատթեոսի հունարեն ձեռագրերից շատերը Մատթ. 13.40-ի համար նաև ներառում են «այս» բառը և գրում են «Այս ժամանակաշրջանի հունձքը մոտ է»: Թեև այդ բառն ամենահին ձեռագրերից բացակայում է, բազմաթիվ տեքստերի մեջ դրա գոյությունը չպետք է ամբողջովին անտեսվի:

Երկու ժամանակաշրջանների այս ընկալումը երևում է նաև

Պողոսի ուսուցման մեջ: Օրինակ, Հիսուսը տիրող Արքա է «բոլոր իշխանության, զորության, կարողության և տերության վրա, և ամեն անունի վրա, որ տրվում է, ոչ միայն այս ժամանակաշրջանում (aion), այլ նաև՝ գալիք» (Եփ. 1.21): Այնուհետև նա այս երկու ժամանակաշրջանները կիրառում է այդ ժամանակաշրջանի ոգուց հավատացյալների փրկության հարցում.

> «Եվ դուք հանցանքների ու մեղքերի մեջ մեռած էիք, որոնց մեջ ժամանակին քայլում էիք, հետևելով այս աշխարհի [aion՝ «ժամանակաշրջան»] ուղղությանը, հետևելով օդի իշխանին, այն ոգուն, որ հիմա գործում է անհնազանդության որդիների մեջ… Բայց Աստված, որ հարուստ է ողորմությամբ, այն մեծ սիրո պատճառով, որով մեզ սիրեց, նույնիսկ երբ մեր հանցանքների մեջ մեռած էինք, կենդանացրեց Քրիստոսով (դուք շնորհով եք փրկված) և նրա հետ մեզ հարություն տվեց և նստեցրեց իր հետ երկնային տեղերում Հիսուս Քրիստոսում, որպեսզի գալիք ժամանակաշրջանում կարողանա ցույց տալ իր շնորհի անչափելի հարստությունը Հիսուս Քրիստոսում մեզ ցույց տված բարությամբ» (Եփ. 2.1-7):

Հիսուսի նման, Պողոսն էլ շատ հստակ տեսնում էր երկու ժամանակաշրջանները. մի ժամանակաշրջան, որ շարունակում էր գործել իր գրելու ընթացքում, և մյուսը, որ տիրելու էր ապագայում: Ուրեմն, հարցը սրանում է. ե՞րբ է տեղի ունեցել այս երկու ժամանակաշրջանների միացումը:

Պողոսը շատ հստակ ցույց է տալիս, որ ինչ-որ միացում էր տեղի ունենում, երբ նա գրում էր, և իրականում հին ժամանակաշրջանը (որը մենք կարող ենք անվանել Հին Կտակարանի ժամանակաշրջան) իր գրելու ընթացքում մոտենում էր ավարտին: Եփեսացիներին 3.8-11-ում նա նշում է այդ փոփոխության պատճառը: Նա ասում է, որ իրենց շնորհ է տրվել՝ Ավետարանը քարոզելու հեթանոսներին.

> «լուսավորելու ամեն մեկին, թե ինչ է խորհրդի ծրագիրը, որ ժամանակաշրջաններ շարունակ ծածուկ էր Աստծո մեջ, ով ամեն բան ստեղծեց,

> որպեսզի եկեղեցու միջոցով Աստծո բազմապատիկ իմաստությունը հիմա հայտնի լինի իշխաններին ու կառավարողներին երկնային վայրերում: Սա եղավ ըստ այն հավիտենական նպատակի, որ նա իրականացրեց մեր Տեր Հիսուս Քրիստոսում»:

Նկատե՛ք, որ փոփոխության պատճառը նաև ժամանակագրում է այն: Աստված Ավետարանի հայտնությունը դարեր շարունակ ծածուկ է պահել, ասում է առաքյալը, բայց հիմա (իր գրելու ընթացքում) Նա այն բերել է լույսի մեջ: Այլ կերպ ասած, Քրիստոսի գալը և Քրիստոսի գործը ազդեցին ժամանակաշրջանների փոփոխության սկզբի վրա:

Պողոսն այս նույն ուսուցումը կրկնում է Կողոսացիներին 1-ին գլխում: Աստծո Խոսքը մատակարարելու իր ծառայությունը նա այսպես է բացատրում. «ժամանակաշրջաններ և սերունդներ շարունակ գաղտնի պահված խորհուրդը հիմա հայտնվեց սրբերին» (Կող. 1.26): Այսպիսով, հստակ է դառնում, որ Աստծո նախախնամության մեջ կենսական փոփոխություն է տեղի ունեցել Քրիստոսի գալով:

Բայց իրո՞ք Պողոսի և Հիսուսի ասած «այս ժամանակաշրջանը» մոտենում էր ավարտին, երբ Պողոսը գրում էր, թե դա դեռ պետք է տեղի ունենա մեր ապագայում: Պողոսը սա նույնպես հստակեցնում է 1 Կորնաթցիներին 10-րդ գլխում: Ծնունդոցից մի քանի դեպքեր հիշեցնելուց հետո, Պողոսն ուսուցանում է. «Եվ այս բաները նրանց հետ պատահեց որպես օրինակ, սակայն դրանք գրվեցին մեզ (իրեն և իր ունկնդիրներին) խրատ լինելու համար, որոնց վրա դարերի վերջը հասավ» (1 Կոր. 10.11): Սրանից պարզ է դառնում, որ Պողոսն ինքն իրեն տեսնում էր մի ժամանակաշրջանի վերջում, որը հայտնի էր անհնազանդ մարդկանց վրա գալիք դատաստանով:

Եբրայեցիների թղթի հեղինակը նմանատիպ արտահայտություն է օգտագործում Քրիստոսի գործի առնչությամբ. «Սակայն, նա մեկ անգամ հայտնվեց ժամանակաշրջանների վերջում՝ մեղքը վերացնելու իր անձի զոհով» (Եբր. 9.26): Այստեղ հստակ է, որ այդ հին ժամանակաշրջանի՝ իր ավարտին հասնելը կապ ուներ Քրիստոսի խաչելության հետ:

Այսպիսով, Հիսուսի, Պողոսի և Եբրայեցիների նամակի հեղինակի ուսուցումներից մենք շատ հստակ պատկեր ենք ստանում երկու հիմնական ժամանակաշրջանների մասին. մեկը, որ տևել էր

մինչև Քրիստոսի ժամանակ, և մյուսը, որ սկսվեց գրեթե այդ նույն ժամանակահատվածում: Ես հավատում եմ, որ այս երկու ժամանակաշրջանները, որոնք հենվում են Քրիստոսի գալու և գործի վրա, ակնհայտորեն վերաբերում են Հին և Նոր Ուխտերի իրականացմանը: Իրականում Եբրայեցիների թղթի հեղինակը հենց սրան է հղում անում: Նա ասում է, որ Նոր Կտակարանը Հինը դարձնում է հնացած. «Իսկ այն, ինչ հնանում է և ծերանում, պատրաստ է վերանալու» (Եբր. 8.13): Նկատե՛ք, որ Նորը միանշանակ Հինը դարձնում է հին: Եվ իր ժամանակ՝ իր գրելու ժամանակ, Հին Կտակարանը հին էր դառնում և պատրաստվում էր վերանալ: Այն դեռևս ամբողջությամբ չէր ոչնչացել, սակայն հաստատ իր կյանքի վերջին րոպեներն էր ապրում:

Այն մահացավ ՔՀ 70թ.-ին, երբ այդ Հին համակարգի խորհրդապատկերն ու արարողությունները՝ տաճարն ու զոհաբերությունները, ամբողջովին ոչնչացվեցին հռոմեական բանակի կողմից: Սա այն որոշիչ պահն էր, երբ Հիսուսի և Պողոսի «այս ժամանակաշրջանն» ավարտվեց և ամբողջությամբ իր տեղը զիջեց «գալիք ժամանակաշրջանին»: Սա է, իհարկե, բուն պատճառը, թե ինչու Հիսուսը «ժամանակաշրջանի ավարտը» կապեց Տաճարի կործանման վերաբերյալ Իր մարգարեության հետ.

«Հիսուսը դուրս եկավ տաճարից և գնում էր, երբ Նրա աշակերտները եկան և ցույց էին տալիս Նրան տաճարի շինությունները: Սակայն Նա պատասխանեց նրանց. «Տեսնու՞մ եք այս ամենը: Ճշմարիտ եմ ասում ձեզ, քարը քարի վրա չի մնա այստեղ, որ չքանդվի»: Երբ նստեց Ձիթենյաց լեռան վրա, աշակերտներն առանձին Նրա մոտ եկան և ասացին. «Ասա մեզ, ե՞րբ կլինեն այս բաները, և ո՞րն է լինելու Քո գալուստի և ժամանակաշրջանի ավարտի նշանը»:

Հիմա աշակերտները հստակ հասկացել էին Հիսուսին: Հիշե՛ք, ավելի վաղ՝ Մատթեոսի 13-րդ գլխում, նրանք խնդրեցին բացատրել ցորենի ու որոմների առակը: Այդ ժամանակ Նա խոսեց ժամանակաշրջանի ավարտի և թշնամու որդիների հանդեպ դատաստանի մասին: Նա հաճախ և հստակ փարիսեցիներին նույնացնում էր թշնամու որդիների հետ, իսկ նրանց ու նրանց աշակերտներին, համարում դժոխքի (գեհենի. տես Մատթ. 23.15-ը) որդիներ: Այս անգամ աշակերտները Տաճարի վերաբերյալ Հիսուսի հայտարարությունն (Մատթ. 24.2) անմիջապես փոխկապակցեցին. դա պետք է որ կապ ունենար «ժամանակաշրջանի ավարտի» հետ, որի մասին Հիսուսն

ավելի վաղ էր ուսուցանել: Դրա համար, նրանք հիմա խնդրում են բացատրել «ժամանակաշրջանի ավարտը»:

Իրականում, դրանք կապ ունեին իրար հետ: Հիսուսը ներկայացնում էր այն ողջ դատապարտությունը, որ գալու էր Երուսաղեմի վրա և թշնամու անհավատ որդիների վրա (24.4-25.45):

Ժամանակաշրջանի դատաստանը

Ցորենի և որոմների առակի ճիշտ ընկալումն ի հայտ է գալիս միայն *aion* (ժամանակաշրջան) բառի ճիշտ թարգմանության և երկու ժամանակաշրջանների վերաբերյալ աստվածաշնչյան ուսուցման դեպքում: Հստակ է, որ Հիսուսն Իր մտքում չուներ աշխարհի վերջը, ոչ էլ նկատի ուներ վերջնական դատաստանը: Ընդհակառակը, Մատթեոս 13.24-30, 36-43 հատվածները նկարագրում են դատաստան, որ գալու էր անհավատ Երուսաղեմի վրա: Այս ժամանակահատվածում հրեշտակները պետք է «իր արքայությունից հավաքեն բոլոր չար բաները և նրանց, ովքեր անարդարություն են գործում» (13.41) և նրանք կրակով կպատժվեն: Նրանցից շատերը բառացիորեն կրակով այրվեցին Երուսաղեմի կործանման ժամանակ: Սակայն հենց այս նույն ժամանակ Քրիստոսի ընտրյալները՝ «արքայության որդիները» (հ. 38), կհնձվեն և կպահվեն: Մինչդեռ առակի բացատրությունը մեզ չի ասում, թե ինչ կլինի նրանց հետ վերջնական արդյունքում, բուն առակում տանտերը հրամայում է հնձվորներին, որ «հավաքեն ցորենն իմ ամբարում»: Այլ կերպ ասած, նրանք պաշտպանված և փրկված են Աստծո կողմից:

Սա, իհարկե, հենց այն է, ինչ տեղի ունեցավ քրիստոնյաների հետ: Նրանք ոչ միայն հոգևոր իմաստով փրկվեցին, այլև նրանց մեծ մասը Երուսաղեմից փախավ նախքան հռոմեական պաշարումը: Սա տեղի ունեցավ Հիսուսի տված խորհրդի արդյունքում՝ փախչել առանց հետ նայելու, երբ նշանները հայտնվեն (Մատթ. 24.16-22): Իրականում, սա կարող էր համեմատվել ընտրյալներին հնձելու հրեշտակների գործի հետ (24.30): Փաստորեն, քրիստոնյաները Երուսաղեմում վաճառել էին իրենց տներն ու ագարակները՝ նախքան Հռոմի արշավանքը (Գործք. 4.32-37) և օգտագործել էին այդ գումարներն իրար օգնելու համար: Նրանք Երուսաղեմում մնալու ոչ մի մտադրություն չունեին, քանի որ աստվածային նախազգուշացումների հիման վրա քաջատեղյակ էին:

Ցորենի և որոմների առանձնացումը, այպիսով, վերաբերում էր Երուսաղեմի կործանմանն ու Աստծո ճշմարիտ պտղաբեր որդիների բաժանմանն այդ ժամանակվա անհավատ հրեաներից: Հետաքրքրական է, որ այս մեկնաբանությունը հասնում է առակի պատկերի սրտին: «Որոմը» սովորական հին մոլախոտ չէր, այլ հատուկ մի մոլախոտ էր, որ հունարեն կոչվում է zizania: Այն հասունացման վաղ շրջանում շատ նման է ցորենին և միայն լուրջ ուսումնասիրությամբ կարելի է դրանք իրարից տարբերել: Աճի ավելի ուշ շրջանում տարբերությունը սկսում է մեծանալ, սակայն արդեն շատ ուշ է լինում որոմը քաղելու համար՝ առանց ցորենը վնասելու (ինչպես առակն է ասում): Եվ ավելին, որոմի հատիկները թունավոր են և ուտելու դեպքում առաջացնում են գլխապտույտ, սրտխառնոց և, հավանաբար, նույնիսկ մահ: Կարճ ասած, դրանք կարող են նման լինել բարի բանի, սակայն թունավոր են, և մի որոշ ժամանակ անց նրանց իրական էությունը երևան է գալիս: Սա ճիշտ և ճիշտ ըմբոստ հրեաների պատմությունն է: Նրանք նման էին Աստծո որդիների, սակայն իրականում հակառակորդի որդիներն էին և նույնիսկ սպանում էին Աստծո մարգարեներին (Մատթ. 23.30-39): Եվ ինչքան պատմությունը խորանում էր, այնքան նրանց իրական բնույթը, որպես բարկության որդիներ, բացահայտվում էր:

Այսպիսով, այս առակը նկարագրում է այդ հին ժամանակաշրջանի շուտափույթ ավարտն ու դրա որդիների կործանումը և Աստծո Արքայության մեջ ճշմարիտ որդիների հավաքվելու սկիզբը: Այն, որպես ուսուցում, սրանից դուրս այլ կերպ չպետք է ընկալվի:

Մանանեխի սերմն ու թթխմորը

Ցորենի և որոմների առակից անմիջապես հետո Հիսուսը պատմեց մանանեխի սերմի (Մատթ. 13.31-32) և թթխմորի (Մատթ. 13.33) առակները: Սրա մասին շատ ավելի բան կա ասելու, քան ես այստեղ հնարավորություն ունեմ: Ահա հիմնական միտքը.

Թշնամու որդիների և Արքայության որդիների գալիք բաժանման վերաբերյալ Իր ուսուցումից անմիջապես հետո Հիսուսը նկարագրում է Արքայության աճի էությունը: Մանանեխի սերմի առակը.

«Նա մեկ այլ առակ ներկայացրեց նրանց, ասելով.
«Երկնքի արքայությունը նման է մանանեխի սերմի

> հատիկի, որ մի մարդ վերցրեց և ցանեց իր դաշտում: Այն բոլոր սերմերից փոքրագույնն է, սակայն երբ աճում է, այգու բոլոր բույսերից ավելի է մեծանում և ծառ է դառնում, այնպես որ երկնքի թռչունները գալիս ու բույն են դնում դրա ճյուղերին»:

Եվ թթխմորը.

> «Նա մեկ այլ առակ պատմեց նրանց. «Երկնքի արքայությունը նման է թթխմորի, որ մի կին վերցրեց և թաքցրեց երեք չափ ալյուրի մեջ, մինչև ամբողջը խմորվեց»:

Երկու դեպքում էլ մենք տեսնում ենք, որ մի փոքրիկ բան աճում է և դառնում մեծ բան: Երկուսն էլ դանդաղ են աճում, երկուսն էլ աննշմարելի են աճում: Այս բոլորը վերաբերում է Նոր Կտակարանի ժամանակաշրջանին: Աշակերտների մի փոքրիկ խումբ ազատվեց Երուսաղեմի կործանումից: Ժամանակի ընթացքում նրանք աճեցին և լցրեցին աշխարհը: Սա մի գիշերվա մեջ տեղի չունեցավ, այլ՝ աստիճանաբար: Դեռևս շատ գործ կա անելու և շատ տեղ կա աճելու: Սա նույնպես տեղի կունենա աստիճանաբար և դանդաղ:

Մանանեխի սերմի առակում միակ շեշտադրումը համաչափության վրա է: Փոքրիկ սերմն աճում է և դառնում տուն և նեցուկ երկնքի թռչունների համար: Սա հրաշքից ոչ մի բանով պակաս չէ. բնական ակնկալիքներից միանգամայն դուրս է, որ փոքրիկ մի խումբ մի մեծ շարժում սկսի: Իմաստն այն է, որ թվացյալ անկարևորը դառնում է մի բան, որի վրա խարսխվում է և որից կախված է կյանքը:

Թթխմորի առակի միակ շեշտադրումը տարածվելու ունակության վրա է: Ոչ միայն փոքրիկ մի բանն աճում է և մեծ բան դառնում, այլ այն տարածվում է և ներծծվում ամբողջի մեջ: Այստեղ մենք սովորում ենք, որ Արքայությունը վերջնական արդյունքում կքրիստոնեացնի ամբողջ աշխարհը: Դրա ազդեցությունը կտարածվի բոլոր մարդկանց, վայրերի և ամեն բանի վրա ամենուրեք: Սակայն կրկին սա տեղի կունենա դանդաղ և ժամանակի ընթացքում՝ աննշմարելի ձևով:

Հիսուսը ցորենի և որոմների առանձնացումն ու դատաստանը կապեց «ժամանակաշրջանի» փոփոխության, կամ Ուխտի իրականացման հետ: Սրանից մենք պետք է Արքայության աստիճանաբար

տեղի ունեցող աճի սկիզբը հասկանանք որպես Արքայության այդ որդիների հավաքվելու սկիզբ: Դա է պատճառը, թե ինչու են աճելու վերաբերյալ այս երկու կարճ առակներն Ավետարանում գտնվում ցորենի ու որոմների առակի (հհ. 24-30) և առանձին տրված դրա բացատրության միջև (հհ. 36-43): Դրանք բոլորը միասին են ընթանում:

Եզրակացություն

Սրանից պետք է հասկանալի լինի, որ Հիսուսը ցորենի ու որոմների առակով չէր խոսում աշխարհի վերջի մասին: Ընդհակառակը, Նա նշում է Հին Ուխտի ժամանակաշրջանի ավարտն ու կործանումը և հայտարարում է Արքայության որդիների փրկությունը: Դրանից հետո, այս ճշմարիտ Արքայությունն աճելու էր և աստիճանաբար տարածվելու էր գալիք ժամանակաշրջանի մեջ (մի ժամանակաշրջան, որում մենք հիմա ապրում ենք), մինչև այն կտարածվեր ամբողջ աշխարհով մեկ: Այս առակները, այսպիսով, միասին գալիս են ավելի ամբողջական ներկայացնելու, այն ժամանակ եկող, երկնքի Արքայության վերաբերյալ Հիսուսի պատգամը:

6. «Դուք սակավաթիվ կմնաք» Ղուկաս 13.10-13.35

Ղուկասի հետևյալ հատվածը (13.10-35) բխում է նախորդ ուսուցումներից և զարգացնում է դրանք. 1) խորացնում է Հիսուսի և Իսրայելի/Երուսաղեմի այդ ժամանակվա առաջնորդների միջև եղած բևեռացումը, և 2) հստակ հայտարարում է Երուսաղեմի վրա գալիք դատաստանի մասին: Գալիքը, կարճ ասած, բարի չէր հրեա ժողովրդի համար:

Պտղաբեր Շաբաթ

Անպտուղ թզենու վերաբերյալ Իր զգուշացումներից հետո Հիսուսը ցույց է տալիս, որ Ինքն իրականում Իսրայելի պտղաբեր ճյուղն է, մինչդեռ այդ ժամանակվա առաջնորդներն անպտուղ էին: Ղուկասը վերապատմում է.

> «Մի Շաբաթ օր նա սովորեցնում էր ժողովարանում (սինագոգում): Այնտեղ մի կին կար, որ տասնութ տարի տկարության ոգի ուներ: Նա կորացած էր և չէր կարողանում ուղիղ կանգնել: Երբ Հիսուսը տեսավ, կանչեց նրան և ասաց. «Ով կին, դու ազատ ես քո հիվանդությունից»: Իր ձեռքը դրեց նրա վրա, և նա միանգամից ուղղվեց ու սկսեց փառավորել Աստծուն: Սակայն ժողովարանի իշխանը, նեղսրտելով, որ Հիսուսը Շաբաթ օրով բժշկություն արեց, ասաց ժողովրդին. «Վեց օր կա, որոնցում պետք է գործել: Այդ օրերին եկեք և բժշկվեք, ոչ թե Շաբաթ օրը»: Այդ ժամանակ Տերը պատասխանեց նրան. «Կեղծավորներ: Ձեզանից ամեն մեկը Շաբաթ օրով իր եզն ու էշը չի՞ արձակում և տանում ջուր տալու: Իսկ

> պետք չէ՞ր այս կնոջը, որ Աբրահամի դուստր է, որին սատանան տասնութ տարի է կապել էր, ազատ արձակել այս կապանքից»: Երբ այս բաներն ասաց, նրա հակառակորդներն ամոթով մնացին, իսկ բոլոր մարդիկ ուրախանում էին այն բոլոր փառավոր բաների համար, որ նա անում էր» (Ղուկ. 13.10-17):

Մինչդեռ մենք հիմնականում ուսումնասիրում ենք դեպի Երուսաղեմ Նրա ճանապարհորդության առակները, կարևոր է նշել նաև այդ օրերի հոգևոր առաջնորդների հետ ունեցած Նրա մի քանի վիճաբանությունների իրավական կողմը: Այս կոնֆլիկտները նաև վերաբերում են Իսրայելի հանդեպ Նրա դատական գործին, և այս դրվագը դրանցից մեկն է:

Այս կինն այստեղ խորհրդապատկերում է Իսրայելի ընտրյալ մնացորդը (որ շուտով լինելու էր Նոր Կտակարանի Եկեղեցին): Այդ ընթացքում սատանան կապել էր նրան, սակայն Հիսուսը կապում է ուժեղ մարդուն և ազատ արձակում տունը (հիշեք մեր քննարկումը Ղուկ. 11.25-26 հատվածի վերաբերյալ): Նա չէր կարողանում ուղիղ կանգնել և կարիք ուներ Աստծո շնորհի ու ողորմության: Նմանապես, ընկած Իսայելը չէր կարողանում ինքն իրեն փրկել և Քրիստոսի կարիքն ուներ: Առաջնորդներն ըմբոստացան՝ դրանով իսկ ցույց տալով Աստծո շնորհի պակասն իրենց կյանքում: Սա արտահայտվում է Սաղմոս 20-ում.

> «Հիմա ես գիտեմ, որ Տերը փրկում է իր օծյալին:
> Նա կպատասխանի նրան իր սուրբ երկնքից
> իր աջ ձեռքի փրկարար զորությամբ:
> Որոշներն իրենց հույսը դնում են կառքերի վրա,
> իսկ որոշները՝ ձիերի,
> իսկ մենք վստահում ենք մեր Տեր Աստծո անվանը:
> Նրանք խորտակվեցին ու ընկան,
> իսկ մենք վեր կացանք ու ուղիղ կանգնեցինք:
>
> Օ Տեր, փրկիր թագավորին:
> Թող նա փրկի մեզ, երբ կանչում ենք (Սաղ. 20.6-8):

Հրեա անհավատ ժողովուրդը նայում էր երկրի թագավորներին

և աշխարհի բոլոր քաղաքական ու տնտեսական զորություններին՝ փոխարենը Տիրոջ օծյալին նայելու: Այս ձևով Երուսաղեմը վաստակեց իր դատաստանը որպես Մեծ Պոռնիկ (Հայտ. 17-18), ինչպես արդեն ասացինք: Ղուկասի բառապաշարն այստեղ զուգահեռ է այդ սաղմոսի բառապաշարին. հունարեն «նա ուղղվեց» (anorthothe) բառը հազվադեպ բառ է, սակայն այն հայտնվում է նաև Սաղմոս 20.7-ում (Սեպտուագինտա) «մենք վեր կացանք» (an¬orthothemen) արտահայտությունում: Եվ այս «վեր կենալը» ի հայտ է գալիս միայն Աստծո նախաձեռնությամբ՝ Նրա աջ ձեռքի փրկարար զորությամբ: Եվ այստեղ Հիսուսը բառացիորեն դնում է Իր փրկարար ձեռքն այդ կնոջ վրա և ազատ արձակում նրան: Դրանից հետո նա ազատվում է և փառավորում Աստծուն:

Դրանից հետո հակաճառություն է սկսվում «ժողովարանի իշխանի» հետ: Սա տեղական ժողովարան էր, քանի որ Հիսուսը դեռ չէր հասել Երուսաղեմ: Ժողովարանի իշխանը, հավանաբար, փարիսեցի էր, թեև գրված չէ: Այսպիսի հավանականություն առաջանում է՝ կապված փարիսեցիների հեղինակության հետ, որ նրանք այդ ժամանակ վայելում էին սովորական ժողովրդի և ժողովարանների մեջ, և նաև այն փաստից, որ այս նույն տեսարանը նորից կրկնվելու էր հաջորդ գլխում, երբ Հիսուսը ճաշում է «փարիսեցի իշխանի» տանը (Ղու. 14.1), ամենայն հավանականությամբ, մեկ ուրիշ իշխանի: 13.14 համարի իշխանը նաև հավանական է, որ Սինեդրիոնի անդամ էր, կապված իր դիրքի հետ, թեև այս միտքը վիճելի է: Նա հաստատ քահանա չէր, այլ ոչ կղերական առաջնորդ և, շատ հավանական է, քաղաքացիական իշխան էր:

Ինչ էլ որ նրա դիրքը լիներ, նա բացահայտ կերպով վիճաբանություն է սկսում Հիսուսի հետ: Նա փորձում է Սուրբ Գիրքը Նրա դեմ օգտագործել. Շաբաթ օրը որևէ գործ անելը չորրորդ պատվիրանին դեմ է. բժշկությունն այստեղ դիտվում է որպես գործ, և ուրեմն, Հիսուսը խախտել է պատվիրանը:

Բնական հակվածությունն այստեղ համարելն է, որ այդ հատվածը հիմնականում ընդգծում է Շաբաթի հարցը. փարիսեցիներն օգտագործում էին Շաբաթի վերաբերյալ իրենց չափազանց խիստ տեսակետը՝ որպես Հիսուսին ընդդիմանալու միջոց: Ընդհանուր առմամբ, սա ևս մեկ ասպարեզ էր, որտեղ փարիսեցիները փորձում էին թակարդը գցել Հիսուսին, սակայն Հիսուսը խելացի էր և կարողանում էր խուսափել. այս անգամ Նա շեշտեց Աստծո

ողորմության առավելությունն անսիրտ փարիսեցու հանդեպ:

Սա ավելի մեծ պատգամի լոկ մի կողմն է այստեղ: Ավելի խորը հարց է փարիսեցու ըմբոստությունը և անկարողությունը՝ տեսնելու Իսրայելի ավելի ընդարձակ կոչումը: Օրենքի նպատակն ազգերի համար վկայություն լինելն էր (Բ Օր. 4.5-8), որպեսզի նրանք տեսնեին Աստծո իմաստությունը, փառքն ու արդարությունը: Այս վկայությունը հստակ երևում է Հիսուսի կողմից այդ կնոջ բժշկության մեջ, քանի որ նա անմիջապես փառավորում է Աստծուն, ինչպես նաև ներկա ողջ բազմությունը (13.17), ամեն դեպքում այդ պահին: Եվ Հիսուսն ասում է, որ այս արարքը ոչ միայն թույլատրելի է, այլև պատվեր է, նույնիսկ Շաբաթ օրը: Նա հղում է անում 23.4-5-ին (Բ Օր. 22.1-4):

> «Եթե տեսնես, որ քո թշնամու եզը կամ էշը մոլորվել է, պետք է այն վերադարձնես նրան: Եթե դու տեսնես, որ քեզ ատող մարդու էշը բեռի տակ ընկել է, մի հրաժարվիր օգնել նրան. նրա հետ միասին փրկիր էշին»:

Օրենքն այս հատվածը կիրառում է թե՛ քո եղբոր (Բ Օր. 22), թե՛ քո թշնամու պարագայում (Ել. 23): Հիսուսն այստեղ դա կիրառում է փարիսեցու սեփական եզի ու էշի պարագայում: Այս նույն փարիսեցիները, սակայն, թույլ չէին տալիս, որ իրենց ժողովարանի անդամը Շաբաթ օրով ազատ արձակվեր՝ չխոսելով արդեն օտարականի կամ թշնամու մասին: Փարիսեցիներն իրենց կենդանիների հանդեպ ավելի լավ էին վերաբերվում, քան Իսրայել ժողովրդի: Այս պատճառով, Հիսուսը հենց նոր հանդիմանել էր դպիրներին (օրինականներին). «Վայ ձեզ օրինականներ, որ մարդկանց վրա դժվար տանելի բեռներ եք բարձում, իսկ ինքներդ մատով իսկ չեք ուզում դիպչել այդ բեռներին» (Ղուկ. 11.46):

Սակայն կա նաև մեկ այլ եզրակացություն: Այս կինը 18 տարի շարունակ կապված ապրել էր բոլորի աչքի առաջ: Փարիսեցիները ոչ միայն չէին ցանկացել, այլ նաև չէին կարողացել նրան ազատագրել: Նրանք ոչ մի իշխանություն չունեին այդ «ուժեղ մարդու»՝ սատանայի վրա: Այո, այս կինն Աբրահամի իրական զավակ էր (13.16): Նա ընտրյալ մնացորդից էր: Այդ պատճառով Հիսուսն ազատում է նրան այդ կապանքից: Սա ցույց է տալիս Նրա իշխանությունը և դրանով իսկ վկայում, որ Աստծո Արքայությունը եկել է (11.20): Սա Հիսուսի ներկայությունը դարձնում է որոշման պահ: Ժամանակը

կարճ էր, ինչպես մենք վերջին հատվածում տեսանք: Որոշման ժամանակը հիմա էր: Կամ ընտրեք Մեսիային, ով թշնամու վրա ունեցած Իր իշխանությունն է ցույց տալիս, կամ բավարարվեք ձեր փարիսեցիական ողջ փառքով՝ կիսելու թշնամու ապագան ու կապանքը: Այլ կերպ ասած՝ Հիսուսի վկայությունն օրենքի վերաբերյալ այն էր, որ Իսրայելի մնացած մասն իրականում գտնվում էր սատանայի հետ դաշնակցության մեջ:

Այսպիսով, Ղուկասի պատմությունն այստեղ մեկ անգամ ևս ապացուցում է, որ Իսրայելն էր այդ անպտուղ թզենին: Նրա անպտղության պատճառով, քանի որ մերժում էր պտուղ տալ, ինչպես նաև մերժում էր Նրան, ով պտղատու էր, նա շուտով կթողվեր պտղակորույս, այսինքն ավերված, ինչպես մենք ավելի հստակ շուտով կտեսնենք:

Մանանեխի սերմի և թթխմորի առակները (Ղուկ. 13.18-21)

Բժշկության և Շաբաթի վերաբերյալ նախորդ վիճաբանությունն Արքայության թեմային ուղղված դաս էր: Սա երևում է այն փաստից, որ Հիսուսը հարմար է գտնում դրանից անմիջապես հետո Արքայության բնույթի մասին խոսել: Մենք այս առակների մասին արդեն խոսել ենք ցորենի և որոմների առակի գլխում (Մատթ. 13.24-43): Մենք նշեցինք, թե ինչպես են դրանք խորհրդապատկերում Արքայության բնույթը, երբ փոքրիկ մի բան աննշմարելի ձևով աճում է և դառնում մեծ ու տարածվող մի բան: Նույնը ճիշտ է նաև այստեղ, սակայն մի փոքր այլ կերպով:

Ինձ համար հստակ է, որ Ղուկասը մեկ այլ դեպք է նկարագրում, թեև Հիսուսն ուսուցանում էր միևնույն առակը: Մատթեոսն ասում է, որ բազմություն էր հավաքվել ծովի ափին՝ լսելու Նրան (Մատթ. 13.2), իսկ Ղուկասի ավետարանում բազմությունը ժողովարանում է հավաքված: Այսպիսով, սրանք տարբեր դեպքեր են: Սա մեզ չպետք է զարմացնի, քանի որ Հիսուսը ճանապարհորդող քարոզիչ էր և շատ հավանական է, որ շատ անգամ նույն պատգամներն ու առակները խոսել էր տարբեր տեղերում, որոնցից շատերը նույնիսկ գրված էլ չեն (տես Հովհ. 21.25): Սա ընդամենն այդ դեպքերից մեկն է:

Այս առակների պատգամն ու իմաստը երկու դեպքերում էլ նույնն է: Մատթեոս 13-ում Հիսուսը հայտարարում է Հին Ուխ-

տի ժամանակաշրջանի ավարտը և ազդարարում է գալիք ժամանակաշրջանը: Մանանեխի սերմի և թթխմորի առակները խորհրդապատկերում են, թե ինչ էր պետք ակնկալել, քանի որ նոր ժամանակաշրջանը եկել էր փոխարինելու հինին: Սա ընդհանրական կիրառում էր մեծ պատկերի համար: Այստեղ՝ Ղուկասի մեջ, երբ Հիսուսը երկրորդ անգամ է պատմում, Նա ընդհանուր պատգամը ներառում է առանձին վիճաբանության համատեքստում: Նա այստեղ շատ ակնհայտ ապացույց է ներկայացնում, թե ինչու էր այդ Հին Ուխտի ժամանակաշրջանը շուտափույտ մոտենում իր ավարտին: Հրեաները խեղաթյուրել էին օրենքն ու իրենց վկայությունը և տրվել էին սատանայի ծառայությանը՝ հանուն օրենքի: Կարծես Հիսուսն ասելիս լիներ. «Ես սա արդեն ասել եմ, բայց այս անգամ Ես հույս ունեմ՝ իրոք գրավելու ձեր ուշադրությունը»:

Սակայն, կա մի լրացուցիչ կետ, որ մենք պետք է նշենք այս երկու առակների առումով. երկու դեպքում էլ այդ աճող բանը ոչ միայն փոքր է, այլ նաև անտեսանելի: Սա ուղղակիորեն վերաբերում է անհավատ հրեաների իրավիճակին: Արքայության վերաբերյալ նրանց տեսակետը ենթադրում էր ձիեր, մարտակառքեր և քաղաքական իշխանություն, այսինքն՝ տեսանելի բաներ: Սակայն Հիսուսն արդեն հայտարարել էր, որ Իր արած բժշկություններն ու դևերին վռնդելն ապացույցներ էին, որ Աստծո Արքայությունն արդեն հասել էր նրանց վրա. այն ուղղակի նրանց առջև էր (Ղուկ. 11.20): Բայցևայնպես, նրանք չէին կարողանում այն տեսնել. աչքեր ունեին, բայց չէին կարողանում տեսնել (Ղուկ. 8.10, 11.34-35): Այսպիսով, դա Աստծո Արքայության մեջ է. սերմը թաղված է, իսկ թթխմորը՝ «պահված» (13.21): Հունարեն այս բառը engkrypto բառից է, որից ծագում է մեր ժամանակակից «encrypt» (ծածկագրել) բառը: Մենք չպետք է ժամանակակից իմաստը կարդանք անախրոնիզմի տեսակետից, սակայն այստեղ կա այնպիսի զգացողություն, որ Արքայության սերմը/թթխմորն արդեն այնտեղ ներկա էր՝ հրեաների միջև, բայցևայնպես նրանք չէին կարողանում այն զանազանել: Այն թաքնված էր բաց տեսադաշտում, քանի որ նրանք չունեին դրա բանալին, որ հավատն էր: Բայցևայնպես, այս հարցին նայելիս, մենք պետք է հաշվի առնենք Արքայության սերմի/թթխմորի ծածուկ կողմը, որպես առակի կարևոր բաղկացուցիչ, հատկապես այստեղ, երբ Հիսուսը երևան հանեց իր թշնամիների կուրությունը:

Արքայության նեղ դուռը (Ղուկ. 13.22-30)

Մեկ այլ դաս էլ կա քաղելու մանանեխի սերմի և թթխմորի առակներից, և այս դասը դժվար նկատելի է. Աստծո Արքայությունը սկսվում է փոքրից, որը նշանակում է, սկզբում ընդամենը մի բուռ մարդիկ կլինեն: Սա ակնհայտ չէր, այնպես որ ժամանակ կպահանջվեր մինչև Հիսուսի լսարանում բոլորը լուսավորվեին այս հարցում: Միայն այն բանից հետո, երբ «Նա շարունակեց Իր ճանապարհը գյուղերով ու քաղաքներով, ուսուցանելով ու ճանապարհվելով դեպի Երուսաղեմ» (13.22), ինչ որ մեկը հարցրեց. «Տեր, սակավաթի՞վ են լինելու փրկվողները»: Սակայն այս փաստի ընկալումը Հիսուսի համար քննարկման հնարավորություն ստեղծեց՝ բացահայտ խոսելու: Դրանից հետո Նրա ասածները շատ ավելի ցնցող էին, քան մինչ այդ պահը.

> «Ձանք արեք նեղ դռնով ներս մտնելու: Ասում եմ ձեզ, շատերը կփորձեն մտնել, բայց չեն կարողանա: Երբ տանտերը վեր կենա և դուռը փակի, և դուք դրսում կանգնած սկսեք թակել դուռն ու ասել. «Տեր, բաց մեզ համար», այդ ժամանակ նա կպատասխանի ձեզ. «Ես չգիտեմ, թե որտեղից եք դուք»: Այդ ժամանակ դուք կասեք. «Մենք կերանք ու խմեցինք քո ներկայությամբ, և դու մեզ սովորեցնում էիր մեր փողոցներում»: Սակայն նա կասի. «Ասում եմ ձեզ, ես չգիտեմ, թե որտեղից եք դուք: Հեռացեք ինձանից, դուք, բոլոր չարագործներդ»: Այնտեղ կլինի լաց ու ատամների կրճտոց, երբ տեսնեք Աբրահամին, Իսահակին ու Հակոբին և բոլոր մարգարեներին Աստծո արքայությունում, իսկ ձեզ՝ դուրս գցված: Եվ կգան մարդիկ արևելքից, արևմուտքից և հարավից ու հյուսիսից և կթիկնեն սեղանի մոտ Աստծո արքայությունում: Եվ ահա կան վերջիններ, որոնք առաջին կլինեն, և կան առաջիններ, որոնք վերջին կլինեն» (Ղուկ. 13.24-30):

Առաջինը մենք պետք է ուսումնասիրենք այդ մարդու հարցը: Ի՞նչ նկատի ուներ նա «փրկվող» ասելով: Հիշեք, որ այս մարդը չէր մեծացել Հարավային Մկրտական եկեղեցում, որտեղ «փրկվել»

նշանակում է շարքերով առաջ գնալ, ձեռքը բարձրացնել ու «կյանքը հանձնել Տիրոջը»: Նա պատկերացում չուներ «հոգիներ փրկելու» ժամանակակից գաղափարի (համարյա գնոստիկական գաղափարի) մասին, հատկապես նախքան Հիսուսի մահը, հարությունն ու համբարձումը: «Փրկվող» բառն այդ մարդկանց համար չէր կարող սրանցից որևէ մեկը նշանակել: Այդ բառի հիմքային և առարկայական սահմանումն «ազատվելն» է: Այդ բոլորի փոխարեն, այդ մարդն իր մտքում նկատի ուներ քաղաքական և ռազմական ազատագրում: Նա մտածում էր նույնը, ինչ Հիսուսի լսարանի մեծ մասը, և դրա համար պատճառ ունեին. մեծ դատաստան և մեծ բաժանում էր գալիս այդ ժողովրդի վրա: Այդ մարդու հարցը ցույց է տալիս, որ նա լուրջ էր ընդունել Հիսուսի ամբողջ ուսուցումը: Նա ճիշտ էր հասկացել, թե ինչ նկատի ուներ Հիսուսը: Դրա համար էլ նա հարցնում է, թե արդյոք քչերն էին պրծնելու գալիք բարկությունից:

Գալիք «քչերը»

Այս մարդը, հավանաբար, Հիսուսի ուսուցումը կապեց նաև Իսրայելի մարգարեական պատմության հետ: Միշտ այնպես է եղել, որ դատաստանի ժամանակ միայն մնացորդն է փրկվել: Աստված ակնհայտորեն խոստացել էր նույնն անել: Կապված Աստծո պատվերի հետ, օգտագործելու օրենքը որպես վկայություն ազգերի համար (Իսրայելի ակնհայտ ձախողումը, ինչպես մենք արդեն տեսանք), Աստված խոստանում է պատժել ըմբոստությունը՝ նվազեցնելով նրանց մինչև մնացորդի. «դուք սակավաթիվ կմնաք այն ազգերի մեջ, ուր Տերը ձեզ կքշի» (Բ Օր. 4.27): Եսային սրա մասին հստակ քարոզում է և կապում ավերածության գաղափարի հետ.

«Ահա, Տերը պիտի դատարկի երկիրը (տվյալ երկիրը)
և այն ավերակ դարձնի,
և կաղավաղի դրա մակերեսը և կցրի դրա բնակիչներին…
Երկիրը (այդ երկիրը) բոլորովին պիտի դատարկվի
ու բոլորովին պիտի թալանվի,
որովհետև Տերն է խոսել այս խոսքը…

Երկիրը (այդ երկիրը) պղծված է
իր բնակիչների ներքո,
որովհետև նրանք խախտեցին օրենքը,

ոտնահարեցին կանոնները,
դրժեցին հավիտենական ուխտը:
Դրա համար անեծքն ուտում է երկիրը (այդ երկիրը)
և դրա բնակիչները տառապում են իրենց հանցանքի
պատճառով, դրա համար երկրի (այդ երկիրը)
բնակիչները խանձվեցին,
սակավաթիվ մարդիկ մնացին (Ես. 24.1, 3, 5-6):

ESV աստվածաշնչյան թարգմանությունը ճշմարտացիորեն նշում է, որ «երկիր» բառն այս հատվածում կարող էր նաև թարգմանվել «այդ երկիրը»: Սա շատ ավելի հավանական է, քանի որ այս հատվածը հստակորեն վերաբերում է մի ժողովրդի, ով դրժել էր հավիտենական ուխտը, և այդ ժամանակ դա կարող էր լինել միայն Իսրայելը: Եբրայերեն eretz բառն այստեղ վերաբերում է այդ երկրին, այսինքն՝ Իսրայելի երկրին, ոչ թե ամբողջ «երկրագնդին», ըստ ժամանակակից հասկացողության: Նկատեք պատիժը, որ պարզորոշ կապված է ուխտի հետ. Արքայությունը ավերակ կլինի (Ել. 23.29), Ղևտ. 26.33, Ղուկ. 11.17), իսկ մարդիկ՝ սակավաթիվ: Երեմիան այսպիսի ժամանակներում էր ապրում, և Իսրայելի մնացորդի առաջնորդները գիտակցում էին իրենց կարգավիճակը: Նրանք եկան Երեմիայի մոտ՝ փնտրելու Աստծո ողորմությունը. «Ողորմության համար մեր աղերսը թող քո առջև ընդունելի լինի և աղոթիր քո Տեր Աստծուն մեզ համար՝ այս ողջ մնացորդի համար. քանի որ մենք սակավաթիվ ենք մնացել, ինչպես քո աչքերն են մեզ տեսնում» (Եր. 42.2): Ավելի ուշ Աստված Երեմիային հիշեցնում է, որ սա կրկնվող թեմա է.

«Այսպես է ասում զորաց Տերը, Իսրայելի Աստվածը. դուք տեսաք այն ամբողջ պատուհասը, որ բերեցի Երուսաղեմի և Հուդայի բոլոր քաղաքների վրա: Ահա դրանք այսօր ավերակ են, և ոչ ոք չի բնակվում դրանցում, այն բոլոր չարիքի պատճառով, որ նրանք գործեցին, ինձ բարկության գրգռելով, գնալով ու զոհ մատուցելով և ծառայելով օտար աստվածների, որոնց նրանք չէին ճանաչում, ոչ իրենք, ոչ դուք, ոչ էլ ձեր հայրերը: Այո, ես մշտապես ուղարկում էի ձեզ մոտ իմ ծառաներին՝ մարգարեներին, ասելով. «Մի արեք այդ գարշելի բանը, որ ես ատում եմ»: Սակայն նրանք չլսեցին, ոչ էլ ականջ տվեցին, որպեսզի հեռանան իրենց չարություններից ու օտար աստվածներին զոհեր չմատուցեն» (Եր. 44.2-5):

Ռազմական առաջնորդները մեկ անգամ ևս ապստամբեցին

Աստծո բացահայտ պատվերի դեմ և գնացին Եգիպտոսում ապրելու (տես 42.3-43.13): Աստված այսպես պատասխանեց. «Հուդայի բոլոր մարդիկ, որ Եգիպտոսի երկրում են, սպառվելու են սրով և սովով, մինչև վերջանան» (Եր. 44.27): Սակայն մի փոքրիկ մնացորդ պիտի փրկվի. «Իսկ նրանք, ովքեր սրից կփրկվեն և Եգիպտոսի երկրից Հուդայի երկիր կվերադառնան, սակավաթիվ կլինեն» (44.28): Այսպիսով, սա ամուր սկզբունք էր Մովսեսից և հաստատված էր մարգարեների մեջ, որ ուխտը խախտելու բացահայտ դատաստանի ժամանակ միայն սակավաթիվ մարդիկ պիտի փրկվեին:

Սա նշանակում էր, որ նա, ով Հիսուսին տվեց այս հարցը, խորապես հասկացել էր, որ Հիսուսը խոսում էր գալիք մեծ դատաստանի մասին և խորապես ընդունել էր Նրա ասածը որպես Հին Կտակարանի մարգարեի ավանդական մոտեցում:

Նեղ դուռը

Հիսուսն անկեղծ հարցն արժանացրեց համարժեք անկեղծ պատասխանի. «Ձանք արեք, որպեսզի նեղ դռնով ներս մտնեք»: Մենք շատ հաճախ ենք սխալվում այս համարը կիրառելիս: Առաջինը, մենք շատ վարժված ենք կարդալու Մատթեոսի տարբերակը, որ երևում է Լեռան քարոզում (Մատթ. 7.13-14): Այս համատեքստում մենք շատ հաճախ սա ընդունում ենք որպես ընդհանուր դաս՝ Աստծո հետ ապրելու վերաբերյալ. իրական աստվածապաշտ կյանքը դժվար է և, հետևաբար, քչերը կկարողանան իրոք ապրել Աստծո հետ: Մեծամասնությունը կընտրի հեշտ ճանապարհը և իրենց կյանքը կավարտեն դժոխքում: Եղիր այդ քչերից մեկը:

Բայց հիշեք, որ Լեռան քարոզն ինքնին դատապարտություն է ժամանակակից հրեա առաջնորդների և մշակույթի վերաբերյալ: «Լսել եք, որ ասվեց» (այն, ինչ փարիսեցիներն ու օրինականներն են սովորեցնում), «բայց ես ձեզ ասում եմ» (այն, ինչ իրականում Աստծո օրենքը հենց սկզբից նկատի ուներ. մեկնաբանության Հիսուսի հեղինակած տարբերակը): Սա շարունակ կրկնվում է ողջ Լեռան քարոզի ընթացքում (Մատթ. 5-7): Այսպիսով, 7-րդ գլուխն ավարտվում է գալիք դատաստանի բոլոր նույն թեմաներով, ինչպես Ղուկաս 9.5-ում. կեղծավորություն (7.1-6), օրենքի ճշմարիտ էությունը (7.15), պտղատու ծառը, համեմատած անպտուղ ծառի հետ (7.16-20) և Արքայությունից դուրս մնացած ապշահար մարդիկ (7.21-23) (որն

ուղղակի զուգահեռ է Հիսուսի ուսուցմանը Ղուկ. 13.25-17-ում): Այլ կերպ ասած, մենք հաճախ սխալ ենք հասկացել նեղ դռան հատվածը , որովհետև սխալ ենք հասկացել ավելի ընդարձակ համատեքստը:

Երկրորդ, քանի որ մենք Ղուկասի տարբերակը հաճախ կարդացել ենք որպես նույն ընդհանուր դասի ուսուցում: Սակայն այս դասը քիչ իմաստ է հաղորդում Ղուկասի համատեքստում, որ ժամանակը կարճ է (Ղուկ. 12.54-13:9), օրենքի շուրջ վիճաբանություններ (13.11-17), Արքայության էությունը (13.18-21) և հատկապես այս մարդու հարցը 13.23-ում: Այս բոլորը, ընդհակառակը, մեզ ասում են, որ Հիսուսի պատասխանը թիրախավորված մարգարեական զգուշացում էր՝ ուղղված Իսրայելին: Սա չի վերաբերում այն հարցին, թե որքան դժվար է քրիստոնեական կյանքը, այլ, ավելի շուտ, թե որքան սակավաթիվ էին լինելու այն հրեաները, ովքեր կընդունեին ճշմարտությունը, քանի դեռ շատ ուշ չէր:

Կարևոր հարցն այստեղ, որ հաճախ անտեսվում է, ժամանակի հարցն է: Սա անկարևոր է թվում քանի դեռ չենք մտածել այդ մասին (մի բան, որ Հիսուսը մեղմորեն ասում էր մեզ, որ անենք, կապված Իր առակների հետ): Առաջինը, Հակոբոս թագավորի Աստվածաշնչի թարգմանության տարբերակը ճիշտ է, բայց շփոթեցնող է հնաոճ «strait» (1. նեղ անցուղի, 2. դժվարություն) բառի պատճառով: Այն ժամանակ «strait» բառը հիմնականում հասկացվում էր որպես «նեղ», սակայն այսօր այն հազվադեպ է այդ ձևով օգտագործվում: Հունարեն stenes բառը չի նշանակում «դժվարին», այլ միանշանակ՝ «նեղ»: Այնպես որ, բոլոր ժամանակակից թարգմանությունները սա ճիշտ են թարգմանում: Այսպիսով, ի՞նչ կապ ունի «նեղ» անցուղին ժամանակի հետ: Ինչպես տեսանք, Հիսուսն արդեն հայտարարել էր, որ ժամանակը կարճ է: Ի՞նչ է լինում մարդկանց բազմության հետ, ովքեր փորձում են շենք մտնել միակ դռնով: Անցումը սահմանափակվում է, բազմությունը խռնվում է. միայն մի քանիսն են ներս մտնում նախքան դուռը փակվելը: Պատկերացրեք լեփ լեցուն կինոթատրոնում տագնապ: Մեծ հրդեհ է բռնկվել, և մարդիկ հրմշտում են իրար, փորձելով հասնել ելքին: Շատ մարդիկ միգուցե մահանում են սահմանափակ անցումի պատճառով: Երբ Հիսուսը զգուշացնում էր նրանց, ովքեր Արքայությունից դուրս մնալու փոխարեն փորձում էին ներս մտնել. սկզբունքը նույնն է: Ժամանակը սահմանափակ է, իսկ մուտքը նեղ է: Դասը, որ այստեղից կարող ենք քաղել, հստակ է. ներս գնա հիմա, քանի դեռ մեծ հերթ չի գոյացել և

չափազանց ուշ չի եղել:

Օգտակար է նաև սա կապել փարիսեցիներին ու օրինականներին ուղղված Հիսուսի ավելի վաղ արած դատապարտությանը: Մենք սա արդեն նայել ենք. «Վայ ձեզ, օրինականներ: Որովհետև դուք վերցրել եք գիտության բանալին: Դուք ինքներդ չմտաք և մտնողներին էլ խանգարեցիք» (Ղուկ. 11.52): Հիսուսը սրա վերաբերյալ ավելի բացահայտ է խոսում, երբ հասնում է Երուսաղեմ. «Բայց վայ ձեզ, դպիրներ ու փարիսեցիներ, կեղծավորներ: Որովհետև դուք երկնքի արքայությունը փակում եք մարդկանց առաջ: Ինքներդ չեք մտնում, իսկ մտնողներին էլ թույլ չեք տալիս մտնելու» (Մատթ. 23.13): Մարկոսը գրում է մի դեպքի մասին, որը բառացիորեն այս նույն տեսարանն է ներկայացնում. չորս մարդիկ բերում են մի անդամալույծի, որպեսզի բժշկվի, բայց չեն կարողանում ներս մտցնել բազմության պատճառով, և ստիպված քանդում են տանիքը (Մարկ. 2.1-12): Այսպիսով, պարզ է դառնում, որ ամբողջ Իսրայելն արդեն դարձել էր դուռ արգելափակող:

Հիսուսի պատասխանն իրականում մեզ հիշեցնում է աստվածաշնչյան մի պատկեր. Նոյյան տապանի դուռը: Գրված է այսպես.

> «Նոյը և իր որդիները՝ Սեմը, Քամն ու Հաբեթը, և Նոյի կինն ու նրա երեք որդիների կանայք նրանց հետ, մտան տապան… Նաև, Աստծո հրամանով, ամեն մարմնից արու և էգ մտան նրանց հետ: Եվ Տերը նրա հետևից փակեց դուռը» (Ծննդ. 7.13-16):

Պետրոսը Նոր Կտակարանի ժամանակահատվածը միանշանակ հասկացել էր տապանի միջոցով փրկված «մի քանիսի» տեսակետից. «Երբ Աստծո համբերությունը սպասում էր նրանց Նոյի օրերում, մինչդեռ տապանն էր պատրաստվում, որի մեջ քիչ, այսինքն ութ հոգի ջրերով ապահով անցան» (1 Պետ. 3.20):

Մի քանիսի փրկությունը, իհարկե, նշանակում է, որ բոլոր մյուսները մնացին փակ դռան մյուս կողմում, և սա տեղի ունեցավ Աստծո ձեռքով: Այդ ժամանակ, մնացած ողջ մարդկությունը մնաց դրսում և ոչնչացավ մեծ դատաստանի պատճառով. «Եվ երկրի վրա շարժվող ամեն մարմին մեռավ,… ողջ մարդկությունը» (Ծննդ. 7.21): Սա ճիշտ այնպիսի դատաստան էր, ինչպիսն Հիսուսը կանխասաց.

> «Ասում եմ ձեզ, որ շատերը կուզենան մտնել, սակայն չեն կարողանա: Երբ տանտերը վեր կենա և

դուռը փակի, և դուք դրսում կանգնած սկսեք թակել դուռն ու ասել. «Տեր, բաց մեզ համար», այդ ժամանակ նա կպատասխանի ձեզ. «Ես չգիտեմ, թե որտեղից եք դուք»: Այդ ժամանակ դուք կասեք. «Մենք կերանք ու խմեցինք քո ներկայությամբ, և դու մեզ սովորեցնում էիր մեր փողոցներում»: Սակայն նա կասի. «Ասում եմ ձեզ, ես չգիտեմ, թե որտեղից եք դուք: Հեռացեք ինձանից, դուք, բոլոր չարագործներդ»:

Նկատեք, որ դուռը փակող անձնավորությունը «տանտերն » է: Ղուկասը սիրում է այս խորհրդապատկերը, որ Հիսուսի առակներում միշտ ներկայացնում է Աստծուն (12.39, 13.35, 14.21): Աստված Ինքն է չարերին դուրս թողնում: Այսպիսով, սա Տիրոջ դատաստանն է, որպեսզի նրանց համար դուռն այլևս չբացվի: Կարո՞ղ ենք պատկերացնել, որ երբ գալիք դատաստանի վերաբերյալ Նոյի վկայությունն սկսեց իրականանալ, ինչպես էին այդ չար մարդիկ, ովքեր արհամարհել էին նրա քարոզչությունն ու արդարությունը (2 Պետ. 2.5), բախում տապանի փակ դուռը: 40 օր անձրև եկավ և, հավանաբար, որոշ ժամանակ տևեց, նախքան ջրերն այնքան վեր կբարձրանային, որ տապանը սկսեր լողալ: Կարող ենք պատկերացնել, թե այդ չար ծաղրողները թակելուց բացի ինչեր արեցին, որպեսզի ներս մտնեին, սակայն Աստված նրանց թողել էր դրսում: Տապանն Աստծո փրկությունն էր մնացորդի համար և Աստծո դատաստանը՝ անհավատների համար: Միայն Արքայության այն որդիները, ովքեր թաքնված կլինեին ապահովության տապանում (Հիսուսում) կխուսափեին մոտալուտ դատաստանի անձրևներից:

Բայցևայնպես, ուշացածները կաղերսեին Հիսուսին՝ բացել դուռն իրենց համար: Նրանք հղում կանեին Հիսուսի հետ ունեցած իրենց անցած հանդիպումներին. «Մենք կերանք ու խմեցինք քո ներկայությամբ, և դու մեզ սովորեցնում էիր մեր փողոցներում»: Սա «Հիսուսն իմ ընկերն է, մենք հին ծանոթներ ենք» տեսակի պաշտպանություն էր: Նրանք իրոք հաց էին կերել Հիսուսի հետ, հատկապես փարիսեցիները (11.37-38, 14.1): Մյուս մարդիկ նույնպես, ովքեր իրար էին տրորում, միայն թե կարողանային լսել Հիսուսի ուսուցումները (12.1), սակայն ամեն մեկն անձնապես մերժեցին Նրան: Նրանք բոլորը գալիք դատաստանի ժամանակ կկործանվեին:

Հիմա կարևոր է գիտակցել, որ Հիսուսն այստեղ պատկերելով

դատաստանի պահը, ավելի շուտ ցանկանում էր նրանց զգուշացնել հենց այդ պահի համար, քան թե նկարագրել, թե ինչպես է այն իրականում տեղի ունենալու: Նա արդեն միանգամայն պարզորոշ գալիք դատաստանը նմանեցրել էր Զատկի ժամանակ Պիղատոսի կողմից գալիլեացիների մորթվելուն և Երուսաղեմում աշտարակի ընկնելուն (13.1-5): Այլ կերպ ասած, ապագայում ոչ մի իրական սցենար չէր լինելու, որտեղ հրեաները կվիճարկեին, թե ինչու իրենք պետք է ներս մտնեն: Ոչ մի քննարկում չէր լինելու: Աստվածային պատասխանը գալու էր ընկնող քարերի և թափվող արյան տեսքով: Եվ այդ պահին դուրս մնացած հրեաներն անմիջապես ողբալու էին և ատամները կրճտացնեին: Այդ ընթացքում Հիսուսը պարզ ասում էր նրանց, թե ինչու էր կրոնի նկատմամբ նրանց ինքնաբավ ու ինքնահավան վերաբերմունքը նրանց դատապարտության բուն պատճառը հանդիսանում: Եթե նրանք սրտաբաց կերպով չընդունեին Հիսուսին հիմա, ապա անցյալում Նրա հետ ունեցած պատահական հանդիպումների հիման վրա նրանց հետագա աղերսանքը ոչ մի կերպ բավարար չէր լինի՝ փրկելու նրանց գալիք մեծ բաժանումից:

Արքայության ապշահարությունը

Դրանից հետո գալու էր Արքայության ապշահարությունը. «երբ տեսնեք Աբրահամին, Իսահակին ու Հակոբին և բոլոր մարգարեներին Աստծո արքայությունում, իսկ ձեզ՝ դուրս գցված»: Սա է մեծ բաժանումը, որի մասին խոսվել էր ավելի վաղ Ղուկ. 12.51-53-ում: Հայրերը դուրս կգային իրենց որդիների դեմ. հայր Աբրահամն՝ ընդդեմ իր որդիների ողջ չար սերնդի, որոնք ապրում էին Հիսուսի ժամանակներում: Այս անհավատարիմ, ապստամբ որդիները, որոնք պնդում էին, որ Աբրահամի ժառանգներն էին, սակայն չէին անում Աբրահամի գործերը (Հովհ. 8.39): Նրանք իրականում սատանայի որդիներ էին (Հովհ. 8.44): Հիսուսի ծառայության ավելի վաղ շրջանում, Հովհաննես Մկրտիչը մերկացրել էր Աբրահամի որդիներ լինելու հրեաների այս կեղծ հավակնությունը.

> «Նա այսպես ասաց իրենից մկրտվելու եկող բազմություններին. «Իժի ծնունդներ (սերունդ): Ո՞վ ձեզ զգուշացրեց, որպեսզի փախչեք գալիք բարկությունից: Ապաշխարության պտուղ բերեք: Եվ մի սկսեք ինքներդ

> ձեր մեջ ասել. «Մենք Աբրահամին ունենք որպես մեր հայր»: Քանի որ ասում եմ ձեզ, որ Աստված կարող է այս քարերից Աբրահամի համար որդիներ հարուցանել: Հիմա արդեն կացինը դրվում է ծառերի արմատի մոտ: Ամեն ծառ, որ բարի պտուղ չի բերում, կտրվում է և կրակը գցվում» (Ղուկ. 3.7-9):

(Նկատեք նաև անպտուղ ծառի կրկնվող օրինակը): Այո, այս ինքնավստահ հրեաները պարծենում էին Աբրահամի հետ ունեցած իրենց կապով, բայցևանպես չէին կարողանում զանազանել իրենց ազգի մեջ գտնվող Աբրահամի տառապող իրական որդիներին. Հիսուսը հատուկ կերպով «Աբրահամի դուստր» անվանեց այն կնոջը, որին ազատեց հիվանդությունից (Ղուկ. 13.16): Նմանապես, մենք տեսնում ենք, որ միայն այն ժամանակ, երբ Զակքեոսը դարձի եկավ և ապաշխարեց, Հիսուսը վկայեց նրա փրկության (ազատվելու) մասին և նրան անվանեց «Աբրահամի որդի» (Ղուկ. 19.9): Սակայն այս արտահայտությունը Նա չէր կիրառում չհավատացող հրեաների բազմության հանդեպ: Աբրահամն ինքը հրաժարվելու էր այդ «անմիտ հարուստներից»՝ Երուսաղեմից (Ղուկ. 16.19-31): Նրանք իրենք իրենց «դուրս գցված» կտեսնեին այն ժամանակ, երբ արդեն չափազանց ուշ կլիներ:

Արքայության մեջ կբնակվեին Աբրահամը, Իսահակն ու Հակոբը, մինչդեռ ապստամբները դուրս կգցվեին: Արքայության բնակիչների մեջ կլինեին նաև «բոլոր մարգարեները» (13.28): Այս ներառումը շատ կարևոր էր դատական գործի առումով, և ընթացիկ թեմա է գալիք դատաստանի վերաբերյալ Հիսուսի գրականության մեջ: Մենք այս առումով արդեն մեջբերում արել ենք Երեմիայի մարգարեությունից. «Այո, ես մշտապես ուղարկում էի ձեզ մոտ իմ ծառաներին՝ մարգարեներին, ասելով. «Մի արեք այդ գարշելի բանը, որ ես ատում եմ»: Սակայն նրանք չլսեցին, ոչ էլ ականջ տվեցին»: Ինչպես մենք տեսանք, Հիսուսն արդեն ներկայացրել էր այս դատական գործը և մարգարեների սպանության համար մեղադրել օրինականներին (Ղուկ. 11.47-52): Մի փոքր անց Նա դատական գործ կներկայացներ ընդդեմ փարիսեցիների.

> «Երուսաղեմ, Երուսաղեմ, մի քաղաք, որ սպանում է մարգարեներին և քարկոծում իր մոտ ուղարկվածներին: Քանի անգամ ես կամեցա քո որդիներին մեկտեղ

հավաքել, ինչպես հավն է իր ճտերին իր թևերի տակ հավաքում, բայց դուք չուզեցիք» (13.34, տես նաև Մատթ. 23.37):

Մենք նաև տեսանք, թե ինչպես է հատկապես այս մեղադրանքը հաստատում, որ Երուսաղեմը Հայտնություն 17-18-ի Մեծ Պոռնիկն է, ով «հարբած էր սրբերի արյունով, Հիսուսի նահատակների արյունով» (Հայտ. 17.6), և «նրանում գտնվեցին մարգարեների ու սրբերի արյունը և բոլոր նրանց, ովքեր սպանվել էին երկրի վրա» (Հայտ. 18.24): Հիսուսը նպատակային ձևով այս հրեաներին հիշեցնում է իրենց ազգի ապստամբության պատմությունը և ապշեցուցիչ ձևով հայտարարում նրանց, որ նրանք նույն գործընթացը նորից կրկնելու էին. նրանք կարհամարհեին և կսպանեին այս Մարգարեին, և իրենք իրենց կտեսնեին դրսում մնացած, մինչդեռ այն մարդիկ, որոնց իրենք սպանել էին որպես աստվածհայհոյողներ, կվայելեն իրենց ժառանգությունն Աստծո Արքայությունում:

Երբ մենք հասնում ենք այս ուսուցման վերջին երկու համարներին, տեսնում ենք վերջին գլխի վերջում գտնվող հարցի պատասխանը: Մենք այստեղ տեսնում ենք, որ Հիսուսն ասում է, որ ոչ ոք չի կարող խուսափել որոշումից՝ ընդունելու կամ չընդունելու Իրեն, և միայն սակավաթիվ մարդիկ կխուսափեն դատաստանից: Այն նույն մարդկանց, որոնց Հիսուսն ասում էր, որ կկործանվեն, եթե չապաշխարեն, հիմա արդեն տեղեկացնում է, որ իրականում չէին ապաշխարելու: Այս անպտուղ ծառը կտրվելու էր. իսկ ո՞վ էր զբաղեցնելու այգու այդ դատարկ տարածքը: Հիսուսն այսպես է պատասխանում. «Եվ կգան մարդիկ արևելքից, արևմուտքից և հարավից ու հյուսիսից և կթիկնեն սեղանի մոտ Աստծո արքայությունում» (Ղուկ. 13.29):

Իրականացումը Նոր Կտակարանում

Հիսուսի այս մարգարեությունը բառացիորեն կատարվեց մի քանի շաբաթվա ընթացքում՝ Պենտեկոստեի օրը: Առաջին քարոզն ուղղված էր հրեաներին (որոնցից շատերը կհավատային) աշխարհի տարբեր ծագերից. «Երուսաղեմում բնակվում էին հրեաներ՝ նվիրյալ մարդիկ երկնքի տակ եղած բոլոր երկրներից» (Գործք. 2:5): Հետո երկրները թվարկվում են: Պետրոսը կանգնում է և քարոզում, որ

վերջին օրերն իրականացել են (Գործք. 2.17-21), և Հիսուսը բազմել է Արքայության գահին (Գործք. 2.34-36): Պետրոսն իր պատգամն ամփոփում է այս առանձնահատկությամբ. «Փրկեք ինքներդ ձեզ այս խոտորված սերնդից» (Գործք. 2.40): Ո՞ր «սերնդից»: Անհավատարիմ և ապականված իժերի սերնդից, որոնց Հովհաննես Մկրտիչը հանդիմանեց (Ղուկ. 3.7), որոնց դեմ ավելի վաղ Հիսուսն ուղղել էր Իր երեսը (Ղուկ. 9.41,51), որոնք անհավատորեն նշան էին փնտրում Հիսուսից (Ղուկ. 11.29), որոնք սպանել էին մարգարեներին (Ղուկ. 11.50-1), որոնք մերժեցին Հիսուսին (Ղուկ. 17.25): Այս սերունդը, որոնց հետ Հիսուսը (Ղուկ. 21.32) և Պետրոսը (Գործք. 2.40) խոսեցին: Իսկ ի՞նչ նկատի ուներ նա «փրկվել» ասելով: Համարյա նույնը, ինչ այն մարդը նկատի ուներ, ով հարց տվեց Հիսուսին Ղուկ. 13.23-ում. ազատվել գալիք կործանումից: Պետրոսը գրեթե ի մի է բերում այն ամենը, ինչ Հիսուսը սովորեցրել էր իրեն անցած երեք տարվա ընթացքում՝ ներառյալ առաջին դարի հուդաիզմի վրա եկող գալիք դատաստանի ազդարարությունը:

Այսպիսով, Հիսուսն Իր ուսուցումն ավարտում է Ղուկաս 13.22-30-ում, վերադառնալով այն թեմային, որ ավելի վաղ էր սկսել. «Եվ ահա կան վերջիններ, որոնք առաջին կլինեն, և կան առաջիններ, որոնք վերջին կլինեն» (հ. 30): Այս խոսքը հատկապես խտացնում է ավելի վաղ՝ Ղուկաս 8.18-ում տված Նրա ուսուցումը. «Ուշադիր եղեք, ուրեմն, թե ինչպես եք լսում, որովհետև նրան, ով ունի, ավելին կտրվի, իսկ նրանից, ով չունի, կվերցվի նույնիսկ այն, ինչ նա կարծում է, թե ունի»: Կրկնենք, որ սա ընդամենը ընդհանուր ուսուցում չէ անձնական խոնարհության վերաբերյալ, այլ, ավելի շուտ, Իսրայելին ուղղված նպատակային օրինական մեղադրանք. նրանք առաջին են թվում, սակայն վերջին կդառնան: Նրանք կածում են, որ որպես Աբրահամի որդիներ ազգերի մեջ առաջինն են, սակայն սատանայի որդիներ են և այդպիսի վերաբերմունքի էլ կարժանանան: Նրանք կարծում են, որ Արքայությունն իրենցն է, սակայն վերջում նույնիսկ այն, ինչ թվում է, թե նրանցն է, կվերցվի նրանցից: Նրանք այլ բան չեն ունենա անելու, բացի ողբալուց ու ատամներ կրճտացնելուց, երբ, դրսում մնացած լինելով, կնայեն ներս:

Արժե նաև գոնե համարել, որ Ղուկաս 13.22-30-ի ամբողջ ուսուցումն արտացոլում է Նոր Երուսաղեմի պատկերը, որ Հայտնություն 22.14-15-ում է գրված.

> «Երանելի են նրանք, ովքեր լվանում են իրենց հագուստները, որպեսզի իրավունք ունենան կյանքի ծառին մոտենալու և դարպասներով քաղաքը մտնելու: Դրսում կմնան շներն ու կախարդները, պոռնիկները, մարդասպաններն ու կռապաշտները, և բոլոր նրանք, ովքեր ստությունը սիրում են և անում»:

Կան սակավաթիվ հավատացյալներ՝ մնացորդը: Նրանք իրավունք ունեն մոտենալու պտղաբեր ծառին: Նրանք կարող են մտնել նեղ դռնով: Իսկ դարպասներից դուրս շներն ու կռապաշտներն են: Սրանք են անհավատները:

Հերովդեսի սպառնալիքը

Նախկինում անհասկանալի էր, թե արդյոք «ժողովարանի իշխանը» (Ղուկ. 13.14) քաղաքացիակա՞ն իշխան էր, թե ոչ, կամ, միգուցե, նա իրականում փարիսեցի էր: Բայցևայնպես, մենք հիմա ավելի հստակ պատկեր ենք ստանում փարիսեցիների և քաղաքացիական իշխանների դավադրության վերաբերյալ: Այս դեպքում, Հերովդեսն ինքն էր.

> «Հենց այդ ժամանակ մի քանի փարիսեցիներ եկան նրա մոտ ու ասացին. «Հեռացիր այստեղից, քանի որ Հերովդեսն ուզում է քեզ սպանել»:

Հիսուսը շատ լավ գիտեր, որ հրեաները բավական ժամանակ է ծրագրում էին սպանել Իրեն (Հովհ. 7.1-2): Հնարավոր է, այդ ժամանակ տաղավարահարաց տոնն էր, որին հաջորդելու էր Հիսուսի մահվան Զատիկը, այսինքն առնվազն վեց ամիս կար՝ նախքան Նրա վերջին ճանապարհորդությունը դեպի Երուսաղեմ: Հերովդեսն արդեն երկար ժամանակ է փնտրում էր Նրան (սկսած Ղուկ. 9.7-9), սակայն Հիսուսը շատ լավ գիտեր, որ փարիսեցիներն իրականում ավելի մեծ սպառնալիք էին Իր կյանքի համար, քան Հերովդեսը: Ժողովարանի առաջնորդները փորձել էին Նրան սպանել հենց Իր ծննդավայրում (Ղուկ. 4.16-30): Ուրեմն ինչու՞ էին փարիսեցիները եկել, որպեսզի Նրան զգուշացնեին Հերովդեսի վերաբերյալ: Ես կարծում եմ, որ Հերովդեսն էր նրանց ուղարկել, որովհետև չէր ցանկանում, որ Հիսուսը ժողովրդի մեջ խռովություն առաջացներ Զատկի տոնին,

որն ընդամենը մեկ-երկու շաբաթ, եթե ոչ օրեր հետո էր տեղի ունենալու: Նա փարիսեցիներից մի խումբ էր կազմել՝ մահվան սպառնալիքի լուրը Նրան հասցնելու, որպեսզի Նրան հեռու պահեր հասարակական ու քաղաքական տեսակետից անկայուն այդ ժամանակահատվածում: Ըստ էության, Զատկի ժամանակ էր, որ Պիղատոսը սպանել էր Գալիլեացիներին (13.1. մենք սա գիտենք, որովհետև Զատիկը միակ տոնն էր, երբ մարդիկ իրենք էին մատուցում իրենց զոհերը, քանի որ գրված է «իրենց զոհերը»): Հերովդեսը, որ հրեաների թագավորն էր, չէր ցանկանում հրեա ժողովրդի պաշտպանի դեր ստանձնել ընդդեմ հռոմեական ագրեսիայի: Չնայած քաղաքական պայթյունավտանգ իրավիճակին, Հիսուսը չի ընտրում քաղաքական տեսակետից ճիշտ ուղին, և բացահայտորեն Հերովդեսին անվանում է «այդ աղվեսը»: Թարգմանաբար «աղվես» նշանակում է «վախկոտ, դավադիր գիշակեր», որ Հերովդեսն էր: Մենք Հերովդեսի մասին ավելի շատ կխոսենք հակաքրիստոսին վերաբերվող մյուս գլխում.

> «Եվ նա ասաց նրանց. «Գնացեք և ասեք այդ աղվեսին. «Ահա, ես դևեր եմ հանում և բժշկություններ եմ անում այսօր և վաղը, իսկ երրորդ օրը կավարտեմ իմ ընթացքը: Սակայն ես այսօր, վաղը և մյուս օրը պետք է անցնեմ իմ ճանապարհը, քանի որ հնարավոր չէ, որ մարգարեն կորչի Երուսաղեմից»: Օ, Երուսաղեմ, Երուսաղեմ, մի քաղաք, որ սպանում է մարգարեներին և քարկոծում իր մոտ ուղարկվածներին: Քանի անգամ ես կամեցա քո որդիներին մեկտեղ հավաքել, ինչպես հավն է իր ճտերին իր թևերի տակ հավաքում, բայց դուք չուզեցիք: Ահա, ձեր տունը լքված (ավերակ) է: Եվ ես ձեզ ասում եմ, որ դուք չեք տեսնի ինձ, մինչև դուք կասեք. «Օրհնյալ է նա, ով գալիս է Տիրոջ անունով» (Ղուկ. 13.31-35):

Առաջինը, Հիսուսը պարզ է դարձնում, որ Նա նպատակ ունի, որին պետք է հասնի, և չի դադարելու Իր պատգամի աստվածային վկայությունը տալ, մինչև չհասնի այդ նպատակին: Նա կշարունակի բժշկել և դևերին դուրս քշել, որն Աստծո Արքայության գալու ապացույցն է (Ղուկ. 11.20), մինչև Իր գործն ավարտի: Իսկ մինչ այդ, Նա անդրդվելի կմնա թե՛ փարիսեցիների, թե՛ Հերովդեսի

սպառնալիքների հանդեպ:

Երկրորդ, մի քանի կրկնվող թեմաներ կան այստեղ. 1) Երուսաղեմը, որ սպանում է մարգարեներին, 2) Երուսաղեմը մերժում է Մեսիային և 3) տունը՝ թողնված դատարկ ու ավերակ: Այստեղ Հիսուսն այս մարգարեությունները կրկնում է հենց այդ փարիսեցիների համար, հույս ունենալով, որ նրանք այդ պատգամը կփոխանցեին Հերովդեսին, քանի որ Հերովդեսն ինքն էլ ընկնելու էր Երուսաղեմին ուղղված Հիսուսի դատապարտության տակ:

Օրհնյալ է նա…

Վերջում, Հիսուսն առեղծվածային մարգարեություն է փոխանցում. «այլևս չեք տեսնի ինձ, մինչև ասեք. «Օրհնյալ է նա, ով գալիս է Տիրոջ անունով» (հ. 35): Ինչի՞ մասին է սա: Արդյո՞ք Հիսուսը խոսում էր հաղթական մուտքի մասին: Մարդիկ փառաբանության հենց այս խոսքերն էին կրկնում, երբ արմավենու ճյուղեր էին ծածանում այդ դեպքի ժամանակ (Ղուկ. 19.28-44, Մատթ. 21.1-9): Սակայն սա չի կարող լինել դրա իրականացումը, քանի որ Հիսուսը հենց այս նույն մարգարեությունը կրկնում է հաղթական մուտքից հետո Մատթեոսի ավետարանում (23.29): Այսպիսով, այն չիրականացավ հաղթական մուտքի ժամանակ: Այսպիսով, արդյո՞ք դա վերաբերում է Հիսուսի վերջնական գալուն, որ դեռ մեր ապագայում պետք է կատարվի: Այս տեսակետի հետ կապված խնդիրներ կան, որոնցից պակաս կարևոր չէ այն փաստը, որ Հիսուսը սա ուղղակիորեն հղում է Իր լսարանին. «Եվ ես ձեզ ասում եմ, որ դուք չեք տեսնի ինձ, մինչև դուք կասեք. «Օրհնյալ է…»: Արդյոք Նա սա ասում էր փարիսեցիների՞ն, ովքեր եկել էին Իր մոտ, թե՞ Նա սա վերացականորեն ասում էր Երուսաղեմին: Ավելի բնական է թվում, որ Նա սա ասում էր անհատավ Երուսաղեմի համար, սակայն ի օգուտ լսող փարիսեցիների, և նրանց էր (կամ առնվազն նրանց էլ էր) ուղղված Հիսուսի ասած դուք-ը:

Բայց սա կարծես շփոթություն է առաջացնում այս հարցում, որովհետև սա նշանակում է, որ այս հրեաներն այլևս չէին «տեսնելու» Հիսուսին, քանի դեռ չէին ասել. «Օրհնյալ է նա…»: Սակայն այս անհավատները երբեք էլ չէին ասելու սա: Հիսուսը պարզապես խոստացավ, որ Նրա սերնդի չհավատացող հրեաները կզրկվեին ժառանգությունից և դուրս կմնային Արքայությունից (Ղուկ. 13.28), իսկ Արքայությունը կվերցվեր հրեաներից և կտրվեր մեկ այլ

ժողովրդի, ով պտուղ կբերեր (Մատթ. 21.43): Հակասական կլիներ համարել, որ նրանք Հիսուսի մոտ գալիս են մեկ այլ ձևով, քան այն Արքայության միջոցով, որ Նա հենց նոր էր հավատով հաստատել, կամ էլ, մեկ այլ կերպ կարող է տեղի ունենալ միայն Նրա վերադարձի ժամանակ՝ հեռավոր ապագայում: Եթե սա ճիշտ է, ապա հրեաները կարող են Արքայություն մտնել, այսինքն՝ «տեսնել» Հիսուսին, Նրա հաջորդ գալստյան ժամանակ, և երբ այդ գալստյան ժամանակ նրանք հայտարարեն. «Օրհնյալ է Նա…»: Սա կարծես շատ հեռու է ձգվում:

Սա թողնում է երկու փոխկապակցված խնդիրներ. առաջինը, տեղին է թվում, որ մինչդեռ այս չհավատացող հրեաները ներկայացվում են որպես «Օրհնյալ է նա» ասողներ, սա չի վերաբերում Հիսուսին հավատով անձնապես ընդունելուն (և հաստատ չի վերաբերում բոլոր հրեաներին ամենուրեք), այլ միայն նրանց ներկայությանն այդ դեպքի ընթացքում, որը տեղի էր ունենալու նրանց կյանքի ընթացքում: Սա կհամապատասխաներ Հովհաննեսի հայտարարությանը Հայտնություն 1.7-ում. «Ահա, նա գալիս է ամպերով, և ամեն աչք կտեսնի նրան: Թող լինի այդպես: Ամեն»: (Իմիջիայլոց, այս համարն ըստ էության հաստատում է, որ Հիսուսի գալուստը դատաստանի ժամանակ, որը նկարագրված է Հայտնության մեջ, պետք է որ տեղի ունենար այն մարդկանց կյանքի ընթացքում, ովքեր սպանեցին Նրան):

Սա առաջ է բերում երկրորդ խնդիրը. արդյոք Երուսաղեմին ուղղված Հիսուսի խոսքը վերաբերում է իրական Երուսաղեմի՞ն, թե՞ Նոր Երուսաղեմին:

Ֆիզիկական Երուսաղեմի կործանումից հետո, երբ կործանվեց Հերովդեսի պալատ կոչված այդ հոյակերտ անշնորհքությունը (անպարկեշտությունը), ուղին նորից բաց էր Երուսաղեմի և Քրիստոսի առանձնահատուկ փոխհարաբերության համար: Այդ ժամանակ՝ Հիսուսի ժամանակ, Երուսաղեմի աչքերին քող կար գցված, որպեսզի նա չտեսներ Նրան (2 Կոր. 3.6-18): Դատաստանից հետո, երբ մնացած միակ Երուսաղեմը Նոր Երուսաղեմն էր, Հիսուսի և Երուսաղեմի փոխհարաբերությունը նորից կդառնար Փեսա և Հարս փոխհարաբերություն՝ Փեսա և Մեծ Պոռնիկ փոխհարաբերության փոխարեն: Սա կարծես Պողոսի ուսուցումն է Գաղատացիների 4.21-31-ում: Որին կհետևեր թիկնելը Նրա սեղանի մոտ (Ղուկ. 13.29)՝ ուխտի դրժման և մեծ ամուսնալուծության փոխարեն: Թառամող Հին Երուսաղեմի և հավերժական Նոր Երուսաղեմի վերաբերյալ

տեսակետին հետևելը միակ տարբերակն է՝ հասկանալու Սուրբ Գրքի համապատասխան հատվածները (Ղուկ. 13.35, Մատթ. 23.39), որը, միևնույն ժամանակ, հնարավորություն է տալիս ենթադրելու, որ հնարավոր է հրեաներն ընդունեին Քրիստոսին իրենց ընթացիկ ժամանակահատվածում: Եվ վերջապես, սա հնարավորություն է ստեղծում ենթադրելու, որ մինչդեռ անհատավ Երուսաղեմը վկա է Հիսուսի գալուն, ով եկել է կործանելու այն, նրանում եղած մնացորդը՝ ճշմարիտ Երուսաղեմը, Նոր Երուսաղեմը, միևնույն ժամանակ, աղաղակում է «Օրհնյալ է Նա, ով գալիս է Տիրոջ անունով»:

Եզրակացություն

Սուրբ Գրքի այս հատվածը՝ Ղուկ. 13.10-35, կարող է ամփոփվել հետևյալ դատողությամբ. «Դուք սակավաթիվ կմնաք»: Պտղաբեր Քրիստոսի և անպտուղ Իսրայելի միջև հակասությունը խորանում է, Արքայության բնույթը կրկնվում է՝ կապված այս ընդարձակվող բաժանման հետ, որից հետո գալիք դատաստանի բնույթն է ի հայտ գալիս՝ պատասխանելով հետևյալ հարցին. «Սակավաթի՞վ են լինելու փրկվողները»: Պատասխանը սա է. նրանք, որ Իսրայելից դուրս են՝ այո: Քչերը կարող են ժամանակին մտնել նեղ դռնով, իսկ որ ավելի վատ է, փարիսեցիներն ու օրինականները մնում են փակ դռան հետևում (Ղուկ. 11.52): Բայցևայնպես, պատասխան է տրվում նաև այն հարցին, թե ով է փոխարինելու անպտուղ ծառին (13.9). պատասխանը հետևյալն է. Աստված Աբրահամի որդիներ կբարձրացնի ամբողջ աշխարհից. հյուսիսից, հարավից, արևելքից ու արևմուտքից. և նրանք նահապետների հետ միասին կնստեն Քրիստոսի սեղանի մոտ՝ Արքայության մեջ:

7. Կանչված, բայց ոչ ընտրված (Ղուկաս 14.1-24)

Գրեթե անհավատալի է թվում, որ այն բանից հետո, երբ Հիսուսը բացահայտ կերպով մեղադրեց հրեաներին, Հերովդեսին և հատկապես փարիսեցիներին, փարիսեցի իշխաններից մեկը Նրան հրավիրեց իր տուն՝ ճաշելու: Այս փաստը հստակ ցույց է տալիս, որ փարիսեցիները ծրագրում էին ցանկացած ձևով Նրան թակարդը գցել և նույնիսկ հրավիրում էին իրենց տուն, որպեսզի մի այդպիսի հնարավորություն գտնեին: Նա կարող էր հանկարծ մի սխալ բան ասել, և նրանք վկայություն կունենային Նրա դեմ :Դա շատ նման է ժամանակակից լրագրողներին, որոնք սադրիչ հարցեր են տալիս, որպեսզի մի պատասխան կորզեն, իսկ հետո հնարամիտ ձևով խմբագրում են այն՝ դարձնելով վարկաբեկող խոսք:

Ճշմարիտ ընտրյալը (Ղուկ. 14.1-6)

Այն, որ փարիսեցիները դավադրություն էին ծրագրել Նրա դեմ, ակնհայտորեն երևում է հետևյալ հատվածից.

> «Մի Շաբաթ օր, երբ նա գնաց փարիսեցի իշ-խաններից մեկի տանը ճաշելու, նրանք ուշադիր հետևում էին նրան: Այնտեղ մի մարդ կար, որ հիվանդ էր ջրգողությամբ (սա այն հիվանդության վիճակն է երբ մարդու մարմնի մեջ ջուր է հավաքվում, սովորաբար ի հայտ գալով մարմնի համատարած փքված վիճակով)» (Ղուկ. 14.1-2):

Մենք այս պատկերն արդեն տեսել ենք, այնպես չէ՞: Հենց նախորդ գլխում, Հիսուսը ժողովարանում Շաբաթ օրով 18 տարվա հիվանդությունից ազատ արձակեց մի կնոջ, և հրապարակային հանդիմանության արժանացավ ժողովարանի իշխանի կողմից

(13.10-17): Հիմա Նա նստած էր՝ ճաշելու փարիսեցի իշխաններից մեկի տանը. դա տեղի ունեցավ Շաբաթ օրով, և պատահեց այնպես, որ այնտեղ մի հիվանդ մարդ կար: Թեև ոչինչ գրված չէ այն մասին, որ նրանք պատրաստվել էին, սակայն հավանական սցենարն այսպիսին էր. փարիսեցիները Հիսուսին հրավիրել էին հենց Շաբաթ օրը, իսկ այդ հիվանդ մարդն էլ այնտեղ էր նրանց կամքով: Կարծում եք, հաճա՞խ էր լինում, որ նրանք հիվանդ կամ հաշմանդամ մարդկանց պահեին իրենց շրջապատում, առավել ևս իրենց առաջնորդի: Այս սցենարը, ամենայն հավանականությամբ, սարքված էր:

Հիսուսը, որ շատ ուշադիր էր, անմիջապես նկատում է նրանց այս չար ծրագիրը: Փոխարենը թույլ տալու, որ նրանք տարածեն իրենց որոգայթը, Նա կանխարգելում է նրանց իր հարցով. «Եվ Հիսուսը պատասխանեց օրինականներին ու փարիսեցիներին ու ասաց. «Օրինավո՞ր է շաբաթ օրով բժշկել» (Ղուկ. 14.3): «Պատասխանեց» բառն այստեղ հետաքրքիր է, քանի որ փարիսեցիները Նրան դեռ ոչինչ չէին ասել: Սա ցույց է տալիս, որ Հիսուսը գիտեր, որ նրանք էին այդ հիվանդին բերել այդտեղ և հենց միայն նրա ներկայությունն արդեն ակնհայտ մարտահրավեր էր: Սակայն նրանք պատրաստ չէին այն բանին, որ Հիսուսն Ինքը վերցներ նախաձեռնությունը: Դավադիրներ լինելով, նրանք բնականաբար վախկոտ էին և «նրանք լուռ մնացին» (14.4), իսկ Հիսուսը «բռնեց նրան և բժշկեց և ուղարկեց»: Հիսուսը նախաձեռնությունը վերցրեց Իր ձեռքը և Իր ձևով իրականացրեց սցենարը դառնալով այս իրավիճակի տերը:

Դրանից հետո Հիսուսը մեջբերում է անում օրենքից. «Եվ նա ասաց նրանց. «Ձեզանից ո՞ր մեկը, եթե իր եզը կամ էշն ընկնի ջրհորը շաբաթ օրով, անմիջապես նրան դուրս չի հանի»: Նրանք ոչինչ չկարողացան պատասխանել սրան» (14.5-6): Այն, որ նրանք Հիսուսի օրինական հարցին պատասխան չունեին, նշանակում էր, որ նրանք պատասխան չունեին նաև Նրա Մեսիանական զորության դրսևորմանը, քանի որ դրանք ուս-ուսի են գնում: Փարիսեցիները նստած էին դատապարտված ու անխոս: Սրանով հանդերձ, սկսած Ղուկաս 9:51 և հետո գրանցված ողջ ճանապարհորդության ընթացքում, Հիսուսն Իր երեսն ուղղում է Երուսաղեմի դեմ, այսինքն՝ ներկայացնում է Ուխտի հետ կապված դատական գործն՝ ընդդեմ անհավատ հրեաների: Նա մեկն էր, ում Աստված չէր դատելու (Աստված Նրան չէր, որ պիտի դատեր): Նա հենց Ինքը դատավորն էր: Փաստ՝ մարդը բժշկված էր: Իսկ օրենքը պատվիրում էր, որ դա

պետք է արվի շաբաթ օրը: Դատաստան՝ Հիսուսն էր Արդարը թե՛ ըստ փաստի և թե՛ ըստ օրենքի (Հիսուսը ոչ մի դեպքում Հին Կտակարանում տրված օրենքները չի հերքում, կամ փոխում: Նոր Կտակարանը Շաբաթվա օրենքի հանգիստը տեղափոխում է Կիրակի օրվան: Բայց Օրենքը քրիստոնեայի համար ուժի մեջ է: Հին Կտակարանը այս օրենքը տալով բացատրում է օրենքի բացառությունները, օրինակ եթե մեկը խնամքի կամ օգնության կարիք ունի, օրինակ՝ հիվանդանոցում աշխատողները, հրշեջ ծառայությունը, կամ եթե քո անասունը գետն է ընկնում ու պետք է գործ կատարես որ նրանք փրկես, և այլն: Այս մարդկանց Աստված բացահայտ կերպով թույլ է տալիս որ իրենց գործը անեն հանգստյան օրը: Տես Ռշտունի, Աստվածաշնչական Օրենքի Ինստիտուտները էջ 128-155 Հատոր 1):

Վերջին հաշվով, զավեշտի մեջ հայտնվեցին հենց փարիսեցիները: Ոչ միայն բացահայտվեց նրանց դավադրությունը, այլ այն մարդը, ում նրանք օգտագործում էին որպես խայծ, ստացվեց այնպես, որ բժշկության օրինություն ստացավ, մինչդեռ նրանք մնացին ապշահար և անսովոր կերպով լուռ, ընդամենը ավերվածության հեռանկարը մնաց նրանց ապագայի միակ ճանապարհը: Ջրգողությամբ տառապող մարդը ստացավ Արքայությունը, մինչդեռ այս փարիսեցիները դուրս մնացին արքայությունից:

Մեծ խնջույքի առակը (Ղուկ. 14.15-24)

Հիսուսը դեռ պատրաստ չէր այդ պահին անհարմար վիճակում հայտնված լսարանին հենց այնպես բաց թողնելու: Նա քահանայական գործից (բժշկություն) անմիջապես անցնում է մարգարեական գործին (հռչակում): Նա օգտագործում է հենց այն նույն սցենարը, որ այս փարիսեցիները մշակել էին Իրեն մեղադրելու համար. նրանք պատվավոր տեղերն էին ընտրում մյուսներից առաջ (14.7-11) և միայն հարուստ բարեկամներին ու հարազատներին էին հրավիրում իրենց խնջույքներին (14.12-13):

Այդ ժամանակ, նրանցից մեկը փորձեց Հիսուսի մոտ խելացի մարդու տպավորություն թողնել. «Երանի ամեն մեկին, ով Աստծո արքայությունում հաց կուտի» (14.15): Այս արտահայտությունը երկու բան է ցույց տալիս. 1) որ իրենք իբր ավելի կենտրոնանում են հոգևոր, քան թե երկրավոր բաների վրա, որոնք Հիսուսը հենց նոր

էր դատապարտել, և 2) որ իրենք իբր անտեսում են դասակարգային (հարուստ և աղքատ) տարբերությունը: Առաջինը պակաս կարևոր էր, քան երկրորդը, քանի որ մենք արդեն գիտենք, որ փարիսեցիներն աշխատում էին ցույց տալ, որ իրենց բոլոր արարքներն ըստ Օրենքի ու մարգարեների են: Սակայն այստեղ այս մարդու այս արտահայտությունը բացահայտ հակաճառություն էր Հիսուսի ուսուցմանը: Հիսուսը հենց նոր ասել էր, որ պետք է գերադասել աղքատներին ու հաշմանդամներին և հրաժարվել առաջին աթոռներից: Սա կարծես հարձակում էր հարուստների և աստիճանավորների վրա ընդհանուր առմամբ, և այդ մարդն այդպես էլ ընկալեց: «Երանի ամեն մեկին, ով Աստծո արքայությունում հաց կուտի…»: Ոչ միայն աղքատները, Հիսուս, այլ նաև հարուստ առաջնորդները երանելի կլինեն: Սակայն Հիսուսի բուն շեշտը հարստության վրա չէր, այլ փարիսեցիների եսասիրության, հպարտության, փառասիրության և, ամենակարևորը, մի բան, որ այս բոլոր չարիքները բացահայտում էին նրանց մասին. նրանց ինքնավստահ հավակնությունը, որ իրենք նույնիսկ Արքայությունում էլ իրենց տեղն ունեն: Նրանք դեռ չէին գիտակցել, որ իրենք ընդամենը կարծում էին, որ Արքայությունն իրենցն է, սակայն նույնիսկ այն, ինչ նրանց թվում էր, թե ունեն, վերցվելու էր նրանցից (Ղուկ. 8.18, 13.30):

Հիսուսն Իր դիրքը վերահաստատում է մեկ այլ առակով.

> «Մի մարդ մեծ խնջույք արեց և շատերին հրավիրեց: Երբ խնջույքի ժամանակը հասավ, նա իր ծառաներին ուղարկեց՝ հրավիրվածներին ասելու. «Եկեք, քանի որ ամեն բան պատրաստ է»: Սակայն նրանք իրար հետևից սկսեցին հրաժարվել: Առաջինը նրան ասաց. «Ես դաշտ եմ գնել և պետք է գնամ, որ տեսնեմ այն: Խնդրում եմ, ինձ հրաժարված համարիր»: Իսկ մյուսն ասաց. «Ես հինգ զույգ եզ եմ գնել և պետք է գնամ, որ փորձեմ դրանց: Խնդրում եմ, ինձ հրաժարված համարիր»: Իսկ մեկ ուրիշն ասաց. «Ես ամուսնացել եմ և, այդ պատճառով, չեմ կարող գալ»: Ծառան վերադառնալով պատմեց այս բաներն իր տիրոջը: Այդ ժամանակ տանտերը բարկացավ և ասաց իր ծառային. «Արագ գնա փողոցները և քաղաքի նրբանցքները, և բեր աղքատներին, հաշմանդամներին , կույրերին ու

> կաղերին»: Եվ ծառան ասաց. «Տեր, ինչ որ հրամայեցիր, արեցի, սակայն դեռ էլի տեղ կա»: Եվ տանտերն ասաց ծառային. «Գնա մայրուղիները և անցուղիները և ստիպիր, որ մարդիկ ներս գան, որպեսզի տունս լցվի: Որովհետև ասում եմ ձեզ, որ հրավիրվածներից ոչ ոք չի համտեսի իմ խնջույքից» (Ղուկ. 14.16-24):

Առակն ակնհայտորեն վերաբերում է անմիջական իրավիճակին, սակայն այն իրականում ուղղակիորեն վերաբերում է Աստծո առաջ Իսրայելի դիրքին: Այն վերաբերում է հենց այդ փարիսեցիների խմբին ու նրանց հյուրերին, քանի որ Ղուկասը հստակ գրում է, որ Նրա նախկին առակներն ուղղված էին «նրանց, ովքեր հրավիրված էին» (13.7) և «այն մարդը, ով հրավիրել էր նրան» (13.12) իսկ հիմա հստակ խոսում էր սեղանի շուրջ գտնվող խելաց մարդու հետ (13.16): Սակայն հստակ է, որ լայն իմաստով այն վերաբերում էր ողջ ազգին ընդհանրապես:

Ահա դրա մեկնությունը. տանտերը, ով մեծ խնջույք է կազմակերպում, Աստված է: Մեծ խնջույքը՝ Երկնքի Արքայությունն է (իմիջիայլոց, սա համապատասխանում է ճաշի հյուրի մատնանշած արտահայտությանը, որ հենց նոր էր արել Աստծո Արքայությունում հաց ուտելու վերաբերյալ): Հիսուսը, ըստ էության, ասում է. «Դու ուզում ես խոսել Աստծո Արքայությունում հաց ուտելու վերաբերյալ: Ես քեզ կասեմ, թե ով է հաց ուտելու Աստծո Արքայությունում»: Առակի հրավիրված հյուրերը արտացոլում էին Հիսուսի լսարանը՝ հրեաներին: Նրանք էին սկզբնական հրավիրյալներն Աստծո Արքայություն. «Հրեաներին էր վստահված Աստծո մարգարեությունները» (Հռոմ. 3.2), Իսրայելացիներին էր պատկանում «որդեգրությունը, փառքը, ուխտերը, օրենքի տրվելը, պաշտամունքը, խոստումները… նահապետները, և իրենցից եկավ, ըստ մարմնի, Քրիստոսը, որ Աստված է ամենքի վրա, օրհնյալ հավիտյան: Ամեն»: (Հռոմ. 9.4-5): Նրանք ունեին այս բոլորը և նաև մեծ խնջույքի աթոռներին նստելու առաջին արտոնությունը: Սակայն նրանք թույլ էին տվել, որ իրենց անձնական սնափառությունն ու ցանկությունները հեռացնեն իրենց դրանցից. շեղված, ինքնահավան ու ինքնավստահ լինելով, նրանք բացահայտորեն մերժեցին իրենց հրավերը: Իհարկե, այս անշնորհակալ հյուրերը շատ պատճառաբանություններ բերեցին, ճիշտ ինչպես այն մարդիկ, ովքեր թակում էին նեղ դուռը (13.25-26), սակայն

արդյունքը եղավ նույնը. նրանք դուրս մնացին իրենց իսկ որոշման պատճառով: Նրանք չկարողացան շուտ ընդունել հրավերը և, որպես հետևանք, այն ինչ իրենք սկզբում ունեին, վերցվեց և տրվեց ուրիշների (Մատթ. 21.43):

Սա «տանտիրոջը» «բարկացրեց» (13.21). հունարեն՝ orgis¬theis, ճիշտ ինչպես Մովսեսը «բարկացավ» ոսկե հորթի կռապաշտության վրա (Ել. 32.19), և ինչպես Աստված խոստացավ բարկանալ, եթե Իսրայելն ապագայում դրժեր Ուխտն ու հետևեր կուռքերին (2 Օր. 6.14-15):

Իսկ հաջորդ հրավիրյալները գալիս են երկու ալիքով. առաջինը կանչում են «աղքատներին, հաշմանդամներին, կույրերին ու կաղերին» փողոցներից ու նրբանցքներից: Սակայն դա բավական չեղավ Արքայությունը լցնելու համար. դեռևս տեղ էր մնացել: Այսպիսով, տանտերն իր առաքյալներին ուղարկում է շատ ավելի հեռու՝ մայրուղիներն ու անցուղիները՝ բերելու, ում կկարողանան ստիպել: Կարծում եմ, առաջին խումբը ներկայացնում էր հրեաների մնացորդին, ովքեր պետք է մտնեին նեղ դռնով և սկսեին Նոր Կտակարանի Եկեղեցին: Իսկ երկրորդ խումբը ներկայացնում է Արքայության Ավետարանի հասնելը հեթանոսներին: Սա կարող է չափից ավելի շատ մանրամասնություններ հաղորդել առակին, որը հիմնականում նախատեսված էր մի հզոր դաս ուսուցանելու համար. ինքնավստահ հրեաները մերժեցին իրենց հրավերի ժամանակը և շուտով կկորցնեին իրենց տեղն Արքայությունում:

Նայեք Ղուկաս 14.1-24-ի ամբողջական համատեքստը: Հիսուսը հենց նոր էր հաստատել Աստծո Արքայության օրհնությունը հիվանդ մարդու վրա նրանց ներկայությամբ, իսկ հետո քննադատել էր փարիսեցիների բարքերն ու հավակնությունները, որոնք երախտամոռ ու շեղված կռապաշտներ էին և կկորցնեին իրենց տեղը: Հաշմանդամներն էին Արքայության իրական հրավիրյալները: Սակայն կլինեին ուրիշ հրավիրյալներ էլ՝ փոխարինելու ըմբոստ չհավատացող հրեաներին: Նրանք գալու էին ամենահեռավոր վայրերից ու ծագերից, այսինքն՝ հեթանոսները:

Այդ խելացի մարդը, ով կարծում էր, որ Աստծո Արքայությունում հաց էր ուտելու, ապշահար եղավ. «հրավիրվածներից ոչ ոք չի համտեսի իմ խնջույքից» (14.24), այլ միայն շնորհով ընտրված մնացորդը, որը խորհրդապատկերվեց թե՛ հիվանդ մարդու, թե՛ առակի հաշմանդամների միջոցով: Այս առակն ուսուցանում է մի

դաս, որ ուսուցանվում է նաև Մատթեոսի ավետարանում գրի առնված այլ առակներում. «Շատերն են կանչված, բայց քչերն են ընտրված» (Մատթ. 20.16, 22.14): Նույն դասն այստեղ է. «Իսրայելն այն «շատերն» է, որ կանչված էր (վաղուց), սակայն նրանք հրաժարվեցին մտնել Արքայություն/խնջույք»: Իսկ հիմա դատաստանն էր գալիս, երբ Աստված լքելու էր նրանց, և միայն սակավաթիվ մարդիկ կնտրվեին: Մնացորդն ընտրյալներն էին՝ ճշմարիտ Իսրայելը: Իսկ մնացած հրեաները պետք է կրեին իրենց նախասահմանված կործանումը:

8. Մեղավորների ընկերները (Ղուկաս 14.25-16.31)

Հիսուսը, ով հենց նոր էր արգելել փարիսեցիների մուտքն Աստծո Արքայություն, հիմա պատրաստվում է ճիշտ նույնպիսի կոշտ պատգամ փոխանցել Իրեն հետևող բազմությանը: Ինչքանո՞վ էին նրանք նպատակահարմար աշակերտության համար՝ Աստծո Արքայության համար: Արքայություն մտնելու զոհաբերության չափանիշներն ու պահանջները շատ բարձր էին լինելու:

Կարևոր է մեկ անգամ ևս նշել լսարանի փոփոխությունը, որ տեղի է ունենում համատեքստում: Մեծ խնջույքի առակից հետո, որ հենց նոր էր Հիսուսը պատմել փարիսեցիներով լի ճաշասենյակում, Նա, կարծես, դուրս էր եկել և Նրան հետևում էր «մի մեծ բազմություն» (Ղուկ. 14.25): Ես շատ եմ կասկածում, որ այս բոլոր մարդիկ խցկված լինեին փարիսեցու տան մեջ, ճաշի ժամանակ: Այսինքն, լսարանի մեջ փոփոխություն էր տեղի ունեցել:

Հիսուսը դիմում է այս մարդկանց և նրանց հետ խոսում է Իրեն հետևելու բարձր գնի մասին, մի դաս, որ մենք մեկ ագամ չէ, որ լսել ենք (Ղուկ. 9.23–26, 57–62, 12.49–53): Այս դասի կարևորությունն ակնհայտ է, քանի որ Նա մի քանի անգամ կրկնում է այն Երուսաղեմ ճամփորդելիս: Կարծում եմ, Նա արդեն բավականին ճանաչված էր փարիսեցիների և իշխանների հավակնությունները ջախջախելու և աղքատներին ու հասարակ ժողովրդին բարձրացնելու պատճառով: Սակայն Հիսուսն ուզում էր, որ մարդիկ իմանային, որ Նա ընդամենը ժողովրդական մարդ չէր: Հենց միայն այն փաստը, որ Նա հանդիմանել էր բարձր խավի փարիսեցիներին, դեռ չէր նշանակում, որ ցածր խավի մարդիկ ինքնաբերաբար մուտք կունենային Արքայություն: Հիշեք, որ Հիսուսը ճիշտ նույն խստությամբ խոսել էր նաև բազմությունների հետ (Ղուկ. 13.18-35): Դուռը նեղ էր, և

քչերը ժամանակին կմտնեին դրանով: Դրա համար, Հիսուսն այս մարդկանց ասում է, որ անկախ այն բանից, որ նրանք Իր մոտ էին հավաքվում, Իրեն հետևելու ուղին կապ ունի այն նույն բաժանման և անձնուրացության հետ (14.26-27,33), ինչ մյուսներինը, և հիմա նրանք պետք է հաշվարկեին, թե արդյոք ի վիճակի էին վճարելու այդ գինը (hh. 28-32):

Հիսուսն այս ուսուցումը շեշտադրում է աղի վերաբերյալ կարճ առակով: Այստեղ դասն այն է, որ այդ բազմության մեջ գտնվող մարդիկ դատվելու էին ճիշտ այնպես, ինչպես մյուսները, որոնց Հիսուսն արդեն մարտահրավեր էր նետել: Սա պահվելու էր որպես բարձր չափանիշ: Ավելի ուշ նրանք կփորձվեին, և եթե չդիմանային և կորցնեին իրենց Փրկչին, նրանք «դուրս կգցվեին» (14.35): «Դուրս գցել»-ը, հունարեն՝ exo ballousin, հստակ հղում է գալիք դատաստանին/բաժանմանը, որի մասին Ղուկասն արդեն խոսել էր. 1) Հովհաննես Մկրտիչը զգուշացնում է «իժերի սերունդին», որ կացինը գալիս է, և նրանք, որ կկտրվեն, կրակը «կգցվեն», 2) Հիսուսը հենց նոր էր խոստացել, որ Իր ժամանակակից սերնդից շատերը տեսնելու էին Արքայությունը վայելող նահապատներին, մինչդեռ իրենք «դուրս էին գցվելու» (exballomenous exo, 13.28): Մյուս ավետարաններում նույնպես կարելի է հանդիպել այս մտքին (Մատթ. 5.13, 13.48, Մարկ. 4.11, Հովհ. 12.31, 15.6): Ճշմարիտ և կեղծ Իսրայելի միջև եկող բաժանման միտքը Հիսուսի առաքելության մեջ իր գերակա տեղն ունի:

Ուրախություն մնացորդի համար (Ղուկ. 15.1-32)

Չնայած ճշմարիտ աշակերտ լինելու գնի վերաբերյալ Հիսուսի զգուշացումներին, բազմությունը շարունակում էր հետևել Նրան: Այնտեղ կային նաև փարիսեցիներ ու օրինականներ: Սրանց մեջ հնարավոր է լինեին, կամ չլինեին, այն նույն մարդիկ, որոնց հետ Հիսուսը ճաշել էր: Եթե այդպես էր, ապա նրանք անմիջապես հաստատում են, որ ոչինչ չէին սովորել Հիսուսի կատարած հրաշքից և Արքայության էության և ընտրյալ մնացորդի վերաբերյալ Նրա ուսուցումից: Նրանք Հիսուսին մեղադրում էին մեղավորների հետ շփվելու և նրանց հետ հաց ուտելու համար (Ղուկ. 15.1-2): Հիսուսը հենց նոր էր ցույց տվել նրանց, որ Ինքը նախընտրում է իրենց ներկայությամբ բժշկել հաշմանդամ մարդուն, մինչդեռ նրանք չէին

համտեսելու Արքայությունը (14.1-24): Հիմա Նա ցույց է տալիս, որ Ինքը միանշանակ գերադասում է մեղավորների հետ հաց ուտելը, քան փարիսեցիների: Նախկին դրվագը խոցեց փարիսեցիների զգացմունքները, իսկ սա կխոցեր հասարակական և կրոնական մաքրության վերաբերյալ նրանց ողջ արժեհամակարգը: Հնարավոր չէր, որ Մեսիան շփվեր այնպեսի մարդկանց հետ, որոնք ժողովարան չէին գնում, հաճախակի խրախճանքներ էին կազմակերպում, պարբերաբար չէին լվացվում, ծխախոտ էին ծխում (հա, գիտեմ) և անտեսում էին փարիսեցիական աստվածպաշտության մանրակրկիտ կետերը:

Հանդիմանությունից հետո Հիսուսը ներկայացնում է երեք առակների շարք, որոնց մեջ է նաև Նրա ամենաճանաչված առակը՝ «Անառակ որդու» առակը: Մենք կրկին այլ լսարան ենք տեսնում: Ընդհանուր բազմությանը դիմելու փոխարեն, Հիսուսն այս առակն ուղղում է «նրանց», այսինքն՝ փարիսեցիներին, ովքեր հենց նոր էին քննադատել Նրան (15.2-3): Այս դասերն այդ «մաքուրների»՝ փարիսեցիների համար էին: Այդ առակներից յուրաքանչյուրը կենտրոնանում է Հիսուսի առաքելության վրա՝ փրկելու Իսրայելի հավատարիմ մնացորդին: Երրորդ առակը՝ «Անառակ որդին», բացահայտ հանդիմանություն է նախանձ եղբոր հանդեպ, սակայն դրանցից յուրաքանչյուրը բացահայտ հանդիմանություն է կրում իր մեջ նրանց հանդեպ, ովքեր չեն ուզում փրկել կորսված մնացորդին, առավել ևս, ուրախանալ նրանց դարձի գալով: Եկեք համառոտ կերպով նայենք այս դասերը.

Կորած ոչխարի առակը (Ղուկ. 15.3-7)

Այս առակը սկսվում է հարցով, որ նման էր այն հարցին, որը Հիսուսը նախկինում երկու անգամ օգտագործել էր փարիսեցիներին լռեցնելու համար. «Ո՞վ է այն մարդը, որ հարյուր ոչխար ունենալով, եթե դրանցից մեկը կորչի, չի թողնի իննսուն ինը բաց տարածքում, և գնա այն մեկի հետևից, որ կորել է, մինչև գտնի այն» (15.4): Սա նման է փոսն ընկած եզին, որ օգնության կարիք ունի, կամ արձակելու, որպեսզի ջուր խմի (Ղուկ. 13.15, 14.5), որոնց մասին Հիսուսը երկու տարբեր առիթներով օրինակ բերեց, երբ շաբաթ օրով մարդ բժշկեց: Այս հարցը դարձյալ կապ ունի Հին Կտակարանի Օրենքի հետ, հատկապես այն մեկը, որ շեշտադրում է ողորմությունը (Ել. 23.4-5, 2

Օր. 22.1-4): Փաստը, որ փարիսեցիներն ու օրինականները, Օրենքի հնազանդության վրա իրենց խորը կենտրոնացումով հանդերձ, չէին կարողանում սա տեսնել, (առավել ևս՝ հնազանդվել), նույնիսկ այն բանից հետո, երբ Հիսուսը նախկինում երկու անգամ մատնանշել էր այդ մասին, որ ինքնին մի ուժգին հանդիմանություն էր: Նրանք շարունակում էին հաստատել Հիսուսի նախկինում հայտարարած մեղադրանքի ճշմարտացիությունը. «Վայ ձեզ, փարիսեցիներ: Քանի որ դուք տալիս եք մանանեխի և բոլոր կանաչեղենների տասանորդը, բայց անտեսում եք Աստծո սերն ու արադարությունը» (Ղուկ. 11.42): Այս կորսված բազմության մեջ Իսրայելի կորած ճշմարիտ մնացորդին հասնելու նրանց անկարողությունը ևս մեկ ապացույց է նրանց դեմ եղող այս պատմության ճշմարտացիության համար:

Հիսուսը շարունակում է նկարագրել Իր առաքելությունը որպես ողորմության և ուրախության գործ.

> «Եվ երբ գտնում է նրան, իր ուսերին է դնում, ուրախանալով: Եվ երբ տուն է գալիս, կանչում է իր բարեկամներին ու հարևաններին՝ ասելով նրանց. «Ուրախացեք ինձ հետ, քանի որ ես գտա իմ կորած ոչխարը»: Ասում եմ ձեզ, ճիշտ այսպես ավելի մեծ ուրախություն կլինի երկնքում անգամ մեկ մեղավորի համար, ով ապաշխարում է, քան ինսուն ինն արդարների, որոնց ապաշխարություն պետք չէ» (15.5-7): (Այստեղ արդարներ բառը պետք է չակերտների մեջ նայել, քանի որ Հիսուսը այս բառը այստեղ հեգնական ձևով է օգտագործում)

Դասը շատ հստակ է. հովվի համար բնական է փնտրել ու գտնել կորած ոչխարին, իսկ նրան փրկելուց հետո գալիս է մի հատուկ ուրախություն, որն ուղղակիորեն կապ չունի ունեցվածքի հետ: Սա տիպիկ Կիրակնօրյա դպրոցի տարբերակ է, և ճիշտ է, սակայն բավականաչափ խորը չէ: Հիսուսն ավելի ամբողջական ասում է, որ Իսրայելը «կորած» էր. նկատի ունենալով «մաքսավորներին ու մեղավորներին», ոչ թե նրանց, «որոնց ապաշխարություն պետք չէ»: Մեսիայի գործն էր՝ փնտրել ու փրկել այդ մնացորդին: Այս պատգամն այստեղ շատ ավելի ակնբախ է թվում, քան որևէ այլ տեղ Ավետարաններում. «Որովհետև Մարդու Որդին եկավ՝ փնտրելու ու փրկելու կորածին» (Ղուկ. 19.10, տես նաև Հովհ. 3.17, 4.23, 12.47):

Իրականում, Մատթեոսը գրում է, որ Հիսուսն այս առակը պատմել է մեկ այլ միջավայրում, իսկ որոշ ձեռագրեր (թեև ոչ ամենահին) համակցում են այս արտահայտությունը այս առակին. «Մարդի Որդին եկել է, որպեսզի փրկի կորածին» (Մատթ. 18.11):

«Արդարները, որոնց ապաշխարություն պետք չէ» արտահայտությունը վերաբերվում է փարիսեցիներին և չի նշանակում, որ նրանք իրոք արդար էին Աստծո տեսակետից և ապաշխարության կարիք չունեին: Դա նրանց ինքնավստահությունն էր որպես Աստծո ընտրյալներ (որ մենք նախկինում քննարկել ենք). նրանք արդար էին իրենց չափանիշներով, իրենց ծիսական մեկուսացումով ու հասարակական կարծեցյալ դիրքով: Հիսուսը, պահի տակ, սա բացահայտ հանդիմանության թեմա դարձրեց (Ղուկ. 16.15): Այս արտահայտությունն այստեղ իրականում բացահայտ հանդիմանություն է. այս թվացյալ արդար օրինապահները հրաժարվում էին պահել ողորմության օրենքը և, այդպիսով, փրկել կորած ոչխարներին: Այն, որ նրանք բնութագրվում են որպես «արդար», սակայն չեն հետևում իրենց հստակ պարտականությունների կատարմանը, մի ակնբախ հակասություն է, որ չէր կարող աննկատ մնալ:

Մեսիական օրենքի կատարման պատգամն ավելի հստակ է հունարենում՝ կապված քահանայական օրենքի հղման հետ: «Դնում է իր ուսերին» արտահայտությունն (հունարեն՝ epitithesin epi tous omous) ընդհանուր առմամբ կվերաբերեր հովվին, ով կրում է իր ոչխարին, բայցևայնպես այն հետաքրքիր զուգահեռներ ունի Ելից 39-ի հետ.

> «Նրանք Ահարոնի համար սուրբ հագուստներ պատրաստեցին, ինչպես Տերը հրամայել էր Մովսեսին… Նրանք եղեգնաքարեր պատրաստեցին, տեղադրված ոսկե խոռոչների մեջ, և կնիք փորագրելու նման փորագրեցին Իսրայելի որդիների անունները: Եվ նա դրանք եփուտի ուսերին դրեց, որպես հիշատակի քարեր Իսրայելի որդիների համար, ինչպես Տերը հրամայել էր Մովսեսին» (Ել. 39.2,6-7):

Այստեղ «ուսերին դրեց» հենց բառացի հնչում է որպես «ուսերին դրեց» (հունարեն *LXX. epetheken . . . epi tous omous),* մի արտահայտություն, որ շատ նման է Հիսուսի առակում հանդիպող արտահայտությանը (միայն բայի ժամանակաձևն է տարբեր): Փա-

րիսեցիները, որ լավատեղյակ էին օրենքին, անմիջապես կարող էին նկատել այդ արտահայտությունների միջև եղած նմանությունը: Եվ ի՞նչ էր հատկապես դրվում քահանայապետի ուսերին: Դրանք եղեգնաքարեր էին, որոնք տեղադրված էին ոսկե խոռոչների մեջ, որոնց վրա փորագրված էին Իսրայելի որդիների անունները: Եվ դրանք դրված էին այնտեղ հատկապես Իսրայելի որդիների հիշատակի համար: Քահանայապետը բառացիորեն կրում էր Իսրայելի ճշմարիտ որդիների հիշատակն իր ուսերին:

Հիսուսի իրավիճակում, անկախ այն բանից, թէ փարիսեցիներն ամբողջությամբ հասկացան սա թե ոչ, ճշմարիտ Քահանայապետը եկել էր՝ փնտրելու և փրկելու Իսրայելի ճշմարիտ որդիների մնացորդը: Նա հիշում էր նրանց և եկել էր գտնելու և Իր ուսերի վրա կրելու նրանց: Փարիսեցիները, նույնպես լինելով Իսրայելի ներկայացուցիչները, ցավալիորեն չէին կարողացել կրել Իսրայելի որդիների քահանայական հիշատակը:

Իր ամբողջության մեջ, այս առակը ոչ միայն բացատրություն է Հիսուսի առաքելության՝ փնտրելու և փրկելու Իսրայելի մնացորդին, այլ նաև ամբաստանագիր՝ ընդդեմ փարիսեցիների առ այն, որ նրանք չէին հնազանդվել Օրենքի ողորմության և սիրո պատվիրանին:

Կորած դրամի առակը (Ղուկ. 15.8-10)

Գրեթե նմանատիպ դաս կա կորած դրամի առակի մեջ: Հիսուսն ասում է.

> «Կամ ո՞ր կինը, ունենալով 10 արծաթադրամ, եթե մեկ մետաղադրամ կորցնի, ճրագը չի վառի և տունն ավլելով ջերմեռանդորեն չի փնտրի, մինչև գտնի այն: Իսկ երբ գտնում է, կանչում է իր բարեկամներին ու հարևաններին ու ասում. «Ուրախացեք ինձ հետ, որովհետև ես գտա իմ կորած դրամը»: Ճիշտ այսպես Աստծո հրեշտակների առաջ ուրախություն է լինում մեկ մեղավորի համար, որ ապաշխարում է» (Ղուկ. 15.8-10):

Շատ բան չկա ավելացնելու նախկին առակի հաղորդած իմաստին: Նույն դասերն են այստեղ կիրառվում, բացառությամբ վառված ճրագի, ինչպես մենք նախապես քննարկել էինք վառված ճրագի առակում

(Ղուկ. 11.33-36, տես նաև 8.16-18): Պատկերը նորից ցայտուն ձևով ներկայացնում է Մեսիայի փնտրող առաքելությունը, ինչպես նաև ակնբախ ամբաստանությունը փարիսեցիներին առ այն, որ նրանց ճրագները պետք է վառ լինեին: Ինչպես մենք նախկինում նկատել էինք, Իսրայելը պետք է լույս լիներ աշխարհի համար, բայց չեղավ (Աստված Իսրայելին Հին Կտակարանում, նույնիսկ սկսված նրանց նախահայր Աբրահամից ու Մովսեսից հրահանգել է, որ նրանք պետք է լույս լինեն աշխարհի համար, այսինքն Աստծո տված օրենքները պետք է գնային և տարածեին օտար ազգերի մեջ: Հովնանի Ասորեստանի մայրաքաղաք Նինեվե ուղարկվելը պետք է որ սովորական մի բան լիներ, բայց քանի որ Հրեաները ցեղամոլ, ապստամբ և հպարտ էին, Հովնանին Աստված պետք է ստիպեր որ նա Նինեվե գնար ու միլիոնից ավել մարդկանց քարոզեր և նրանց կյանքը փրկեր): Հիմա Հիսուսը՝ ճշմարիտ Իսրայելը, գալիս է այդ պայծառ փայլող լույսով (Հովհ. 1.4-11), իսկ Իսրայել ազգը, բացառությամբ ընտրյալ մնացորդի (Մատթ. 24.22, 24, 31, Մարկ. 13.20, 22, 27, Ղուկ. 18.7), կուրացած էին իրենց ներքին խավարի պատճառով (Ղուկ. 11.33-36):

Անառակ որդու առակը (Ղուկ. 15.11-32)

Միայն նախորդ երկու առակներից հետո ենք մենք հասնում անառակ որդու հայտնի առակին: Դեռևս պատասխանելով մեղավորների հետ հաց ուտելու համար Իրեն ուղղված քննադատությանը՝ Հիսուսը շարունակում է.

> «Եվ ասաց. «Մի մարդ երկու որդի ուներ: Նրանցից փոքրը հորն ասաց. «Հայր, տուր ինձ ունեցվածքի ինձ հասանելիք բաժինը»: Եվ նա բաժանեց իր ունեցվածքը նրանց միջև: Շատ չանցած, կրտսեր որդին հավաքեց իր ունեցածը, գնաց մի հեռու երկիր և այնտեղ, անհոգ կյանք ապրելով վատնեց իր ունեցվածքը: Երբ ամեն բան ծախսեց, սաստիկ սով սկսվեց այդ երկրում, և նա ընկավ չքավորության մեջ: Ուստի գնաց և վարձով աշխատանքի մտավ այդ երկրի քաղաքացիներից մեկի մոտ, ով նրան ուղարկեց դաշտերում իր խոզերին արածեցնելու: Նա փափագում էր գոնե խոզերի

կերածից ուտել, սակայն ոչ ոք նրան ոչինչ չէր տալիս: Բայց երբ խելքի եկավ, ասաց. «Իմ հորս ծառաներից քանիսը բավականաչափ հաց ունեն ուտելու, իսկ ես այստեղ սովից կորչում եմ: Վեր կենամ, գնամ հորս մոտ և ասեմ նրան. «Հայր, մեղք գործեցի երկնքի ու քո առջև: Ես այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու: Ինձ քո վարձկաններից մեկի պես վերաբերվիր»:

«Եվ վեր կացավ ու եկավ հոր մոտ: Բայց երբ դեռ բավականին հեռու էր, նրա հայրը տեսավ նրան ու խղճաց, և վազելով գրկեց նրան ու համբուրեց: Եվ որդին ասաց հորը. «Հայր, ես մեղք գործեցի երկնքի ու քո առջև: Ես այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու»: Սակայն հայրն ասաց իր ծառաներին. «Շտապ բերեք լավագույն հագուստը և հագցրեք նրան, մատանի դրեք մատին, և կոշիկներ՝ ոտքերին: Եվ բերեք պարարտ հորթը և մորթեք: Եկեք ուտենք և ուրախանանք, որովհետև այս իմ որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»: Եվ սկսեցին տոնել»:

«Ավագ որդին, որ դաշտում էր, երբ եկավ, տանը մոտենալով երաժշտության ու պարի ձայներ լսեց: Կանչելով իր ծառաներից մեկին, հարցրեց, թե ինչ է այդ ամենը նշանակում: Եվ նա ասաց նրան. «Եղբայրդ հետ եկավ և հայրդ պարարտ հորթը մորթեց նրա համար, որովհետև ողջ և առողջ հետ էր եկել»: Սակայն նա բարկացավ և հրաժարվեց ներս գնալ: Նրա հայրը դուրս եկավ և աղերսում էր նրան, սակայն նա պատասխանեց. «Տես, այսքան տարի ես ծառայել եմ քեզ, և երբեք քո հրամանին անհնազանդ չեմ եղել, բայց դու ինձ մի ուլ չտվիր, որ ընկերներիս հետ խնջույք անեի: Սակայն երբ այս քո որդին եկավ, ով անառակների հետ քո ունեցվածքը փչացրեց, դու պարարտ հորթը մորթեցիր նրա համար»: Եվ նա ասաց նրան. «Որդիս, դու միշտ ինձ հետ ես, և իմ ողջ ունեցածը քոնն է: Սակայն պետք է տոնել ու ուրախանալ, որովհետև այս քո եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց» (Ղուկ. 15.11-32):

Այնքան շատ է գրվել այս առակի մասին, որ ես մտադիր չեմ ամբողջական մեկնաբանություն ներկայացնել այստեղ, այլ միայն կընդգծեմայն, ինչ վերաբերում է փարիսեցիների հետ համատեքստային հակամարտությանը և, ամենակարևորը, ինչ վերաբերում է դատական գործին՝ ընդդեմ Իսրայելի: Աստվածաբանական եզրույթները (նյութերը), որ այստեղ գտնվում են, հետևյալն են. բաներ, որ կորած են, բաներ, որ ապաշխարության կարիք ունեն և ուրախություն՝ փրկությունից հետո: Կորած բաներն ակնհայտ են, թեև այս առակում մենք շատ ավելի մարդկային տեսակետ ենք տեսնում, թե ինչու են դրանք կորել. ունեցվածքը վատնելու և շռայլելու պատճառով: Սակայն ոչ թե ունեցվածք ընդհանրապես, այլ՝ ժառանգությունը: Սա հստակ կապ ունի Ուխտի թեմայի հետ: Երկու որդիներն էլ ժառանգության իրավունք ունեն: Անառակ որդին պարզապես ժամանակից շուտ պահանջեց իրենը և փչացրեց այն: Անառակ որդին ամեն բան մսխեց և, վերջնական արդյունքում, ստիպված էր ծառայության մտնել ինչ-որ մեկի մոտ: Նրա պատրաստակամությունը՝ արածեցնելու խոզերին, որոնք հրեաների համար անմաքուր կենդանիներ էին համարվում, ցույց էր տալիս, որ նա թողել էր ոչ միայն իր հորը, այլ նաև հավատը: Նա իրոք կորսված էր:

Սակայն նա եկավ մի կարևոր գիտակցության, որ խոզերն իրենից լավ էին սնվում: Սա ապաշխարության սկիզբն է. գիտակցել սեփական իրավիճակի աղետալիությունը: Այնուհետև որդին գիտակցեց, որ իր հոր ծառաներն իրենից լավ են ապրում, և սա փոխեց նրա կյանքը: Նա կվերադառնա, կխոստովանի իր մեղքերը և ինքն իրեն կառաջարկի որպես ծառա: Սա ապաշխարությունն է. մտքի, սրտի, որոշման և ուղղության փոփոխություն՝ նպատակ ունենալով խոնարհաբար ներկայանալու: Որդին վերադարձավ:

Նրա հայրը հեռվից տեսավ նրան վերադառնալիս, որը նշանակում է, որ հայրը մշտապես հսկում էր ճանապարհը՝ փափագելով այն օրվան, երբ իր կորսված որդին կվերադառնար տուն: Նա վազեց, գրկեց որդուն և սկսեց նվերներ շաղ տալ նրա վրա: Եվ ճիշտ ինչպես կորած ոչխարի ու մետաղադրամի դեպքում, այստեղ էլ հայրը խնջույք է կազմակերպում, որպեսզի տոնի:

Հիմա արդեն ավագ որդին է բարկացած շնորհի այս առատ հեղման պատճառով: Սա ուղղակի զուգահեռ է փարիսեցիների վերաբերմունքին, ովքեր հենց նոր էին մեղադրել Հիսուսին մեղավորներին ընդունելու համար (15.2): Նրանց գրգռել էր Նրա շնորհը՝

ուղղված այն մարդկանց, ովքեր իրենց կենսակերպով դրան չէին արժանացել: Բայցևայնպես, ավագ որդուն ուղղված հոր պատգամը վերաբերում էր նաև նրանց. դու միշտ ինձ հետ ես եղել, դու ամեն բան կարող էիր վերցնել, բայց երբեք չես վայելել դրանք: Դու մտածում ես միայն գործերի մասին, բայց ոչ երբեք շնորհի ու ողորմածության: Կարճ ասած, հոր խոսքը հրաշալի ձևով պատկերում է այն մեղադրանքը, որ մինչև այս պահը մի քանի անգամ արդեն նկատել ենք. փարիսեցիներն անտեսում էին Օրենքի ավելի ծանրակշիռ բաները (ողորմություն և հավատ), որպեսզի խստորեն պահպանեին անկարևոր մանրամասնությունները (մանրուքները):

Մենք այստեղ կարող ենք նկատել վեր բարձրացող նաև այլ թեմաներ: Առաջին, անառակ որդու կորսվելն ու վերադառնալը երկու անգամ բնութագրվում է որպես մեռնել և հարություն առնել (հհ. 24, 32): Սա հոր կողմից միանգամայն չափազանցություն է(գրականական ձևով??)՝ նկարագրելու իր անհոգ որդու վերադարձը: Սա կարելի է հասկանալ միայն որպես Ուխտի հետ կապված խոսելաոճ, որը Հիսուսը դիտմամբ ավելացնում է այս պատմության մեջ: Սրանք Իսրայելի ճշմարիտ ընտրյալներն էին, որոնք կորսված էին մեղավորների ու մաքսավորների բազմության մեջ: Ճիշտ նույն ձևով Եզեկիելն է պատկերում Իսրայելի վերադարձը Բաբելոնից՝ որպես մարդկանց հարություն գերեզմաններից (Եզեկ. 37.1-14), այնպես որ Հիսուսն էլ կարող էր այդ նույն ձևով նկարագրել Իսրայելի ընտրյալ մնացորդի հավաքվելն Իր օրերի հրեաների միջից (Այս համարների մեկնաբանության մեջ մենք պետք է շատ զգույշ լինենք: Շատերը այս պատմությունը վերցնում են և հասկանում այնպես թէ կարծես հավատարիմ և բարոյական որդին մերժվում է իսկ անբարոն հեշտ ու հանգիստ կերպով շահում է: Սա սխալ մեկնաբանություն է քանի որ այս համարում Քրիստոսը փարիսեցիների և անհավատ Իսրայելացիների մասին է խոսում, որպես ազգ: Մեկ այլ տեղ, Գործք. 10.9-16-ում, Երբ Աստված Պետրոս առաքյալին տեսիլք է ցույց տալիս որում նա Պետրոսին հրամայում է որ իր դեմ դրված անմաքուր կենդանի անասուններին և սողուններին սպանի և ուտի: Այս համարն էլ մարդիք մեկնաբանում են որ կարծես թէ Աստված մեզ հրամայում է որ ոչ մի մարդու պիղծ չհամարենք: Այս համարում, մեկ անգամ ևս, Աստված ազգերի մասին է խոսում, և ոչ թէ անձերի: Աստված Պետրոսին ուզում է ցույց տալ որ նա, որպես հրեա, ոչ մի օտար ազգի անմաքուր չհամարի, հրեաների հետ համեմատ:

Առակաց և Սաղմոսների գրքերը, ինչպես նաև օրհնության ուխտերի պայմանները կարդալով մենք պարզ կերպով տեսնում ենք որ բարոյականներն ու իրենց կրքերը զսպողներն են որոնց Աստված նախասահմանել է որ իշխեն և բարգավաճեն և կյանքը կայուն կերպով վայելեն: Ու նույնիսկ այն դեպքում երբ տասնյակ տարիներ շարունակ անձը ապաշխարած է, շատերի մոտ անցյալի մեղքերի ծանր հետևանքները իրենց մեջ են մնում, երբեմն մինչև իրենց կյանքի վերջ՝ մարմնական հիվանդությունների միջոցով, անցյալից մնացած անվերջ ֆինանսական խնդիրներով, անվերադարձ կորցված ամուսնությունով, կործանված ընտանիքով և այլն: Այս համարների ամենակարևոր դասն այն է որ մենք Աստծո սահմանած բարոյական օրենքները չենթարկենք մեր մշակութային, ազգային, տեղական բարոյական օրենքներին և կյանքը դրանցով դատենք. Գլխ. Խմբ.՝ Ա.Խ.):

Երկրորդ, տոնախմբության թեման երևում է այս երեք առակներից յուրաքանչյուրում: Առաջին երկուսում ընդամենը նշված է, որ փնտրողներն ու գտնողները կանչում են իրենց բարեկամներին ու հարևաններին՝ միասին ուրախանալու: Իսկ անառակ որդու առակում սա նկարագրվում է որպես իրական խնջույք, ավագ որդու անհամաձայնություն և տոնելու վերաբերյալ հոր բացատրությունը. «Պետք է» (հ. 32): Յուրաքանչյուր դեպքում ուրախությունը բխում էր ապաշխարության՝ կորսվածի հարության, ոչ թե մնացած «չկորսվածների» ներկայության փաստից: Ղուկասի Ավետարանի նախորդ հատվածի ուսումնասիրության լույսի ներքո, որտեղ մենք լսեցինք Արքայություն տանող նեղ դռան (13.22-30) և մեծ խնջույքի առակի (որը հնչեց ի պատասխան Աստծո Արքայությունում հաց ուտելու վերաբերյալ փարիսեցու ասածին) մասին, արժե այս ուրախանալն ու տոնելը կապել մնացորդի՝ Արքայության օրհնության մեջ մտնելու գաղափարի հետ: Դեպքերից յուրաքանչյուրում կորսված մնացորդի հարությունն է արժանի պատճառ հանդիսանում տոնախմբության համար:

Այն, որ հայրն ավագ որդու դիմաց պաշտպանում է տոնելու ճիշտ պատճառը, ցույց է տալիս, որ ավագ որդին նույնպես ապաշխարության կարիք ուներ: Ճիշտ ինչպես մեծ խնջույքի առակի բոլոր հրավիրյալները բոլորը մերժեցին ներս մտնել (14.18-20), այնպես էլ ավագ որդին (15.28): Բայցևայնպես, մենք չենք կարդում, որ ավագ որդին երբևէ ապաշխարեց և միացավ ուրախությանը: Նախորդ

առակներին և փարիսեցիներից կազմված լսարանին նայելով՝ կարծում եմ, կարելի է հետևություն անել, որ նա չապաշխարեց: Նա կհամառեր չներող հոգով և, մերժելով ընդունել կորսված և վերադարձած որդուն, կմերժեր նաև հոր կամքը: Սա ճիշտ այն է, ինչ տեղի կունենար փարիսեցիների, ինչպես նաև մնացած ողջ Իսրայելի հետ: Եվ շուտով նրանք էլ իրենք իրենց կգտնեին խնջույքից դուրս, կատարելապես արգելափակված:

Անիրավ տնտեսի առակը (Ղուկաս 16.1-13)

Այնուհետև Հիսուսն առիթն օգտագործում է՝ Իր աշակերտներին ևս մեկ արժեքավոր դաս սովորեցնելու համար: Նկատեք, սակայն, որ այստեղ Նա փոխում է Իր լսարանը: Սա լսող ականջների համար էր, ոչ թե միայն կործանիչ դատաստանին արժանի անհավատ «մյուսների» (Ղուկ. 8.10), ովքեր լսելով չէին լսում: Այստեղ մենք Հիսուսի ամենահայտնի առակներից տեղափոխվում ենք դեպի Նրա ամենաշփոթեցուցիչ առակին: Բայց դա այդպես չպետք է լինի, այլ այս նոր դասը պարզապես վերաբերում է աշակերտների կարիքին՝ պատրաստվելու, երբ հաշվետվության օրն իրոք գար: Հիսուսն ասում է.

> «Նա նաև ասաց իր աշակերտներին. «Մի հարուստ մարդ կար, ով մի տնտես ուներ, որի համար մեղադրանքներ եղան, որ վատնում է նրա ունեցվածքը: Նա կանչեց նրան ու ասաց. «Այս ի՞նչ եմ լսում քեզ համար: Տուր քո տնտեսության հաշվետվությունը, քանի որ այլևս չես կարող տնտես լինել»: Եվ տնտեսն ինքն իրեն ասաց. «Ի՞նչ անեմ, քանի որ տերս տնտեսությունը վերցնում է ինձանից: Ես այնքան ուժեղ չեմ, որ փորեմ, և ամաչում եմ, որ մուրամ: Ես որոշեցի, թե ինչ կանեմ, որ երբ իմ տնտեսությունից դուրս հանվեմ, մարդիկ ինձ ընդունեն իրենց տուն»: Այսպիսով, մեկ առ մեկ կանչելով իր տիրոջ պարտապաններին, առաջինին ասաց. «Ինչքա՞ն ես դու իմ տիրոջը պարտք»: Նա ասաց. «Հարյուր չափ ձեթ»: Նա ասաց նրան. «Վերցրու քո պարտամուրհակը, արագ նստիր ու գրիր հիսուն»: Հետո ասաց մյուսին. «Իսկ դու՞ ինչքան ես պարտք»: Նա

> ասաց. «Հարյուր չափ ցորեն»: Ասաց նրան. «Վերցրու մուրհակդ ու գրիր ութսուն»: Տերը գովեց անիրավ տնտեսին իր խորագիտության համար: Որովհետև այս աշխարհի որդիներն ավելի խորագետ են իրենց սերնդի հետ վերաբերվելիս, քան լույսի որդիները: Եվ ես ձեզ ասում եմ, անիրավ հարստությունից ձեզ համար ընկերներ արեք, որպեսզի երբ այն վերջանա, նրանք ձեզ ընդունեն հավիտենական բնակարանները» (Ղուկ. 16.1-9):

Այս հատվածն ակնհայտորեն բարդ է: Դժվարությունն առաջանում է, երբ տնտեսը (բառացի՝ «տան ղեկավարը». —oikonomos) հստակ կոչվում է «անիրավ» (adikias), սակայն տերը գովում է նրան իր արարքի համար: Սակայն այն ավելի է դժվարանում, երբ Հիսուսն Իր աշակերտներին կոչ է անում ընկերներ ձեռք բերել «անիրավ» (նորից adikias) հարստությունից: Մարդիկ դարեր շարունակ ապշել են՝ հարցնելով, թե իրո՞ք Հիսուսը մեզ կոչ է անում օրինակ վերցնել խարդախ մարդուց: Բարոյական ի՞նչ լավ դաս կարող է թաքնված լինել այս պատմության հետևում: Տիպիկ պատասխանները եղել են հետևյալը, որ մենք կոչված ենք՝ անիրավ տնտեսի նման խելացի լինելու: Հիսուսն Իր աշակերտներին մեկ ուրիշ տեղում սովորեցնում է. «Ահա, ես ձեզ ուղարկում եմ ինչպես ոչխարներ գայլերի մեջ: Ուրեմն, իմաստուն եղեք օձերի պես, և անվնաս աղավնիների պես» (Մատթ. 10.16): Այս վերջին համարը կապ ունի գաղափարի հետ, սակայն ամբողջական պատասխանը, կարծես, չի կարողանում բացատրել, թե ինչ կապ ունի սա «երկնային բնակարաններում» ընդունվելու հետ, այն էլ անարդար հարստությամբ ձեռք բերված ընկերների կողմից, որ կարծես թե այս առակի վերջնական եզրակացությունն է: Այստեղ այս պատմության հետ կապված ավելին կա, քան մինչև հիմա մենք հասկացել ենք:

Իրականում, նայելով նախկին առակներին, և հատկապես Երուսաղեմի արագահաս կործանման համատեքստում, այս ամբողջ դասը միանգամայն իմաստալից է դառնում: Իսրայելը մեղադրվում էր իր անհավատարմության համար, ավելին, իր անարդարության համար: Իրականում, Հիսուսը հենց նոր էր օգտագործել այդ նույն տերմինը՝ հղում անելով Իր ժամանակվա սերնդին, ովքեր թակելու էին փակված նեղ դուռը, երբ արդեն չափազանց ուշ էր

լինելու: «Ասում եմ ձեզ… Հեռացեք ինձանից, բոլոր անօրենություն գործողներդ» (Ղուկ. 13.27): Քանի որ այս adikias բառը տարածված չէր, նույն տեղում կրկնվելը չպետք է աչքաթող անել: Իսրայելին վստահվել էր Աստծո օրինությունները, ինչպես Պողոսն է ասում. «Իսրայելին էր վստահվել Աստծո պատգամները… Նրանց է պատկանում որդեգրությունը, փառքը, ուխտերը, օրենքի տրվելը, երկրպագությունը և խոստումները» (Հռոմ. 3.2, 9.4): Սակայն մենք գիտենք, որ «անտեղյակ լինելով Աստծո արդարությանը և փորձելով հաստատել իրենց սեփական արդարությունը, նրանք (հրեաները) չհնազանդվեցին Աստծո արդարությանը» (Հռոմ. 10.3): Այլ կերպ ասած, նրանց վստահվել էր Աստծո տնտեսությունը, սակայն նրանք անիրավ տնտեսներ էին եղել: Ինձ համար շատ պարզ է, երբ լսում եմ, որ Իսրայելն է այդ անիրավ տնտեսը: Պողոսի հետագա ուսուցումներն օգնում են սա հաստատելու, թեև դրանք ուղղակի հղումներ չեն այս առակն այդ ձևով հասկանալու համար:

Առակը հստակ ասում է, որ եկել էր հաշվետվության ժամանակը: Տնտեսի խաբեբայությունները երևան են հանվում: Տանտերը նրան հաշվի է կանչում և գործից դուրս է անում: Սա նշանակում է, որ Աստծո և Իսրայելի միջև եղած փոխհարաբերությունները խզվում են. Իսրայելը շուտով գործազուրկ է դառնալու: Բայցևայնպես, տանտերը վերջնական հաշվետվություն է պահանջում նրանից: Սա տնտեսին մի փոքր ժամանակ է տալիս, որպեսզի ինչ որ բաներ մշակի՝ ապահովելու իր ապագան: Սա է առակը հասկանալու բանալին. տնտեսն անհանգստանում է իր ապագայի համար, բառացիորեն ասած՝ ապրելու տեղ է փնտրում: Նա ասում է. «Ես որոշեցի, թե ինչ կանեմ, որ երբ իմ տնտեսությունից դուրս հանվեմ, մարդիկ ինձ ընդունեն իրենց տուն» (16.4): Պահի տակ նրա միտքը «լուսավորվում» է, հասկանալով, որ դեռևս ժամանակ ունի իր տիրոջ բազմաթիվ պարտապանների մոտ շնորհ գտնելու: Երբ նա, տանտիրոջ պահանջով, պատրաստ էր վերջնահաշվարկի, արդեն էականորեն պակասեցրել էր պարտապանների պարտքերը: Սրանով նա ակնհայտորեն շնորհ էր գտել պարտապանների մոտ, քանի որ դրանք մեծ պարտքեր ունեցող մարդիկ էին: Տնտեսը հիմա ամենուրեք շատ երջանիկ ընկերներ ուներ, որոնք հիմա, կարծես, իրեն ինչ-որ չափով պարտական էին: Տանտերն իմանալով, թե ինչ է արել տնտեսը, գովում է նրան. ոչ թե ընդհանրապես, այլ որ տվյալ դեպքում խորագետ գտնվեց: Կարճ ժամանակում նա ինքն իրեն ազատեց

անտուն մնալուց, որն անխուսափելիորեն գալու էր հաշվետվության օրվա պատճառով:

Հիսուսն այստեղ բացատրական նշում է անում. «Որովհետև այս աշխարհի որդիներն ավելի խորագետ են իրենց սերնդի հետ վերաբերվելիս, քան լույսի որդիները» (16.8): Մինչդեռ ես սովորաբար հետևում եմ Աստվածաշնչի ESV(English Standard Version) թարգմանությանը. այնտեղ aion բառը «ժամանակաշրջան» բառի փոխարեն սխալմամբ թարգմանվել է «աշխարհ»: Ժամանակակից թարգմանությունների մեծ մասն ուղղում է այդ սխալը: Կարելի էր ավելի պարզ ու ավելի ճշգրիտ թարգմանել հետևյալ կերպ. «Որովհետև այս ժամանակաշրջանի որդիներն ավելի խորագետ են իրենց սերնդի հետ վերաբերվելիս, քան լույսի որդիները»: Նա հստակ հղում է անում «ժամանակաշրջանին», որ մոտենում էր իր ավարտին (որի մասին մենք նախկինում քննարկել ենք) և այդ սերնդի որդիներին (Մեկ անգամ ևս, սա շատ կարևոր մեկնաբանություն է: Հիսուսը Իր ներկա ժամանակաշրջանի անհավատներին է կոչում ավելի խորագետ, համեմատած միամիտ հավատացյալների: Իհարկե երբ Աստծո արքայությունը Քրիստոսի առաջին գալուստից հետո սկսեց տարածվել ու հայտնության հսկայական աճ գրանցվեց, նոր կտակարանի գրվածների միջոցով, այս դեպքում հավատացյալները սկսեցին ավելի խորագետ լինել համեմատած անհավատների: Սա վկայում է վերջին 2000 տարվա աշխարհի պատմությունը: Ու եթե մենք նայենք ներկայիս աշխարհի միակ ճշմարիտ քրիստոնեություն՝ բողոքական քրիստոնեություն ունեցող երկրներին (այն երկրներին որտեղ բողոքականները մեծամասնություն են կազմում), ապա պարզ կարող ենք տեսնել որ 18-21-րդ դարի գրեթե յուրաքանչյուր գիտական հայտնագործություն և հաջողակ ու բարգավաճ հասարակություն ու տնտեսություն ունեցողները բողոքական հավատացյալ երկրներն են: Ցավոք սրտի մարդիք նորմալ երևույթ են համարում երբ այսօրվա եկեղեցին լի է միամիտներով, աղքատներով, և տգեղներով): Նա նաև հստակ ասում է, որ աշակերտները պետք է պատրաստակամ լինեին որոշ կարճաժամկետ կորուստներ կրելու՝ հանուն երկարաժամկետ օգուտների և ապահովության՝ մոտ ապագայում: Այս պարագայում խելամիտ կլիներ բազմաթիվ վայրերում աշխարհի խորագիտությամբ օժտված ընկերներ ունենալ, ովքեր կարող էին օգնել, կամ բարոյական պարտավորություն ունենալ օգնելու, երբ տեղահանվելու ժամանակը գար:

Դրանից հետո Հիսուսը հստակ ուղղություն է ցույց տալիս. «Եվ ես ձեզ ասում եմ՝ անարդար հարստությունից ձեզ համար ընկերներ արեք, որպեսզի երբ այն վերջանա, նրանք ձեզ ընդունեն հավիտենական բնակարանները» (16.9): Հիսուսը չի ասում, որ մտնեն անարդար գործարքների մեջ, ոչ էլ որ աշխարհի բոլոր հարստություններն իրենց էությամբ «անարդար» են: Նա Իր աշակերտներին պարզապես ցուցում է տալիս ընկերներ ձեռք բերել այդ խորագետ գործարարների շուկայում: Մի բան, որ հենց Հիսուսն էր անում, և որի համար փարիսեցիները քննադատում էին Նրան (15.2): Նա գիտեր, որ Իր աշակերտները մոտ ապագայում կարիք էին ունենալու մարդկային կապերի, ովքեր գիտեին, թե ինչպես գործել հատուկ պայմաններում, գիտեին նրբանցքները և կարող էին օգնել ընդհատակյա շարժման ժամանակ: Կարևոր շեշտադրումն այստեղ ընկերների և ծանոթների կապերի վրա է, ոչ թե պարտքերը գրելու կամ գումարի վրա: Սա պարզ է դառնում տեքստից, որ գումարը կվերջանա, բայց «երբ այն վերջանա», ընկերությունը կմնա, որը կպարզվի անգնահատելի է: Ճիշտ ինչպես առակի տնտեսն է ընկերներ գտնում, որպեսզի նրան ընդունեն իրենց տները, Հիսուսն Իր աշակերտներին ասում է, որ նրանք էլ ընկերներ գտնեն «անարդար հարստությունից», այսինքն՝ մեղավորների, մաքսավորների և հեթանոսների մեջ, որպեսզի իրենց ընդունեն «հավիտենական բնակարանները»:

Ուրեմն, ի՞նչ են «հավիտենական բնակարանները»: Նախքան այս հարցին պատասխանելը, եկեք նորից նայենք լսարանի կարևորությանը:

Հաշվի առեք, որ Հիսուսն այս առակը պատմում է հատկապես Իր աշակերտների համար, ոչ թե ուղղակի փարիսեցիների (թեև նրանք ականջ էին դնում, ինչպես մենք տեսանք) կամ բազմության: Այս ուսուցումն ուղղված է ընտրյալ մնացորդին, ոչ թե նրանց, որ սահմանված էին կործանման: Եվ չնայած առակի մեջ անիրավ տնտեսը ներկայացնում է անհավատարիմ Իսրայելին, առակի բարոյական խրատին կհետևեր միայն անհավատարիմ Իսրայելի մեջ եղած ընտրյալ մնացորդը: Աշակերտները, ամեն դեպքում, կանցնեին անիրավ տնտեսի կործանման (գործազրկության) միջով, և նրանց համար, երբ ժամանակը գար, փրկարար շնորհ կլիներ քաղաքից դուրս գալը, որպեսզի խուսափեին վերջնական կործանումից (ԶՀ 70 թվին) և գոյատևեին մինչև վերջ: Նրանց համար խոստումը կլիներ կրկնակի. «Բայց ով մինչև վերջ համբերի, կփրկվի» (Մատթ.

10.22, 24.13): Այսպիսով, երբ հաշվետվության օրը գար ողջ Իսրայելի վրա, միայն մնացորդը դուրս կգար ու կազատվեր: Այս ուղերձը լիովին համապատասխան է անիրավ տնտեսի առակի, ինչպես նաև մյուս բոլոր առակների հետ, որ Հիսուսը պատմել էր Իր ճանապարհորդության ընթացքում մինչև այս պահը: Սա նաև հանդիսանում է պատասխան փարիսեցիների քննադատությանը (15.2), բացառությամբ, որ վերջին հատվածը վերաբերում էր միայն ընտրյալներին: Նրանք, և միայն նրանք, ապրելու նոր տեղ կփնտրեին, ինչպես նաև նոր կապեր և «ընկերներ», գալիք ժամանակաշրջանի համար: Իսկ անհավատարիմ Իսրայելը կմահանար, գերի կգնար, կամ կթողնվեր շներին, իսկ Երուսաղեմն ինքը հողին կհավասարեցվեր:

Այսպիսով, սա իմաստ է ստանում, քանի որ աշակերտները շուտով բառացիորեն նոր բնակավայր էին փնտրելու իրենց համար: Իսկ ի՞նչ ասենք «հավիտենական» բնակավայրերի մասին: Նայենք բուն արտահայտությանը: Թեև «հավիտենական» բառը՝ aionios հաճախ պետք է թարգմանել որպես «հավիտենական» կամ «հավերժական», դժվար թե սա տիեզերական նշանակություն ունենար: Իրականում, սա բարեկամ բառ է aionos-ի հետ, որ սովորաբար թարգմանվում է որպես «ժամանակաշրջան»: Ամենակարևորը, այս բառը հաճախ է օգտագործվում հունարեն Հին Կտակարանի (Սեպտուագինտա) մեջ, հատկապես հին ուխտի համակարգի պաշտամունքի բաղկացուցիչների մասին խոսելու. բաներ, որ մենք փաստացի գիտենք, որ դադարել են: «Հավիտենական» (բառը պետք է որ այդ իմաստն ունենար) համարվող բաների ցանկը բավականին մեծ է: Այն ներառում է. Ձատկի տոնը (Ել. 12.14,17), ձիթապտղի յուղով ճրագակալը խորանում (Ել. 27.20-21), քահանայի հատուկ հագուստները (Ել. 28.43), քահանայական զոհաբերությունները (29.28) ծիսական լվացումները (Ել. 30.21) և Հին Կտակարանի շաբաթը (Ել. 31.16, 17), և սրանք հղումներ են միայն Ելից գրքից: (Տես նաև Ղևտ. 6.11, 15, 7.34, 36, 10.9, 15, 16.29, 31, 34, 17.7, 23.14, 21, 31, 41, 24.3, 8, 9, 25.34, Թվ. 10.8, 15.15, 18.8, 11, 19, 23, 19.10, 23, 25.13): Իրականում, գրված է, որ Ահարոնի քահանայությունը նույնպես aionia է (Թվ. 25.13), սակայն մենք գիտենք, որ Մելքիսեդեկի կարգի Հիսուսի քահանայությունը (Եբր. 7) փոխարինեց Ահարոնի քահանայությանը, և Եբրայեցիների թուղթը սովորեցնում է, որ հին ուխտի քահանայական այս բոլոր կարգադրությունները չեղարկվել են: Ուրեմն ինչպե՞ս դրանք կարող էին բառացիորեն «հավիտենական»

կոչվել՝ բառի անվերջանալի իմաստով:

Պատասխանն այն է, որ դրանք հավիտենական չէին այդ իմաստով, այլ միայն պատկանում էին հին ուխտի այդ երկար «ժամանակաշրջանին»: Դրանք «չընդհատվող» էին այդ ժամանակաշրջանի ընթացքում: Այս ձևով օգտագործվող այս բառը լավագույնս կարող էր թարգմանվել որպես «շարունակական»: Մենք այս ձևով պետք է հասկանանք Քրիստոսի արտահայտությունն այստեղ. որպես ուխտի ժամանակաշրջանում չընդհատվող, հատկապես գալիք ժամանակաշրջանում: Աշակերտները պետք է պատրաստվեին ուխտի իրականացման հետ կապված փոփոխությունների. ներառյալ տաճարի և հին ուխտի համակարգի կործանմանը, և այսպիսով, միջոցներ գտնեին շարունակական բնակարաններ ունենալու համար:

Այդ արտահայտության երկրորդ բառը ճիշտ նույնքան հետաքրքիր է: Մինչդեռ առակի տնտեսը հույս ուներ, որ իրեն կընդունեին մարդկանց տները (հունարեն՝ oikous), աշակերտները պետք է գտնեին շարունակական «բնակարաններ» (հունարեն՝ skenas): Առաջին բառը՝ oikous, «տուն» բառն է, որ մենք ըստ էության այսօր էլ ենք օգտագործում: Վերջին բառը՝ skenas, որը վերաբերում էր աշակերտների ապագային, հիմնականում վերաբերում էր ժամանակավոր բնակարաններին, օրինակ՝ վրաններին (Մատթ. 17.4, Մարկ. 9.5, Ղուկ. 9.33, Եբր. 11.9), և մասնավորապես Հին Կտակարանի խորանին (որ ինքնին մեծ վրան էր: Տես Գործք. 7.44, Եբր. 8.5, 9.1–3, 6, 8, 11, 21, 13.10): Գալիք ժամանակաշրջանում մշտական խորանի գաղափարը երևում է Աստվածաշնչի հետագա ուսուցման մեջ՝ կապված «երկնային խորանի» (Հայտ. 15.5, 21.3) հետ, որը վերաբերում է անձամբ Հիսուսին: Հիսուսն Ինքը ժամանակավորապես եկավ «խորան» (խորանելու, բնակվելու) (eskenosen) մարմնով մեր մեջ (Հովհ. 1.14): Հիմնական իմաստն այն է, որ այս «շարունակական» բնակարաններն իրենց բնույթով ժամանակավոր են, և դժվար թե «հավիտենական» լինեն»: Այնպես որ մենք «հավիտենական բնակարանների» մասին չպետք է մտածենք որպես ինչ-որ երկնային բաների, այլ որպես «շարունակական խորանների». մի վայր, որտեղ աշակերտները կբնակվեին ժամանակաշրջանների փոխարինվելու ընթացքում:

«Խորան» գաղափարը կարելի է հասկանալ որպես մարմնեղեն բնակարան, մաշկեղեն վրան, կամ ֆիզիկական մարմին: Աշակերտները հավաքվեցին Երուսաղեմում որպես առաջին ընդհանուր

խորհրդաժողով՝ խորհելու Եկեղեցու մեջ հեթանոսների ներգրավման մասին՝ որպես Դավթի խորանի վերականգնման վերաբերյալ մարգարեության իրականացում: Գործք. 15.14-17-ում Հակոբոսը բացատրում է.

> «Սիմոնը (Պետրոսը) պատմեց, թե ինչպես Աստված առաջին անգամ այցելեց հեթանոսներին՝ իր անվան համար նրանցից ժողովուրդ վերցնելու: Եվ այս հարցում մարգարեների խոսքերն էլ են համընկնում, ինչպես գրված է.
>
> «Սրանից հետո ես կվերադառնամ, և կվերականգնեմ Դավթի վրանը (խորանը, skenen), որ ընկել էր: Եվ կվերակառուցեմ դրա ավերակները և կվերականգնեմ այն, որպեսզի մարդկության մնացորդը Տիրոջը փնտրի, և բոլոր հեթանոսները, որոնք իմ անունով են կանչված»,- ասում է Տերը, ով հնուց ի վեր անում է այս գործը»:

Այս մարգարեությունն Ամովսի 9.11-12 հատվածից է, որն այն ժամանակ վերաբերում էր Իսրայելի ապագա վերականգնմանը (9.11-15): Հակոբոսը Նոր Կտակարանի Եկեղեցին, ներառյալ հեթանոսների ներգրավումը, նկատում է որպես Դավթի խորանի՝ Իսրայելի ճշմարիտ մնացորդի, վերականգնման իրականացում: Ես միանգամայն վստահ եմ, որ Հիսուսը մտքում հենց այս մնացորդը նկատի ուներ, երբ Իր աշակերտներին ցուցում տվեց շարունակական բնակարաններ փնտրել «անարդար» մամոնայի՝ հեթանոսների մեջ: Նա սա ակնկալում էր և՛ բառացիորեն, և՛ աստվածաբանորեն: Հակոբոսի թուղթը, Գործք Առաքելոցը, Հայտնությունն ու Եբրայեցիների թուղթը ցույց են տալիս, որ դա իրականում կատարվեց:

Այս առակը, որ սովորաբար շփոթություն է առաջացնում, պարզ է դառնում ընդունելով, որ 1) այն վերաբերում էր աշակերտներին 2) Երուսաղեմի գալիք կործանման համատեքստում: Իրականում, սա կապ ունի մի երևույթի հետ, որ մենք մեկ անգամ չէ, որ արդեն նշել ենք. Հիսուսի աշակերտները վաճառում են Երուսաղեմում ունեցած իրենց ունեցվածքը և բաժանում իրենց մեջ եղած կարիքավոր մարդկանց (Գործք. 2.44-45, 4.32-37): Հստակ է, որ նրանք նախապատրաստվում էին անմիջապես հեռանալ քաղաքից,

երբ հաշվետվության օրը հասներ, և առաջին մեծ խորհրդաժողովից հետո նրանք պաշտոնապես համաձայնեցին փոխհարաբերություն զարգացնել հեթանոսների հետ այդ կարճ ժամանակահատվածում՝ նախքան անհավատարիմ Իսրայելի վերջնական ոչնչացումը:

Ամուսնալուծություն և ժառանգությունից զրկում (Ղուկաս 16.14-31)

Հստակ է, որ փարիսեցիները հասկացան, թե ինչ էր Հիսուսն ասում, քանի որ նրանք «ծաղրեցին Նրան» (Ղուկ. 16.14): Միանշանակ է, որ նրանք հասկացան, որ Հիսուսը պաշտպանում է մեղավորների և մաքսավորների հետ Իր շփումը, իսկ հետո նաև աշակերտներին ասում, որ «անարդար» հարստությանից իրենց ընկերներ գտնեն: «Ծաղրել» բառն այստեղ թարգմանված է հունարեն exemukterizon-ից: Mukter - ը նշանակում է քիթ: Այս բայը բառացիորեն նշանակում է քիթը ցցել, թեև ակնհայտ է, որ այն ընդհանուր իմաստով գործածվում էր՝ նկարագրելու ծաղրելն ու ծանակելը: Սակայն այստեղ այն կարող էր ավելի բառացի նշանակություն ունենալ. փարիսեցիներն իրենք իրենց մասին մտածում էին որպես չափազանց մաքուր, չափազանց արդար մարդիկ, որոնք չէին կարող խառնակվել «մեղավորների» հետ, քանի որ չէին համապատասխանում իրենց չափանիշներին: Նրանք շրջում էին բառացիորեն քթները ցցած այդ մարդկանց հանդեպ, իսկ հիմա էլ նույնն արեցին Հիսուսի հանդեպ, ով ընկերություն էր անում մեղավորների հետ:

Արքայությունը և ամուսնալուծությունը

Հիսուսի վերաբերմունքը ցույց է տալիս, որ հենց այս հպարտությունն ու ամբարտավանությունն էր հանդիսանում այս փարիսեցիների մեղքը: Հիսուսի արձագանքը երկպատիկ է. առաջին հատվածն ուղղակի հղում է Օրենքին, իսկ երկրորդ հատվածը՝ առակ: Առաջինում Նա նրանց ասում է.

> «Դուք եք, որ ինքներդ ձեզ արդարացնում եք, բայց Աստված գիտի ձեր սրտերը: Որովհետև այն, ինչ բարձր է մարդկանց մեջ, զզվելի է Աստծո առաջ: Օրենքն ու Մարգարեները մինչև Հովհաննեսն էին: Դրանից հետո

> Աստծո արքայության բարի լուրն է քարոզվում, և ամեն մեկն բռնի ուժով իր ճանապարհն է հարթում՝ մտնելու դրա մեջ: Սակայն ավելի շուտ երկինքն ու երկիրը կվերանան, քան Օրենքից մի փոքրիկ նշանագիր կվերանա: Ամեն ով որ ամուսնալուծվում է իր կնոջից ու ամուսնանում է մեկ ուրիշի հետ, շնություն է անում, և նա, ով ամուսնանում է մի կնոջ հետ, ով ամուսնալուծվել է իր ամուսնուց, շնություն է անում» (Ղուկ. 16.15-18):

Դրանից անմիջապես հետո Հիսուսը առաջ է գնում՝ մտնելու հարուստի ու Ղազարոսի առակի մեջ: Մենք շուտով կքննարկենք այս առակը, սակայն այս պահին կարևոր է նկատել Հիսուսի պատասխանի շարունակականությունը 15-ից մինչև 31 համարը ներառյալ: Իրականում, այս ողջ տեսարանի համատեքստը ձգվում է 15.1-ից մինչև 17.10-ը ներառյալ, և ընթերցողը պետք է փորձի մեկնաբանել այդ հատվածում գտնվող ամեն բան, որպես միևնույն համատեքստի մաս: Սակայն ներկա պահին Հիսուսի հակամարտությունը գտնվում է 14-31 համարների մեջ, և պետք է հասկանալ որպես մեկ ամբողջական պատասխան: Սա կարող է մի փոքր խնդրահարույց թվալ, որ Հիսուսը հաճախ է մի թեմայից արագ անցնում մեկ ուրիշ թեմայի. սկզբում՝ փարիսեցիների հպարտություն, հետո՝ Օրենք ու Մարգարեներ, հետո՝ յոթերորդ պատվիրան, իսկ հետո՝ երկինք ու դժոխք: Սակայն այս ձևով նայելը կնշանակի բաց թողնել հիմնական մտքի թելը, որ կապում է ամբողջ պատասխանն իրար հետ, իսկ մյուս կողմից էլ, մենք չենք կարող մեղադրել մեր Փրկչին, որ Նա, Ինքը լինելով Օրենքի Հեղինակը, կարող էր անհետևողականություն ցուցաբերել խոսքի մեջ: Ընդհակառակը, մենք պետք է տեսնենք ընդհանուր թեման, որից կախվում են այս բոլորը, և դա հետևյալն է. փարիսեցիները (ավելի ճիշտ՝ Իսրայելը) անտեսում են Աստծո Օրենքը հանուն նրա, որ լինեն ընդհամենն այդ Օրենքը պահողները, և կա գալիք դատաստան, երբ Աստված կդատի նրանց ըստ իրենց սրտերի ապականվածության աստիճանի (այլ կերպ ասած, Աստված օրենքը մարդուն տվել էր մարդու բարեկեցության, լավության համար, որպեսզի մարդ այդ պահեր և բարգավաճեր, և ոչ թէ պահեր հենց այնպես, պահելու համար, օրինապաշտական ձևով: Օրինակ՝ շաբաթի /կիրակիի/ հանգստյան օրենքը տրվել էր մարդուն որպեսզի մարդ այդ մեկ օրը

Աստծուն հատկացնի, հանգստանալով: Հանգստանալ չի նշանակում ամբողջովին գործունեությունից դադարել, անջատվել, բնավ ոչ: Հանգստանալը հենց ինքնին գործ է: Սա Աստված մարդուն չի տվել որ մարդը ուղղակի մեկ օր չաշխատի և մնա տունը, այլ, որ նա այդ մեկ օրը հանգստանա, ուրախանա, քաջալերվի, հաշվետվություն անի անցյալ կիրակիի և հաջորդ շաբաթվա համար: Սա տրվել էր մարդու օգտի համար, սա ստեղծվել էր մարդու համար, և ոչ թէ մարդը շաբաթի համար. Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.): Որպեսզի տեսնենք, թե ինչպես է այս թեման շարունակաբար կրկնվում, եկեք ուսումնասիրենք Հիսուսի խոսքի առաջին հատվածը.

Առաջին, Հիսուսը պատասխանում է՝ հանդիմանելով նրանց արծաթասիրությունը: Տեքստը մեզ արդեն բացահայտ ասել էր, որ նրանք «արծաթասեր» էին: Բառացիորեն այս բառը նշանակում է «փող սիրողներ» (philarguroi), նույն բառն է նաև օգտագործված 1 Տիմոթեոս 6.10-ում. «Փողասիրությունը բոլոր չարիքների արմատն է»: Նրանց համար Հիսուսին ծաղրելու առիթ էր հանդիսացել անիրավ տնտեսի առակին ականջ դնելը. Հիսուսը հենց նոր էր Իր աշակերտներին ասել, որ ավելի լավ է կորցնել գումարը, քան ընկերներ չունենալ: Ով կարող է այս աշխարհում ուսուցանել, որ մենք երբեմն պետք է ներենք մարդկանց պարտքերը (Ղուկ. 11.4): Այս փարիսեցիները ոչ մի պատկերացում չունեին, թե որքան խորն է իրականում փողի և պարտքի թեման: Նրանք ապրում էին լոկ արտաքին երևույթով, իսկ հիմա Հիսուսը մերկացրեց նրանց. «Դուք եք, որ ինքներդ ձեզ արդարացնում եք, բայց Աստված գիտի ձեր սրտերը: Որովհետև այն, ինչ բարձր է մարդկանց մեջ, զզվելի է Աստծո առաջ» (16.15):

Երկրորդ, Հիսուսը կրկնում է Արքայության Օրենքի ճշմարիտ բնույթը (նորից): Օրենքն ու Մարգարեները մինչև Հովհաննեսն էին, դրանից հետո, Աստծո Արքայությունն է քարոզվում (հ. 16): Հիսուսն այստեղ չի ուսուցանում «Օրենքն ավարտվել է և ավելի լավ բան է սկսվել» դասը, քանի որ դա կհակասեր հենց հաջորդ համարին. «ավելի շուտ երկինքն ու երկիրը կվերանան, քան Օրենքից մի փոքրիկ նշանագիր կվերանա» (հ. 17): Ոչ, Հիսուսը պնդում է, որ Արքայությունը շատ ավելի վաղ էր հռչակվել, քան Օրենքն ու Մարագարեները եկան նախքան Հովհաննես Մկրտչի ծառայությունը: Եվ այն հիմա այստեղ էր: Հիմա Օրենքի և Մարգարեների ամբողջությունը հասկանալու ժամանակն էր, սակայն քչերն էին հասկանում: Դրա փոխարեն «ամեն

մեկն բռնի ուժով իր ճանապարհն է հարթում՝ մտնելու դրա մեջ»: Աստվածաշնչի թարգմանության RSV (Revised Standard Version) տարբերակը մի փոքր ավելի լավ է փոխանցում այս համարի հոգին. «ամեն մեկը փորձում է ուժով մտնել այնտեղ»: Սա մեզ հիշեցնում է նեղ դռան դրսի կողմում կանգնած դարպասը ծեծող բազմությունը (13.25): Ապաշխարելու փոխարեն, փարիսեցիները ծաղրում և բեռներ էին դնում մարդկանց վրա: Մի կողմ հրելով մյուսներին, նրանք իրենք իրենց առաջ էին մղում որպես Օրենքի ժառանգներ: Եթե նրանք հասկացած լինեին Օրենքի հոգևոր խորությունը (տես Մատթ. 5-7, Ղուկ. 6.20-26), կհասկանային, որ Աստծո Օրենքը սրտի կատարելություն է պահանջում և, հետևաբար, կտեսնեին, որ իրենք էլ էին կործանված մեղավորներ և կարիք ունեին ապաշխարության:

Չնայած Օրենքի հանդեպ նրանց մակերեսային վերաբերմունքին՝ Աստված դատում է ըստ սրտի խորության (հ. 15): Իսկ այդ կատարյալ Օրենքը հավերժական է. ավելի շուտ երկինքն ու երկիրը կվերանան, քան Օրենքից մի փոքրիկ նշանագիր կվերանա (հ. 17): Իրականում, հրեաները շուտով ականատես էին լինելու, թե ինչպես են իրենց «երկինքն ու երկիրը»՝ Երուսաղեմը, վերանում: Իսկ Երուսաղեմի վերանալը գալու էր որպես այն դատաստանի արդյունք, որը հենց ըստ այն Օրենքի էր, որ այնքան երկար ժամանակ նրանք անտեսել ու չարաշահել էին: Չնայած դեռ ոմանց համար Երուսաղեմը «երկինք ու երկիր» կոչելը կարող է անընդունելի թվալ, Հիսուսն ավելի ակնհայտորեն սա անում է Ղուկաս 21.32-33-ում. Երուսաղեմի գալիք կործանումը վառ կերպով նկարագրելուց հետո, Հիսուսն ավելացնում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, այս սերունդը չի վերանա, քանի դեռ այս ամենը տեղի չի ունեցել: Երկինքն ու երկիրը կվերանան, բայց իմ խոսքերը չեն վերանա»: Սա շատ հստակ հղում է Երուսաղեմին, որն իրականում կվերանար, և դա տեղի կունենար Հիսուսի ժամանակվա սերնդի կյանքի ընթացքում (Մենք կարող ենք հասկանալ որ Հիսուսը Իր ժամանակակից սերնդին էր ասում, որ ԱՅՍ սերունդը չի վերանա, քանի դեռ այս ամենը տեղի չի ունեցել, այսինքն ԱՅՍ սերունդը Երուսաղեմի կործանմանը ականատես էր լինելու: Հիսուսը ասում է ԱՅՍ, և ոչ թէ ԱՅԴ: ԱՅՍ-ը մոտավոր ցուցադրական է, ի հակադրություն ԱՅԴ-ի, որը հեռավոր ցուցադրական է. Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.): Միտքը միանշանակ նույն է, ինչ Ղուկ. 16.17-ում: Օրենքն ինքնին հավիտենական է, որը կհանդիսանա այն չափանիշը, որով Հիսուսը դատապարտելու էր Օրենքի հանդեպ այդ սերնդի կռապաշտական

դրսևորումները:

Դա է պատճառը, թե ինչու է Նա միանգամից անցում կատարում յոթերորդ պատվիրանին: Հիսուսն անփութորեն չի փոխում թեմաները. սա կատարելապես համընկնում է Նրա պատգամի հետ: Սա ամուսնալուծության դատական գործն է ընդդեմ Իսրայելի (Քենեթ Ջենթրին – Kenneth Gentry իր Հայտնության գրքի առաջին հոտորի մեկնաբանությունների մեջ ցուցադրում է որ Հայտնություն գիրքը սկզբից մինչև վերջ ամուսնալուծության փաստաթուղթ / վկայագիր է/, թէ ինչպես է Հայտնության գիրքը հին կտակարանի ամուսնալուծության օրենքների բոլոր կանոններին հետևելով քայլ առ քայլ, Աստված Իսրայելին մեկ ընդ միշտ որպես ազգ ամուսնալուծում է, որպեսզի կարողանա ամուսնանա հեթանոսների հետ, Տե՛ս The Divorce of Israel: A Redemptive-Historical Interpretation of Revelation, Vol 1): Նա շնացել է Օրենքի դեմ: Նա պոռնկացել է՝ փոխարենն ընդունելով մարդկանց մեջ բարձր գնահատված բաներ, որոնք Աստծո առջև դատապարտելի են (հ. 15): Նա շնացող էր: Նա նաև աստվածահայհոյող էր. նա թողել էր իր ճշմարիտ սերը հանուն «ճշմարիտ» սիրո, նա անտեսել էր Աստծո օրենքը, հանուն այդ Օրենքը «մաքրամաքուր» կերպով արտահայտելու: Նա պոռնիկ էր, որ ծպտվել էր որպես մաքուր կույս: Հիսուսը բերում է ճշմարիտ Արքայությունը և, դրա հետ միասին, ճշմարիտ Օրենքը: Այդ շնացող կնոջ ճշմարիտ դատաքննության ու դատաստանի ժամը եկել էր: Այս սերունդը, ովքեր թողել էին իրենց ճշմարիտ սերը հանուն մեկ ուրիշի, վտանգված էր շնության դատավճիռ ընդունելու: 18-րդ համարը հենց այդ մասին է:

Ահա, թե ինչու է անմիջապես հետևում երկնքի ու դժոխքի վերաբերյալ առակը: Հիսուսը սրանով ամբողջացնում է Օրենքի ճշմարիտ բնույթի և գալիք դատաստանի վերաբերյալ Իր միտքը:

Հարուստի և Ղազարոսի առակը (Ղուկաս 16.19-31)

> «Մի հարուստ մարդ կար, ով ծիրանի ու բեհեզ էր հագնում և ամեն օր փառավորապես խնջույք էր անում: Իսկ նրա տան դարպասի մոտ Ղազարոս անունով մի աղքատ մարդ կար վերքերով պատված, որ փափագում էր հարուստ մարդու սեղանից

> ընկածներով կերակրվել: Ավելին, շները գալիս էին ու նրա վերքերն էին լիզում: Աղքատը մահացավ ու հրեշտակներն Աբրահամի մոտ տարան նրան: Հարուստը նույնպես մահացավ ու թաղվեց և Հադեսում՝ տանջանքների մեջ, աչքերը բարձրացրեց ու հեռվից տեսավ Աբրահամին ու Ղազարոսին՝ նրա կողքին: Եվ աղաղակեց. «Հայր Աբրահամ, ողորմիր ինձ և ուղարկիր Ղազարոսին, որ իր մատի ծայրը թրջի ջրի մեջ ու լեզուս զովացնի, որովհետև այս կրակների մեջ տանջվում եմ»: Սակայն Աբրահամն ասաց. «Զավակս, հիշիր, որ քո կյանքի ընթացքում դու ստացար քո բարիքները, իսկ Ղազարոսն էլ՝ դժվարությունները: Իսկ հիմա նա այստեղ մխիթարվում է, իսկ դու տանջանքի մեջ ես: Եվ բացի դրանից, մեր և ձեր միջև մի մեծ անդունդ կա, որպեսզի այստեղից ոչ ոք չկարողանա անցնել ձեզ մոտ, ոչ էլ այդտեղից այստեղ անցնել ուզողները կարողանան»: Եվ նա ասաց. «Ուրեմն, աղաչում եմ, հայր, ուղարկիր նրան իմ հոր տուն, որտեղ ես հինգ եղբայր ունեմ, որպեսզի նրանց զգուշացնի, որ չլինի թե նրանք էլ գան այս տանջանքի վայրը»: Բայց Աբրահամն ասաց. «Նրանք Մովսեսին ու Մարգարեներին ունեն, թող նրանց լսեն»: Իսկ նա ասաց. «Ոչ, հայր Աբրահամ, եթե մեռելներից մեկը գնա նրանց մոտ, կապաշխարեն»: Նա ասաց նրան. «Եթե նրանք Մովսեսին ու Մարգարեներին չեն լսում, ապա չեն համոզվի, նույնիսկ եթե մեկը մեռելներից հարություն առնի» (Ղուկ. 16.19-31):

Բացի ակնհայտ համատեքստից, որով Հիսուսը պատմում է այս առակը, կան երկու բացահայտող բաներ, որոնք մեզ ասում են, որ առակը վերաբերում էր Նրա անմիջական իրականությանը: Դրանցից մեկն առակն ուղղակիորեն կապում է Օրենքի, Մարգարեների և Աստծո Արքայության վերաբերյալ Նրա ախորդ մեկնաբանությունների հետ: Դա Աբրահամի պատասխանն է հարուստին, իրենց խոսակցության վերջում: Դժոխքում վառվելով, հարուստը վերջապես գալիս է այն գիտակցության, որ ավետարանչությունը լավ բան է և, միգուցե, նրա ընտանիքը կարիք ունի զգուշացվելու այդ ահավոր

տեղի վերաբերյալ: «Բայց Աբրահամն ասաց. «Նրանք Մովսեսին ու Մարգարեներին ունեն, թող նրանց լսեն»… Եթե նրանք Մովսեսին ու Մարգարեներին չեն լսում, ապա չեն համոզվի, նույնիսկ եթե մեկը մեռելներից հարություն առնի» (Ղուկ. 16.29): Մեկ այլ խոսքով. «Օրենքն ու Մարգարեները մինչև Հովհաննեսն էին: Դրանից հետո Աստծո արքայության բարի լուրն է քարոզվում» (16.16): Սա շատ հստակ փոխկապակցում է, որ ցույց է տալիս Հիսուսի խոսքի շարունակականությունը: Պատգամը միանգամայն հստակ է. դատաստանի օրը եկել է, եթե դու անկեղծորեն չհավատաս Օրենքին ու Մարգարեներին, դու դրանցով կդատվես (հմմտ. Հովհ. 5.39-47): Եվ այդ դատաստանը հաշվի չի առնում մարդու արտաքին երևույթը: Հարուստ մարդու դիրքն ու հարստությունն Աստծո Արքայության օրհնության ցուցիչներ չէին հանդիսանում, այլ սրտի դատաստան էր լինելու (16.15):

Երկրորդ բացահայտիչ մասնիկը շատ ուղղակի չէ, սակայն շատ ավելի հետաքրքիր է. առակի հարուստ մարդու հագուստները: «Մի հարուստ մարդ կար, ով ծիրանի ու բեհեզ էր հագնում» (16.19): Մինչդեռ հնարավոր է, որ սա հարստության ընդհանուր նկարագրություն է, Հիսուսի ուսուցման աստվածաշնչյան հարուստ աստվածաբանությունը մեզ համար խթան է հանդիսանում ավելի խորը ուսումնասիրելու: Ծիրանին, և հատկապես բեհեզը, Տաճարի քահանայության լայնորեն ճանաչված տարբերիչ հագուստներն էին: Սա, իհարկե, ուղղակիորեն հաստատվում է և՛ բուն Օրենքով (Ել. 25-28, 35-39), և՛ պատմության ու Մարգարեների մեջ տեղ գտած բազմաթիվ ակնարկներով: Առակում, սրանք պատահական դետալներ չեն: Դրանք հարուստին միանգամից մեկացնում են Իսրայելի հին ուխտի գլխավոր ներկայացուցների՝ քահանայապետի և Տաճարի հետ:

Այս «քահանայական» դետալները նաև անուղղակի կերպով կենտրոնական զանազանող դեր են խաղում Նոր Կտակարանում: Դրանք հեշտությամբ օգնում են զանազանել Հայտնություն 17-18-ի Մեծ Պոռնիկին որպես Երուսաղեմ: «Կինը ծիրանի ու կարմիր էր հագել» (Հայտ. 17.14): «Ավաղ, ավաղ, մեծ քաղաք, որ բեհեզ, ծիրանի ու կարմիր էիր հագնում, զարդարված էիր ոսկով, զարդերով և մարգարիտներով: Որովհետև մեկ ժամում այս ամբողջ հարստությունը ոչնչացավ» (Հայտ. 18.4): Այս կռապաշտ քաղաքն Աստծո կեղծ քահանան էր և ամայացավ: Իսկ ճշմարիտ Հարսնացուն կլինի մաքուր և քահանայական հագուստներ հագնելու արժանի: Նույն

գիրքը մեզ ասում է. «Ալելուիա, որովհետև մեր Ամենակարող Տեր Աստվածն է թագավորում: Եկեք ուրախանանք և փառավորենք ու փառքը Նրան տանք, քանի որ Գառան հարսանիքը եկավ, և Նրա Հարսնացուն պատրաստեց իրեն. նրան տրվեց հագնելու բեհեզ՝ պայծառ ու մաքուր» (Հայտ. 19.6-9): Պոռնիկը ոչ մի իրավունք չուներ քահանայական հագուստ հագնելու. «որովհետև բեհեզը սրբերի արդար արարքներն են» (19.9), իսկ անհավատ Երուսաղեմը ոչ մի արդարություն չուներ (Հռոմ. 10.1-4):

Իսկ Նոր Հարսնացուի արդարությունն իր սեփականը չէր, այլ գալիս էր Քրիստոսից: Քրիստոսն է ճշմարիտ Քահանայապետը, միակը, ով իրավունք ունի քահանայական հագուստներ հագնելու: Այդ պատճառով, Նա Իր զոհաբերության ժամանակ հագել էր ծիրանի (Մարկ. 15.17, 20, Հովհ. 19.2,5) և կարմիր (Մատթ. 27.28), թեև զինվորները ոչ մի պատկերացում չունեին, թե ինչ էին իրականում անում: Նա նաև կտավներով (բեհեզով) փաթաթվեց, երբ թաղվում էր (Մատթ. 27.59, Մարկ. 15.46, Ղուկ. 23.53, 24.12, Հովհ. 19.40, 20.5-7): Ավետարանները, այսպիսով, Հիսուսին ներկայացնում են որպես Քահանայապետ, որպես Իսրայելի ճշմարիտ ներկայացուցիչ Իր զոհաբերության ու Աստծուն նվիրաբերվելու ամբողջ ընթացքում:

Այսպիսով մենք ունենք թե՛ ուղղակի (Օրենքի ու Մարգարեների մեջ), և թե՛ անուղղակի (աստվածաշնչյան աստվածաբանություն) հաստատուն վկայություն, որ ծիրանին ու բեհեզը վերաբերում են Իսրայելի ներկայացուցչական քահանայությանը: Այսպիսով, տեղին էր, որ Հիսուսը հանդիմանում էր փարիսեցիներին՝ Իսրայելի ժառանգության հավակնորդներին, և այնպես էր անում, որ նրանք տեսնեին, որ իրենք (իրականում, ողջ Իսրայելը) առակի մեջի հարուստ մարդն էին հանդիսանում:

Հետաքրքիր կլիներ, նույնիսկ շատ, եթե Ղազարոս ասելով Հիսուսը նկատի ունենար այն Ղազարոսին, ում Հիսուսը սիրում էր, և երբ մահացավ, հարություն տվեց նրան Հովհ. 11-ում: Չնայած՝ շատ եմ կասկածում սրան: Որոշ մարդիկ հրաժարվում են ընդունել, որ սա առակ է, քանի որ այն չի սկսվում բացահայտ «և նրան մի առակ պատմեց» արտահայտությամբ: Սակայն սա շատ թույլ պատճառաբանություն է. ոչ անառակ որդու (15.11-32), ոչ էլ անիրավ տնտեսի (16.1-9) առակները, որ Նա հենց նոր էր պատմել, չեն սկըսվում առակների համար հատուկ այդ արտահայտությունով, այնպես որ կարիք չունենք ուրիշ օրինակներ փնտրելու: Հարուստ մարդու

և Ղազարոսի պատմությունն առակ է, և մենք պետք է դիմադրենք գայթակղությանը՝ Ղազարոսի մեջ կարդալու ավելին, քան առակն ինքն է տրամադրում մեզ:

Ինչպես արդեն ասացինք, Ղազարոսը ժողովարանի իշխան լինելու համար հաստատ լավ թեկնածու չէր: Նա մուրացիկ էր, հարստություն չուներ, ոչինչ չուներ, հավանաբար հիվանդ էր, քանի որ վերքերով պատված էր, և բոլոր չափանիշներով հասարակությունից մերժված մեկն էր: Բայցևայնպես, ճիշտ ինչպես հարուստի հարստությունը, այնպես Ղազարոսի աղքատությունն ընտրության հարցում չափանիշ չէր (այսինքն, Ղազարոսը իր աղքատ ու խեղճ վիճակի պատճառով չփրկվեց, իսկ հարուստը իր հարստության պատճառով դժողք չգնաց: Շատ հարուստներ կան որ հավատացյալներ են ու դրախտ են գնում ու շատ աղքատներ կան որ հավատացյալ չեն ու դժողք են գնում): Արդյո՞ք Հիսուսը հենց նոր, փարիսեցիների առաջ, չպատկերեց Հոբին իր թշվառության մեջ (Հոբ. 2.7-8): Բայցևայնպես, մենք գիտենք, որ Աստված վերջում վերականգեց նրան և, կրկնակին տալով, դարձրեց արևելքի ամենահարուստ մարդը (Հոբ. 1.3, 42.10-17): Այնպես որ, այսպիսի մարդը լիարժեքորեն կարող էր լինել Աստծո Արքայության ընտրյալ մնացորդի մի մասնիկը: Իրականում, այստեղ է, որ Ղազարոսի անունը կարևոր է դառնում: Դա եբրայական Էլեազար անունն է, որ նշանակում է «Ում Աստված օգնում է»: Այս մարդն ուներ Աստծո շնորհը:

Պատմությունը զարգանում է, երբ երկուսն էլ մահանում են. Ղազարոսը տարվում է Աբրահամի գոգը, որպես Աբրահամի ճշմարիտ որդի, իսկ հարուստը Հադեսի տանջանքների մեջ տառապում է: Իր վիճակի մեջ վեր նայելով՝ հարուստը երկխոսություն է սկսում Աբրահամի հետ: Սկզբում, նա սկսում է հրամանով. «Ուղարկիր Ղազարոսին, որ ինձ ջուր տա» (16.24): Մեղավոր հարուստը, նույնիսկ դժոխքում վառվելիս, մտածում է, թե ինքն արժանի է, որ մարդիկ իրեն ծառայեն: Նույնիսկ դատապարտության մեջ նա չի գիտակցում, որ դատապարտված է: Նա մնացել է նույն ամբարտավանը՝ մտածելով, որ նույնիսկ Աբրահամը պետք է ենթարկվի իր հրամաններին: Նա ենթադրում է որ կարող է իր կամքը տեղադրել նահապետների ու Աստծո կամքի տեղը, ինչպես փարիսեցիների դեպքում էր սովորաբար տեղի ունենում, ովքեր բեռներ էին դնում մյուսների մեջքին, որպեսզի իրենք դրանից օգուտ քաղեին (հմմտ. Ղուկ. 11.46):

Աբրահամը նրա դիմումը մերժում է երկու պատճառով. 1) նրան-

ցից ամեն մեկի կարգավիճակը (Ղազարոսի և հարուստի) ճիշտ այնպիսին է, ինչպիսին պետք է լիներ: Դատաստանը եկել էր նրանց երկուսի վրա էլ, և որոշումն այն էր, որ Աստված հիմա բարձրացրել էր խոնարհին և ցած էր գցել հպարտին: Ղազարոսի՝ Աբրահամի գոգում լինելը, իսկ հարուստի՝ տառապանքների մեջ լինելը, ճշգրիտ հետևանքն էր նրանց ապրած կյանքի: Բացի դրանից, 2) մի մեծ անդունդ կար հաստատված երկու կողմերի միջև, որպեսզի ոչ ոք չկարողանար անցնել (հ. 26): Իմաստն այստեղ հստակ է. դատաստանը վերջնական է: Կիրառումը նույնպես պարզ է. Իսրայելն ապաշխարության հնարավորություն ուներ, քանի դեռ Հիսուսն իրենց հետ էր, բայց երբ դատաստանը գար, հետ դառնալու հնարավորություն այլևս չէր լինելու: Դատաստանը վերջնական է և անշրջելի (անդառնալի):

Հարուստը, սակայն դեռ չէր ավարտել: Նա երկրորդ անգամ է դիմում. այս անգամ պակաս հրամայական, բայց ավելի աղերսական. «ուղարկիր նրան իմ հոր տուն, որտեղ ես հինգ եղբայր ունեմ, որպեսզի նրանց զգուշացնի» (հ. 27-28): Նա դեռ մտածում է, որ Ղազարոսը պետք է ծառայի իր հետաքրքրություններին (շահերին), բայց գոնե այս անգամ, իրենից բացի, նա մտահոգված է նաև մյուսների համար: Սակայն, Աբրահամը մերժում է այս դիմումը նույնպես: Ղազարոսին ուղարկելու ոչ մի կարիք չկա. հարուստ մարդու եղբայրներն (հրեաները) արդեն ունեին լավագույն վկաները, որ կարող էին նրանց տրվել. «Նրանք Մովսեսին ու Մարգարեներին ունեն, թող նրանց լսեն» (հ. 29): Պատասխանն ինքնին մի փոքրիկ դաս է. հրեաներին վստահվել էին Աստծո պատգամները, սակայն նրանք անտեսել էին դրանք և շարունակում էին անտեսել իրենց սեփական կորստի համար: Հարուստն էլ էր տեղյակ եղել դրանց, սակայն ինքն էլ էր անտեսել: Դա մեծագույն նշանն էր, որ փարիսեցիները և իրականում ողջ Իսրայելը կարող էին երբևէ ստանալ: Նրանք, ունենալով Աստծո Խոսքն իրենց ձեռքում, լսում էին այդ Խոսքի քարոզչությունն իրենց ժողովարաններում, դեմ առ դեմ տեսնում էին մարմնացած Խոսքը, լսում էին Նրան իրենց փողոցներում քարոզելիս, ուտում ու խմում էին Նրա հետ (Ղուկ. 13.26), բայցևայնպես երբևէ չլսեցին Նրան ու երբևէ չընդունեցին:

Իրենց անհավատության մեջ փարիսեցիները՝ հարուստ մարդը, չէին հավատում սրան: Նրանք ավելին էին պահանջում, քան Խոսքն է: Խոսքն ինքնին բավարար չեղավ՝ նրանց սովորեցնելու գալիք

ճշմարտության մասին և զգուշացնելու գալիք բարկության մասին: Իսկ նա ասաց. «Ոչ, հայր Աբրահամ, եթե մեռելներից մեկը գնա նրանց մոտ, կապաշխարեն» (19.30-31): Ճիշտ ինչպես փարիսեցիներն ու բազմությունը Հիսուսից նշան էր պահանջում, այնպես էլ հարուստը հրաշք է պահանջում (Մատթ. 12.38-39, Ղուկ. 11.16, 29-30): Փարիսեցիները չէին կարող չնկատել առակում հնչող իրենց ուղղված հստակ ակնարկը: Այստեղ Հիսուսը հիանալի հեգնանքով պատկերում է Աստծո Օրենք-Խոսքի հանդեպ նրանց անհավատությունը. այս փարիսեցիները, ովքեր իրենք իրենց համարում էին Աբրահամի որդիների լավագույն օրինակը երկրի վրա, հանկարծ հայտնվում են դժոխքում և վիճաբանում են Աբրահամի հետ Օրենքի զորության վերաբերյալ: Կարմիր գիծն այստեղ այն է, իհարկե, որ նրանք միշտ էին հակառակվել Աբրահամին (Հովհ. 8.33-47): Աբրահամը խոսակցությունն ավարտում է՝ հայտարարելով Աստծո Խոսքի բավարար լինելը. «Եթե նրանք Մովսեսին ու Մարգարեներին չեն լսում, ապա չեն համոզվի, նույնիսկ, եթե մեկը մեռելներից հարություն առնի» (Ղուկ. 19.31):

Ընդհանուր իմաստը հասկանալի է. փարիսեցիներն ամբողջությամբ մերժել էին Աստծո Օրենքն ու ըստ այդմ էլ պիտի դատվեին: Իրոք, Իսրայելն անտեսել էր հենց այն պատգամները, որ իրեն էին վստահվել: Հիսուսը եկել էր, այսինքն՝ Արքայությունն էր եկել, և Նա նրանց միջից հավաքում էր ընտրյալ մնացորդը, նույնիսկ նրանց մեջ եղած ամենաստոր մեղավորներին: Այս Ղազարոսները փրկվելու էին, իսկ ագահ ու անհավատարիմ քահանաները դատապարտվելու էին: Այսպիսով, Հիսուսը դեմ չէր մեղավորների ու մաքսավորների հետ շփվելուն, ոչ էլ Իր աշակերտներին ուսուցանելուն, որ նույնն անեն:

Հոգևոր կիրառություններ

Այստեղ նշվելու արժանի մնայուն դասեր կան, որոնք վերաբերում են անկյալ մարդկային բնույթին: Առաջին, մենք հակված ենք աչքաթող անելու մեր ակնհայտ պարտականություններն ու բարեգործական հնարավորություններն այս կյանքում (հհ. 20-21): Երկրորդ, անկյալ մարդը ողորմության համար աղաղակում է դատապարտվելու փաստից հետո միայն (հ. 24): Մենք սրանից հասկանում ենք, որ անկյալ մարդը մտածում է, որ ինքն արժանի է ողորմության՝

նույնիսկ դատվելուց հետո (հ. 24): Մենք, սակայն, հասկանում ենք, որ այդ ժամանակ չափազանց ուշ է, և Աստված այլևս ողորմություն չի անի անարդարներին (հ. 25-26): Երրորդ, նույնիսկ ողորմություն խնդրելիս, անկյալ մարդը, կրակների մեջ այրվելով, մտածում է, որ մարդիկ պետք է ծառայեն իրեն (հ. 24): Չորրորդ, նույնիսկ հանդիմանվելով իրենց ինքնախաբեության համար, նրանք դեռևս կարծում են, որ մյուս մարդիկ ինչ-որ ձևով պետք է ծառայեն իրենց հետաքրքրություններին (շահերին) (հ. 27): Հինգերորդ, անկյալ մեղավորները դժոխքում այրվելիս արագ հետաքրքրություն են ցուցաբերում ավետարանչության հանդեպ (հհ. 27-28): Վեցերորդ, անկյալ մարդը սխալմամբ մտածում է, որ զորությունների ցուցադրումը կամ հրաշքներն արթնություն կբերեն մարդկային հոգուն (հ. 30): Յոթերորդ, երբ անկյալ մարդը վերջնականապես սպառում է իր մարդկային հնարքները, հասկանում է, որ ինքը երբեք արժանի ուշադրություն չի դարձրել Աստծո Խոսքի վրա (հ. 28-30), որը մշտապես իր աչքի առաջ է եղել: Նա նաև հասկանում է, որ շներն ավելի ողորմած են եղել, քան՝ ինքը (հ. 21):

9. Հավատ և հավատարմություն (Ղուկաս 17.1-10)

Այն բանից հետո, երբ փարիսեցիներն ընդհատում են խոսակցությունը, Հիսուսը շրջվում է՝ վերադառնալու աշակերտների հետ Իր քննարկմանը: Մենք, սակայն, պետք է նկատենք, որ Ղուկաս 17.1-10 հատվածը պատկանում է այն նույն տեսարանին, որ սկսվել էր դեռ 15.1-ից: Այնտեղ Հիսուսը սկսում է պատասխանել մեղավորների հետ շփվելու համար Իրեն ուղղված փարիսեցիների քննադատությանը և պատմում է երեք առակներ կորած բաների մասին: Դրանից հետո Նա առանձին խոսում է աշակերտների հետ, պատմելով անիրավ տնտեսի առակը, որը սակայն ընդհատվում է Իրեն ուղղված փարիսեցիների ծաղրանքով (16.14): Այսպիսով, նա նորից է հանդիմանում նրանց թե՛ ուղղակի ուսուցման, թե՛ հարուստի ու Ղազարոսի առակի միջոցով: Հետո, վերջում Նա նորից դիմում է Իր աշակերտներին 17.1-ում, որպեսզի հնարավորություն ունենա ավարտելու այն, ինչ ասում էր 16.13-ում:

Դուք, հնարավոր է, նկատեցիք, որ մենք մեծ ցատկ արեցինք 16.10-13 հատվածի վրայով, երբ նախորդ անգամ հասանք այդտեղ: Մենք դա արեցինք, որովհետև քննարկվող թեման կապ ունի 17.1-10-ի հետ: Այն նաև կապված է այս սցենարի ընդհանուր թեմայի հետ սկսած 15-1-ից, որով արդարացվում է մեղավորների ու մաքսավորների մեջ Հիսուսի և Իր աշակերտների կատարած ծառայությունը: Սակայն կարևոր է սկզբում խոսել փարիսեցիների՝ խոսակցությունն ընդհատելու մասին, իսկ հետո նոր խոսել այս երկու հատվածների մասին որպես մեկ համատեքստ:

Հավատարմության և գայթակղության քարեր

Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել (Ղուկաս 16.10-13)

Անիրավ տնտեսի առակը պատմելուց հետո Հիսուսը դիմում է հավատարիմներին հետևյալ քաջալերանքով.

> «Նա, ով հավատարիմ է քչի մեջ, հավատարիմ է նաև շատի մեջ, իսկ նա, ով անիրավ է քչի մեջ, անիրավ է նաև շատի մեջ: Եթե դուք անհավատարիմ լինեք անարդար հարստության մեջ, ո՞վ ձեզ կվստահի իրական հարստությունը: Եթե դուք հավատարիմ չլինեք մի բանի մեջ, որ ուրիշինն է, ո՞վ ձերը կտա ձեզ: Ոչ մի ծառա չի կարող երկու տիրոջ ծառայել, որովհետև մեկին կատի, իսկ մյուսին կսիրի, կամ էլ կնվիրվի մեկին, և կանարգի մյուսին: Չեք կարող ծառայել Աստծուն և փողին» (Ղուկ. 16.10-13):

Մենք հենց նոր տեսանք, թե ինչպես կարելի է ճիշտ հասկանալ անիրավ տնտեսի առակը: Այն ուղղված էր աշակերտներին, որպեսզի նրանք պատրաստվեին մոտալուտ տնտեսական ճգնաժամին ու անտունությանը: Նրանք պետք է օգտակար համարեին ընկերներ ունենալ մեղավորների, հեթանոսների և այլոց մեջ, չնայելով փարիսեցիների ծաղրանքին: Հիմա Հիսուսն Իր կենտրոնական թեման կրկնում է հստակ դիդակտիկ (բարոյական դաս) ուսուցման միջոցով: Թեման հավատարմությունն էր՝ չնայած գալիք տնտեսական կորուստներին: Շատերն են կարծում,թե հավատարիմ են, քանի դեռ Արքայության հանդեպ պարտավորությունները չեն դիպել նրանց բանկային հաշիվներին: Մենք տեսնում ենք, որ Հիսուսը հենց այս նույն թեման է ուսուցանում նախկին դիդակտիկ (բարոյական դաս) ուղերձում (12.22-34, 49-53) և առակներում (12.35-48): Նա այստեղ Իր աշակերտներին նորից է հիշեցնում հանկարծահաս դատաստանի, կորուստներ կրելու և պատրաստ լինելու մասին՝ արագ դուրս գալու, երբ ժամանակը գար, և այդ տնտեսական զոհաբերությունն Աստծո Արքայությանը մինչև վերջ օժանդակելու թեման էր: Կարո՞ղ էին իրոք աշակերտները «սկզբում փնտրել Աստծո արքայությունը»: Նրանք պետք է սովորեին, որ ընտրյալ մնացորդ լինելու առաջնային

որոշիչն այն էր լինելու, որ անկախ գնի մեծությունից, նրանք պետք է ծառայեին միայն ճշմարիտ Տիրոջը: Նրանք չպետք է զիջեին հասարակական դիրքի կամ հարստության հանդեպ սիրուն, ինչպես փարիսեցիներն էին արել:

Հավատարմության գայթակղության քարը (Ղուկ. 17.1-5)

Փարիսեցիների ընդհատելուց հետո Հիսուսը շարունակում է խոսել աշակերտների հետ: Աշակերտության գնի ու հավատարմության վերաբերյալ Իր ուսուցումը Նա շատ լավ ձևով հարմարեցնում է հենց նոր տեղի ունեցածի հետ: Այս ողջ տեսարանի համար խթան էր հանդիսացել փարիսեցիների քննադատությունը, այնպես որ Հիսուսը դիմում է Իր աշակերտներին՝ նախապատրաստելու նրանց ժողովարանների իշխանական այդ աղանդի սոցիալական ուժեղ ազդեցության դեմ (մի ազդեցություն, որ մենք հավանաբար չէինք կարող գերագնահատել): Նրանք հենց նոր էին ականատես եղել, թե ինչպես էին այդ աշխարհիկ առաջնորդները, ովքեր տարածված էին ողջ Իսրայելով մեկ, ծաղրում Հիսուսին: Արդյո՞ք պատրաստ կլինեին աշակերտները դեմ կանգնելու այս ծաղրող և տիրող ուժերին: Հիսուսը սովորեցնում է.

> «Եվ իր աշակերտներին ասաց. «Մեղքի գայթակղություններ անպատճառ կգան, բայց վայ նրան, ում միջոցով դրանք կգան: Ավելի լավ կլիներ նրա համար, եթե ջրաղացի քար կախվեր նրա վզից և ծովը գցվեր, քան այս փոքրերից մեկին մեղք գործելու պատճառ դառնար: Ուշադրություն դարձրեք ձեզ: Եթե քո եղբայրը մեղք է գործում, հանդիմանիր նրան, և եթե ապաշխարի, ներիր նրան: Եվ եթե մեկ օրվա մեջ յոթ անգամ քո դեմ մեղք գործի և յոթ անգամ քեզ դիմի՝ ասելով. «Ապաշխարում եմ», պետք է ներես նրան» (Ղուկ. 17.1-4):

Աստվածաշնչի թարգմանության KJV (King James Version) տարբերակը «Մեղքի գայթակղություններ» արտահայտությունը թարգմանում է որպես «վիրավորանքներ», իսկ NAS-ը՝ (New American Standard) «գայթակղության քարեր»: ESV-ն (English Standard Version) իմաստով ավելի մոտ է ժամանակակից անգլերենին,

սակայն NAS-ը հաստատ ավելի մոտ է աստվածաշնչյան աստվածաբանական ավանդույթին: Հունարեն skandala բառը (որից առաջանում է անգլերեն «scandal» բառը) վերաբերում է ծուղակի, որի մեջ մարդ կարող է ընկնել. այսինքն՝ պատճառ հանդիսանալ ընկնելու կամ սայթաքելու համար: Այս միտքը երևում է Ղևտ. 19.14-ում. «Խուլին մի անիծիր և կույրի առաջ սայթաքելու քար մի դիր, այլ քո Տեր Աստծուց վախեցիր, Ես եմ Տերը»: (Ավելի հայտնի է Եսայի 8.13-15 հատվածը, թեև հունարեն Սեպտուագինտայի մեջ այն լավ չի երևում, այլ միայն եբրայերեն բնօրինակում).

> «Բայց զորքերի Տիրոջը, նրան պետք է պատվես որպես սուրբ: Թող նա լինի քո վախը, և նա լինի քո երկյուղը: Եվ նա կդառնա սրբարան և վիրավորվելու ապառաժ ու գայթակղության քար Իսրայելի երկու տների համար, և թակարդ ու ծուղակ Երուսաղեմի բնակիչների համար: Եվ շատերը կսայթաքեն դրա վրա: Նրանք կընկնեն ու կկոտրվեն, նրանք թակարդի մեջ կբռնվեն ու կվերցվեն»:

Ժողովրդին ցուցումներ տալիս, Հիսուսը մտնելու էր հենց այս հատվածի մեջ, երբ ավելի ուշ սովորեցներ Երուսաղեմի տաճարում: Խաղողի այգու տիրոջ մասին առակից հետո (որտեղ մենք հստակ կտեսնենք, որ Իսրայելը սպանելու էր Աստծո Որդուն և այդ իսկ պատճառով կորցնելու էր Արքայությունը), մարդիկ արձագանքեցին. «Իհարկե ոչ» (Ղուկ. 20.16): Հիսուսը պատասխանեց մեջբերում անելով Սաղմոս 118.22-ից և Եսայի 8.15-ից.

> «Բայց նա շեշտակի նայեց նրանց ու ասաց. «Ուրեմն ի՞նչի մասին է այս գրվածքը. «Այն քարը, որ կառուցողները մերժեցին, անկյունաքար դարձավ»: Ամեն ով որ այդ քարի վրա ընկնի, կտոր կտոր կլինի, իսկ եթե դա որևէ մեկի վրա ընկնի, կճզմի նրան» (Ղուկ. 20.17-18):

Իրականում, Եսայիի մարգարեությունը Հիսուսի ծառայության հիմունքն է հանդիսացել՝ սկսած Նրա թլպատությունից: Սիմոն ծերունին, Սուրբ Հոգուց ներշնչված, գրկեց երեխային ու ասաց.

> «Տեր, հիմա թույլ տուր քո ծառային խաղաղությամբ

հեռանալու, ըստ քո խոսքի, քանի որ իմ աչքերը տեսան քո փրկությունը, որ դու
պատրաստել ես բոլոր ժողովուրդների ներկայությամբ, լույս՝ հեթանոսներին հայտնություն տալու, և փառք՝ քո Իսրայել ժողովրդի համար»:

«Իսկ նրա հայրն ու մայրը զարմանում էին, թե ինչեր էր ասվում նրա մասին: Իսկ Սիմոնը օրհնեց նրանց և Մարիամին ասաց. «Ահա, այս երեխան նշանակված է Իսրայելում շատերի անկման ու բարձրանալու և հակառակության նշան լինելու համար» (Ղուկ. 2.29-34):

Պողոսի հետագա ուսուցումը հաստատում է այն ամենը, ինչ մենք ասացինք այս համատեքստում: Հռոմեացիներին 9.30-33-ում նա գրում է.

«Ուրեմն, ի՞նչ ասենք: Հեթանոսները, որ արդարության հետևից չէին գնում, հասան արդարության, այսինքն արդարության, որ հավատով է: Իսկ Իսրայելը, որ հետևում էր օրենքին, որ տանելու էր արդարության, չկարողացան հասնել այդ օրենքին: Ինչու՞: Որովհետև նրանք դրան չէին հետևում հավատով, այլ կարծես դա հիմնված էր գործերի վրա: Նրանք սայթաքեցին գայթակղության քարի վրա, ինչպես գրված է. «Ահա, ես Սիոնում գայթակղության քար եմ դնում, և վիրավորվելու ապառաժ: Ամեն ով որ նրան հավատա, չի ամաչի»:

Այսպիսով, մեղավորներն ու մաքսավորները, իրականում՝ հեթանոսները, ստանում են Արքայությունը, մինչդեռ հրեաները կորցնում են այն: Եվ որոշիչ գործոնները հավատն ու հավատարմությունն են: Սա Եսայիի մարգարեության իրականացումն է, որը, ինչպես Եսային է ասում, վերաբերում է Իսրայելի երկու տներին էլ (8.14): Այս թեման՝ Հիսուսը որպես գայթակղության քար (skandalon) (հատկապես հրեաների համար), երևում է Պողոսի գրվածքների այլ հատվածներում ևս (1 Կոր. 1.23, Գաղ. 5.11):

Այն երևում է նաև Ավետարաններում: Նույնիսկ աշակերտները սկզբում գայթակղվում էին խաչի վերաբերյալ, ճիշտ ինչպես Հիսուսը կանխասաց (Մատթ. 26.3): Բայցևայնպես, վերնատան ուղերձում

(Հովի. 14-16), Հիսուսը նրանց նախապատրաստում է՝ խորը ուսուցում տալով Սուրբ Հոգու գալու, Ճշմարիտ Խաղողի Որթի հետ նրանց փոխհարաբերության և նոր պատվիրանի վերաբերյալ՝ սիրելու իրար անկախ հալածանքներից, որ շուտով պետք է կրեին: Դրանից հետո, Նա բացահայտ ասում է նրանց, «Ես այս բոլորը ձեզ ասացի, որպեսզի չգայթակղվեք (hina me skandalisthete. բառա--ցիորեն. «որպեսզի ոչ մի բան պատճառ չհանդիսանա, որ դուք սայթաքեք»): Ձեզ ժողովարաններից դուրս կնետեն: Իրոք, գալիս է մի ժամանակ, երբ ձեզ սպանողները կմտածեն, որ Աստծուն ծառայություն են մատուցում» (Հովի. 16.1-2):

Իսրայելի հանդեպ Հիսուսի դատական գործի վախճանաբանական պատգամի համար scandal-ի ամենահամապատասխան օրինակը, միգուցե, գտնվում է նախկինում ուսումնասիրած ցորենի ու որոմների առակում (Մատթ. 13.24-30, 36-43): Իր աշակերտներին առակը բացատրելիս, Հիսուսն ասում է, «Մարդու Որդին կուղարկի իր հրեշտակներին, և նրանք իր արքայությունից կհավաքեն մեղքի բոլոր պատճառները (skandala) և բոլոր օրինախախտներին» (Մատթ. 13.41): Սա լինելու էր Երուսաղեմի մեծագույն դատաստանը(ՔՀ 70 թվին), երբ բոլոր նրանք, ովքեր գայթակղվել էին Մեսիայի գայթակղության քարի պատճառով, կոչնչանային:

Հստակ է, որ գայթակղության հարցը կարևոր դեր է խաղում Հիսուսի պատգամի մեջ: Գայթակղության քարերն անխուսափելի կլինեին գալիք դատաստանի բևեռացնող բնույթի և Արքայություն տեղափոխվելու պատճառով (արքայությունը տեղափոխվելու էր հրեաներից դեպի հեթանոսներ՝ Իսրայելի երկրից դեպի բոլոր այլ երկրներ ու մայրցամաքներ): Դու կամ Հիսուսի կողմից ես, կամ Նրա դեմ: Նրա կողքին կանգնելն անհրաժեշտություն է, սակայն գալու էին մեծ գին վճարելու առիթներ, և փոխզիջման գնալու ճնշումները (գայթակղություն, մեղք) լինելու էին բազմաթիվ ու ուժեղ: Ահա թե ինչու է Հիսուսը նորից կրկնում այդ իրավիճակն անհրավ տնտեսի առակի (գալիք դրամական զոհաբերությունները) և ճշմարիտ Տիրոջ հանդեպ հավատարիմ լինելու համատեքստում:

Աշակերտները հստակ հասկացան պատգամը և պահանջված մեծ գինը: Այսպիսով, նրանք պատասխանում են. «Ավելացրու մեր հավատը» (Ղուկ. 17.5): Եթե մենք այս մի քանի համարներն առանձին կարդանք, այս պատասխանն այնքան էլ տեղին չի թվում: Սակայն սա շատ իմաստալից է թվում ավելի մեծ համատեքստի լույսի ներքո

նայելիս: Աշակերտները դեռևս խորհում էին Հիսուսի խոսքերի շուրջ՝ նախքան փարիսեցիների ընդահատելը: Նրանք հասկացան, որ գայթակղության քարերը, որ հանդիպելու էին նրանց ճանապարհին, ահավոր էին լինելու: Դրա համար նրանք ավելի շատ հավատք փափագեցին:

Հավատ և հավատարմություն (Ղուկ. 17.6-10)

Հիսուսը վերահաստատում է նույնիսկ շատ փոքրիկ հավատի զորությունը, «Եթե դուք մանանեխի հատիկի չափ հավատ ունենայիք, կարող էիք այս թթենուն ասել. «Արմատախիլ եղիր և ծովի մեջ տնկվիր», և այն էլ ձեզ կենթարկվեր» (17.6): Իհարկե, այս հիպերբոլը (չափազանցությունը) շատ ուժեղ է. նույնիսկ փոքրիկ հավատը կարող է անհնարին թվացող սխրանքներ կատարել: Սակայն պատկերն այստեղ հետաքրքիր է ակնարկով, որն ուղղված է մի բանի, որ արմատակալած է և թվում է անհնարին է շարժել: Կրկնվեմ, որ մենք չպետք է չափից ավելին խորասուզվենք առակի մանրամասնությունների մեջ, սակայն այս ենթադրությունը հետաքրքիր է: Արքայությունը, որ հրեաներին թվում էր, որ հավիտյան հաստատված էր Երուսաղեմում, մոտ էր արմատախիլ լինելու և ծովի մեջ տնկվելու: Ծովը դասական հղում է հեթանոսական ազգերի ժողովուրդներին ու լեզուներին (Ես. 11.9, 60.5, Ամբ. 2.14): Մենք կարդում ենք, որ Մեծ պոռնիկը «նստած» էր այդպիսի «ջրերի» վրա (17.15) և անառակություն էր արել այդ բոլոր ազգերի հետ (18.3): Նա իրականում վհուկ էր, ով իր կախարդություններով մոլորեցրել էր նրանց բոլորին (18.23): Սակայն Հիսուսը փշրելու էր նրանց երկաթե գավազանով (19.15), կապելու էր օձին, որ այլևս չմոլորեցներ այդ ազգերին (20.3), որպեսզի չմոլորվածները (փրկվածները) քայլեին Նոր Երուսաղեմի լույսով (21.24-26): Իրականում ճիշտ էր, որ Արքայությունը շուտով փոխպատվաստվելու էր. այն վերցվելու էր Երուսաղեմից և տրվելու էր Իսրայելի մնացորդին ու հեթանոսներին: Այս փրկված բազմությունը ապակե ծով է կազմում Աստծո գահի առջև (Հայտ. 4.6, 15.2): (Այստեղ տեղին է նշել Եզեկիելի առաջին գլխի մարգարեության անիվները, անիվներ անիվների մեջ, որը ցուցադրում է Աստծո փառքի, Աստծո արքայության շարժողական բնույթը, որ Աստծո փառքը, արքայությունը կարող է տեղափոխվել, մի տեղում չի սահմանափակվելու. Գլխ. ԽՄԲ՝. Ա. Խ.):

Իսկ հավատն ինքնին մշտապես պետք է հնազանդության և քաջության պտուղ բերի: Հավատը միշտ պետք է դրսևորվի որպես հավատարմություն: Այն պետք է արտահայտվի որպես հնազանդություն և խոնարհություն: Հիսուսն այս միտքը փոխանցում է նաև Իր աշակերտներին.

> «Եթե մեկի ծառան հող մշակելուց կամ ոչխար պահելուց հետո դաշտից տուն գա, արդյո՞ք նրան կասի. «Շուտ արի և բազմիր սեղանի մոտ»: Չէ՞ որ ավելի շուտ կասի. «Ինձ համար ընթրիք պատրաստիր, ծառայողական հագուստդ հագիր և ծառայիր ինձ, մինչև ես ուտեմ ու խմեմ, իսկ հետո դու էլ կուտես ու կխմես»: Շնորհակալություն կհայտնի՞ իր ծառային՝ հրամայված բաներն անելու համար: Ուրեմն դուք նույնպես, երբ անեք այն ամենը, ինչ հրամայված է ձեզ, ասեք. «Մենք անարժան ծառաներ ենք, մենք միայն արել ենք այն, ինչ մեր պարտականությունն էր» (Ղուկ. 17.7-10):

Հիսուսն Իր աշակերտներից ակնկալում է, որ նրանք հավատարիմ կմնան՝ չնայած իրենց հանդիպած բոլոր նեղություններին ու գայթակղության քարերին: Իսկ երբ դուրս կգան այդ օրհնությունների մյուս ափը, նրանք պետք է ուշադիր լինեն, որպեսզի երբևէ չընկնեն այն կրոնական մեծագույն թակարդը, ինչպես փարիսեցիներն էին ասում. «Հիմա մենք արժանի ենք ստանալու դիրք, հարստություն, հանգիստ և այլն»: Ոչ, աշակերտները պետք է մնային աշխատանքային տրամադրվածությամբ և շարունակեին ծառայել իրենց Տիրոջը: Եվ նույնիսկ երբ նրանք հետ նայեին և տեսնեին որ իրենք ունեցել էին իրենց ժամանակի մեծագույն ձեռբերումները, պետք է շարունակեին մնալ խոնարհ. «Մենք ոչ մի բանի արժանի չենք, մենք ներված մեղավորներ ենք, Աստծո շնորհի պարտականները, մենք ընդամենն արել ենք այն, ինչ մենք պարտավոր էինք անել»: (Ամենաառաջին հատկանշական բանը, որ արևելքի ոչ բողոքական երկրներից արևմուտքի Բողոքական երկրներ գաղթող ժողովուրդը նկատում է արևմուտքի բողոքական ազգերի մեջ, բողոքի բացակայությունն է: Յուրաքանչյուր մարդ իր անձնական գործերով է զբաղվում՝ առանց բողոքելու, տրտնջալու կամ նեղվելու: Օրինակ, Իրանից /Թեհրանից/ Գերմանիա գաղթող (գաղ-

թած) մի մարդ, ով տարիներ շարունակ ապրել էր Գերմանիայում, ապշած պատմում էր, թե ինչպես են գերմանացի 80 տարեկան մեծահասակները առավոտ կանուխ արթնանում, որ իրենց տան դիմացի ձյունը մաքրեն թիակով: Ոչ բողոքական հավատացյալ անձի համար շաբաթը 6 օր ամեն օր աշխատելն առանց տրտնջալու անընդունելի ու նույնիսկ անհնարին է: Նրանք վարժված են ամենափոքր բաներից նվնվալու ու ամեն ինչի մասին իրենց բողոքը հայտնելու: Հիսուսը այս համարների մեջ մեզ զգուշացնում է, որպեսզի նույնիսկ մեծ ձախորդությունների ժամանակ չնվնվանք, չբողոքենք ու ինքնախղճահարության վշտի մեջ չմխրճվենք: Սրանք անմիտ հեթանոսների ապրելաոճի անբաժանելի մասն են կազմում: Օրինակ, երբ քայլում ես Երևանի փոքր փողոցներում ու տեսնում ես մի ցայտաղբյուր՝ նվիրված մի ինչ-որ 5 տարեկանի, որը մահացել է, և ցայտաղբյուրի վրա գրված է. <<դու մեզ լքեցիր և մեր սիրտը հավիտյան վշտի մեջ թողեցիր>> կամ նմանատիպ մի անհեթեթություն: Բողոքական հավատացյալը, երբ անձնական դժբախտություն է պատահում, զգում է և առաջ է անցնում՝ փորձելով մոռանալ անցյալը և նայել ապագային: Հեթանոսը դժբախտության դեպքում, որը այս աշխարհում անխուսափելի է, գրեթե միշտ շարքից դուրս է գալիս և արդյունավետ հասարակությունից կտրվում է: Այս է պատճառը, որ նայելով ոչ բողոքական երկրներին, տեսնում ենք, որ հասարակության մի հսկայական մաս դուրս է մնացած կյանքի պայքարներից, չի մասնակցում տնտեսական բարգավաճման գործին. կամ վշտի մեջ է մխրճված, կամ էլ բամբասելով, չարախոսելով և անվերջ բողոքելով է զբաղված. Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.):

Այս սցենարի վերջին խոսքերը համատեքստը նորից կապում են անիրավ տնտեսի առակի հետ: «Պարտականությունը» հունարեն opheilomen բառից է առաջանում, որ օգտագործված է առակում (16. 5,7)՝ հղում անելով պարտականներին ու նրանց պարտքերին: Հստակ է, որ Հիսուսը դեռևս խոսում է հավատարմության մասին, ինչպես խոսում էր այդ առակն ավարտելուց հետո, որպեսզի աշակերտները սովորեին տեսնել իրենց իրական պարտավորություններն իրենց ճշմարիտ Տիրոջ հանդեպ:

10. Հավատարիմ մնացորդը (Ղուկ. 17.11-18.43)

Ղուկաս 17.11-ը տեսարանի փոփոխություն է նկարագրում: Նախկին տեսարանում մենք տեսնում ենք Հիսուսի ինքնապաշտպանությունն ընդդեմ փարիսեցիների քննադատության՝ մեղավորների հետ ընկերություն անելու համար: Նա այս պաշտպանական խոսքի մեջ ներգրավում է նաև Իր աշակերտներին և քաջալերում է նրանց հավատարիմ մնալ՝ չընկնելով փարիսեցիական ծաղրանքի ուժեղ ազդեցության տակ: Այս բոլորը, սկսած Ղուկ. 15.1-ից մինչև 17.10-ը, ուղղակիորեն վերաբերում է Հիսուսի դատական գործին՝ ընդդեմ Իսրայելի, քանի որ իրական բաժանում էր լինելու հավատարիմ մնացորդի և ապստամբ առաջնորդների միջև, և այդ զարգացող գործընթացը վերաճելու էր ուժեղ պատերազմի՝ ընդդեմ սուրբերի: Դրան հաջորդող հատվածը հիմնականում վերաբերում է մնացորդի պաշտպանությանն՝ ընդդեմ ապստամբների. մնացորդի հաստատում, մնացորդի բնույթի նկարագրություն, դիմակայելու քաջալերանք ու գալիք օրհնություն, ընտրյալների բնույթի վերաբերյալ նշում, որպես լոկ Աստծո գործ և, որպես այս բոլորի կենդանի օրինակ՝ կույր Բարտիմեոսի բժշկությունը:

Փառաբանություն և դիմակայություն

Բորոտ մնացորդը (Ղուկ. 17.11-19)

Տեսարանը սկսվում է բժշկության դրվագով, որ ինքնին հանդես է գալիս որպես առակ: Երբ Հիսուսն անցնում էր մի գյուղով, 10 բորոտներ հեռվում կանգ առան (ըստ Օրենքի պահանջի, Ղևտ. 13.46) և ողորմության համար աղաղակեցին: Հիսուսը նրանց բժշկության հետ կապված ոչ մի բացահայտ բան չասաց, սակայն պատվիրեց, որ

գնան և ներկայանան քահանային (որ նույնպես ըստ Օրենքի էր, Ղևտ. 13.2): Նրանք հարցականի տակ չդրեցին Նրա մեթոդը, այլ լռելյայն հետևեցին Նրա պատվերին: Եվ երբ գնում էին, բորոտությունից մաքրվեցին: 10 բորոտներից մեկն անմիջապես հետ եկավ Հիսուսի մոտ և սկսեց փառաբանել Աստծուն ու շնորհակալություն հայտնել Հիսուսին: Ստացվեց այնպես, որ այս միակ երախտագետ մարդը սամարացի էր: Հիսուսի արձագանքը հետաքրքիր է.

> «Հետո Հիսուսը պատասխանեց. «Չէ՞ որ տասն էլ մաքրվեցին: Իսկ ու՞ր են ինը: Այս օտարականից բացի ոչ ոք չգտնվե՞ց, որպեսզի հետ գար և փառք տար Աստծուն»: Եվ ասաց նրան. «Վեր կաց և գնա քո ճանապարհով, քո հավատը քեզ բժշկեց» (Ղուկ. 17.17-19):

Այստեղ նկարագրված ամենակարևոր գաղափարը հավատարիմ մնացորդն է: Միայն շատ փոքր մի հատվածն իրականում պատրաստ եղավ փառաբանելու Աստծուն: Մնացածը ստացան իրենց օրինությունն ու հեռացան և ով գիտի, թե ինչ արեցին դրա հետ: Նրանք հնազանդվեցին Հիսուսի արտաքին պատվերին ճիշտ այնպես, ինչպես փարիսեցիներն ու օրինականները, որոնք հնազանդվում էին Օրենքի մանրուքներին ու պակաս կարևոր բաներին, սակայն անտեսում էին ավելի ծանրակշիռ բաները՝ արդարադատությունը, սերը և այլն: Սակայն արդյո՞ք այդ կարևոր բաներն անտեսող մարդիկ կարող էին առաջ գնալ և կատարել իրենց ամենակարևոր պարտականությունը՝ հավատարմություն ցուցաբերել և շնորհակալություն հայտնել իրենց միակ ճշմարիտ Տիրոջն ու ճշմարիտ Քահանայապետին: *Վերջում պարզվեց, որ միայն մնացորդն է հավատարիմ ընտրյալը:* Շատերն էին կանչված, սակայն միայն մնացորդն էր ընտրված:

Այս դրվագը կրկնում է և նախկին ինը քննարկած միքանի թեմաներ. առաջին, այդ ընտրյալներն այնպիսի մարդկանց միջավայրից էին, որոնց մասին փարիսեցիները (և հրեաների մեծ մասը) մտածում էին որպես չփրկվողների՝ մեղավորներ, մաքսավորներ, սամարացիներ: Առաջնորդներն անտեսել էին Աստծո սերը և այդ պատճառով երբևէ չէին կարող տեսնել հավատարիմների սիրված մնացորդը: Երկրորդ, նկատեք հավատի վրա դրված շեշտը: Մաքրված սամարացին գովվում է իր հավատի համար (հ. 19): Սա է ճշմարիտ ընտրյալի նշանը՝ անկախ նրանց սոցիալական դիրքից: Երրորդ, նրա հավատը

նրան մղեց հավատարմության դրսևորման: Հիսուսը քիչ առաջ հենց սա էր ընդգծել Իր աշակերտների հետ խոսելիս (16.10-13, 17.1-10): Իսկ հիմա այս բժշկության կյանքի իրական օրինակը հաստատեց դա:

Անտեսանելի Արքայություն, տեսանելի գալուստ (Ղուկ. 17.20-37)

Հաջորդ հատվածը սկսվում է փարիսեցիների հետ խոսքի կարճ փոխանակմամբ և շարունակվում է աշակերտների հետ առանձին բացատրությամբ: Փարիսեցիները պահանջում են, որ Հիսուսը բացահայտ խոսի Արքայության մասին.

> «Երբ փարիսեցիները նրան հարցրեցին, թե երբ կգա Աստծո արքայությունը, պատասխանեց. «Աստծո արքայությունը չի գալիս երևացող նշաններով, ոչ էլ կասեն. «Ահա այստեղ է» կամ «Այնտեղ է», քանի որ ահա, Աստծո արքայությունը ձեր մեջ ներկա է» (Ղուկ. 17.20-21):

Հարցը ցույց է տալիս, որ փարիսեցիները հասկացել էին, որ Հիսուսն ուսուցանում է մոտալուտ ինչ-որ բանի մասին: Հիսուսը մինչև հիմա նրանց հետ խոսել էր մեծ փոփոխության, մեծ բաժանման և գալիք դատաստանի մասին: Նա ավելի վաղ նույնիսկ բացահայտորեն հանդիմանել էր ժողովրդին՝ ժամանակները չզանազանելու համար (12.54-59), քարոզել էր Արքայության վերաբերյալ առակներ (13.18-21) և նախազգուշացրել էր, որ նրանք մնալու էին Արքայության փակ դռան հետևում, մինչդեռ մյուսները ներս էին մտնելու (13.28-29): Նա, փաստորեն, հենց նոր էր հանդիմանել մի խումբ փարիսեցիների՝ Արքայության բնույթը չզանազանելու համար, որ քարոզվում էր՝ սկսած Հովհաննես Մկրտչից (16.16-17): Այնպես որ նրանք գիտեին, թե ինչի մասին են հարցնում:

Բայց ինչպես Հիսուսի հետ կապված մնացած բոլոր դեպքերում, այստեղ էլ նրանք բաց էին թողել Նրա ուսուցման գլխավոր իմաստը: Աստծո Արքայությունը քարոզվում էր սկսած Հովհաննես Մկրտչից ոչ թե, որ այն դեռ գալու էր, այլ որովհետև Նա արդեն այստեղ էր: Իրոք, հորիզոնում մի շատ մեծ ու կարևոր բան էր հասունանում, սակայն դա Արքայության գալուստը չէր: Հիսուսն ավելի վաղ, Իր ճանապարհորդության ընթացքում, պարզ հասկացրել էր, որ

Արքայությունն իրականում եկել է հենց Իր հետ. «Բայց եթե ես Աստծո մատով եմ հանում դևերը, ուրեմն Աստծո Արքայությունը հասել է ձեզ վրա» (Ղուկ. 11.20): Հիմա նա փարիսեցիներին նորից է հիշեցնում այս իրականությունը. «Աստծո արքայությունը ձեր մեջ ներկա է» (17.21): Սակայն Նա չի ուղղում նրանց թյուրըմբռնումը, որ դա մի բան է, որ նրանք կարող էին տեսնել կամ նկատել, և որ այն շուտով երևացող ձևով գալու էր նրանց վրա, այսինքն՝ Երուսաղեմի կործանումը: Այս նախազգուշացման համար Նա նորից առանձին դիմում է Իր աշակերտներին (17.22): Ինչու՞: Որովհետև փարիսեցիները չափազանց կույր էին, որպեսզի տեսնեին Իրեն: Եվ նրանք կմնային իրենց կուրության մեջ և կընկնեին դատաստանի տակ: Այս տեղեկությունը փարիսեցիներից թաքցնելու Հիսուսի կերպը մեզ նորից հիշեցնում է առակներով խոսելու ամբողջ գաղափարը, որ չընտրվածներին թույլ չէր տրվում հասկանալ և ընկալել ճշմարտության պարզ վկայությունը (Ղուկ. 8.9-10,18): Նրանք սահմանված էին կործանման (Հուդա 4) (Մարդկանց այն պնդումը որ Աստվածաշունչը գրվել է այնպիսի լեզվով որ նույնիսկ ամենապարզ մտքի տեր մարդը կարողանա հասկանալ, դա մեծ մասամբ սխալ է: Հենց Հիսուսի առակներով խոսելը ապացուցում է այն փաստը որ Հիսուսը մտադիր չէր ամեն տեղ պարզ խոսեր որպեսզի բոլորը իրեն հասկանային: Թվոց 12.6-ում Աստված ասում է որ միայն Իր մարգարեների հետ է խոսում տեսիլքներով և երազներով, Թվոց 12.8-ում Աստված հայտնում է որ Մովսեսի հետ պարզ կերպով է խոսում, դեմ առ դեմ, առանց հանելուկների, կամ առակների: Ամովս 3.7-ում գրված է որ Աստված ոչինչ չի անում առանց իր մարգարեներին հայտնելու, այսինքն, միայն Իր մարգարեներին է հայտնում, և ոչ թէ բոլորին: Նույնիսկ Աստվածաշնչի մեջ կան վարդապետություններ և իրականություններ որ մարդուն պահանջվում է լուրջ Աստվածաբանական և գիտական կարողություններ ունենալ հասկանալու դրանց բարդությունները: Օրինակ, Հիսուսի մարդ և Աստված լինելու առեղծվածը, երրորդության վարդապետությունը, հաղորդության հացի և գինու իմաստը: Կան բաներ, օրինակ Ավետարանը, որը պարզ կերպով կարելի է հասկանալ, որ մեկը եկավ ու մեռավ որպեսզի փոխարինի ապաշխարող մեղավորին կրելով նրա պատիժը և անեծքը, բայց շատ ավելի վարդապետություններ մեծ բարդություններ և խորություններ ունեն: Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.):

Այսպիսով, Արքայության գալն անտեսանելի էր փարիսեցիների

համար: Նա կանգնած էր ուղիղ նրանց աչքերի առաջ, մինչդեռ նրանք պահանջում էին ասել, թե երբ էր այն գալու: Սա հենց կուրությունն է: Դա ճիշտ և ճիշտ նույն է, երբ Պիղատոսը, նայելով Մարմնացած Ճշմարտությանը, հարցնում է. «Ի՞նչ է Ճշմարտությունը» (Հովհ. 18.38): Չհավատացող Իսրայելը հանցավոր էր նույն խորն անհավատությունն ունենալու համար, ինչպես Հռոմը, կամ ցանկացած այլ հեթանոսական ազգ, եթե ոչ նրանցից ավելի:

Բայց աշակերտները հատուկ ցուցումներ են ստանում գալիք դատաստանի տեսանելի բնույթի վերաբերյալ: Շատերը կփնտրեն Քրիստոսին, երբ Քրիստոսն արդեն գնացած կլինի (դա է պատճառը, որ այդ ժամանակամիջոցում բազմաթիվ կեղծ Քրիստոսներ կլինեն. Մատթ. 24.5, Ղուկ. 21.8), և այն բոլոր մարդկանց մեջ, ովքեր խորը հետաքրքրություն ունեն Նրա գալուստի հանդեպ, աշակերտները կլինեն ամենաանհանգիստը, որովհետև նրանք կլինեն այն սակավաթիվ մարդկանցից, ովքեր հաստատ գիտեն, որ Նա հետ է գալու իրենց կյանքի ընթացքում: Դրա համար Քրիստոսը ցանկանում է նրանց հակաթույն ներարկել՝ ընդդեմ կեղծ քրիստոսների: Նա սա անում է նրանց ուսուցանելով գալիք կործանման իրական բնույթի մասին, որի մասին Նա նախապես քարոզել էր.

> «Եվ իր աշակերտներին ասաց. «Օրեր են գալիս, երբ կփափագեք տեսնել Մարդու Որդու օրերից մեկը, սակայն չեք տեսնի: Եվ ձեզ կասեն. «Ահա այնտեղ է», կամ «Ահա այստեղ է», դուրս մի եկեք և մի հետևեք նրանց, որովհետև ինչպես կայծակն է փայլում և լուսավորում երկնքի մի ծայրից մյուսը, այնպես էլ կլինի Մարդու Որդին իր օրում: Բայց սկզբում նա պետք է շատ տառապանքներ կրի և մերժվի այս սերնդից: Ճիշտ ինչպես Նոյի օրերում, այնպես կլինի նաև Մարդու Որդու օրերում: Ուտում էին ու խմում, ամուսնանում էին ու ամուսնացնում, մինչև այն օրը, երբ Նոյը մտավ տապանը, և ջրհեղեղը եկավ ու բոլորին կործանեց: Նմանապես, ինչպես Ղովտի օրերում էր. ուտում էին ու խմում, առնում էին ու ծախում, տնկում էին ու կառուցում, բայց այն օրը, երբ Ղովտը դուրս եկավ Սոդոմից, կրակ ու ծծումբ թափվեց երկնքից ու բոլորին կործանեց: Այդպես կլինի նաև այն օրը, երբ

> Մարդու Որդին հայտնվի: Այդ օրը, ով տանիքին է, իսկ ապրանքները՝ տանը, թող չիջնի ներքև՝ վերցնելու դրանք իր հետ, նմանապես նա, ով դաշտում է, թող հետ չդառնա: Հիշեք Ղոտվի կնոջը: Նա, ով աշխատի փրկել իր կյանքը, կկորցնի այն, բայց ով կորցնի իր կյանքը, կպահպանի այն: Ասում եմ ձեզ, որ այդ գիշեր երկուսը նույն անկողնում կլինեն: Մեկը կվերցվի, իսկ մյուսը կթողվի»: Եվ նրանք ասացին. «Որտե՞ղ Տեր»: Նա ասաց նրանց. «Որտեղ դիակն է, այնտեղ էլ կհավաքվեն անգղերը» (Ղուկ. 17.22-37):

Մենք այս հատվածի մի մասն արդեն քննարկել ենք՝ Նոյի և Ղովտի դուրս գալու կրկնվող պատմությունների հետ կապված: Նրանք երկուսն էլ, նախազգուշացված լինելով, նախապատրաստվել էին գալիք դատաստանին և դուրս եկան, երբ ժամանակը հասավ: Մյուսներին անակնկալի բերեց հանկարծահաս համընդհանուր աղետալի դատաստանը: Հիսուսն այստեղ հարմար է գտնում զգուշացնել Իր աշակերտներին, սակայն ոչ մարդկանց բազմություններին կամ փարիսեցիներին: Այս զգուշացումը միայն ընտրյալ մնացորդի համար էր, քանի որ միայն նրանք էին ժամանակին դուրս գալու:

Այս դասն անհրաժեշտ էր, որովհետև կեղծ քրիստոսներին հետևվելու ճնշումն ահավոր մեծ էր լինելու: Հիսուսն ավելի ուշ կասեր, որ այդ կեղծ մարգարեներն այնքան համոզիչ էին լինելու, որ եթե հնարավոր լիներ ընտրյալներին էլ կմոլորեցնեին (Մատթ. 24.24): Մեկ այլ խոսքով, ընտրյալ մնացորդը պետք է հատուկ կենտրոնացում ունենար ճշմարիտ Քրիստոսի վրա և հատուկ նախազգուշացում ստանար, որը և այստեղ ստանում են: «Ահա, ես ձեզ նախօրոք եմ ասում» (Մատթ. 24.25): Դրանից հետո Հիսուսն անմիջապես անցնում է մի առակի, որը վերաբերում է ընտրյալների ջերմեռանդ աղոթքին, ինչպես մենք կտեսնենք:

Ի հավելումն այս դասի, որ մենք նախկինում արդեն քննարկել էինք, կարևոր է նշել Հիսուսի կանխասացությունը. «Բայց սկզբում նա պետք է շատ տառապանքներ կրի և մերժվի այս սերնդից» (17.25): Այս համարը մեծ կարևորություն կստանա ավելի ուշ, երբ մենք տեսնենք, որ Հիսուսը նորից է խոսում «այս սերնդի» մասին: Նրանց համար, ովքեր գայթակղություն կունենան հակաճառելու, որ «այս սերունդ»-ը վերաբերում է մեկ այլ բանի (ավելի ընդհանուր

կամ ավելի ապագային վերաբերող մի բանի), քան այն սերունդը, ում հետ Հիսուսը խոսում էր այդ պահին, Ղուկաս 17.25-ի համատեքստն այստեղ պարզաբանում է, որ Հիսուսի ասած «այս սերունդը» լինելու էր այն նույն սերունդը, որը մերժեց Նրան ու պատճառ հանդիսացավ Նրա տառապանքի համար:

Բայցևայնպես, հիմնական դասն այստեղ աշակերտների համար է. Մարդու Որդու օրվա համար չի պահանջվի լարված ուշադրություն, կամ գաղտնի տեղեկություններ՝ Նրա գտնվելու վայրի վերաբերյալ: Ընդհակառակը, այն լինելու էր բոլորի համար տեսանելի և հստակ, ինչպես կայծակն է ծայրից ծայր լուսավորում երկինքը: Հարցը նրանում էր, որ աշակերտները պատրաստ կլինեին դրա համար, իսկ անհավատարիմ Իսրայելը՝ ոչ, որովհետև մնացորդն արդեն գիտեր, որ ծածուկ Արքայությունն արդեն եկել էր և նրանց մեջ էր գտնվում, և այդպիսով պատրաստված կլինեին գալիք դատաստանի հայտնվելուն: Փարիսեցիների համար այդ Արքայությունն անտեսանելի կլիներ, և նրանք կշարունակեին փնտրել այն, անգամ երբ մեծ դատաստանը գար նրանց վրա:

Հաստատակամ (Համառ) որբևայրու առակը (Ղուկ. 18.1-8)

Հիսուսն Իր աշակերտներին ուղղված առանձին դասը շարունակում է հաստատակամ (Համառ) որբևայրու առակով.

> «Եվ նրանց մի առակ պատմեց այն բանի վերաբերյալ, որ պետք է շարունակ աղոթեին և չթուլանային: Ասաց նրանց. «Մի քաղաքում մի դատավոր կար, որ ոչ Աստծուց էր վախենում, ոչ էլ մարդկանց էր հարգում: Այդ քաղաքում մի որբևայրի էլ կար, ով շարունակ գալիս էր նրա մոտ և ասում. «Արդարադատություն արա ինձ իմ ոսոխի դեմ»: Մի որոշ ժամանակ նա մերժեց, բայց հետո ինքն իրեն ասաց. «Թեև ես ոչ Աստծուց եմ վախենում, ոչ էլ մարդկանց եմ հարգում, բայց քանի որ այս որբևայրին անհանգստացնում է ինձ, արդարադատություն անեմ նրան, որպեսզի անընդհատ գալով չհոգնեցնի ինձ»: Եվ Տերն ասաց. «Լսեք, ինչ է ասում անարդար դատավորը: Իսկ Աստված Իր ընտրյալներին արդարադատություն չի՞ անի, ովքեր

> գիշեր ու ցերեկ աղաղակում են Նրան: Կշարունակի՞ անընդհատ ուշացնել նրանց պատասխանը: Ասում եմ ձեզ, նա շուտով արդարադատություն կանի նրանց համար: Սակայն, երբ Մարդու Որդին գա, աշխարհի վրա հավատ կգտնի՞» (Ղուկ. 18.1-8):

Հաշվի առնելով, որ աշակերտները գալիք մի քանի տասնամյակների ընթացքում թեժ հոնցով էին անցնելու՝ ի՞նչը կարող էր լինել հիմնական դեղամիջոցը՝ նրանց մնացորդի հավատարմության վրա կենտրոնացած պահելու համար: Հիսուսը անդադար աղոթք է դեղագրում: Առակն ավելի քչից գնում է դեպի ավելի շատը. եթե նույնիսկ անարդար դատավորը ձանձրացնելու պատճառով կպատասխանի քաղաքացու դիմումներին, ինչքան առավել Աստված՝ արդար Դատավորը, արդարադատություն կանի Իր ընտրյալներին, երբ նրանք անդադար աղոթեն: Իրականում, Նա կանի, և այն էլ՝ շուտով: Այսպիսով, ընտրյալների անընդհատ աղոթքը նաև արդյունավետ աղոթք է:

Կան մի քանի բաներ, որ այստեղ հատուկ ուշադրության են արժանի: Առաջին, այս դասը միայն աշակերտների՝ ընտրյալների համար է: Եվ սա հաստատվում է առակում եղած խոստումով, որ Աստված «իր ընտրյալների» վրեժը կլուծի (հ. 7): Երկրորդ, Աստված շուտով կլուծի նրանց վրեժը՝ առանց ուշացնելու: Իրականում, վրեժխնդրությունը գալու էր դեռևս աշակերտների կյանքի ընթաց-քում, այնպես որ այս բոլոր կարեկցական զգուշացումներն ուղղված են նրանց: Երրորդ, թե՛ որբևայրու, թե՛ աշակերտների խնդիրը լինելու էր արդարադատությունն (վրեժխնդրությունը) ընդդեմ իրենց թշնամիների (18.3): Չէ՞ որ Հիսուսը հենց նոր էր նրանց զգուշացրել, որ անշուշտ շատ գայթակղություններ էին գալու (17.1-2): Իրականում, մենք կարդում ենք, որ առաջին դարի սրբերը, որոնք նահատակվեցին հրեաների ձեռքով, ինչպես նաև մյուսները, երկնքում փաստորեն շարունակ աղոթում են, որ իրենց համար վրեժ լուծվի (Հայտ. 6.10): Աստծո պատասխանն այդ աղոթքներին, այսպիսով, կլիներ մեծ դատաստանը, որ Նա հենց նոր էր նկարագրել (Ղուկ. 17.26-37, տես նաև Հայտ. 11.18): Վերջապես, որոշիչ գործոնը հավատն է. «երբ Մարդու Որդին գա, աշխարհի վրա հավատ կգտնի՞» (Ղուկ. 18.8): Այո, իհարկե, կգտնի: Սա քաջալերանք էր աշակերտների համար՝ մնալու աղոթքի մեջ: Նրանք հենց նոր էին խնդրել, որ Հիսուսն ավելացներ

իրենց հավատը (17.5): Հիսուսն այսպիսով նրանց ցույց է տալիս, թե ինչպես զորանային գալիք դժվարին ժամանակների մեջ. անդադար աղոթքը և Աստծո վրեժխնդրությունը:

Փարիսեցու և մաքսավորի առակը (Ղուկ. 18.9-14)

Հաջորդ առակից մենք հավանաբար կարող ենք հետևություն անել, որ 17.20-ի փարիսեցիները դեռ ականջ էին դնում Նրան՝ գտնվելով Նրան շրջապատող բազմության մեջ: Իր աշակերտներին ցուցումներ տալուց հետո, Հիսուսը դիմում է մարդկային մի անանուն խմբի «ովքեր վստահ էին իրենք իրենց վրա, որ արդար են, իսկ մյուսներին արհամարհանքով էին վերաբերվում» (18.9-14): Մենք արդեն մեկ անգամ չէ, որ տեսել ենք փարիսեցիական բնավորության գծեր, և այս նկարագրությունը ճիշտ համապատասխանում է նրանց: Հիսուսն ասում է.

> «Երկու մարդ բարձրացավ տաճար աղոթելու՝ մեկը փարիսեցի, մյուսը մաքսավոր: Փարիսեցին, առանձին կանգնած, այսպես էր աղոթում. «Ով Աստված, շնորհակալ եմ, որ մյուս մարդկանց պես չեմ՝ հափշտակող, անիրավ, շնացող, կամ նույնիսկ այս մաքսավորի նման: Շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և իմ եկամտից տասանորդ եմ տալիս»: Իսկ մաքսավորը, հեռվում կանգնած, աչքերը նույնիսկ երկինք չէր բարձրացնում, այլ կուծքն էր ծեծում՝ ասելով. «Ով Աստված, ողորմիր ինձ՝ մեղավորիս»: Ասում եմ ձեզ, այս մարդն իր տուն գնաց արդարացած, այլ ոչ թե մյուսը: Որովհետև ով ինքն իրեն բարձրացնի, կխոնարհվի, իսկ ով ինքն իրեն խոնարհեցնի, կբարձրանա»:

Մենք այստեղ նորից նույն պատկերն ենք տեսնում, որ ճշմարիտ ընտրյալները լինելու էին անիրավների, մաքսավորների և նմանատիպ այլ մարդկանց միջից: Մենք այստեղ նորից հանդիպում ենք հիշեցման, որ խոնարհ ապաշխարությունն է Արքայություն մտնելու բանալին: Մաքսավորի և ճշմարիտ ապաշխարության թեման շատ մոտ ապագայում հասնելու էր իր գագաթնակետին՝ մարմնավորվելով Զակքեոսի անձում (Ղուկ. 19.1): Մենք մինչև հիմա մեկից ավելի

հղումներ ենք տեսել ինքնաարդարացման վերաբերյալ. օրինականը, Ղուկ. 10.25-ում, դրան ի պատասխան ստացավ Բարի սամարացու առակը, փարիսեցին, Ղուկ. 16.15-ում, հանդիմանություն ստացավ հարուստի և Ղազարոսի առակի միջոցով: Իսկ այստեղ էլ մարդկային մի անանուն խումբ բաց տեքստով դաս է ստանում: Ոչ մի բան այն ամենից, որով մենք նույնիսկ մտածում ենք պարծենալ Աստծո առաջ, չի կարող նպաստել մեր արդարացմանը: Իսրայելը պետք է ճշմարտապես ապաշխարեր: Եվ մեր բարձրանալու (ընտրվելու) հարցում մենք երբեք ակտիվ մասնակցություն չունենք, այլ միայն պասիվ. նրան, ով խոնարհվի, կբարձրացնեն (18.14):

Իրականում, այս պասիվությունն ինքնին հանդիսանում է Արքայության որդիների նշանը: Ճիշտ ինչպես այն փոքրիկ երեխան, որին բերեցին Քրիստոսի մոտ, որոնցն է Աստծո Արքայությունը.

> «Այդ ժամանակ փոքրիկ երեխաներ էին բերում նրա մոտ, որ դիպչեր նրանց: Եվ երբ աշակերտները տեսան, հանդիմանեցին նրանց: Բայց Հիսուսը նրանց իր մոտ կանչեց ու ասաց. «Թույլ տվեք, թող երեխաներն ինձ մոտ գան և մի արգելեք նրանց, որովհետև այդպիսիներին է պատկանում Աստծո արքայությունը: Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե մեկն Աստծո արքայությունը երեխայի պես չընդունի, չի կարող մտնել դրա մեջ» (Ղուկ. 18.15-17):

Ղուկասը պարզաբանում է, որ սրանք փոքրիկ երեխաներ էին (brephe), ոչ թե պարզապես երեխաներ, և նրանց պասիվ կերպով ուղղակի բերել էին Հիսուսի մոտ (պասիվ կերպ ասելով նկատի ունենք որ երեխաները իրենց ոտքով ու որոշումով չեկան, այլ, նրանց բերեցին): Մենք կարող ենք նույնիսկ համարել, որ փոքրիկ երեխաներ լինելով, նրանց բառացիորեն գրկած բերել էին Հիսուսի մոտ: Սա այս համատեքստում կարևոր է: Կարծում եմ, սովորաբար այս հատվածը հասկացվում է այսպես. քանի որ երեխան որոշ իմաստով անվերապահ հավատ ունի, հենց դա է Արքայություն մտնելու բանալին, և մենք էլ պետք է այդ լիարժեք հավատն ունենանք, որպեսզի կարողանանք մտնել Արքայություն: Սակայն Հիսուսը մի քիչ առաջ ասել էր, որ նույնիսկ շատ փոքրիկ հավատը կարող էր հրաշքներ գործել (17.6): Եվ ով կարող է երբևէ մտնել Արքայություն, եթե չափանիշը լինի լիարժեք հավատը: Ոչ, կարծում եմ այստեղ շեշտը փոքրիկ երեխաների

պասիվության ու անօգնականության վրա է, որոնց գրկած բերել էին Հիսուսի մոտ: Այսպիսիներինն է Աստծո Արքայությունը: Ճիշտ ինչպես մաքսավորը, ում մենք մի փոքր առաջ տեսանք, որ բարձրաձայնում էր իր բացարձակ անարժանությունը, եթե Աստված Ինքը չնախաձեռներ նրա մեղքերը ներելու հարցը: Այսպիսով, բոլոր նրանք, ովքեր մտնելու են Արքայություն, կատարելապես անօգնական կլինեն, եթե Աստված նրանց չընտրի ու չմոտեցնի Իրեն: Նա, ով ինքն իրեն խոնարհեցնի, Աստված նրան կբարձրացնի:

Աշակերտության թանկ գինը (նորից) (Ղուկաս 18.18-34)

Այս պատմության շարունակությունը տանում է մի ծանոթ սցենարի. մի մեծահարուստ երիտասարդ Հիսուսին հարցնում է հավիտենական կյանք ունենալու պահանջների մասին: Մենք գրեթե նմանատիպ խոսակցություն ենք տեսնում նաև Ղուկ. 10.25-28-ում, որտեղ Քրիստոսին մոտեցավ մի օրինական: Նա այստեղ ներկայացվում է որպես «մի իշխան».

> «Եվ մի իշխան հարցրեց նրան. «Բարի վարդապետ, ի՞նչ պետք է անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ: Իսկ Հիսուսն ասաց նրան. «Ինչո՞ւ ես ինձ բարի անվանում: Ոչ ոք բարի չէ, բայց միայն Աստված: Պատվիրանները գիտես. «Մի շնացիր, մի սպանիր, մի գողացիր, սուտ վկայություն մի արա (տուր), պատվիր քո հորն ու մորը»: Եվ նա ասաց. «Ես իմ երիտասարդությունից պահել եմ դրանք բոլորը»: Երբ Հիսուսը դա լսեց, ասաց նրան. «Մի բան տակավին պակասում է քեզ: Վաճառիր այն ամենը, ինչ ունես, բաժանիր աղքատներին և երկնքում գանձ կունենաս, և արի հետևիր ինձ»: Բայց երբ նա լսեց այս բաները, շատ տխրեց, քանի որ չափազանց հարուստ էր» (Ղուկ. 18.18-23):

Սա տեքստային ևս մեկ մեծ օրինակ է, որ հաճախ ճիշտ չի մեկնաբանվել, քանի որ հաշվի չի առնվել, որ այն տեղի է ունեցել մինչ ՔՀ 70 թ.-ի համատեքստում: Եթե մենք սա ընդունենք որպես բարոյականության վերաբերյալ մնայուն դաս, ապա մենք ստիպված

կլինենք ընդունել, որ Հիսուսը մշտական աղքատություն է սովորեցնում (Սոցիալիզմ): Բացի դրանից, Հիսուսը հստակ ասում է այս մարդուն, որ նա ի հավելումն պատվիրանների պետք է վաճառեր իր ողջ ունեցվածքը և բաժաներ աղքատներին: Կամ Նա շարունակական աղքատության գաղափարն առաջ էր մղում որպես Արքայության էթիկա, կամ էլ Նա իրականում նկատի չուներ այն, ինչ ասում էր այդ պահին, որն անընդունելի եզրակացություն է Աստվածաշնչի ցանկացած ընթերցողի համար: Կամ էլ, կա երրորդ ակնհայտ տարբերակ. Հիսուսը նորից հիշեցնում էր աշակերտության գինն այդ սերնդի հավատացյալներին: Ցանկացած մեկը, ով ցանկանար խուսափել Երուսաղեմի գալիք կործանումից, պետք է վերացներ (այն վաճառելով) իր անշարժ գույքը: Իսկ կարիքավոր հավատացյալների միջև բաշխելը միակ ճիշտ բանը կլիներ, որ կարելի էր անել հավելյալ կանխիկ դրամի հետ: Ինչպես մենք մեկ անգամ չէ, որ արդեն քննարկել ենք, սա հենց այն է, ինչ արեցին առաջին դարի հավատացյալները (Գործք 2.45, 4.34-35): Հատկապես մեծահարուստ մարդու համար, ով հպարտ էր Երուսաղեմի մոտակայքում ունեցած իր ունեցվածքով, աներևակայելի էր ամեն բան վաճառելը մի բանի համար, որ նա վստահ չէր, որ հաստատ տեղի էր ունենալու (դա տեղի կունենար 40 տարուց հաստատ ոչ շուտ, իսկ այն ամենը, ինչ նա լսել էր, ընդամենը Հիսուսի վկայության վրա հիմնված խոսակցություններ էին): Բայցևայնպես, Հիսուսը դա պահանջում է որպես հավիտենական կյանք ունենալու չափանիշ. ճիշտ այնպես, ինչպես Նա արդեն մի քանի առիթներով խրախուսել էր Իր աշակերտներին, որպեսզի կապված չլինեին իրենց ունեցվածքին, այլ պատրաստ լինեին քաղաքից դուրս գալու, երբ պահը գար:

Սա հեշտ կլիներ անել հատկապես նրանց համար, ովքեր շատ քիչ բան ունեին իրենց կապող: Շատ հարուստ մարդկանց համար, ովքեր իրենց հասարակական հեղինակությունը հիմնել էին իրենց դիրքի վրա, դա գրեթե անհաղթահարելի քայլ կլիներ: Դա իրականում անհնարին կլիներ, եթե Աստծո շնորհը չփոխեր նրանց սրտերը: Հենց սրա մասին է խոսում Քրիստոսը, երբ բոլորին ապշեցնում է Իր հայտարարությամբ. «Ինչքան դժվար է նրանց համար, ովքեր հարստություն ունեն, մտնել Աստծո արքայությունը: Ավելի հեշտ է, որ ուղտն ասեղի ծակով անցնի, քան հարուստը մտնի Աստծո արքայություն» (18.24-258): Նրան լսողները հասկացան, որ սա անհաղթահարելի չափանիշ էր. «Ուրեմն, ո՞վ կարող է փրկվել»:

Սակայն Հիսուսը նրանց հիշեցնում է ամենակարևոր դասը, որ Նա քարոզում էր ողջ ճանապարհորդության ընթացքում. ցանկացած մեկը փրկվում է միայն Աստծո շնորհով, և բոլոր նրանք, ում Աստված շնորհ է տալիս, կփրկվեն, լինեն աղքատ, թե հարուստ: Կարճ ասած՝ միայն ընտրյալներն էին դուրս գալու. «Այն, ինչ անհնարին է մարդու համար, հնարավոր է Աստծո համար» (18.27):

Պետրոսն էլ է հայտարարում, որ ինքը և մյուս առաքյալներն իրոք ընդունել էին այն բարձր չափանիշը, որի մասին Հիսուսը խոսում էր. «Եվ Պետրոսն ասաց. «Տես, մենք թողեցինք մեր տներն ու հետևեցինք քեզ» (Ղուկ. 18.28): Միգուցե, Պետրոսն ուզում էր երկմտող լսարանին մի օրինակ բերել, որ դա հնարավոր է անել, կամ էլ, միգուցե, սա մեզ լավ ծանոթ անհամբեր (և շուտ հուզվող) Պետրոսն է, որ մյուսներից շուտ էր արտահայտվում: Ինչ էլ որ լինի դրդապատճառը, սա ցույց է տալիս, որ Պետրոսը հասկացել էր, որ Հիսուսը բառացիորեն ասում էր՝ ամեն բան վաճառել ու հետևել Իրեն: Այնպես որ սա չէր կարող հավիտենական կանոն լինել բոլոր հավատացյալների համար բոլոր ժամանակներում, այլ միայն առաջին դարի եկեղեցու, որ հանդիպելու էր Երուսաղեմի կործանմանը, այլապես, մենք բոլորս պետք է շարունակեինք ընդունել Հիսուսի քարոզած շարունակական աղքատությունը: Նաև, ինչ էլ որ լիներ Պետրոսի դրդապատճառը, Հիսուսը վավերացնում է աշակերտների զոհաբերության իսկությունը. «Եվ Նա ասաց նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, չկա մեկը, ով թողեց տուն, կամ կին, կամ եղբայրներ, կամ ծնողներ, կամ երեխաներ հանուն Աստծո արքայության, որ չի ստանա շատ ավելին այս ժամանակում, իսկ գալիք ժամանակաշրջանում՝ հավիտենական կյանքը» (18.29-30):

Այստեղ երկու բան կա, որ վերաբերում է ժամանակին. առաջինը «այս ժամանակում» արտահայտությունն է, իսկ երկրորդը՝ «գալիք ժամանակաշրջանում»: Մենք «այս ժամանակ» կամ «ներկա ժամանակ» արտահայտությունը քննարկել ենք նաև ապագան չտեսնելու կեղծավորության հատվածում (Ղուկ. 12.54-59): Նմանապես, մենք նաև քննարկել ենք «այս ժամանակաշրջան» և «գալիք ժամանակաշրջան» արտահայտությունների տարբերությունը ցորենի և որոմների առակի (Մաթ. 13.24-30, 36-43) վերաբերյալ մեր քննարկման ժամանակ: Երկու համատեքստերի արդյունքներն, իմ կարծիքով, այստեղ նույնն են. Հիսուսը կրկնում է Հին Կտակարանի (որի մեջ Նա և Իր լսարանն էին այդ պահին գտնվում, և որը մոտենում

էր իր ավարտին) և Նոր Կտակարանի (որ նրանց համար գալու էր ապագայում) ժամանակաշրջանների մասին: Հիսուսը Պետրոսին վստահեցնում է, որ այն աշակերտները, ովքեր ամեն բան թողել էին իրենց կյանքի մեծ բաժանման պատճառով, նրանց ունեցվածքն անպայման կվերականգնվեր այդ ժամանակահատվածում, ինչպես նաև Նոր Կտակարանի ապագա ժամանակահատվածում: Սա թեման նորից կապում է փարիսեցիների արհամարհած և այսպես կոչված «մեղավորների» հետ արժեքավոր ընկերական կապեր ունենալու թեմայի հետ, որ մենք քննարկեցինք անիրավ տնտեսի առակում: Այս աշակերտներն անտուն կամ առանց ունեցվածքի չէին մնա:

Այսպիսով, հարուստ երիտասարդ իշխանի հետ զրույցի պատճառն այն էր, որ Հիսուսն Իր աշակերտներին շարունակ նույն դասն էր սովորեցնում. միայն հավատարիմ մնացորդը հավատ կունենար և կհնազանդվեր Նրա պատվերներին: Դրա համար Հիսուսը պատմության հենց ամենասկզբում հանդիմանում է իշխանին. «Ինչու՞ ես ինձ բարի անվանում: Ոչ ոք բարի չէ, բայց միայն Աստված» (Ղուկ. 18.19): Հիսուսը միանշանակ ճիշտ էր Իր աստվածաբանության մեջ (Ել. 15.11, 2 Օր. 4.35), բայց արդյո՞ք Նա իրոք հերքում էր Իր բարի լինելը: Դժվար թե սա լիներ Հիսուսի նպատակը: Եթե սա ճիշտ լիներ, ուրեմն Նա հերքում էր Իր աստվածությունը: Ոչ, Հիսուսն ընդամենը ստուգարք էր անցկացնում իշխանի հավատի վերաբերյալ: Այս մարդն իրո՞ք հավատում էր Հիսուսին: Այդ ժամանակ Հիսուսի ասած խոսքերը նրա համար մարտահրավեր կլինեին. «Դու Ինձ բարի՞ ես անվանում: Դու չգիտե՞ս, որ Աստծուց բացի ոչ ոք բարի չէ: Այսպիսով, դու իրո՞ք Ինձ Աստված ես անվանում»: Մինչդեռ, այս ամենը կարող էր ճիշտ լինել, Հիսուսն այս մարդուն ստիպում էր կայունություն դրսևորել Իր հանդեպ: Արդյո՞ք այդ մարդն այնքան էր հավատում Հիսուսի խոսքերին, որ պատրաստ կլիներ իր ողջ ունեցածը վաճառելու: Ակնհայտ է, որ ոչ: Նա չկարողացավ հնազանդվել նույնիսկ Հիսուսի պարզ ու հստակ ուսուցմանը: Սա արդեն ապացույց էր, որ նա Հիսուսին որպես աստվածային Մեսիա չէր ընդունում: Իր պտուղով նա ցույց տվեց, որ հավատարիմ մնացորդից չէր:

Հաստատակամ մնացորդը դիմակայում է (Ղուկ. 18.31-43)

Այնուհետև Հիսուսն Իր 12 աշակերտներին մի հատուկ պատգամ է

փոխանցում: Սրանք ընտրյալների ընտրյալներն էին Իր աշակերտների մեջ, որոնք այդ ժամանակ առնվազն 70 հոգուց ավելին էին (Ղուկ. 10.1-24): Այս պատգամն ուղղված էր մնացորդի կորիզին՝ 12-ին:

> «Ահա, մենք գնում ենք Երուսաղեմ, և այն ամենը, ինչ մարգարեները գրել են Մարդու Որդու համար, մոտ է կատարվելու: Որովհետև նրան կհանձնեն հեթանոսներին և նրան կծաղրեն, կխայտառակեն ու կթքեն նրա վրա: Եվ խարազանելուց հետո կսպանեն նրան, բայց երրորդ օրը նա հարություն կառնի» (Ղուկ. 18.31-33):

Նրանք, որ Նրան հետևողներից Նրա ամենամտերիմներն էին, պետք է որ հասկանային, թե ինչ նկատի ուներ Նա: Չեմ կարծում, որ նրանք գոնե հասկացած չլինեին Նրա ասածի իմաստը, եթե նույնիսկ ի վիճակի չլինեին դա ընդունելու: Բայց ահա, թե ինչ տեղի ունեցավ. «Սակայն նրանք ոչինչ չհասկացան, որովհետև նրանցից ծածկված էր, և Նրա ասածը չըմբռնեցին» (18.34): Մենք առնվազն մեկ պատճառ գիտենք, թե ինչու նրանք չէին կարողանում թափանցել Նրա ասածի մեջ. «որովհետև նրանցից ծածկված էր»: Նրանց, նույնիսկ նրանց, տրված չէր այդ շնորհը՝ ընկալելու Հիսուսի գալիք չարչարանքների ու խաչելության Ավետարանը:

Ուրեմն ինչու՞ էր Հիսուսը նրանց մեկտեղ հավաքել այս պատգամը փոխանցելու համար: Ակնհայտ է, որ նրանք պատրաստ չէին հասկանալու դա: Հիսուսը սա գիտեր մինչ նրանց հետ այդ մասին խոսելը: Նա պարզապես բացահայտ կերպով նրանց էր փոխանցում մի ճշմարտություն, որ նրանք կատարվելուց հետո պետք է վերհիշեին և հասկանային: Փաստորեն, մենք այդ մասին տեղեկանում ենք դատարկ գերեզմանի մասին Ղուկասի պատմության մեջ (Ղուկ. 24.5-8, տես նաև Հովհ. 2.22): Սակայն Հիսուսի կողմից այս բացահայտ ուղերձը երկրորդ նպատակի էլ էր ծառայում: Գրեթե նույն սցենարը տեղի էր ունեցել դեպի Երուսաղեմ կատարելիք Նրա ճանապարհորդությունն սկսելուց շատ չանցած (Ղուկ. 9.51): Ղուկաս 9.44-45-ում մենք կարդում ենք.

> «Թող այս խոսքերը խորը գնան ձեր ականջների մեջ. Մարդու Որդին շուտով հանձնվելու է մարդկանց ձեռքը»: Սակայն նրանք այս ասվածը չհասկացան,

որովհետև ծածկված էր նրանցից, որպեսզի չընկալեին:
Եվ վախենում էին Նրանից հարցնել ասվածի մասին»:

Ղուկաս 18.31-34-ում, Երուսաղեմ մտնելուց ընդամենը մի քանի օր առաջ, կրկնելով ու ընդարձակելով այս պատգամն Իր աշակերտների համար, Հիսուսը դրանով հաստատում է, որ Ինքը դեռ այն նույն առաքելության մեջ է, ինչ Նա սկսեց Ղուկաս 9.51-ում: Նա նրանց համար հաստատում էր այն բոլոր բաների շարունակականությունը, որ նրանք տեսել ու լսել էին ողջ ճանապարհորդության ընթացքում. բոլոր բժշկությունները, Արքայության վերաբերյալ բոլոր ուսուցումները, գալիք դատաստանի վերաբերյալ բոլոր առակները: Դրանք բոլորը վերաբերում էին Մարդու Որդու այս միակ ու նույն առաքելությանը և Նրա հակառակությանն՝ ընդդեմ կռապաշտ ու մարդասպան Երուսաղեմի: Եվ մինչդեռ նրանք կույր էին մնում Նրա պատգամների հանդեպ, նրանց աչքերը ճիշտ ժամանակին կբացվեին: Հետո, երբ Աստված կբացեր նրանց միտքը՝ հասկալու այն բոլորը, ինչ տեսել ու լսել էին, նրանց կյանքը կվերափոխվեր, քանի որ ճշմարտությունն ու այդ բոլորի իմաստը ամբողջական ազդեցություն կթողնեին նրանց հոգու վրա:

Կույր մնացորդը ստանում է իր տեսողությունը (Ղուկ. 18.35-43)

18-րդ գլխի մնացած հատվածն ամբողջացնում է մեր քննարկած բոլոր թեմաները՝ մնացորդը, Արքայությունը, կուրությունը և հաստատակամությունը, բժշկության մեկ դրվագում: Կարճ ասած, կույր Բարտիմեոսի բժշկության մեջ մենք տեսնում ենք հաստատակամ որբևայրու կենդանի օրինակը՝ բացառությամբ իր թշնամիների հանդեպ վրեժխնդրության գաղափարի: Մենք կարդում ենք.

«Երիքովին մոտենալիս, մի կույր մարդ էր նստել ճանապարհի եզրին մուրալու: Երբ լսեց կողքից անցնող ամբոխի ձայնը, հարցրեց, թե ինչ է դա նշանակում: Նրանք ասացին նրան. «Հիսուս Նազովրեցին է անցնում»: Եվ նա աղաղակեց. «Հիսուս, Դավթի Որդի, ողորմիր ինձ»: Առջևից գնացողները հանդիմանում էին նրան՝ ասելով, որ լուռ մնա: Սակայն նա ավելի էր աղաղակում. «Դավթի Որդի, ողորմիր ինձ»: Եվ

> Հիսուսը կանգ առավ և պատվիրեց, որ նրան իր մոտ բերեն: Երբ նա մոտեցավ, հարցրեց նրան. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ համար անեմ»: Նա ասաց. «Տեր, որ տեսողությունս վերականգնվի»: Եվ Հիսուսն ասաց նրան. «Թող վերականգնվի: Քո հավատը քեզ բժշկեց»: Եվ անմիջապես նրա տեսողությունը վերականգնվեց և հետևեց նրան՝ փառաբանելով Աստծուն: Եվ բոլոր մարդիկ, տեսնելով սա, փառք տվեցին Աստծուն» (Ղուկ. 18.35-43):

Առաջինը, այս պատմությունը շեշտադրում է Արքայությունը, թեև ոչ ուղղակիորեն: Բարտիմեոսը Հիսուսին դիմում է որպես «Դավթի Որդի», դրանով իսկ, ընդունելով Նրա թագավոր լինելը: Ղուկասի ավետարանում սա լայնորեն շեշտադրված չէ, թեև սերնդաբանության գլուխներում ընդգծվում է այդ փաստը. Գաբրիել հրեշտակը Մարիամին խոստանում է. «Նա մեծ կլինի և Բարձրյալի Որդի կկոչվի: Եվ Տեր Աստված նրան կտա իր հոր՝ Դավթի գահը, և նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, և նրա թագավորությանը վերջ չի լինի» (Ղուկ. 1.32-33): Նմանապես, Զաքարիան՝ Հովհաննես Մկրտչի հայրը, մարգարեացավ Հիսուսի մասին, որ Աստված «փրկության եղջյուր բարձրացրեց մեզ համար իր Դավիթ ծառայի տանը» (1:69): Բայց մենք շատ չենք լսում Հիսուսի մասին որպես Դավթի գահի ժառանգորդ, մինչև որ այստեղ Բարտիմեոսը մեզ հիշեցնում է, որ Հիսուսն իրոք Դավթի Որդին է: Շուտով, Հիսուսն Ինքն էր այդ մասին խոսելու (Ղուկ. 20.39-44), ինչպես կտեսնենք:

Երկրորդ, բազմության առջևից գնացողները Բարտիմեոսին ընկերական ասում էին, որ բերանը փակի: Նկատեք, որ նրանք «առջևում» էին. նրանք փակում էին նրա ճանապարհը դեպի Հիսուսը, և խանգարում էին Հիսուսին՝ տեսնելու նրան: Այս մարդիկ փարիսեցիների ժառանգներն ու օրինականներն էին. «Դուք ինքներդ չեք մտնում, իսկ մտնողներին էլ խանգարում եք» (Ղուկ. 11.52, տես նաև Մատթ. 23.13): Իրականում, թվում է՝ անհնարին է, բայց այս գայթակղության քարերը դրվելու էին աշակերտների դիմաց (ինչպես հենց նախկին տեսարանն ավարտվեց, Ղուկ. 17.1): Այս մարդիկ բառացիորեն իրականացնում էին այդ դերն այնպես, ինչպես բացահայտորեն արգելված էր մովսեական օրենքում. «Խուլին մի անիծիր և կույրի առաջ սայթաքելու (գայթակղության) քար մի

դիր, այլ քո Տեր Աստծուց վախեցիր, Ես եմ Տերը» (Ղևտ. 19.14-ում): Նրանք բառացիորեն գայթակղության քարեր էին դնում կույրի առաջ՝ արգելելով նրան մոտենալ Հիսուսին: Սա պատահական դեպք չէր: Լինելով Օրենքի բացահայտ խախտողներ՝ նրանք ցույց էին տալիս, որ Տիրոջից չէին վախենում: Սա ևս մեկ ապացույց էր Հիսուսի դատական գործի մեջ ընդդեմ անհավատ, օրինախախտ և ուխտադրուժ Իսրայելի:

Իսկ մնացորդի տեսակետից. «Օրեր են գալիս, երբ կփափագեք տեսնել Մարդու Որդու օրերից մեկը, սակայն չեք տեսնի», քանի որ մեծ մաս կկազմեին անհավատներն ու կեղծ մարգարեները (Ղուկ. 17.22): Սակայն Քրիստոսը նրանց ցուցում էր տվել հարատև աղոթելու, և Աստված կպատասխաներ նրանց՝ անկախ ուշացնելու փաստից (18.1-8): Բարտիմեոսն իր հավատը ցույց տվեց հարատև աղոթքի միջոցով՝ չնայած մարդկանց ճնշումներին: Նա վարձատրվեց՝ վերականգնելով իր տեսողությունը: Կույր լինելով հանդերձ, նա տեսավ Արքայությունը և վարձատրվեց՝ ստանալով ֆիզիկական տեսողություն: Մյուսները, վիզիկական տեսողություն ունենալով հանդերձ, մնացին առանց Արքայությունը տեսնելու և առանց օրհնության: «Որովհետև նրան, ով ունի, ավելին կտրվի, իսկ նրանից, ով չունի, նույնիսկ այն, ինչ նա կարծում է, թե ունի, նրանից կվերցվի» (Ղուկ. 8.18):

Երրորդ, Բարտիմեոսը ներկայացնում է ընտրյալների խումբը՝ չհավատացող Իսրայելի բազմության մեջ: Ամբոխի համար նա ձանձրալի էր: Իսկ Հիսուսի համար նա ընտրյալ մնացորդ էր՝ Արքայության օրհնության ժառանգորդը:

Չորրորդ, որոշիչ գործոնը կրկին հավատն էր: Բարտիմեոսի հաստատակամ (համառ) աղոթքն իր հավատի արդյունքն էր, որ մղեց նրան մինչև վերջ դիմակայելու իր վրա կուտակված անհավատությանը:

Կարճ ասած, այս համառոտ տեսարանն ի մի է բերում մնացորդի վերաբերյալ Հիսուսի ուսուցումները՝ Ղուկաս ավետարանի այս ողջ հատվածում: Անհնարին էր, որ գայթակղությունները չգային, բայց վայ նրան, ում ձեռքով դրանք կգային (17.1): Մինչդեռ ճշմարիտ մնացորդը կգտնվեր, կփրկվեր և կդրվեր Արքայության հավատարիմ գործի մեջ:

11. Պարտավորություններ և վարձատրություններ (Ղուկաս 19.1-44)

Այն ամենը, ինչ մինչև հիմա ուսուցանվել է Քրիստոսի դատական գործի վերաբերյալ ընդդեմ Իսրայելի, ավելի խորը ձևով կկրկնվի 19-րդ գլխում: Դժվար թե գտնվի մի բառ, որ կապ չունենա այդ դատական գործի հետ, թեև տարբեր կերպերով: Առաջին հատվածը կենդանի օրինակ է, որ մնացորդը ծագում է արհամարհված դասակարգերից: Այս հատվածը՝ կարճահասակ Զակքեոսի մասին, իրականում կարող էր քննարկվել վերջին մի քանի հատվածներից ցանկացած մեկի հետ փոխկապակցված, որտեղ Հիսուսը պաշտպանում էր մեղավորների և մաքսավորների հետ Իր ունեցած շփումը (15.1-16.31), ուսուցանում գալիք գայթակղության քարերի մասին (17.1-10), կամ ընդգծում մնացորդի հավատարմությունը (17.11-18.43): Ես սա դրանցից առանձին եմ քննարկում, քանի որ այն վճռական կարևորություն ունի:

Այս վճռական կարևորությունը առիթ է հանդիսանում Հիսուսի համար դրանից անմիջապես հետո պատմել մի առակ գալիք Արքայության ժամանակները հասկանալու վերաբերյալ. կային մի շարք բաներ, որոնք սկզբում պետք է տեղի ունենային, չնայած որ տեղի ունեցող այդ բաները ավելի էին գուժելու նրանց կործանումը: Մարդիկ իրենց վարքով կհաստատեին Հիսուսի ճիշտ լինելը, երբ հաղթական մուտքի ժամանակ միանգամայն անտեսեին Նրա առակը: Այդ ժամանակ Հիսուսը բացահայտ կերպով կարտաբերեր Երուսաղեմի գալիք կործանումը:

Մաքսավորը վճարում է իր պատավորությունները (Ղուկ. 19.1-10)

Հիսուսը շատ էր մոտեցել Երուսաղեմին. Նրա ճանապարհորդությունը մոտենում էր ավարտին: Նա բժշկել էր կույր Բարտիմեոսին «Երիքովին մոտենալիս» (18.35), իսկ հիմա «մտել էր… և անցնում էր» Երիքովի միջով, որն ընդամենը 15 մղոն դեպի հյուսիս-արևելք (ավելի շատ արևելք) էր գտնվում Երուսաղեմից: Այստեղից Երուսաղեմ քայլելը կտևեր մեկ օր:

Զակքեոսը սովորական մաքսավոր չէր, նա մաքսապետ էր և մեծահարուստ (Ղուկ. 19.2): Ղուկասն այսպես է ներկայացնում այդ պատմությունը.

> «Զակքեոս անունով մի մարդ կար: Նա մաքսապետ էր և հարուստ: Նա փափագում էր տեսնել, թե ով է Հիսուսը, բայց ամբոխի պատճառով չէր կարողանում, քանի որ կարճահասակ էր: Այդ պատճառով նա առաջ վազեց և մի ժանտաթզենու վրա բարձրացավ Նրան տեսնելու համար, քանի որ Նա շուտով այդ մասով պետք է անցներ: Եվ երբ Հիսուսը հասավ այդտեղ, վեր նայեց և ասաց նրան. «Զակքեոս, արագ ցած իջիր, որովհետև այսօր քո տանը պետք է մնամ»: Եվ նա շտապելով ցած իջավ և ուրախությամբ ընդունեց նրան: Եվ երբ նրանք սա տեսան, բոլորը տրտնջացին. «Նա գնաց մեղավոր մարդու մոտ հյուրընկալվելու»: Իսկ Զակքեոսը կանգնեց ու ասաց. «Նայիր, Տեր, իմ ունեցվածքի կեսը տալիս եմ աղքատներին: Եվ եթե ինչ-որ մեկին ինչ-որ հարցում խաբել եմ, չորեքպատիկ կհատուցեմ»: Եվ Հիսուսն ասաց. «Այսօր փրկություն եկավ այս տուն, քանի որ սա էլ Աբրահամի որդի է: Որովհետև Մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածին»:

Սա պատմությունն է մաքսավորների միջի ամենավատ մեղավորներից ամենավատի մասին, որը սակայն լավագույն օրինակն է փրկության վերաբերյալ: Մինչդեռ շատ հարուստ ու նշանավոր փարիսեցիներ, ինչպես նաև հետաքրքրասեր բազմությունը, չարժանացան Հիսուսի ուշադրությանը, այս արհեստավարժ դրամաշորթը հայտնվեց ընտ-

ոյալ մնացորդի մեջ, քանի որ գտնվեց ու փրկվեց:

Այս մարդու մեղքի խորությունը գնահատելու համար մենք պետք է հասկանանք մաքս հավաքելու բնույթն այդ օրերում: Տեքստն ինքին մեզ բավականաչափ տեղեկություն տալիս է, որպեսզի հասկանանք, որ Զակքեոսը հարստացել էր Հռոմի հարկադրող ուժով (գողություն) և տարբեր միջոցներ գործադրելով (զրպարտություն, 8-րդ համար): Մինչդեռ սա միակ տեղն է Աստվածաշնչում, որ մեզ լուսաբանում է այդ մասին, թեև ոչ անհրաժեշտաբար: Պատմաբանները գրում են.

> «Մաքսատուրքի հավաքումը տեղի չէր ունենում պետական պաշտոնյաների միջոցով, այլ կապալառուների, այսպես կոչված հարկահավաքների, ովքեր տարեկան որոշակի գումարի դիմաց հավաքագրում էին տվյալ տարածքի մաքսատուրքերը: Այնպես որ, այդ տարեկան մուծվող գումարից ինչ ավելանում էր, նրանց օգուտն էր… Այս համակարգը լայնորեն տարածված էր հին ժամանակներում, և հաճախ էր կիրառվում ոչ միայն մաքսերի, այլ նաև այլ հարկերի համար… Մաքսատուրքի չափն իրականում որոշվում էր դատարանի կողմից, սակայն քանի որ վաղ ժամանակներում այդ սակագները շատ անորոշ էին, բավականաչափ տեղ էր մնում մաքսավորի կամայականության և ագահության համար: Այսպիսի հնարավորություններն օգտագործելն ու ոչ հազվադեպ գերագանձումներն այս պաշտոնյաներին ատելի դասակարգ էին դարձնում ժողովրդի համար»:

Կարճ ասած, մաքսավորները պետության անհատ վարձակալներ էին, ովքեր խոստանում էին պետության համար տարեկան հաստատագրված գումար հավաքել: Սակայն նրանք այդ հաստատագրված գումարից ինչքան ավելին էին հավաքում, այդ նրանց էր պատկանում: Սա իհարկե առիթ էր հանդիսանում ագահ և անխիղճ մարդկանց համար, որպեսզի ինչքան հնարավոր է գերշահույթ ստանային ստեղծված իրավիճակից՝ այդպիսով հարստանալով պետական իշխանության միջոցով: Դա պարզ ու մաքուր թալան էր, և նրանք, ովքեր ներգրավվում էին դրա մեջ, հաճախ գործածում էին տարբեր հնարքներ, զրպարտություններ ու սպառնալիքներ,

որպեսզի անմեղ մարդկանցից ավելի շատ գումար պոկեին: Եվ որ ամենավատն էր, այդ մարդիկ հենց նվաճող, գրավող հռոմեացիները չէին, այլ իրենց հայրենակից հրեաները, ովքեր տեսնում էին այդ հնարավորությունը՝ օգտագործելու հռոմեական կայսրության իշխանությունը՝ հարստանալու մյուս հրեաների հաշվին: Նրանք շուռ տվածներ (երկերեսանիներ), գողեր ու խաբեբաներ էին, ովքեր կայսրության ընձեռած անձեռնմխելիությունն էին վայելում իրենց հանցագործությունների համար: Մարդիկ ատում էին նրանց, և դրա համար իրոք պատճառ կար:

Սա շատ ամոթալի լույսի ներքո է ներկայացնում այն փաստը, որ Հիսուսը պատրաստ էր ընկերություն անել նման մարդկանց՝ անիրավ մամոնայի հետ, ինչպես նաև Իր աշակերտներին քաջալերել ընկերություն անելու նրանց հետ: Սակայն շատ ավելի ամոթալի էր այն, որ Նրա ամենամտերիմ աշակերտներից մեկը՝ Մատթեոսը (կամ Ղևին), այդ հանցագործներից մեկն էր, ով նստած էր հենց մաքսատանը, Կափառնայումի մոտ, երբ Հիսուսը կանչեց նրան (Ղուկ. 5.27, Մատթ. 9.9, Մարկ. 2.1,14): Իրականում, Մատթեոսը Հիսուսին անմիջապես հրավիրեց ճաշի, որին ներկա էին նաև մի խումբ այլ մաքսավորներ (Ղուկ. 5.29, Մարկ. 2.15), և հավանական է, որ այստեղից Հիսուսի խոսքը սկսեց տարածվել մաքսավորների դասակարգի մեջ: Զակքեոսն ինքը հնարավոր է Հիսուսի մասին լսել էր այս տեսակի զրույցներից մեկի ժամանակ, քանի որ մաքսապետ էր: Դա նշանակում է, որ նա, հավանաբար, կատարում էր կենտրոնական գործակալի դեր, ով մաքս էր հավաքում նրանցից, որոնք արդեն մաքս էին հավաքել ժողովրդից: Անկասկած, նա մաքսավոր ընկերների մեծ շրջապատ ուներ և տպավորությունն այնպիսին է, որ նա արդեն ինչ-որ բան գիտեր Հիսուսի մասին՝ նախքան Նրա Երիքով ժամանելը:

Այն, որ Զակքեոսը «կարճահասակ» էր, հնարավոր է, բացատրում է այն, թե ինչու էր նա փորձել դիրքի հասնել հարկադրանքի և իշխանության միջոցով: Նա դասական Նապոլեոն էր, ով իր հասակի պակասությունը լրացնում էր օրինականացված բռնակալությամբ ու իշխանությամբ: Դրա համար, բնական է, որ նա ցանկանար տեսնել այդ ազդեցիկ Հիսուսին, սակայն չէր կարողանում տեսնել ամբոխի վրայից: Սակայն նա այնքան հետաքրքված էր, որ դիմեց լրացուցիչ միջոցների. նա ծառ բարձրացավ՝ տեսնելու ամբոխի վրայից:

Ինձ թվում է, ինչ-որ հատուկ բան կա Սուրբ Գրքում այս «ժան-

տաթզենու» հետ կապված, թեև խոստովանեմ, որ վստահ չեմ, թե ինչ: Այս հատուկ նշումը, որ դա *sukomorean* ծառ էր, որն այնքան էլ նույնը չէ, ինչ ավելի վաղ նշված sukamino ծառը (Ղուկ. 17.4?-17.6) որը հավանաբար թթենին է: Դավիթն այս ծառերից մի ամբողջ այգի ուներ և հատուկ ուշադրություն էր դարձնում դրանց (3 Թագ. 10.27): Զակքեոսի բարձրացած ծառն այլ տեսակի էր, որ երբեմն թարգմանվում է «ժանտաթզենի», և արտաքինից շատ նման էր սովորական թզենու (հունարեն՝ syce): Տարբեր աղբյուներից տեղեկանում ենք, որ այս «ժանտաթզենին» ամբողջ տարին պտուղ էր տալիս, թեև այն այնքան էլ հարգի չէր. այսպիսով, դրանից օգտվում էին աղքատները: Միգուցե իմաստ կար Զակքեոսի դեպքում, որ լինելով ընտրյալ մնացորդից, բարձրացավ մշտապտուղ թզենու վրա, մինչդեռ անհավատարիմ Իսրայելին մոտ ապագայում կխորհրդանշեր անպտուղ թզենին (Մարկ. 11.12-14, 20-21): Կարծում եմ, սա չափազանցված ենթադրություն է: Սակայն հետաքրքիր զուգահեռ կա Ամովս մարգարեի ծառայության մեջ, ով նույնպես Իսրայելին այս նույն ձևով է հանդիմանում.

> «Իսկ Ամովսը պատասխանեց Ամասիային ու ասաց. «Ես մարգարե չէի, ոչ էլ մարգարեի որդի, այլ ես նախրապան էի և ժանտաթզենի (մոլաթզենի-?) մշակող: Սակայն Տերն ինձ վերցրեց ոչխարների հետևից, և Տերն ինձ ասաց. «Գնա, մարգարեացիր Իմ Իսրայել ժողովրդին: Դրա համար, հիմա Տիրոջ խոսքը լսիր:
>
> «Դու ասում ես. «Իսրայելի դեմ մի մարգարեացիր և Իսահակի տան դեմ մի քարոզիր»:
>
> «Դրա համար այսպես է ասում Տերը.
> «Քո կինը քաղաքում անառակություն կանի,
> և քո որդիներն ու դուստրերը սրով կընկնեն,
> և քո երկիրը չափելու լարով պիտի բաժանվի,
> դու ինքդ անմաքուր երկրում պիտի մեռնես,
> իսկ Իսրայելն այս երկրից անպատճառ աքսորվելու է»:
> (Ամովս 7.14-17):

Հիսուսը մոտ էր Իր սեփական դատավճիռն արտասանելուն պոռնիկ քաղաքի հանդեպ, որ այն սրով էր ընկնելու և այլն: Արդյո՞ք

Ղուկասի այս ժանտաթզենին այն փոքրիկ, սակայն վառ դետալն է, որ հանդիսանում է ցուցիչ-խորհրդապատկեր, որը մենք այնքան հաճախ տեսնում ենք աստվածաշնչյան աստվածաբանության մեջ: Ես նորից եմ ընդունում, որ սա ենթադրություն է, սակայն այն շատ հետաքրքիր է այս առումով: Ամովսի մարգարեության մեջ միանշանակ կարելի է զուգահեռ տեսնել Հիսուսի հայտարարած դատավճռի հետ միևնույն քաղաքի հանդեպ:

Ինչ էլ որ այդ դետալները գուժելու լինեն, պատմության ուղերձը հստակ է: Կար մի մաքսապետ, ով հավատաց Հիսուսին: Կրկին, մնացորդը ծագում է արհամարհված դասակարգից: Կրկին, անհավատարիմ բազմությունը չի կարողանում ըմբռնել այն փաստը, որ Հիսուսը ճաշում է նման մեկի հետ: Սակայն մնացորդին ցուցաբերված շնորհը գերակայում է, և Զակքեոսը դրսևորում է մի պտուղ, որ փարիսեցիներն ու նաև բազմությունը հրաժարվում էին դրսևորել. ապաշխարություն: Եվ ապաշխարելով, Զակքեոսն արեց մի բան, որ մյուս մարդիկ դարձյալ անտեսում էին. նա լրջորեն մոտեցավ մովսեսական օրենքին: Նա ոչ միայն իր ունեցվածքի կեսը տվեց աղքատներին (բարեգործության քայլ), այլ նաև պատրաստակամ եղավ փոխհատուցելու այն վնասի համար, որ պատճառել էր մարդկանց գերագանձման ու շորթելու միջոցով: Ահա, թե ինչ է պահանջում Օրենքը.

> «Եթե ինչ-որ մեկը գողանա եզ կամ ոչխար, և մորթի այն կամ վաճառի, պետք է հինգ եզ հատուցի մեկ եզան փոխարեն և չորս ոչխար՝ մեկ ոչխարի փոխարեն: … Եթե գողացված կենդանին կենդանի գտնվի նրա ունեցվածքի մեջ, լինի եզ, կամ էշ, կամ ոչխար, նա պետք է կրկնակին հատուցի» (Ել. 22.1):

Այլ կերպ ասած, ամբաստանյալ գողից պահանջվում էր փոխհատուցումն անել՝ ելնելով հանգամանքներից. եթե գողացված ապրանքը հնարավոր էր հետ վերադարձնել, նա պետք է նույնքան էլ հավելյան վճարեր որպես տուգանք: Այսպիսով, նա պետք է կրկնակին հատուցեր: Իսկ եթե ապրանքը փչացել էր, վաճառվել էր, կորել էր և այլն, և հնարավոր չէր հետ վերադարձնել, ապա նրանից պահանջվում էր հատուցել առնվազն քառապատիկ (առաջինի դեպքում մարդը պետք է երկու անգամ, այսինքն, մեկ հատ ավելի անասուն հետ տար, որպեսզի հասկանար թէ ինչ է պահանջվում դրա

համար աշխատելը, իսկ երկրորդի դեպքում, եթե նա վաճառեր, դա նշանակում է որ նա արդեն դրամ ուներ իր ձեռքում, իսկ դրամը տոկոս է հավաքում ժամանակի ընթացքում, կամ, եթե այդ անասունը կորցներ, ապա անասունի տերը պետք է գնար (ճանապարհածախս և այլն) ժամանակ վատներ ու փորձեր իր անասունը նման մի անասուն գտներ: Այստեղ հատկանշական է որ Տերը երբեք ոչ ոքի չի պահանջում բանտ նետել: Բանտերը հեթանոսական մտքի արդյունքն է: Քրիստոնեական հասարակությունը բանտեր չունի, այլ հատուցման կարգեր ունի, հիմնված Աստծո տված հատուցման չափերի վրա. Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.):

Վերջինը հենց այն էր, ինչ Զակքեոսը խոստացավ անել նրանց, ում զրպարտել էր: Նա դրանով ընդունեց, որ իր հարստությունը, շատ հավանական է, առաջացել էր գողության միջոցով (կարևոր չէ, թե որքան օրինական էր դա ըստ հռոմեական օրենքի): Նա պատրաստ էր վճարել մովսեական Օրենքի ամենախիստ տուգանքը:

Այս պատրաստակամությունը ճշմարիտ ապաշխարության ապացույց էր: Հիսուսը միանշանակ այն ընդունեց որպես իրական և, հայտարարելով, որ Զակքեոսը փրկված է և Աբրահամի որդի է, նրա ապաշխարությանը նայեց որպես մնացորդին գտնելու և փրկելու Իր առաքելության հետագա հաստատում. «Այսօր փրկություն եկավ այս տուն, քանի որ սա էլ Աբրահամի որդ է: Որովհետև Մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածին» (Ղուկ. 19.9-10):

Մաքսապետի համար ասել, որ Աբրահամի ճշմարիտ որդի է, պետք է որ այդ անհավատ բազմությանն ավելի շատ առիթ տար Նրա դեմ տրտնջալու:

Դատաստանով վերադառնալու առակը (Ղուկ. 19.11-27)

Զակքեոսի դարձի գալուց անմիջապես հետո Հիսուսը նպատակահարմար է գտնում մի առակ ուսուցանել, «որովհետև նա Երուսաղեմի մոտ էր, և որովհետև նրանք ակնկալում էին, որ Աստծո արքայությունն անմիջապես պիտի հայտնվեր»: Բացահայտ չի ասվում, թե ովքեր էին այդ «նրանք»-ը, որոնք հենց կազմում էին առակի լսարանը: Գայթակղություն է առաջանում ասելու, որ «նրանք»-ը հենց բազմությունն էր, որովհետև առակը այն մարդկանց գալիք կործանման մասին է, ովքեր կմերժեին Քրիստոսին: Բայց սա ճիշտ չէ: «Նրանք»-ը վերաբերում էր նրանց, ովքեր «լսեցին

այս բաները», այսինքն Զակքեոսին ուղղված Հիսուսի խոսքերը. «Մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածին» (10.19): Քանի որ Հիսուսն այս բաներն ասել էր Զակքեոսի տանը ճաշելիս, քիչ հավանական է թվում, որ բազմությունը ներս խցկված լիներ ինչ-որ մեկի տուն: Այնպես որ, ակնհայտ է, որ «նրանք»-ը վերաբերում է Հիսուսի աշակերտներին:

Այս տեսակետից այն միանգամայն իմաստալից է դառնում, որովհետև միայն աշակերտներն էին, որ իրոք հավատում էին, որ Հիսուսը Մեսիան է: Նրանք էին, որ Նրա հետ անցել էին ողջ ճանապարհը մինչև Երուսաղեմ, լսել էին Նրա հայտարարած դատապարտությունները և Արքայության վերաբերյալ ուսուցումները: Այսպիսով, նրանք էին ամենաանհանգիստը՝ տեսնելու Արքայությունն անմիջապես եկած: Իհարկե, Հիսուսն արդեն երկու անգամ զգուշացրել էր նրանց, որ նախ Ինքը պետք է գնար Երուսաղեմ՝ տանջվելու և մահանալու այնտեղ (9.44-45, 18.31-34), և հատկապես կարդում ենք, որ նրանք ոչինչ չհասկացան: Մատթեոսը մեզ ասում է, որ Հիսուսն այդ ժամանակ Իր աշակերտներին պատմեց նմանատիպ մեկ այլ առակ (Մատթ. 20.1-16): Այնպես որ հիմա, Հիսուսը նորից է կրկնում այդ նույն հիմնական ճշմարտությունները նրանց համար: Հստակ է, որ Հիսուսն ուզում էր այս ճշմարտությունները խորը մխրճել նրանց մտքի մեջ, որպեսզի, երբ ժամանակը գար, նրանք ի վիճակի լինեին այդ ամենը հասկանալու:

Առակը, այսպիսով, որ Նա պատմում է, առաջին հերթին նպատակաուղղված էր, որ աշակերտները հասկանային, իսկ երկրորդը, նպատակ ուներ ցրելու շուտափույթ ազատագրման կեղծ հույսերը: Այն իրականում գալիք դատաստանի հաստատում է, որ շուտով պետք է գար: Հիսուսն ասում է.

> «Մի ազնվական հեռու երկիր գնաց իր համար թագավորություն ստանալու և վերադառնալու: Կանչելով իր տաս ծառաներին, նրանց տաս մնաս (արծաթի քաշի միավոր) տվեց և ասաց, «Գործի մեջ դրեք, մինչև ես գամ»: Սակայն նրա քաղաքացիներն ատում էին նրան և նրա հետևից պատվիրակություն ուղարկելով, ասացին. «Մենք չենք ուզում, որ այս մարդը թագավորի մեզ վրա»: Երբ նա թագավորությունը ստացած վերադարձավ, հրամայեց, որ այն ծառաները,

> որոնց գումար էր տվել, կանչեն իր մոտ, որպեսզի իմանա, թե ինչքան գումար էին վաստակել՝ այն գործի մեջ դնելով: Առաջինը եկավ նրա առաջ ու ասաց, «Տեր, քո մնասը տաս մնաս ավելացրեց»: Եվ նա ասաց, «Ապրես, բարի ծառա: Որովհետև դու շատ փոքրի մեջ հավատարիմ եղար, դու իշխանություն կունենաս տաս քաղաքի վրա»: Եվ երկրորդը գալով ասաց. «Տեր, քո մնասը հինգ մնաս ավելացրեց»: Եվ նրան ասաց, «Իսկ դու կլինես հինգ քաղաքի վրա»: Հետո մյուսը եկավ ու ասաց, «Տեր, ահա քո մնասը, որ ես թաշկինակի մեջ խնամքով թաքցրել էի: Որովհետև ես վախենում էի քեզանից, քանի որ դու խիստ մարդ ես: Դու վերցնում ես այն, ինչ ներդրում չես արել, և հնձում ես այն, ինչ չես ցանել»: Նա ասաց նրան, «Ես կմեղադրեմ քեզ քո իսկ խոսքերով, չար ծառա: Դու գիտեիր, որ ես խիստ մարդ եմ, որ վերցնում եմ այն, ինչ ներդրում չեմ արել, և հնձում եմ այն, ինչ չեմ ցանել: Ինչու՞ ուրեմն իմ գումարը բանկում չդրեցիր, որպեսզի գալով այն օգուտով հետ ստանայի»: Եվ ասաց կողքին կանգնածներին. «Վերցրեք նրանից մնասը և տվեք տաս մնաս ունեցողին»: Եվ նրանք ասացին նրան, «Տեր, նա տաս մնաս ունի»: «Ասում եմ ձեզ, որ ամեն ով որ ունի, ավելին կտրվի, իսկ ով չունի, ունեցածն էլ կվերցվի: Իսկ իմ թշնամիներին, ովքեր չէին ուզում, որ նրանց վրա թագավորեմ, բերեք այստեղ և սպանեք իմ առջև» (Ղուկ. 19.12-27):

Այս առակը միայն կարող է հասկացվել որպես անմիջապես Իսրայելին ուղղված խոսք, որ շուտով մերժելու էր ու սպանելու էր Քրիստոսին, Նրա Արքայությունը ընդունելու փոխարեն: Ակնհայտ է, որ ազնվական մարդը Հիսուսն է: Սակայն նկատեք, որ նա սկզբում պատրաստվում է «հեռու երկիր» գնալ, որպեսզի Թագավորություն ստանա, իսկ հետո նոր միայն վերադառնալ հաշիվ պահանջելու իր ծառաներից ու քաղաքացիներից: Դժվար չէ հասկանալ, որ Նա նկատի ունի Իր համբարձվելը և Աստծո աջ կողմը նստելը (Գործք. 2.34-36), որպես Թագավորություն ստանալ, իսկ հաշվետվության օրը, որ Նա կկործաներ Իրեն մերժողներին, Երուսաղեմի կործա-

նումն էր ՔՀ 70թ.-ին: Սակայն տառապանքն ու խաչը պետք է գային սկզբում, որը տեղի էր ունենալու դեպի Երուսաղեմ իրենց ընթացիկ ճանապարհորդության ժամանակ: Այս հարցի վերաբերյալ աշակերտները շփոթված էին նույնիսկ երբ Նա հարություն առավ ու երևաց նրանց: Նրա համբարձման օրը նրանք հարցրեցին. «Տեր, այս ժամանակի մե՞ջ ես վերականգնելու Իսրայելի թագավորությունը» (Գործք. 1.6): (Նա արդեն գնացել էր հեռու երկիր՝ մահը, իսկ հիմա հետ էր եկել): Նա նրանց ասաց, որ կարիք չունեին հստակ ժամանակ իմանալու (1.7), այլ այդ ժամանակահատվածում պետք է Սուրբ Հոգով լցված ծառայեին Երուսաղեմում, Սամարիայում և մինչև աշխարհի ծայրը (1.8): Սա երևում է նաև առակում, որովհետև ազնվականն իր ծառաներին պատվիրում է. «Գործի մեջ դրեք, մինչև ես գամ» (Ղուկ. 19.13):

Նրանք չպետք է պարապությամբ «զբաղվեին», ինչպես KJV տարբերակն է ասում, այլ պետք է վերցնեին Տիրոջ տվածը և պտղաբեր լինեին Արքայության համար: Այդ ընթացքում նրանք կշփվեին մյուս արտաքին երևույթով ծառաների՝ անհավատ հրեաների հետ: Նրանց բոլորին վստահվել էին Աստծո նույն պատգամները, ինչ Հիսուսի աշակերտներին: Այդ կեղծ ծառաները փարիսեցիներն էին, դպիրները, սովորական ժողովուրդը և ժողովրդի առաջնորդները, որոնք բոլորն էլ պետք է շահույթով վերադարձնեին Աստծո պարգևները, սակայն, դրա փոխարեն, նրանք վատնեցին այդ ամենը, ինչ-պես մենք արդեն մի քանի անգամ նկատել ենք: Դրա փոխարեն նրանք արդեն դավադրություն էին ծրագրել՝ սպանելու Հիսուսին այն օրը, երբ Նա մտավ Երուսաղեմ (Ղուկ. 19:47): Այսպիսով, երբ հաշվետվության օրը գար, ճշմարիտ ծառաների արդյունավետությունը, համեմատած կեղծ ծառաների, կերևար. ճշմարիտներն ավելացրել էին արդյունքը, իսկ կեղծերը ոչինչ չէին շահել: Կեղծերն ընդամենը փաթաթել էին Աստծո պարգևն ու պահել այն իրենց համար, վախենալով կորցնել այն, ինչ տրված էր իրենց, չնայելով Աստծո խոստմանը, որ պտղաբեր կդարձներ նրանց: Մենք նախկինում անդրադարձել ենք այս թեմային. թեև Իսրայելը պարտավոր էր Աստծո Օրենքի փառքը տանել մինչև աշխարհի ծայրը որպես վկայություն ազգերին, նա այդ հարմարավետ կարգավիճակը պահեց իր համար՝ դառնալով մեծ հարստության մսխողն ու աշխարհի թագավորների պոռնիկը (Այս առակի դասը մասնավորապես վերաբերում է ՔՀ 70 թվի դատաստանին. Այն ծառան որը իրեն տված պարգևը, այսինքն

արքայությունը, չի ավելացնում, այսինքն իր կողքի ազգերին չի տարածում, այդ ազգը ցեղասպանության է ենթարկվում: Սա նաև արդեն պատահել էր Իսրայելի պատմության անցյալում, երբ Իսրայելը բազում անգամներ այս նույն մեղքի համար ցեղասպանության էր ենթարկվել, աստծո խոսքը իրենց մոտ պահելով և այն չտարածելով, ուստի Աստված ստիպված նրանց կոտորել և որոշներին գերության էր մատնել, որպեսզի այդ գերության ձևով նրանք Աստծո խոսքը տարածեին, երբ նրանք վերջիվերջո շփման մեջ պիտի մտնեին իրենց գերեվարող ազգերի հետ. Տե՛ս Դանիել մարգարեի խոստովանանքը. Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.):

Շավեշտալի մանրամասնությունն այստեղ այն է, որ անպտուղ ծառան իր բաժինը պահել էր «թաշկինակի» մեջ: Բայց սա սովորական թաշկինակ չէր, այլ soudarion էր, շորի մի կտոր, որով թաղման ժամանակ ծածկում էին հանգուցյալի դեմքը (Տես Հովհ. 11.44, 20.7): Ազգերին ուղղված Աստծո կյանքի ճանապարհը հրեաները վերածել էին բեռների ու վախի մեռած կրոնի:

Վախկոտ ու անպտուղ ծառան ապացուցում է, որ ինքը նպատակահարմար չէ Արքայության համար՝ իր սխալի հետ վարվելով այնպես, ինչպես Ադամը՝ մեղադրելով Աստծուն: Ադամը մեղադրեց կնոջը՝ պտուղն իրեն տալու համար, և մեղադրեց Աստծուն՝ այդ կնոջն իրեն տալու համար (Ծնն. 3.12): Իսկ Եվան էլ իր անկման համար մեղադրեց օձին: Ցանկացած մեկին կարելի էր մեղադրել բացի իրենցից, ովքեր իրականում գործել էին այդ մեղքը: Նմանապես անպտուղ ծառան իր անարդյունավետության համար մեղադրեց ազնվականին. «ես վախենում էի քեզանից, քանի որ դու խիստ մարդ ես: Դու վերցնում ես այն, ինչ ներդրում չես արել, և հնձում ես այն, ինչ չես ցանել»: Իրականում, ինչպես ցանկացած մեծ դրամագլուխ ունեցող մարդ, նա նույնպես վարձում էր մարդկանց, որպեսզի աշխատեն իր համար, և ակնկալում էր, որ իր ներդրման փոխարեն պետք է պասիվ եկամուտ ստանար: Բայցևայնպես, իր վախկոտ քննադատության մեջ, ծառան խոստովանում է, որ գիտեր, որ Աստված իրենից արդյունավետություն էր ակնկալում: «Նա ասաց նրան. «Ես կմեղադրեմ քեզ քո իսկ խոսքերով, չար ծառա: Դու գիտեիր, որ ես խիստ մարդ եմ, որ վերցնում եմ այն, ինչ ներդրում չեմ արել, և հնձում եմ այն, ինչ չեմ ցանել: Ինչու՞ ուրեմն իմ գումարը բանկում չդրեցիր, որպեսզի գալով այն օգուտով հետ ստանայի» (19.22-23):

Կարճ ասած, Տիրոջ վերադարձի ժամանակ ծառաների համար հաշվետվություն էր լինելու: Միայն նրանք, ովքեր իրոք նպաստել էին Արքայության տարածմանը, կխուսափեին դատաստանից: Մենք այստեղ մեկ ուրիշ ծանոթ արտահայտություն ենք տեսնում շնորհի հայտարարության մեջ. «դու… հավատարիմ եղար»: Բարի ծառաները հավատարիմ են: Հավատն է այն որոշիչ գործոնը, որ տարբերակում է բարի և չար ծառաներին:

Վարձատրության էությունը նույնպես ուշադրության է արժանի: Բարի ծառաները ժառանգություն կստանան Արքայությունում: Նրանք իշխաններ կդառնան Աստծո Արքայության մեջ ըստ այն եկամտի չափի, որ նրանք ստացել են իրենց տրված պարգևի միջոցով: Աստծո Արքայության այս կանոնակարգը իրականանում է աշակերտների և Նոր Կտակարանի սրբերի մեջ (Ղուկ. 22.40, Մատթ. 19.28, 1 Պետ. 2.9, Հայտ. 1.6, 5.10, 20.4, 6): Չար ծառաները, սակայն, կկորցնեն այն, ինչ տրվել էր իրենց. «Վերցրեք նրանից մնասը և տվեք տաս մնաս ունեցողին» (Ղուկ. 19.24): Հիմա մենք վերադառնում ենք այն նույն թեմային, որ ճանապարհորդության ընթացքում մի քանի անգամ լսել ենք. կորցնողներն ավելին են կորցնում, շահողներն ավելին են շահում: «Ասում եմ ձեզ, որ ամեն, ով որ ունի, ավելին կտրվի, իսկ ով չունի, ունեցածն էլ կվերցվի» (Ղուկ. 19.26): Համեմատիր սա Ղուկաս 8.8-ի հետ, որը բառացիորեն գրեթե նույն արտահայտությունն է: Այնտեղ մենք մի դաս ենք տեսնում՝ կապված վառվող ճրագի հետ: Այստեղ պատգամը գրեթե նույնն է. հրեաները թաքցրել էին Աստծո լույսը, փոխարենն այն օգտագործելու աշխարհը լուսավորելու համար: Իրենց եսասիրական ձախողման պատճառով նրանք կկորցնեին նույնիսկ այն, ինչ մտածում էին, որ իրենց է պատկանում: Արքայությունը կվերցվեր անհավատարիմ Իսրայելից և կտրվեր պտղաբեր ընտրյալներին:

Այսքանը ազնվականի ծառաների մասին: Իսկ ի՞նչ ասենք այն քաղաքացիների մասին, ովքեր բացահայտ կերպով սկզբում ասացին. «Մենք չենք ուզում, որ այս մարդը թագավորի մեզ վրա» (19.14): Այս գալիք Արքայության քաղաքացիները նույնպես ատում էին Հիսուսին, և բառացիորեն մի քանի օրից քահանաները, դպիրներն ու ժողովրդի առաջնորդները մարդկանց կմղեին աղաղակելու, որ խաչեին Նրան (Ղուկ. 23.13–25, Մատթ. 27.15–25, Մարկ. 15.6–15, Հովհ. 18.39–19.16): Այս չար քաղաքացիներն ազատվելու ոչ մի հնարավորություն չունեին, երբ ազնվականը վերադառնար:

Առակում նույնիսկ հաշվետվության մասին գրված չէ, նրանք նույնիսկ ծառաներ չեն համարվում: Բայցևայնպես, նրանք բացահայտ կերպով ընդդիմանում էին ազնվականին և նրա ոխերիմ թշնամիներն էին: Եվ այդ պատճառով, նրանց դատաստանը խիստ էր լինելու: «Իսկ իմ թշնամիներին, ովքեր չէին ուզում, որ ես նրանց վրա թագավորեմ, բերեք այստեղ և սպանեք իմ առջև» (19.27): Սա հստակ հղում է բազմաթիվ հրեաների ջարդին, որ տեղի կունենար, երբ Հին Կտակարանի համակարգը կավերվեր այդ սերնդի ժամանակ:

Հիմա մենք պետք է հիշենք, որ թեև այս առակում երևում է Երուսաղեմի գալիք կործանումը, Հիսուսի բուն նպատակն էր հետ համոզել աշակերտներին, որ Իր հաղթական մուտքը Երուսաղեմ չդիտարկեին որպես վերջնական հաղթանակ: Նա հիմա դեռևս չէր վերցնելու թագավորական իշանությունն ու ուժով սկսեր Աստծո Արքայությունը: Ընդհակառակը, Նա սկզբում պետք է հակառակության հանդիպեր, որի համար էլ հետո կվերադառնար և կպատժեր այդ քաղաքին: Աշակերտների համար շատ կարևոր կլիներ այս դասն իրենց մտքում ունենալ, երբ վերլուծելու կլինեին այն դեպքերը, որ անմիջապես տեղի էին ունենալու:

Հաղթական մուտքը (Ղուկ. 19.28-44)

Վերջապես եկավ այն պահը, երբ Հիսուսն իրոք հասավ և մտավ Երուսաղեմ: Նա Իր կարողության չափով պատրաստեց Իր աշակերտներին, որպեսզի չմտածեին, որ Նա անմիջապես պետք է խլեր գահն ու իրականացներ այն դատաստանը, որի մասին Ինքն այնքան հաճախ հայտարարում էր: Սկզբում պետք է տանջանքները գային: Սակայն Նրա գալիք քայլերը կարծես հակասում էին այդ ուսուցմանը:

Առաջինը, Նա հատուկ նախապատրաստություններ տեսավ, որպեսզի էշին նստած մտներ քաղաք (19.28-35): Մատթեոսը մեզ հիշեցնում է, որ սա մարգարեության իրականացում էր (Մատթ. 21.5): Իրականում, Զաքարիան էր դա ասել.

«Մեծապես ուրախացիր, ով դուստր Սիոնի:
Բարձրաձայն աղաղակիր, ով դուստր Երուսաղեմի:
Ահա, քո թագավորը դեպի քեզ է գալիս,
Նա արդար է ու փրկաբեր,

Խոնարհ է և էշի վրա նստած,
Քուռակի՝ էշի ձագի վրա» (Զաք. 9.9):

Երկրորդ, երբ Նա մոտեցավ քաղաքին, Նրա աշակերտները շատ լավ գիտեին դրա մասին: Շատ հնարավոր է, նրանք գիտեին, թե ինչ էր գրված Զաքարիայի մարգարեության շարունակության մեջ. «Ես կբնաջնջեմ մարտակառքը Եփրեմից և մարտական ձին Երուսաղեմից, և պատերազմի աղեղը կկտրվի, և նա խաղաղություն կխոսի ազգերին: Նրա իշխանությունը ծովից ծով կլինի, և Գետից մինչև աշխարհի ծայրը» (Զաք. 9.10): Տպավորությունն այնպիսին էր, որ չնայած Նրա բոլոր զգուշացումներին, նրանք դեռևս ակնկալում էին, որ Նա կհավակնի գահին: Եվ երբ Նա մոտենում էր, նրանք սկսեցին մեջբերել Սաղմոս 118.26-ը. «Օրհնյալ է նա, ով գալիս է Տիրոջ անունով» (Ղուկ. 19.38):

Երրորդ, այդ կետում Հիսուսը նրանց չկանգնեցրեց: Նույնիսկ երբ փարիսեցիները բազմության միջից պահանջեցին, որ Նա լռեցներ աշակերտներին, որ Իրեն չփառաբանեին որպես Մեսիա, Նա մերժեց նրանց. «Եթե նրանք լռեն, քարերը կաղաղակեն» (19.40):

Չորրորդ, Հիսուսն արտասվեց քաղաքի վրա, որովհետև դատաստան էր արտաբերում դրա վրա: Հստակ էր, որ դրա ժամանակը եկել էր: Իրականում, երբ մենք քննարկում էինք այս հատվածը՝ կապված «այս ժամանակ» արտահայտության հետ, Հիսուսն Իր ներկայությունը հռչակում է որպես «քո այցելության ժամանակը» (19.44): Այս այցելության ժամանակը թեյ խմելու համար չէր. «Որովհետև օրեր են գալիս քեզ վրա, երբ թշնամիներդ պատնեշներ կշարեն քո դեմ ու կշրջապատեն քեզ և ամեն կողմից կնեղեն քեզ և գետնին կհավասարեցնեն: Քեզ ու քո որդիներին քո մեջ: Եվ քարը քարի վրա չեն թողնի քո մեջ, որովհետև քո այցելության ժամանակը չճանաչեցիր» (19.43-44):

Վերջապես, Հիսուսը մտնում է տաճար և ուժ գործադրելով դուրս է անում այնտեղից առևտրականներին և դրամափոխներին (Ղուկ. 19.45, Մարկ. 11.15): Նայելով վերջին դեպքերի ամբողջությանը, որ Նա ընդունեց Իրեն ուղղված փառաբանությունը, չդադարեցնելով այն, աղետալի դատաստան հայտարարեց, իսկ հետո էլ ուժ գործադրեց տաճարում՝ Նրա աշակերտները հաստատ մտածեցին, որ Հիսուսը շուտով ուժով կսկսի Արքայությունը: Շատ վատ էր, որ նրանք չէին կարողանում ընդունել այն, ինչ Նա ասել էր այդ մտքին հակա-

ռակ, սակայն հիմա Նա անում էր բաներ, որոնք, թվում էր, հակառակ էին Իր ասածներին:

Բայցևայնպես, այս բոլոր դեպքերը վերաբերում էին ոչ թե Արքայության անմիջապես հայտնվելուն, այլ փաստեր էին, որ հավաքվում էին Հիսուսի դատական գործի մեջ՝ ընդդեմ անհավատ Երուսաղեմի: Երուսաղեմը պատրաստ չէր իր այցելության ժամանակին: Միայն մնացորդն ընդունեց Նրան որպես Թագավոր, երբ Նա էշին նստած մտավ քաղաք: Իսրայելի բոլոր առաջնորդները դեմ կանգնեցին Նրան: Միգուցե ամենակարևորն այն է, որ Հիսուսը տաճարում ապականություն հայտնաբերեց. հատկապես ցավալի էր, որ Հին Կտակարանի համակարգը վերածվել էր առևտրի: Սա էր լինելու այն կետը, որի հիման վրա Մեծ Պոռնիկն ու Ճշմարիտ Իսրայելը շատ շուտով կբախվեին: Քանի որ այս դեպքը շատ կարևոր է, ես ուզում եմ հաջորդ գլուխը տրամադրել հենց տաճարի մաքրազատման քննարկմանը: Ավետարանների պատմությունների աստվածաբանության խորությունն այստեղ ապշեցուցիչ է:

12. Այցելության ժամանակը (Ղուկ. 19.45-46)

Հավատացյալների մեծ մասը հիշում է Հիսուսի՝ տաճարը մաքրազատելը որպես մի դեպք, երբ Հիսուսը տեսանելի կերպով բարկացած էր, սակայն դա նորմալ էր, որովհետև Նա արդարացիորեն բարկացել էր այն մարդկանց վրա, ովքեր Նրա կրոնն օգտագործել էին եկամուտ ստանալու համար: Այս նույն հավատացյալները այնուհետև կիրակի օրը դուրս են գալիս եկեղեցուց, իսկ երկուշաբթի օրը գնում են «կրոնական» ապրանքներ գնելու տեղական աստվածաշնչյան գրախանութից: Թեև որոշակի ճշմարտություն կա այս տեսակետի մեջ, սակայն մենք պետք է շատ ու շատ ավելի խորը իմաստ տեսնենք այստեղ: Այն հատկապես կապ ունի Երուսաղեմի և տաճարի մոտալուտ կործանման հետ:

Մենք «այցելության» թեման ավելի վաղ քննարկել ենք՝ կապված «ներկա ժամանակ» (Ղուկ. 12.56), ինչպես նաև «քո այցելության ժամանակը» (19.44) արտահայտությունների հետ: Երկու դեպքերում էլ մենք տեսանք, թե ինչպես էին թե՛ համատեքստը, թե՛ ժամանակի հղումն ինքնին պահանջում տեսնել, որ այդ զգուշացումները վերաբերում են այն մարդկանց սերնդին, ում հետ այդ ժամանակ Հիսուսը խոսում էր: Այստեղ ես կցանկանայի ընդարձակ քննարկել այս աստվածաբանական «այցելություն» հասկացությունը, և թե ինչպես է այն վերաբերում այն ամենին, ինչ Հիսուսն արեց այդ արտահայտությունն օգտագործելուց անմիջապես հետո: Սա էլ իր հերթին ուղղակիորեն կապ կունենա տաճարի կործանման հետ, որի մասին Հիսուսը հենց նոր էր կանխասել, երբ արտասվում էր Երուսաղեմի համար. «թշնամիներդ… քեզ գետնին կհավասարեցնեն: Եվ քարը քարի վրա չեն թողնի քո մեջ, որովհետև քո այցելության ժամանակը չճանաչեցիր» (19.43-44):

Շարունակությունն ասում է.

> «Եվ տաճար մտնելով սկսեց դուրս հանել նրանց, ովքեր վաճառում էին, և ասաց նրանց. «Գրված է. «Իմ տունն աղոթքի տուն պետք է լինի», բայց դուք այն ավազակների որջ դարձրիք» (19.45-46):

Մինչդեռ մենք հիմնականում հետաքրքրված ենք Ղուկաս Ավետարանում գրառված Հիսուսի ճանապարհորդության պատմությամբ, օգտակար կլիներ այս պահին կարդալ այս նույն դեպքին համապատասխանող պատմությունները մյուս Ավետարաններում: Մատթեոսն ու Մարկոսն այսպես են գրում.

> «Եվ Հիսուսը տաճար մտնելով դուրս արեց բոլորին, ովքեր տաճարում առնում ու ծախում էին, և շուռ տվեց դրամափոխների սեղանները և նրանց նստարանները, ովքեր աղավնիներ էին վաճառում: Եվ ասաց նրանց. «Գրված է. «Իմ տունն աղոթքի տուն պիտի կոչվի», բայց դուք այն ավազակների որջ դարձրիք» (Մատթ. 21.12-13):

«Եվ մտնելով Երուսաղեմ, տաճար մտավ: Եվ երբ շուրջբոլորը նայեց և ամեն բան տեսավ, արդեն ուշ էր, և տասներկուսի հետ Բեթանիա գնաց… Եվ նրանք եկան Երուսաղեմ: Եվ նա վերադարձավ տաճար և սկսեց դուրս անել նրանց, ովքեր տաճարում առնում ու ծախում էին, և շուռ տվեց դրամափոխների սեղանները և նրանց նստարանները, ովքեր աղավնիներ էին վաճառում: Եվ թույլ չէր տալիս, որ որևէ մեկը որևէ բան տեղափոխեր տաճարում: Եվ նա սովորեցնում էր նրանց ու ասում էր. «Չէ՞ որ գրված է. «Իմ տունն աղոթքի տուն պիտի կոչվի բոլոր ազգերի համար»: Բայց դուք այն ավազակների որջ դարձրիք» (Մարկ. 11.12, 15-17):

Հովհաննեսը նույնպես գրում է տաճարի մաքրազատման մասին.

> «Հրեաների Զատիկը մոտ էր, և Հիսուսը բարձրացավ Երուսաղեմ: Տաճարում նա գտավ արջառ, ոչխար ու աղավնի ծախողների, նաև այնտեղ նստած դրամափոխների: Եվ պարաններից խարազան սարքելով՝ նրանց բոլորին տաճարից դուրս արեց, արջառների ու ոչխարների հետ միասին: Եվ ցրիվ տվեց

> դրամափոխների մետաղադրամներն ու շուռ տվեց նրանց սեղանները: Եվ աղավնի վաճառողներին ասաց. «Վերցրեք այս բաներն այստեղից, իմ Հորս տունն առևտրի տուն մի դարձրեք»: Նրա աշակերտները հիշեցին, որ գրված էր. «Քո տան նախանձավորությունը կսպառի ինձ» (Հովհ. 2.13-17):

Դու կարող ես որոշ տարբերություններ նկատել այստեղ, որոնք ոչ թե անպայման հակասություններ են, այլ զուտ տարբերություններ: Ամենանկատելի տարբերություններն Աստվածաշնչի գիտակների շրջանում երկար ժամանակ քննարկման առարկա են եղել. Մատթեոսը, Մարկոսը և Ղուկասը գրում են, որ Հիսուսը տաճարը մաքրազատել է ծառայության ամենավերջում, մինչդեռ ըստ Հովհաննեսի, դա տեղի է ունենում Նրա ծառայության ամենասկզբում: Ըստ Հովհաննեսի, Հիսուսը բազմաթիվ հավատացյալների թողնում է Երուսաղեմում և վերադառնում տուն: Նա խաչվում է ոչ շուտ, քան դրանից մեկ տարի անց միայն: Սինոպտիկ ավետարաններում մաքրազատումը հաջորդում է հաղթական մուտքին, և դա է հենց պատճառ դառնում քահանաների, դպիրների և մյուսների հետ խնդիրներ ունենալուն, որն ուղղակիորեն բերում է խաչելության մի քանի օրվա ընթացքում: Լիբերալ գիտակները կառչում են այս խնդրից որպես ապացույց, որ ավետարանները ներշնչված չեն, այլ առանձին հատվածներ են միասին հավաքված՝ ըստ դրանց մահկանացու հեղինակների քմահաճույքի և նպատակների: Մարկոսն իր պատմությունն օգտագործում է իր նպատակի համար, իսկ Հովհաննեսը արտագրել է այդ պատմությունն իր նպատակի համար: Բայց սա իհարկե ենթադրում է, 1) որ բոլոր պատմությունները ծագում են միայն մեկ դեպքից, կամ 2) դրանք ծագում են մեկը մյուսից կամ 3) որ նույնիսկ սա կժխտեր գրվածքի ներշնչված լինելը: Սակայն այս ինքնաբուխ հակազդեցությունները հավանաբար ավելի շատ խոսում են այդ գիտակների կողմնակալ վերաբերմունքի մասին, քան բուն Աստվածաշնչի:

Ստանդարտ պահպանողական պատասխանն այս խնդրին եղել է պարզապես այն, որ Հիսուսը երկու անգամ է մաքրազատել տաճարը: Եվ մինչդեռ մենք շատ պատշաճ կերպով կարող ենք բացատրություն տալ այս երկու մաքրազատումների վերաբերյալ, սակայն շատ կամայական է թվում Հիսուսի՝ երկու անգամ նույն

բանն անելը նույն վայրում, երկու առանձին դեպքերում՝ առանց հետագա բացատրության, թե ինչու է այդպես արել: Ստանդարտ բացատրությունն այն է, որ Հիսուսն իրոք նախանձավոր էր տաճարի մաքրության վերաբերյալ: Սակայն մի քանի րոպե առաջ Նա արտասվել էր և հայտարարել տաճարի մոտալուտ ավերման մասին, և անհավանական է թվում, որ Նա այդքան խորը զգացմունքային փոփոխություն ունենար մաքրության հանդեպ նախանձավորության պատճառով: Մեր Փրկիչը երբեք ենթակա չի եղել զգացմունքային այդպիսի տատանումների: Պետք է որ ավելի լավ բացատրություն լինի այդ երկու մաքրազատումների համար:

Տան ապականվածության զննումը

Իրականում Տաճարի մաքրազատման երկու առանձին դեպքեր են եղել, և դրանց համար ավելի լավ բացատրություն կա: Մաքրազատման այս երկու առանձին դեպքերի հետևում Հիսուսի դերն է որպես Քահանայապետ, որ գալիս և զննում է տան ախտահարված կամ ապականված լինելը: Սա նկարագրված է Ղևտացիների 14.33-53-ում: Այս հատվածում պատմվում է բազմաթիվ այցելությունների և կրկնվող գործողությունների մասին՝ ապականությունը հեռացնելու նպատակով, այնուհետև տունն (Տաճարը) անմաքուր հայտարարելը և պատվիրելը, որ տունն ամբողջությամբ ավերվի: Սա նաև համընկնում է Հիսուսի առաքելության հետ՝ ընդդեմ Երուսաղեմի: Ժամանակ խնայելու նպատակով ես այստեղ չեմ ներկայացնի Ղևտացիների գրքում նկարագրված ողջ երկար հատվածը, սակայն կարևոր է, որ դու այս պահին վերցնես քո Աստվածաշունչն ու կարդաս տվյալ հատվածը: Հետևությունն այն է, որ տվյալ հատվածում ընդգծվում են քահանայական պարտականությունները, և որ դրանք կապված են Հիսուսի ծառայության հետ:

Առաջին, «բորոտության ախտանիշ» կամ «բորոտության հիվանդություն» արտահայտությունը շփոթեցնող է: Դա ավելի շատ կապված է թարգմանության պատմության հետ, քան երբրայերեն իրական տեքստի հետ: Իրականում այդ արտահայտությունը պարզապես պետք է թարգմանվեր որպես «ախտահարում» կամ «ապականություն»: Ակնհայտ է, որ նշված «բորոտություն»-ը հիվանդություն չէր, քանի որ այն ախտահարում էր տան քարերը, հագուստը, ինչպես նաև մարդկանց (Տես Ղևտ. 14.54-57): Դա հաստատ

այն չէր, ինչ այսօր մենք գիտենք որպես բորոտություն: Դա անհայտ ախտահարում կամ ապականություն էր, և Աստված մանրամասն քայլերի ցուցում է տալիս նրանց՝ որոշելու վտանգավորության աստիճանը, և թե ինչպես դրա հետ վարվել այդ որոշման հիման վրա: Քանի որ դա ակնհայտորեն կապ ունի վտանգավոր, անցանկալի և պոտենցիալ անմաքուր ինչ-որ բանի հետ, ես դրան կդիմեմ որպես «ապականություն»: (Ես նաև ESV թարգմանության մեջ «հիվանդություն» բառը կփոխեմ «ապականություն» բառի):

Երկրորդ, տանտերն ինքը պետք է նախաձեռներ, երբ կասկածելի ապականություն տեսներ տանը (Ղևտ. 14.35): Տաճարի դեպքում, մենք գիտենք, որ այն Հիսուսի «Հոր տունն» էր (Հովհ. 2.16) և այդպիսով Հայր Աստված նախաձեռնեց այդ հարցը:

Երրորդ, տանտերը պետք է դիմեր քահանային, և քահանան պետք է գնար «տունը նայելու» և «զննելու ապականությունը» (Ղևտ. 14.36-37): Հովհաննեսի պատմության մեջ Հիսուսը շատ շուտ «գտավ» ապականությունը: Մենք չպետք է կարծենք, որ սա պատահական եղավ, որովհետև Նա ամեն բան զննում էր: Հետագա դրվագում մենք, հատկապես Մարկոսի Ավետարանում, կարդում ենք, որ Հիսուսը «շուրջբոլորը նայեց և ամեն բան տեսավ» (Մարկ. 11.11), դա այն օրվա նախորդ երեկոն էր, երբ Նա իրականում դուրս արեց ապականությունը: Մենք նախօրոք քննարկել ենք «այցելության» գաղափարը որպես դատաստան-զննում ըստ Աստծո վերահսկողության, որ Նա ուներ Իր ժողովրդի համար (Ըստ Փալմեր Ռաբբրտսընի, Palmer Robertson, Տիրոջ այցելությունը լինում է երկու նպատակով, ուխտ կնքելու և այդ ուխտը կիրառելու, օրինակի համար, օրենք տալու և այդ օրենքը գործադրելու, Տերը այցելում է օրենք/ուխտ տալու և հրամայելու այդ օրենքներին հետևելու, ուխտի մեջ հավատարիմ մնալու, և այնուհետև այցելում է որպեսզի ուխտի սանկցիաները, ուխտը դրժելու պատիժները այդ ժողովրդի վրա գործադելու, Տես Christ of the Prophets): Նրանք մշտապես գտնվում էին Նրա երեսի առաջ և շարունակաբար ենթակա էին Նրա մանրազնին հետևողականությանը (Ել. 25.30, 2 Օր. 11.12): Հիսուսը մարմնավորեց այս երեսը և այն ուղղեց դեպի Երուսաղեմի այցելությանը (Ղուկ. 9.51):

Երբ քահանան տեսնում էր ապականությունը, նա պետք է յոթ օրով կողպել տար տունը, որից հետո գար տեսնելու, թե արդյոք ապականությունը տարածվել էր: Մենք Ավետարաններում աներկբա

կերպով չենք տեսնում այս երկու առանձին դեպքերը կատարվելիս, սակայն այս յոթօրյա ժամանակահատվածի գոյությունը Հովհաննեսի Ավետարանում ես մի քիչ անց կքննարկեմ: Այս երկու մաքրազատումները, ամեն դեպքում, ուղղակի զուգահեռ են զննության գործընթացի մնացած մասի հետ: Շատ չանցած ես նաև կբացատրեմ, թե ինչու են դրանք առանձնացված առաջին մասից: Իսկ հիմա եկեք ավարտենք երկու մաքրազատումների հետ կապված հարցը:

Երկու մաքրազատումները

Հինգերորդ, տունը կողպելու յոթերորդ օրը, քահանան պետք է վերադառնար հաջորդ զննության համար (Ղևտ. 14.39): Եթե ապականությունը տարածված լիներ, նա պետք է հեռացներ այդ ապականությունը տնից. «այդ ժամանակ քահանան պետք է հրամայեր, որ նրանք հանեին այն քարերը, որոնց վրա ապականություն կար, և դրանք նետեին քաղաքից դուրս մի անմաքուր տեղ: Եվ նա պետք է տան ներսն ամբողջությամբ քերել տար, և քերած սվաղը պետք է քաղաքից դուրս մի անմաքուր տեղ թափեին» (Ղևտ. 14.40-41):

Վեցերորդ, Նախքան համարելը, որ Հովհաննեսի Ավետարանում նկարագրված է Տաճարի առաջին մաքրազատումը Հիսուսի կողմից, եկեք համառոտ նայենք ղևտական տան մաքրազատման գործընթացի շարունակականությանը: Եթե քարերը դուրս նետելուց ու պատերը քերելուց հետո ապականությունը դարձյալ վերադառնար տուն, ապա քահանան պետք է հայտարարեր, որ ապականությունը «մնայուն» է (Ղևտ. 14.44), և դրա հիման վրա ողջ տունը հայտարարեր «անմաքուր»: Դրան հաջորդում էր տան լիովին բնաջնջումն ու ավերվածությունը. «Եվ նա պետք է քանդել տա տունը՝ տան քարերը, գերաններն ու սվաղը, և դրանք տեղափոխել տա քաղաքից դուրս մի անմաքուր տեղ» (Ղևտ. 14.45):

Մաքրազատման նպատակով առաջին այցելության գործընթացը և կործանման հայտարարության համար երկրորդ այցելությունն, ըստ էության, հենց այն է, ինչ մենք տեսնում ենք Տաճար կատարած Հիսուսի երկու այցելությունների դեպքում: Սա իմաստավորում է այն փոքրիկ տարբերությունները, որ գտնվում են Հովհաննեսի և սինոպտիկ Ավետարանների պատմությունների միջև: Առաջին այցի ժամանակ Հիսուսը դուրս է անում առևտրականներին և

դրամափոխներին, ցրիվ է տալիս նրանց մետաղադրամներն ու շուռ տալիս նրանց սեղանները, որից հետո ասում է. «Վերցրեք այս բաներն այստեղից, իմ Հոր տունն առևտրի տուն մի դարձրեք»: Այլ կերպ ասած, Հիսուսն ընդամենը հեռացրեց ապականված քարերը և դրանք հեռու ուղարկեց: Մեկ կամ երկու օր անց Նա Երուսաղեմից գնաց Հրեաստան և որոշակի ժամանակ չվերադարձավ:

Երբ Նա երկու տարի անց կատարեց Իր երկրորդ զննումը, տեսավ, որ դրամափոխների ու առևտրականների ապականությունը մնայուն էր: Այս զննության հիման վրա Նա նրանց նորից դուրս արեց, բայց մի պատգամով, որ հիմնվում էր առաջինի վրա. «Չէ՞ որ գրված է. «Իմ տունն աղոթքի տուն պիտի կոչվի բոլոր ազգերի համար»: Բայց դուք այն ավազակների որջ դարձրիք» (Մարկ. 11.17, Ղուկ. 19.46): Սա վերջին դատապարտությունն էր Իսրայելի ձախողման վերաբերյալ, որ նա չէր եղել այն, ինչ կոչված էր լինելու (ինչպես ես մի փոքր անց կբացատրեմ): Հիսուսը դրանով իսկ որոշեց, որ տան ապականությունը մնայուն էր: Նա կարծես սպասում էր սրան, երբ հայտարարեց տան քանդ ու քարափ լինելու մասին, երբ էշին նստած մտավ քաղաք: Սակայն Նա սա հաստատեց օրեր անց, երբ ժողովուրդը հիանում էր Տաճարի գեղեցիկ քարերով. «Իսկ այս բաները, որ տեսնում եք, օրեր կգան, երբ քարը քարի վրա չի մնա, որ չքանդվի» (Ղուկ. 21.6):

Հետաքրքիր է, որ եբրայերեն բառը, որ թարգմանվել է «մնայուն» կամ «անհանգստացնող», Ղևտացիների 14.44-ում ma’ar բառն է, և այն բառացի նշանակում է «ծակծկել»: Այն բառացիորեն կապ ունի փշերի հետ և այդպիսով ուղղակի կապ ունի երկրի անեծքի հետ (Ծննդ. 3.18): Դա Աստծո խոստացած անեծքի մի մասն է, որ եթե իսրայելացիները Քանանից դուրս չքշեին բոլոր հեթանոս ազգերին, նրանք կդառնային «փշեր ձեր կողքերին» (Թվ. 33.55): Մարգարեական պատգամների ժամանակ հաճախ փշերին հղում էր արվում որպես անհավատարիմ Իսրայելի հանդեպ Աստծո պատժի (Ես. 5.6, 7.23–25, 32.13, Երեմ. 12.13, Եզեկ. 2.6, Ովս. 2.6, 9.6), ինչպես նաև խորհրդապատկերում էր անկյալ մարդու վրա եկած անեծքը:

Ինչպե՞ս էին իրականում դրամափոխներն ու առևտրականներն ապականություն ձևավորել Տիրոջ տանը: Ճիշտ ինչպես Հիսուսն ասաց. փոխարենն այդ տունը վկայություն դարձնելու բոլոր ազգերի համար, նրանք դարձել էին եսասեր ու ագահ ավազակներ և վարվում էին ճիշտ իրենց շրջակա ազգերի նման: Սա Իսրայելի արմատական

ձախողումն էր որպես ազգ, որի կենտրոնական ներկայացուցիչները Երուսաղեմն ու Տաճարն էին: Ազգերին փրկելու փոխարեն, Իսրայելը թավալվում էր իր սեփական անկյալ բնույթի մեջ:

Աղոթքի տուն բոլոր ազգերի համար

Հիսուսի վերջին մեղադրանքն այստեղ կապ ունի Հրեաների անկարողության հետ՝ Աստծո տունը դարձնելու «աղոթքի տուն բոլոր ազգերի համար»: Մենք արդեն քննարկել ենք այս մոտեցումը՝ կապված նրանց անկարողության հետ՝ լինելու տուն բարձրունքի վրա, վառված ճրագ և այլն: Նրանք չէին կարողացել Աստծո լույսը փոխանցել ազգերին, դրա փոխարեն համարելով, որ արժանի են օրհնության և ապրում էին եսասիրական ճոխության մեջ: Հիսուսն այս հարցին ակնհայտ կերպով է անդրադառնում (Այստեղից մի տխուր դաս կարող ենք սովորել, որ, այն ազգերը որոնք ունեն Աստծո ճշմարտությունը, լույսը և այն չեն տարածում իրենց հարևան ազգերին, այդ դեպքում Աստված, պատմությունն է ցույց տալիս, այդ ազգին ցեղասպանության է ենթարկում և այդ ազգի հողը իրենց դուրս է փսխում իրենց երկրից, հաճախ, հենց իրենց չավետարանված, չլուսավորված հարևան ազգերի, կամ հեռվից բերված մի վայրագ ազգի ձեռքով: Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.):

Ինչպես մենք կտեսնենք, մեջբերումը Եսայիա 56.7-ից է, սակայն իրականում դրա հիմքում ընկած է Սողոմոնի Տաճարի ընծայումը: Այս պատմության համար, պետք է կարդալ 3 Թագավորաց 8-րդ գլուխն ամբողջությամբ: Այդ դեպքի կարևորությունը հետևյալում է.

Սողոմոնի Տաճարի ընծայումը նշվում է որպես հրեա ժողովրդի օրհնության գագաթնակետ, սակայն այդ պատմությունը հետաքրքիր ձևով է բացահայտում դրա համաշխարհային նպատակաուղղվածությունը: Տեքստը մեզ ասում է, որ դա տեղի ունեցավ յոթերորդ ամսվա տոնին (3 Թագ. 8.2): Սա աչքի չընկնող, բայց կարևոր մանրամասնություն է: Մովսեական Օրենքում Աստված տաղավարահարաց տոնը պատվիրել էր, որ տեղի ունենա այս ժամանակ, և դա էր պատճառը, որ տեքստում մարդիկ հավաքվել էին: Տաղավարահարաց տոնախմբությունը հունձքի տոն էր, և մարդիկ պետք է հունձքը հավաքեին տոնի առաջին օրը: Այնուհետև նրանք պետք է դուրս գային իրենց տներից ու յոթ օր ապրեին տաղավարներում՝ (վրաններում) ի հիշատակ անապատում իրենց

թափառումների: Իսկ ութերորդ օրը նրանք թողնում էին վրանները և տոնախմբությամբ նշում հունձքի տոնը, խորհրդապատկերելով, որ Աստված իրենց ազատել էր անապատային կյանքից և, ըստ Ուխտի խոստման, տեղափոխել օրհնության և առատության կյանքի մեջ խոստացյալ երկրում:

Համեմատեք սա մովսեսական Ուխտի կառուցվածքի հետ Ելից 19.1-ում, որտեղ Աստված մեկ ուրիշ տոն նախաձեռնեց երրորդ ամսում: Այս ամիսը, բնական է, որ տարվա ընթացքում ավելի շուտ էր գալիս, որին հաջորդում էր Պենտեկոստեի տոնախմբությունը, որը շնորհակալության տոն էր դաշտի և հոտի երախայրիների (առաջին պտուղների) համար: Սա նշվում էր միայն հունձքի առաջին պտուղներով, մինչդեռ տաղավարահարաց տոնախմբությունը նշվում էր հունձքի վերջում: Ըստ Իսրայելի պատմության ժամանակաընթացքի, մովսեսական Ուխտը պարզապես նախաձեռնում էր Աստծո ողջ ժողովրդի հավաքվելը: Տաճարի ընծայումն ազդանշան էր, թե ինչը պետք է լիներ Ուխտի իրականացումն ամբողջ հունձքի համար:

Այս պատմության կարևոր մասը սա է. Տաճարը պետք է միջազգային(համաշխարհային??) Տաճար լիներ: Երկու բան նկատեք: Առաջին, յոթերորդ ամիսն այստեղ կոչվում է «Եթանիմ»: Սա յոթերորդ ամսվա համար եբրայերեն ստանդարտ բառը չէ (որ Tishri-ն էր), այն փյունիկյան (այսինքն, օտար-ազգյա) ազդեցություն էր կրում, որ տարօրինակ բան էր զուտ հրեական այս տոնախմբության համար, եթե իհարկե Աստված Իր մտքում ավելի ընդարձակ մի բան չուներ դրա համար: Աստծո ժողովրդի ամբողջական հունձքը միշտ ներառում էր նաև հեթանոսներին:

Զարմանալի չէ, որ Եսայիան ավելի ուշ նախատում է մարդկանց՝ Ուխտը ձախողելու համար, որովհետև Աստծո ծրագրերը տիեզերական մասշտաբների էին, և ոչ լոկ տեղական, սահմանափակված չէին մեկ ազգի և մեկ աշխարհագրական վայրի վրա: Նա ասում է.

> «Թող այն օտարականը, ով միացել է Տիրոջը,
> չասի. «Տերն ինձ հաստատ մեկուսացրել է իր
> ժողովրդից…»: «Այն օտարականները, որոնք միացել
> են Տիրոջը՝ նրան ծառայելու, Տիրոջ անունը սիրելու
> ու նրա ծառաները լինելու համար, բոլոր նրանք,
> ովքեր պահում են Շաբաթը և չեն պղծում այն և
> ամուր պահում են իմ ուխտը, նրանց բերելու եմ իմ

սուրբ սարը և ուրախացնելու եմ իմ աղոթքի տանը: Նրանց ողջակեզներն ու զոհերը ընդունելի կլինեն իմ ղոհասեղանի վրա, *որովհետև իմ տունն աղոթքի տուն պիտի կոչվի բոլոր ազգերի համար»:*

Տեր Աստվածը, ով հավաքում է Իսրայելի ցրվածներին, հռչակում է. «Ես դեռ պիտի հավաքեմ մյուսներին նրա մոտ, բացի նրանցից, որոնց արդեն հավաքել եմ» (Ես. 56.3, 6-8):

Իհարկե, մենք այս հատվածը հիշում ենք հիմնականում այն պատճառով, որ Հիսուսը սա ասեց, երբ դրամափոխներին դուրս էր անում Տաճարից: Նա մեջբերում արեց Եսայիայից, և դրանով իսկ հղում կատարեց Աստծո ավելի մեծ ծրագրին այդ Տաճարի համար:

Մենք հաճախ ենք այս պատմության հետ կապված լսում, որ Հիսուսը դեմ էր կրոնի անվան տակ եկամուտ ստանալուն (կամ դրա նման մի բան), և դրա մեծ մասը ճիշտ է, սակայն այստեղ կա շատ ավելի մեծ պատգամ: Հիսուսը բարկացած էր ոչ թե ընդամենն այն պատճառով, որ մարդիկ առնում ու ծախում էին: Նա բարկացել էր, թե հատկապես ինչ էին նրանք առնում ու ծախում. զոհեր: Երկու ավետարաններում նշվում են դրամափոխներն ու առևտրականները և նրանք, ովքեր աղավնիներ էին ծախում (Մատթ. 21.13): Հովհաննեսը նշում է նաև արջառների ու ոչխարների մասին (Հովհ. 2.15): Այս մարդիկ ընդամենը կրոնական առարկաներ չէին վաճառում, ինչպես այսօրվա աստվածաշնչյան խանութները, նրանք զոհեր էին վաճառում: Այս ժողովուրդը, որ մեղքի զոհերն ընդունում էր որպես ամենօրյա առևտրի մի մաս, մի ժողովուրդ էր, որ թողել էր հնազանդությունը. նրանք չէին մտածում Ուխտը պահելու մասին, չէին մտածում սրբության և աղոթքի կարգ ու կանոնի մասին, չէին մտածում ազգերի համար վկա լինելու մասին: Նրանք պարզապես ընթանում էին ծեսերով՝ անտեսելով ավելի մեծ պատասխանատվությունը, և, ըստ էության, գնում էին իրենց քավությունը:

Խնդիրն այն է, որ դա սկզբից մինչև վերջ սխալ է: Սխալ է ապրել ինչպես ուզում ենք և միևնույն ժամանակ համարել, որ քավության արյունը միևնույն է, մեզ կփրկի: Հիսուսն ասաց. «Ոչ, ոչ և դարձյալ ոչ: Այս տունը պետք է աղոթքի տուն կոչվի բոլոր ազգերի համար»: Տաճարը պետք է մի վայր լիներ, որտեղ բոլոր ազգերը պետք է

ակտիվորեն փափագեին փնտրել Աստծուն ու Նրա կամքը, ոչ թե մի վայր, որտեղ մենք, ըստ էության, մի փոքրիկ անդամավճար ենք տալիս, որպեսզի շարունակենք ապրել մեղքի մեջ: Այդ մարդիկ վերցրել էին այն, ինչ ծրագրված էր լինել Աստծո հետ փոխհարաբերության միջոց ողջ աշխարհի համար, և այն վերածել էին եսակենտրոն կուլտի (կեղծ պաշտամունքի), որը միայն հոգ էր տանում մի բանի մասին, որ ամենավերջին բանն էր, որ նրանք պետք է անեին: Եվ այս ամենին դեմ կանգնելով՝ Հիսուսը ոչ միայն պարզապես Եսայիայից մեջբերում էր անում, այլև պաշտպանում էր (կամ, ավելի ճիշտ, ամբաստանում էր) այն մեծ ծրագիրը, որ պատկերում էր Սողոմոնը՝ Իսրայելի աղոթող թագավոր Դավթի որդին, երբ ձեռքերը բարձրացրած կանգնել էր Տաճարում և աղոթում էր Աստծուն քահանայական ազգի և բոլոր ազգերի համար:

Հիմա մտածեք այն մեծ պատկերի մասին, որ Սողոմոնն այդտեղ ներկայացրեց: Այստեղ մենք տեսնում ենք Դավթի որդուն, որ հավակնում է գահին, ընծայում է Տաճարը, նորոգում է Ուխտը (այսպես ասած «նոր Ուխտ») և ժողովրդին ուսուցանում է Ուխտի պայմանները, ապաշխարելու կարիքը, որը նա արտահայտում է որպես Տաճարի կողմը նայելով աղոթել և նաև վերջնական նպատակը՝ այս պատգամը տանելու ամբողջ աշխարհին, որպեսզի բոլոր ազգերը նայեն դեպի այս Տաճարը: Չգիտեմ, կա՞ արդյոք Սուրբ Գրքի որևէ այլ հատվածում ավելի ամբողջական նախատիպար Ավետարանի համար, քան սա: Այն շատ հստակ նախապատկերում է Դավթի գալիք ճշմարիտ Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Սրա հետ կապված հետաքրքիր է նկատել, որ առաջին Ավետարանը Հիսուսին ներկայացնում է որպես Հիսուս Մեսիա՝ Դավթի որդի (Մատթ.1.1): Հիսուսը գալիս է որպես Իսրայելի ճշմարիտ Թագավոր և նախաձեռնում է ճշմարիտ Տաճարը (որ հենց Ինքն է), որին պետք է ուղղված լինեն մեր աղոթքները, որպեսզի գտնենք Աստծո ներողամտությունը, ով Ինքն Իրենով իրականացնում է Մարգարեի, Քահանայի և Թագավորի դերը (սրանք Հիսուսի երեք պաշտոններն են), ով նախաձեռնում է Նոր Ուխտը, ով քարոզում է. «ապաշխարեք, որովհետև Աստծո Արքայությունը մոտ է», և ով վերջում մեզ պատվիրում է գնալ և աշակերտել բոլոր ազգերին:

Սողոմոնը, պահելով համաշխարհային փրկության թեման, նշում է օտարականների մասնակցությունն Իսրայել երկրում, որոնք, չլինելով իսրայելացի, միևնույն է, կարող էին աղոթել այդ նույն Աստծուն

և լսելի լինել: Նա տեսնում էր Աստծո գործը մարդկանց մեջ, և Աստված մտադիր էր, որ սա դառնար միջազգային նորություն.

> «Լսիր երկնքից՝ Քո բնակության վայրից, և արա օտարականի խնդրանքին համապատասխան, որպեսզի երկրի բոլոր ազգերը ճանաչեն Քո անունը, վախենան Քեզանից, ինչպես Քո Իսրայել ժողովուրդը, և որպեսզի իմանան, որ այս տունը, որ ես կառուցեցի, Քո անունով է կոչված» (3 Թագ. 8.43):

Աստծո արձագանքն Ուխտի հանդեպ Իր ժողովրդի հավատարմությանը, ովքեր աղոթում ու ապաշխարում են, պետք է միջազգային կարևորագույն նորությունը լիներ: Եվ իհարկե, ինչպես նշեցի, Քրիստոսը տվեց Մեծ Հանձնարարականը:

Այստեղ հատկանշական է տեսնել Աստծո Ուխտերի նշանակալի միությունը ողջ պատմության ընթացքում. Նրա նպատակը միշտ լայնամասշտաբ է եղել՝ սկսած առաջին օրվանից: Մեզ տարբեր ձևերով հավատացրել են, որ Հին Կտակարանը հրեաների համար է, իսկ Նոր Կտակարանը՝ բոլորի, սակայն իրականում Աստված հին Ուխտը տվեց հրեաներին այն նպատակով, որ նրանք դառնային քաղաք բարձունքի վրա, որպեսզի Նրա Ուխտի ժողովրդի փառքը փայլեր ողջ աշխարհում, որպեսզի նրանք էլ փափագեին ունենալ նույն կենսակերպը:

Սա ներառում է աշխարհին ուսուցանելը՝ հոժարակամ ընդունելու Աստծո տնտեսական պատիժներն ու կորուստները որպես միջոց՝ Իր ժողովրդին բերելու ապաշխարության և վերադարձնելու հավատարմության և այդպիսով նաև բարգավաճման: Ազգային ինչպիսի աղետներ էլ որ տեղի ունենային, ասաց Սողոմոնը, աղոթեք, և ոչ թե պարզապես աղոթեք, այլ ձեռքներդ տարածեք դեպի այս տունը. «վերադարձեք» մեղքի ձեր ինքնակամ աքսորից և եսակենտրոն ինքնաբավարարվածությունից դեպի Աստծո ողորմությունը: Սողոմոնի համար այդ տունը նորակառույց Տաճար էր, սակայն Ղուկասի Ավետարանում Հիսուսն Իր մասին ասում է. «այստեղ Սողոմոնից մեծ մեկը կա» (Ղուկ. 11.13), ով հենց հանդիսանում էր Ճշմարիտ Տաճարը:

Սակայն Իսրայելն անտեսել էր այս բոլորը: Երբ քահանան տեսնում էր, որ ապականությունը մնայուն էր, պատվիրում էր քանդել տունը: Սակայն Նա արդեն ուներ նաև նոր տուն և նոր քարեր:

Նոր տուն և նոր քարեր

Տան մաքրության գործընթացում, ըստ ղևտական Օրենքի, առաջին և երկրորդ զննություններն իրարից բաժանվում էին յոթնօրյա ժամանակահատվածով: Ինչպես ես արդեն նշեցի, այդ յոթնօրյա ժամանակահատվածը երևում է Հովհաննեսի Ավետարանում: Դա տեսնելու համար, սակայն, մենք կարիք ունենք ուսումնասիրելու ամբողջական պատկերը, որ ես արդեն քննարկել եմ մինչև հիմա. Հիսուսը՝ որպես Ճշմարիտ տաճար, Հին Ուխտի Տաճարի Նրա մաքրազատումը՝ որպես դատապարտության այցելություն կռապաշտ ու անքնաբավ այդ տանը: Սա է Հիսուսի պատմությունը Հովհաննեսի Ավետարանում:

Այն սկսվում է Հիսուսի նախաձեռնած հրապարակային ծառայությունով՝ Նրա մկրտությունից սկսած: Հիսուսի մկրտության օրվանից Հովհաննեսի Ավետարանը սկսում է յոթնօրյա պատմություն. առաջին օրը Հիսուսը մկրտվում է, Հովհաննեսը հռչակում է Նրա՝ Աստծո Գառ լինելը, և Սուրբ Հոգին աղավնու կերպարանքով իջնում ու մնում է Նրա վրա: Այս բոլորի նպատակն այն էր, ինչպես Հովհաննեսն է ասում. «որպեսզի Նա հայտնի լիներ Իսրայելին» (Հովհ. 1.31): Այստեղ այնքան շատ աստվածաբանություն կա, որ հնարավոր չէ ամբողջը նշել՝ առանց թեմայից շեղվելու: Կարճ ասած, այստեղ մենք տեսնում ենք Սուրբ Հոգուն՝ Նոր Ստեղծագործության վրա սավառնելիս առաջին օրը: Այստեղ մենք տեսնում ենք Փրկության Նոր տապանը, որ դուրս է գալիս ջրի մկրտությունից, և աղավնին, որ ցամաք երկիր է գտնում Նոր Աշխարհում: Սակայն մեր նպատակի համար ամենակարևորն այստեղ մենք տեսնում ենք Աստծո Հոգին, որ Աստծո փառքի նման լցնում է Նոր Տունը: Սա բացատրվում է հետևյալ կերպ.

Ելից 40.34-35-ում, երբ Մովսեսն առաջին անգամ կանգնեցրեց Աստծո տունը՝ խորանը, մենք կարդում ենք. «Այդ ժամանակ ամպը պատեց հանդիպման վրանը, և Տիրոջ փառքը լցրեց խորանը: Եվ Մովսեսը չէր կարողանում մտնել հանդիպման վրանը, որովհետև ամպը հանգչել էր դրա վրա, և Տիրոջ փառքը լցրել էր խորանը»: Եր-կու բան այստեղ կարևոր է. ամպը, որ Աստծո Հոգու ներկայությունն էր, և փաստը, որ այն հանգչեց (կամ բնակվեց) այնտեղ: Այս «հանգչել» բառի եբրայարեն տարբերակը shakan բառն է, որտեղից

առաջանում է անգլերեն «shekinah glory» արտահայտությունը, որ պարզապես վերաբերում է Աստծո բնակվող ներկայությանը: (Հետաքրքիր է, որ Ելից գրքում խորան բառի համար ամենուրեք օգտագործվում է եբրայերեն mishkan բառը, որ shakan բառի գոյականն է, որ բառացի նշանակում է «բնակավայր»):

Այս տեսարանը ճշգրտորեն կրկնվում է, երբ Սողոմոնն ընծայում է Տաճարը.

> «Եվ երբ քահանաները դուրս եկան Սուրբ Վայրից, ամպը լցրեց Տիրոջ տունը այնպես, որ քահանաները չէին կարողանում կանգնել այնտեղ, որպեսզի ծառայեին, քանի որ Տիրոջ փառքը լցրել էր Տիրոջ տունը: Այդ ժամանակ Սողոմոնն ասաց. «Տերն ասաց, որ բնակվելու է (shakan) թանձր մթության մեջ: Ես քեզ համար իրոք հրաշալի տուն եմ կառուցել, մի վայր՝ բնակվելու (shakan) հավիտյան» (3 Թագ. 8.10-13):

Սա հենց այն նշանն է, որ Աստված Հովհաննեսին ասաց՝ Հիսուսի մեջ տեսնելու. «Նա, ում վրա տեսնես Հոգին իջած ու մնացած» (Հովհ. 1.33): Հենց միայն այս պատկերից արդեն պարզ է դառնում, որ Հիսուսը՝ Աստծո Որդին, փաստորեն Աստծո Նոր Տունն էր՝ Նոր բնակավայրը: Հիսուսը Նոր Տաճարն էր: Սա իհարկե կնշանակեր, որ Երուսաղեմի հին Տաճարն արդեն հնացած էր: Այն օրվանից ի վեր, երբ ճշմարիտ տաճարը հայտնվեց Իսրայելին, այդ հին Տաճարի բոլոր ծեսերը, բոլոր ավանդույթներն ու կռապաշտական արարողությունները, որ աճել էին նրանց շուրջբոլորը, ոչ այլ ինչ էին, քան Իսրայելի Աստծո տան ապականություն: Նոր տունն արդեն հաստատվել ու ներբնակվել էր Սուրբ Հոգու կողմից: Որից հետո գալիս է տան «փակվելը» Ուխտի գործունեության համար: Տան փակվելը նաև յոթնօրյա ժամանակահատվածի մաս էր հանդիսանում (Ղևտ. 14.38):

Հետաքրքիր է, որ միայն Հովհաննեսի Ավետարանում է նշվում Հիսուսի հետևյալ հայտարարությունը. «Քանդեք այս տաճարը, և ես երեք օրից այն կկանգնեցնեմ» (Հովհ. 2.20): Հետո ասվում է, որ Նա խոսում էր «Իր մարմնի տաճարի մասին»: Այսինքն, երբ դա տեղի ունեցավ, Հիսուսը գիտակցում էր, որ Ինքը Նոր Տաճարն է, և սա Նրա նշանն էր հրեաներին Իր իշխանության վերաբերյալ՝ մաքրազատելու հին տունն ապականությունից: Հետաքրքիր է

այն փաստը, որ Ավետարաններից ոչ մեկը չի նշում Հիսուսի այս հայտարարությունը, մինչև Նա երկրորդ անգամ է մաքրում Տաճարը երեք տարի անց: Բայցևայնպես, սինոպտիկ ավետարաններից ոչ մեկը չի արձանագրում Հիսուսի այս հայտարարությունը երկրորդ մաքրազատման ժամանակ: Սակայն հենց այս հայտարարությունն են «սուտ վկաները» ներկայացնում Նրա դեմ սարքած դատավարության ընթացքում, ինչպես սինոպտիկ ավետարաններում է արձանագրված (Մատթ. 26.61, 27.40, Մարկ. 14.58, 15.29): Եթե Նա սա չէր ասել երկրորդ մաքրազատման ժամանակ, ապա որտեղի՞ց էին նրանք ընդհանրապես վերցրել այս միտքը: Դա կարող էր լինել տարիներ առաջ՝ առաջին մաքրազատման ժամանակ, երբ Հիսուսն իրոք նման բան էր ասել, և որն արձանագրված է միայն Հովհաննեսի Ավետարանի 2-րդ գլխում: Սա կարող է նպաստել նաև այն փաստին, որ Հիսուսի արած հայտարարության վերաբերյալ նրանց ներկայացրած տարբերակները ճշգրիտ չէին:

Դրանից հետո Հովհաննեսի Ավետարանը սկսում է հաշվել Հիսուսի ծառայության առաջին մի քանի օրերը: Նոր Տունը հաստատվեց մկրտության օրը: Դա առաջին օրն էր: «Հաջորդ օրը» (երկրորդ օրը. Հովհ. 1.35), Հիսուսը աշակերտներ է ձեռք բերում: Հովհաննես Մկրտչի աշակերտներից մեկը, ում անունն անհայտ է, հետևում է Հիսուսին, գումարած Անդրեասը, Սիմոն Պետրոսը, Փիլիպպոսը և Նաթանայելը (Հովհ. 1.35-51): Հետո, «երրորդ օրը» (Հովհ. 2.1), Հիսուսը կատարում է Իր առաջին հրաշքը՝ ջուրը փոխակերպելով գինու Կանայի հարսանիքի ժամանակ (2.1-10): Դրանից հետո Նա այցելում է Կափառնայում «մի քանի օրով» (2.12): Այնուհետև մենք անմիջապես կարդում ենք. «հրեաների Զատիկը մոտ էր, և Հիսուսը բարձրացավ Երուսաղեմ» (2.13): Զատիկը կազմակերպվում էր Նիսան ամսվա 14-ին, և դա Շաբաթ օր էր: Այսպիսով, սա նշանակում է, որ Հովհաննես 1.29-2.13 հատվածի ողջ պատմությունը տեղի է ունեցել 7 օրվա ընթացքում: Իսկ դա նշանակում է, որ Հիսուսն այցելեց Երուսաղեմ, երբ այդ յոթերորդ (Շաբաթ) օրը «մոտ» էր:

Այլ կերպ ասած, Հիսուսը (ով արդեն գիտեր, որ առաջին տունն ապականված էր) հաստատեց Նոր Տունը, հետո յոթ օր սպասեց, և այցելեց այդ տուն (այդ պահին հին տունը) երկրորդ զննության համար: Գտնելով ապականությունը՝ Նա հեռացրեց քարը: Հետո Նա վերադարձավ և տեսավ, որ ապականությունը մնայուն էր, և հայտարարեց, որ տունն այդ պատճառով ամբողջությամբ կավերվեր:

Նոր քարեր

Ղևտացիների պարտականությունների մեկ այլ հետաքրքիր կողմ է այն, որ նրանք պետք է ապականված քարերը տեղափոխելուց հետո փոխարինեին դրանք նորերով: Օրենքն ասում է. «Այնուհետև նրանք պետք է վերցնեն ուրիշ քարեր և դնեն դրանց փոխարեն, և սվաղ վերցնելով տունը սվաղեն» (Ղևտ. 14.42):

Մենք Հովհաննեսի Ավետարանում տեսնում ենք, թե ինչպես Հիսուսն հաջողությամբ նոր աշակերտներ ձեռք բերեց, սակայն այդ երրորդ օրը միայն հինգ հոգու մասին է նշված, ուրիշ ոչ ոքի: Սակայն հենց որ Նա ապականված քարերը Տաճարից հեռացրեց (առևտրականները, դրամափոխները և այլն), սկսեց նոր աշակերտներ ձեռք բերել. շատերը հավատացին Նրա անվանը (Հովհ. 2.23): Նրանց շարքում էր Նիկոդեմոսը, ով հարցրեց վերստին ծնվելու մասին, իսկ ավելի ուշ օգնեց թաղել Հիսուսի մարմինը (Հովհ. 3.1, 19.39): Շատ չանցած, մենք տեսնում ենք Հիսուսին՝ աշակերտների մեծ բազմությամբ շրջապատված, որոնցից Նա ընտրեց 12-ին, որպեսզի առաքյալներ լինեին (Ղուկ. 6.12-16): Իրականում, Հիսուսն ուներ ընտրյալ «այլ քարեր» նույնպես, որպեսզի նրանցով փոխարիներ ապականված հին կարգի անդամներին: Փաստորեն, երբ Անդրեասն իր եղբայր Սիմոնին բերում է Հիսուսի մոտ, Հիսուսը նրան տեղում անվանափոխում է «Կեփաս» կամ հունարեն «Պետրոս», որ նշանակում է «քար»:

Պետրոսը հենց այդպես էր պատկերացնում Նոր Կտակարանի Եկեղեցու անդամներին. Նոր Տաճարի՝ Քրիստոսի մարմնի քարեր: Նա գրում է. «Մոտենալով նրան, այն կենդանի քարին, որ մարդկանցից մերժված է, սակայն Աստծո տեսակետից ընտրված ու թանկագին է, դուք ինքներդ էլ կենդանի քարերի նման կառուցվում եք որպես հոգևոր տուն, լինելու սուրբ քահանայություն, Աստծո համար ընդունելի հոգևոր զոհեր մատուցելու Հիսուս Քրիստոսի միջոցով» (1 Պետ. 2.4-5):

Այն ամենը, ինչ ներսում է

Հիսուս Քրիստոսը հաստատեց Աստծո նոր տունը, իսկ մեզ կենդանի քարեր դարձրեց այդ տան մեջ: Հին տունը լի էր ապականությամբ:

Երբ Նա առաջին անգամ այն մաքրազատեց ապականությունից, Նա սկսեց դրա փոխարեն նոր քարեր ձեռք բերել Իր նոր տան համար: Երբ Նա վերջին անգամ այցելեց այդ հին տունը և տեսավ, որ ապականությունը մնայուն է, Նա հայտարարեց, որ այն պետք է ամբողջությամբ քանդվի:

Սակայն այս ուսումնասիրության հետ կապված մի վերջին նշում պետք է անենք: Երբ տունը հայտարարվում էր անմաքուր, տան մեջ եղած ամեն բան նույնպես հայտարարվում էր անմաքուր: Այդ պատճառով քահանան թույլ էր տալիս, որ տան մեջ եղած ապրանքները դուրս հանվեին նախքան իր առաջին զննումը. «որ չլինի թե տան մեջ եղածներն անմաքուր հայտարարվեն» (Ղևտ. 14.36): Հիսուսը շարունակ դիմում էր հրեաներին՝ ողջ Սամարիայով, Հրեաստանով ու Երուսաղեմով մեկ, որ այցելությունը շուտով գալու էր, սակայն նրանք չէին գալիս Նրա մոտ: Փաստորեն, այն ամենը, ինչ գտնվում էր քաղաքում, նույնիսկ նրանց երեխաներն էլ, հեռակա կարգով անմաքուր էին հայտարարվելու և ոչնչացվելու էին 70 թվի ցեղասպանության ժամանակ: Սա երևում է Երուսաղեմի վերաբերյալ Հիսուսի ողբի մեջ. «Որովհետև օրեր են գալիս քեզ վրա, երբ թշնամիներդ պատնեշներ կշարեն քո դեմ ու կշրջապատեն քեզ և ամեն կողմից կնեղեն քեզ և գետնին կհավասարեցնեն: Քեզ ու քո որդիներին քո մեջ: Եվ քարը քարի վրա չեն թողնի քո մեջ, որովհետև քո այցելության ժամանակը չճանաչեցիր» (Ղուկ. 19:43-44):

Եզրակացություն

Հիսուսի կողմից Տաճարի երկրորդ մաքրազատումը Երուսաղեմի տան վերաբերյալ Նրա վերջնական դատավճռի զննումն էր: Դա իրոք որ «քո այցելության ժամանակն» էր քաղաքի համար: Հիսուսն Իր մկրտության օրվանից ի վեր Իր առաքելությունը կենտրոնացրել էր այդ քաղաքի վրա, և մի օր պետք է կործանման պատգամը փոխանցեր դրան: Այստեղ՝ Ղուկաս 19.41-46-ում, մենք տեսնում ենք այդ դատապարտությունն արված, իսկ պատգամը՝ փոխանցված: Այս պահից ի վեր ընդամենը մնում էր դրա իրականացումը, որն արդեն վճռված էր:

13. Չար վարձակալները և չար հյուրերը (Ղուկ. 20.9-18 և Մատթ. 21.33-22.14)

Կարծում եմ՝ առակներից ոչ մեկն Իսրայելին ուղղված այնքան հստակ ու բացահայտ մարգարեական դատապարտություն չէ, որքան չար վարձակալների առակը: Այն, ինչ Հիսուսը տարբեր կերպերով ու տարբեր տեսանկյուններից ուսուցանում էր Իր ճանապարհորդությունն սկսելուց ի վեր, հիմա ավելի ամբողջական ու բացահայտ ներկայացնում է ժողովրդին.

> «Մի մարդ խաղողի այգի տնկեց և այն հանձնեց վարձակալների ու երկար ժամանակով գնաց մեկ այլ երկիր: Երբ ժամանակը եկավ, նա վարձակալների մոտ մի ծառա ուղարկեց, որպեսզի նրանք խաղողի այգուց պտուղներ տային իրեն: Սակայն վարձակալները ծեծեցին նրան և դատարկաձեռն ճանապարհեցին: Հետո նա մեկ ուրիշ ծառա ուղարկեց, սակայն նրանք սրան էլ ծեծեցին ու անամոթաբար վարվեցին և դատարկաձեռն ճանապարհեցին: Սակայն նա երրորդին էլ ուղարկեց: Նրանք այս մեկին էլ վերքեր հասցնելով դուրս շպրտեցին: Այդ ժամանակ այգու տերն ասաց. «Ի՞նչ անեմ: Ես իմ սիրելի որդուն կուղարկեմ: Միգուցե նրան հարգեն»: Բայց երբ վարձակալները տեսան նրան, իրար ասացին. «Սա ժառանգորդն է: Եկեք սպանենք նրան, որպեսզի ժառանգությունը մեզ մնա»: Եվ նրան դուրս շպրտեցին այգուց ու սպանեցին: Ուրեմն ի՞նչ կանի այգու տերը նրանց հետ: Նա կգա ու կկործանի այդ վարձակալներին և այգին կտա ուրիշների» (Ղուկ. 20.9-16):

Այս առակն ամբողջացնում է Իսրայելի ողջ պատմությունը: Առաջինը, Աստված Իսրայելը հաստատեց խոստացյալ երկրում, որն իրականում իսկական պարտեզ էր.

> «Եվ նրանք եկան մինչև Եսքողի հովիտը և այնտեղից խաղողի մի ողկույզ կտրեցին և երկու հոգով ձողով տարան այն: Նաև նռեր և թզեր: Այդ վայրը կոչվեց Եսքողի հովիտ այն ողկույզի պատճառով, որ Իսրայելի որդիներն այնտեղից կտրեցին… Եվ նրանք եկան Մովսեսի և Ահարոնի մոտ և Իսրայել ժողովրդի ամբողջ ժողովքի մոտ Կադեսի Փառան անապատում: Նրանք պատասխան բերեցին նրանց և ամբողջ ժողովքին և ցույց տվեցին այդ երկրի պտուղը: Եվ նրանք ասացին նրան. «Մենք գնացինք այն երկիրը, որ դու մեզ ուղարկեցիր: Այն կաթ ու մեղր է բխում, և ահա այդ երկրի պտուղը» (Թվ. 13.23-27):

«Եսքողի հովիտ» բառացի նշանակում է «Ողկույզի հովիտ»՝ կապված այնտեղ աճող հիանալի խաղողի ողկույզների հետ: Այդ պտղաբերությունն Աստծո օրհնությունն էր նրանց համար: Մարգարեները կրկնում էին այս պատկերը, երբ խոսում էին Աստծո սիրո, կամ երբեմն ներողամտության և Ուխտի նորոգման մասին (Երգ. 4.12–16, 5.1, 6.2, 8.13, Ես. 51.3, 58.11, Երեմ. 31.12, Եզեկ. 36.35): Կասկած չկա, որ առակի մեջ նշված այգին հղում էր Իսրայելի երկրին: Ակնահայտ է, որ այգու տերն Աստված Ինքն էր, իսկ վարձակալները, հետևաբար, Հին Ուխտի Իսրայելի ժողովուրդն էին:

Երկրորդը, Աստված ակնկալում էր, որ այս երկիրը պետք է պտուղ տար, և ակնհայտ է, որ վարձակալները պետք է աճեցնեին այդ պտուղը: «Վարձակալներ» բառը թարգմանված է հունարեն georgois բառից, որ բառացի նշանակում է «գյուղատնտեսներ», կամ «վարձակալ հողագործներ»: Դրանք ոչ թե պարզապես վարձակալներ էին, այլ հողագործ վարձակալներ: Նրանք այդ այգում դրվել էին այնպես, ինչպես Ադամը դրվեց Եդեմի պարտեզում՝ մշակելու և պահպանելու այգին: Աստծո ակնկալած պտուղը հոգևոր պտուղ էր: Ակնկալված պտուղն իհարկե մի բան էր, որի մասին մենք արդեն մեկ անգամ չէ, որ քննարկել ենք. Իսրայելը պետք է վկայություն լիներ ազգերի համար՝ նրանց դարձի բերելու Աստծո Օրենքին: Եվ թեև Աստված հեռվում էր, Նա սակայն հետաքրքրված

էր Իր սեփականության արդյունավետությամբ:

Այսպիսով, երրորդը, Նա ժամանակին պարբերաբար գործակալներ է ուղարկում զննելու (այցելության ժամանակները) այդ պտղի գոյությունը: Սակայն վարձված հողագործները մերժեցին այս ծառաներին: Նրանք ծեծեցին, խայտառակեցին ու վռնդեցին նրանց: Երբ Հիսուսն այս առակը պատմում է քահանաներին ու ծերերին Մատթեոսի Ավետարանում (21.33-46), Նա ասում է, որ վարձակալները նույնիսկ սպանեցին ու քարկոծեցին այդ ուղարկվածներից ոմանց: (Մի փոքր անց մենք համառոտ կքննարկենք Մատթեոսի պատմությունը): Իսրայելի համար սա ակնհայտորեն հղում էր մարգարեներին: Աստված նրանց շատ դեպքերում ուղարկել էր սովորեցնելու, զգուշացնելու և հանդիմանելու Իսրայելին, իսկ Իսրայելն արհամարհել, ծաղրել, մերժել ու սպանել էր նրանց բոլորին: Սա Հիսուսի դատական գործի մի մասն էր ճանապարհորդության սկզբից ի վեր: Նա օրինականներին հանդիմանում է Ղուկաս 11.47-51 հատվածում.

> «Վայ ձեզ: Քանի որ դուք սարքում եք մարգարեների գերեզմանները, որոնց ձեր հայրերը սպանեցին: Դրանով իսկ դուք վկայում եք և հավանություն եք տալիս ձեր հայրերի արարքներին. որովհետև նրանք սպանեցին նրանց, իսկ դուք սարքում եք գերեզմանները: Դրա համար Աստծո Իմաստությունն ասաց. «Ես նրանց մոտ կուղարկեմ մարգարեներ ու առաքյալներ, որոնցից որոշներին նրանք կսպանեն ու կհալածեն», որպեսզի բոլոր մարգարեների արյունը, որ թափվել է աշխարհի ստեղծվելուց ի վեր, պահանջվի այս սերնդից. Աբելի արյունից մինչև Զաքարիայի արյունը, որ զոհասեղանի ու սրբարանի միջև սպանվեց: Այո, ասում եմ ձեզ, այս սերնդից դա կպահանջվի»:

Իրականում, աշխարհի սկզբից ի վեր թափված մարգարեների արյունը պահանջվելու էր այս սերնդից. այն սերնդից, որի հետ այդ պահին Հիսուսը խոսում էր: Հիսուսը Երուսաղեմի դեմ ճիշտ այս նույն մեղադրանքն է կրկնում ողջ ճանապարհի ընթացքում մինչև այստեղ (Ղուկ. 13.34-35) և Տաճար հասնելուց հետո (Մատթ. 23.33-39): Սա հենց այն նույն մեղադրանքն է, ինչպես մենք նախապես արդեն նշել ենք, որով մեղադրվում է Մեծ Պոռնիկը Հայտնության

17-18 գլուխներում. «Մի կին տեսա, որ մարգարեների արյունով էր հարբած, Հիսուսի նահատակների արյունով… Եվ նրա մեջ գտնվեց մարգարեների ու սրբերի արյունը, և բոլոր նրանց, ովքեր սպանվել էին երկրի վրա» (Հայտ. 17.6, 18.24): Այսպիսով, ոչ մի կասկած չկա, թե ինչ է առակի այս մասը նշանակում: Սակայն վատագույնը դեռ առջևում էր.

Չորրորդը, երբ այս ծառա-մարգարեներից ոչ մեկը հաջողության չհասավ, Աստված որոշեց ուղարկել Իր սիրելի Որդուն. «Միգուցե նրան հարգեն»: «Հարգեն» բառն այստեղ սովորական թարգմանություն է, բայց ես լիովին համաձայն չեմ դրա հետ: KJV թարգմանության տարբերակն ասում է. «պատվել», սակայն դա էլ լիովին չի համընկնում: Ճշգրիտ բառը entrapesontai բառի համար երևում է բոլոր երեք սինոպտիկ ավետարաններում (Ղուկ. 20.13, Մատթ. 21.37, Մարկ. 12,6): Այս տեսանկյունից այն բառացի նշանակում է. «կամաչեն»: Այս համարը նշանակում է, որ նրանք պետք է ամաչեին իրենց արարքների համար, և միակ բանը, որ միգուցե նրանց կարող էր բերել ապաշխարության այն էր, որ ծառաների փոխարեն Աստված Իր իրական Որդուն է ուղարկում որպես Իր ներկայացուցիչ: Որդին նրանց համար մարգարե էր լինելու, զննող քահանա, Աստծո փոխանորդը՝ Թագավոր (Հիսուսի երեք պաշտոնները): Սա վերջին ջանքն է, փաստորեն, վերջին հնարավորությունը: Եթե վարձակալներն իրենց մեղքերի համար այս Մարդու առաջ չամաչեին, ուրեմն ոչ մեկի առաջ չէին ամաչի:

Հինգերորդը, անձամբ Որդու հայտնվելն անգամ բավարար չեղավ՝ նրանց ապաշխարության բերելու: Փաստորեն, քանի որ ապաշխարություն տրվեց միայն Իսրայելի ընտրյալներին, Որդու հայտնությունը միայն ավելի կարծրացրեց Իսրայելի մնացած մարդկանց սրտերը: Իրենց ըմբոստության մեջ նրանք դավադրություն էին կազմում, թե ինչպես կարող էին գողանալ ժառանգությունն իրենց գործերով, իրենց համար.

> «Սա ժառանգորդն է: Եկեք սպանենք նրան, որպեսզի ժառանգությունը մեզ մնա»: Եվ նրան դուրս շպրտեցին այգուց ու սպանեցին» (Ղուկ. 20.14-15):

Նրանք պատրաստ էին սպանելու Աստծո Որդուն, եթե իմանային, որ կարող են ապահովել իրենց ժառանգությունն առանց ապաշխարելու: Իհարկե, ինչպես Հիսուսն ասաց, սպանելու այս վերջին գործողությունը

դեռ ապագայի հարց էր: Սակայն սա մարգարեություն էր Հիսուսի կողմից, թե ինչ էր իրականում տեղի ունենալու, և դա կատարվեց ճիշտ այնպես, ինչպես Նա կանխասել էր:

Սա, իհարկե, հենց այն է, ինչի համար Պողոսը հանդիմանում է անհավատ հրեաներին. «Որովհետև, անտեղյակ լինելով Աստծո արդարությանը, և փորձելով իրենց արդարությունը հաստատել՝ Աստծո արդարությանը չենթարկվեցին» (Հռ. 10.3): Պետրոսն էլ է այս հանցանքի համար հանդիմանում այդ սերնդին.

> «Իսրայելացիներ, լսեք այս խոսքերը. Հիսուս Նազովրեցին, ձեզ համար Աստծուց հաստատված մի մարդ հզոր գործերով և հրաշքներով ու նշաններով, որ Աստված նրա միջոցով կատարեց մեր մեջ, ինչպես ինքներդ էլ գիտեք, այս Հիսուսին, մատնված լինելով Աստծո հստակ ծրագրի ու կանխագիտության համեմատ, դուք խաչեցիք և սպանեցիք անօրեն մարդկանց ձեռքով» (Գործք. 2.22-23):

Սա նաև Ստեփանոսի խոսքն է, հենց այն բանից առաջ, երբ այս նույն հրեաները սպանեցին նրան.

> «Խստապարանոցներ, սրտով ու ականջով չթլպատվածներ, որ մշտապես հակառակվում եք Սուրբ Հոգուն: Ինչպես ձեր հայրերը, այնպես էլ դուք: Մարգարեներից որի՞ն ձեր հայրերը չհալածեցին: Նրանք սպանում էին նրանց, ովքեր նախապես հայտարարում էին այն Արդարի գալու մասին, ում դուք հիմա դավաճանեցիք ու սպանեցիք, դուք, որ հրեշտակների մատուցմամբ ստացաք օրենքը և չպահեցիք այն» (Գործք. 7.51-53):

Վեցերորդը, դրանից հետո Հիսուսը հայտարարում է այդ ըմբոստ հողագործների դատաստանը և դա կրկնակի է. այգու տերը «կգա ու կկործանի այդ վարձակալներին և այգին կտա ուրիշների» (Ղուկ. 20.16): Իմաստը պարզ է. այն բանից հետո, երբ հրեաները սպանեն Քրիստոսին, Հայրը 1) կկործանի հրեաների այդ սերունդը և 2) այգին կտա ուրիշներին: Սա ակնհայտորեն իրականացավ 1) ՔՀ 70թ.-ին Երուսաղեմի կործանումով և 2) Արքայության փոխանցմամբ՝ Նոր Ուխտի ժամանակաշրջան (կազմված հրեաների

հավատարիմ մնացորդից ու պատվաստված միլիոնավոր հեթանոսներից): (Մենք հաճախ ենք լսում որ Աստված հրեա ժողովրդին խոսք է տվել որ մի երկիր տա ու Նա իր խոսքը միշտ կպահի: Հետաքրքիր է որ այս մարդիք չեն կարողանում տեսնել որ 1. Աստված իր խոստումները բոլորը արդեն կատարել է Հեսու 21.45-ում: 2. Այս մարդիք նաև ենթադրում են որ Աստված էթնիկական հրեա ժողովրդին մշտապես էր խոստացել որ երկիր տա, որը ոչ մի տեղ չի գրված աստվածաշնչի մեջ: 3. Սա միգուցե ամենավատն է, որ այս մարդիկ նաև ենթադրում են որ Աստծո խոստումները անպայմանական են, այսինքն, եթե նա մի անձի կամ ժողովրդի մի բան է խոստանում, ապա անկախ այդ անձի կամ ժողովրդի բարոյական պահվածքի, Աստված այդ ժողովրդին տված Իր խոստումները պետք է կատարի, այսպիսով նրանք Աստծուն փակուղու մեջ են գցում, իրենց մտքի մեջ: Այս երրորդ կետը նաև շատ ավելի ցավալի մտածելակերպի է տանում մարդուն, երբ այս մարդիկ հայտարարում են որ, ընտանիքի մեջ ամուսինը կնոջ վրա իշխանություն ունի, և անկախ նրանից թէ ինչ տեսակի բարոյական կյանքով է ապրում այդ տղամարդը, այդ իշխանությունը ոչ մի ձևով չի կարող նվազել կամ բացառվել: Այս տեսակի հավատքը իհարկե աստվածաշնչի գիտելիքների տգիտության հետևանքով է հղանում: Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.)

Մարդիկ (ում այդ պահին մասնավորապես ուղղված էր այդ առակը. Ղուկ. 20.9) այդ պահին չկարողացան տանել այդ առակը: Նրանց արձագանքից մենք կարող ենք եզրակացնել, որ նրանք ընդհանուր առմամբ հասկացան դրա իմաստը. «Երբ նրանք լսեցին, ասացին. «Իհարկե, ոչ» »(Ղուկ. 20.16): Հիսուսն Իր այս դասը հաստատում է մարգարեական ավանդույթով.

> «Բայց նա շեշտակի նայեց նրանց ու ասաց. «Ուրեմն ինչի՞ մասին է այս գրվածքը. «Այն քարը, որ կառուցողները մերժեցին, անկյունաքար դարձավ»: Ամեն, ով որ այդ քարի վրա ընկնի, կտոր կտոր կլինի, իսկ եթե դա որևէ մեկի վրա ընկնի, կճզմի նրան» (Ղուկ. 20.17-18):

Սակայն խոսքերի այս փոխանակման մեջ հեգնական մի բան կա: Հարցն ուղղակիորեն Սաղմոս 118.22-ից է: Հիսուսն ընդամենը մեկ օր առաջ էր էշին նստած մտել Երուսաղեմ, և մարդիկ գովասանք

էին երգում հենց այս նույն Սաղմոսից և մի քանի համար ներքև. «Օրհնյալ է Թագավորը, որ գալիս է Տիրոջ անունով: Խաղաղություն երկնքում և փառք բարձրերում» (Սաղ. 118.26, տես Ղուկ. 19.38, Մատթ. 21.9): Իսկ հիմա Հիսուսն է համարներ մեջբերում նրանց համար, որոնք Որդուն մերժելու կանխասացություն են: Այնուհետև Հիսուսը հավելում է Եսայի 8.15-ը, որը կանխասացություն է նրանց մասին, ովքեր սայթաքելու են այդ անկյունաքարի վրա (այս քննարկումը տես վերևում, Ղուկաս 17.1-5-ի վերաբերյալ): «Ոչ, իհարկե ոչ մեզ», մտածում էին նրանք: Բայց Հիսուսն ասաց սա. այս քաղաքի ու ժողովրդի վրա մեծ դատաստան ու վրեժխնդրություն էր գալիս, որի արդյունքում նրանց պաշտոններն ու կրոնական արտոնությունները պիտի փոխանցվեին մեկ այլ ժողովրդի, որը պտուղ պիտի տար:

Բայցևայնպես, փարիսեցիներն ու քահանաները բավականաչափ խելացին էին, որպեսզի կարողանային հասկանալ, որ առակն իրենց մասին էր (Ղուկ. 20.19): Նրանց վերաբերյալ զավեշտն այն է, որ այս հասկանալը նրանց համար պատճառ հանդիսացավ՝ սկսելու հենց այն հանցանքը, որ այդ առակը կանխասում էր, որ նրանք կատարելու էին: Նրանք հնարավորություն էին փնտրում Հիսուսին՝ Որդուն ձերբակալելու: Նրանց արձագանքը տարբերվում էր ժողովրդի արձագանքից, ովքեր պարզապես չէին հավատում, որ նրանք երբևէ կարող էին նման բան անել:

Քահանաներին և Երեցներին

Մինչդեռ փարիսեցիների ու քահանաների արձագանքն ընդհանուր առմամբ գրված է սինոպտիկ բոլոր ավետարաններում, առակի Մատթեոսի տարբերակն ու վերջում տեղի ունեցած խոսակցությունը նշանակալի տարբերություն է առաջացնում Ղուկասի Ավետարանի հետ: Տարբերություններն այնքան մեծ են, որ հստակ է դառնում, որ Մատթեոսի պատմությունն առանձին է Ղուկասինից: Եկեք նայենք դա.

Առաջինը, Ղուկասի պատմությունը սկսվում է նրանով, որ Հիսուսն առակը պատմում է ժողովրդին (Ղուկ. 20.9): Մատթեոսի Ավետարանում, սակայն, Հիսուսի լսարանի համար ասվում է, որ կազմված էր «ավագ քահանաներից ու ժողովրդի ծերերից» (Մատ. 21.23): Նա այստեղ պատմում է երեք հաջորդական առակներ.

երկու որդիների, չար վարձակալների ու ամուսնական խնջույքի, առանց լսարանի փոփոխության:

Երկրորդը, չար վարձակալների առակի կառուցվածքը մի փոքր տարբեր է այն իմաստով, որ այգու տերը միաժամանակ մի քանի ծառաների խմբեր է ուղարկում (Մատթ. 21.34-36), ի տարբերություն մեկ առ մեկ ուղարկելուն՝ ըստ Ղուկաս 20.10-12-ի հայտնի պատմության:

Երրորդը, Ղուկասի Ավետարանում Հիսուսն է եզրահանգում անում այն բանի վերաբերյալ, թե ինչ կանի այգու տերը վերադառնալիս. «Նա կգա ու կկործանի այդ վարձակալներին և այգին կտա ուրիշներին», և երբ ժողովուրդը լսում է այս դատաստանը, պատասխանում է. «Իհարկե, ոչ» (Ղուկ. 20.16): Մատթեոսի Ավետարանում, սակայն, Հիսուսը քահանաներին ու ծերերին է հարցնում, թե ինչ կանի այգու տերը, երբ վերադառնա, և նրանք իրենք են տալիս այս պատասխանը. «Նրանք ասացին նրան. «Նա այդ չարագործներին դաժան մահվան կմատնի, իսկ այգին ուրիշ վարձակալների կհանձնի, որոնք ժամանակին կտան պտուղը նրան» (Մատթ. 21.41):

Չորրորդը, երկու դեպքում էլ Հիսուսն անմիջապես մեջբերում է Սաղմոս 118.22 համարը՝ անկյունաքարը մերժելու վերաբերյալ, իսկ հետո նաև հավելում է Եսայիա 8.14-15-ը՝ գայթակղության քարի վերաբերյալ: Բայց Մատթեոսի Ավետարանում Նա մեկ այլ բացահայտ մարգարեություն է փոխանցում Իր կողմից. «Դրա համար ասում եմ ձեզ, Աստծո Արքայությունը կվերցվի ձեզանից և կտրվի մի ժողովրդի, որը պտուղ կբերի» (Մատթ. 21.43): Այս մարգարեությունը գտնվում է Սաղմոսացից ու Եսայիայից արած իր մեջբերումների մեջտեղում, իսկ Ղուկասի Ավետարանում այս մեջբերումներն արվում են առանց ընդհատման:

Առաջին և չորրորդ տարբերությունները կարելի է հեշտությամբ բացատրել հեղինակների՝ տեքստը ներդաշնակեցնելու ցանկությամբ: Բայց երկրորդն ու երրորդը շատ ավելի դժվար բացատրելի են, հատկապես՝ երրորդը: Ոչ մի հնարավորություն չկա բացատրելու առակի հանդեպ արձագանքների տարբերությունը, և այգու տիրոջ դատաստանի վերաբերյալ Հիսուսի ասելու կամ քահանաների ասելու տարբերությունը: Այս դեպքում մեզ շատ քիչ տարբերակներ են մնում. 1) տեքստը խեղաթյուրված է, 2) Ավետարանների մեջ հակասություններ կան, կամ 3) սրանք նույն առակը պատմելու

տարբեր դեպքեր են:

Իմ կարծիքով, երրորդն ամենաբավարարողն է, քանի որ առակն ի մի է բերում Իսրայելի ողջ պատմությունը և ամփոփում է այդ ազգին ուղղված Հիսուսի դատական գործը: Մեծ կարևորություն ունի ինչպես այս առակը, այնպես էլ դրանում տեղ գտած աստվածաշնչյան մեջբերումները: Քանի որ այն շատ կարևոր էր, հավանական է, որ Հիսուսը շատ անգամ էր այն պատմել: Սակայն մենք ունենք երկու դեպքի արձանագրություն, որոնք, հավանաբար, տեղի են ունեցել մի քանի րոպեների տարբերությամբ. առաջինն առանձին՝ ուղղված քահանաներին ու ծերերին, իսկ հետո բացահայտ՝ ամբողջ ժողովրդին: Մենք, իհարկե, արդեն քննարկել ենք այն փաստը, որ Հիսուսը, հավանաբար, Իր առակները շատ անգամներ էր պատմել տարբեր տեղերում տարբեր լսարանների համար: Նա, բնականաբար, ամեն անգամ պատմելիս, փոքրիկ փոփոխություններ էր անում, ինչպես մյուս պատմողներն են անում, սակայն միշտ պահում էր հիմնական հզոր միտքը, որի համար պատմում էր առակը: Այստեղ մենք ունենք հատուկ ուղղվածությամբ առակի այդպիսի մեկ այլ դեպք: Այստեղ կարևոր է տեսնել, որ Մատթեոսի առանձին պատմության մեջ են այն նշանակալի տարբերությունները, որոնք ուղղված են անձամբ քահանաներին ու ծերերին: Առաջինը, որ քահանաներն ու ծերերն իրենք ի վիճակի եղան ինքնուրույն գալ ճիշտ եզրահանգման՝ ճիշտ նախորդ առակի վարձակալների նման, որոնք իրենց բերանի խոսքով դատապարտեցին իրենց (Ղուկ.19.22): Հիսուսը թույլ տվեց, որ այս կռապաշտներն ու մարդասպաններն իրենց իսկ եզրահանգմամբ դատապարտեն իրենք իրենց (Մատթ. 21.41): Նրանք հենց նոր էին արտաբերել իրենց սեփական դատաստանի դատավճիռն ու մեղադրանքն այս դատական գործում:

Երկրորդը, նկատեք Հիսուսի բացահայտ մարգարեության մեջ շեշտադրումը գալիք դատաստանի ու ինքնիշխանության փոխանցման վերաբերյալ (Մատթ. 21.43): Հրեաները հենց նոր էին արտաբերել իրենց մեղավորության և արժանի դատաստանի մասին: Հիսուսն այնուհետև ավելացնում է երկրորդ վկայի վկայությունը. Սաղմոս 118.22-ի հեղինակը, որից հետո հաստատում է դատավճիռը. «Դրա համար ասում եմ ձեզ, Աստծո Արքայությունը կվերցվի ձեզանից և կտրվի մի ժողովրդի, ով պտուղ կբերի» (Մատթ. 21.43): Մենք մի քանի անգամ նկատել ենք այս համարը, և ավելի

ուշ կրկին կքննարկենք: Սա իրականում Հիսուսի «փոխարինման վարդապետության» հայտարարության գագաթնակետն է (այն, որ Աստծո արքայության գործի համար հրեա ազգը փոխարինվելու էր հեթանոս ազգով կամազգերով): Արքայությունը կվերցվի հրեաներից և կտրվի մի ժողովրդի, կոնկրետ ժողովրդի, որը կդառնա այն պտղաբեր ժողովուրդը, որ հրեաները չկարողացան լինել:

Մեծ խնջույքի առակի վերանայում

Չար վարձակալների առակն առանձին պատմելուց հետո Հիսուսն անմիջապես ավելացնում է մեկ ուրիշ առակ: Սա ավելի վաղ պատմած մեծ խնջույքի առակի (Ղուկ. 14.15-24) ավելի ընդարձակ ու շեշտադրված տարբերակն է: Եվ մինչդեռ մենք հիմնականում կենտրոնացած ենք Ղուկասի Ավետարանի վրա, Տաճարում ունեցած Հիսուսի եզրափակիչ հակառակության հետ կապված մենք հարկադրված ենք շեղում կատարել դեպի Մատթեոսի Ավետարան, որն էլ մեզ մղում է վերանայել նաև այս առակը, որն, ըստ էության, այդ նույն պատգամի մի մասն է կազմում: Ավելին, դա ևս մեկ օրինակ է այն բանի, որ Հիսուսը վերապատմում և մանրամասնում էր Իր առակները, ինչպես նաև մեկ անգամ ևս հաստատում է Երուսաղեմի գալիք կործանումը:

Արժե, որ մենք ամբողջությամբ ներկայացնենք այդ ամբողջ հատվածը: «Եվ նորից Հիսուսը խոսեց նրանց (ավագ քահանաների և ծերերի) հետ առակներով ու ասաց.

> «Երկնքի արքայությունը կարող է համեմատվել թագավորի հետ, ով իր որդու համար հարսանեկան խնջույք կազմակերպեց, և ուղարկեց իր ծառաներին՝ կանչելու հարսանեական խնջույքի հրավիրվածներին, սակայն նրանք չեկան: Նորից, ուրիշ ծառաներ ուղարկելով, ասաց նրանց. «Ասեք հրավիրվածներին. «Ահա, ես ընթրիքը պատրաստել եմ, արջառներս ու պարարտ հորթերս մորթված են, և ամեն բան պատրաստ է: Եկեք հարսանեկան խնջույքի»: Սակայն նրանք ուշադրություն չդարձրին ու գնացին, մեկն իր արտը, մեկն իր գործին, մինչդեռ մյուսները բռնեցին նրա ծառաներին, խայտառակե-

> ցին ու սպանեցին նրանց: Թագավորը բարկացավ և ուղարկելով իր զորքերը, ոչնչացրեց սպանողներին ու այրեց նրանց քաղաքը: Հետո ասաց իր ծառաներին. «Հարսանեկան խնջույքը պատրաստ է, սակայն հրավիրվածներն արժանի չէին: Ուրեմն գնացեք մայրուղիները և ում որ գտնեք, հրավիրեք խնջույքի»: Եվ ծառաները դուրս եկան փողոցները և հավաքեցին բոլորին ում գտան, թե՛ բարի, թե՛ չար: Այնպես որ, հարսանեկան սրահը լցվեց հյուրերով: Սակայն երբ թագավորը եկավ հյուրերին տեսնելու, այնտեղ մի մարդ տեսավ, որ հարսանեկան հագուստ չուներ: Եվ ասաց նրան. «Ընկեր, ինչպե՞ս դու ներս մտար առանց հարսանեկան հագուստի»: Եվ նա պապանձվեց: Այդ ժամանակ թագավորն ասաց սպասավորներին. «Կապեք նրա ձեռքերն ու ոտքերը և դրսի խավարը նետեք: Այնտեղ կլինի լաց ու ատամների կրճտոց»: Որովհետև շատերն են կանչված, սակայն քչերն են ընտրված» (Մատթ. 22.1-14):

Նմանությունն այնքան մեծ է, որ հեշտությամբ կարելի է հասկանալ, որ սա Ղուկասի Ավետարանում ավելի վաղ պատմված առակի մեկ այլ տարբերակ է, և իմաստն էլ հիմնովին նույնն է: Բայցևայնպես, այն շատ ավելի խորը շեշտ ունի: Այստեղ առաջին ծառա-պատգամաբերները (որ անկասկած, մեկ այլ հղում է մարգարեներին) պարզապես անտեսված են: Ծառա-պատգամաբերների մյուս ալիքը (ավելի շատ մարգարեներ) սարսափելի անտրամաբանական վերաբերմունքի է արժանանանում, թեև որոշները պարզապես արհամարհում են նրանց. «մյուսները բռնեցին նրա ծառաներին, խայտառակեցին ու սպանեցին նրանց» (հ.6): Այս սպանությունը չի նշվում նախորդ տարբերակում: Հիսուսն անկասկած սա ավելացնում է որպես Երուսաղեմի ամբաստանության մի մաս, որ Նա արդեն ներկայացրել էր, և մոտ ապագայում նորից էր ներկայացնելու (Մատթ. 23.34-36):

Թագավորը զայրույթով է պատասխանում այս «մարդասպաններին». «ուղարկելով իր զորքերը, ոչնչացրեց սպանողներին ու այրեց նրանց քաղաքը» (հ. 7): Սա ճշգրիտ կանխասացությունն է այն բանի, թե ինչ էր տեղի ունենալու Երուսաղեմի հետ: Թագա-

վորն Ինքը չէր մտնելու Երուսաղեմ և ավերելու այն, այլ Իր զորքերն էր ուղարկելու: Իրականում, Նա հռոմեական զորքերն էր ուղարկելու: Այդ զորքերը «Նրանն» էին լինելու, ոչ թե այն իմաստով, որ նրանք հավատացյալներ էին, այլ, որ գտնվում էին Նրա վերահսկողության տակ որպես ենթականեր: Նրանք երկու բան պետք է անեին. առաջին, նրանք ոչնչացնելու էին մարդասպաններին: Մարդասպաններն Իսրայելի ողջ սերունդն էր (Ղուկ. 11.50-51, Մատթ. 23.36): Երկրորդ, զորքերն այրելու էին մարդասպանների քաղաքը: Սա հենց այն էր, ինչ տեղի ունեցավ ՔՀ 70թ.-ին: Եվ սա Հիսուսի հայտարարությունն էր հաղթական մուտքի օրը.

«Որովհետև օրեր են գալիս քեզ վրա, երբ թշնամիներդ պատնեշներ կշարեն քո դեմ ու կշրջապատեն քեզ և ամեն կողմից կնեղեն քեզ և գետնին կհավասարեցնեն: Քեզ ու քո որդիներին քո մեջ: Եվ քարը քարի վրա չեն թողնի քո մեջ, որովհետև քո այցելության ժամանակը չճանաչեցիր» (19.43-44):

Ավելի ուշ մենք իմանում ենք, որ նրանք, ովքեր կխուսափեին քաղաքի կործանումից ու այրվելուց, գերի կքշվեին: Սա Ղուկասի բացահայտ տարբերակն է.

«Որովհետև մեծ նեղություն կլինի երկրի (տվյալ երկրի) վրա ու բարկություն այս ժողովրդի վրա: Նրանք սրի բերանով կընկնեն և գերի կտարվեն բոլոր ազգերի մեջ, իսկ Երուսաղեմը կտրորվի հեթանոսների ոտքի տակ, մինչև հեթանոսների ժամանակները լրանան» (Ղուկ. 21.33-34?-23-24):

Կործանումից հետո, սակայն, հարսանեկան խնջույքը շարունակվում է: Թագավորն ուղարկում է Իր ծառաներին ուրիշ հյուրեր բերելու: Պարզ է դառնում, որ Երուսաղեմի, Տաճարի և Հին Ուխտի զոհարբերությունների ընդհանուր համակարգի կործանումն ընդհանրապես չի խանգարի երկնքի Արքայության առաջընթացին: Եվ նկատեք, որ սա այն նույն խնջույքն է, ինչ նախկինում էր: Դա լինելու էր Գառան հարսանեկան ընթրիքը: Տարբերությունը հյուրերն էին, որոնք ընտրված կլինեին ծեր պոռնիկ Երուսաղեմից և նոր սուրբ հարսնացուն, որոնք «սուրբերի արդարություն» հանդիսացող բեհեզներ հագած կլինեին (Հայտ. 19.7-9, ովքեր ունեն արդարություն ըստ Հռոմ. 10.3-4):

Բայցևայնպես, նույնիսկ կործանումից հետո շարունակվող հարսանեկան խնջույքի մեջ կսողոսկեն մարդիկ, ովքեր այդ վայրին չեն պատկանում: Սակայն թագավորն արագ կհայտնաբերի

նրանց այն բանի հիման վրա, որ նրանք հարսանեկան բեհեզներ չունեն իրենց հագին: Լինեին դրանք հրեականացնողներ, նրանք ովքեր հավատացյալների փրկությունը ուզում էին հրեական ավանդույթներին ենթարկվելու նախապայման սարքել, ու որոնք այնքան այլակարծություններ և խնդիրներ առաջացրեցին Նոր Կտակարանի Եկեղեցում, թե՞ նրանց պետք է նայել որպես Եկեղեցու մեջ եղած հերետիկոսների ընդհարապես (որոնք բազմաթիվ էին լինելու: Սակայն նրանց վերջը սա է. «Կապեք նրա ձեռքերն ու ոտքերը և դրսի խավարը նետեք: Այնտեղ կլինի լաց ու ատամների կրճտոց»: (Մատթ. 22.13):

Հիսուսն այս առակը եզրափակում է գրեթե ճիշտ այնպես, ինչպես նախկին տարբերակը. «Որովհետև շատերն են կանչված, սակայն քչերն են ընտրված» (Մատթ. 22.14): Փաստորեն, ամբողջ Իսրայելն էր կանչված, սակայն միայն ընտրյալներն արդարություն հագած կմտնեին խնջույքի սրահը: «Մնացածը» կկործանվեին, կայրվեին, կամ գերի կտարվեին:

14. Ճշմարիտ ինքնիշխանություն (Ղուկաս 20.19-26)

Շատ մարդիկ, ովքեր հղում են անում «կայսրինը հանձնեք կայսրին» արտահայտությանը, հաշվի չեն առնում աստվածաշնչյան տվյալ պատմության համատեքստը՝ լինի աստվածաշնչյան համատեքստը, թե պատմական համատեքստը: Սա պատճառ է դառնում լուրջ թյուրըմբռնումների և շփոթության այն բանի վերաբերյալ, թե ինչպիսի դեր պետք է ունենա իրավական պետությունը քրիստոնյաների համար: Սա այն շփոթությունն է, որով Տաճարի առաջնորդները հույս ունեին ծուղակի մեջ գցելու Հիսուսին, որպեսզի Նրան բանտարկեին: Սակայն Նա մեկ անգամ ևս նրանց դավադրությունն իրենց դեմ շրջեց: Հենց նրանք էին, որ տառապելու էին իրական իշխանության՝ Աստծո իշխանության ձեռքում:

Համատեքստը

Վեճը (Ղուկ. 20.19-26, Մատթ. 22.15-22) տեղի է ունենում Երուսաղեմ կատարած հաղթական մուտքի ավելի ընդարձակ շրջանակում: Տեղ հասնելով և ամեն բան տեսնելով՝ Նա մտավ Տաճար և «սկսեց դուրս հանել նրանց, ովքեր վաճառում էին, և ասաց նրանց. «Գրված է. «Իմ տունն աղոթքի տուն պետք է լինի», բայց դուք այն ավազակների որջ դարձրիք» (Ղուկ. 19.45-46): Դրան անմիջապես հաջորդող փոխազդեցությունը, որ Նա ունեցավ սինոպտիկ Ավետարաններում այն էր, որ ավագ քահանաները և ծերերը (ամենայն հավանականությամբ փարիսեցիներ) հանդիպեցին Նրան Տաճար մտնելիս և ցանկացան տեսնել Նրա «բեյջը» (վավերության քարտը). «Ասա մեզ, ի՞նչ իշխանությունով ես դու անում այս բաները, և ո՞վ է քեզ տվել այդ իշխանությունը» (Ղուկ. 20.2):

Այսպիսով, կա մի Մարդ, ով Երուսաղեմ մտնելիս թույլ է տալիս որ Իրեն երկրպագեն: Նա քաղաք է մտնում էշին նստած, դրանով իսկ ցույց տալով Մեսիական մարգարեության կատարումը, ընդունում է «Դավթի Որդի» տիտղոսը, ուժով դուրս է վռնդում դրամափոխներին ու մնացածին, իսկ հետո բժշկում է մարդկանց այդ նույն Տաճարում: Հրեա առաջնորդները հետևում էին Նրան, և այս բաները Նա կատարում էր բավական ժամանակ. նրանք պատգամավորներ էին ուղարկել՝ հարցուփորձ անելու այս անսովոր մեսիական գործունեության մասին դեռևս Հովհաննես Մկրտչի ժամանակներում (Հովհ. 1.19,24), այնպես որ քահանաներն ու ծերերը շատ լավ գիտեին Հիսուսի և Նրա զորության մասին: Բայց և այնպես, հպարտությունից կուրացած, նրանք կանգնած էին Նրա առջև ու պահանջում էին, որ Նա Իր ունեցած իշխանության վերաբերյալ հաշիվ տար իրենց: Իհարկե, սա ենթադրում է, որ նրանք հավատում էին որ իրենք իրավունք ունեին նման հաշվետվություն պահանջելու: Նրանց պահանջի մեջ որոշակի օրինականություն կա, որովհետև նրանց էր պատկանում քահանայական իշխանությունն ու Մովսեսի աթոռը, որ ավելի ուշ Հիսուսն Ինքն էլ ընդունեց՝ նախքան նրանց կեղծավորությունը հանդիմանելը Մատթեոս 23-ում (տես Մատթ. 23.2-3): Սակայն նրանք չէին կարողանում ու չէին տեսնում, որ իրենց առաջ կանգնած էր Ճշմարիտ Քահանայապետն ու Իսրայելի Ճշմարիտ Հովիվը: Այդ պատճառով նրանք պայքարում էին (թեև ժամանակավոր) Ինքնիշխանության և Ղեկավարման համար (այսինքն, նրանք չէին ուզում Աստծո գերիշխանությանը ենթարկվել, այլ, ուզում էին ինքնիշխան լինել Աստծուց անկախ):

Այս ամբողջ պատմությունը, որի ընթացքում տեղի է ունենում այս դրվագը, խոսում է երկնքի իշխանության գերազանցության մասին՝ ընդդեմ երկրավոր իշխանության, և հրեաների անկարողության՝ դրանք իրարից տարբերելու: Հենց այս հարցն է Հիսուսն օգտագործում՝ պապանձեցնելու համար Տաճարի առաջնորդներին, երբ նրանք Իրեն հարցնում են Իր իշխանության վերաբերյալ: Նրա այս հարցը նրանց ստիպում է վերհիշել Իր մկրտությունը, Իր հաստատումը, որպես Նոր Տուն, և դրանով իսկ պատճառը, թե ինչու է Նա մաքրազատում այդ հին տունը.

> «Նա պատասխանեց նրանց. «Ես էլ ձեզ մի հարց տամ: Ասեք ինձ, Հովհաննեսի մկրտությունը երկնն-

> քի՞ց էր, թե՞ մարդկանցից»: Նրանք իրար հետ քննարկեցին՝ ասելով. «Եթե ասենք. «Երկնքից», նա կասի. «Ինչու՞ նրան չհավատացիք»: Իսկ եթե ասենք. «Մարդկանցից», ամբողջ ժողովուրդը մեզ կքարկոծեն, քանի որ համոզված են, որ Հովհաննեսը մարգարե էր» (20.3-6):

Այս մարդիկ պապանձվել էին: Նրանք բռնվել էին մի թակարդում, երբ կամ պետք է ուրանային ակնհայտորեն աստվածապաշտ ու հայտնի մի մարդու երկնային իշխանությունը, կամ էլ հաստատեին այնպիսի մեկի երկնային իշխանությունը (այսինքն, հեթանոս Կայսրի), որին նրանք հրապարակայնորեն հակառակվում էին: Երկու դեպքում էլ նրանք կկորցնեին իրենց հեղինակությունն ու ազդեցությունը: «Այսպիսով, նրանք պատասխանեցին, որ չգիտեն, թե որտեղից էր այն գալիս: Եվ Հիսուսը նրանց ասաց. «Ես էլ ձեզ չեմ ասի, թե ինչ իշխանությունով եմ ես անում այս բաները» (Ղուկ. 20.7-8): Քանի որ նրանք չէին կարողանում կողմնորոշվել Հովհաննեսի ծառայության երկնային լինելու հարցում, ուրեմն Իր համար անիմաստ կլիներ նրանց ներկայացնել Իր ունեցած իշխանությունը: Այդ երկու դեպքերն այնքան նման էին իրար, որ Հովհաննեսին մերժելով, նրանք արդեն մերժել էին Քրիստոսին (ճիշտ այնպես, ինչպես, Մովսեսին ճշմարտապես չհավատալով, մերժեցին Քրիստոսին. Հովհ. 5.45-47):

Հարցն այստեղ այն է, որ երկինքն ունի այնպիսի իշխանություն, որ մարդը չունի: Մարդու իշխանությունը խամրում է Աստծո իշխանության հետ համեմատելիս, որովհետև լավագույն դեպքում, այն կարող է ծագել Աստծո իշխանությունից: Այս խոսքի փոխանակումը չար վարձակալների առակի հետ միասին պապանձեցնում են այս առաջնորդներին, և նրանք սկսում եմ դավադրություն կազմել, թե ինչպես «կարող էին նրան որսալ իր ասածների մեջ» (Ղուկ. 20.20):

Տուրքի դավադրությունը (Ղուկ. 20.19-26)

Շատ զավեշտական (հակասական) է, որ երբ նրանք անում են առաջին կրակոցը, հարցնելով կայսերը հարկ տալու վերաբերյալ, իրենք իսկ հակադրության մեջ են դնում երկնային իշխանությունը

երկրավոր իշխանության հետ: Հետաքրքիր է՝ որտեղի՞ց էին նրանք այդ մոտեցումը սովորել: Նրանք կարծես իրար հետ խորհրդակցել էին , թե ինչպես կարող են մի հնարք գտնել և Նրան բանականության տեսակետից թակարդը գցել, և վերջապես որոշել էին. «Լսեք, եկեք Նրա դեմ օգտագործենք նույն հնարքը, որ Նա օգտագործեց մեր դեմ»:

Նրանց նպատակն առնվազն Նրան վարկաբեկելն էր: Մենք Մատթեոսի Ավետարանում (22.15-16) և Մարկոսի Ավետարանում (12.13) կարդում ենք, որ այս դավադրության հեղինակները փարիսեցիներն էին: Հասարակ ժողովրդի մեջ փարիսեցիները հեղինակավոր շարժում էին համարվում: Նրանք կրոնական և քաղաքական շարժման խառնուրդ էին ժողովրդի մեջ: Երբ ժողովուրդը սկսեց մասսայաբար հետևել Հիսուսին, իսկ Նա էլ հրապարակայնորեն պապանձեցրեց փարիսեցիներին, վտանգ առաջացավ, որ նրանք կկորցնեին իրենց լսարանը: Իրականում, աստվածաշնչյան ավելի ընդարձակ հատվածներ հաճախ ընդգծում են, որ նրանք նախանձում էին Հիսուսի ժողովրդականությանը, բայցևայնպես չէին կարողանում Նրան պատասխանել, ոչ էլ ձերբակալել՝ վախենալով ժողովրդից (Ղուկ. 20.19, 22.2, Մատթ. 21.26,46): Այսպիսով, նրանք դավադրություն էին կազմել մասամբ ելնելով նախանձից, քանի որ Նա նրանց հրապարակայնորեն պարտության էր մատնել, մասամբ էլ այն պատճառով, որ Նա ներխուժում էր նրանց սեփականության մեջ, գողանում էր նրանց լսարանը, նրանց հեղինակությունը, ամեն դեպքում նրանց այդպես էր թվում:

Նրանց գլխավոր նպատակը սակայն, որ ավելի նենգ էր, հստակ շարադրված է տեքստում. նրանք ցանկանում էին «նրան հանձնել կուսակալի իշխանությանն ու արդարադատությանը» (Ղուկ. 20.20): Այստեղ հստակ երևում են Իսրայելի կեղծավորությունն ու կռապաշտությունը. այս մարդիկ, որոնցից շատերը ոչ հրապարակայնորեն խստորեն քննադատել էին Հռոմի կողմից նվաճված լինելն ու նրան տուրք վճարելը, հիմա արդեն հարմար էին գտնում օգտագործել այդ համակարգը՝ Հիսուսից ձերբազատվելու համար (Հայաստանի ենթատեքստում, սա նման է այն իրավիճակին երբ սփյուռքից մի մարդ է գնում Հայաստան, լինի դա բարեգործական նպատակով կամ միսիոներական նպատակով կամ այլ բարի նպատակով, և տեղի ժողովուրդը նրան հասկացնել են տալիս որ նա միգուցե օտարերկրյա լրտես է, այն ժամանակ երբ Հայաստանը ռազմականորեն և տնտեսականորեն ներխուժված է Ռուսներով և

նուրբ ասած նրանց ստրկության տակ է ապրում, և այս նույն տեղացի ժողովուրդը երբեք այդ հսկայական խնդրի մասին չի խոսում: Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.): Այստեղ հրաշալի ձևով երևում է Մեծ Պոռնիկի (Երուսաղեմի) պատկերը, որ հեծած է գազանի (Հռոմի) վրա, որ քննադատվում է Հայտնության 17-18-ում: Փարիսեցիները դատապարտում էին, որ հեթանոսները նվաճել էին իրենց երկիրը, սակայն տարօրինակ կերպով օգտակար էին համարում հեթանոսական քաղաքականությունը: Այն, որ նրանք հերովդեսականներին էին ներգրավել, վիճակը դարձնում է ծիծաղելի, եթե չասենք ողբերգական: Ովքեր էլ որ նրանք իրականում լինեին, հստակ է, որ նվիրված էին Հերովդեսին, որ արքայական մի տոհմ էր, ով իր իշանությամբ պարտական էր հենց Հռոմին: Այս երկու կուսակցությունները միասնության մեջ կլինեին մինչև վերջ, և փաստորեն Հերովդեսն ու Պիղատոսը մի կողմ կդնեին հին անհամաձայնությունները և լավ ընկերներ կդառնային Հիսուսի դատավարության ընթացքում (Ղուկ. 23.12):

Իրավական հարց

Մի խումբ փարիսեցիներ, քահանաներ, դպիրներ և հերովդեսականներ վերջապես գործադրում են իրենց հնարքը. «Ուսուցիչ, մենք գիտենք, որ դու ճշգրտորեն ես խոսում ու ուսուցանում և աչառություն չես անում, այլ ճշմարտությամբ Աստծո ճանապարհն ես սովորեցնում: Օրինակա՞ն է մեզ համար Կայսրին տուրք տալը» (Ղուկ. 20.21-22):

Եկեք մի քանի բան նկատենք այստեղ. առաջին, նրանք հարցը կազմում են՝ Հիսուսին բնութագրելով որպես միայն Աստծուն հավատարիմ մեկը, ով մարդկանց մեջ կողմնապահություն չի անում. «աչառություն չես անում» (ESV) արտահայտությունը ou lambaneis prosopon, բառացի նշանակում է «մարդու երեսը չես ընդունում»: Մատթեոսն օգտագործում է «չես նայում մարդու երեսին» արտահայտությունը (Մատթ. 22.16): Ինչ էլ որ լինի, ես հավատում եմ, որ դա ուղղակի հղում է Ղևտացիների 19.15-ին. «Աղքատին խտրականություն մի արա, ոչ էլ հարուստին՝ աչառություն, այլ արդարությամբ պետք է դատես քո դրացուն»: «աչառություն անել» արտահայտությունը բառացի նշանակում է «բարձրացնել ինչ-որ մեկի դեմքը» և «պատվել ինչ-որ մեկի դեմքը» համապատասխանաբար Եբրայերեն ու Հունարեն Սեպտուագինտայում: Այս

հատվածը, ինչպես նաև Ղուկասի Ավետարանում, պետք է հասկանալ նույն կերպ. «Աղքատին խտրականություն մի արա, ոչ էլ հարուստին՝ աչառություն…»: Ամեն դեպքում, իհարկե համապատասխանություն կա փարիսեցիների արտահայտության և ղևտական օրենքի միջև: Նրանք Քրիստոսի վրա իրավական չափանիշներ էին դնում:

Մեկնաբանների մեծ մասը կարծում է, որ առաջնորդների մոտեցումը Հիսուսին պարզապես քծնանք է, կարծես թե Նա Գալիլեայից եկած մի գյուղացի մարդ էր, ով թույլ էր տալիս, որ մարդիկ Իրեն Աստված անվանեն, և կուլ կտար նրանց կեղծ գովասանքի խայծը: Սակայն այսպիսի մեկնաբանությունը ճիշտ չէ, քանի որ Նա արդեն մի անգամ պարտության էր մատնել նրանց: Նա ընդամենը մակերեսային փառասեր մեկը չէր, և նրանք մինչ այդ արդեն հասցրել էին այդ մասին իմանալ: Նրանք չէին փորձում քծնել Նրան, այլ փորձում էին Աստծո Խոսքով թակարդը գցել Նրան: Նրանք կարծես ասելիս լինեին. «Դու իրոք ծառայում ես միայն Աստծուն և Օրենքի համաձայն, ոչ մեկի առաջ չես խոնարհվում: Այսպիսով, ճի՞շտ է կայսրին տուրք տալը»: Եթե Աստծո ճանապարհին ասում է՝ չպատվել մարդկանց՝ կախված նրանց մեծ կամ փոքր լինելուց, ճի՞շտ է արդյոք տուրք տալով պատիվ տալ հզոր կայսերը, ով նույնպես մարդ է: Սա է այս փորձության էությունը:

Երկրորդ, նկատեք, որ նրանք իրավական հարց տվեցին. «Օրինակա՞ն է…» (Ղուկ. 20.22): Բառն ինքնին հստակ չէ, թե արդյոք նրանք նկատի ունեին հռոմեակա՞ն օրենքը, թե՞ Աստծո Օրենքը, բայց քանի որ տուրք վճարելն ըստ հռոմեական օրենքի էր, պարզ է դառնում, որ նրանք հասցեագրում էին «Աստծո ճանապարհին»: Հարցը, ինչպես նաև հունարեն բառը (այստեղ՝ exestin. «Օրինակա՞ն է», տես նաև exousia. «իշխանություն» բառը Ղուկաս 20.2-8-ում) հստակեցնում է, որ հարցը վերաբերում է հիմքային իշխանությանը: Արդյո՞ք կայսրն իրավական իշխանություն ուներ տուրք պահանջելու: Մենք Աստծուց իշխանություն ունե՞նք կայսերը տուրք վճարելու:

Երրորդ, հարցն այստեղ չի վերաբերում «տուրքերին» ընդհանրապես, ինչպես այնքան շատ թարգմանություններում է նշված, այլ կոնկրետ տուրքի, որ կոչվում էր kānsos, որը լատիներեն բառի հունարեն տարբերակն է, որ անգլերեն թարգմանվում է census (մարդահամար): Սա ոչ մի կապ չուներ առևտրական տուր-

քերի, պարտավորությունների, գործարարական կամ ճանապարհային հարկերի և այլնի հետ: Սա մասնավորապես կապ ուներ «մարդահարկի» կամ «գլխահարկի» հետ, որը հիմնված էր մարդահամարի վրա և պետք է վճարվեր բոլոր մարդկանց կողմից՝ ներառյալ կանանց ու ստրուկների: Եվ ,ըստ օրենքի, այն պետք է վճարվեր հռոմեական մետաղադրամով:

Մետաղադրամի ուղերձը

Հիսուսն անմիջապես արձագանքում է՝ նրանց կոչելով կեղծավորներ (Մատթ. 22.18), ակնհայտորեն, որվհետև նրանք դժվար թե անկեղծ լինեին իրենց հարցադրման մեջ: Ղուկասը (20.23) խոսում է նրանց panourgia-ի մասին, որ մոտավորպես նշանակում է պատրաստակամություն «ինչ որ բան անելու»: Հերովդեսականները հատկապես կեղծավորություն էին անում, որովհետև նրանք այն կուսակցությունն էին, որ օժանդակում էր Հերովդեսին, որ հայտնի էր որպես Հրեաստանի պատմության ամենադաժան հարկահավաքներից մեկը: Հերովդես Մեծն այնքան ծանր էր հարկում հրեա ժողովրդին, որ կայսրն անձամբ պահանջեց Հերովդեսից նվազեցնել հարկերը տարածաշրջանում: Հերովդեսը մերժեց, և դրա համար կայսրը հրամայեց, որ իր թագավորությունում մարդահամար անցկացվի: Այս մարդահամարն է, ամենայն հավանականությամբ, տեղ գտել Հիսուսի ծննդյան պատմության մեջ (Ղուկ. 2.1-7):

Հարցի մեջ եղած թակարդը հեշտ է նկատել. եթե Հիսուսն ասեր «Ոչ», Նա խնդիրներ կունենար հռոմեական իշխանությունների հետ՝ հարկեր չվճարելու և կայսեր դեմ դավաճանության մեղադրանքով (Հիսուսի այս թշնամիներն իհարկե հոգ կտանեին, որ նրանք իմանային այդ մասին): Եթե Հիսուսն ասեր «Այո», Նա հաստատ կկորցներ այն մարդկանց օժանդակությունը, ովքեր Նրան տեսնում էին որպես Մեսիա, ով պետք է նրանց ազատեր հռոմեական իշխանությունից, կամ գոնե որպես մարգարե: Երկու դեպքում էլ փարիսեցիներն ու հերովդեսականները կշահեին: Այսպիսով, նրանք հարց տվեցին և ենթադրելի է, որ նրանք մտածում էին. «Պատասխանելիս, խնդրեմ, խոսափողի մեջ խոսեք»: Նրանք կցանկանային, որ բոլորը լսեին:

Գլխահարկը կարող էր վճարվել միայն հռոմեական դրամով, և Հիսուսն ասաց, որ ցույց տան հենց այդ մետաղադրամը՝ «տուրքի մետաղադրամը», բառացի՝ «գլխահարկի մետաղադրամը» (Մատթ.

22.19): Եվ նրանք բերեցին այդպիսի մի մետաղադրամ. մի «դինար» (Ղուկ. 20.24):

«Ու՞մ նմանությունն (պատկերն) ու գիրն է դրա վրա»:

Նրանք հասկացան, որ խնդրի մեջ են ընկել: Հիսուսը հենց այնպես չէր օգտագործում «պատկեր» կամ «նմանություն» բառերը: Իրականում, «նմանություն» բառը հունարեն eikon բառն է (որից առաջանում է անգլերեն «icon» («պատկեր») բառը) որը ավետարաններում հայտնվում է միայն այս պատմությունը նկարագրելիս: Ինչու՞ այսքան սակավ: Որովհետև այն տեխնիկական եզրույթ (բառ) է. մի եզրույթ, որ շատ առանձնահատուկ տեղ ունի Հին Կտակարանի աստվածաբանության մեջ. «Դու քեզ համար փորագրված պատկեր չսարքես, կամ որևէ բանի նմանություն երկնքում, կամ ներքևում՝ երկրի վրա, կամ երկրի տակ՝ ջրերի մեջ եղած» (Ել. 20.4): Այնպես որ, նրանք իրոք հասկացան, որ խնդրի մեջ են:

Հիսուսը նաև հատուկ կերպով նշեց մետաղադրամի վրայի գրությունը: Սա, միգուցե, շատ ավելի ծանրակշիռ էր, քան պատկերը: Դինարը, որ ամենայն հավանականությամբ տվյալ ժամանակի կայսեր հատած մետաղադրամ էր, կրում էր նրա պատկերը միայն, իսկ գրվածքը հետևյալն էր. TIBERIUS CAESAR DIVI AGUSTI FILIUS AGUSTUS (Տիբերիուս Կայսր՝ Օգոստոս Աստծո Օգոստոս Որդին), իսկ մյուս կողմում շարունակվում էր. PONTIFEX MAXIMUS. «Քահանայապետ»: Դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ սուտ աստծո պատկեր: Եվ Հիսուսը ցանկացավ սա արձանագրել տալ:

Կռապաշտության տարադրամը

Հիշեք, որ այս հակառակությունը սկսվում է Ղուկաս 20.1-ից և տեղի է ունենում Տաճարում: Հատուկ արգելք կար կուռքեր ունենալ հատկապես Տաճարում: Չէ՞ որ Իսրայելն աքսորվեց հենց այդ օրինախախտումների համար: Ինչու՞ են ուրեմն Իսրայելի այս սուրբ մարդիկ՝ փարիսեցիներն ու հերովդեսականները, կուռքեր պահում հենց Տաճարում: Ինչու՞ նրանք այդքան պատրաստակամորեն ի վիճակի եղան ներկայացնելու դինարը, երբ փորձեցին Հիսուսին թակարդը գցել: Իրոք որ, նրանք կեղծավորներ էին:

Սա հարվածում է փարիսեցիներին այն հարցում, որ նրանք հպարտանում էին սեփական մաքրությամբ և ոչ աստվածաշնչյան արարքներից իրենց զատվածությամբ: Սա իրոք որ սուր հարված

էր նրանց հեղինակությանը. նայեք բոլորդ, «մաքուր», «սուրբ» փարիսեցիները օտար աստվածներ են կրում հենց իրենց Տաճարում: Իմիջիայլոց, դուք իրո՞ք ուզում էիք, որ ես խոսափողի մեջ խոսեմ:

Հիսուսն այստեղ կարող էր իսկական զավեշտ սարքել (նրանց հրապարակայնորեն ծաղրանքի առարկա դարձնել) հատկապես սադուկեցիների հաշվին, որոնք Տաճարի ավագ քահանաներն էին՝ ներառյալ Քահանայապետը: Ինչու՞ եք դուք Տաճարում կրում մի մետաղադրամ, որի վրայի գրվածքն ասում է, որ կայսրը «Քահանայապետ» է: Դու՛ պետք է լինես Աստծո քահանայապետը: Այդ երբվանի՞ց ես քո պաշտոնը հանձնել հեթանոս ղեկավարին: Այս հռետորական հարցերի պատասխանը հետևյալն է. որովհետև Մեծ Պոռնիկը (Երուսաղեմը, հրեաները) նստած էր Գազանի (Հռոմի) վրա:

Եվ սա հաստատ մի առանձին դեպք չէր. ամբողջ ժողովուրդն ամեն օր կրում էր այդ հռոմեական մետաղադրամները: Օրինակ՝ Տաճարն ինքը տարեկան գլխահարկի տուրք էր վերցնում, և բոլոր հրեաները վճարում էին դա, որ կես սիկղ էր կազմում: Սակայն նրանց արգելված էր այդ տուրքը վճարել հռոմեական մետաղադրամով: Դա էր պատճառը, թե ինչու Տաճարում գոյություն ունեին դրամափոխներ: Նրանք հատուկ արծաթյա մետաղադրամների մենիշխանություն (մոնոպոլիա) էին սահմանել, որոնցով միայն կարելի էր Տաճարի տուրքը վճարել: Եվ ինչպես մյուս մենաշնորհների հարցում, այստեղ էլ փոխանակման արժեքը բարձր էր: Նրանք գումար էին շորթում ժողովրդից՝ նրանց հարկադրելով գնել այդ հատուկ տեսակի արծաթադրամը: Սա էր պատճառներից մեկը, թե ինչու Հիսուսը նրանց ավազակներ անվանեց: Նրանք բառացիորեն թալանում էին մարդկանց: Եվ քանի որ նրանք ներգրավված էին այս պարտադիր փոխանակման մեջ, նրանք հարստանում էին հռոմեական մետաղադրամի հաշվին:

Կարելի է պատկերացնել, որ Տաճարի սրահներով մեկ նրանք դինարներով լեփ լեցուն սեղաններ ու պարկեր ունեին: Իրականում, այս դրամափոխներն այդ մետաղադրամներից մեկ հատ կախում էին իրենց ականջից՝ ի նշան իրենց մասնագիտության: (Նրանք ականջներ ունեին, բայց չէին կարողանում լսել (կուռքերի պատճառով)): Դուք կարող եք պատկերացնել, որ Տաճար այցելողները կամ ուխտավորները, Տաճար գալով, տեսնում էին, որ այդ կուռքերը հենց այնտեղ են՝ Տաճարում: Դուք կարող եք նաև պատկերացնել, որ երբ Հիսուսը շուռ տվեց աթոռներն ու սեղանները և դրա

վրայի մետաղադրամները, փողոցում լսվեց արծաթի ծնգոցն ու զրնգոցը, քանի որ մետաղադրամները թափվեցին քարահատակի վրա: ((Կայսեր) Բազմաթիվ գլուխներ գլորվում էին):

Հրեական ողջ քաղաքակրթությունը ենթարկվել էր հռոմեական կռապաշտական մետաղադրամների օգտագործմանը: Հռոմեական տարադրամը նրանց առևտրի հիմքն էր: Նրանք սա անում էին անկախ այն բանից, թե ինչ կռապատշտություն էր, ըստ նրանց, ներառում դա՝ օգուտ քաղելով կայսեր օրենքից, և դրանով իսկ օրինականացնելով դա:

Այսպիսով, միակ պատասխանը, որ Հիսուսի ընդիմախոսները կարող էին տալ սա էր. «Կայսրի»: Այս պատասխանը բխում էր ոչ միայն մետաղադրամի վրայի ակնհայտ փաստից, այլ նաև կապ ուներ կայսեր բացարձակ իշխանության հետ՝ հրեական ողջ մշակույթի, քաղաքական և տնտեսական կյանքի վրա: Մետաղադրամ հատելն իշխանության նշան էր: Իսկ այդ փողն ընդունելը, որպես ընդհանուր տարադրամ, ենթադրում էր այդ տարածքի մարդկանց հպատակությունն այդ իշխանությանը: (Սա չի վերաբերում օրինական տենդերի հարցին):

«Դա օրինակա՞ն է»: «Ինչու՞ եք հարցնում, դուք միևնույն է, ամեն օր անում եք դա»:

Հատուցման ժամանակը

Բայց հիմա, երբ Հիսուսը նրանց բերել էր լույսի ներքո, արձակեց Իր ճակատագրական կրակոցը. «Ուրեմն կայսրինը հանձնեք կայսրին, իսկ Աստծունը՝ Աստծուն»:

Հիսուսի պատասխանի մեջ կարևորը բայն է. «հանձնել»: Ընդդիմախոսները սխալ էին ձևակերպել իրենց հարցը. օրինակա՞ն է «տալ» կամ «վճարել»: Այստեղ բառը տարբեր է: Փարիսեցիների բառը գալիս է didomi՝ «տալ» բառից, իսկ Հիսուսը ոչ թե ասում է «տվեք», այլ apodidomi «հետ վերադարձնել» կամ «հետ վճարել»: Այս տերմինն օգտագործվում է վճարելու համար մի բան, որ դու պարտավոր ես ինչ որ մեկին, կամ որ պատկանում է մեկ ուրիշին: Սա մեզ հարկադրում էր ընդունել մի քանի բաներ, որոնք բոլորն էլ բարկացրեցին հրեաներին. 1) մետաղադրամի սեփականատերը կայսրն է, այնպես որ այն նրանն է, 2) կայսեր սեփականությունն օգտագործելը քո շահի համար ենթադրում էր, որ դու պարտք ես նրան, քանի որ օգտագործում ես այն, և 3) կայսերն այս գումարը վճարելու (տուրքն ինքնին) հարկադրանքը նշանակում էր, որ

հրեաներն ազատ չէին, ինչպես իրենց էին համարում, այլ դեռևս օտարի բռնատիրության տակ էին (որից հետևում էր, որ Աստծո դատաստանը դեռևս նրանց վրա էր):

Նրանք օգտվում էին այդ միջոցից, այնպես որ տնտեսական հիմքի վրա նրանք ոչ մի իրավունք չունեին մերժելու այդ միջոցը: Նրանք վայելում էին հռոմեական կայսրության կարգերը և կանոնները, այնպես որ, քաղաքական հիմքի վրա ոչ մի իրավունք չունեին դրանք մերժելու: Նրանք կայսեր փողը տանում էին ուղիղ իրենց Տաճար, չնայած աստվածաբանական հետևանքներին, այնպես որ նրանք ոչ մի իրավունք չունեին մերժելու աստվածաբանական հիմքի վրա (առնվազն, ոչ առանց ապաշխարության): Այսպիսով, փարիսեցիները կանգնած էին Հիսուսի և ժողովրդի առաջ՝ բռնված լինելով Նրա խոսքերով. «Կայսրինը հետ վերադարձրեք կայսրին»:

Ավելի մեծ պարտքը

Բայց նաև հետ վերադարձրեք «Աստծուն այն ամենը, ինչ Աստծուն է պատկանում»:

Շատ մեկնաբաններ այստեղ աչքաթող են անում, կամ անտեսում են, որ Հիսուսն այստեղ հստակ փաստարկ է բերում, որ ավելի փոքրից գնում է դեպի ավելի մեծը. եթե դա ճիշտ է ավելի փոքր դեպքի համար, օրինակ՝ կայսրի, որքան առավել դա ճիշտ է Արարչի համար: Եթե կայսրն իրավունք ունի հարկեր պահանջելու, ինչքան առավել Աստված ունի իշխանություն: Մեկնաբանների մեծ մասը, սակայն, ավելի շուտ մասնատում են տեսնում այդ երկուսի միջև, քան հիերարխիա (իշխանության հերթականություն, այսինքն, սկզբում Աստված, հետո պետությունը. Աստծո իշխանությունը վերջնականն է, պետությունը երկրորդական և ժամանակավոր): Պետությունն ունի իշխանություն այստեղ, իսկ Աստված իշխանություն ունի այնտեղ (մեր մտքերը, զգացմունքները և անձնական կյանքը): (Սա երկսայրաբանական, դուալիստական հեթանոսական մտածելակերպ է, երբ ժամանակակից ավետարանչականներից ոմանք, եթե ոչ բոլորը, ասում են որ պետությունն իշխանություն ունի այս բաների վրա, իսկ Աստված այն բաների վրա, կարծես թէ պետությունը գերիշխան է, Աստծո իշխանությունից անկախ: Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.):

Բայց հիմնական իմաստը սա չէ, առնվազն երկու կարևոր ու ակնբախ պատճառներով. պատկերը և գրվածքը: Սա հենց այն

բաներն են, որոնց վրա Հիսուսը նրանց ուշադրությունը հրավիրեց՝ կապված մետաղադրամի հետ: Դրանք երկուսն էլ բացահայտ աստվածաշնչյան հասկացություններ են:

Մենք արդեն նշել ենք պատկեր հասկացության մասին, որ այն առնչություն ունի քանդակված պատկերների վերաբերյալ պատվիրանի հետ: Ինչու՞ էր սա պատվիրան: Մարդը չպետք է որևէ կենդանի արարածի տեսքով քանդակված պատկերներ ստեղծի և, առավել ևս, չպետք է որևէ բանի հղում անի որպես աստվածության: Ինչու՞ ոչ: Քանի որ կենդանի արարածների արարչագործությունը բացառապես Աստծո մենաշնորհն է, և Իր պատկերը տեղադրելը բացառապես Իր մենաշնորհն է: Մարդը, ով «աստվածային» պատկեր է ստեղծում, միաժամանակ նվաստացնում է Աստծուն՝ ոչ համապատասխան կերպով ներկայացնելով Նրան, և փորձում է Աստծո դեր խաղալ՝ ինքն իրեն ներկայացնելով որպես Արարիչ ու պատկեր տվող Մեկը:

Ի հակադրություն սրան՝ Աստված Ինքն է տեղադրում Իր պատկերը: Նա այն դնում է մարդու վրա կամ, ավելի ճիշտ, Նա մարդուն ստեղծում է Իր պատկերով ու Իր նմանությամբ: Բոլոր մարդիկ ունեն այս պատկերն իրենց վրա:

Նույնը ճիշտ է նաև գրվածքի հետ կապված: Մենք կրում ենք Նրա Խոսքը մեր սրտերում, թեև մեղքի անկումը որոշ հետևանքներ ունեցավ դրա վրա: Պողոսն ասում է, որ սա ճիշտ է անգամ վերստին չծնված մարդու համար (Հռոմ. 2.14-15): Սա հատկապես ճիշտ էր փարիսեցիների համար. նրանք Աստծո Խոսքը բառացիորեն կրում էին իրենց գլխի ու ձեռքերի վրա: Սա երևում է Մատթ. 23.5-ում, երբ Հիսուսը քննադատում է նրանց, որ «լայնացնում են իրենց գրպանակները»: Գրպանակը փոքրիկ տուփ էր, որի մեջ դնում էին Աստծո Խոսքի փոքրիկ մագաղաթներ (որոնք բովանդակում էին Ել. 13.1-10, 2 Օր. 6.4-9, 11.13-21 հատվածները): Որոշ հրեաներ հետևյալ պատվերը բառացի էին ընդունել. «այս խոսքերը, որ ես պատվիրում եմ այսօր, պետք է քո սրտի վրա լինեն: Դու պետք է այն որպես նշան կապես քո գլխին, և պետք է ճակատանոց լինեն քո աչքերի մեջտեղում» (2 Օր. 6.6,8): Այնպես որ, նրանք Սուրբ Գրքի այս հատվածը բառացիորեն կրում էին փոքրիկ տուփի մեջ իրենց ճակատի վրա՝ իրենց աչքերի մեջտեղում, և իրենց դաստակի վրա՝ ձեռքի ժամացույցի նման (նույնիսկ մեր ժամանակներում, երբ մենք հեռուստացույցով երբեմն Երուսաղեմի վիդեոներ ենք նայում,

այսպես կոչված ուղղափառ կրոնական հրեաները երուսաղեմի արևմտյան պատի մոտ աղոթելիս, իրենց ճակատի մեջտեղներում այս տուփերն են կապած, որը նրանց ավելի շուտ ծայրահեղի, և ոչ թէ մի բարեպաշտ մարդու տպավորություն է տալիս): Փարիսեցիներն այս առումով հասնում էին ծայրահեղության, օգտագործելով մյուսներից ավելի մեծ տուփեր՝ ցույց տալու, թե որքան նախանձավոր են Աստծո Խոսքը հիշելու հարցում:

Սա ճիշտ էր և հատկապես համապատասխանում էր քահանաներին (սադուկեցիներին). քահանայապետը, ըստ Մովսեսի օրենքի, իր գլխանոցի վրա ոսկե թիթեղ էր կրում, որի վրա գրված էր. ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՋԸ (Ել. 28.36): Նա բառացիորեն կրում էր Աստծո մակագրությունը՝ որպես ամբողջ Իսրայել ժողովրդի ներկայացուցիչ:

Այսպիսով, բառացիորեն, արտաքինից, ու՞մ գրվածքն էր այս մարդկանց վրա: Պատկերի և գրվածքի աստվածաբանական եզրակացությունն ակնհայտ կլիներ բոլոր լսողների համար: Այս դասի ազդեցությունը պետք է որ փարիսեցիներին ծիծաղի առարկա դարձրած լիներ ժողովրդի մեջ: Միևնույն ժամանակ, այն պետք է որ արթնացնող ազդակ լիներ ցանկացած ունկնդրի համար:

Թեև մարդիկ ինչ-որ ձևով օրինականացված պարտավորություններ ունեին կայսեր հանդեպ, սակայն Յիսուսի տված դասն ընդհանրապես նկատի չուներ, որ պետական իշխանությունն ինչ-որ ձևով կտրված է կամ հեռացած է Աստծո իշխանությունից, կամ մենք պետք է սպասենք մինչև ժամանակների վերջը, մինչև պետությունն անցնի Աստծո իշխանության ու իրավասության տակ: Այստեղ դասը շատ ավելի խթանող ու շատ ավելի ընդգրկուն է:

Հիսուսի դասն ըստ էության այն է, որ բոլոր մարդիկ կրում են Աստըծո պատկերն ու գրվածքը: Մենք բոլորս Աստծո «մետաղադրամներն» ենք: Մենք բոլորս ամբողջությամբ պատկանում ենք Աստըծուն: Բոլոր մարդիկ պետք է հանձնեն Աստծուն այն, ինչ Աստծունն է: Բոլոր մարդիկ. Փարիսեցիները, սադուկեցիները, հերովդեսականները, Հերովդեսը, բազմությունները և նույնիսկ կայսրն ինքը: Կայսրն ունի ճիշտ նույնքան պարտավորություն «հանձնվելու Աստծուն»՝ խոնարհվելու և հնազանդվելու Աստծուն, որքան ցանկացած մեկը: Կայսրն ինքն աստվածային, օգոստոս (կայսերական տիտղոս) կամ քահանայապետ չէ, նա օրենքի ու նախախնամության աղբյուրը չէ, ոչ էլ միջնորդ՝ Աստծո և մարդկանց միջև: Նա էլ բոլոր մարդ-

կանց նման ենթակա է Ամենակարող Աստծո նախախնամությանը, Աստծո Օրենքին և Աստծո Քահանայապետին՝ Հիսուս Քրիստոսին: Նա ճիշտ նույնքան պարտականություն ունի հնազանդվելու: Իրականում, նա ավելի մեծ պարտականություն ունի հնազանդվելու, որովհետև նա, որպես բազմաթիվ մարդկանց ներկայացուցիչ, հրապարակային պաշտոնի կրող է:

Հանձնել Աստծուն: Հիսուսի բոլոր ունկնդիրները ոչ միայն կհասկանային ասվածի էությունը, այլև անմիջապես կհասկանային Աստծուն հանձնվելու գաղափարի աստվածաբանական բնույթը: Դա մշտապես երևում է հրեական պաշտամունքի սաղմոսների մեջ.

> «Կգովեմ քեզ մեծ բազմության մեջ և իմ ուխտերս կվճարեմ (կհանձնեմ, նույն հունարեն բառն է) նրանից վախեցողների առջև (Սաղ. 22.25):
>
> «Քո ուխտերն ինձ վրա են, ո՜վ Աստված: Ես գովասանքներ կվճարեմ քեզ» (Սաղ. 56.12):
>
> «Ես քո տուն կմտնեմ ողջակեզներով և իմ ուխտերը կվճարեմ (կհանձնեմ) քեզ: (Սաղ. 66.13):
>
> «Ուխտիր ու վճարիր (հանձնիր) Տիրոջը՝ քո Աստծուն» (Սաղ. 76.11):
>
> «Ես իմ ուխտերը կվճարեմ Տիրոջը նրա ժողովրդի ներկայությամբ» (Սաղ. 116.18):

Այն նույնիսկ երևում է ղևտական Օրենքի մեջ. երբ ղևտացիներն առանձնացվում էին Տաճարի ծառայության համար, նրանց Տիրոջ ներկայության մեջ ներկայացնում էին և «մատուցում» կամ «հանձնում» էին Աստծուն որպես զոհ (Ղևտ. 8.13): Նրանց ողջ էությունը հանձնվում էր Աստծուն:

Իշխանություն, Հավատարմություն և Ազատություն

Մարդն ազատ է, որովհետև Աստված է նրան այդպիսին ստեղծել: Սակայն նա այն աստիճանի ազատ չէ, որպեսզի կարողանա ամեն բան հանձնել Աստծուն, և հասարակությունները նույնպես այս մեղքի հարկադրած սահմանափակումների մեջ են գտնվում: Այդ

պատճառով, որտեղ մարդկային կառույցները սահմանափակում են Աստծո Օրենքը, դու պետք է որոշում ընդունես, թե այդ իրարամերժ իշխանություններից որին ես հավատարիմ լինելու: Մենք պետք է հնազանդվենք Աստծուն և ոչ թե մարդուն, և շատ կարևոր հարցերի մեջ, եթե անհրաժեշտ լինի, նույնիսկ մինչև ի մահ: Սակայն տարբեր հարցերում մենք կարող ենք մերժել և դեմ կանգնել բռնկալությանը այլ հարցերում, որպես Աստծո հանդեպ մեր հավատարմության արտահայտություն՝ մարդկային կառավարություններին ցույց տալով պատշաճ կերպը, ճիշտ ճանապարհը:

Այսպիսով, սխալ չէ, եթե մարդիկ կայսերը կոչ անեն Աստծո առաջ հաշվետու լինել: Եվ չպետք է անօրինական համարել այն, որ մարդիկ մերժում կամ ընդունում են որպես վճարման միջոց տարադրամի որևէ տեսակ՝ անկախ այն բանից, թե մարդկային ինչ պատկեր կամ գրվածք կա դրա վրա: Մենք պետք է դեմ կանգնենք բռնակալությանը, բայց ոչ երբեք բռնի հեղափոխության միջոցով, քանզի դա անելու համար կան բազմաթիվ ոչ բռնի կերպեր:

«Ի՞նչ իշխանությամբ ես Դու այս բաներն անում»: Աստծո ճըշմարիտ հավատացյալներից ո՞ր մեկն իրականում հարց կտար Նրա իշխանության վերաբերյալ:

> «Տիրոջն է երկիրը և այն ամենը, ինչ նրանում է, աշխարհը և դրա բնակիչները (Սաղ. 24.1):
>
> «Անտառի բոլոր գազաններն Իմն են, սարերի հազարավոր անասունները: Ես գիտեմ սարերի բոլոր թռչուններին, և դաշտում սողացող ամեն բան Իմն է: Եթե Ես սոված լինեի, քեզ չէի ասի, որովհետև Իմն է աշխարհն ու այն ամենը, ինչ նրանում է» (Սաղ. 50.9-12):

Իհարկե, պետք է կայսրինը հանձնել կայսրին: Սակայն հանձնի՛ր Աստծուն այն, ինչ Աստծունն է:

Հավելված Ա

Ժայռի Գմբեթը, Ժայռը և Տաճարը

Կարիք չկա, որ ապագա հրեական Տաճարը փոխարինի մուսուլմանական (մահմեդական) Ժայռի Վրայի Գմբեթին: Ինչու՞:

Դեհ, առաջինն այն պատճառով, որ այն շատ գեղեցիկ է և մի օր շատ գեղեցիկ Եկեղեցի կարող է դառնալ:

Իսկ երկրորդ, այն գաղափարը, որ հրեական Տաճարը մի օր պետք է կանգնեցվի մուսուլմանական (մահմեդական) Ժայռի Գմբեթի տեղը, զուտ սնահավատություն է: Այն հիմնված է հրեական ավանդույթների վրա, որոնք ավելի շուտ միախառնված են երևակայության, այլ ոչ թե Աստծո Խոսքի պատվերի հետ:

Հաշվի առնելով հրեական Տաճարի սարի վերաբերյալ ամբողջ խոսակցությունն ու Աստվածաշնչի ուսումնասիրությունը՝ ակնկալվում է, որ Աստվածաշունչը պետք է որ շատ բան ունենա ասելու տվյալ սարի մասին: Սակայն քրիստոնյաների մեծ մասը, հատկապես նրանք, ովքեր մեզ ուսուցանում են ապագայում վերակառուցվելիք Տաճարի մասին, իհարկե կզարմանան, թե որքան քիչ է Աստվածաշունչն իրականում ասում այդ վայրի մասին: Մեծամասնությունն այն ամենի, ինչ այսօր մեզ հավաստիացնում են, և որը ենթակա է աշխարհաքաղաքական լարվածության և աստվածաբանական վեճաբանությունների, մեծամասամբ հիմնված է ենթադրությունների վրա:

2 Մնացորդաց 3.1-ում մենք կարդում ենք, որ Սողոմոնը Տաճարը կառուցեց Մորիա լեռան վրա, և որ դա Ռոնայի կալի տարածքն էր, որ Դավիթը գնեց: Աշխարհագրական փաստարկներն այսօր Երկրորդ Տաճարի (Հերովդեսի տաճարի, որը կանգուն էր Հիսուսի երկրավոր կյանքի ժամանակ) վայրը նշում են այն տեղը, որտեղ հիմա կանգնած է ոսկեգմբեթ Մզկիթը: Սակայն զարմանալիորեն չկա ոչ մի հնէաբանական ապացույց, որ առաջին Տաճարը՝ Սո-

ղոմոնի Տաճարը, կանգնած է եղել այդ նույն վայրում, թեև չկա նաև փաստարկ՝ որևէ այլ վայրում դրա տեղակայման վերաբերյալ: Այսպիսով, մենք աստվածաշնչյան կամ պատմական որևէ ապացույց չունենք՝ աստվածաշնչյան կամ պատմական, որ ներկայիս Տաճարի սարը Ռռնայի կալի այն նույն վայրն է, սակայն սա պատմության հիմնական կետը չէ:

Նախքան առաջ գնալը, մենք պետք է հիշենք, որ կային մի շարք սարեր, որոնք կապ ունեին Երուսաղեմ քաղաքի հետ. Մորեա սարը, Սիոն սարը, Ձիթենյաց սարը և ուրիշ սարեր, որոնք աստվածաշնչյան քիչ կամ ոչ մի նշանակություն չեն ունեցել, որի մասին մենք կարողանայինք ձեզ պատմել: Սիոն սարը բարձրագույն գագաթն է և գտնվում է գրեթե կես մղոն (700-800մ) դեպի արևմուտք Տաճարի սարից, որ Մորիա սարն է: Այդ երկուսի մեջտեղում բավականին մեծ հովիտ կա: Տաճարի սարից ավելի արևելք, ավելի խորը հովտի դիմաց, բարձրանում է Ձիթենյաց սարը, որն ավելի բարձր է, քան Մորիա սարը: Այս գագաթից Հիսուսն Իր աշակերտների հետ միասին նայում էր դեպի արևմուտք՝ դեպի Տաճարը, երբ Հիսուսը հայտարարեց դրա գլխին կախված դատաստանի մասին (Մատթ. 24, Մարկ. 13, Ղուկ. 21): Ձիթենյաց սարից տեսարանը բացահայտում է Մզկիթը, որ ավելի արևմուտք է այն վայրից, որտեղ ժամանակին Տաճարն է եղել, և հստակ երևում է արևմտյան մասում գտնվող Սիոն սարի շատ ավելի բարձր գագաթը:

Աստվածաշնչյան տվյալներ

Սկսենք նրանից, թե Մորիա սարի վրա հատկապես որտեղ է կառուցված եղել Տաճարը:

Աստվածաշունչն ասում է, որ Տաճարի կառուցման համար Սողոմոնն ընտրեց Մորիա սարը «որտեղ Տերը երևացել էր նրա հորը՝ Դավթին, այն վայրում, որտեղ Դավիթն էր որոշել՝ Հեբուսացի Ռռնայի կալում» (2 Մն. 3.1): «Որոշել» բառն այստեղ ավելի շուտ ունի «նախապատրաստել» իմաստը, ինչպես նշված է Աստվածաշընչի KJV և NAS թարգմանություններում: Դավիթը ոչ միայն որոշել էր այդ վայրը, այլ նաև ակտիվ կերպով հաստատել, նախապատրաստել կամ առանձնացրել էր այն: Իսկ ինչու՞ էր Դավիթը այս վայրը հաստատել որպես Տաճարի հիմնական վայր: Նա Աստծուց դրա վերաբերյալ պատվեր ստացե՞լ էր:

Իրականում, ոչ: Դավթի և Ոռնայի պատմությունը պատմվում է 1 Մնացորդաց 21-րդ գլխում և դրանից առաջ: Աստված պատուհաս ուղարկեց Իսրայելի վրա, որպես պատիժ, որ Դավիթը հաշվել էր ժողովրդին (1 Մնացորդաց 21.1-14): Հրեշտակի միջոցով ուղարկված այդ պատուհասը 70.000 մարդու կյանք արժեցավ: Երբ հրեշտակը հասավ Երուսաղեմ, Աստված ժամանակավորապես դադարեցրեց հրեշտակի հարվածը, որպեսզի չկործանի քաղաքը, և հրեշտակը կանգնեց Ոռնայի կալի տարածքում:

Աստված ուղարկեց Գադ մարգարեին՝ ասելու Դավթին, որպեսզի գնա Ոռնայի կալը և այնտեղ զոհասեղան պատրաստի: Սա պետք է հասարակ զոհասեղան լիներ՝ անտաշ քարերով ու առանց աստիճանների, ըստ Աստծո Օրենքի (Ել. 20.14-16): Դավիթը հնազանդվեց: Վերջապես, զոհասեղանը պատրաստվեց, Դավիթը զոհեր մատուցեց ու աղոթեց Աստծուն, և Աստված պատասխանեց՝ կրակ ուղարկելով զոհասեղանի վրա: Այս ամենից հետո Աստված հրեշտակին հրամայեց սուրը դնել պատյան՝ դրանով իսկ ավարտելով Իսրայելի պատիժը:

Կարևոր է նկատել, թե ինչ պահանջվեց Դավթից և դրա նպատակը: Աստված Դավթից պահանջեց ընդամենը զոհասեղան կառուցել, և ոչ թե հատկապես զոհ մատուցել դրա վրա: Զոհասեղանի նպատակն էր պարզապես ճիշտ արձագանքել Աստծո ներկայությանը՝ Տիրոջ հրեշտակի միջոցով, և պատուհասի ժամանակավոր դադարին: Ոչ մի բան ցույց չի տալիս, որ Աստված նպատակ ուներ այդ վայրը դարձնել մշտական, և առավել ևս, չկար որևէ պահանջ, պատվիրան կամ կանոնակարգ՝ դա անելու համար:

Ոռնան, ըստ էության, պատրաստ էր այդ նպատակի համար թագավորին նվիրաբերելու այդ ողջ տարածքը: Սակայն Դավիթը պնդեց, որ վճարի դրա համար: Առք ու վաճառք տեղի ունեցավ, և այդ տարածքը սեփականության իրավունքով անցավ Դավթին: Քանի որ Աստված երբևէ նպատակ չէր դրել, որ այդ սեփականությունը պատկաներ Տիրոջը, Տաճարին կամ քահանայությանը, կարող ենք համարել, որ Դավթի մնացած ողջ կյանքի ընթացքում այդ տարածքն իրավական իմաստով պատկանեց թագավորին:

Հետևաբար, զուտ Դավթի որոշումն էր, ոչ թե Աստծո պատվերը, որ Տաճարը կառուցվեր Ոռնայի կալի տարածքում (2 Թագ. 24):

Դավիթն ինքը թույլտվություն չունեցավ Աստծո համար տուն կառուցելու: Աստված արգելեց նրան դա անել, որովհետև նա

պատերազմի ու արյունահեղության մարդ էր (1 Մն. 22.8): Դրա փոխարեն, Դավթի ապագա որդին էր կառուցելու այդ տունը և «նրա անունը պետք է լինի Սողոմոն» (1 Մն. 22.9): Նա հանգստության մարդ էր լինելու:

Մենք այստեղից կարող ենք հետևություն անել, որ Աստված այստեղ հղում է անում Դավթի անմիջական որդուն՝ Սողոմոնին: Բայց հիշեք, որ երբ Սողոմոնը ծնվեց, Դավիթն էր, որ նրա անունը Սողոմոն դրեց, իսկ Աստված Նաթան մարգարեին ուղարկելով, երեխային մեկ այլ՝ աստվածատուր անուն տվեց՝ Հեդիդիա (2 Թագ. 12.24-25): Աստված «Սողոմոնին» տեսնում էր ոչ թե որպես Սողոմոն, այլ՝ Հեդիդիա: Ավելին, Սողոմոնին ուղղված Դավթի խոսքերը ցույց են տալիս, որ այն որդին, ով պետք է Տաճարը կառուցեր ու խաղաղություն բերեր, դեռ նոր պետք է ծնվեր. «Ահա, մի որդի կծնվի քեզ համար, որ հանգստության մարդ կլինի» (1 Մն. 22.9): Ակնհայտ է, որ երբ Դավիթը խոսում էր, նրա որդի Սողոմոնն արդեն ծնված էր, ողջ էր և լսում էր իր հոր խոսքերը: Մենք ստիպված ենք եզրակացնել, որ վերջնական Սողոմոնը, որ «խաղաղաբեր ու կատարյալ» էր լինելու, ում մասին Աստված խոստացավ Դավթին, Հիսուսն էր: Այդ ընթացքում Սողոմոնը կլիներ դեռ գալիք Իրական Սողոմոնի նախատիպարը:

Երբ Սողոմոնն ավելի ուշ կառուցեց Տիրոջ տունը, նա հետևեց այն ամենին, ինչ իր հայրն արդեն հաստատել ու նախապատրաստել էր (2 Մն. 3.1): Սողոմոնն էլ, իր հոր նման, Աստծուց տրված ոչ մի ակնհայտ ցուցում կամ պատվեր չուներ, թե որտեղ կառուցեր Տաճարը, այլ միայն՝ կառուցելու և թե ինչպես կառուցելու: Ի հավելումն այդ վայրը որպես սեփականություն գնելուն ու այն նախապատրաստելուն՝ Դավիթը նաև նախապատրաստեց շինանյութեր, շինարարական միջոցներ, կազմակերպված աշխատուժ, կառավարության աջակցությունն ու օգնությունը կառուցման այն նախագծի համար, որ նա դրել էր իր որդու առաջ (1 Մն. 22.2-5, 14-19):

Ողջ նախագիծը, սկսած գաղափարից մինչև իրականացումը, Դավթի մտահղացումն էր: Բացառություն էին կազմում միայն Տաճարի պատկերը և գործիքները, որ Աստված էր տվել Դավթին (1 Մն. 28.11-19): Սակայն Տաճարի տեղի հետ կապված Աստված ոչ մի բան չէր հրամայել: Դա Դավթի որոշումն էր:

Դավիթը այս տեղը որոշել էր ոչ թե այն պատճառով, որ Աստծուց պատվեր ուներ կամ մարգարեից առաջնորդություն, այլ քանի որ

նա վախեցավ Աստծո հրեշտակից, որ կանգ էր առել Ոռնայի կալում: Թեև Աստված ընդունել էր Դավթի մատուցած զոհը, հրեշտակն իր սուրը դրել էր պատյան, պատուհասը դադարել էր, բայցևայնպես Դավիթը վախենում էր:

Մինչդեռ իրական քահանայությունը, խորանը և ուխտի տապանակը 15 մղոն հեռու էր՝ Գաբավոնում (1 Մն. 21.29, 16.37-43): Սակայն «Դավիթը չկարողացավ գնալ դրա առաջ Աստծուն խնդրելու, քանի որ վախեցավ Տիրոջ հրեշտակի սրից» (1 Մն. 21.30): Սակայն հենց հաջորդ համարում (22.1) մենք տեսնում ենք, որ Դավիթը Ոռնայի կալում հայտարարում է. «Այստեղ պետք է լինի Տեր Աստծո տունը և ողջակեզների զոհասեղանն Իսրայելի համար»:

Այսպիսով, Դավիթը ոչ միայն Աստծուց պատվեր չուներ, թե որտեղ կառուցել, այլ նա նույնիսկ չհարցրեց Աստծուն: Վախենալով հեռանալ իր գտնված վայրից՝ նա պարզապես միանձնյա կերպով հայտարարեց, որ դա Աստծո տան տեղն է:

Այսպիսով, Սողոմոնի Տաճարի կառուցման վայրը Դավթի որոպեական թուլության և սեփական հարմարավետության արդյունքն էր:

Սիո՞ն, թե՞ Մորիա

Շատերն են պնդում, որ Մորիա սարը նշանակալի էր Տաճարի համար, քանի որ այդ նույն վայրում էր Աբրահամը կապել Իսահակին՝ ողջակեզ անելու համար, և այդտեղ էր Աստված Աբրահամին տվել փոխարինող զոհը: Այսպիսով, Դավթի զոհասեղանը նույն վայրում էր, որտեղ Աբրահամի զոհասեղանն էր, և այդպիսով Տաճարը պատկանում է այդ վայրին: Սրա ապացույցը պետք է որ գտնվի Ծննդոց 22.2-ում, որտեղ Աստված Աբրահամին ասում է. «Վերցրու քո որդուն, քո միակ որդի Իսահակին, ում դու սիրում ես, և գնա Մորիայի երկիրը ու զոհաբերիր նրան այն սարերից մեկի վրա, որ ես քեզ կասեմ»: Սակայն նկատեք, որ այստեղ Աստված չի ասում «Մորիա սար», ինչպես նշված է 2 Մնացորդաց 3.1-ում: Այստեղ միայն գրված է «Մորիայի երկիր», որ ընդհանուր տարածք է: Հիշեք, որ այդ վայրում, համարենք՝ Երուսաղեմի տարածքում, մի քանի սարեր կան: Այս ընդհանուր տարածքում Աստված խոստանում է Աբրահամին ցույց տալ «սարերից մեկը», թե որի վրա զոհաբերեր: Ծննդոց 22-րդ գլխի մնացած պատմության մեջ մենք ոչ մի տեղ չենք հանդիպում, թե կոնկրետ որ սարն էր Աստված ընտրել: Ցանկացած մեկը, ով

պնդում է սա, փորձում է փաստարկ ստանալ լռությունից, որ զուտ ենթադրություն է՝ առանց սուրբ գրային երաշխիքի:

Սակայն այս լռության համար հիմնավոր պատճառ կա: Աստված չի ցանկանում, որ աշխարհագրական որևէ վայր կուռք դառնա Իր ժողովրդի համար: Նա ուզում է, որ մենք ազատ լինենք ամեն տեսակի կռապաշտությունից՝ ներառյալ չափազանց նվիրվածությունը ժամանակավոր ծեսերին ու արարողություններին, որ Աստված պատվիրել էր: Մյուս դեպքերում Աստված «թաքցնում» էր որոշ մանրամասնություններ՝ կռապաշտությունը կանխարգելելու համար: Նա թույլ չտվեց, որ իմացվեր Մովսեսի մարմնի գտնվելու վայրը նրա մահից հետո (2 Օր. 34.5-6): Նմանապես, Նա թույլ տվեց, որ ուխտի տապանակը կորչի (չնայած ժամանակակիցների պնդումներին), քանի որ հրեաները թույլ էին տվել, որ սոսկ դրա ներկայությունը, Տաճարի ծեսերի հետ միասին, դառնար կռապաշտության առարկա: Նույնիսկ Սողոմոնի Տաճարի կործանումից ու Երկրորդ Տաճարի վերակառուցումից հետո էլ տապանակը երբևէ չվերականգնվեց: Դրա համար Եբրայեցիների թղթի հեղինակը չի կարողանում խոսել դրա գոյության մասին (Եբր. 9.5): Նմանապես, Սուրբ Գրքում որևէ տեղ չի հստակեցվում Տաճարի սարի ենթադրյալ վայրը: «Մորիա» բառը երևում է միայն երկու տեղում (Ծնն. 22.2 և 2 Մն. 3.1), իսկ «Մորիայի սար»՝ միայն մեկ տեղում, և այս վերջինը Դավթի ընտրությունն էր, ոչ թե՝ Աստծո:

Սուրբ Գիրքը հստակ ասում է, թե որտեղ է Աստված որոշել հավիտյան բնակվել, և դա Երուսաղեմն է: Սաղմոս 132.13-14-ը բացահայտ ասում է. «Որովհետև Աստված Սիոնն է ընտրել, և ցանկացել է այն՝ որպես իր բնակավայր. «Սա է իմ հանգստյան վայրը հավիտյան, այստեղ ես կբնակվեմ, որովհետև սա ցանկացա»: Սակայն այս հատվածը չի պահանջում, որպեսզի հրեական Տաճար կառուցվի, առավել ևս՝ Մորիա սարի վրա: Եթե նույնիսկ մենք համարենք, որ պետք է բառացիորեն մեկնաբանենք այս հատվածը (իսկ մենք կտեսնենք, որ չպետք է այդպես անենք), և ընդունենք, որ «Աստծո բնակավայրը» բառացիորեն ենթադրում է ֆիզիկական Տաճար, ապա ավելի ճիշտ ցանկություն կլինի, որ այդ Տաճարը կառուցվի ավելի բարձր գագաթի՝ Սիոն սարի, ոչ թե Մորիա սարի վրա, քանի որ հաջորդ համարն ասում է «Տերն ընտրեց Սիոնը»: Շատ անգամներ, հատկապես սաղմոսներում, Սուրբ Գիրքն օգտագործում է «Սիոն» բառը՝ հղում անելով ողջ Երուսաղեմ քաղաքին:

Սակայն սա ավելի շուտ կընդարձակի հնարավոր տարածքը, քան կսահմանափակի այսպես կոչված Տաճարի սարով: Այս դեպքում, մենք պետք է ազատ լինենք՝ Տաճարը տեղակայելու Երուսաղեմի ցանկացած հատվածում:

Ես ի մի կբերեմ այն ամենը, ինչ մինչև հիմա ասել եմ. Սուրբ Գիրքը ոչ մի տեղ չի նշում այսպես կոչված Տաճարի սարը որպես հրեական Տաճարի պարտադիր վայր: Աստված դա երբեք չի ասել ու չի պահանջել և չի պահանջում ո՛չ հիմա, ո՛չ ապագայում ինչ-որ ժամանակ:

Վերակառուցված Տաճա՞ր

Սակայն այս օրշատքրիստոնյաներ, հինդիսպենսացիոնալիստական դպրոցի աստվածաբանությամբ տարուբերված, վստահ հավատում են, որ Տաճարի սարը՝ Մորիա սարը, հենց պետք է լինի այն վայրը, որտեղ պետք է տեղակայվի ապագա հրեական Տաճարը: Եվ իհարկե, խնդիրն այն է, որ այդ ընդարձակ ոսկեգմբեթ Ալ- Սախրա մզկիթը (ինչպես նաև երկրորդ մզկիթը՝ Ալ-Ակսան, որ գտնվում է Տաճարի սարի հարավային պատի մոտ) տեղակայված է այդ նույն վայրում: Վերակառուցվող Տաճարի կողմնակիցները, այսպիսով, փափագում են այն օրը, երբ այդ մզկիթը կտեղափոխվի: Օրինակ, մի դիսպենսացիոնալիստ կին, DVD-ի վրա ներկայացված Սպասել Արմագեդոնին պրեզենտացիայի (ֆիլմի) մեջ, այնքան է նվիրված այդ համակարգի գաղափարին, որ իր ճանապարհորդությունը դեպի Տաճարի սարը ուղեկցում է բացականչություններով. «Այդ մզկիթի համար տեղ չկա: Այն պետք է տեղափոխվի»: Այն նույն թողարկման մեջ ճանապարհորդության զբոսավար և դիսպենսացիոնալիստ գիտակ Հ. Վայնե Հաուզը վերականգնվող Տաճարի վերաբերյալ իր հավատալիքը ներկայացնում է Photoshop-ի միջոցով. նա ցուցադրում է ճանապարհորդական խմբի լուսանկարը Տաճարի սարի ֆոնի վրա, սակայն թվային ձևով կտրված հանված է Ժայռի Գմբեթը, որի տեղը մոնտաժված է հրեական Տաճարը: Ահա: Մորիա սարի վրա ապագա վերակառուցվելիք հրեական Տաճարի համար աղոթքների պատասխան՝ թվայնացված տեքստով:

Այս աղոթքները կազմված են երկու մասից. 1) որ ապագա Տաճարը պետք է կառուցվի և, 2) որ այն պետք է կառուցվի հենց այն վայրում, որտեղ հիմա Գմբեթն է տեղակայված (սա կռապաշտ հրեա-

պաշտ դիսպենսացիոնալիստների աղոթքն է):

Առաջին պնդման համար հաճախ հղում է արվում Հայտնություն 11.1-2-ին: Այստեղ Հովհաննեսին ասվում է, որ չափի Աստծո Տաճարը: Դիսպենսացիոնալիստները համարում են, որ սա պետք է որ հղում լինի այն Տաճարին, որ ապագայում պետք է կառուցվի: Պատճառներից մեկն այն է, որ նրանք հավատում են, որ Հայտնության գիրքը չի գրվել մինչև ՔՀ 90թ.-ը, երբ հրեական Տաճարն այլևս կանգուն չէր: Սակայն այս տեսակետը հիմնված է շատ անհաստատ հիմքի վրա, զարմանալի է, թե որքան շատ մարդիկ են պատրաստ դրա հիման վրա շահարկել միջազգային հոլոքոստը: Սակայն Քենեթ Ջենթրի (Kenneth Gentry) և այլոց աշխատությունները, որոնք Հայտնության գրքի գրման այլ ժամանակ են նշում, այս «ավելի ուշ» տեսակետը դարձնում են ծայրահեղ անհիմն: Նրա գիրքը՝ «Նախքան Երուսաղեմի անկումը», արդեն մի քանի տասնամյակ է, ինչ հաստատել է, որ շատ ավելի հավանական է, որ Հայտնությունը գրվել է նախքան ՔՀ 70թ.-ը: Դեյվիդ Չիլթոնի «Վրեժխնդրության օրեր» գիրքը ցույց է տալիս, թե ինչու է Հայտնության գրքի նման թվագրումն ավելի իմաստալից. այն հիմնականում վերաբերում է այդ ժամանակվա և վայրի տեղայնացված դեպքերին: Եվ «ավելի վաղ»՝ ՔՀ 66 կամ 68թթ.-ին այն թվագրելու դեպքում տրամաբանական է դառնում, որ Հովհաննեսին ասվում է «չափել Տաճարը», քանի որ Երուսաղեմի Տաճարն այդ ժամանակ դեռևս կանգուն էր:

Սակայն, նույնիսկ եթե ընդունենք, որ Հայտնություն 11-րդ գլուխը խոսում է ապագա Տաճարի մասին, այն բացարձակապես ոչինչ չի ասում, թե որտեղ հատկապես պետք է Տաճարը տեղակայվի: Լռություն: Ցանկացած մեկը, ով համարում է, որ այն պետք է լինի Մորիա սարի վրա՝ Ժայռի Գմբեթի փոխարեն, մեծ չափով ավելացնում է Սուրբ Գրքի վրա:

Ինչու՞ չսկսել վաղն ևեթ

Այսպիսով, մենք չունենք որևէ, կրկնում եմ, որևէ աստվածաշնչյան հիմնավորում, թե որտեղ պետք է Տաճարն իրականում լինի, կամ տեղակայվի: Պրետերիստների համար սա մեծ հարց չէ, որովհետև նրանք այսպես թե այնպես չեն էլ ակնկալում, որ Տաճարը վերակառուցվելու է: Սակայն սա պետք է որ ազատի սիոնիստներին ու դիսպենսացիոնալիստներին, որովհետև այս մարդիկ այլևս

կարիք չունեն անհանգստանալու Ժայռի Գմբեթի տեղափոխման համար: Քանի որ «Սիոն» կոչվող սարերի շղթան իրենց տրամադրության տակ է. նրանք կարող են թե՛ աստվածաշնչյան, թե՛ մարգարեական տեսակետից վաղն ևեթ սկսել կառուցել Տաճարը, կամ նույնիսկ՝ այսօր:

Սակայն եթե ժամանակակից հրեաներն այդքան շատ են փափագում հենց այդ սարը և պնդում են այդ հարցում, նրանք պետք է անեն այն, ինչ Դավիթն արեց. վճարեն դրա ազնիվ շուկայական գինը: Իսկ եթե մուսուլմանները (մահմեդականները) չցանկանան ոչ մի գնով այն վաճառել, ուրեմն «բալը թանկ է»: Գնացեք մեկ ուրիշ տեղ:

Իսրայելը վերահսկում է ամբողջ Սիոն սարը՝ բացառությամբ գմբեթավոր մզկիթի՝ այսպես կոչված «Տաճարի սարի»: Բայց Իսրայելը դրա կարիքը չունի, եթե խոսենք աստվածաշնչյան տեսակետից: Ես մի առաջարկ ունեմ ցանկացած սիոնիստ, ուղղափառ հրեա, դիսպենսացիոնալիստ և պրիմիլենիալիստ անձնավորության, ով հավատում է, որ Տաճարը պետք է վերակառուցվի. նրանք պետք է անմիջապես հիմնադրամ և շարժում սկսեն՝ Տաճարը կառուցելու Երուսաղեմի ցանկացած հատվածում, որտեղ Իսրայելը վերահսկողություն ունի: Սա կարագացնի վերջին օրերը և անձամբ Հիսուսի գալուստը:

Իհարկե, սա չանելը կնշանակի լուռ համաձայնություն, որ այս բոլոր կողմերն ավելի շատ հետաքրքրված են մուսուլմաններին (մահմեդականներին) հեռու վանելու և դյուրահավատ քրիստոնյաների դրամապանակները քամելու հարցում, քան թե իրենց կրոնի ծանրակշիռ հարցերն առաջ տանելու հարցում (մի՞թե մենք նախկինում արդեն չենք լսել այս թեման. Մատթ. 23.23, Ղուկ. 11.22): Այսպիսով, Տաճարի սարը գրավելու նրանց դրդապատճառը, երբ դրա կարիքն իրականում չունեն, ակնհայտ է, որ լոկ նախանձն է:

Այս դրդապատճառը կարող էր ծպտվել այն փաստարկի տակ, որ Գմբեթի տակ գտնվող ժայռն իրոք մեծ նշանակություն ունի. Աբրահամն էր դրա վրա ցանկացել զոհաբերել Իսահակին, կամ Դավիթն էր կանգնել դրա վրա և այլն, սակայն, ինչպես մենք արդեն տեսանք, այս փաստարկներից որևէ մեկը հիմք չունի: Այդ դիրքորոշման վրա պնդել, նշանակում է ինքդ քեզ ցույց տալ որպես մարդկային ավանդույթներ կամ հին հրեական սնահավատություններ պահող մեկը: Ձավեշտն այն է, որ այս պարագայում այդ քրիստոնյաները կամ հրեաներն ավելի լավ վիճակում չեն հայտնվում, քան մու-

սուլմանները(մահմեդականները), որոնք գրավել են այդ ժայռը՝ կառչելով այն սնահավատությունից, որ Մուհամեդը երկինք է գնացել հենց այդ վայրից:

Ինչու մի սնահավատությունը փոխարինել մեկ այլ սնահավատությամբ՝ հատկապես արյունահեղության ու պատերազմի գնով, որը ժամանակին Դավթին զրկեց Տաճարը կառուցելու արտոնությունից:

Եզրակացություն

Ոչ մի աստվածաշնչյան հիմք չկա, որ որևէ Տաճար երբևէ պետք է կառուցվի (կամ նույնիսկ կառուցվել է) Մորիա սարի վրա: Հակառակ դեպքում, դա պետք է լիներ Սիոն սարի վրա՝ վերցնելով Սիոն անունով կոնկրետ գագաթը, որը Մորիա սարից կես մղոն հեռավորության վրա է գտնվում, կամ էլ ցանկացած վայր Երուսաղեմ քաղաքում: Որևէ այլ կոնկրետ բան պնդելը կնշանակի Սուրբ Գրքի ուղղորդումները փոխել սնահավատության հետ:

Ես կարծում եմ, որ պետք է թողնել, որ Ժայռի Գմբեթը մնա իր տեղում: Իրականում, ասեմ ավելին, ոչ քրիստոնեական և ոչ էլ աստվածաշնչյան կլինի կոչ անել այն փոխարինել հրեական Տաճարով: Ընդհակառակը, իր ժամանակին Քրիստոսը, թագավորելով Իր գահի վրա, կտարածի Ավետարանը և կհնազանդեցնի Իր բոլոր թշնամիներին՝ նույնիսկ մուսուլման (մահմեդական) և հրեա թշնամիներին: Նա նրանց կբերի Իր Մարմնի՝ Եկեղեցու մեջ, որ Աստծո միակ Ճշմարիտ Տաճարն ու Բնակավայրն է: Նույնիսկ Սիոն սարն է «հոգևորացրած»՝ ներկայացվելով համբարձված Քրիստոսի անձի մեջ. «Բայց դուք մոտեցել եք Սիոն սարին և կենդանի Աստծո քաղաքին՝ երկնային Երուսաղեմին և բյուրավոր հրեշտակների տոնախմբությանը և երկնքում գրված անդրանիկների ժողովին և Աստծուն, որ բոլորի դատավորն է, և կատարյալ դարձած արդարների հոգիներին, և Հիսուսին, որ նոր ուխտի միջնորդն է (Եբր. 12.22-24): (Եբրայեցիների թղթի հեղինակն իրականում սխա՞լ էր տեքստը «հոգևորացնելու» հարցում):

Ի՞նչ է Սիոնը, եթե ոչ Սուրբ Հոգու ներբնակությունն ունեցող Աստծո ժողովուրդ: Ի՞նչ է Տաճարը, եթե ոչ Աստծո հենց այդ նույն ժողովուրդը: Փորձել այս ճշմարտությունը փոխել ինչ-որ բլրի վրա ֆիզիկական (նյութեղեն)աղյուսով արված ինչ-որ կառույցի հետ,

կնշանակի Աստծո Որդուն ոտքի տակ տրորել և Աստծո երեսին ապտակել:

Մի օր նույնիսկ մուսուլմանները(մահմեդականները) դարձի կգան ու կհասկանան այս ճշմարտությունը: Որոշ դիսպենսացիոնալիստներ նույնպես հնարավոր է՝ սա տեսնեն: Երբ այդ օրը գա, այդ գեղեցիկ ոսկեգմբեթ մզկիթը շատ հիանալի եկեղեցի կդառնա:

Մինչ այդ ես բոլորովին չէի ցանկանա այն աղտոտված տեսնել ցլերի ու այծերի անարժեք արյամբ և ապագա սադուկեցիների կռապաշտական բարբաջանքներով (Եբր. 9):

Հավելված Բ

Հակաքրիստոսի վերաբերյալ կեղծիքը

Դուք ձեզ շատ ավելի հանգիստ կզգաք, վստահ լինելով, որ մարգարեության ուսուցիչները (հովիվ, քարոզիչ, «մարգարե», գիտակ, հեռուստատեսային քարոզիչ և այլն) շատ քիչ պատկերացում ունեն, թե ինչի մասին են խոսում, երբ օգտագործում են «Հակաքրիստոսը» տերմինը: Դա պարզ վկայություն է այն մասին, որ ցանկացած այդպիսի անձնավորություն անվերապահորեն, առանց քննադատելու ու միտքը փակ կերպով տրվել է վերջին ժամանակների ասվածաբանության հատուկ համակարգին, այլ ոչ թե այդ հարցի զուտ աստվածաշնչյան գնահատականին:

Ինչու՞ այսպիսի խիստ եզրակացություն լոկ մի՝ «Հակաքրիստոսը» հասկացության համար: Որովհետև Սուրբ Գրքում ոչ մի նման գործող անձ չի երևում: Թույլ տվեք՝ բացատրեմ:

Պնդումը

Այստեղ է հենց բուն խնդիրը. անհամար քրիտոնյաների ուսուցումը կամ պարզապես խոսակցությունը մարգարեության վերաբերյալ սովորաբար ծավալվում են «Հակաքրիստոս» արտահայտության շուրջ: Այս անվան ներքո նրանք նկատի ունեն սատանայական մի ղեկավարի, ով վերջին ժամանակներում վեր կկենա և կտիրի աշխարհը, կսպանի քրիստոնյաներին ու հրեաներին, կստրկացնի բոլորին՝ համաշխարհային տնտեսական համակարգում մի «նշանի» միջոցով, որ ներառում է 666 թիվը: Կարծում եմ՝ այսպես է Ամերիկայի մարգարեության հեղինակավոր ուսուցիչների մեծ մասը պատկերացնում «Հակաքրիստոսին»: Նրանցից մեկն այսպես է արտահայտվել.

«Աստվածաշնչյան մարգարեությունները հստակ

> կանխատեսում են Հակաքրիստոսի վերելքը վերջին ժամանակներում, և Աստվածաշնչի 100-ից ավելի համարներ նկարագրում են Հակաքրիստոսի ծագումը, ազգությունը, բնավորությունը, առաջընթացը և համաշխարհային նվաճումը: «Հակաքրիստոս» եզրույթը կարելի է օգտագործել թե՛ կոնկրետ անձնավորության, և թե՛ նրա ներկայացրած համակարգի համար»:

Նկատեք, որ հեղինակներ Լա Հայեն և Հինդսոնը օգտագործում են «Հակաքրիստոս» արտահայտությունը, որպեսզի խոսեն վերջին ժամանակների ենթադրյալ մի ղեկավարի մասին, որ դեռ նոր պետք է հայտնվի:

Նմանապես, դիսպենսացիոնալիզմին աջակցող մի ճանաչված կայք թողարկել էր մի հոդված, որ վերնագրված էր՝ «Ո՞վ է Հակաքրիստոսը»: Դրա հեղինակ Բրիթ Գիլլեթն ուսուցանում է. «Հակաքրիստոսը շատ իրական անձնավորություն է: Վերջին յոթ տարիների ժամանակահատվածում, նախքան Հիսուս Քրիստոսի Փառավոր Հայտնությունը, Հակաքրիստոսը կհասնի աննախադեպ համաշխարհային իշխանության»:

Աստվածաշնչյան ուսանողը, սակայն, այսպիսի պնդումները միայն պետք է ընդունի շատ կարևոր մի հարց տալով. «Ի՞նչ է ասում Աստվածաշունչը Հակաքրիստոսի մասին»: Հետաքրքրված հավատացյալը պետք է հետ կանգնի գերբնական զորությամբ լցված վերջին ժամանակների բռնակալի վերաբերյալ ամպագոռգոռ պնդումներից և հարցն ուղղի Սուրբ Գրքի հիմունքային տեքստերին: Եկեք նայենք այդ տեքստերը:

Հակաքրիստոսն Աստվածաշնչում

Ինչպես ես արդեն պնդեցի, Սուրբ Գրքում «Հակաքրիստոսը» գործող անձ նույնիսկ չի էլ երևում, ամեն դեպքում ոչ այնպես, ինչպես համընդհանուր կերպով պնդումներ են արվում «նրա» մասին: Իրականում, հենց «Հակաքրիստոսը» արտահայտությունը դժվար է Սուրբ Գրքում գտնել: Սա կարող է որոշ քրիստոնյաների համար շոկային լինել, մանավանդ, եթե նրանք տարիներ շարունակ սովորել են, որ Աստվածաշունչը կանխասում է այսպիսի առաջնորդի

հայտնվելը, հատկապես Լա Հայեի նման գրողների, որոնք պնդում են, որ 100-ից ավելի հատվածներ ուսուցանում են նրա մասին: Սակայն, ահա ապացույցը.

«Հակաքրիստոս» բառը ուղղակիորեն գալիս է հունարեն antichristos բառից: Այն Սուրբ Գրքում հայտնվում է ընդամենը հինգ անգամ (դրա քերականական տարբեր ձևերով): Առաջին անգամ այն երևում է 1 Հովհաննես 2.18-ում: Այս բառի այս ընդհանուր գործածությունը նույնիսկ չի էլ ներառում «ը» որոշիչ հոդը»:

Տեքստը բառացիորեն ասում է. «Որդյակներ, վերջին ժամանակն է: Եվ ինչպես դուք լսեցիք, որ հակաքրիստոս է գալիս, և հիմա շատ հակաքրիստոսներ են եկել (կամ «տեղի ունեցել»), դրա համար մենք գիտենք, որ վերջին ժամանակն է» (1 Հովհ. 2.18): Ժամանակակից թարգմանություններում, այս համարի միգուցե լավագույն երկու տարբերակները գտնվում են NAS-ում և ESV -ում: ESV տարբերակն ասում է. «Որդյակներ, վերջին ժամանակն է, և ինչպես դուք լսել եք, որ հակաքրիստոս է գալիս, այնպես որ հիմա շատ հակաքրիստոսներ են եկել: Այսպիսով, մենք գիտենք, որ վերջին ժամանակն է» (1 Հովհ. 2.18): Սակայն սրանցից էլ ավելի ես գերադասում եմ իմ սեփական թարգմանությունը:

Գոնե երեք բան բացարձակապես ու անառարկելիորեն պարզ է այս տեքստից.

1) Հակաքրիստոսը մեկ անձնավորություն չէ: Այսինքն, «հակաքրիստոս» բառը նկարագրում է խումբ կամ մարդկային տեսակ, այլ ոչ թե կոնկրետ մեկ անձնավորության: Հովհաննեսը ոչ մի մտադրություն չունի նկարագրելու աշխարհի մի ղեկավարի, ով գալու է և իրականացնելու է «Հակաքրիստոսի» մարգարեական դերը: Դրա փոխարեն, Հովհաննեսը հայտարարում է «շատ հակաքրիստոսների» գալու մասին: Հովհաննեսը շարունակում է ներկայացնել իր հասկացողությունը հաջորդ համարում՝ խոսելով «շատ հակաքրիստոսների» մասին. «Նրանք (հոգնակի) մեզանից դուրս եկան, բայց նրանք (հոգնակի) մեզանից չէին… որպեսզի նրանք (հոգնակի) երևան, որ նրանք (հոգնակի) մեզանից չէին» (1 հովհ. 2.19):

2) Այս հակաքրիստոսները եկան ու գնացին Հովհաննեսի գրելու ժամանակ: Մենք չենք սպասում նրանց հայտնվելուն մեր մոտակա ապագայում: «Իսկ հիմա», «Նույնիսկ հիմա», կամ «Այնպես որ հիմա» այս շատ հակաքրիստոսները «եկել են» ասում է Հովհան-

նեսը: Նրանց հայտնվելը բացահայտ կատարված փաստ է:

3) Հովհաննեսը, Սուրբ Հոգով լցված, գրելով Սուրբ Գիրքը, այս հակաքրիստոսների հայտնվելը մեկնաբանում է որպես ապացույց, որ ինքն ու իր լսարանն ապրում էին «վերջին ժամանակում» կամ «վերջին օրերում»: Եթե իհարկե «վերջին ժամանակը» չի ձգվում մոտ 2.000 տարի (մարդկային պատմության մի մեծ հատված՝ վերջացող ժամանակի համար), ապա մենք ապահով կերպով կարող ենք ասել, որ «վերջին ժամանակը» ինչ-որ ձևով վերաբերում էր Հովհաննեսի ժամանակաշրջանին, ոչ թե մեր: Սա կստիպի շատ ավելի խորը մտածել վերջին օրերի վարդապետության շուրջ, ամեն դեպքում, որոշ մարդկանց (Նրանք ովքեր կասեն որ 2000 տարին աստծո համար մեկ օր է, մեջբերելով 2 Պետրոս 3.8-ը որտեղ ասվում է որ Աստծո համար մեկ օրը հազար տարի է իսկ հազար տարին մեկ օր, այս մարդիկ թերանումեն նկատել, որ այս համարը խոսում է Աստծո մասին, և ոչ մեր, մարդկանց մասին: Այս համարը ցույց է տալիս Աստծո տրանսսենդենսիան, այսինքն, որ Աստված դուրս է ժամանակից և տարածությունից, իսկ մենք, մարդիկ, ապրում ենք ժամանակի մեջ. Մեզ համար մեկ օրը միշտ մնալու է մեկ օր իսկ հազար տարին միշտ մնալու է հազար տարի: Եթե ինչ որ մի մարդ հայտարարի որ իր համար մեկ օրը հազար տարի և և հազար տարին մի օր է, այդ մարդը փափուկ ասած սխալվում է: Գլխ. խմբ.՝ Ա. Խ.):

Սա առաջին, կարելի է նաև ասել, հիմնական հատվածն է, որ խոսում է հակաքրիստոսի հայտնվելու մասին: Այս բառը մեկ երկու անգամ էլ է երևում Հովհաննեսի թղթերում, որ մենք շուտով կնայենք: Սակայն մի բան հստակ է. «հակաքրիստոս» բառը, լինի հունարեն, թե անգլերեն տարբերակներում, Հայտնության գրքում ընդհանրապես չկա: Հովհաննեսի առաջին և երկրորդ թղթերում հայտնվող հինգ դեպքերից բացի այս բառը Սուրբ Գրքում այլևս ոչ մի տեղ չի երևում:

Մենք արդեն նայեցինք առաջին երկու դեպքերը 1 Հովհաննես 2.18-ում: Նույն խոսքի մեջ, Հովհաննեսն իր ընթերցողներին ասում է, թե ինչպես տարբերել տվյալ անձնավորությունը հակաքրիստոսի՞ց է, թե՞ ոչ: Նա ասում է. «Ո՞վ է ստախոսը, եթե ոչ նա, ով ուրանում է, որ Հիսուսը Քրիստոսն է: Նա է հակաքրիստոսը, ով ուրանում է Հորն ու Որդուն» (1 Հովհ. 2.22, թարգմանությունն իմն է): Մինչդեռ այս հատվածը չի օգտագործում «ը» որոշիչ հոդը (թե՛ հունարենում, թե՛ ժամանակակից անգլերեն թարգմանությունն-

րում), հստակ է, որ քանի որ Հովհաննեսը 18-րդ համարում արդեն ձևակերպել էր «հակաքրիստոս» բառը որպես ընդհանուր խումբ, հիմա տալիս է չափանիշ, որով նրա լսարանը կարող էր կողմնորոշվել նրանց մեջ եղած հերձվածողության կոնկրետ (որոշակի) դեպքերում: Այսպիսով, նա համապատասխանաբար անհատականացնում է խոսակցությունը:

Նա օգտագործում է տիպիկ «մակբայ» տեսակի լեզու՝ ստեղծելու մի ստուգարքային կերպ՝ կոմնորոշվելու նրանց միջև, ովքեր «ասում են ճշմարտությունը» և «ստում են», որևէ կոնկրետ դեպքում. «Նա, ով ուրանում է, որ Հիսուսը Քրիստոսն է, նա է հակաքրիստոսը»: Սակայն հստակ է, որ նախորդ համարներում նրա կողմից արդեն նշված դասակարգումները պետք է որոշվեն այս մեկի համատեքստում: Այս պատճառով, Հակոբոս Թագավորի աստվածաշնչի տարբերակի թարգմանիչներն այնքան հեռուն են գնացել, որ բացառել են «ը» որոշիչ հոդը երկրորդ հատվածի մեջ. «Նա է հակաքրիստոս, ով ուրանում է Հորն ու Որդուն». թեև այն կար հունարեն տեքստում (որ պետք է նայել որպես KJV-ի վրիպակ):

Նույն սկզբունքն է գործում նաև 1 Հովհաննես 4.3-ում: Այստեղ Հովհաննեսը շարունակում է բացատրել դատաստանի չափանիշը. «Եվ յուրաքանչյուր հոգի, որ Հիսուսին չի դավանում (բառացի՝ «ասում նույնը»), Աստծուց չէ, այլ հակաքրիստոսից է, որ դուք լսեցիք, որ գալիս է և հիմա արդեն աշխարհում է» (Մաք Դուրմոն):

«Այլ հակաքրիստոսից է» արտահայտությունը նկարագրում է այն հոգին, որ ուրանում է Հիսուսին: Այլ կերպ ասած, դա նշանակում է՝ «այս ուրացող հոգին հակաքրիստոսի հոգին է»: Սա է պատճառը, թե ինչու բազմաթիվ թարգմանություններ չեն կարողանում չավելացնել «հոգի» բառը երկրորդ նախադասության մեջ, չնայած այն բանին, որ տեքստում այն չկա (տես KJV, NAS, NIV, NJB, NRS, ESV): Այստեղ նորից հայտնվում է «ը» որոշիչ հոդը, սակայն պարզորոշ կերպով վերաբերում է չափանիշին, թե ինչպես տարբերել հերետիկոսության կոնկրետ, անհատական դեպքերը: Սա եկեղեցական մի գործնական հարց էր, որ հիմնված էր Հովհաննեսի կողմից «հակաքրիստոսի» վերաբերյալ ավելի վաղ արված ընդհանուր ուսուցման վրա. տարբերել հերձվածող վարդապետներին: Նա գրում է. «Ստուգեք հոգիները,- ասում է Հովհաննեսը 4-րդ գլխում,- քանի որ շատ սուտ մարգարեներ (ինչպես 2.18-ում՝ «շատ հակաքրիստոսներ») դուրս եկան աշխարհի

մեջ» (4.1):

Վերջին դեպքը 2 Հովհաննես 7-ում է: Այն ավելի ամրացնում ու հաստատում է այն, ինչ մենք մինչև հիմա ասել ենք: Հովհաննեսը գրեթե բառացի կրկնում է իր նախորդ ուսուցումը, զգուշացնելով, որ «Շատ մոլորեցնողներ, ովքեր Հիսուս Քրիստոսին մարմնով եկած չեն դավանում, դուրս եկան աշխարհի մեջ: Սա է մոլորեցնողն ու հակաքրիստոսը»:

Նորից հայտնվում է որոշիչ հոդը, սակայն հստակ է, որ այս արտահայտությունը կիրառվում է որպես ընդհանուր նկարագրություն մարդկային որոշակի խմբի՝ ներառյալ «շատ մոլորեցնողների»: Առավելագույնը, այն կարող էր մատնանշել այն միակ գերբնական ուժը, որ գտնվում էր այդ բազմաթիվ մոլորեցնողների, բազմաթիվ սուտ մարգարեների և բազմաթիվ հակաքրիստոսների հետևում: Սակայն նույնիսկ այս դեպքում, այն չի կարող վերաբերել մի անհատ անձնավորության, որ պետք է գա ապագայում: Այն պարզապես կարող է նշանակել, որ ինչպես փարիսեցիները, որոնք, օրինակ, սատանայի՝ «ստության հոր» որդիներ էին (Հովի. 8.44), այնպես էլ այս հակաքրիստոսները որդիներն են այդ հոգևոր հակաքրիստոսի՝ սատանայի: Սա հնարավոր մեկնաբանություն է, բայց ոչ պարտադիր:

Այսպիսով, «հակաքրիստոսի» վերաբերյալ աստվածաշնչյան ուսուցումը հիմնվում է Աստծո Խոսքի չորս համարներում հանդիպող սակավաթիվ 5 դեպքերի վրա: Այդ համարները մեզ ամենաշատը սովորեցնում են հետևյալը. բազմաթիվ հակաքրիստոսներ են եղել, որոնք հայտնվել են Հովհաննեսի ժամանակ, և նրանց հայտնվելը հաստատել է այն փաստը, որ Հովհաննեսի սերունդն ապրում էր «վերջին օրերում» կամ «վերջին ժամանակում»:

Հակաքրիստոսի վերաբերյալ ցանկացած այլ մեկնաբանություն, որ շեղվում է այս հիմունքային աստվածաշնչյան ուսուցումներից, հավատացյալին Աստծո խոսքից ավելացնելու կամ պակասեցնելու վտանգի տակ է դնում: Ավելին, որևէ խոսակցություն «Հակաքրիստոսը» կոչվող միակ և ապագա անձի մասին հատկապես անթույլատրելի է. Սուրբ Գիրքը պարզապես թույլ չի տալիս այդ եզրույթը այդ ձևով օգտագործել:

Սակայն դա բազմաթիվ մարդկանց չի կանգնեցնում:

Ստահոդ «Խճանկարային Հակաքրիստոսը»

Հակաքրիստոսի վերաբերյալ աստվածաշնչյան սակավաթիվ (սակայն շատ հստակ) տվյալները չեն կանգնեցնում անթիվ քրիստոնյաների՝ այդ եզրույթն օգտագործելուց աստվածաշնչյան տարբեր անձանց վերաբերյալ, այն դեպքում, երբ դա նրանց հետ ոչ մի կապ չունի: Սա քրիստոնեական վարդապետության և աշխարհայացքի ասպարեզում բազմաթիվ շփոթությունների և արգելքների աղբյուր է դառնում:

Օրինակ, Լա Հայեն և Հինդսոնը պնդում են. «Աստվածաշունչը մի քանի տարբեր անուններ է օգտագործում այն անձնավորության համար, որին մենք սովորաբար անվանում ենք Հակաքրիստոսը»: Վերը նշված հոդվածում, Գիլեթն այդ ենթադրյալ անունների մի երկար ցուցակ է ներկայացնում.

> Սատանայի սերմը - Ծննդոց 3.15 (NLT), Փոքրիկ եղջյուրը - Դանիել 7.8 (NLT), Կատաղի թագավորը՝ խարդավանքների վարպետ - Դանիել 8.23 (NLT), Եկող իշխանը - Դանիել 9.26 (NLT), Պղծողը - Դանիել 9.27 (NLT), Թագավորը, որ իր կամքի համեմատ է վարվում - Դանիել 11.36 (NLT), Ասորեստանի թագավորը - Եսայիա10:.12 (NLT), Անարժեք հովիվը – Զաքարիա 11.17 (NLT), Կործանում բերողը – 2 Թեսաղոնիկեցիներին 2.3 (NLT), Անօրենության մարդը – 2 Թեսաղոնիկեցիներին 2.8 (NLT), Հակաքրիստոսը – 1 Հովհաննես 2.18 (NLT), Գազանը - Հայտնություն 13.11 (NLT):

Նկատեք Գիլեթի հղումը 1 Հովահննես 2.18-ին. «Հակաքրիստոս»: Ինչպես մենք արդեն տեսանք, կոնկրետ այս համարում «ը» չկա: Այսինքն, այստեղ այս անվանումը հարմարեցվել է նախապես ընկալված աստվածաբանական գաղափարին (այսինքն, մարդիկ Աստծո խոսքը փոխում և հարմարեցնում են իրենց անձնական վարդապետությանը):

Իհարկե, եթե նման գաղափար է հարմարեցվում, ուրեմն այս ուսուցիչները կարդում են իրենց երևակայական, հորինված գործող անձի մասին Սուրբ Գրքում և նրա ստվերն են գտնում ցանկացած հղման մեջ, որ վերաբերում է որևէ չար տիրակալի կամ սուտ մարգարեի: Սա այն է, ինչ աստվածաբան Բ. Բ. Վարֆիլդն անվանում է «խճանկար պատկեր», որ հավաքված է՝ իրար հետ կապելով

Պողոսի ասած «Մեղքի մարդուն», «Հակաքրիստոսին», Հայտնության մեջ գտնվող Գազանին և այլ կերպարներ:

«Հակաքրիստոսը», լինելով վարդապետական այս տիպի կառուցման արդյունք, առասպել է. այն մի մեծ, համարձակ, աստվածաշընչյան շփոթ է՝ միախառնված երևակայության ու սնահավատության հետ: Նա գոյություն չունի Սուրբ Գրքում: Նա կոնկրետ ուսուցիչների երևակայական կառույց է, որոնք կախված են վերջին ժամանակների տեսարանների վերաբերյալ կոնկրետ համակարգից:

Որպեսզի կարողանան խուսափել Սուրբ Գրքի հստակ իմաստից, այս պարոնները ստիպված են եղել ավելացնել Աստծո Խոսքի վրա: Նույնիսկ ընդունելով հանդերձ, թե որքան նեղ է Սուրբ Գիրքը սահմանում այդ եզրույթը, Լա Հայեն ու Հինդսոնը անմիջապես էլ հեռանում են դրանից: Սկզբում նրանք գրում են. «Հետաքրքիր է, որ Հակաքրիստոս (հունարեն antichristos) եզրույթը հայտնվում է միայն 1 Հովհաննես 2.18-22, 4.3 և 2 Հովհաննես 7-ում»: Նրանք նույնիսկ տեսնում են, որ դա չի վերաբերում կոնկրետ մեկ անձնավորության. «Հովհաննես առաքյալն այն օգտագործում է թե՛ եզակի («հակաքրիստոսը»), թե՛ հոգնակի ձևով («շատ հակաքրիստոսներ»)»: Սակայն նրանք հրաժարվում են մեկնաբանել «եզակի» օգտագործումն իրենց աստվածաբանական կառուցվածքից դուրս: Հետևաբար, նրանք իրենց հորինած Չարագործի մասին կարդում են Հովհաննեսի խոսքերում. «Հովհաննեսը ցույց է տալիս, որ իր ընթերցողներն արդեն լսել էին, որ Հակաքրիստոսը գալու է ապագայում»:

Հովհաննեսը ոչ մի նման բան չի ասում: Ինչպես մենք արդեն տեսանք, հենց այս համարում (1 Հովհ. 2.18) Հովհաննեսը մասնավորապես բացառում է «ը» հոդը: Լա Հայեն ու Հինդսոնը, սակայն, շեղագիր են դարձնում «ը» մասնիկը, որպեսզի իրենց տեսակետն ազդեցիկ դարձնեն:

Բայց սա հնարք է: Սա տպագիր շեշտադրում է՝ թաքցնելու աստվածաբանական այն շեշտը, որ նրանք ավելացրել են Հովհաննեսի խոսքերին: Սա վատ հնարք է և ավելի շուտ մերկացնում է նրանց նախատրամադրվածությունը:

Ավելին, Հովհաննեսը չի ասում, որ հակաքրիստոսը «գալու է ապագայում», նա պարզապես հիշեցնում է իր ունկնդիրներին, որ «հակաքրիստոս է գալիս»: Այստեղ բայը դրված է ներկա ժամանակով, ոչ վաղակատար, ոչ էլ ապառնի: Այնուհետև Հովհաննեսն

օգտագործում է լրացուցիչ փաստ, որ «շատ հակաքրիստոսներ» արդեն եկել են, որպես ապացույց, որ այս մարգարեությունն իրականացել է, և որ նրանք հիմա գիտեն (կոնկրետ գիտելիք), որ իրենք վերջին ժամանակում են: Հակաքրիստոսի հայտնվելը, ինչպես շատ հակաքրիստոսների, վերջին ժամանակի վերաբերյալ Հիսուսի մարգարեության իրականացումն էր (Մատթ. 24.4-5, 23-28): Դա ոչ մի կապ չունի կոնկրետ մեկ չար տիրակալ անձնավորության կամ հեռավոր ապագայի հետ:

Սակայն իրենց հորինած Խճանկար Հակաքրիստոսի գաղափարը պահպանելու համար Լա Հայեն և Հինդսոնը պետք է ինչ-որ ձևով հեռացնեն Հովհաննեսի «շատ հակաքրիստոսների» մասին հստակ կիրառումն աստվածաշնչյան ուսուցման հիմնական ուշադրությունից: Նրանք ընդունում են, որ Հովհաննեսն ասում է սա, սակայն ավելացնում են Աստծո Խոսքի վրա, երբ ասում են. «Նա նկարագրում է այս ավելի փոքր հակաքրիստոսներին որպես ստախոսներ, որոնք ուրանում են, որ Հիսուսը Քրիստոսն է» (2.22): Դուք տեսնու՞մ եք ավելացումը: Դա «ավելի փոքր» ածականն է: Որպեսզի պահպանեն իրենց հավատալիքը, որ «Հակաքրիստոսը» դեռ գալու է ապագայում, նրանք ստիպված են լինում նվազեցնել Հովհաննեսի իրական ուսուցումը. այս «շատ հակաքրիստոսները» պարզապես «հակաքրիստոսներ» չէին, ինչպես Հովհաննեսն է ասում, այլ «ավելի փոքր հակաքրիստոսներ» էին: Բայցևայնպես, «ավելի փոքր» արտահայտությունն այստեղ ավելացում է Աստծո Խոսքին (Ունկնդիրներին ծանոթացնենք որ Թիմ Լա Հայեն և Հինդսոնը հակաքրիստոս թեմայով գրված գրքերի հեղինակներ են: Իրենց գրքերը նաև վերածվել են կինոնկարների: Այս անձինք տասնյակ միլիոնավոր դոլարներ են դիզել այս գրքերի և կինոնկարների առք ու վաճառքից: Նրանք գերազանց բիզնեսմեններ են եղել, օգտագործելով մարդկանց կրոնական զգացմունքները և չամաչելով բացարձակ ստոր կերպով սխալակամ հավատքը մարդկանց վրա վաճառելով: Եթե Աստծո Խոսքը ուսումնասիրելու մեջ նրանց համար հարկավոր է եղել այստեղ այնտեղ <<փոքր ինչ>> հարմար փոփոխություններ անել, նրանք դրանում չեն վարանել ու ոչ էլ Աստծուց են վախեցել: Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.):

Այս ավելացումը խեղաթյուրում է Սուրբ Գրքի ուսուցումը հակաքրիստոսի մասին: Այն ենթադրում է, որ կա «ավելի մեծ հակաքրիստոս», և սպասվում է, որ նա դեռ պիտի գա: Բավականին վստահ

կերպով Թիմ Լահայեն իր «Աստվածաշնչի մարգարեական ուսումնասիրություն» գրքում ասում է, որ այս ավելի փոքր հակաքրիստոսները «նախատիպարն են այն վերջնական Հակաքրիստոսի, որ ապագայում դեռ նոր գալու է»: Սա կրկին ավելացնում է տեքստին: Աստվածաշունչը երբեք չի խոսում «վերջնական Հակաքրիստոսի» մասին, այլ միայն հակաքրիստոսի, և այն էլ միայն շատ կոնկրետ և սահմանափակ ձևով:

Այսպիսով, եթե դուք չհամակցեք Սուրբ Գրքի բոլոր չար տիրակալներին, չհորինեք երևակայական մարգարեություն այդ խճանկարի հիման վրա, իսկ հետո էլ այս Ֆրանկենշթայն (հրեշ) արարածին չանվանեք «Հակաքրիստոսը», ապա ոչ մի «վերջնական» հակաքրիստոս երբևէ մուտք չի գործի աստվածաբանական ուսուցման մեջ: Միակ բանը, որ հեռակա կերպով կարող է նման լինել Հովհաննեսի ասած «շատ հակաքրիստոսներ» անհատներին կարող է լինել հակաքրիստոսի հոգին, որի մասին մենք արդեն քննարկել ենք: Բայց նույնիսկ այս դեպքում այն ընդամենը կնկարագրի ինչ-որ մի գործուն ուժ, որ գտնվում է շատ անհատների հետևում, այլ ոչ թե կոնկրետ առանձին անձնավորության՝ պատմության մեջ:

Աստվածաշնչյան տվյալները շատ պարզ են ու հստակ: Այսպիսով, հետաքրքիր է տեսնել Գիլեթի նման ուսուցիչների, որոնք չեղարկում են Սուրբ Գրքի հստակ տեսակետը՝ հանուն իրենց աստվածաբանական երևակայության:

Այն դեպքում, երբ որոշ մարդիկ պնդում են, որ Աստվածաշունչը «Հակաքրիստոս» ասելով երբեք հղում չի անում որևէ անհատի, այլ ավելի շուտ «Հակաքրիստոսի հոգու» գոյությանը, այս տխրահռչակ մարդու ամբողջական պատկերն ի հայտ է գալիս Սուրբ Գրքի մանրակրկիտ ընթերցանության միջոցով:

Դրանից հետո նա թվարկում է Աստվածաշնչում գտնվող չար կերպարների ցուցակը, որը մենք մեջբերեցինք վերևում:

Իսկ որ ավելի վատ է, ես բացարձակապես ապշեցուցիչ եմ գտնում, որ իր 2,400-բառանոց հոդվածում, որ համարձակորեն վերնագրված է «Ո՞վ է Հակաքրիստոսը», ոչ մի քննարկում չկա այն մի քանի հատվածների վերաբերյալ, որտեղ այդ բառն իրականում երևում է: Նա ընդամենը մի հպանցիկ հղում է անում 1 հովհաննես 2.18-ին, և այն էլ ընդամենը «Հակաքրիստոսը» բառը պարունակելու համար, որը, ինչպես մենք արդեն տեսանք, հունարենում գոյություն չունի: Ակնկալվում էր, որ այս թեմայի վերաբերյալ հոդ-

վածը մի որոշ տեղ կհատկացներ Սուրբ Գրքում գտնվող այս հինգ դեպքերի մեկնաբանության համար, որտեղ կա այս բառը: Այնտեղ նույնիսկ մեկ բառ չկա դրանցից որևէ մեկի վերաբերյալ:

Դրա փոխարեն Գիլեթն ուսումնասիրում է Սուրբ Գրքի մնացած հատվածը՝ հավաքագրելու բոլոր այն չար կերպարներին, որ նա կարող էր գտնել մարգարեությունների մեջ, իսկ հետո ասում է, որ այս բոլոր մարդիկ «Հակաքրիստոսն» են: Սակայն խնդիրը հենց այստեղ է. փոխարենը թույլ տալու, որ Սուրբ Գիրքն ինքը սահմանի «հակաքրիստոս» եզրույթը, իսկ հետո Սուրբ Գրքի մնացած հատվածը մեկնաբանելու դրա համատեքստում, Գիլեթի նման ուսուցիչները սկզբում ստեղծում են աստվածաբանական համատեքստ, իսկ հետո ստիպում են, որ ողջ Սուրբ Գիրքը տեղավորվի իրենց ստեղծած սահմանման մեջ:

Կատաղի թագավորի օրինակը

Շատ դեպքերում Սուրբ Գրքի տարբեր հատվածների հանդեպ նրանց վերաբերմունքը պարզապես ողորմելի է (իսկ երբեմն էլ ուղղակի հիմնված է վատ թարգմանված հատվածների վրա): Օրինակ, Գիլեթը մեջբերում է Դանիել 8.24-25-ը որպես ապացույց, որ «Հակաքրիստոսը», «Կատաղի թագավոր» անվան տակ, ըմբոստության «վերջին արարի» ժամանակ, հարձակվելու է Աստծո սուրբ ժողովրդի և նույնիսկ անձամբ Քրիստոսի վրա: Նա գործածում է New Living Translation տարբերակը.

> «Նա կկործանի հզոր առաջնորդների և կոչնչացնի սուրբ ժողովրդին: Նա խաբեության վարպետ կլինի, պարտության կմատնի շատերին՝ անակնկալի բերելով նրանց: Առանց զգուշացնելու նա կկործանի նրանց: Նա նույնիսկ իշխանների Իշխանի հետ պատերազմի կբռնվի, սակայն կկոտրվի, թեև՝ ոչ մարդկային զորությամբ» (Դանիել 8.24-25):

Լա Հայեն նույն սարսափազդու տեսարանն է պատկերացնում. «Այս հատվածը վերաբերում է Հակաքրիստոսի իշխանության գալուն»:

Սակայն, ինչպես Սուրբ Գրքի մնացած մասը (բացի 1 և 2 Հովհաննեսի թղթերը), Դանիելը ոչ մի տեղ չի օգտագործում «հակաքրիս-

տոս» եզրույթը, և աստվածաշնչյան ոչ մի ստիպողական պատճառ չկա, թե ինչու պետք է Դանիել 8.23-ի «կատաղի թագավորին» խցկել երևակայական խճանկար հակաքրիստոսի պատկերի մեջ: Փաստորեն, չկա ոչ մի անհրաժեշտ պատճառ՝ այս կանխասված չար իշխանին հավասարեցնելու որևէ այլ աստվածաշնչյան մարգարեության հետ, առավել ևս՝ երևակայական մեկի, կամ ինչ-որ մեկի՝ մեր մոտ ապագայում:

Մենք, ամեն դեպքում, տեսնում ենք Դանիել 8.24-25-ի իրականացումն աստվածաշնչյան (և պատմական) ձևով Հերովդեսի վերաբերյալ: Ջեյմս Ջորդանը հստակ տեսակետ է հայտնում, որ այս մարգարեությունը մատնանշում է Հերովդեսի աստվածհայհոյիչ ընտանիքը, որ երևում է Ավետարանների և Գործքի տարբեր դրվագներում:

Գիլեթը, սակայն, իր նախատրամադրվածությունն է մտցնում տեքստի մեջ: 24-րդ համարը կատաղի թագավորի վերաբերյալ ասում է. «Նա կհզորանա, բայց ոչ իր սեփական զորությամբ»: Գիլեթը սա կիրառում է «Հակաքրիստոսի» վերաբերյալ. «Ավելին, Հակաքրիստոսը կլինի աննախադեպ զորության տեր մի մարդ, ոչ թե իր կարողությամբ, որովհետև նրա թիկունքին կանգնած է լինելու սատանան»: Նորից Լա Հայեն նույն պնդումն է անում, միայն թե ավելի ուժգին. «Փաստը, որ Հակաքրիստոսը իշխում է «ոչ իր սեփական» զորությամբ, ցույց է տալիս, որ նա լինելու է սատանայի մարմնացում և ունենալու է իրեն տրված սատանայական գերբնական իմաստություն և զորություններ» (Հայտ. 13):

Սակայն այդ համարը չի վերաբերում ոչ մեր ապագային, ոչ էլ սատանայի անունն է նշում: Այդ համարը չի ասում, որ այս կատաղի թագավորի հզորությունը գալիս է որևէ գերբնական աղբյուրից: Այն պարզապես ասում է, որ նրա հզորությունը լինելու է ոչ անձամբ իրենը: Այս մարգարեությունն ուղղակիորեն իր իրականացումն է գտնում Հերովդես Մեծի կերպարում. 1) Նրա իշխանությունն անձամբ իրենից չէր գալիս, այլ գալիս էր Հռոմից, որն աջակցում էր նրան, 2) նա իր ժամանակին կործանում և ոչնչացնում է սուրբ ժողովրդին, և նրանց հանդեպ նրա դաժանությունը քաջ հայտնի էր, 3) հստակ է, որ նա պայքարի մեջ մտավ իշխանների Իշխանի հետ՝ փորձելով սպանել Նրան որպես նորածին մանուկ (Մատթ. 2.16-18): Հիսուսի ծնողները, Նրան վերցնելով, փախան Եգիպտոս «և մնացին այնտեղ մինչև Հերովդեսի մահը» (Մատթ. 2.15):

Հերովդեսի մահը երեք անգամ հիշատակված է Մատթեոսի 2-րդ գլխում (հհ. 15, 19, 22): Պատմությունը մեզ ասում է, որ նա մահացավ ոչ թե մարդու ձեռքով, այլ հիվանդության պատճառով: Նմանատիպ պատմություններ են նշվում նաև Հերովդեսի ողջ ընտանիքի համար՝ ըստ Նոր Կտակարանի ժամանակահատվածի: Մենք Մատթեոսի 2.22-ում կարդում ենք, որ Հերովդես Մեծի որդին՝ Հերովդես Արքեղայոսը թագավորեց իր հոր փոխարեն: Նա մահացավ աքսորում: Հերովդես Անտիպասը, ով սպանեց Հովհաննես Մկրտչին (շարունակելով ոչնչացնել Աստծո ժողովրդին) նույնպես աքսորվեց Հռոմի կողմից և մահացավ աքսորում:

Հերվդես Մեծի թոռը՝ Հերովդես Ագրիապպաս I-ը երևում է Գործք 12-րդ գլխում: Նա շարունակում է Աստծո ժողովրդի հալածանքը և հստակ նշվում է նրա՝ «առանց մարդու ձեռքի» մահվան մասին: 12.1-ում նա սպանում է քրիստոնյաներին, սպանում է Հիսուսի (Հովհաննեսի-?) եղբայր Հակոբոսին և ձերբակալում է Պետրոսին (որպեսզի նրան էլ սպանի).

> «Այդ ժամանակ Հերովդես թագավորը բռնի կերպով իր ձեռքերը դրեց նրանց վրա, ովքեր պատկանում էին եկեղեցուն: Նա սրով սպանեց Հակոբոսին՝ Հովհաննեսի եղբորը, և երբ տեսավ, որ հրեաներին հաճելի է, առաջ գնաց՝ ձերբակալելով նաև Պետրոսին» (Գործք. 12.1-3):

(Նկատեք, մինչև այս պահը «հրեաները» միացել էին Կատաղի թագավորին՝ Աստծո ճշմարիտ սուրբ ժողովրդին՝ հավատացյալներին ոչնչացնելու հարցում: Իրոք որ «խաբեությունը հաջողվում է նրա ձեռքում» (Դան. 8.25):

Մենք Հերովդես Ագրիպպասի մահվան մասին կարդում ենք հենց նույն գլխի վերջում.

> «Մի որոշված օր, Հերովդեսն իր արքայական հագուստները հագած և գահի վրա նստած, ճառում էր նրանց: Իսկ մարդիկ աղաղակում էին. «Դա Աստծո ձայն է, ոչ թե մարդու»: Տիրոջ հրեշտակն անմիջապես հարվածեց նրան, որովհետև նա փառքն Աստծուն չտվեց, և, որդերի կեր դառնալով, շունչը փչեց» (Գործք. 12.20.23):

Ճիշտ ինչպես Դանիելն է ասում. «Նա իր մտքում իրեն մեծ պիտի կարծի» (8.25): Ագրիպպաս I-ը մտածում էր, որ ինքն այնքան մեծ մեկն է, որ կարող է Աստծո պես փառք ընդունել: Եվ ճիշտ ինչպես Դանիելն է մարգարեանում, որ նա «կկոտրվի, թեև ոչ մարդկային զորությամբ», այդպես էլ նա հարված ստացավ Տիրոջ հրեշտակից:

Նրանք, ովքեր արդեն համոզված (լցված) են «Հակաքրիստոսի» վերաբերյալ մտքերով, գայթակղություն կունենան եզրակացնելու, որ այս Կատաղի թագավորի պարտության համար գերմարդկային զորություն է պահանջվում, և սա իմաստալից է նրանց համար, քանի որ կարծում են, որ նա սատանայական զորությամբ օժտված անձ է: Սակայն տեքստն այդպիսի անհրաժեշտություն չի ներկայացնում:

Առաջին հերթին սա թարգմանության խնդիր է: Գիլեթի օգտագործած NLT տարբերակը Դանիել 8.25-ն ավարտում է, ասելով, որ այդ թագավորը կկոտրվի, «թեև ոչ մարդկային զորությամբ»: «Մարդկային» կամ «զորություն» բառերը եբրայերեն բնագրում չկան: Այդ դժվարին հատվածն ընդամենը բացատվում է երեք բառերով, որոնք մոտավորապես բառացիորեն նշանակում են «առանց» «ձեռք» «նա կկոտրվի»: Հակոբոս թագավորի (King James) տարբերակը կարծես ավելի մոտ է. «նա կկոտրվի առանց մարդկային ձեռքի»: Շատ թարգմանություններ ավելացնում են «մարդկային» բառը, սակայն սա ընդամենն ակնհայտ իրավիճակի բացատրությունն է: Բայց ոմանք փոխարինում են «ձեռք» և «զորություն» կամ «միջամտություն» բառերով, որոնք այնքան էլ համապատասխան չեն մարգարեի բառերին: Պարզ հետևությունն այն է, որ այդ թագավորն իր վախճանին կհասնի, սակայն ոչ բնական պատճառներով (ոչ սպանությամբ, կամ պատերազմով և այլն):

Երկրորդ, տեքստը նաև չի ասում այն մասին, որ այդ թագավորն այնպիսի բնույթ պիտի ունենա, որ նրան մահվան մատնելու համար կպահանջվի գերբնական գործոն նրան մահվան մատնելու համար: Այն չի ասում կամ ենթադրում, որ նա, կամ իր զորությունը, որևէ սատանայական կամ դիվային ծագում ունեն: Այն ընդամենն արձանագրում է, որ նա կմահանա առանց ձեռքի, ոչ թե որ նա կարող է մահանալ միայն այդ ձևով: Այդ թագավորը մարդ է, թեև մեծ ու հզոր, սակայն սովորական մահկանացու մարդ:

Ընդհանուր առմամբ, տեքստը վերաբերում է Հերովդեսին: Իրականում, այն վերաբերում է այդ ժամանակվա բոլոր Հերովդեսներին, հատկապես ամբողջական իմաստով Հերովդեսի ընտանիքին: Այդ

շառավղի յուրաքանչյուր ներկայացուցիչ Նոր Կտակարանում արտահայտում է Դանիելի մարգարեության մի որոշակի կողմ, չնայած այդ բոլորը հավասարապես վերաբերում է նաև նրանց բոլորին: Նրանք բոլորն էլ իրենց իշխանությամբ պարտական էին Հռոմին, նրանք բոլորն էլ հալածեցին և սպանեցին Աստծո ժողովդին, նրանք բոլորն էլ, տարբեր իմաստներով, հարձակվեցին Հիսուսի վրա, նրանք բոլորն էլ կոտրվեցին ու մահացան առանց ձեռքի (առանց մարդկային ձեռք դիպչելու):

Այս շառավղի վերջին ներկայացուցիչը՝ Հերովդես Ագրիպպաս II-ը (Ագրիպպաս I-ի որդին), երևում է Պողոսի ծառայության խաչմերուկներից մեկում: Գործք 26-րդ գլխում առաքյալը դիմում է Ագրիպպաս II-ին, որպեսզի նա հանձնվի Քրիստոսին.

> «Ագրիպպաս թագավոր, մարգարեներին հավատու՞մ ես: Գիտեմ, որ հավատում ես»: Եվ Ագրիպպասը Պողոսին ասաց. «Այս կարճ ժամանակում ուզում էիր ինձ համոզել, որ քրիստոնյա դառնա՞մ»: Եվ Պողոսն ասաց. «Լինի կարճ, թե երկար, ես կխնդրեի Աստծուն, որ ոչ միայն դու, այլ բոլորը, ովքեր այսօր լսում են ինձ, դառնան ինձ նման՝ բացառությամբ այս շղթաների»:
>
> «Այդ ժամանակ վեր կացավ թագավորը և կուսակալը և Բերենիկեն և նրանց հետ նստածները: Եվ հեռանալիս մեկը մյուսին ասում էր. «Այս մարդն այնպիսի բան չի անում, որ արժանի լինի մահվան կամ բանտարկության»: Իսկ Ագրիպպասը Փեստոսին ասաց. «Այս մարդուն կարելի էր ազատել, եթե կայսրին դիմած չլիներ»:

Մինչդեռ առանձին խոսակցության ժամանակ նա Պողոսի վերաբերյալ օգտակար վճիռ է հայտնում, վերջնական որոշումն ի հայտ է բերում, որ Հերովդեսը՝ Երուսաղեմի թագավորը, դեռևս շարունակում էր ավելի հավատարիմ մնալ կայսերը, քան Աստծուն: Այն նույն Հռոմը, որ նրանց տվել էր իրենց իշխանությունը, այն նույն Հռոմն էր, որին նա վերջնական արդյունքում խոնարհվեց Պողոսի դեպքում: Նա Պողոսին, ում անմեղ ճանաչեց, ուղարկեց Հռոմ, որտեղ նա վերջիվերջո մահապատժի ենթարկվեց: Ինչ-որ ձևով սա Պողոսի վերջին ջանքն էր՝ հրեա ազգին դարձի բերելու (սկզբում հրեաներին,

հետո՝ հեթանոսներին) նրանց քաղաքացիական ներկայացուցիչ-ների միջոցով: Հերովդեսը մերժեց Ավետարանն ու դրա վերջին առաքյալին ուղարկեց՝ կրելու իր վերջին հալածանքը:

Իր նախորդների նման, Հերովդես Ագրիպպաս II-ը նույնպես առանց ձեռք դիպչելու մահացավ: Սակայն այս մեկը՝ շառավղի վեր-ջին ներկայացուցիչը, անզավակ մահացավ:

Այսպիսով, Կատաղի թագավորի դեպքն ուսումնասիրելով տես-նում ենք, որ Դանիելի տեքստն ինքնին չի ասում այն, ինչ այս դիսպենսացիոնալիստներն են պնդում: Այն չի ենթադրում այն մեկնաբանությունը, որ նրանք են վերագրում դրան: Իրականում, տեքստի պարզ ընթերցանությունն (և թարգմանությունն) ավելի շատ տեղեկություն է հաղորդում այնպիսի մեկին, ով արդեն դեռ նախապաշարված չէ գերիոգևոր ապոկալիպսիսով: Տեքստն իր հստակ ու ճշգրիտ իրականացումն է ստանում այդ նպատակով արդեն ներկայացրած Նոր Կտակարանյան տեքստերում, որոնք հետագայում հաստատվում են պատմությամբ: Ուղղակի ոչ մի պատճառ չկա այս մարգարեությունը խցկելու Հակաքրիստոսի խճանկարի մեջ և այն գցելու դիսպենսացիոնալիստական սար-սափազդու ապագայի մեջ: Իրականում, այսպես վարվելը խեղա-թյուրում է Դանիելի տեքստն ու անարդար վերաբերմունք է դրսե-վորում Սուրբ Գրքի մնացած մասի հանդեպ:

Մենք այս դեպքի շուրջ կարող էինք ավելի ծավալվել՝ շարունա-կելով խորանալ Դանիել 8-րդ գլխի ամբողջական համատեքստի մեջ, թե՛ աստվածաշնչյան, թե՛ պատմական տեսակետից:

Մենք կարող էինք նաև բազմապատկել այսպիսի օրինակները՝ մեկ առ մեկ քննարկելով այն բոլոր անուններն ու անվանումները, որ թվարկված են Լա Հայեի և Գիլեթի (և ուրիշների) կողմից: Սակայն սա մի օրինակ է այն բանի, թե ինչպես հասկանալ մարգարեությունը Սուրբ Գրքի և պատմության լույսի ներքո, և թե ինչպես խուսափել նախապաշարված աստվածաբանական երևակայության միջոցով այն խեղաթյուրելուց: Այս և հետագա նմանատիպ կիրառությունները կհաստատեն, որ «Հակաքրիստոսն» աստվածաշնչյան դասակարգ կամ գործող անձ չէ:

Տրամաբանական եզրահանգում

Երբ Սուրբ Գրքի ուսանողը համոզվի, թե ինչ է Աստվածաշունչն

իրականում ասում հակաքրիստոսի վերաբերյալ, նա կհայտնվի մի իրավիճակում, որ կգիտակցի, որ ժամանակակից քրիստոնեությունը բազմաթիվ խեղկատակություններ է բարդել իր վրա: Նա կհասկանա, որ Աստվածաշնչում չկա նշված կամ կանխասված այնպիսի կերպար, ինչպիսին «Հակաքրիստոսն» է և այդ առասպելից այն կողմ կտեսնի:

Հետևաբար, այդ ուսանողները կիմանան, որ. «Ո՞վ է Հակաքրիստոսը» հարցը տրամաբանական ստահոդություն է (ծուղակային հարց, մի հարց որը գոյություն չունեցող բանը արդեն իսկ նախաենթադրում է): Դա «բարդ հարց» կոչվող մի ստահոդություն է, որի մասին մենք նախկինում արդեն գրել ենք: Դա նման է հարցնելուն. «Քո կողակիցը գիտի՞, որ դու սիրային կապի մեջ ես»: Մարդու թե՛ դրական, թե՛ բացասական պատասխանն իր մեջ կրում է ենթադրություն, որ նա իրականում սիրային կապի մեջ է՝ անկախ այն բանից՝ կողակիցը գիտի դրա մասին, թե ոչ: Ճիշտ պատասխանը կլիներ նման հարցը քննադատելը. «Ես մերժում եմ այն ենթադրությունը, որ ես խաբում եմ իմ կողակցին»:

Նմանապես, «ես մերժում եմ ենթադրությունը, որ «Հակաքրիստոսը» անունով ինչ-որ անձնավորություն գոյություն ունի կամ երբևէ գոյություն կունենա»: Սուրբ Գիրքը պարզապես այդ ձևով չի խոսում հակաքրիստոսի մասին, և Սուրբ Գրքում եղած չար կերպարների հանդեպ նման մոտեցումը, որ իբր նրանցից յուրաքանչյուրը մարգարեություն է այդպիսի անձի մասին, հարյուր անգամ նույն ձևով հարց է առաջացնում: Լա Հայեի «Սուրբ Գրքի 100 հատվածները», որոնք նկարագրում են «Հակաքրիստոսին» ոչ ավելին են, քան 100 ստահոդություններ, քանի դեռ նա չի կարողացել ապացուցել, որ այդպիսի պատրանք իրոք գոյություն ունի:

Քանի դեռ դա չի պարզաբանվել, «Հակաքրիստոսը» մի արտահայտություն է, որն ինձ ասում է, որ նրանք չգիտեն, թե ինչի մասին են խոսում:

Հավելված Գ

Աշխարհը խորտակվող նա՞վ է

Ստիպված էի քմծիծաղ տալ (վատ կատակն անտեսելու, թե սրտնեղությունս թաքցնելու, Աստված գիտի) երբ մի քանի օր առաջ մեկ անգամ ևս կարդացի այդ հին պրիմիլիենիալիստական հերյուրանքը. «Աշխարհը խորտակվող Տիտանիկ է…»:

Այս այլաբանությունը ժողովրդականություն ստացավ 1950-ականներին ռադիո քարոզիչ Ջ. Վերնոն Մաք Գիի կողմից: Այն շուտով ասացվածք դարձավ դիսպենսացիոնալիստ գորոլների ու քարոզիչների շրջանում. «Դու խորտակվող նավի մետա՞ղն ես փայլեցնում»: Ակնհայտորեն, Մաք Գին հաճախ էր օգտագործում այս այլաբանությունը՝ մեկ այլ տեղում հղում անելով որպես «քաղաքակրթության խորտակվող նավ»:

Սա մի պատկեր է, որ միշտ օգտագործվել է քրիստոնյաներին վախեցնելու և հեռու վանելու բարեգործական աշխատանքներից և մշակութային բարեփոխումներից: Դրանք անտեսվել են որպես երկրորդական խնդիրներ, համեմատած հիմնական՝ հոգիներ շահելու «վերջին օրերի» գործի հետ: Եվ երբ նրանք ասում են, որ քրիստոնյաների գործը հոգիներ շահելն է, նրանք նկատի ունեն միայն հոգիներ շահելը և շահել միայն հոգիները: Ցանկացած մեկը, ով ժամանակ տրամադրեր Աստծո Օրենքն իրականացնելու ուսուցման, քաղաքականության, տնտեսության, ընտանիքի, գործարարության, բարեգործության, աշխատանքի և այլ ասպարեզներում, իր վրա կկրեր դիսպենսացիոնալիստների նզովքը: Փիթեր Լալոնդեն շարունակում էր տալ «խորտակվող նավի մետաղը փայլեցնելու» վերաբեյալ իր հարցը՝ մեղադրելով այն քրիստոնյաներին, ովքեր իրոք «փայլեցնում էին մետաղը»: Նա այսպես է ասում.

> «Եթե նրանք աշխատում են նոր ինստիտուտներ հաստատելու վրա, փոխարենը գնալու և Քրիստոսի

համար կորած հոգիներ շահելու, ապա նրանք հենց հիմա վատնում են ամենաթանկ ժամանակը երկիր մոլորակի վրա, իսկ դա ամենալուրջ խնդիրն է…»:

Նույն պատկերն է կրկնվում այսօր տիրելու (իշխելու) վերաբերյալ դիսպենսացիոնալիստական քննադատության մեջ: Ինչպես Գերի Դե Մարը մեջբերում արեց վերջերս՝ մերօրյա Իսրայելին երկրպագող կռապաշտ Ջան Մարկելը պնդում է.

«Եկեղեցին զբաղված չէ ուրիշ որևէ բան խլելով սատանայից, բացի մարդկային հոգիներից: Աշխարհը խորտակվող Տիտանիկ է՝ պատրաստ դատաստանի, այլ ոչ թե Եդեմի պարտեզի կատարելություն: Հիսուսը տիրելու է մաքրազատված երկրի վրա: Մարդկանց համար, խոսել երկրին տիրելու կամ իշխելու մասին, նախքան այս երկրի դատաստանը, հոգևոր գոռոզամտություն է: Ես քաջալերում եմ ձեզ փախչել նման սուտ ուսուցիչներից» (Սրանք այն մարդիկ են ովքեր ապրում են Ամերիկայում և կուրորեն ու անշնորհակալորեն վայելում են քրիստոնեական օրենքների ստեղծած բարիքները և պայմանները: Այսպիսի տգետ և դիվային խոսքերը միգուցե այդքան էլ հեշտությամբ չընդունվեն աղքատ (ոչ-բողոքական) երկրներում ապրող մարդկանց կողմից, ովքեր որ իրենց երկրի տնտեսական ավերված վիճակը պարզ կերպով կարողանում են կապել Աստծո օրենքների բացակայության հետ: Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.):

Տրամաբանական խնդիրներ

Չնայած իր դիմացկունությանը, «խորտակվող նավի» հետ կապված խնդիրները բազմաթիվ են, թե՛ աստվածաշնչյան, թե՛ խիստ տրամաբանական: Առաջին հերթին, այս հարցը մեկից ավելի տրամաբանական մոլորություններ է գործում: Այն ներկայացնում է «Բարդ Հարցի» մոլորությունը՝ դրա մեջ ենթադրություն մտցնելով: Սա նման է հարցի հետևյալ ձևին. «Քո կինը գիտի՞, որ դու սիրային կապի մեջ ես»: Հարցը ենթադրում է, որ նա, ում այն տալիս են, խաբում է իր կնոջը: Թե՛ այո, թե՛ ոչ պատասխանելով, նա թույլ է տալիս, որ այդ ենթադրությունը հաստատվի և պատասխանելով, դատապարտում է ինքն իրեն: Դրա փոխարեն, նա առաջինը պետք է քննադատի հարցը:

Նույնը վերաբերում է այս հարցին. «Դու խորտակվող նավի մետա՞-

ղընն ես փայլեցնում»: Այս հարցի զոհերը պետք է այդ ենթադրություն անող հետաքննիչին ստիպեն առաջինը ապացուցել, որ նավն իրոք խորտակվում է: Մենք քիչ հետո կանդրադառնանք այս թեմային:

Հարցը նաև կապ ունի մակդիրների մոլորության հետ, որը վերաբերում է նկարագրողական բառեր օգտագործելուն, որ շեղում է հարցի իմաստի կշիռը: Քրիստոնեական ինստիտուտ-կառույցները նկարագրելով որպես «մետաղ փայլեցնելու» անկարևոր առաջադրանք՝ Մաք Գին և մյուսները առաջին հերթին էականորեն նվաստացնում են սկսելու այդ փորձը: Անկախ այն բանից, նավը խորտակվում է, թե ոչ, դրա մետաղը փայլեցնելը դժվար թե առաջնային հարց լինի, օրինակ, նավի ուղղության կամ շարժիչի աշխատանքի համար:

Եթե նույնիսկ համարենք, որ նավը խորտակվում է, մենք, միևնույն է, կարող էինք ավելի լավ համեմատություն գտնել հասարակության մեջ քրիստոնեական աշխատանքի համար: Մինչ անիմաստ կլիներ խորտակվող նավի մետաղը փայլեցնել, հնարավոր է, անկարևոր չլիներ, օրինակ, նավիրանի խախտումը նորոգելը: Քրիստոնեական հասարակական վերանորոգումը կարող է իրականում կենսական աշխատանք լինել հասարակության նավի համար, և եթե այդպես է, ուրեմն պետք է այս ձևով ներկայացվի Դր. Մաք Գիի նման քարոզիչների կողմից:

Ավելին, այդպիսի հնարավորությունն առաջին հերթին պահանջում է վնասի բնույթի և աստիճանի որոշում: Սա մեկ այլ ենթադրություն է, որ իսքեյպիստներն (քրիստոնեական գործերից փախուստ տվողները) ավելացրել են այդ պատկերի մեջ. ըստ նրանց տեսակետի, հասարակությունը ոչ միայն խորտակվող նավ է, այլև այն խորտակվում է անդառնալիորեն, այն սահմանված է խորտակվելու՝ առանց վերականգնվելու հնարավորության ու առանց հույսի:

Քրիոստոնեական Վերակառուցում շարժումը (որը Ռշտունին է սկսել Ամերիկայում 20-րդ դարին), (Տիրապետության Աստվածաբանությունը), պատկերն այլ կերպ են տեսնում. մինչդեռ հոգիներ շահելը (?) ծայրահեղ կարևորություն ունի. դա քրիստոնեական կյանքի լոկ սկիզբն է, այդ նորաստեղծ կյանքը պետք է զարգանա և դառնա հասուն քրիստոնյա՝ պատրաստակամ հետևելու Աստծո Օրենքի ցուցումներին կյանքի բոլոր ասպարեզներում՝ ընտանիքում, աշխատանքում, եկեղեցում, կառավարությունում և այլն (միայն

հոգիներ փրկող քարոզիչներին կարելի է հեշտությամբ հայտնաբերել: Երբ եկեղեցու անդամը լուրջ խնդիրների մեջ է, կամ պետք է մի լուրջ որոշում կայացնի բայց չգիտէ, թէ որն է ճիշտ ճանապարհը, և գնում է քարոզիչին հարց է տալիս թէ որն է պատասխանը, քարոզիչը կամ ասում է <<եկեք աղոթենք>> և դրանից բացի ուրիշ բան չի ասում, որովհետև Աստծո օրենքին տեղյակ չէ, կամ էլ սկսում է քաղաքական գործիչի նման խոսել, այսինքն, այդ հարցին պատասխանելու փոխարեն հազար ու մի ուրիշ բաների մասին է խոսում: Գլխ. Խմբ.՝ Ա. Խ):

«Խորտակվող նավի» մտածելակերպը անտեսում է (իրականում մեղադրում է) այսպիսի հասունությունը, որովհետև այդ մտածելակերպը վերջնական եզրահանգումներ և սխալ եզրակացություն է անում հենց սկզբից:

Աստվածաշնչյան խնդիրներ

Սակայն ամենակարևորը, «խորտակվող նավի» այս հակամշակութային այլաբանությունը պարզապես ոչ մի տեղ Սուրբ Գրքում հնարավոր չէ գտնել:

Երբևէ եղե՞լ է, որ ավելի քան 60 տարի, այսպիսի ոչ-աստվածաշնչային մի արտահայտությունը եկեղեցու բեմի վրայից հնչող քարոզների թեմաները այսպիսի կերպով գերակշռեր:

Մտածեք այս մասին: Սուրբ Գրքում պատկերը ճիշտ հակառակն է. տապանը, որ մնում է ջրի վրա՝ չնայած փոթորիկներին ու ջրհեղեղներին: Պետրոսը հիշեցնում է Նոյան տապանի օրինակը, որպեսզի իր հալածված ընթերցողներին վստահեցնի, որ Հիսուսը հաղթել է գերեզմանին (որ խորհրդապատկերում էր մահը), իսկ Նրա հարությունը փրկել է մեզ՝ Նրա նաև մկրտված (այսպես ասած «ջրհեղեղով անցած») հավատացյալներին:

Հետևաբար, ըստ ավանդույթի, եկեղեցու շենքի միջին հատվածը, կամ նստարանների մասը, կոչվել է «nave»: Այս բառը անգլերեն «navy (նավատորմ)» բառի եղբայրն է: Երկուսն էլ ծագում են լատիներեն navis բառից, որ նշանակում է «նավ»: Եկեղեցին, որտեղ մկրտված հավատացյալներն ընդունում են Աստծո Խոսքն ու Հաղորդությունը, փոխաբերական իմաստով նավ է կամ տապան, որում մենք փրկված ենք:

Այն նույն Հիսուսը, ով հաղթեց մահվանը, ունի իշխանություն

նաև բնության ուժերի վրա: Դրա համար, մինչ ծովից վախեցած աշակերտները խուճապի մատնվեցին, երբ «քամու մի մեծ փոթորիկ բարձրացավ, և ալիքները հարվածում էին նավին, այնպես որ այն լցվել էր» (Մարկ. 4.37), Հիսուսն ընդհանրապես չէր անհանգստանում:

Սակայն նավը լի էր ջրով և մոտ էր խորտակվելու: Իսկ ի՞նչ էր անում Հիսուսը: Նա շատ ավելի պակաս արդյունավետ բան էր անում, քան նույնիսկ «մետաղը փայլեցնելը». Նա քնած էր: Նա խորը քնած էր, ինչպես հատվածն է ասում «բարձի վրա» (Մարկ. 4.38):

Այլ կերպ ասած, Նա այնքան հեռու էր խորտակվող նավի համար անհանգստանալուց, որ դիտավորյալ բարձ էր գտել ննջելու համար և քնել էր դրա վրա հենց փոթորիկի կենտրոնում:

Նա իրականում քնեց այնքան ժամանակ, քանի դեռ Նրա անհանգստացած աշակերտները չէին արթնացրել Իրեն: Դրանից հետո Նա հանդիմանեց նրանց, իհարկե, ոչ թե Իրեն արթնացնելու, այլ փոթորկի մեջ հավատ չունենալու և մտածելու համար, որ նավը կխորտակվի (Մարկ. 4.40):

Այս հանդիմանությունը տեղին է նաև այսօրվա անհավատ նավագնացների համար: Պրիմիլենիալիստներն իրենք իրենց համոզել են, որ սատանան տիրում է աշխարհին, և որ հասարակության անկումն անխուսափելի է, այնպես որ, նախքան Հիսուսի ֆիզիկապես հայտնվելը փոթորկին դիմագրավելու, ուղղությունը պահելու, աշխարհիկության կուլ տվող ուժին ընդդիմանալու ցանկացած փորձ անպտուղ աշխատանք է: Բայց նրանք սխալ են հասկացել Սուրբ Գիրքը: Այս նույն Հիսուսն ակնկալում է, որ Իր աշակերտներն իրենց հավատը կգործածեն առանց Իր ֆիզիկական ներկայության կարիքն ունենալու (Նրա ներկայությունը, միևնույն է, միշտ այստեղ է): Սա հենց այն հստակ պատգամն է, որ մենք ստացել ենք Մեծ Հանձնարարականի ժամանակ.

> «Ամբողջ իշխանությունը՝ երկնքում ու երկրի վրա, Ինձ է տրված: Դրա համար գնացեք և աշակերտեք բոլոր ազգերին՝ մկրտելով նրանց հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, սովորեցնելով նրանց, որ պահեն այն ամենը, ինչ Ես ձեզ պատվիրեցի: Ահա, Ես միշտ ձեզ հետ եմ՝ մինչև ժամանակաշրջանի վերջը» (Մատթ. 28.18-20):

Այն ամենը, ինչ մենք սովորում ենք այս հատվածից, ամբողջությամբ ցաք ու ցրիվ է անում (ներեցեք արտահայտությանս համար) «խորտակվող նավի» այլաբանությունը.

Առաջինը, սատանան հասարակության վրա իրավունք կամ իշխանություն չունի. Քրիստոսին է պատկանում ամբողջ իշխանությունը երկնքում և երկրի վրա:

Երկրորդ, «դրա համար» նշանակում է «այս փաստի լույսի ներ--քո». փաստի, որ Քրիստոսն ունի ողջ իշխանությունը: Բոլոր բանների վրա ունեցած Իր իշխանության լույսի ներքո մենք պետք է գնանք և բոլոր ազգերին դարձնենք Քրիստոսի հետևորդներ:

Երրորդ, աշակերտելն իր մեջ ներառում է նաև մկրտելը: Մկրտությունը, որ մի փոքրիկ հեղեղ է, ներկայացնում է մահն ու նոր կյանքը Քրիստոսում: Մենք բառացիորեն պետք է հեղեղենք ազգերը և նրանց հարություն տանք նոր կյանքի համար: Սա ճիշտ հակառակ է պրիմիլիենիալիստական տեսակետին: Հասարակության նավը աշխարհիկության ու սատանիզմի կողմից հեղեղվելու տեղը), քրիստոնյաները պետք է դուրս մղեն աշխարհիկությունը՝ նրանց դարձնելով աշակերտներ: Քրիստոնեական մկրտության ջրերի հաշվին է, որ հասարակության նավը մնում է ջրի երեսին:

Չորրորդ, խնդրում եմ նկատեք, որ, ըստ Քրիստոսի, աշակերտելն ավելին է, քան «հոգիներ շահելը» (Սա ժամանակակից ավետարանչական եկեղեցու Աքիլեսի գարշապարն է: Նրանք միայն մարդկանց ավետարան քարոզել գիտեն, բայց դրանից ավելին ոչինչ չգիտեն: Նրանք մարդկանց ասում են թէ ինչպես փրկվել, բայց նրանց չեն ասում թէ ինչպես ապրեն, որովհետև նրանք իրենք էլ դրա պատասխանը չգիտեն: Նրանք հավատում են որ եթե մեկը ապաշխարի ու վերստին ծնունդ ստանա, Սուրբ Հոգին նրա մեջ կբնակվի, ու ամեն ինչ լավ պետք է որ լինի: Բայց իրականությունը մեզ շատ ավելի տարբեր բան է ներկայացնում, երբ մենք նայում ենք եկեղեցիների անդամների կյանքի պտուղների արդյունքներին: Գլխ. Խմբ.՝ Ա. Խ.): Մենք պետք է ավելի մեծ նպատակ ունենանք, քան Քրիստոսի պատգամի սկզբնական մասը, որ հոգիներ է փրկում: Ավելին, մենք պետք է ազգերին սովորեցնենք «պահել», այսինքն «հնազանդվել», այն ամենին, ինչ Հիսուսը մեզ պատվիրեց: Սա ներառում է Աստծո ողջ Խոսքը, ոչ թե պարզապես մի փոքրիկ մասը, որ խոսում է մարդկանց հոգիների մասին, այլ նաև մնացած մեծ մասը, որ օրենք և իմաստություն է սովորեցնում ապրելու,

ընտանիք կազմելու, սովորելու, գործարարությամբ զբաղվելու, կառավարությունում աշխատելու և այլնի համար:

Վերջապես, Հիսուսը մեզ հավաստիացնում է, որ այս բոլոր ճիգ ու ջանքի մեջ Նա մեզ հետ կլինի: Չնայած փաստին, որ շատ չանցած երկինք էր համբարձվելու հենց այս նույն աշակերտների աչքի առաջ, Նա վստահեցրեց նրանց, որ մնալու էր նրանց հետ այն Հանձնարարականի մեջ, որ տվել էր նրանց: Այլ կերպ ասած, պրիմիլենիալիստների պնդումը, որ Հիսուսը պետք է ֆիզիկապես ներկա լինի երկրի վրա, որպեսզի Իր Արքայությունը փոխի հասարակությունը, փոխում է անձամբ Հիսուսի խոսքերը: Դա տեղի ունենալու համար Նրա ֆիզիկական ներկայությունն անհրաժեշտ չէ: Նա ունի ողջ իշխանությունը երկնքում ու երկրի վրա և կարող է հասարակության փոթորիկները հանդարտեցնել ճիշտ նույնքան հեշտությամբ Իր երկնային գահից, որքան Իր բարձի վրայից Մարկոսի 4-րդ գլխում: Նավը խորտակվելու վտանգի առաջ չէ: Հիսուսն է նավի նավապետը և թույլ չի տա, որ այն խորտակվի:

Ավելի ու ավելի վատթարանալ

Ես վերևում արդեն ասացի, որ «խորտակվող նավի» զոհերը պետք է այդ ենթադրող ինկվիզատորին ստիպեն սկզբում ապացուցել, որ նավն իրոք խորտակվում է: Նրանք, սակայն, հավատում են, որ կարող են դա անել և հաճախ փորձ են անում դա անել մատնանշելով Սուրբ Գիրքը, որ նրանք մեկնաբանում են որպես կանխասացություն հասարակության անկման մասին նախքան Հիսուսի վերադարձը: Նրանց սիրելի հատվածներից մեկը 2 Տիմոթեոս 3.1-7-ն է, որն ասում է.

> «Բայց սա հասկացիր, որ վերջին օրերում դժվարին ժամանակներ կլինեն: Որովհետև մարդիկ կլինեն եսասեր, փողասեր, հպարտ, ամբարտավան, վիրավորող, ծնողներին անհնազանդ, երախտամոռ, անսուրբ, անսիրտ, անհաշտ, չարախոս, անժուժկալ, դաժան, բարին չսիրող, դավաճան, անհոգ, սնափառ, ավելի ցանկասեր, քան աստվածասեր՝ ունենալով աստվածպաշտության արտաքինը, բայց ուրանալով դրա զորությունը: Խուսափիր նման մարդկանցից,

> քանի որ դրանց մեջ կան որոշները, որոնք ներս են սողոսկում տներն ու գերում են մեղքով բեռնավորված և զանազան ցանկություններով վառված տկար կանանց, որ միշտ սովորում են, սակայն երբեք չեն հասնում ճշմարտության գիտությանը»:

Այս հատվածի տրամաբանական եզրակացությունը սա է. ինչքա՜ն նման է այս նկարագրությունը մեր ժամանակներին: Եվ քանի որ այն ասում է, որ դա տեղի է ունենալու «վերջին օրերին», ուրեմն մենք պետք է որ վերջին օրերում ապրելիս լինենք:

«Խորտակվող Տիտանիկի» գաղափարի կողմնակից մեր Պրն. Մարկելն ինքը հենց այս փաստարկն է օգտագործում ընդդեմ այն հավատացյալների, ովքեր կհամարձակվեին փորձել դրական ազդեցություն ունենալ հասարակության վրա. «Այդ գաղափարի համար աստվածաշնչյան ոչ մի հիմք չկա, որովհետև Աստվածաշունչն ուսուցանում է ճիշտ հակառակը: Վերջին օրերում վատ բաներն ավելի ու ավելի վատը կդառնան…»:

Դժբախտաբար, այսպես մտածողները շատ քիչ ուշադրություն են դարձնում այդ հատվածի մնացած մասի վրա, որ նրանք մեջբերում են.

«Ճիշտ ինչպես Հանեսն ու Համրեսն էին դեմ կանգնում Մովսեսին, այնպես էլ այս մարդիկ են դեմ կանգնում ճշմարտությանը. ապականված մտքով մարդիկ, ովքեր հավատի տեսակետից անպիտան են: Սակայն շատ առաջ չեն գնա, որովհետև նրանց հիմարությունը բոլորի համար բացահայտ կլինի, ինչպես տեղի ունեցավ այդ երկու մարդկանց հետ» (2 Տիմ. 3.8-9):

Նկատեք, որ անկախ այն բանից, թե որքան վատը կդառնան այդ մարդիկ «վերջին օրերում», նրանք, միևնույն է, չեն բարգավաճի (կամ, հաջողության չեն հասնի): «Նրանք շատ առաջ չեն գնա»: Ճիշտ ինչպես փարավոնի մոգերն էին ընդդիմանում Մովսեսին, այնպես էլ այդ տիպի մարդիկ ընդդիմանում են Քրիստոսին: Եվ, ինչպես փարավոնի մոգերը պարտվեցին Մովսեսին, այնպես էլ այս վատ մարդիկ կպարտվեն Քրիստոսին, և դա տեղի կունենա այնպես, որ բոլորի համար բացահայտ կլինի:

Վերջին օրերը

Ավելի համոզիչ է դառնում այն, թե ինչպես է «վերջին օրեր» արտահայտությունն օգտագործվում Աստվածաշնչում: Պողոսի համար այն ամենը ինչ նա ասում է այդ բարոյազուրկ մարդկանց մասին, նպատակ ուներ անմիջականորեն խրատական լինելու իր լսարանի համար հենց այդ ժամանակ: Բավականին հստակ է, որ նույնիսկ Բ Տիմոթեոսում, որտեղ այդ հղումները վերաբերում են սուտ վարդապետների ի հայտ գալուն, արդեն տեղի էր ունեցել նրանց մեջ այդ ժամանակ (տես Բ Տիմ. 2.16-17): Այսպիսով, սուտ վարդապետների վերաբերյալ Բ Տիմոթեոսի թղթի 3-րդ գլխում նրա զգուշացումները վերաբերում էին այն խնդիրներին, որ Եկեղեցին արդեն ուներ այն ժամանակ: Այսպիսով, «վերջին օրերն» արդեն վերաբերում էին նրանց:

Սա ավելի հստակ է դառնում «վերջին օրերի» վերաբերյալ աստվածաշնչյան այլ հղումներից: Եբրայեցիների թղթի 1.2-ը բացարձակապես անժխտելի է դարձնում, որ վերջին օրերը տեղի էին ունենում այն ժամանակ, երբ այդ նամակը գրվում էր: Իրականում, այն ոչ միայն վերաբերում էր «վերջին օրերին», այլ հատկապես՝ «այս վերջին օրերին»: Մինչդեռ Աստված տարբեր ժամանակներում և տարբեր կերպերով է խոսել Հին Կտակարանում, ասում է հեղինակը, Նա հիմա (այսինքն առաջին դարում, երբ նա դեռ գրում էր) հստակ կերպով «այս վերջին օրերում» խոսեց Իր Որդու միջոցով:

Սա երկու բան է նշանակում. առաջին, դա նշանակում է, որ այն ժամանակը, երբ այդ հեղինակը գրում էր, վերջին օրերն էին: Եբրայեցիների թղթի հեղինակը դա հստակեցնում է «այս» ցուցական դերանվան միջոցով. «այս վերջին օրերը» վերաբերում է այն օրերին, որ հեղինակը կարող էր իրեն այդքան մոտ կոչել: Երկրորդ, դա նշանակում է, որ այն ժամանակը, երբ Հիսուսը հայտնվեց աշխարհին, վերջին օրերն էին: Այս տեղեկությունը ի հայտ է գալիս նաև այլ տեղերում, ինչպես օրինակ Եբրայեցիներին 9.6-ը և Ա Պետրոս 1.20-ը.

> «Սակայն հիմա, ժամանակների վերջում, մեկ անգամ հայտնվեց Իր անձի զոհով մեղքը հեռացնելու» (Եբր. 9.6? 26):

«Նանախօրոք իմացված էր աշխարհի հիմնադրումից առաջ, սակայն այս վերջին ժամանակներում հայտնվեց ձեզ համար» (Ա Պետրոս 1.20):

Երկու համարներն էլ հաստատում են, որ այն ժամանակը, երբ Հիսուսը հայտնվեց, իրոք վերջին օրերն էին, կամ ժամանակաշրջանի ավարտը:

Պետրոսն ավելի վաղ՝ Պենտեկոստեի քարոզում, ըստ էության այս նույն բանն է հաստատում: Սուրբ Հոգու թափվելուց հետո, երբ կրակի բոցեր հայտնվեցին և լեզուներ արտահայտվեցին, Պետրոսն իր լսարանին բացատրեց, որ «սա այն է, ինչ խոսվեց Հովել մարգարեի միջոցով. «Վերջին օրերում կլինի,- ասում է Աստված,- որ Ես իմ Հոգին կթափեմ բոլոր մարմնի վրա…» (Գործք. 2.16-17): Այսպիսով, Պետրոսի համար Հովելի «վերջին օրերի» մարգարեությունն իրականացավ Պենտեկոստեի Օրվա դեպքում: Սա կրկին նշանակում է, որ առաքյալներն ու նրանց ժամանակակիցներն ապրում էին «վերջին օրերում»:

Այնպես որ զարմանալի չէ, որ Պողոսը հղում աներ սուտ վարդապետներին, ովքեր անհանգստացնում էին Տիմոթեոսի եկեղեցուն, որպես «վերջին օրերի» արդյունք: Նմանապես, Հուդան մատնանշում է իր անմիջական լսարանի մեջ գտնվող սուտ վարդապետներին՝ Եկեղեցուն հիշեցնելով Հիսուսի և առաքյալների խոսքերը, որ «վերջին օրերին» սուտ վարդապետներ պիտի գային (Հուդա 17-18): Եթե կանխասված սուտ վարդապետներն արդեն եկել էին, ուրեմն Հուդան հաստատում է, որ վերջին օրերը վերաբերում էին իր ժամանակակիցների ապրած ժամանակին:

Ինչու՞ էին նրանք իրենց ապրած օրերն ընկալում կամ հասկանում որպես վերջին օրեր: Բոլոր առաքյալներն ու վաղ ժամանակների քրիստոնյաները (Նոր Կտակարանի ժամանակվա հավատացյալի) Հին Կտակարանի ձևերին ու կառուցվածքին հետևելը համարում էին հավատուրացություն ու սատանայական, որ պատրաստ էր Աստծո դատաստանի համար, որը, ըստ նրանց, հենց այդ մեկ սերնդի հորիզոնում էր գտնվում: Քանի որ չհավատացող հրեական հասարակությունն էր մերժել Մեսիային ու Նրա Նոր Ուխտը՝ դրանով իսկ ինքն իրենց դատապարտելով (Մաթ. 27.25), և իրենց ժամանակակից հասարակությունն էր, որ ավելի ու ավելի վատն էր դառնում՝ մոտենալով Դատաստանի Օրվան: Այդ վերջին օրե-

րին՝ այդ ժամանակաշրջանի ավարտին, որ Հին Ուխտի համակարգի վերջին օրերն էին և Հին Ուխտի ժամանակաշրջանի ավարտը, սուտ վարդապետներն ու անաստված մարդիկ ավելի ու ավելի վատն էին դառնում՝ հալածելով քրիստոնյաներին ու փորձելով ապականել նորաստեղծ Եկեղեցին:

Եզրակացություն

Մենք չենք ապրում վերջին օրերում: Նոր Կտակարանի գրողներն էին ապրում Հին Ուխտի վերջին օրերում: Դրա համար նրանք կարող էին գրել. «այս վերջին օրերը»: Հասարակության անկումը, սուտ վարդապետները և այլն, որոնց մասին խոսվում էր, որ վերջին օրերում պետք է հայտնվեին, վերաբերում էին այն օրերին, երբ առաքյալները գրում էին: Այսպիսով, մենք չպետք է ակնկալենք հասարակության անդառնալի և անուղղելի անկում, ինչպես Պրն. Մարկելի նման ուսուցիչներն են պնդում, և հաստատ ոչ Բ Տիմոթեոս 3-րդ գլխի հիման վրա:

Բացի դրանից, նույնիսկ, եթե մենք պետք է ակնկալենք Բ Տիմոթեոս 3-րդ գլխի իրականացումն այսօր, այդ հատվածը չի եզրահանգում, որ չար մարդիկ լիովին կխորտակեն հասարակության նավը: Ընդհակառակը, այն ասում է, որ նրանց հիմարությունը հայտնի կդառնա բոլորին, և որ նրանք չեն բարգավաճի: Բայց քանի որ Սուրբ Գրքից շատ հստակ է, որ Նոր Կտակարանի ժամանակահատվածն էր այդ վերջին օրերը, ուրեմն մենք կարող ենք հասկանալ, որ Մեծ Պոռնիկի և սատանայի ժողովարանի՝ Երուսաղեմի կործանումը, որպես Աստծո թշնամիների կործանում, շատ պարզ էր դառնալու բոլորի համար: Երուսաղեմի կործանումն Աստծո Եկեղեցու հաղթանակն էր:

Իրականում, Պողոսը նույնը խոստացել էր Հռոմի եկեղեցուն, որը սուտ հրեաները պաշարել էին իրենց սուտ համոզմունքներով (Հռոմ. 2.25-29): Նա ասում է նրանց. «Խաղաղության Աստվածը շուտով կխորտակի սատանային ձեր ոտքերի տակ» (Հռոմ. 16.20): Ինչի՞ն էր նա կարող հղում անել, որ տեղի էր ունենալու նրանց ոտքերի տակ «շուտով» (ոչ թե 2000 տարի հետո՝ իր լսարանի համար հեռավոր ապագայում): Կարծում եմ՝ նա նկատ ուներ Երուսաղեմի կործանումը, որն իր ավարտին կհասցներ Հին Ուխտի համակարգը, որն այնքան բաժանումների ու վիճաբանությունների աղբյուր

էր հանդիսանում Եկեղեցում:

Այս բոլորը՝ մեր դիմապակու (հետադարձ) հայելու մեջ նայելով: Բարեբախտաբար, հասարակության նավը դիմապակու հայելիներ ունի՝ տեսնելու Սուրբ Գրքում բացահայտված մարդկության պատմությունը: Նրանք էին ապրում վերջին օրերում: Նրանք էին ականատես լինում բարոյազրկմանը, հավատուրացությանն ու սուտ քրիստոսներին: Նրանք ականատես եղան Աստծո դատաստանին «Բաբելոնի» պոռնիկի վրա, ճիշտ ինչպես Հիսուսը մարգարեացավ Մատթեոսի Ավետարանում: Նրանք սկսեցին Մեծ Հանձնարարականը:

Մեր գործը վախենալը չէ, որ նավը կխորտակվի, առավել ևս, որ թողնենք այն անհրաժեշտ գործը, որ քրիստոնեության մեծ նավն է պահանջում, որ արվի: Ընդհակառակը, մեր աշխատանքն է՝ ավելի շատ նավեր կառուցել, դրանք ավելի ուղղել դեպի աշխարհը, և Քրիստոսի փառքը տարածել ծովից մինչև փայլուն ծովը՝ աշխարհի բոլոր ծովերը:

Եվ եթե այդ ընթացքում «նավի վրայի մետաղը փայլի», ապա փայլուն ծովերն ավելի շատ կփայլեն: Փառք Տիրոջը:

Հավելված Դ

Ստությունների ժառանգությունը. Մարտին Լյութերը՝ թալմուդյան հուդաիզմի մասին

Ես Մարտին Լյութերին պաշտպանելու ոչ մի անձնական հետաքրքրություն չունեմ, չնայած այն բանին, որ նա Ռեֆորմացիայի հսկա էր: Իրականում, ես ինքս քննադատաբար եմ արտահայտվել նրա մասին համագումարների, դասախոսությունների ժամանակ և այլուր: Սակայն ես գոնե որոշ չափով պիտի պաշտպանեմ հրեաների հանդեպ նրա վերաբերմունքը: Ահա, թե ինչու.

Մենք այսօր ապրում ենք քրիստոնեական մի աշխարհում, որտեղ կենտրոնացած են էթնիկ հրեաների, «Իսրայելի ապագայի» և այսօրվա Իսրայելի ֆիզիկական երկրի վրա՝ որպես մարգարեության և ենթադրյալ վերջին ժամանակների նշանների կիզակետ: Քարացած ձևի ենք կենտրոնացած: Եզրահանգումը, որ Իսրայելին տրված հավիտենական Արքայության խոստումներն իրականանում են Նոր Կտակարանի Եկեղեցում, բերում է «հակասեմիտիզմի» կամ «հակահուդաիզմի» մեղադրանքներ, ինչպես վերջերս մի գիտակ խոսեց այդ մասին: Ո՞վ կարող է համարձակվել հրեա ժողովրդի հանդեպ լինել այնքան դաժան ու չսիրող, որպեսզի պնդի, որ նրանք աստվածաշնչյան մարգարեությունների ապագայում հատուկ տեղ չունեն: Ցանկացած մեկը, ով այնքան անտարբեր է, որպեսզի «բացառի» «Աստծո ընտրյալ ժողովրդին» «նրանց համար» արված խոստումներից, պետք է որ լցված լինի նախապաշարմունքներով ու ատելությամբ: Այս «ատելությամբ լի» պնդման վառ ներկայացուցիչը Մարտին Լյութերն է: Լյութերը խորտակված հույսերի փորձառություն ուներ: Նա Հռոմի Պապական համակարգի ծխի և զարդերի ներքո բացահայտել էր ճշմարիտ Ավետարանը և մտածում էր, որ հրեաներն, անշուշտ, կընդունեին այն: Երկար տարիներ ապարդյուն դրան հավատալուց հետո, նա կտրականապես փոխվեց: Մահանալուց մի քանի տարի առաջ նա մի դառնացած աշխատություն

գրեց, որ կոչվում էր «Հրեաների ու նրանց ստությունների մասին»: Նա լի էր հռետորական արմատականությամբ (ծայրահեղություններով), որը, եթե բառացիորեն ընդունվեր, բռնության կոչ էր անում: Բարեբախտաբար, նա բավականին բան արեց՝ ասելու, որ նա վրեժխնդրության կողմնակից չէ, և դա պետք է թողնել միայն Աստծուն:

Սակայն Իսրայելի ժամանակակից աջակիցները, ցանկանալով մրոտել (սևացնել) իրենց ընդդիմախոսներին որպես հակասեմիտիստ և այլն, բռնում են Լյութերի ամենախիստ խոսքերից և դրանք ներկայացնում որպես մեր մտածելակերպի նմուշ: Սրա վերաբերյալ Լյութերի հետ կապված շատ հեշտ է հարցեր գտնել ողջ համացանցով մեկ: Այդ աշխատության կրճատված տարբերակներն ավելին չեն, քան մի քանի պարբերություններ՝ վերցված նրա ամենախոցող խոսքերից, որոնք, համատեքստից պոկել-հանելով, համակցել են իրար հետ: Թույլ տվեք ասել, որ դրանք կրճատված են: Իրական աշխատությունը կազմված է մոտ 65,000 բառից, որ կբավականացներ երկկողմանի տպագրական 200 էջ լրացնելու համար: Այնտեղ դուք կգտնեիք մի քանի թեմաներ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է հետևողական ու երկար պատճառաբանություններով և հիմնականում զուգակցված Սուրբ Գրքի համապատասխան հատվածների մանրամասն ուսումնասիրությամբ:

Լյութերի ընդդիմախոսները, լինեն լիբերալ (ազատամիտ), թե դիսպենսացիոնալիստ /պրիմիլենիալիստ (նախահազարամյակայիններ) տեսակի քրիստոնյաներ, երբեք Ձեզ այդ մասին չեն ասի: Դրա փոխարեն, մենք տեսնում ենք հյութալի նյութի մի քանի ընտրված պատառիկներ, որոնք շատ նման են այսօրվա քաղաքական հարձակումներին: Կարիք չկա նույնիսկ ասելու, որ այդ կրճատված տարբերակները գրեթե չեն ներկայացնում Լյութերի տեսակետը, չխոսելով արդեն Լյութերի մասին ընդհանրապես, և իրոք կարող էին մեղադրվել չափազանց անազնվության մեջ:

Լյութերական ժառանգության սխալ ընկալումը

Լյութերն այսօր սովորաբար պատկերվում է որպես վայրագ հակասեմիտիստ, ով ճանապարհ է հարթել Հոլոքոստի(հրեաների ցեղասպանության) համար իր միակ աշխատությունով: Պրիմիլենիալիստ Բարրի Հորները պատճառաբանում է, որ «Լյութերի չափազանցությունները» թողեցին վախճանաբանական մի ժառան-

գություն, որ աղետալի հետևանքներ ունեցավ. «հրեաները շարունակեցին արևմտյան քաղաքակրթության համար վիրավորանք լինել՝ հատկապես Եվրոպայի համար. մի պահանջատեր, որ հավիտյան զրկվել էր ժառանգությունից՝ իր հրեա լինելու պատճառով»: Որից հետո Հորները սիրով մեջբերում է անում Ռ. Ս. Վիստրիչից, ով ասում է. «Լյութերի կողմից ցանված ատելության սերմերն իրենց գագաթնակետին հասան Երրորդ Ռեյխի ժամանակ, երբ գերմանացի բողոքականները պատրաստակամ եղան ընդունելու նացիստական հակասեմիտիզմը»:

Ե՛վ Հորները, և՛ Վիստրիչն իրենց այս մեկնաբանություններով սխալ եզրակացություն են անում: Հոլոքոստը տեղի է ունեցել Լյութերի «չափազանցություններից» հետո, այո, սակայն շատ ավելին կպահանջվի՝ ապացուցելու իրական, պատմական պատճառը, քան թե այդ երկուսի միջև եղած մակերեսային «հակահրեականությունը»: Շատ ավելի գործոններ էին ներգրավված Նացիզմի մեջ, քան Լյութերի աշխատությունն՝ ընդդեմ հրեաների և նրանց ստությունների: Իրականում, երբ մենք ճիշտ հասկանանք, թե ինչու Լյութերը գրեց այդ աշխատությունը և թե ինչ պատճառաբանություններ է նա իրականում դրանում բերում, մենք ստիպված կլինենք ընդունել, որ նա շատ քիչ կապ ուներ, եթե չասենք ոչ մի, Նացիստական Գերմանիայի հետ:

(Անձամբ ես կարծում եմ, որ Լյութերի աստվածաբանությունն իրոք որոշակի մեղադրանք առաջացրել է այդ մշակույթի հանդեպ, ԲԱՅՑ, ոչ հրեաների մասին գրած իր աշխատության պատճառով: Դա շատ ավելի կապ ունի նրա «երկու արքայություն» աստվածաբանության հետ, որում քրիստոնյաներն ու Եկեղեցին պատվեր են ստանում չկիրառել աստվածաշնչյան օրենքները քաղաքականության և մշակույթի մեջ: Այսպիսով, Աստծո ձայնն առանձնացնելով հրապարակներից ու շուկաներից, երկու արքայության վերաբերյալ այս մոտեցումը թույլ տվեց քաղաքական գործիչներին դառնալ անօրեն, իսկ քարոզիչներին պատվիրվեց լուռ մնալ: Հիտլերը շատ լավ տեղյակ էր այս աստվածաբանությանը և այն օգտագործեց իր օգտի համար՝ հատկապես հղում անելով դրանց իր ճառերի ժամանակ:

Սահմանում. Երկու Արքայություն հավատքը այն է որ Քրիստոնեությունը միայն երկնային, այսպես ասած հոգևոր կրոն է, և չպետք է առնչվի ու խառնվի այս աշխարհի գործերին, օրինակ

քաղաքականությանը, օրենքներ ստեղծելուն, գիտությանը, և այլ բնագավառներին: Սա իրականում շատ կործանարար հավատք է որը քրիստոնեությանը մահացու հարված է տվել և 20-րդ դարի ընթացքում հսկայական չարիքների առիթ տվել, երբ քրիստոնեա հավատացյալները իրենց մեկուսացրել են աշխարհից, ներկա կյանքի իրականություններից: Իրականում, քրիստոնեությունը հսկայական ազդեցություն է ունենում իր շրջապատի ամեն ինչի վրա: Որտեղ որ Քրիստոնեությունը զորեղ և առողջ է, այդտեղ օրենքները ավելի մոտ են Մովսեսական օրենքներին, այդտեղ ամուսնալուծությունները քիչ են, միասեռականություն գրեթե գոյություն չունի, և տնտեսությունը հզոր է, և այլն…: Երկու արքայության վարդապետության հավատացողները երկիրը թողնում են դևին):

Լյութերը Իրեն Ուղղակի Լյութերական ձևի էր պահում

Մենք պետք է ընդունենք, որ Լյութերն անցավ որոշ հռետորական սահմաններ հրեաների դեմ արած իր բարկացած մեկնաբանությունների մեջ, սակայն սա պակաս «հակասեմիտիզմ» է այն պարզ ու հստակ պատճառով, որ Լյութերը Լյութերն է (Սակայն սա այդքան հակասեմիտիզմ չէր ինչքան Լութերի ջղային նյարդայնացած բնավորության պտուղն էր): Նա կատաղի ձևով էր արտահայտվել ընդդեմ Հռոմի Պապի, Կարլշթաթի, Գյուղացիների, Անաբապտիստների, Ցվինգլիականների և միգուցե մեկ կամ երկու անգամ նույնիսկ իր երեխաների: Նա իրոք որ իր օրերի մարդու վիճաբանող տեսակի մի օրինակ է. բոլորը հոխորտում էին միմյանց դեմ և բոլորը դա հասկանում էին:

Լյութերի կրակոտ գրիչը նախկինում նրան հաճախ էր գցել դժվարությունների մեջ: Նկատելի է, որ նրա շատ վաղ արված մեկնաբանություններն օգտագործվեցին նրա դեմ Վորմսի Ռեյխստագում, որտեղ նրան օրենքից դուրս հայտարարեցին: Ի պատասխան Հռոմի Պապի պալատական աստվածաբանի հարձակման՝ Լյութերը եզրակացրեց.

> «Եթե կատաղի խենթությունը (Հռոմի եկեղեցականների) շարունակվի, ինձ թվում է, որ ավելի լավ խորհուրդ և դեղամիջոց չի կարող գտնվել դրա դեմ, քան որ թագավորներն ու արքայազները ուժ

> կիրառեն, զինվեն և հարձակվեն այն չար մարդ-կանց վրա, ովքեր թունավորել են ողջ աշխարհը, և վերջնական ավարտին հասցնեն այս խաղը ոչ թե բառերով, այլ զենքով: Քանի որ մենք գողերին պատժում ենք սանձելով, մարդասպաններին՝ սրով, իսկ հերետիկոսներին՝ կրակով, ինչու ուրեմն մենք դեմ չենք կանգնում դժոխքի այս չար ուսուցիչներին, այս պապերին, կարդինալներին ու եպիսկոպոսներին և հռոմեական Սոդոմի ողջ ժողովքին զենքը ձեռքներիս և մեր ձեռքերը չենք լվանում նրանց արյան մեջ»:

Մինչ Լյութերն ավելի ուշ կգրեր, որ նա չէր ցանկանա, որ «մեր ձեռքները նրանց արյան մեջ լվանալը» բառացի ընկալվեր, բայց նրա բարիանալը արդեն չափազանց քիչ էր և չափազանց ուշ էր: Վորմում հայտարարված Վճիռը բացահայտ հղում էր անում հենց այս մեկնաբանություններին.

«Նա … սովորական ժողովրդին (ոչ կղերականներին) կոչ է անում իրենց ձեռքերը լվանալ հոգևորականների (կղերականների) արյան մեջ: Նրա ուսուցումները առիթ են հանդիսանում ըմբոստության, բաժանումների, պատերազմի, սպանության, թալանի, հրկիզման և քրիստոնեության կործանման: Նա վայրագ կյանք է ապրում: Նա այրում է պապական որոշումները: Նա արհամարհում է թե՛ արգելքը, թե՛ սուրը: Նա ավելի շատ վնասում է քաղաքացիական, քան եկեղեցական իշխանությանը»:

> Այսպիսով, գրչի հանդեպ Լյութերի անզգուշությունը նրան տարավ սեփական դատապարտության: Նա հայտարարվեց օրենքից դուրս, և նրա կյանքը փրկվեց ավելի փոքր իշխանավորների կողմից գաղտնի և անակնկալ միջամտության շնորհիվ միայն:

Այնպես որ, հրեաների վերաբերյալ նրա գրքում տեղ գտած ավելորդ մեկնաբանությունները պետք է հիմնականում ընկալվեն այս նույն ձևով: Սա ընդհանուր առմամբ չի արդարացնում դրանք, այլ ցույց է տալիս, որ հարցը Լյութերի անհատականության (բնավորության), այլ ոչ թե հակասեմիտիզմի մեջ էր: Սակայն ամենատըխուր մասն այն է, որ վիճաբանական այդ գրվածքներից 20

կամ 30 տարի անց էլ Լյութերը ոչինչ չսովորեց անզգույշ գրչի ուժի մասին: Անկախ իր մտադրություններից, նա չպետք է այդքան խիստ գրեր, ինչպես որ գրել էր: Նա գիտեր, որ կարող էին հետևանքներ լինել: Նա գիտեր, որ չափազանց խստությունը և մեղադրական հռետորաբանությունն իրականում կարող են շեղել տրամաբանության ուժից և իրական արգումենտների(բանավեճերի) փաստերից, որ նա ներկայացնում էր. մարդիկ կկենտրոնանային «ատելության» վրա և ամբողջությամբ կանտեսեին նրա գրածի կշիռը:

Դա շարունակվում է նաև այսօր, թե՛ Լյութերի փաստարկների, թե՛ ժամանակակից աստվածաբանների փաստարկների դեպքում:

Թալմուդի և դրա ստությունների մասին

Բայց քրիստոնյաների մեծ մասը չգիտի, և դիսպենսացիոնալիստ հրեապաշտների մեծ մասը կցանկանար, որ գաղտնի մնար այն, որ հրեաները վաղուց գրել էին Քրիստոսի և քրիստոնյաների մասին, և դա այնքան զզվելի էր (և շարունակում է մնալ այդպիսին), որ դրա կողքին Լյութերը դպրոցական փոքր երեխայի է նմանվում: Քրիստոնյաների մեծ մասը չգիտի ատելության և զզվանքի այն մակարդակը, որ հրեաներն արտահայտել են Քրիստոսի հանդեպ Թալմուդում և ուրիշ գրքերում: Նրանք բացարձակ անտեղյակ են (հրեապաշտները նրանք են ովքեր հրեա ազգին մշտապես մեծարում են մնացած ազգերից, երբեմն իրենց ազգից, և դավաճանաբար վեր են դասում: Նրանք նույնիսկ հրեաներին համարում են աստծո ժողովուրդ, որը ինքնին մեծագույն պղծություն է):

Սակայն Լյութերն անտեղյակ չէր:

Միայն իմանալուց հետո, թե որքան ահավոր վատ ձևով են հրեական գրքերն արտահայտվում կրոնական որոշակի թեմաների մասին, Լյութերը վերջնականապես կորցրեց հույսը, որ հրեաները կընդունեն Ավետարանը:

«Հրեական գրքեր» ասելով ես նկատի չունեմ Հին Կտակարանը: Որովհետև նախքան Քրիստոսի աշխարհ գալը, Հուդաիզմում տիրում էին փարիսեցիական ավանդույթները, որոնք սրբագործված էին Թալմուդում՝ մեծածավալ գրվածքներ, որոնք ներառում են ռաբբիական բանավեճերն ու Թորայի օրենքի հիմնավորումները: Հենց այս ավանդույթն էր, որ հաճախ այնքան հեռու էր Թորայից, որ Հիսուսը քննադատում էր Իր ողջ ծառայության ընթացքում: Սրան

էր Նա ամեն անգամ ընդդիմանում, երբ ասում էր. «Լսել եք, որ ասվեց… Բայց Ես ասում եմ ձեզ…»: Սա էր պատճառը, թե ինչու էին Հիսուսն ու փարիսեցիները շարունակ տարաձայնությունների մեջ (Երբ Հիսուսը ասում էր <<Լսել եք, որ ասվեց …>> Նա Հին Կտակարանի գրվածներին ակնարկ չէր անում, այլ, հրեաների գրած Թալմուդական գրքերին ու իրենց մարդաստեղծ օրենքներին):

Երուսաղեմի կործանումից հետո Տաճարին ու Թորային հետևելը դադարեց, և «Հուդաիզմի» միակ ճյուղը, որ գոյատևեց, փարիսեցիներն էին: Մերօրյա «Հուդաիզմն» ամբողջությամբ ծագում է Թալմուդյան ավանդույթներից: Այն ընդհանրապես նման չէ «Հին Կտակարանի կրոնի»: Դա ավելի շուտ մի ոդիսական (արկածային կամ վտանգավոր ճանապարհորդություն) է ռաբբիական նեղ թունելով «լսել եք, որ ասվեց» ավանդույթներով, որ զատված է Հին Կտակարանից:

Իսկ ահա դրա ահավոր մասը: Թալմուդյան ավանդույթը ոչ միայն չի ընդունում Քրիստոսին, այլ բացահայտ հայհոյում ու մեղադրում է Նրան ու Նրա հետևորդներին: Ըստ Թալմուդի, Հիսուսը Մարիամի անառակ հարաբերություններից ծնված որդին էր, և թե՛ Նա և թե՛ Նրա հետևորդները պատժվում են դժոխքում «եռացող արտաթորանքի մեջ»: Այս պատիժը տրվում է ոչ թե այն պատճառով, որ նրանք թողել են Աստծուն, կամ Աստծո հանդեպ են մի վատ բան արել, այլ որովհետև «Յուրաքանչյուրը, ով որ ծաղրի Իմաստունների խոսքերը պատժվում է եռացող արտաթորանքի մեջ»: Այլ կերպ ասած, Իմաստունները՝ ռաբբիները, պատժի չափանիշ է:

Կա և մեկ բան Թալմուդի ավանդույթի մեջ. Ադամը սեռական հարաբերություն է ունեցել դաշտի բոլոր գազանների հետ՝ նախքան Եվայի հետ լինելը: Պեդերաստիան (սեռական հակում պատանի տղաների հանդեպ) ինը տարեկանից փոքր երեխայի հետ չի համարվում այնքան վատ, որքան դրանից մեծ երեխայի հետ (մեկ այլ ռաբբի տարիքային բաժանումն անում է երեք տարեկանից): Շատ ավելին կա, որ կստիպի գլուխը քորել, կամ նույնիսկ հետ տալ (փսխել): Այսպիսին են հրեական Թալմուդյան հավատքի այլասերվածությունները, ու միգուցե այս ուսուցմումն է այն պատճառը, որ ներկայիս Իսրայելի մայրաքաղաք Թել Ավիվը համարվում է աշխարհի միասեռականների մայրաքաղաքը:

Ներկայումս գոյություն ունի բավականին լավ ձևավորված ապոլոգետիկ (հավատքի պաշտպանություն) փորձ ժամանակակից

թալմուդիստների կողմից, որպեսզի հերքեն այս պնդումները, բայց նրանք հիմնվում են Թալմուդի խմբագրված և գրաքննություն անցած տարբեր հրատարակությունների վրա, պատճառաբանելով, որ այս պնդումները երևակայական են, չափազանցված են, դուրս են բերված համատեքստից, կամ խոսքը մեկ այլ «Հիսուսի» կամ «Yehoshua»-ի մասին է: Եվ իհարկե, վատ հատվածները մաքրվում են գրաքննություն անցած տարբերակներից՝ նույնիսկ հեղինակավոր համարվող Սոնսինոյի անգլերեն տարբերակից (անգլերեն թարգմանված թալմուդ):

Բայցևայնպես, այդ ամենը գոյություն ունի ձեռագրերում, անկախ այն բանից, որքան էլ նրանք փորձեն դա թաքցնեն: Լավագույն և ամենագիտական աշխատությունը մինչև այսօր Փիթեր Շեֆերի (Peter Schäfer) «Հիսուսը Թալմուդում» գիրքն է (Princeton: Princeton University Press, 2007), որ եզրակացություն է անում հավաստիության կողմի վերաբերյալ: Շեֆերն ինձ համար լիբերալ պատմաբան է թվում, և, կարծես թե, նա բոլոր պատճառները պետք է ունենար՝ անտեսելու ժամանակակից Հուդաիզմի մութ կողմը: Նա, սակայն, ասել է դառը ճշմարտությունը. «ինչ վերաբերում է Հիսուսի մահապատժի, նրա աշակերտների ճակատագրի, և դժոխքում Հիսուսի պատժի մասին պատմություններին, ոչ մի կասկած չի կարող լինել, որ դրանք խոսում են Հիսուսի՝ Նազովրեցի Հիսուսի մասին… քրիստոնեության հիմնադրի»:

Սակայն այս ավանդությունը հրապարակայնորեն հասանելի դարձավ վերջին տասնամյակներին: Թալմուդի պատմության մեծ մասի ընթացքում այն կարևոր գիտություն էր, որ պահվում էր գաղտնի հասարակության մեջ, կարելի է ասել, ռաբբիների և նրանց կոլեգաների: «Հիսուսը եռացող արտաթորանքների մեջ» արտահայտությունը նման է նրանց ներքին կատակի, մինչդեռ հրապարակայնորեն իրենք իրենց ներկայացնում են որպես քրիստոնեաների ընկերներ կամ Քրիստոնեական հասարակության մեջ ապրող պասիվ քաղաքացիներ:

Լյութերը, սակայն, ուներ ռաբբի ընկերներ, և ուրիշ ընկերներ, ովքեր «հրեական գրքերի» գիտակ էին: Եվ նա իր՝ լայնորեն քննադատված, սակայն չկարդացված «Հրեաների ու նրանց ստությունների մասին» աշխատությունում շատ հստակ ցույց է տալիս, որ «Հուդաիզմը», որին նա ընդդիմանում էր, գաղտնի պահվող, ատելությամբ լի, ռասիստական, աստվածհայհոյիչ և հակա-

հասարակական Թալմուդյան ավանդույթ էր: Այս մասին նրա նշումներից մեկն ասում է.

> «Երեք ուսյալ հրեաներ եկան ինձ մոտ՝ հույս ունենալով իմ մեջ մի նոր հրեայի բացահայտելու, որովհետև մենք սկսել էինք եբրայերեն կարդալ այստեղ՝ Վիտենբերգում, և ակնարկելով, որ խնդիրները շուտով կհարթվեն, քանի որ մենք՝ քրիստոնյաներս սկսել էինք իրենց գրքերը կարդալ: Երբ ես բանավիճեցի նրանց հետ, նրանք ինձ ներկայացրեցին իրենց պատրաստի մեկնությունները, ինչպես սովորաբար անում են: Բայց երբ ես պահանջեցի, որ հետ վերադառնանք տեքստին, նրանք շուտով փախան դրանից՝ ասելով, որ իրենք պարտավոր են հավատալ իրենց ռաբբիներին, ինչպես մենք մեր Հռոմի Պապին ու դոկտորներին և այլն: Ես խղճացի նրանց և ցանկացա նրանց հանձնարարական նամակ տալ՝ ուղղված ղեկավարներին, խնդրելու, որ Քրիստոսի սիրույն նրանց թույլ տան գնալ իրենց ճանապարհով: Սակայն հետո ես բացահայտեցի, որ նրանք Քրիստոսին անվանում են tola, որը նշանակում է կախաղան բարձրացված ավազակ: Դրա համար, ես այլևս ոչ մի գործ չեմ ուզում ունենալ որևէ հրեայի հետ: Ինչպես Սբ. Պողոսն է ասում, նրանք սահմանված են բարկության համար. ինչքան շատ ես փորձում օգնել նրանց, այնքան ավելի ստոր և ավելի խստապարանոց են նրանք դառնում: Թողեք նրանց իրենց սեփական հնարքների հետ»:

Ողջ աշխատությունով մեկ դուք կտեսնեք հղումներ «նրանց գրքերին»: Լյութերը գիտեր մի բան, որ ընդհանուր առմամբ ծածկված է եղել քրիստոնյաների մեծ մասից. որ ժամանակակից «Հուդաիզմը» Հուդաիզմ չէ: Այն ո՛չ հավատարմորեն պահում է Հին Կտակարանի հավատը, ո՛չ էլ նույնիսկ Հին Կտակարանի ձևերն՝ առանց հավատի: Դա մարդկային ավանդույթ է, որ կազմված է ռաբբիական օրենսգիտության տասնյակ հազարավոր էջերից, որ կարծես Աստծո Խոսքից էլ վեր մի դատավոր լինի: Եվ որ ամենավատն է, այն ոչ միայն հրաժարվում է հավատալ, այլ նաև գիտակցաբար

անարգում և վարկաբեկում է Քրիստոսին ու քրիստոնեությունը: Ժամանակակից Հուդաիզմը Հուդաիզմ չէ: Ժամանակակից «հրեաները» հրեաներ են միայն էթնիկապես և անվանապես, ոչ ըստ Աստվածաշնչի: Որովհետև Հին Կտակարանի հավատի ամբողջական իրականացումը պետք է Հիսուս Նազովրեցուն ընդունի որպես Մեսիա:

Ճշմարիտ հրեան

Մերօրյա գրողները կարող են տեսնել ճիշտ նույն տարաբաժանումն աստվածաշնչյան Հուդաիզմի (այսինքն քրիստոնեության) և ժամանակակից «Հուդաիզմի», որ դիսպենսացիոնալիստներն ուզում են, որ մենք գովերգենք: Վեր. Սթիվ Շլիսելը (Rev. Steve Schlissel) այդպիսի գրողներից մեկն է: Նա քրիստոնյա է և Աստծո Խոսքի սիրահար: Իսկ որ ամենակարևորն է այս քննարկման համար, Սթիվը նաև հրեա է: Նա իսկական՝ Բրուկլինում ծնված (Նյու Յորքի հրեական թաղամաս), հրեական Ձատիկը տոնող հրեա է, ով սրտաբաց ընդունեց Քրիստոսին որպես իր Տեր ու Փրկիչ: Դժվար թե նրան հնարավոր լինի անվանել համասեմիտիստ: Բայցևայնպես, նա բացահայտորեն մերժում է, որ Իսրայելի երկիրը, կամ էթնիկ Իսրայելը (կամ «մերօրյա Իսրայելը», ինչպես հաճախ հղում են անում) կարևոր գործոն է Աստծո ճշմարիտ ժողովրդի հարցում: Շլիսելը գրել է.

> «Դիսպենսացիոնալիստները հավատում են, որ հրեա ժողովուրդն իրավունք ունի այն երկրի հանդեպ, որ գործնականում անցնում է հասկացողության բոլոր սահմանները՝ ներառյալ անհավատությունը, ըմբոստությունը և Քրիստոսի ու Նրա Եկեղեցու հանդեպ ատելությունը: Հետևաբար, հակասիոնիզմը հավասարեցվում է հակասեմիտիզմին»:

> Ռեկոնստրաուկցիոնիստները (վերականգնողականները), մյուս կողմից, առանձնացնում են դրանք իրարից: Նրանք հավատում են, որ հրեա ժողովուրդը կարող է օգտագործել իր իրավունքը, եթե միայն հնազանդվի ապաշխարության և հավատի պայմանին: Նրանք, ըստ էության, ոչ մի բան չունեն ընդդեմ հրեաների, ովքեր գտնվում են «eretz yisrael» (Իսրա-

յելի երկրում), բայց ընդունում են, որ շատ ավելի կարևոր է Իսրայելի հավատի հարցը»:

Սթիվն անմիջապես կարևոր եզրահանգման է գալիս. «Այս լույսի ներքո, կարող է նպատակահարմար լինել հարցնել, թե աստվածաբանական ո՞ր համակարգն է իրականում մտահոգված հրեաներով ու մտածում նրանց օգտի մասին, որն է իր սրտին մոտ պահում հրեաներին: Եթե Իսրայելի համար ինչ-որ մեկի փափագն ու Աստծուն ուղղված աղոթքը համապատասխան է ներշնչված առաքյալների հետ, ինչպես գրված է Հռոմեացիների 10-րդ գլխում («որպեսզի նրանք փրկվեն» (10.1)), ապա կարո՞ղ է նա «հակասեմիտիստ» կոչվել»:

Հիմա եկեք ճշմարիտ Հուդաիզմին մեկ ուրիշ կողմից նայենք: Ըստ պրիմիլենիալիստ (նախահազարամյակային վերջաբանության հավատացող) Բարրի Հորների, ցանկացած մեկը, ով դեմ է կանգնում «Աբրահամի և Մովսեսի միջոցով տրված աստվածաշնչյան ժառանգությանը», «հակահրեա» է: Սա «հակահրեականության» վերաբերյալ նրա ձևակերպումն է: Նա նույնպես զգույշ է, որպեսզի տարաբաժանի Թորայի ավանդույթը Թալմուդի ավանդույթից, և նա վերջինը բացառում է իր սահմանումից: Շատ լավ է:

Դե, եկեք թույլ տանք, որպեսզի Թորայի (Մովսեսական) ժառանգությունն ինքն իր համար խոսի. Հիսուսը Թալմուդի հայրերին՝ փարիսեցիներին ասաց. «Կա մեկը, ով ամբաստանում է ձեզ՝ Մովսեսը, որի վրա դուք դրել եք ձեր հույսը: Եթե դուք հավատայիք Մովսեսին (Թորային), դուք կհավատայիք ինձ, որովհետև նա իմ մասին գրեց» (Հովհ. 5.45-46):

Հիսուսի փաստարկներում օգտագործվում է դասական տրամաբանական ձև. Եթե P, ուրեմն՝ Q: Այս ձևի մեջ, եթե P-ն հաստատվի, ապա դրան անպայման կհետևի Q-ն: Եվ հակառակը, եթե Q-ն մերժվի, ապա P-ն նույնպես միանշանակ կմերժվի: Այլ կերպ ասած, ըստ Հիսուսի, եթե փարիսեցիները մերժեն Իրեն, նրանք միանշանակ մերժած կլինեն նաև Թորան:

Փաստարկը միանգամայն հստակ է. ըստ Հիսուսի, փարիսեցիները մերժում են Թորան, քանի որ նրանք մերժում են Հիսուսին: Այսպիսով, փարիսեցիների ավանդույթը, ըստ Հորների սեփական սահմանման, «հակահրեականություն» է: Քանի որ մերօրյա ողջ «Հուդաիզմը» հիմնված է Թալմուդի և փարիսեցիական ավանդույթի

վրա, որը մերժում է Քրիստոսին (և այդպիսով, նաև Թորան), ուրեմն մենք պետք է եզրահանգենք (կրկին ըստ Հորների սեփական սահմանման), որ մերօրյա Իսրայելը/Հուդաիզմը «հակահրեական-նություն» է:

Սա միանգամայն համապատասխան է այն դասին, որ Պողոսն ուսուցանում էր Հռոմի Եկեղեցուն. «Որովհետև ոչ թե նա է հրեա, որ արտաքինից է, ոչ էլ թլպատությունը՝ արտաքին և ֆիզիկական: Այլ հրեան նա է, ով ներքուստ է, իսկ թլպատությունն էլ՝ սրտի, կատարված Հոգով, ոչ թե տառով: Նրա գովասանքը ոչ թե մարդուց է, այլ Աստծուց» (Հռոմ. 2.28-29):

Ահա թե ինչու, երբ ինչ-որ մեկն էթնիկ (ազգային) պատկանելությունը և անշարժ գույքը (հողակտորը) դարձնում է գլխավոր գործոն, ճիշտ հասկացողությունից դուրս է: Մարդկանց ֆիզիկական բնութագիրը հարցին պարզապես չի վերաբերում: Հարցը խոստովանությունն ու հավատն է: Հուդաիզմը չի փոխարինվել քրիստոնեությամբ, ընդհակառակը, հուդաիզմը հավատարմորեն ներկայացված է միայն քրիստոնեության մեջ: Այսպիսով, միայն քրիստոնեությունն ունի հուդաիզմի աստվածաշնչյան սահմանման օրինական հավակնությունը: Սրանից դուրս ամեն բան Թորայի հերքում է, և դրա հետևորդներն իրական հրեաներ չեն:

Դիսպենսացիոնալիստների ու պրիմիլենիալիստների փաստարկներն ու պնդումները վերանայելուց հետո, Շլիսելը եզրահանգում է.

> «Ինձ թվում է՝ տեղի է ունեցել հետևյալը. որոշ դիսպենսացիոնալիստներ ընդունել են Մեսիական Թագավորության վերաբերյալ անհավատ հրեաների ակնկալիքները որպես ճշմարիտ: Դրանով նրանք անցել են ռաբբիական հուդաիզմի կողմը՝ ընդդեմ Քրիստոսի «հուդաիզմի» կամ թագավորության: Նրանք Իսրայել պետության գոյությունը բերում են որպես իրենց իրավացիության փաստարկ, իրենք իրենց սահմանում են որպես հրեաների ճշմարիտ պաշտպաններ, Սա կատարյալ դատարկաբանություն է:

Եզրակացություն

Վաղուց արդեն ժամանակն է, որ այսօրվա քրիստոնյաները դադա-

րեն կուռք սարքել ժամանակակից «Հուդաիզմը» կամ «Իսրայելը»: Իրականում, վաղուց ժամանակն է, որ նրանք այլևս չօգտագործեն այդ անունները մի բանի համար, որի համար այդ անունները նույնիսկ հեռակա կերպով կիրառելի չեն: Դրանք պատշաճ կերպով կիրառելի են միայն Քրիստոսում Աստծո ժողովրդի՝ Եկեղեցու վերաբերյալ: Ճշմարիտ Իսրայելը՝ եկեղեցին է առաջ տանելու իր Արքայությունն ու փառքը, ընդարձակելու իր տարածքները, սովորեցնելու աշխարհը տիրելու իր փառավոր ապագայի մասին, հետաքրքրվելու իր խաղաղությունով:

Հատկապես վերջինը, որովհետև կարծում եմ՝ ոչ մի բան այնքան տարակարծության, նախապաշարման և վիրավորանքի պատճառ չի դարձել, որքան կենտրոնանալը մարգարեական հարցերի և մի ժողովրդի դերի վրա, որ փրկության հարցում ոչ մի առավելություն չունի, քան մյուսները: Փոխարենը հրեաներին «մտցնելու» «Իսրայելի» մեջ Արմագեդոնի համար (որքանո՞վ է դա Իսրայելի շահերը պաշտպանող), պրիմիլենիալիստներն ու դիսպենսացիոնալիստները պետք է փորձեին ավետարանել և դարձի բերել նրանց Ճշմարիտ Հուդաիզմին:

Լյութերը, հնարավոր է, այնքան հեռու չի եղել ճշմարտությունից, որքան նրան նկարագրում են: Չափից ավելի հեռուն է գնացել իր արտահայտությունների մեջ, այո: Սակայն նրա «Հրեաներն ու նրանց ստությունները» աշխատության մնացած 99 տոկոսն ավելի շատ ուշադրության է արժանի քրիստոնյա ընթերցողների կողմից: Այն պետք է հանձնարարվի որպես ընթերցանության գիրք բոլոր սեմինարիաներում (ճեմարան)՝ հատկապես դիսպենսացիոնալիստական:

Հավելված Ե

«Ամբողջ Իսրայելը կփրկվի». Մնացորդի սկզբունքը

Ի պատասխան իմ այն տեսակետի, որ Երուսաղեմն Անառակների Մայրն է, որոշ ընթերցողներ արտահայտել են իրենց կանխատեսելի անհամաձայնությունը: Աստված էթնիկ և ֆիզիկական Երուսաղեմի վերաբերյալ երբեք այդ ձևով չէր գրի, ասում են նրանք, որովհետև Նա հավիտենական ուխտ է հաստատել Աբրահամի և նրա սերնդի հետ: Մի ընթերցող այսպես էր առարկել. (ներքևի պարագրաֆը եթե կարաք էսպես առաջ տարեք որ տարբերվի հաջորդից, ընդգծելով որ դա այդ մեկ այլ մարդու ասածն է)

> «Դուք մոռանում եք Աբրահամին տրված Աստծո խոստման մասին, որն իր բնույթով հավիտենական է: Աստված ուխտ կնքեց՝ «Իմ ու քո միջև հավիտյան»: Կամ Աստված նկատի ուներ հավիտյան, կամ էլ՝ ոչ: Այո, հրեաները, մերժելով Քրիստոսին, բառացիորեն դարեր շարունակ անհնազանդ են եղել, սակայն նրանք ամբողջական իմաստով և լիովին կվերականգնվեն [Հիսուսի] Երկրորդ Գալստյան ժամանակ: Դրա համար էր Պողոսն այս թեմայի վերաբերյալ շատ հստակ խոսում է Հռոմեացիներին 11-րդ գլխում, պնդելով, որ Քրիստոսում ունեցած մեր ազատությունը մեզ պատճառ չի տալիս պարծենալու»:

Որից հետո նա մեջբերում է անում Հռոմեացիներին 11.31-34-ը: 31-32 համարները նպատակահարմար է այստեղ օգտագործելու համար: Այնտեղ գրված է. «Հիմա նաև նրանք են անահավատության մեջ, որպեսզի ձեր ողորմությունով, նրանք էլ ողորմություն գտնեն: Որովհետև Աստված նրանց բոլորին ամփոփեց անհավատության մեջ, որպեսզի կարողանա բոլորին ողորմել»:

Ինձ նամակ գրող այս անձը, ցանկանում է մեզ համար ընդգծել «նրանց» բառը (հոգնակի դերանունը): Նա ավելացնում է. «նկատեք 32-րդ համարը: Այն ասում է, որ Աստված «նրանց (հրեաներին) բոլորին ամփոփեց անհավատության մեջ, որպեսզի կարողանա բոլորին ողորմի»: Այսպիսով, նա «նրանցը» տեսնում է հղում՝ ուղղված բացառապես հրեաներին, և նույնիսկ խմբագրում է այն, որպեսզի մենք չշեղվենք թեմայից:

Ցավոք, «նրանց» (հրեաներին) բառի մեկնաբանությունը շատ հարցական է: Այն հիմնված է վատ թարգմանության վրա (որն այս դեպքում KJV -ն է): «Նրանց» բառը հունարենում ուղղակիորեն չի երևում: Հունարեն «բոլորին» բառն այստեղ չունի ոչ մի անձնական դերանուն, այլ՝ որոշիչ հոդ: Եթե մենք այն բառացի թարգմանեինք, այն կհնչեր «բոլորը»: Սակայն հունարենի այս սովորական կերպը պարզապես հավասարեցվել է անգլերեն «բոլոր» բառին: Ինչու՞ է KJV-ն ավելացրել «նրանց» բառը, հստակ չէ: Այսպիսի ավելացումն Աստծո Խոսքին ընդհանրապես անհրաժեշտություն չէր:

Այդ պատճառով, ժամանակակից գրեթե բոլոր թարգմանություններն այն դուրս են թողնում: ESV-ն 32-րդ համարն այսպես է թարգմանում. «Որովհետև Աստված բոլորին անհնազանդության մատնեց, որպեսզի բոլորին ողորմի»: NAS-ն ասում է. «Քանի որ Աստված բոլորին անհնազանդության մեջ արգելափակեց, որպեսզի կարողանա բոլորին ողորմել»: Նույնիսկ հնագույն Լատիներեն Վուլգաթան (Latin Vulgate) ճիշտ է թարգմանում այն, հունարեն tous pantas-ը պարզապես թարգամնելով omnia, կամ «բոլոր»:

Այսպիսով, «բոլոր հրեաներին» արտահայտության վրա շեշտը, որպես Աստծո ողորմության հատուկ առարկա, հոդս է ցնդում բուն տեքստը ճիշտ հասկանալու արդյունքում:

Ի՞նչ է ուրեմն տեքստը նշանակում: Այս համարը ճիշտ ձևով ընդգծում է, որ փրկության հետ կապված Աստծո մեթոդը ողորմությունն է, և այդպիսով, անկախ այն բանից մարդը հրեա է, թե հեթանոս, նրանք բոլորը կարող են փրկվել: Աստված աչառություն չի անում, և Աստված հետ չի դառնում Իր խոստումներին: Բոլոր մարդիկ մեղքի բանտում են, և բոլոր մարդիկ փրկվում են միայն Աստծո ողորմությամբ: Չնայած այն բանին, որ հրեաներն այդ ժամանակ (Պողոսի գրելու ժամանակ) մնում էին անհավատության մեջ, և Աստված դուռ էր բացել և Իր ողորմությունը շրջել հեթանոսների կողմը, դրանով իսկ Նա ամբողջությամբ չէր մերժել հրեա ժողովրդին: Նրանք

նույնպես կարող են վերադառնալ Աստծո մոտ Նրա ողորմության հիման վրա: Սա պարզապես կրկնում է այն հիմնական փաստարկը, որ Պողոսը արդեն սկսել էր ներկայացնել 9-րդ գլխում (իրականում, 2-րդ գլխում, սակայն այդ դեպքում շատ ավելի տեղ կպահանջվի այդ փաստարկն ուսումնասիրելու համար, քան ես կցանկանայի այստեղ ներկայացնել):

Ուշադրություն դարձրեք այն մեկնաբանության վրա, որով Պողոսը սկսում է 11-րդ գլուխը. «Ուրեմն, ես հարցնում եմ. «Աստված մերժե՞լ է իր ժողովրդին»: Ոչ մի դեպքում: Որովհետև ես էլ եմ իսրայելացի, Աբրահամի սերունդ, Բենիամինի ցեղից»: Նա հենց նոր ավարտել էր նկարագրությունը, թե ինչպես էր Իսրայելը շարունակաբար մերժել Աստծուն, մինչդեռ Աստված Իրեն հայտնել էր ու գտնվել նրանց կողմից, ովքեր Նրան չէին փնտրել (հեթանոսներին, նայեք 10.20-21): Այս լույսի ներքո, Պողոսն անհրաժեշտ է համարում գլխատել այն սխալ եզրահանգումը, որ Աստված ամբողջովին մերժել է Իսրայելին, մինչդեռ Իր ողորմությունը բացել էր մնացած աշխարհի համար: Պողոսն իր անձի օրինակն է որպես փաստ օգտագործում, որ նման եզրահանգումը չափից դուրս կլիներ. նա ինքն էթնիկ հրեա է, ֆիզիկական իմաստով Աբրահամի սերունդ, Բենիամինի ցեղից, սակայն նա ոչ միայն հավատացյալ է ու փրկված, այլև հավատացյալների առաքյալ և ուսուցիչ: Այսպիսով, նա կենդանի ապացույց է, որ Աստված դեռ շարունակում է ողորմություն ցույց տալ էթնիկ իսրայելացիներին:

Սակայն հարցը, որ առաջանում է ժամանակակից սիոնիստների (ցեղակրոն, ռասիստ հրեաների), դիսպենսացիոնալիստների և մյուսների կողմից, ովքեր ուզում են ֆիզիկական Իսրայելի և տաճարի վերականգնված ինչ որ ձև տեսնել, թե արդյո՞ք Աստված մտադիր է ապագայում փրկել Իսրայելի ֆիզիկական ողջ ժողովրդին: Արդյո՞ք Պողոսի փաստարկը, որ «ամբողջ Իսրայելը կփրկվի» վերաբերում է ֆիզիկական, էթնիկ Իսրայելին, դեռ չխոսելով ապագայի մասին:

Կարծում եմ, համատեքստը դա հնարավոր է դարձնում: Ահա թե ինչու.

Մնացորդի սկզբունքը

Քանի որ անհատական անձնական փորձառությունը բավարար չէ վարդապետական տեսակետ ապացուցելու համար, Պողոսը դիմում

է միակ անսխալական կանոնին՝ Սուրբ Գրքին: Հիմնավորելով այն տեսակետը, որ ինքը, լինելով հրեա, կարող է փրկվել, Պողոսը չի փորձում հաստատել այն տեսակետը, որ բոլոր (կամ նույնիսկ մեծ մասը) ֆիզիկական հրեաների կփրկվեն: Ընդհակառակը, նա հղում է անում Եղիային և հավատարիմ մարդկանց այն փոքրիկ մնացորդին, որ Աստված պահպանել էր: Նա, հղում անելով Աստծո ժողովրդին, սովորեցնում է մնացորդի սկզբունքը.

> «Աստված չի մերժել իր ժողովրդին, ում նախապես ճանաչում էր: Չգիտե՞ք, թե ինչ է ասում Սուրբ Գիրքը Եղիային, երբ նա դիմում է Աստծուն ընդդեմ Իսրայելի. «Տեր, քո մարգարեներին սպանեցին, քո զոհասեղանները փլեցին, և միայն ես եմ մնացել, և իմ կյանքն էլ են փնտրում»: Իսկ ինչպիսի՞ն է Աստծո պատասխանը նրան. «Ես ինձ համար պահեցի յոթ հազար մարդիկ, ովքեր չխոնարհվեցին Բահաղի ծնկներին (ովքեր իրենց ծնկերը Բահաղին չծռեցին, այսինքն, Բահաղին չերկրպագեցին)» (Հռոմ. 11.2-4) (Տես նաև 3 Թագ. 19.10,18):

5-րդ համարում, Պողոսն իր իրավիճակն ուղղակիորեն համեմատում է մնացորդի սկզբունքի հետ, որ Եղիայի պատմության մեջ է. «Այնպես որ, ներկայումս էլ կա մնացորդ, շնորհով փրկված»: Համեմատության հետ կապված, հունարենն ավելի շեշտակի է, քան ESV-ում է երևում: Այն ավելի ազդեցիկ ձևով է ասում. «Նմանապես ներկայումս էլ...»: Այլ կերպ ասած, Պողոսն ուղղակի զուգահեռ է տանում այդ հին ժամանակներում Իսրայելի փրկված փոքրիկ մնացորդի ու այն ապաշխարության, որ նա ակնկալում էր հիմա: «Ճիշտ այն ժամանակվա պես հիմա էլ». սա է նրա ասածի էությունը:

Հիմնական սկզբունքը, որն այստեղ գործում է, Աստծո ընտրությունն է, ոչ թե իսրայելացիների էթնիկ/ազգային պատկանելիությունը կամ արյունակցական կապը: Պողոսը չի ցանկանում, որ մենք աչքաթող անենք սա, դրա համար այս միտքը հստակ շեշտադրում է հաջորդ համարում. «Բայց եթե շնորհով է, ուրեմն այլևս գործերի հիման վրա չէ. այլապես շնորհն այլևս շնորհ չի լինի: Ուրեմն ի՞նչ: Իսրայելը ձախողվեց ձեռք բերելու այն, ինչ փնտրում էր: Ընտրյալները ձեռք բերեցին, իսկ մնացածը՝ կարծրացան» (Հռոմ. 11.6-7):

«Ընտրյալները ձեռք բերեցին, իսկ մնացածը՝ կարծրացան» արտահայտությունը մեզ տալիս է բանալի՝ հասկանալու, թե ինչ է փորձում Պողոսն ուսուցանել Հռոմեացիների ողջ գրքում:

Այս երկու տեսակետերից՝ ընտրություն և մնացորդ, մենք պետք է երկու բաներ եզրահանգենք ֆիզիկական Իսրայելի վերաբերյալ: Առաջին, փրկությունը հիմնված է միայն ու միայն Աստծո գթառատ ընտրության վրա: Սա անառարկելի է: Այսպիսով, միայն հրեաների այդ ընտրյալ մնացորդն է փրկվում: Երկրորդ, քանի որ ոչ մնացորդ «մնացածը» «կարծրացած», հրեաները հակասության մեջ են դրվում ընտրյալների հետ, ուրեմն որոշ (մեծ մասը) հրեաների փրկված չեն:

Այս լույսի ներքո նկատեք, որ Պողոսը պարզապես չի ասում. «Աստված չի մերժել իր ժողովրդին», այլ՝ «Աստված չի մերժել իր ժողովրդին, ում նախապես ճանաչում էր»: Անցյալ, ներկա և ապագա իսրայելացիների խառնամբոխի մեջ Աստված որոշներին նախապես ճանաչեց փրկության համար: Այս նախապես ճանաչվածներին (այդպիսով, նաև ընտրվածներին և նախասահմանվածներին (Հռոմ. 8.29)) Աստված չի մերժել: Իսկ մնացածին, ներառյալ յուրաքանչյուր չընտրյալ, չհավատացող հրեայի, Նա կարծրացրել ու մերժել է: Աստված փրկում է միայն նրանց, ում Նա հատուկ կերպով նախապես ճանաչում էր, լինի հրեա, թե հեթանոս:

Պողոսը հղում է անում մնացորդի սկզբունքին որպես պատասխան այն հարցին, թե արդյոք Աստված մերժել է իսրայելացիներին: Հարցն ընտրությունն է: Այս փաստարկի տրամաբանությանը հետևելը մեզ հետ է տանում նախորդ գլուխ: Իսրայելի փրկության թեման սկսվում է 10-րդ գլխում. «Եղբայրներ, սրտիս փափագն ու աղոթքն առ Աստված նրանց համար այն է, որ նրանք փրկվեն»: Գլուխն ավարտվում է Իսրայելի մերժումով և Աստծուց մերժված լինելով: Դրան հետևում է 11.1-7 -ը, որի մասին մենք հենց նոր խոսեցինք, որը մեզ հետ է վերադարձնում ընտրության վարդապետությանը: Որպեսզի լսենք Իսրայելի փրկության վերաբերյալ վարդապետության սկիզբը, մենք պետք է հետ ցատկ անենք դեպի մեկ այլ գլուխ և սկսենք 9.3-ից: Ընտրության թեման 11-րդ գլխի համատեքստը բերում է ավելի ընդարձակ՝ 9-րդ և 10-րդ (հատկապես 9-րդ) գլուխների համատեքստի մեջ, որտեղ ինչ որ մեկը կարող է պնդել, որ 11-րդ գլխի մեծ մասը պարզապես ընթագլուխ է, կամ նույնիսկ հավելում:

Ընտրություն և մնացորդ

Հռոմեացիներին 9.3-ում Պողոսը կիսվում է. «Որովհետև ես կցանկանայի ինքս անիծվել ու կտրվել Քրիստոսից հանուն իմ եղբայրների՝ մարմնի կողմից իմ ազգակիցների»: Նա հստակ ներառում է էթնիկ/ազգային «մարմնավոր» Իսրայելը և փափագում նրանց փրկությունը: Որից հետո նա թվարկում է Աստծո պարգևները՝ տրված Իսրայելին. «Նրանք իսրայելացի են, և նրանց է պատկանում որդեգրությունը, փառքը, ուխտերը, օրենքի տրվելը, պաշտամունքը և խոստումները: Նրանց են պատկանում նախահայրերը, և նրանց սերնդից է, մարմնի կողմից, Քրիստոսը, ով Աստված է բոլորի վրա, օրհնյալ հավիտյան: Ամեն» (9.4-5): Հստակ է, որ փրկությունը «հրեաներից» է, ինչպես Հիսուսն էլ նշեց (Հովհ. 4.22): Այսպիսով, հստակ է, որ Պողոսը մտածում է, որ Աստծո խոստումները դեռևս վերաբերում են Իսրայելին:

Ինչու՞ ուրեմն ողջ Իսրայելը չփրկվեց և չէր հավատում, որ Քրիստոսն այդ ժամանակ եկել էր: Սա ակնհայտ հարց է, որին Պողոսն անմիջապես պատասխանում է, որովհետև նրա հաջորդ բառերը ենթադրում են այդ թեման. «Սակայն, ոչ թե որ Աստծո խոսքը ձախողվել է» (9.6): Հիմա, ինչու՞ ինչ որ մեկը պետք է մտածեր, որ Աստծո Խոսքը ձախողվել է: Միայն այն դեպքում, եթե ինչ որ մեկը մտածեր, որ բոլոր իսրայելացիներն իրականում փրկվել էին Աստծո՝ «Իսրայելին» ընտրելու պատճառով: Եթե այդպես է, ապա ակնհայտ փաստը (այն ժամանակ և հիմա), որ այնքան շատ իսրայելացիներ մերժում են Քրիստոսին և չեն հավատում, կշանակեր, որ նրանց փրկելու Աստծո խոստումը ձախողվել է: Իրականում, էթնիկ Իսրայելի տեսակետից, եթե գոնե մեկ էթնիկ իսրայելացի չհավատա Քրիստոսին, ուրեմն Աստծո Խոսքը ձախողվել է: Սակայն Պողոսն ասում է, որ այն չի ձախողվել: Իսկ ինչու՞ ոչ: Որովհետև հարցն ընտրությունն է, ոչ թե էթնիկ/ազգային պատկանելիությունը:

Դրա համար Պողոսն անմիջապես ավելացնում է ամենակարևոր որակավորումը. «Քանի որ ոչ թե բոլորը, ովքեր Իսրայելի սերունդ են, պատկանում են Իսրայելին» (9.6 ESV): Հունարենն այստեղ կտրուկ է և շարահյուսությունը մի փոքր դժվար է: KJV-ն ավելի մոտ է. «Որովհետև նրանք բոլորն Իսրայել չեն, ովքեր Իսրայելից են»: Համենայն դեպս, կարծում եմ, որ բնօրինակն ավելի բառացի

թարգմանվում է այսպես. «Որովհետև ոչ թե բոլոր Իսրայելից եղողներն են Իսրայել»: Ամեն դեպքում, միտքն այն է, որ երևա, որ ոչ թե բոլոր իսրայելացիներն (ֆիզիկական, էթնիկ) են իրականում ընտրյալ Իսրայել (ճշմարիտ Իսրայել, որոշները նույնիսկ կասեին «հոգևոր» Իսրայել):Պողոսն ընդարձակում է այս փաստարկն ընտրության առաջնայնության համար: Ամբողջ Իսրայելը ճշմարիտ Իսրայել չէ, և «և ոչ բոլորն են Աբրահամի որդիներ են, թեև նրա սերունդն են) (9.7): Նա ապացույց գտնում է պարզապես Հին Կտակարանյան ընրության երկու դեպքերից. Իսահակ ու Իսմայել, և Հակոբ ու Եսավ: Նա բացատրում է.

> «Իսահակով (ոչ թե Իսմայելով) քո սերունդը կկոչվի»: Սա նշանակում է, որ մարմնի որդիները չեն Աստծո որդիներ, այլ խոստման որդիներն են սերունդ համարվում: Որովհետև խոստումն ասում է. «Հաջորդ տարի գրեթե այս նույն ժամանակ ես կվերադառնամ, և Սառան որդի կունենա»: Եվ ոչ միայն այսքան, այլ նաև երբ Ռեբեկան հղիացավ մեկից՝ մեր նախահայր Իսահակից, թեև նրանք դեռ չէին ծնվել և ոչ բարի և ոչ էլ չար բան էին արել, որպեսզի ընտրության Աստծո նպատակը շարունակվի, ոչ թե գործերից, այլ նրա պատճառով, որ կանչում է, Սառային ասվում է. «Մեծը փոքրին կծառայի: Ինչպես գրված է. «Հակոբին սիրեցի, բայց Եսավին ատեցի» (Հռոմ. 9.7-13):

Այսպիսով, մենք պետք է եզրահանգենք, ինչպես արեցինք 11.1-7 հատվածի վերաբերյալ Պողոսի փաստարկի դեպքում, որ ֆիզիկական էթնիկ պատկանելիությունը չէ Աստծո խոստումի իրականացման կիզակետը, այլ Աստծո սեփական ընտրությունը: Ընտրությունն առաջնային հարց է: Եվ այս հարցի վերաբերյալ Պողոսն օգտագործում է հաջորդ մի քանի համարները:

Հաջորդ մի քանի համարների ուսումնասիրությունը բացահայտում է, որ Պողոսն այստեղ զարգացնում և ապացուցում է այն նույն թեմաները, որոնց մասին նա խոսում է մինչև 11-րդ գլխի ավարտը (և իրականում մինչև գրքի ավարտը): Ընտրության վարդապետությունը, ինչպես որ Պողոսն է մինչև այս պահը բացատրում, հարց է առաջացնում: Պողոսն օգտագործում է այս ակնհայտ հարցը՝ հաստատելու այս թեմաները.

> «Ուրեմն ի՞նչ ասենք: Աստծո կողմում անարդարություն կա՞: Ոչ մի դեպքում: Քանի որ նա Մովսեսին ասում է. «Ես ում կողորմեմ, կողորմեմ, և ում կգթամ, կգթամ»: Այսպիսով, դա կախված է ոչ թե մարդկային կամքից կամ ջանքից, այլ Աստծուց, ով ողորմում է: Որովհետև Սուրբ Գիրքը փարավոնին ասում է. «Հենց այս նպատակով էլ քեզ բարձրացրեցի, որ իմ զորությունը քեզանով ցույց տամ, և որ իմ անունը հռչակվի ամբողջ երկրով մեկ»: Այսպիսով, նա ողորմում է, ում կամենում է, և կարծրացնում է, ում կամենում է» (Հռոմ. 9.13-18):

(Այստեղ պարզացնելու ձևով պետք է նշենք որ մարդը ի ծնե կարծրացած, մեռած սիրտ ունի, այնպես չէ որ մարդը լավն ու բարի է և Աստված գալիս է ու նրան էապես կարծրացնում է: Փարավոնի սիրտը արդեն կարծր էր, և Աստված այդ մեռած, կարծրացած սիրտը ավելի կարծրացրեց իրագործելու իր նպատակները և ցույց տալու համար Իր փառքը: Աստված ամբողջ ստեղծագործությունը արարել է Իր սեփական փառքի և հաճույքի նպատակի համար, և փարավոնի սրտի կարծրացումը որոշ չափով նպաստեց այդ նպատակին):

Նա մեզ երեք գլխավոր թեմաներ է տալիս. Աստծո ընտրություն, ողորմություն և կարծրացնել: Համառոտ կերպով ուսուցանելուց հետո, որ Աստված իրավունք և կարողություն ունի այդ վերջնական որոշումներն ընդունելու (9.19-23), Պողոսը պնդում է, որ Աստված ընտրություն և փառք է բացել հեթանոսների համար, ինչպես նաև հրեաների մնացորդի (9.23-26), սակայն նաև այն, որ ոչ թե Իսրայելի որդիների մեծ քանակ կփրկվի: Դրա համար նա մեջբերում է Եսայի 10.22-ը. «Եթե նույնիսկ Իսրայելի որդիների քանակը ծովի ավազի չափ լինի, միայն մնացորդ պիտի փրկվի» (Հռոմ. 9.27): Աբրահամի միլիոնավոր էթնիկ որդիներից Աստված միայն մնացորդ է փրկելու:

Սա Աստծո ընտրությունն է, քանի որ «Կործանումը սահմանված է, որ հորդում է արդարությամբ: Որովհետև զորքերի Տեր Աստվածն այն հասցնելու է իր լիարժեք ավարտին, ինչպես սահմանված է, ամբողջ երկրով մեկ» (Ես. 10.22-23), և «Տերն իր վճիռն իրականացնելու է երկրի վրա ամբողջությամբ ու առանց ուշացնելու»

(Հռոմ. 9.28, Ես. 28.22): Քանի որ այս «Իսրայելի որդիները» դուրս էին մնացորդից, կործանումը սահմանված էր: Ավելին սրա մասին, ավելի ուշ:

Այսպիսով, Պողոսը նորից վերադառնում է 11-րդ գլխի մնացորդի սկզբունքին, նա նույն թեմաներն է բացահայտում: Ճիշտ ինչպես Եղիայի ժամանակ (կարող ենք համարել նաև ինչպես Եսայիի ժամանակ), «Այնպես որ, ներկայումս էլ կա մնացորդ, շնորհով փրկված»: «Իսրայելը ձախողվեց ձեռք բերելու այն, ինչ փնտրում էր: Ընտրյալները ձեռք բերեցին, իսկ մնացածը՝ կարծրացան» (Հռոմ. 11.6-7):

Այլ կերպ ասած, Աստված «Այսպիսով, նա ողորմում է, ում կամենում է, և կարծրացնում է, ում կամենում է» (Հռոմ. 9.18): Նա մնացորդին ընտրեց ողորմության համար, իսկ մնացած իսրայելացիներին՝ կարծրացնելու:

Քանի որ ամբողջ «Իսրայելը» ճշմարիտ Իսրայել չէ, մենք պետք է հասկանանք, որ Աստված երբեք մտադիր չի եղել փրկել բոլոր էթնիկ հրեաներին, և ըստ մնացորդի սկզբունքի, Նա երբեք մտադիր չի եղել նրանց մասսայաբար փրկել, այլ միայն մի քանիսին: Պողոսն ակնկալում էր, որ այս նույն սկզբունքն էր գործելու նաև իր օրերում:

Սակայն ըստ մնացորդի սկզբունքի Պողոսը հաստատ գիտեր, որ Աստված դուռը վերջնականապես չի փակել իսրայելացիների դեմ: Այսպիսով, մինչդեռ նա չէր ակնկալում զանգվածային ապաշխարություն, սակայն հաստատ ակնկալում էր, որ որոշներին կփրկի: Նա այս մասին բացահայտ ասում է. «Հիմա ես խոսում եմ ձեզ հետ, հեթանոսներ: Քանի որ ես հեթանոսների առաքյալ եմ, մեծարում եմ իմ ծառայությունը, որպեսզի ինչ որ ձևով իմ հայրենակից հրեաների նախանձը շարժեմ, և այդիսով նրանցից մի քանիսին փրկեմ» (Հռոմ. 11.13-14):

Ամբողջ Իսրայելը

Ուրեմն ինչպե՞ս կարող էր Պողոսը դրանից հետո ասել, որ «Ամբողջ Իսրայելը կփրկվի» (11.26): Ամբողջ Իսրայե՞լը: 9-11 գլուխների փաստարկները միավորելով պարզ է դառնում, որ «Իսրայել» չի կարող նշանակել բոլոր էթնիկ (ազգային) ֆիզիկական Իսրայելը (11.26), այլ պետք է հասկանալ ընտրյալ Իսրայել: Քանի որ Պողոսը գրեթե երեք ամբողջական գլուխ չարչարվեց, որպեսզի հաստատի,

սահմանի և ապացուցի ընտրության վարդապետությունը հատուկ Իսրայելի դեպքում, ցույց տալու, որ իսրայելացիների ճնշող մեծամասնությունը երբեք չի ընդունել ընտրությունը, այլ կարծրացվել է, ասելով, որ Իսրայելը չհասավ, այլ միայն ընտրալները. մենք այստեղից պետք է եզրակացնենք, որ ոչ բոլոր էթնիկ Իսրայելը կփրկվի:

Սակայն, մինչդեռ մենք հաստատ գիտենք, որ ոչ ամբողջ էթնիկ Իսրայելը կփրկվի, մենք նաև հաստատ գիտենք, որ ճշմարիտ Իսրայելի ընտրյալ մնացորդն իրոք ընդունեց Աստծո ողորմությունը, և հետևաբար բոլոր ընտրյալ Իսրայելը կփրկվի: Հետևաբար, մենք այս համարը կարող ենք ճիշտ հասկանալ միայն այն դեպքում, եթե Իսրայել տերմինն օգտագործենք այնպես, ինչպես Պողոսն է անում իր պարադոքսալ (հակասական) հնչող Հռոմ. 9.6 համարում, ընտրյալ Իսրայել, խոստման Իսրայել: «Ոչ թե բոլորը, որ (էթնիկ) Իսրայելից են, (ընտրյալ) Իսրայել են», և ուրեմն ոչ թե բոլոր էթնիկ Իսրայելը կփրկվի, բայց «ամբողջ (ընտրյալ) Իսրայելը կփրկվի»:

Այսպիսով, ամբողջ Իսրայելը կփրկվի, բայց ոչ ամբողջ Իսրայելը: Հասկանալի՞ է:

Սակայն շատ մեկնաբաններ արգելք են տեսնում նախորդ համարն այս ձևով մեկնաբանելը: Այն ասում է. «Որպեսզի չլինի թե դուք ձեր աչքին իմաստուն թվաք, ես ուզում եմ, որ դուք հասկանաք այս խորհուրդը, եղբայրներ, որ Իսրայելի վրա մասնակի կարծրացում եկավ, մինչև հեթանոսների ամբողջությունը ներս մտնի» (Հռոմ. 11.25): Այստեղ Պողոսը հենց նոր օգտագործեց «Իսրայել» բառը ի հակասություն «հեթանոսներ» բառի: Այսպիսով, շատերը կտրամաբանեն, որ նա պետք է որ էթնիկ Իսրայելն ունենար իր մտքում, քանի որ միայն այդ ձևով Իսրայելը կարող էր հակասության մեջ դրվել «հեթանոսների» հետ: Այնուհետև համարվում է, որ այս հակասությունը շարունակվում է մինչև 26-րդ համարը, որտեղ «ամբողջ Իսրայելը կփրկվի», և հետևաբար սա պետք է որ նշանակի, որ ամբողջ էթնիկ Իսրայելը կփրկվի:

Բայցևայնպես, որոշ մարդիկ բացահայտորեն անտեսում են Հռոմեացիների 11.26-ի և 9.6-ի միջև եղած կապը: Նույնիսկ որոշ Ռեֆորմացված մեկնաբաններ պնդում են, որ սա չի կարող լինել ամենաառողջ մեկնաբանությունը: Ջոն Մուրեյը (John Murray) Հռոմեացիների վերաբերյալ իր դասական մեկնության մեջ, ճիշտ այս նույն բանն է անում, տեսնելով անհրաժեշտ կապը 25-րդ և 26-րդ

համարների միջև, ինչպես ես վերևում նկարագրեցի:

Ես այստեղ հնարավորություն չունեմ մանրամասնորեն խոսելու Մուրեյի փաստարկների մասին: Այս պահի համար բավարար է ասել, որ թեև դրանք հզոր փորձ են՝ ներկայացնելու ապագա հին Իսրայելի տեսակետը, բայցևայնպես ես դրանք գտնում եմ ոչ համոզիչ և սխալ: Կարծում եմ, սրա մի մասը գալիս է նրա փորձից ինչքան հնարավոր է իր կողմից մոտենալու Վեստմինստերյան Ընդարձակված Հարցարանի (Westminster Larger Catechism) (Q. 191) վարդապետությանը, որ վերաբերում է հրեաների ապագա կոչումին և հեթանոսների ամբողջությանը, որպես Աստծո գալիք Արքայության մի մաս: Հետևաբար, իմ կարծիքով, այս կետում նա ավելի ստրկամտորեն հետևում է մարդկանց ստեղծած դավանանքին, քան Սուրբ Գրքի հստակ տեքստին: Բայց սա ենթադրություն է:

Մուրեյը պնդում է ճիշտ հակառակն այն բանի, ինչ ես ասացի վերևում. Նա ասում է, որ «Իսրայելը» 11.26-ում բացարձակապես չի կարող վերաբերել ընտրյալ Իսրայելին, ի հակասություն ազգային Իսրայելի: Կարճ ասած, ես կարծում եմ, որ սա մասնակիորեն կեղծ բաժանում է: Քանի որ Պողոսը 9-11 ամբողջ գլուխներն օգտագործում է պնդելով թե՛ հեթանոսների ընտրությունը, և թե՛ ընտրյալ Իսրայելի մնացորդը, Հռոմ. 11.26-ը հեշտությամբ կարող է վերաբերել երկուսին էլ՝ էթնիկ հրեաներին, ի դեմս հեթանոսների, բայց միայն ընտրյալ Իսրայելը որպես «ամբողջ Իսրայել», որովհետև ինչպես Պողոսն էր արդեն հաստատել, ընտրյալ Իսրայելն է միայն իրական Իսրայել:

Շատ ավելի կարևոր է, և ավելի պարզ, որ ոչ մի պատճառ չկա պնդելու, որ 11.26-ը անպայմանորեն կապ ունի 11.25-ի հետ: Ինձ ավելի բնական է թվում, որ 11.1-25-ը իրենից ներկայացնում է մի երկար համակարգված փաստարկ, ի պատասխան 1-ին համարում տրված հարցի. «Աստված մերժե՞լ է Իր ժողովրդին»: Պողոսն ըստ էության 11-րդ համարում կրկնում է հարցը, ցույց տալու մտքի շարունակականությունն այդ համարների փաստարկների միջոցով: Այս հարցը և դրա պատասխանը հանդիսանում են ավելի մեծ համատեքստի մի մասը, որ սկսվում է 9.3-ում, և վերջիվերջո, որ դրանց կառավարումն Աստծո ազատ ընտրությունն է և շնորհը, որպես ամբողջ փրկագործության հիմք: 11.26-ը սկսվում է եզրակացությամբ, որ տանում է դեպի այդ ավելի մեծ համատեքստը:

Հավելված Զ

Աստծո աստվածաշնչյան սիրելի համարը. Սաղմոս 110.1-ը Նոր Կտակարանում

Նոր Կտակարանում 110-րդ սաղմոսից ավելի շատ է մեջբերում արվում, քան Հին Կտակարանի որևէ այլ հատվածից: Այս առաքելական շեշտադրումն ավելի մեծ ուշադրության կարիք է զգում, քան մինչև հիմա դարձվել է: Նոր Կտակարանում այս հատվածին արված հղումներում մենք գտնում ենք վախճանաբանության, կամ ապագայի վարդապետության վերաբերյալ որոշիչ բանալին: Այն հետևությունները, որ մենք անում ենք ելնելով այն բանից, թե ինչպես են Պողոսը, Պետրոսն ու մյուսները կիրառում Սաղմոս 110-ը, չեղարկում են (գլխիվայր են դարձնում) ժամանակակից մարգարեության հասկացողության և «վերջին օրերի» ուսուցման մեծ մասը: Ավելի հաստատուն հասկացողությունը կօգնի ժամանակակից քրիստոնյաներին տեսնելու ընդհանուր ընդունված հուսահատությունից ու վատատեսությունից և ապոկալիպտիկ մոլագար հիստերիայից այն կողմ, և դրա փոխարեն ունենալ լավատեսություն և նպատակաուղղված քրիստոնեական կյանք, որի մասին շատերը նույնիսկ դեռ չեն էլ խորհել:

Սաղմոս 110-ը պարզապես ուսուցանում է, որ Տերը (Adonai) նստելու է Ամենակարողի (Yahweh) աջ կողմում, և քանի դեռ Տերը պահում է այդ գահակալած դիրքը, Ամենակարողը պետք է հաղթի Նրա թշնամիներին (հ. 1): Այս հաղթությունը տեղի է ունենում Տիրոջ զորության միջոցով, որ կիրառվում է Նրա թշնամիների հանդեպ (այլ կերպ սած, Տիրոջ գահակալությունը չի նշանակում, որ Նա վերևում նստած անհաղորդ է աշխարհի գործերին, այլ ընհակառակը) (հ. 2): Այս կետը հստակություն է ստանում և վերաշեշտադրվում է հ. 5-ում: Այս գահակալման իշխանության ընթացքում, Աստծո ժողովուրդը պետք է պատրաստակամորեն միաբանվեն մեկտեղ

գալու և ծառայելու Նրան (հ.3): Տերը չի իշխում մյուս սովորական իշխանների նման, այլ որպես հավիտենական Քահանա-Թագավոր, ինչպես Մելքիսեդեկը (Մելքի-Սեդեկ եբրայերեն նշանակում է «Իմ Թագավորն Արդար է»), մի բան, որ խորապես շեշտադրվում է Քրիստոսի վերաբերյալ Եբրայեցիների գրքում (հ. 4): Տեր-Քահանա-Թագավորը զբաղվում է Իր թշնամիներին ենթարկելու գործով Իր գահակալած աթոռից, և դրանով իսկ միաբանվում է Ամենակարողի հետ (հ. 5): Նրա իշխանությունը տարածվում է չհավատացող ազգերի և ազգերի գլխավորների վրա. Նա իրոք որ թագավորների Թագավոր է (հ. 6): Նա կանգ չի առնի, չի դադարի և մի կողմ չի քաշվի պատերազմի ուղուց, որ ցույց է տալիս Նրա նվիրվածության կայունությունն Իր առաքելությանը, մինչև խնդրի կատարյալ լուծումը (հ. 7): Սա տեքստի պարզ ընթերցանությունն է:

Նոր Կտակարանի գրողները վերցրել են այս պարզ պատգամն ու այն կիրառել այն իմաստով, որ Հիսուս Քրիստոսն արդեն իրականացրել է այն: Պետրոսը հայտարարում է, որ այս առաքելությունը՝ գահակալումը, սկսվեց, երբ Քրիստոսը համբարձվեց Հոր մոտ (Գործք 2.31-36): Այսիսով, Քրիստոսը նստած է այդ գահի վրա հիմա, Աստծո Արքայությունը չի սպասում ապագա «գալուստի» կամ «հայտնության», որպեսզի հաստատի իր առաջնորդին. Նա Իր գահը զբաղեցրել է մեկընդմիշտ: Քրիստոսն այս պատգամն ուներ անձամբ Իր մտքում. Նա հղում է անում Իր աստվածային բնույթին՝ փարիսեցիներին հերքելու համար (Մատթ. 22.41-45), և Իր՝ Աստծո աջ կողմում անմիջական նստելուն ՝ հայտարարելու գալիք դատաստանը Երուսաղեմի առաջնորդների վրա (Մատթ. 26.64): Այս երկու հատվածները (այլ հատվածների մեջ) բավական են ցույց տալու համար, թե ինչպես է Քրիստոսն իրականացնում գահակալության մարգարեությունն Իր համբարձվելով և Աստծո աջ կողմում նստելով: (Եբրայեցիների գրողը նույնպես հստակեցնում է սա. Եբր. 1.1-3,13):

Հետևաբար մենք պետք է ակնկալենք, որ մարգարեության մնացած մասը Քրիստոսի հենց այս պահի իշխանությունից բխում է այնքան տրամաբանական և մնայուն կերպով, ինչպես Ամենակարողն է այդ մասին ասում Սաղմոսում: Իրականում, մենք սրա վերաբերյալ ուսուցում տեսնում ենք Պողոսի կողմից 1 Կորնթացիներին 15-րդ գլխում: Քրիստոսի հաղթական հարության իրականությունը և կիրառումը քննարկելիս, Պողոսն ասում է հետևյալը.

«Որովհետև ինչպես Ադամով բոլորը մահանում են, այնպես էլ Քրիստոսում բոլորը կկենդանանան:Բայց ամեն մեկն իր կարգով. Քրիստոսն առաջին պտուղն է, դրանից հետո նրանք, ովքեր Քրիստոսինն են, Նրա գալուստի ժամանակ, հետո գալիս է վերջը, երբ Նա արքայությունը հանձնելու է Աստծուն և Հորը, երբ կործանի ամբողջ իշխանությունն ու կարողությունն ու զորությունը: Որովհետև Նա պետք է թագավորի մինչև Նա Նրա բոլոր թշնամիներին դնի Նրա ոտքերի տակ: Վերջին թշնամին, որ կկործանվի, մահն է» (1 Կոր. 15.22-25):

Այստեղից մենք սովորում ենք, որ Քրիստոսը, Իր ներկա գահակալության ընթացքում (այսինքն հենց հիմա), կշարունակի Իր հաղթական նվաճումը, մինչև կատարելապես կոչնչացնի Իր իշխանության դեմ բոլոր ընդդիմացողներին: Այս կետում, այն բանից հետո, երբ Նա ոչնչացրած կլինի ամբողջ իշխանությունն ու զորությունը, և ոչ թե դրանից մեկ րոպե շուտ, Նա կգա և հարություն կտա Իր ժողովրդին վերջին թշնամուց՝ մահից: Եբրայեցիների գրողը երկրորդ բանն էլ է ավելացնում Քրիստոսի ներկայիս գահակալությանը, ակնկալելով, որ Նրա թշնամիները Նրա ոտքերի պատվանդան պիտի դառնան (Եբր. 10.12-13):

Ինձ թվում է, Հին Կտակարանի մարգարեության այս շարքը մեկնաբանվելն ու կիրառվելը Նոր Կտակարանի հեղինակների կողմից ներկայացնում է վախճանաբանական մի պարզ սակայն դժվարամարս տեսակետ: Պարզ է, թե որքան հստակ են առաքյալներն այն ներկայացնում. Քրիստոսն իրականացրեց սաղմոս 110.1-ը, և մենք ներկայումս ապրում ենք հայտարարված պատերազմի պատմական իրականացման ժամանակաընթացքում (Սաղ. 11.2-7): Մենք պետք է ակնկալենք, ինչպես Քրիստոսն էլ ներկայումս ակնկալում է, որ պատմության ընթացքում կտեսնենք Նրա թշնամիների աստիճանական և շարունակական ենթարկումը: Այս գործընթացը կշարունակվի, քանի դեռ Նա վերջնականապես չի ոչնչացրել ամբողջ ընդդիմությանը: Այդ ժամանակ, և միայն այդ ժամանակ, Նա նորից կգա հարություն տալու այն սրբերին, ովքեր մահացել են այդ ընթացքում:

Համեմատեք այս շատ պարզ, ակնհայտ և հաստատուն

հասկացողությունը «դիսպենսացիոնալիստական» կամ «պրեմիլենիալիստական» (նախահազարամյակային) տեսակետերի հետ, որոնք ժողովրդականություն են ստացել Ս. Ի. Սքոֆիլդի (C. I. Scofield) միջոցով իր «Սքոֆիլդի հղումներով Աստվածաշնչում» (Դիսպենսացիոնալիստական Աստվածաբանական սիստեմի հիմնադիրը Ս. Ի. Սքոֆիլդ-ն է եղել: Նշենք որ այս մարդը իր կնոջը և երկու փոքր դուստրերին լքելով ամուսնացել է մեկ այլ կնոջ հետ: Նրա ամուսնալուծության փաստաթուղթը մինչև օրս պահվում է Կանզաս նահանգի Ատչիսոն քաղաքի դատական արխիվներում: Դիսպենսացիանալիստական սիստեմը այն սիստեմն է որը Աստվածաշունչը բաժանում է ժամանակահատվածների, 2,3,5,7,21 մասերի, կախված նրանից թէ ինչ տեսակի դիսպենսացիանալիստական սիստեմի մեջ ես գտնվում: Սրան հակառակ, պատմական քրիստոնեությունը եղել է Ուխտական սիստեմի քրիստոնեություն, այսինքն, Աստված ուխտեր է հաստատել Եդեմի պարտեզից սկսված մինչև Նոր Կտակարանը, և Աստվածաշնչի պատմությունը զարգանում է մեկ ուխտից դեպի մյուս ուխտ, առանց մեկը մյուսին փոխարինելով, այլ, մեկը մեկին լրացնելով, ռուսական մատրյոշկայի պես մի ուխտից մեկի մեջ մտնելով: Սրա մասին ավելի ընդարձակ կբացատրվի մեր հետագա թարգմանած մեկ այլ գրքի մեջ): 110-րդ սաղմոսի վերաբերյալ իր նշումներում, «Դր.» Սքոֆիլդը մի քանի հիմունքային սխալներ է անում, ինչպես նաև անցնում է ամենակարևոր կողմերի վրայով: Ես սկզբում մեջբերում կանեմ այդ մեկնաբանական նշումները, իսկ հետո կանդրադառնամ նրա մեկնաբանություններին անհատապես: Նա գրում է.

> «110-րդ սաղմոսի կարևորությունը հաստատված է այն նշանակալի կորևորությամբ, որ նրան տրվել է Նոր Կտակարանում: (1) Այն հաստատում է Հիսուսի աստվածությունը, այդպիսով պատասխանելով նրանց, ովքեր ուրանում են նրա Նոր Կտակարանյան «Տեր» տիտղոսի ամբողջական աստվածային իմաստը (հ. 1, Մատթ. 22. 41–45, Մարկ. 12.35–37, Ղուկ. 20.41–44, Գործք 2.34,35, Եբր. 1.13, 10.12,13): (2) Այս սաղմոսը հայտարարում է Մեսիայի հավիտենական քահանայությունը, որ Սուրբ Գրքի ամենակարևոր պնդումներից մեկն է (հ. 4, Ծնն. 14.18, 7.1–28, 1 Տիմ. 2.5,6,

Հովի. 14.6): (3) Պատմականորեն սաղմոսը սկսվում է Քրիստոսի համբարձումով (հ. 1, Հովի. 20.17, Գործք 7.56, Հայտ. 3.21): (4) Մարգարեական տեսակետից սաղմոսը ուղղված է (ա) այն ժամանակին, երբ Քրիստոսը կհայտնվի որպես Եհովայի զորության Գավազան՝ Սիոնի Ազատարար (Հռոմ. 11.25-27), ինչպես նաև Իսրայելի ապաշխարությանը (հ. 3, Հովել 2.27, Զաք. 13.9, Տես 2 Օր. 30.1–9) և (բ) դատաստանին՝ հեթանոսական զորությունների վրա, որ նախորդում է արքայության հաստատմանը (հհ. 5,6, Հովել 3.9–17, Զաք. 14.1–4, Հայտ. 19.11–21):

(1) և (2) կետերում ես հիմնականում համաձայն եմ: Իրականում, ես համաձայն եմ նաև (3) կետի հետ, որ այս հատվածը պատմականորեն սկսում է իրականանալ Քրիստոսի համբարձումով, որ հետաքրքիր է դարձնում Սքոֆիլդի կողմից այս փաստի ընդունումը: Նա սակայն պետք է ավելացներ Գործք 2.34-35-ը որպես ապացուցող հատված, փոխարենը դա անելու միայն իր (2) կետում: Գործք 2.32-36-ում Պետրոսը հստակ ուսուցանում է, որ սաղմոս 110.1-ն իրականանում է Քրիստոսի համբարձումով ու գահակալությամբ:

Ամենախնդրահարույցը (3) և (4) կետերն են, որտեղ «պատմականորենի» և «մարգարեականի» միջև նրա կողմից կամայական և արհեստական կերպով բաժանելը մեկնաբանական հարց է առաջացնում: Սաղմոսերգուի տեսակետից (որից ելնելով պետք է Սքոֆիլդն այստեղ մեկնաբաներ) ողջ սաղմոսը մնում էր «մարգարեական», եթե մենք այս տերմինն ընդունենք «ապագա» բառի իմաստով: Նույնիսկ Քրիստոսի՝ Հոր աջ կողմը նստելը նրա համար մնում էր շատ հեռավոր ապագայում: Կամայականությունն արտահայտվում է այնտեղ, երբ Սքոֆիլդը որոշում է սահմանագիծ գծել: Նա Քրիստոսի համաբարձումը նայում է որպես սաղմոսի միայն 1-ին համարի իրականացում, իսկ հետո թողնում է թագավորությունները ենթարկելու մնացած հատվածը որպես էթնիկ Իսրայելի վրա կենտրոնացած «մարգարեություն», որ վերաբերում է միայն հեռավոր ապագային: Սա իհարկե բնութագրում է ավանդական դիսպենսացիոնալիստական համակարգն ընդհանրապես (նրանք սիրում են աստվածաշնչի ուսուցումները կտոր-կտոր անել): Սակայն դա ճիշտ մոտեցում չէ բուն սաղմոսին, դեռ չխոսելով դրա

վերաբերյալ առաքելական գրողների մեկնաբանությունների մասին (առաքելական ասելով մենք նկատի ունենք Հիսուսի առաքյալների գրած նամակներին): Ավելի ժամանակակից «առաջընթաց» դիսպենսացիոնալիստներն ընդունել են 110-րդ սաղմոսի մարգարեության ամբողջությունը.

> «Եփեսացիներին 1.20-22-ը և Կողոսացիներին 3.1-ը նույնպես տեսնում են Քրիստոսին՝ նստած Աստծո աջ կողմում, իսկ վերջին հատվածը շեշտադրում է այն փաստը, որ բոլոր բաները ներկայումս Նրա ենթակայության տակ են… Պետրոսը միանում է Պողոսին շեշտադրման հարցում, որ իշխանություններն ու զորությունները ներկայումս Նրա ենթակայության տակ են (Ա Պետ. 3.22)… Որոշ դիսպենսացիոնալիստներ պնդել են, որ սաղմոս 110.1-ի գահակալումը տեղի է ունեցել համբարձման ժամանակ, բայց որ սաղմոս 110.2-ի իշխանությունը դեռ տեղի չի ունենա մինչև հեռավոր ապագա ժամանակները… Այսպիսի մեկնաբանությունն անտեսում է թե՛ բառացի համատեքստը, որ մատնանշված է սաղմոսներում, թե՛ այն կերպը, որով Նոր Կտակարանում այդ ամբողջ տեքստը կիրառվում է Հիսուսի վերաբերյալ»:

Սքոֆիլդի կամայական սահմանագիծը նրան տանում է (կամ թույլ է տալիս) սաղմոսի մնացած հատվածը սխալ կերպով կիրառելու ապագայում ֆիզիկական Իսրայելի կողմից աշխարհը տիրելու գաղափարի վերաբերյալ: Այսպիսով, նա (4) կետի տակ առաձնացնում է Քրիստոսի ներկայիս գահակալությունը «քո զորության գավազանը Սիոնից… քո թշնամիների մեջտեղում» հատվածից: Նա այս նյութը վերցնում է սաղմոս 110.2-ից՝ կիրառելու միայն Քրիստոսի՝ ֆիզիկապես երկիր գալուց հետո միայն, այլ ոչ թե ներկայումս Նրա թշնամիների ենթակվելուն: Սա միանգամայն հակասում է առաքյալներին (Եփ. 1.20-22, 1 Պետ. 3.22):

Դրանից հետո, Սքոֆիլդը սաղմոս 110.3-ի «Քո ժողովուրդը» նսեմացնում է, կիրառելով միայն հրեա ժողովրդի վերաբերյալ: Սա հակասում է Նոր Կտակարանին, որը պարբերաբար ուսուցանում է, որ Աստծո ժողովուրդը ներառում է թե՛ հրեաներին, թե՛ հեթանոսնե-

րին (Հռոմ. 2.26-29, Գաղ. 3.26-29, Եփ. 2.13-22), և որ Նոր Կտակարանի այս ժողովուրդը Քահանայաթագավորական ընտրյալ և պատրաստակամ ժողովրդի ժառագորդներն են (1 Պետ. 2.9-10, Հայտ. 1.5-6): Սքոֆիլդը սպասում է «հրեաների ապաշխարությանը», նախքան Քրիստոսը կկարողանա իրականացնել Իր հաղթությունը երկրի վրա: Մինչդեռ Քրիստոսն Իր ժողովրդին ամբողջ աշխարհով մեկ դարձրել է «հոգևոր հրեաներ» և «թագավորներ ու քահանաներ», և Իր տիրակալությունը տարածում է նրանց միջոցով:

Շարունակելով հետևել իր սխալ բաժանմանը, Սքոֆիլդը վերջապես տեսնում է հեթանոսական իշխանությունների դատաստանը, որ պետք է տեղի ունենա նախքան «արքայության հաստատումը»: Մինչև այս պահն իմ ասածներն արդեն ցրել են այս կարծիքները, Քրիստոսն արդեն նստել է Իր գահի վրա, հաստատել է Իր Արքայությունը և ներկայումս, հենց հիմա, շարունակաբար դատում է այդ «հեթանոսական իշխանություններին»:

Այս պարզ սաղմոսն ու առաքյալների կողմից տրված մեկնաբանությունները պետք է շրջադարձային կետ հանդիսանան ժամանակակից քրիստոնեության համար: Մենք չենք սպասում ապագա Արքայության: Մենք չենք սպասում ապագա կատարյալ հաղթության Քրիստոսի կողմից: Ընդհակառակը, Քրիստոսը հաստատել է Իր Արքայությունը: Նա ունի ողջ իշխանությունը երկնքում և երկրի վրա (Մատթ. 28.18): Մենք կանգնած ենք այդ հաղթության հենց մեջտեղում: Դրա որոշ մասը դեռ սպասում է իր ավարտին, սակայն այն սկսվել և շարունակվում է հենց հիմա:

Սաղմոս 110-ի վերջին համարը հաճախ անտեսվում է և ինչ որ չափով դժվար հասկանալի է: 7-րդ համարը խոսում է մեր հաղթական Քահանա Թագավորի մասին, որ Նա ճանապարհին խմելու է գետակից. դրա համար նա գլուխը բարձարացնելու է: Ժնևի Աստվածաշունչը մեկնաբանում է. «Սա զորավարի հետ նմանություն է, որն այնքան է փափագում ոչնչացնել իր թշնամիներին, որ աճապարելով հազիվ կհասցնի խմել ճանապարհին, որը ցույց է տալիս, թե ինչպես է Աստված ոչնչացնելու իր թշնամիներին»: Այլ կերպ ասած, այս պատերազմող, նվաճող Թագավորը չի լքի պատերազմի Իր ուղին, նույնիսկ թարմանալու համար (նույնիսկ ծարավը հագեցնելու համար): Նա կխմի հենց ճանապարհին, և չի շեղվի ճանապարհից: Նա նույնիսկ մեկ րոպե չի թուլանա Իր առաքելության մեջ, ոչ էլ կշեղվի, քանի դեռ չի ավարտել այն:

Հետևելով մեր Մեսիայի այս օրինակին, քրիստոնյաները չպետք է թույլ տան, որ ինչ որ բան նրանց շեղի Աստծո Արքայությունը տարածելուց: Մեր հաղթական Թագավորը ներկայումս իշխում է և ամեն օր ավելի է ամեն բան ենթարկում Իր կամքին ու զորությանը: Մենք չպետք է թույլ տանք, որ Սուրբ Գրքի որևէ սխալ բաժանում կամ մեկնաբանություն մեզ շեղի Նրա ճանապարհից, քանի որ շատերը շեղվեցին ճանապարհից՝ խմելու Սքոֆիլդի ու նրա հետևորդների գետակից: Մենք պետք է վերադառնանք մարտադաշտ, ինչպես Քրիստոսը մեզ խստորեն պատվիրեց, ինչպես առաքյալները դա հասկացան, և ինչպես Աստծո ժողովուրդն է մինչև հիմա դա իրականացրել:

Մարդկանց մեծ մասը չի հասկանում, որ Հիսուսի առակներից շատերի, եթե ոչ մեծ մասի, նպատակը ընդհանուր բարոյական պատմություններ լինելը չէ, այլ դրանք հատուկ հայտարարություններ են գալիք դատաստանի և փոփոխությունների մասին: Հիսուսը Երուսաղեմին զգուշացնում է, որ ապաշխարի և ընդունի իր Նոր Թագավորին (Հիսուսին), այլապես կընկնի Աստծո վերջնական դատաստանի տակ:

Իրականում, Ավետարաններում գրված Հիսուսի ուսուցումների մեծ մասը հիմնականում վերաբերում էր մինչև ՆՔ 70թ.-ը ապրող ժողովրդին, և առանց դրանք այս լույսի ներքո կարդալու, մենք սխալ ենք հասկանում դրանք: Իսկ երբ սխալ ենք հասկանում, սխալ ենք կիրառում:

Ղուկաս Ավետարանի այն հատվածը, որ քննարկվում է այս մեկնաբանության մեջ, այսպիսի ընկալում է պահանջում: Առակները, որ Հիսուսը պատմեց Երուսաղեմ ճանապարհորդելիս (Ղուկաս 9.51-20.26, և այն կողմ) գրեթե բոլորը վերաբերում են ընծոստությանը, անհավատարմությանը, դատաստանին և Երուսաղեմի գալիք դատաս-տանին, ինչպես նաև Իր ընտրյալ ժողովրդի փոքրիկ մնացորդի փրկությանը:

Ջոել Մաք Դուրմոն

Ջոել Մաք Դուրմոնի գործն օրիգինալ է: Նա հասնում է այնտեղ, որտեղ շատ քիչ մեկնաբաններ են հասել նրանից առաջ: Ինչպես նա էջ առ էջ խորը պատճառաբանված ձևով ցույց է տալիս, ավետարանների մարգարեական պատգամների և Նոր Կտակարանի մնացած հատվածի միջև խորը ներդաշնակություն կա: Դա նոր տիկերի մեջ նոր գինու մասին է: Այն ամենը ինչ ծրագրված էր Հին Կտակարանում, հնացած է: Հիսուսը միշտ տեսադաշտում է եղել, սկսած փրկչի վերաբերյալ առաջին խոստումից Ծննդոց 315-ում, մինչև հայտնությունը, որ ,Հիսուսի վկայությունը մարգարեության հոգին է Հայտնություն 19.10-ում: Մարգարեությունների այսօրվա մեկնաբանությունների մեծ մասը փորձ է վերականգնելու այն, ինչ երբեք ծրագրված չի եղել վերականգնվելու: Առակները, ինչպես Ջոելն է աներկրա պարզաբանում, նպատակ ունեին ցույց տալու, որ բաժանող պատի քանդվելը նրանց տեսադաշտում էր գտնվում, իսկ աշխարհը դրա հետևանքով կլիներ ,մեկ նոր մարդ Քրիստոսում (Եփ. 2.11-22): Երուսաղեմի կործանումը և տաճարի քարուքանդ լինելը նախնական եզրակացություն էր, որովհետև Հիսուսը միշտ էլ եղել էր իրականությունը ստվերի հանդեպ (Հովհ. 2.19)

Գարի Դե Մարի նախաբանից

Հեղինակի մասին.

Ջատագովության, աստվածաբանության և պատմության վերաբերյալ իր աշխատություններով, ներառյալ ,Աստվածածաշնչյան տրամաբանությունե և ,Աստված ընդդեմ սոցիալիզմինե գրքերը, Ջոել Մաք Դուրմոնը (M.Div.) Ամերիքեն Վիժընի (American Vision) թղթակից և գիտաշխատող է: Նա ողջ ԱՄՆ-ում լինելով համագումարների ճանաչված դասախոս, ամենշաբաթյա հոդվածների հեղինակ է AmericanVision.org-ում և պարբերաբար քարոզում է Ալաբամայի Բրանչ Քոուվի Քրիստոսի Եկեղեցում: Ջոելն իր ընտանիքի հետ միասին բնակվում է, Ջորջիա նահանգի Դալլաս քաղաքում: